ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

UNDP

Empowered lives.
Resilient nations.

Հայաստանի Հանրապետության մարզերի հինգ համայնքներում տեղական հիմնախնդիրների հանրային քննարկումների արդյունքների ամփոփ ուսումնասիրություն

Հայաստանի Հանրապետության մարզերի հինգ համայնքներում տեղական հիմնախնդիրների հանրային քննարկումների արդյունքների ամփոփ ուսումնասիրություն

Հայաստանի Հանրապետության մարզերի հինգ համայնքներում տեղական հիմնախնդիրների հանրային քննարկումների արդյունքների ամփոփ ուսումնասիրություն

This publication has been produced with the assistance of the **EUROPEAN UNION** and the **UNITED NATIONS DEVELOPMENT PROGRAMME**. The contents of this publication are the sole responsibility of the International Center for Human Development and can in no way be taken to reflct the views of the EUROPEAN UNION and the UNITED NATIONS DEVELOPMENT PROGRAMME.

Սույն ուսումնասիրությունը պատրաստվել է Եվրոպական միության և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ-ի) աջակցությամբ: Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության և ՄԱԶԾ-ի տեսակետները:

Եվրոպական Միությունը բաղկացած է 28 անդամ պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց փորձը, ռեսուրսները և ճակատագրերը: Համատեղ, 50 տարիների ընդլայնման ընթացքում, նրանք ստեղծել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ միաժամանակ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունը: Եվրոպական Միությունը հանձն է առել կիսելու իր նվաճումները և արժեքներն իր սահմաններից դուրս գտնվող երկրների հետ:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը գործընկերային կապեր է հաստատում հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ՝ զորակցելով պետություններին դիմակայելու ճգնաժամերին: ՄԱԶԾ-ն խթանում է նաև աճը, որ կոչված է բարելավելու յուրաքանչյուր անձի կյանքի որակը: Ներկայություն ունենալով ավելի քան 170 երկրներում և տարածքներում՝մենք համաշխարհային փորձ և տեղական լուծումներ ենք մատուցում, նպաստելով կյանքի բարելավմանը և աջակցելով կայուն պետականության ձևավորմանը: ՄԱԶԾ-ն հաստատվել է Հայաստանում 1993թ. մարտին և աջակցում է կառավարությանն իրականացնելու զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև հասնելու Հազարամյակի զարգացման նպատակներին:

Ողջույնի խոսք

Սիրելի գործընկերներ, ուրախությամբ ներկայացնում ենք Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հերթական հրապարակումը: Այս անգամ, ձեր դատին ենք հանձնում Հայաստանի Հանրապետության մարզերի հինգ համայնքներում տեղական հիմնախնդիրների հանրային քննարկումների արդյունքների ամփոփ ուսումնասիրությունը:

Մեր կենտրոնի կողմից մշակված և Հայաստանում բազմիցս հաջողությամբ կիրառված որոշումների կայացման մասնակցային գործընթացի կազմակերպման այս մոտեցումն առաջին անգամ չէ, որ կիրառվում է համայնքային զարգացման գերակայությունների սահմանման և համայնքային խնդիրների լուծման գործում: Սակայն այս հրապարակումն ու դրան նախորդած աշխատանքներն այնուամենայնիվ աննախադեպ են. Այս քննարկումները մեր կենտրոնի, մեր տասնյակ գործընկերների ու հարյուրավոր համախոհների ջանքերով ստեղծված «Գենդերային խնդիրներն ու ժողովրդավարական կառավարումը» Հայաստանում առաջին փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի գործունեության ակնառու արդյունքն են և ցանցի կյանքի ուղեգիրը: Ձեր ուշադրությանը ներկայացվող հրապարակումը ոչ միայն կանանց ու տղամարդկանց, մեծի ու փոքրի հոգսերի վերաբերյալ քաղաքացիների կարծիքների ամփոփումն է, այլև մեր երկրի բոլոր անկյուններում մասնակցային ժողովրդավարության իրական մշակույթի ձևավորման շրջադարձային պահի մունետիկը:

Համայնքներում հանրային քննարկումներն այս անգամ ոչ միայն Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի թիմի մասնագիտական գործունեության, ինչպես մենք ենք անվանում՝ «մեր գործիքների» կիրառման արդյունք էին, այլև ամենից առաջ ու ամենից առավել՝ մեկուկես տասնամյակ շարունակ մեր կազմակերպության անդամների ամենօրյա քրտնաջան աշխատանքի ու երկրի «բան ու դարդին» հոգացավ վերաբերմունքի, ձևավորված գործնական կապերի ու պարզ մարդկային հարաբերությունների փոխակերպում նոր որակի: Մենք հաջողությամբ կարողացանք մեր ստեղծած, մեր շահած ու պահած, տարածաշրջանի այլ երկրներին հաղորդած փորձն ու գրծիքակազմը հաջողությամբ տարածել մեր իսկ երկրում, լիարժեքորեն փոխանցել մեր գործընկերներին, մեր զինակիցներին: Մարդկանց, ում հետ մեր թիմը երկար տարիների ճանապարհ է կտրել, վստահության կամուրջներ կապելով և ճեղքելով անտարբերության ժայռերը:

Այս հրապարակումն ամփոփում է հարյուրավոր մարդկանց ջանքերը մեր ամենաահեղ ու ամենավտանգավոր թշնամու՝ անտարբերության դեմ պայքարում: Հազար անգամ ճշմարիտ է նոբելյան մրցանակակիր, հայ ժողովրդի բարեկամ Էլի Վիզելը. իրավամբ, սիրո հականիշը ոչ թե ատելությունն է, այլ անտարբերությունը: Գեղեցիկի թշնամին տգեղությունը չէ՝ անտարբերությունն է: Հավատի հակառակորդն աղանդները չեն, անտարբերությունն է: Եվ կյանքի հակադիրը մահը չէ, այլ անտարբերությունը: Ամենից առաջ հենց անտարբերության դեմ են մեր աշխատանքն ու մեր գործընկերների ջանքերը: Այս հրապարակման ամեն մի տողը, յուրաքանչյուր բառը մի կաթիլ է անտարբերության ժայռի անկոտրում սալին: Եվ եթե հավատանք անմահ «Մետամորֆոզների» հեղինակին՝ քարը ծակում է ոչ թե կաթող ջրի ուժը, այլ հետևողականությունը:

Վերջին տարիներին մեր անդամների ու մեր գործընկերների հետևողականության շնորհիվ վկան ենք եղել բազմաթիվ փոփոխությունների, որոնցից յուրաքանչյուրը նոր նախաձեռնության ոգեշնչման աղբյուր է: Եվ ամենակարևորը, համատեղ աշխատանքի արդյունքում փոխվել ենք ինքներս, դառնալով ավելի համախմբված ու ավելի արհեստավարժ: Լցվել ենք մեր ուժերի և մեր ցանցի անդամների կարողության հանդեպ խորին վստահությամբ ու փոխադարձ հարգանքով:

Այս հրապարակումը դեպի ձեզ իր ճանապարհին կլինի, երբ մենք՝ կենտրոնի աշխատակազմը, մեր գործընկերնի հետ համատեղ հետամուտ կլինենք մասնակցային ժողովրդավարության և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ընդլայնման այլ նախաձեռնությունների մշակմանն ու իրականացմանը: Որովհետև մեծ է ժողովրդավարության դաշտը: Մեծ է ու անմշակ: Եվ շատ են դրա մշակների անելիքները: Ու թեպետ բիբլիական իմաստությունը պնդում է, թե բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները, միայն ու միայն նվիրյալ համախոհների և մասնակցային ժողովրդավարության մոդելներին շունչ տալու ունակ մարդկանց բանակի հանապազորդ ընդլայնումն է ունակ անշրջելի դարձնել մեր երկրի համար կենսական փոփոխությունները:

Մասնագետների, նվիրյալների ու հոգացավ մարդկանց այս բանակում առաջին՝ ամենակուռ ու ամենամարտունակ շարքերում կանայք են: Զարմանալի՞ է: Օրինաչա՛փ է: Թերևս երկրագնդի վրա երբևէ ապրած ամենամեծ բարեգործը, ով բարեգործությանն ամեն տարի ՀՀ պետական բյուջեն գերազանցող գումարներ է հատկացնում, Մելինդա Գեյթսը վկայում է. «Ձայնունակ կինն անկասկած ուժեղ կին է, սակայն այդ ձայնը գտնելը դժվարագույն աշխատանք կարող է լինել»: Մեր ու մեր գործընկերների այս համատեղ աշխատանքում մենք փորձել ենք հնչյուն-առ-հնչյուն գտնել ու լսելի դարձնել հենց այդ ձայնը: Չէ որ հենց այդ ձայնով են մեզ հետ խոսում մեր մանկությունն ու մեր ապագան: Կնոջ ձայնն է ստիպում սթափվել

մարդկանց, համայնքներն ու հասարակությունները: Շրջվել դեպի կարևորն ու թողնել անէականը: Եվ վայ այն ազգերին ու հասարակություններին, ուր այդ ձայնը թույլ է ու խլացված՝ նման ազգերը չունեն ամուր արմատներ: Վայ այն ազգերին ու հասարակություններին ուր այդ ձայնը վերածվում է հուսահատության ճիչի, նման ազգերի ապագան վտանգված է ու ներկան՝ օրհասական: Կնոջ ձայնով են խոսում սթափությունը, պատասխանատվությունն ու հոգածությունը: Կանանց ձայնը նաև ուժի ու իշխանության աղբյուր է: Հաճախ միայն այս ձայնն է ունակ հաշվետվություն պահանջել իր վճարած հարկերի համար: Եվ այս ձայնը պիտի ավելի ու ավելի լսելի դարձնենք մեր երկրի համար կարևորագույն հարցերի օրակարգում նաև վաղը:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը գալիք տարիներին շարունակելու է Փոխցանցի զարգացումն ու Հայաստանի Հանրապետության մարզերում մասնակցային ժողովրդավարության ու գենդերային հավասարության ծավալման գործում իր ջանքերը: Իր ստանձնած պարտավորությանը համահունչ մեր կենտրոնը կծառայի որպես Փոխցանցի գիտելիքների գրադարանի համադասող, հետայսու ևս կկազմակերպի Փոխցանցի անդամների միջև շփումներն ու փոխգործակցությունը: Վստահ ենք նաև, որ այս տարիներին Փոխցանցի անդամների միջև ձևավորված ու կայացած համագործակցության պրակտիկան նույնպես կշարունակվի: Համոզված ենք նաև, որ Փոխցացնի մեր գործընկերներն այսուհետ ևս մեզ հետ կկիսեն Հայաստանում մասնակցային ժողովրդավարության և գենդերային հավասարության հաստատման աշխատանքների բեռն ու պատասխանատվությունը: Պատասխանատվությունն՝ իրենց հաստատությունների, իրենց համախոհների և շահառուների առջև: Սա է բարության բոլոր ժամանակների ամենամեծ սերմնացանի պատգամը, որը պետք է հաճախ կրկնի մեզնից յուրաքանչյուրը. «Ես պատասխանատու եմ իմ վարդի համար...»

Խոսք երախտագիտության

Արդկային զարգացման միջազգային կենտրոնը իր խորին երախտագիտությունն է հայտնում Եվրպական Միությանը և Միավորված ազգերի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակին, «Գենդերային խնդիրներն ու ժողովրդավարական կառավարումը» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի (Փոխցանց) կարողությունների զարգացման, համայնքային զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումների կազմակերպման, դրանց արդյունքների ամփոփման և հրապարակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ տրամադրելու համար:

Փոխցանցի ձևավորումը, ցանցի անդամների ներգրավումը, դասընթացների և քննարկումների օպերատիվությունն ու պետական կառավարման մարմինների հետ աշխատանքների համակարգումն անհնարին կլիներ առանց ՀՀ տարածքային կառավարման նախարարության (ՀՀ ՏԿՆ) շահագիգիռ աջակցության և հոգածության:

Մենք երախտապարտ ենք նաև Արմավիրի մարզի՝ Լուկաշին, Շիրակի մարզի՝ Ազատան, Արագածոտնի մարզի՝ Աշտարակ, կոտայքի մարզի՝ Չարենցավան և Լոռու մարզի Շահումյան համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին և աշխատակիցներին՝ սերտ համագործակցության պատրաստակամության, համայնքներում մասնակցային ժողովրդավարության մեթոդների ու գործիքների ներդրման և մասնակցային որոշումների կայացման մշակույթի ձևավորման, կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների հավասարության ապահովման խնդիրներում ցուցաբերած նախաձեռնողականության, ինչպես նաև աշխատանքային և հանրային քննարկումների կազմակերպմանն օժանդակության և ակտիվ մասնակցության համար: Գրեթե յուրաքանչյուր քննարկման ավարտին համայնքների ղեկավարները հնչեցրել են իրենց կարծիքը՝ արժևորելով բնակիչների և հատկապես՝ կանանց մասնակցությունը որոշումների կայացմանը: Ամփոփիչ խոսքում ստանձնած պարտավորություններով նրանք մեծապես ոգևորել են քննարկումների մասնակիցներին, իրենց համայնքի բնակիչներին և, իրավամբ, իրենց համայնքում ամրացրել մասնակցային ժողովրդավարության անկյունաքարերը:

Փոխցանցի ձևավորման, քաղաքացիների իրազեկման և քննարկումների արդյունքների վերաբերյալ հանրությանն իրազեկելու գործում անգնահատելի ներդրում են ունեցել ՄԶՄԿ գործընկեր կառույցները, մասնավորապես, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան (ՀԿԿԱ) և Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիան:

Թերևս ամենից առաջ և ամենից առավել, ՄԶՄԿ աշխատակազմը երախտապարտ է Փոխցանցի անհրաժեշտության գաղափարին, դրա առաքելությանն ու նպատակներին վստահած, ցանցի ձևավորմանն անմիջական ու գործուն մասնակցություն ունեցած, հանրային քննարկումները հնարավոր դարձրած, շատերի հոգիներում ծավալվող անտարբերության ու վիատության անապատում հոգացավության, նվիրվածության հունդեր ցանած ու դրանք հետևողականության քրտինքով ջրած՝ Փոխցանցի տասնյակ ու տասնյակ ակտիվ ու տաղանդաշատ անդամներին, ում շնորհիվ ցանցն իմաստալից գոյության իրավունք վաստակեց և ում ջանքերը մեր երկրում փոփոխությունների իրական գրավականն են:

Բովանդակություն

Ողջույնի խոսք ..... **iii**

Խոսք երախտագիտության ..... **vi**

Համայնքային քննարկումների և արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը **1**

Գործընթացի ամփոփ նկարագիրը 1

Համահամայնքային քննարկումների ձևաչափը 5

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը 8

ՀՀ Արմավիրի մարզի Լուկաշին համայնք **12**

Քննարկման դրված սցենարները 14

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 20

Հնչած կարծիքների հանրագումարը 26

Սոցիալական երկխոսություն 43

ՀՀ Շիրակի մարզի Ազատան համայնք **58**

Համայնքի զարգացման խնդիրները 63

Քննարկման դրված սցենարները 66

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 72

Հնչած կարծիքների հանրագումարը 78

Սոցիալական երկխոսություն 100

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնք **115**

Համայնքի զարգացման խնդիրները 119

Քննարկման դրված սցենարները.....125

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 131

Հնչած կարծիքների հանրագումարը 139

Սոցիալական երկխոսություն 169

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք.....192

Համայնքի զարգացման խնդիրները 196

Քննարկման դրված սցենարները..... 197

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 203

Հնչած կարծիքների հանրագումարը 208

Սոցիալական երկխոսություն 233

ՀՀ Լոռու մարզի
Շահումյան համայնք..... 252

Համայնքի զարգացման խնդիրները 258

Քննարկման դրված սցենարները.....263

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 267

Հնչած կարծիքների հանրագումարը 274

Սոցիալական երկխոսություն 296

Հավելված.....316

Համայնքային քննարկումների և արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը

Գործընթացի ամփոփ նկարագիրը

Ներառական, հաշվետու և գենդերային հավասարության սկզբունքների վրա խարսխված կառավարման վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կարողությունների զարգացման, ինչպես նաև սոցիալական գործընկերության, կառուցողական երկխոսության և սոցիալական միասնության բարելավման նպատակով, ՄԶՄԿ-ն հասարակական կազմակերպությունը, Միավորված ազգերի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ և Եվրոպական միության աջակցությամբ, ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական հինգ համայնքներում 2012 և 2013 թվականներին նախաձեռնեց անհավասարությունների, ներառման, պատասխանատու և թափանցիկ կառավարման տեղական խնդիրների շուրջ քաղաքացիական հասարակության և համայնքային տարբեր խմբերի ու տեղական իշխանությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկումների և հանդիպումների շարք:

Քննարկումները կազմակերպվել են «Հայաստանում տեղական ժողովրդավարության կայացմանը միտված կարողությունների զարգացում՝ տեղական որոշումների կայացմանը արդյունավետ և հավասար մասնակցության ինստիտուցիոնալացման միջոցով» ծրագրի շրջանակներում:

Համահամայնքային քննարկումների ձևաչափով ՄԶՄԿ-ն նախկինում քննարկման է դրել հասարակությանը հուզող բազմաթիվ հարցեր՝ համայնքային զարգացման հիմնախնդիրներից մինչև համապետական նշանակության, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման և ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ խնդիրներ: Այս ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայաց-

նող մեր համաքաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումներն ու բարձրաձայնել իրենց մտահոգող հարցերը:

Քննարկումները, որոնց մասնակցել են համայնքների ընդհանուր առմամբ ավելի քան 400 քաղաքացիներ, իրականացվել են Արմավիրի մարզի՝ Լուկաշին, Շիրակի մարզի՝ Ազատան, Արագածոտնի մարզի՝ Աշտարակ, կոտայքի մարզի՝ Չարենցավան և Լոռու մարզի Շահումյան համայնքներում:

Քննարկումներն իրականացվել են ՄԶՄԿ ջանքերով ստեղծված Հայաստանում փորձի և գիտելիքի փոխանակման առաջին՝ «Գենդերային խնդիրներն ու ժողովրդավարական կառավարումը» ցանցի անդամների կողմից ՄԶՄԿ փորձագետների աջակցությամբ մշակված թիրախ համայնքների զարգացման հնարավոր տարբերակների շուրջ, որոնք ներկայացված են սույն հրապարակման մեջ:

Նախքան քննարկումների կազմակերպումը, տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում տարբեր դերակատարներին ներգրավելու և նրանց միջև արդյունավետ փոխհամագործակցություն հաստատելու նպատակով, ՄԶՄԿ-ն տեղական մակարդակում կին և տղամարդ գործիչների, ՏԻՄ-երի, համայնքահեն կառույցների, տեղական բուհերի, զարգացման մասնագետների, մարզպետարանների, տեղական ԶԼՄ-ների, կանանց իրավունքների պաշտպանության տեղական կառույցների, ինչպես նաև տեղական այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ ձևավորված Փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի անդամների համար հանրապետության բոլոր մարզերում կազմակերպել և իրականացրել է վերապատրաստումների դասընթացների շարք՝ մասնակցային, ներառական, հաշվետու և գենդերային հավասարության սկզբունքով առաջնորդվող կառավարման, արդյունավետ հաղորդակցության և համայնքային զարգացման հիմնախնդիրների բացահայտման մեխանիզմների և գործիքների վերաբերյալ: Դասընթացները վստահության ձևավորման, առանձին խմբերի շահերի և ընկալումների բացահայտման, արդյունավետ հաղորդակցության, բանակցությունների և առաջնորդության գործնական հմտություններ են տրամադրել մասնակիցներին: Դասընթացների ընթացքում հատուկ շեշտվել են համայնքային զարգացման խնդիրների գենդերային առանձնահատկությունները:

Համայնքներում զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ այլընտրանքային տարբերակների (սցենարների) մշակման և երկխոսության գործընթացի կայացման նպատակով ՄԶՄԿ-ն թիրախ համայնքների ՏԻՄ-երի ղեկավարների և աշխատակազմերի հետ կազմակերպել է Փոխցանցի անդամների հանդիպումներ և համատեղ աշխատանքային քննարկումներ: Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում նախ ՄԶՄԿ փորձագետների հետ

ներկայացվել և ապա ՏԻՄ ներկայացուցիչների հետ մանրամասն քննարկվել են համայնքի զարգացման քառամյա ծրագրի գերակայություններից բխող համայնքի մի շարք հիմնախնդիրները, ընթացիկ տարում դրանց լուծման այս կամ այն տարբերակն ու հատկացվելիք հնարավոր միջոցները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները: Առանձին ուշադրություն է հատկացվել հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծման արդյունքների գենդերային առանձնահատկություններին: Քննարկումների ընթացքում Փոխցանցի անդամները ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ ուրվագծել են հիմնական սցենարները, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ և տվյալներ:

Այլընտրանքային սցենարների մշակման նշակման գործընթացն այնուհետև ՄՋՄԿ-ն տեղափոխել է վիրտուալ հարթակ: Մարզի տարբեր համայնքներում գտնվող Փոխցանցի անդամների հետ ՄՋՄԿ-ն կազմակերպել է առցանց խորհրդակցություններ: Դրանց արդյունքում մշակվել, քննարկվել, լրակմշակվել և խմբագրվել են քննարկման սցենարները՝ համայնքային զարգացման հիմնախնդիրների լուծման այլընտրանքային տարբերակները, որոնք արտահայտում են կանանց և տղամարդկանց, տարիքային և սոցիալական տարբեր խմբերի, ինչպես նաև տեղական դերակատարների մոտեցումները, ռազմավարությունները և բնակիչների նախաձեռնությունները: Սցենարներն, այնուհետև, քննարկվել են թիրախ համայնքների ՏԻՄ-երի հետ և նրանց կողմից արված դիտողություններընն ու առաջարկները հաշվի առնելով կատարվել են անհրաժեշտ լրացումներ ու փոփոխություններ:

Յուրաքանչյուր հանրային քննարկմանը հաջորդել է քվեարկություն. մասնակիցներն ընտրել են առավել նախընտրելի և առավել հավանական տարբերակները: Քվեարկության ամփոփ արդյունքները ներկայացված են սույն հրապարակման մեջ:

Համահամայնքային քննարկումների ՄՋՄԿ ձևաչափը հնարավորություն է ընձեռում արձանագրել քննարկման ընթացքում հնչած յուրաքանչյուր ամփոփ միտք և առաջարկություն, ամփոփել ու վերլուծել դրանք և դնել հանրության ու որոշում կայացնողների առջև: Քննարկման ընթացքում արտահայտված բոլոր մտքերը ներկայացված են սույն հրապարակման մեջ և տեղադրված են ՄՋՄԿ պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ www.ichd.org հասցեում:

Հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Քննարկումների արդյունքում հնչած ուղերձների՝ մտքերի, առաջարկների, փաստարկների վերլուծությունն իրականցվել է Փոխցանցի անդամ-

ների երեք հանդիպումների ընթացքում՝ ՄԶՄԿ փորձագետների կողմից տրամադրված մեթոդաբանության հիման վրա:

Քաղաքացիների մասնակցության՝ երկխոսության և բանավեճի արդյունքում մշակվել են եզրակացություններ և առաջարկներ համայնքների զարգացման խնդիրների վերաբերյալ:

Հանրային քննարկումներին հաջորդող ժամանակահատվածում և սույն հրապարակման մշակման ընթացքում ՄԶՄԿ աշխատակիցները պարբերաբար հաղորդակցվել են թիրախ համայնքների ղեկավարների հետ՝ քննարկումների ընթացքում բնակիչների հնչեցրած կարծիքների և ՏԻՄ կայացրած որոշումների միջև համապատասխանությունը գնահատելու նպատակով:

Այսպես, Լուկաշին համայնքում բնակիչների առավել մեծ աջակցություն էր ստացել գյուղամիջյան ճանապարհահատվածի բարեկարգման նախաձեռնությունը (քննարկման մասնակիցների ավելի քան 63%-ը նախընտրել են այս տարբերակը), և քննարկմանը հաջորդող ժամանակահատվածում 2013թ. համայնքի բյուջեի միջոցներով ՏԻՄ-ը կազմակերպել է դպրոցի ճանապարհի հարթեցում և փոսալցում: Բնակիչների կողմից կարևորված մեկ այլ նախաձեռնություն՝ կենտրոնական փողոցների լուսավորության անցկացումը իրականացվում է 2014 թվականին:

Աշտարակ քաղաքում քննարկման մասնակիցները առաջարկված գերակայությունների թվում ամենից առավել կարևորել էին խաղահրապարակների կառուցումը (մասնակիցների 41%-ից ավելին քվեարկել էր այս տարբերակի օգտին): Իսկ 2014 թվականի մարտի 9-ին, ի ուրախություն թե՛ փոքրի, թե՛ մեծի, Աշտարակում գարնանամուտն ազդարարվեց համայնքի «Ձախ ափ» համատիրության Ա.Մանուկյան 17 և 3 շենքերի բակում Աշտարակի քաղաքապետարանի կողմից կառուցված խաղահրապարակի և մարզադաշտի բացման արարողությամբ (լուսանկարները տեղադրված են քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջում, հետևյալ հասցեով՝ http://goo.gl/7X8Mlg): Քննարկման մասնակցիների ճնշող մեծամասնությունը՝ 80%-ից ավելին ընդունեց բազմաբնակարան շենքերի կառավարման նոր մարմինների՝ համատիրությունների ստեղծման նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը: Քննարկմանը հաջորդող ամիսներին Աշտարակում ձևավորվեցին առաջին երկու համատիրությունները:

Հաշվի առնելով բնակիչների բարձրաձայնած գերակայությունները, Չարենցավանի քաղաքապետարանը որոշեց շուրջ 110 միլիոն ՀՀ դրամ հատկացնել թիվ 6 մանկապարտեզի կապիտալ հիմնանորոգմանը: Խնդիրը կարևորել էին քննարկման 120 մասնակիցների բացարձակ մեծամասնությունը՝ 100-ը: Ընդ որում, առաջարկված նախաձեռնությունը՝ մանկապարտեզի կոյուղագծերի վերանորոգում, փոխակերպվել էր կապիտալ հիմնանորոգման, հաշվի առնելով բազմաթիվ քաղաքացիների հնչեցրած մոտեցումներն ու արած հարցադրումները: Բնակիչների կողմից նվազա-

գույն աջակցություն ստացած տարբերակը՝ քաղաքապետարանի շենքի վերանորոգումը հանվել է ընթացիկ ծրագրերից, թողնելով ապագա անելիքների ցանկում: Աշխատանքներ են կատարվել նաև բնակիչների կարևորած այլ ուղղություններով:

Ազատան համայնքի ղեկավարության ջանքերով հանրային քննարկմանը հաջորդած ժամանակահատվածում միջոցներ են հայթհայթվել քննարկման մասնակիցների կողմից առավելագույն աջակցություն ստացած նախաձեռնության՝ Ջաջուռ գետի հունի մակարդակի իջեցման աշխատանքներն իրականացնելու նպատակով (մասնակիցների կեսից ավելին քվեարկել էր այս ծրագրի օգտին) և կատարվել են նախապատրաստական մի շարք աշխատանքներ: Միաժամանակ, Ազատանի գյուղապետարանը ձեռնամուխ է եղել քննարկման մասնակիցների մեկ երրորդի կողմից աջակցություն ստացած՝ ոռոգման համակարգի մասնակի վերանորոգման և ընդլայնման աշխատանքներին: Երիտասարդ ընտանիքների համար բնակարանաշինության ծրագիրը կյանքի կոչելու նպատակով գյուղապետարանը համապատասխան նախագիծ է մշակել և դրա իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ հայթհայթելու համար ներկայում բանակցում է մի շարք ներդրողների հետ:

Շահումյան համայնքում հանրային քննարկման մասնակիցների բացարձակ մեծամասնության՝ շուրջ 84 տոկոսի կողմից աջակցություն ստացած ներհամայնքային ճանապարհների բարեկարգման ծրագրին ամբողջական լուծում տալու նպատակով համայնքի ղեկավարությունը քննարկումից հետո ջանքեր է գործադրում համապետական կան միջազգային աջակցության ծրագրերում խնդիրը ներառելու ուղղությաբ: Զուգահեռաբար, 2014 թվականին համայնքի բյուջեի 1.5-2 մլն դրամ միջոցներով ցանկապատվել է գերեզմանատունը: Հանրային քննարկման ընթացքում հնչեցված՝ դպրոցի վերանորոգմանը միջոցներ հատկացնելու առաջարկը համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել է մարզպետարան, ինչ արդյունքում Լոռու մարզպետարանի հրատապ ծրագրերի շրջանակում դպրոցի տանքի վերանորոգումը համարվել է առաջնային խնդիր, և պետական բյուջեից միջոցներ են տրամադրվել՝ դպրոցի տանիքի վերանորոգման նպատակով:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄԶՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահո-

վելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ հասարակ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով:

Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության սփռման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ ինչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. Բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե

առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կածիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ժամանած ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին համակարգչային ծրգրի միջոցով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել ի օգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողների հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողները ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում, այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին

քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելվածում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն անուղղակի սոցիալական երկխոսություն է ապահովում քննարկվող խնդրի վերաբերյալ համայնքի հասարակ քաղաքացիների վերաբերմունքն ու դիրքորոշումն արտահայտող փաստարկների համադրման և այդպիսով՝ միջնորդավորված զուգահեռ «երկխոսություն» ծավալելու միջոցով:

Համեմատական վերլուծության մեթոդաբանությունը հենվում է երկու բաղադրիչների. (ա) համահամայնքային քննարկումների արդյունքների (ուղերձների) վերլուծություն՝ արծարծված հիմնախնդիրների և երեք հիմնական՝ գիտելիք[1], վերաբերմունք[2] և ընկալում հարթությունների (dimensions) առումով, և (բ) քննարկման դրված սցենարների վերաբերյալ

1 Գիտելիքը ներառում է. (ա) կյանքի փորձի և կրթության միջոցով անձի ձեռք բերած փորձառությունն ու իմտությունները, խնդրո առարկայի տեսական կամ գործնական ըմբռնումը, (բ) առանձին ոլորտում կամ ընդհանուր առմամբ հայտնի տեղեկություններն ուփաստերը, և (դ) դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ իրազեկությունը: Գիտելիքի վերաբերյալ փիլիսոփայական քննարկումները հաճախ սկսվում են գիտելիքի պլատոնական սահմանմանը հղումով՝ «գիտելիքը հիմնավորված ճշմարիտ հավատն է»: Այդուհանդերձ, գիտելիքի համընդհանուր ճանաչման և ընդունման արժանացած սահմանումը կամ նման սահմանման հեռանկարը բացակայում է, իսկ միմյանց հետ մրցող տեսությունները բազում են: Անգլերենի օքսֆորդյան բառարան. http://www.oed.com:

2 Վերաբերմունքը ենթադրական կառուցվածք է, որն արտահայտում է առարկայի հանդեպ անձի համակրանքի կամ հակակրանքի աստիճանը: Վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, բացասական կամ դրական պատկերացումներն են անձի, վայրի, առարկայի կամ դեպքի հանդեպ, որոնք հաճախ կոչվում են վերաբերմունքի առարկա: Մարդիկ կարող են նաև հակասական կամ տարակուսելի վերաբերվել առարկային, ինչը նշանակում է, որ նրանք միաժամանակ թե դրական, թե բացասական վերաբերմունք ունեն խնդրո առարկայի հանդեպ: Վերաբերմունքը գնահատական է: Այն ձևավորվում է ԱՎԳ մոդելով (ազդեցություն, վարքագիծ և գիտակցում): Զգայական արձագանքը հուզական արձագանք է, որն արտահայտում է առարկային անձի կողմից տրված նախապատվության աստիճանը: Վարքագծային մտադրությունն արտահայտվում է անձի խոսքի կամ տիպական վարքագծային միտումների միջոցով: Գիտակցական արձագանքը առարկայի գիտակցական գնահատումն է, որը ներառում է առարկայի վերաբերյալ անձի պատկերացումներն ու համոզմունքները: Վերաբերմունքը հաճախ անձնական փորձի կամ դիտարկման ճանապարհով միջավայրից քաղած դասերի արդյունք է: Breckler, S. J., & Wiggins, E. C. (1992). On defining attitude and attitude theory: Once more with feeling. In A. R. Pratkanis, S. J. Breckler, & A. C. Greenwald (Eds.), Attitude structure and function. Hillsdale, NJ: Erlbaum: էջեր՝ 407-427:

կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփում:

Նման մոտեցումն ապահովում է հասարակ քաղաքացիների միջև միջնորդավորված բանավեճն ու երկխոսությունը՝ նրանց հնչեցրած կարծիքների՝ ուղերձների, ամփոփման միջոցով: Որոշ դեպքերում բանավեճը կամ բողոքը միակ հնարավոր ձևաչափն են: Այն դեպքերում, երբ մարդիկ ներգրավվում են բանավեճի կամ ընդդիմախոսության մեջ, կողմերը փորձում են անհրաժեշտ ճնշում գործադրել կամ քաղաքական աջակցություն ձեռք բերել իրենց պահանջներն ու պատկերացումները տեղ հասցնելու նպատակով: Քանզի բանավեճի ու երկխոսության նպատակները տարբեր են, ուստի երկուսն էլ հաղորդակցության դաշտի կարևորագույն տարրեր են: Ցավո՛ք, հաճախ երկխոսության և բանավեճի միջև հավասարակշռությունը զգալիորեն շեղված է երկրորդի կողմը:

Հանրային քննարկումներում բանավեճային ձևաչափը գերակշռում է բազում պատճառներով, այդ թվում. (ա) ոմանք համոզված են, որ բանավեճն ու ընդդիմախոսությունը լսելի դառնալու միակ ուղին են, (բ) երկխոսության մոդելը շատերի ընկալմամբ նպաստում են վիճակի պահպանմանը կամ դանդաղ փոփոխություններին, (գ) համայնքային կամ հասարակական մակարդակներում իրական և արդյունավետ երկխոսության դրական օրինակների եզակի են, (դ) բանավեճից բացի այլ մեթոդների համար հաստատված կանոնների բացակայությունը, (ե) անձանց տարբեր խմբերի միջև առկա թշնամական մթնոլորտը ենթադրում է, որ հաղորդակցությունը ևս պիտի լինի թշնամական, (զ) բանավիճելն ավելի հրապուրիչ ու հետաքրքիր է, քան երկխոսելը, և բանավիճողին նկատելի է դարձնում, (է) բանավեճն ու ընդդիմախոսությունը «խոսել-դատարկվելու» գործառույթ ունի, (ը) բանավեճի պարագայում մարդիկ կարող են լսելու չտալ ու չսովորել բաներ, որոնք չեն սիրում, (թ) բանավիճելն ավելի հեշտ է. ռիսկերը քիչ են, բանավիճողը նվազ խոցելի է, (ժ) մարդիկ սիրում են հանդես գալ խմբերի, այլ ոչ սեփական անձի անունից, (ի) երկխոսությունը ընկալվում է որպես «հալելու ու հալվելու» միջոց, (լ) վախը, որ երկխոսությունը զիջումներ է պահանջում, (խ) վախը, որ երկխոսելու պարագայում խնդրելու են «ձուլվել-միակարծիք դառնալ», (ծ) վախը, որ շփոթմունքը, խոցելիության զգացումը կամ հակառակ կողմից կարծիքն ըմբռնելը երկխոսողին դարձնում է նվազ համոզիչ, (կ) վախը, որ երկխոսության մեջ մտնելու պարագայում, եթե դիմացինը մնում է բանավեճի շրջանակներում, ապա երկխոսություն սկսողը կարող է տանուլ տալ երկխոսությունը, (հ) շատերը տեղյակ չեն երկխոսության առանձնահատկություններին և չգիտեն, թե ինչու է այն շահեկան: Այսպե՛ս, շատերը տեղյակ չեն, օրինակ, որ իրենց համոզչությունը միայն շահում է, երբ հակառակ կողմին հասկանալ են տալիս, որ լսել են նրան:

Իհարկե՛, երկխոսության ծավալումն ինքնին ամենաբուժիչ չէ, սակայն բանավեճ-երկխոսություն խառնուրդի հավասարակշռումը օգտակար է

այն հաղորդակցության և խնդիրների լուծման բազմաթիվ խոչընդոտների հաղթահարելու գործում, որոնք ստեղծվում են բացառապես բանավեճի ձևաչափի պարագայում: Երկխոսության առավել բարձր մակարդակը կարող է խթանել քննարկումներում առավել մեծ թվով անձանց ներգրավումը: Երկխոսությունը հնարավորություն է ընձեռում հարստացնել քննարկումը սեփական փորձի օրինակներով, փոխանակել տարակուսանքը, մտավախություններն ու շփոթմունքը: Այս պարագայում ավելի շատ տեղեկություններ են փոխանակվում և ըմբռնումը խորանում է: Համայնքի զարգացման պլանավորման, գերակայությունների և բյուջետային ծախսերի հիմնական ուղղությունների սահմանման գործընթացը հաճախ հիմնվում է մյուսների կողմից խնդրի ընկալման, ցանկությունների և գերակայությունների թյուր ընկալման վրա:

Վերլուծությունը ենթադրում է նաև դասակարգված և խմբավորված ուղերձների համեմատական վերլուծությունը հակադրություն- համադրություն (Contrast-Coherence) սանդղակով: Վերլուծության փուլերն են.

Փուլ 1-ին. Նախնական մշակման փուլում հեռացվել են կրկնվող կամ տեխնիկական ուղերձները, քերականորեն սրբագրվում է ողջ տեքստը:

Փուլ 2-րդ. Տեսակավորման փուլում հեռացվել են անձնական կամ վիրավորանք[1] կրող ուղերձները, որոնք կարող են տրամադրվել կամ վերլուծվել առանձին հետազոտության շրջանակներում, մասնավորապես, ի հայտ բերելու համար առանձնապես բացասական վերաբերմունքն ու ընկալումը, որոնք, օրինակ, խոչընդոտում են հարաբերությունների կարգավորմանը:

Փուլ 3-րդ. Ըստ ուղերձների հարթությունների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ բնակիչների կարիքների բավարարման և համայնքի զարգացման հիմնախնդիրների հիմնական գործոնների. տնտեսական և սոցիալական աշխուժություն, բյուջե, ծախսեր, հոգսեր, անվտանգություն, շրջակա միջավայր և հանրային առողջություն, երեխաներ և երիտասարդներ, կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ:

Փուլ 4-րդ. Ըստ հիմնախնդիրների դասակարգման փուլում հնչած ուղերձներն ամփոփվել են սոցիալական երկխոսության վերլուծական աղյուսակում: Այս փուլում յուրաքանչյուր ուղերձ տեղադրվել է համակարծիք ուղերձների վանդակում, ներառելով թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ թե՛ հուզական փաստարկները: Հակառակ վանդակում տեղադրվել են ընդդիմախոս կամ այլընտրանքային փաստարկներ պարունակող ուղերձները: Որոշ դեպքերում ընդդիմախոս վանդակներում ուղերձներ չկան:

1 Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանքը սահմանվում է որպես արտահայտություն կամ գործողություն, որը որևէ մեկին կարող է պատճառել հուզական ցավ կամ որևէ այլ կերպով կարող է բորբոքել անհատին: Վիրավորանքը հարաբերական հասկացություն է, քանզի վիրավորանքի զգացումը հաճախ պայմանավորված է առանձին անհատի անձնական արժեքներով: Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանք չեն համարվել այն արտահայտությունները, որոնք ազատորեն շրջանառվել են հայաստանյան կամ միջազգային լրատվամիջոցներում:

Փուլ 5-րդ. Սինթեզի փուլում դասակարգված ուղերձներն ու փաստարկները վերլուծվել են համադրություն-հակադրություն սանդղակի միջոցով: Այս փուլում հիմնախնդիրները դիտարկվել են երկու առանցքներով՝ (ա) ինչպիսի ազդեցություն կունենա համայնքի զարգացմանն ուղղված այս կամ այն նախաձեռնությունը վերը նշված առանձին հիմնախնդրի վրա, և (բ) ինչպիսի ազդեցություն կունենա առանձին հիմնախնդիրը համայնքի զարգացման հեռնկարների վրա: Դիտարկվող հիմնախնդրի վերաբերյալ առանձին վերաբերմունքի կշիռն ու ընկալման սրությունը պայմանավորվել են ոչ թե այդ վերաբերմունքն արտահայտող արտահայտությունների, այդ թվում՝ ռացիոնալ, իռացիոնալ, հուզական և այլ, հաճախականությամբ կամ քանակով, այլ նման արտահայտությունների բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ: Այսինքն առանձին վերաբերմունքը կարևորվել է այնքանով, որքանով ավելի բազմազան են այն հիմնավորող կամ արտահայտող ձևակերպումները: Ձևակերպումների մեխանիկական կրկնությունը չի փաստում առանձին վերաբերմունքի միանշանակ կարևորության մասին, այլ կարող է արտահայտել, օրինակ, հիմնախնդրի վերաբերյալ առկա կարծրատիպերի տարածվածությունը:

ՀՀ Արմավիրի մարզի Լուկաշին համայնք



Մարզկենտրոն Արմավիրից շուրջ 7 կիլոմետր հեռավորությամբ գտնվող Լուկաշին համայնքը հիմնադրվել է 1922թ.:

Ծովի մակերևույթից 875մ բարձրության վրա գտնվող համայնքը փռված է շուրջ 10.6 քառ. կմ մակերեսի վրա: Գյուղի բնակչությունն արմատներով սերում է Ախուրյանի, Ապարանի, Գորիսի, Թալինի շրջաններից, ինչպես նաև Լիբանանից, Սիրիայից, Իրանից: Ներկայում համայնքն ունի ավելի քան 770 տնտեսություն:

Համայնքի առկա բնակչությունը 2,155 մարդ է, մշտական բնակչությունը՝ 2,216 (2011թ. մարդահամարի տվյալներ): Լուկաշինցիների շուրջ 52%-ը կանայք են, 48%-ը՝ տղամարդիկ: Համայնքի բնակիչների շուրջ 35%-ը երեխաներն ու երիտասարդներն են, այդ թվում՝ շուրջ 100 նախադպրոցական և 270 դպրոցական տարիքի երեխա:

Գյուղատնտեսական հողահանդակները (հիմնականում՝ վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ) ոռոգվում են Արմավիրի Մայր ջրանցքի ջրերով: Համայնքում գործում են գինու գործարան, խոտալյուրի արտադրամաս, կաշվի արտադրամաս: Համայնքում գործում է դպրոց, մանկապարտեզ, բուժկետ:

2012 թվականից Լուկաշին համայնքի ղեկավարը 1985 թվականին ծնված Կարեն Մկրտչյանն է, մասնագիտությամբ՝ գյուղատնտես
(հեռախոս. +374 94 76 90 77):

Համայնքի ավագանու անդամներն են. Անդրանիկ Թովմասյանը, Արամայիս Հովհաննիսյանը, Սուրեն Հովսեփյանը, Գագիկ Մարգարյանը, Նորիկ Մեսրոպյանը, Արթուր Մկրտումյանը, Սուրեն Մուրադյանը:

Քննարկման դրված սցենարները

Սցենար 1. Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում

Լուկաշին համայնքում դեռևս լուծված չէ փողոցների գիշերային լուսավորության խնդիրը: Մութն ընկնելուն պես փողոցները դատարկվում են և լսելի է միայն շների հաչոցը: Համայնքի լուսավորության ծրագիրը նախատեսվում է սկսել կենտրոնական, առավել բանուկ և նախորդ տարիներին ասֆալտապատված Ա.Թամանյան, Հ. Ավետիսյան և Զորավար Անդրանիկ կենտրոնական փողոցներից: Այստեղ են գտնվում հանրային մի շարք կարևոր վարչական, կրթական, մշակութային և սոցիալական հաստատություններ, այդ թվում՝ գյուղապետարանը, փոստը, մանկապարտեզը, մշակույթի տունը, դպրոցը, խանութներ և կրպակներ:

Լուսավորության բացակայության պատճառով, համայնքի կենտրոնը երեկոյան ժամերին խավարի մեջ է: Համայնքի բնակիչները, մասնավորապես՝ երիտասարդները, երեկոյան ժամերին չեն կարողանում իրենց համատեղ ժամանցը կազմակերպել համայնքի կենտրոնում: Երեկոյան ժամերին կենտրոնական փողոցներում դժվարանում է տրանսպորտի երթևեկությունը և մարդկանց, հատկապես՝ կանանց և աղջիկների տեղաշարժը: Համայնքի կենտրոնը երեկոյան ժամերին գրավիչ չէ:

Լուկաշին համայնքի 2013թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել հատկացնել շուրջ 5 մլն. դրամ՝ կենտրոնական երեք փողոցների 1.5կմ երկարությամբ հատվածը լուսավորելու նպատակով: Նախատեսվում է փողոցների մեկ կողմում տեղադրել հիմնասյուներ, գնել լամպեր և անց-

կացնել էլեկտրական հաղորդալարեր: Աշխատանքները հնարավոր է իրականացնել դոնորների և մասնավոր ներդրողների կողմից լրացուցիչ ֆինանսավորման պարագայում:

Ծրագրի իրագործման արդյունքում.

- համայնքը կունենա բարեկարգ և լուսավոր կենտրոն՝ ավելի գրավիչ ու հարմարավետ բնակիչների և համայնքի հյուրերի համար.
- բնակիչները հնարավորություն կունենան երեկոյան ժամերին լիարժեք կերպով կազմակերպել իրենց մշակութային կյանքը, հաճախել կենտրոնական փողոցներում գործող մարզական, կրթական և ժամանցի այլ հաստատություններ.
- կաշխուժանա առևտրի և սպասարկման օբյեկտների գործունեությունը երեկոյան ժամերին.
- կենտրոնական փողոցներում կաշխուժանա երթևեկությունը՝ դառնալով առավել անվտանգ և հարմարավետ.
- անմիջականորեն կշահեն այս փողոցների վրա ապրող 150 ընտանիքներ. նրանց երեխաները հնարավորություն կունենան երեկոյան ժամերին ավելի երկար խաղալ բակում, այս տնտեսությունները հնարավորություն կունենան խնայել էլեկտրաէներգիան և կրճատել ծախսերը.
- կբարձրանա կենտրոնական փողոցների վրա գտնվող անշարժ գույքի արժեքը.
- հնարավորություն կստեղծվի համայնքը մարզկենտրոնին և հարևան համայնքներին կապող հանրային տրանսպորտի աշխատանքը կազմակերպել նաև երեկոյան ուշ ժամերին, ինչի կարիքն ունեն, հատկապես, հարևան համայնքներում աշխատող բնակիչները:

Սցենար 2. Լողավազանի վերակառուցում

Լուկաշինը Արմավիրի մարզի և հանրապետության բազմաթիվ այլ գյուղական համայնքներից տարբերվել է նրանով, որ այստեղ նախկինում գործել է լողավազան: Սակայն այն արդեն երկար տարիներ անգործության է մատնվել: Համայնքի բնակիչները այսօր էլ կարոտով են հիշում այն բարի ու լավ ժամանակները, երբ գյուղի երիտասարդությունը և միջին տարիքի մարդիկ պարբերաբար ու հաճույքով հաճախում էին լողավազան: Լողավազանը լուկաշինցիների հպարտության առարկան էր. գրեթե բոլորը լողալ գիտեին:

Այսօր բնակիչները զրկված են այդ հնարավորությունից: Մոտակա համայնքներում չկան համապատասխան սպորտային կենտրոններ: Երեխաներն ու երիտասարդները զրկված են մասնագետի հսկողությամբ լողալ սովորելու հնարավորությունից: Լողավազանի բացակայության պայմաններում, շատ երիտասարդներ փորձում են լողի դասեր ստանալ մարզի բնական և արհեստական ջրամբարներում՝ գետերում, լճերում, ջրանցքներում (կանալ), ինչը մեծ վտանգ է նրանց թե՛ առողջության և թե՛, ի վերջո, կյանքի համար:

Լուկաշին համայնքի 2013թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել հատկացնել շուրջ 5 մլն. դրամ՝ լողավազնի վերակառուցան նպատակով: Նախատեսվում է 96 ք.մ. մակերեսով (12մ x 8մ) նախկին լողավազանի բազայի վրա կառուցել ծածկված լողավազան՝ տղաների և աղջիկների համար առանձին հանդերձարաններով, ցնցուղ ընդունելու խցիկներով և այլ հարմարություններով: Աշխատանքները հնարավոր է իրականացնել դոնորների և մասնավոր ներդրողների կողմից լրացուցիչ ֆինանսավորման պարագայում:

Ծրագրի իրագործման արդյունքում.

- համայնքի բնակիչները, այդ թվում՝ երեխաները, երիտասարդները, կանայք և աղջիկները հնարավորություն կունենան հարմարավետ պայմաններում, մարզչի հսկողությամբ սովորել լողալ, զբաղվել սպորտով և ակտիվ շփվել: Սա կնպաստի նրանց առողջության ամրապնդմանը և ներդաշնակ զարգացմանը՝ հոգով և մարմնով.
- կմեծանա երեխաների և երիտասարդների հետաքրքրությունը լող սպորտաձևի նկատմամբ, կբացվեն լողի խմբեր տարբեր տարիքի մարդկանց համար, լողը՝ որպես մարզաձև կմտնի համայնքի կյանք.
- համայնքի տարբեր տարիքային խմբերի բնակիչները կունենան ժամանակակից լողավազան, որը կդառնա թե՛ ժամանցի և թե՛ սպորտով զբաղվելու հրաշալի վայր.
- շուրջ 7 կին և տղամարդ կունենան մշտական աշխատատեղ.
- լողավազանից օգտվելու հնարավորություն կունենան նաև մոտակա համայնքների բնակիչները
- լողավազանի շահագործման արդունքում գոյացած ֆինանսական միջոցները կուղղվեն թե՛ համայնքի բյուջեի համալրմանը, թե՛ լողավազանում սանիտարահիգիենիկ պայմաններ ապահովելուն.
- կվերականգնվեն համայնքի հին ու բարի ավանդույթները:

Սցենար 3. Մանկապարտեզի մասնակի վերանորոգում

Լուկաշին համայնքի մանկապարտեզը կառուցվել է նախորդ դարի 70-ական թվականներին: Մանկապարտեզի շենքը մեկհարկանի է, 400 ք.մ մակերեսով: Այն նախատեսված է եղել մսուրային և նախադպրոցական տարիքի շուրջ 120 երեխայի համար: Հայաստանի անկախացումից ի վեր ֆինանսական հնարավորությունների բացակայության պատճառով այն մինչ օրս չի վերանորոգվել: 2012 թվականին մանկապարտեզը վերագործարկվեց, սակայն այն գործեց միայն մեկ ամիս: Թեև մանկապարտեզն ունի անհրաժեշտ գույք և պարագաներ, սակայն տանիքի անմխիթար վիճակի պատճառով հնարավոր չէ օգտագործել այն՝ ըստ նշանակության:

Արդյունքում համայնքի շուրջ 65 նախադպրոցական տարիքի երեխաներ զուրկ են նախակրթություն ստանալու՝ զարգացման, դաստիարակության և դպրոցական միջավայրին արագ ինտեգրվելու և հարմարվելու կարևորագույն հնարավորությունից: Խնդիրը միայն երեխաների խնամքի ու դաստիարակության կազմակերպման անհնարինության մեջ չէ: Պետական և մասնավոր հատվածներում, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ զբաղված բազմաթիվ ընտանիքներ, մանկապարտեզի չգործելու պայմաններում հանդիպում են զբաղվածություն ապահովելու և եկամուտ վաստակելու լուրջ դժվարությունների: Անգործության է մատնվել մանկապարտեզի ողջ աշխատակազմը:

Լուկաշին համայնքի 2013թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել հատկացնել շուրջ 5 մլն. դրամ՝ մանկապարտեզի մասնակի վերանորոգման նպատակով: Նախատեսվում է իրականացնել մանկապարտեզի 400 ք.մ. տանիքի մասնակի վերանորոգում: Չնայած մանկապարտեզի շենքն ամբողջությամբ հիմնանորոգման կարիք է զգում, սակայն համայնքի ներկա հնարավորությունները թույլ են տալիս իրականացնել միայն տանիքի մասնակի վերանորոգում: Վերանորոգումից հետո հնարավոր կլինի վերաբացել մանկապարտեզը և ընդունել երեխաներին, եթե ոչ կլոր տարին, ապա գարուն-աշուն ժամանակահատվածում: Աշխատանքները հնարավոր է իրականացնել դոնորների և մասնավոր ներդրողների կողմից լրացուցիչ ֆինանսավորման պարագայում:

Ծրագրի իրագործման արդյունքում.

- համայնքում կվերաբացվի մանկապարտեզը.
- նախադպրոցական տարիքի երեխաները հնարավորություն կունենան ստանալու գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են զարգացման և հետագա կրթության համար.
- կստեղծվեն աշխատատեղեր մանկավարժների և սպասարկող անձնա-

կազմի համար.

- երեխաներին խնամող մայրերը կունենան աշխատելու հնարավորություն:

Սցենար 4. Գյուղամիջյան ճանապարհահատվածի բարեկարգում

Լուկաշին համայնքի գյուղապետարանից դպրոց տանող 850մ երկարությամբ ճանապարհահատվածը ասֆալտապատ Հունան Ավետիսյան փողոցի շարունակությունն է: Ճանապարհատվածը գտնվում է անմխիթար վիճակում, կիսաքանդ է՝ մեծ ու փոքր ակոսներով:

Ասֆալտի ծածկույթ չունեցող գրունտային այս հատվածը լուրջ դժվարություններ է առաջացնում հատկապես դպրոցահասակ երեխաների, մանկավարժների, ինչպես նաև ծնողների համար, հատկապես՝ անձրևային եղանակին: Նման օրերին դպրոց հաճախելը դառնում է իսկական փորձություն թե՛ դպրոցականների, թե՛ մանկավարժների համար: Առանց այն էլ սոցիալական ծանր վիճակում գտնվող ընտանիքների ուսերին ծանրանում են լրացուցիչ ծախսեր՝ կոշիկների և հագուստի մաշվածություն և այլն:

Լուկաշին համայնքի 2013թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել հատկացնել շուրջ 5 մլն. դրամ՝ գյուղապետարանից դպրոց տանող 850մ երկարության ճանապարհահատվածի բարեկարգման և հարթեցման նպատակով՝ ցեմենտա-խճային խառնուրդով: Աշխատանքները հնարավոր է իրականացնել դոնորների և մասնավոր ներդրողների կողմից լրացուցիչ ֆինանսավորման պարագայում:

Ծրագրի իրագործման արդյունքում.

- համայնքի շուրջ 292 աշակերտներ, նրանց ծնողները և 45 մանկավարժներն ու աշխատակիցները հնարավորություն կունենան դպրոց հաճախել բարեկարգ և մաքուր ճանապարհով.
- կբարելավվեն դպրոց հաճախող երեխաների առողջության և անվտանգության պայմանները.
- երեխաներն ու մանկավարժները անձրևային եղանակին դպրոց կմտնեն մաքուր հագուստ-կոշիկով
- նկատելիորեն կնվազի բնակիչների հոգսը՝ ծախսերն ու ժամանակը:

Սցենար 5. Գերեզմանատան տարածքի պարսպապատում

Լուկաշին համայնքի գերեզմանոցը հիմնվել է 1920-ականներին, մասնակի պարսպապատ է, տեղ-տեղ՝ կիսաքանդ մետաղական ճաղերով: Գերեզմանոցում են հանգչում գյուղի հասարակ աշխատավորն ու մշակը, հայրենական պատերազմի ու արցախյան ազատամարտի հերոսամարտիկները: Գերեզմանոցն ունի պատմամշակութային արժեք:

Ամբողջական և հուսալի ցանկապատի բացակայության պայմաններում գերեզմանի տարածքում են կազմակերպվում անասունների արոտը: Գերեզմանները տրորվում են ու փլուզվում, քանդվում են հուշարձանաքարերն ու պաշտպանիչ եզրաքարերը: Այս հիմնախնդիրը կարևոր է համայնքի յուրաքանչյուր ընտանիքի համար:

Լուկաշին համայնքի 2013թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել հատկացնել շուրջ 5 մլն. դրամ՝ գերեզմանոցը քարե շարվածքով պարսպապատելու համար՝ շուրջ 3 կմ պարագծով: Գերեզմանոցն ունի դեպի Թալին ուղղությամբ ընդլայնվելու հնարավորություն: Աշխատանքները հնարավոր է իրականացնել դոնորների և մասնավոր ներդրողների կողմից լրացուցիչ ֆինանսավորման պարագայում:

Ծրագրի իրագործման արդյունքում.

- համայնքը կունենա պահպանված և պաշտպանված գերեզմանատուն.
- կկրճատվեն համայնքի բնակիչների հոգսերը և չնախատեսված ծախսերը.
- գյուղապետարանը նախատեսում է նաև շինարարական աշխատանքներում ներգրավել աշխատուժ՝ համայնքի բնակիչների թվից, ինչը կապահովի շուրջ 10-15 աշխատատեղ:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

«Կասկած չունենաք, թե մտահոգ, հոգացավ քաղաքացիների փոքր խումբն ունակ է փոխել աշխարհը: Իրավամբ, այն միակ բանն է, որ ի վիճակի է ինչ-որ բան փոխել»:

Մարգարեթ Միդ, մարդաբան

Ամենը, կամ՝ ոչի՛նչ

Լուկաշինցիների մի խումբ համարում է, որ օրվա մութ ժամերին փողոցների լուսավորությունը որոշակիորեն կավելացնի լուսավորված փողոցներում գտնվող անշարժ գույքի գինը: Բնակիչները լուսավորությունը նաև կարևորում են բերքահավաքի ամիսներին՝ երբ հոգնած մարդիկ տուն են վերադառնում առավելապես մթնշաղին: Համայնքի մշակույթի տունը միջոցառումներ է կազմակերպում հիմնականում երեկոյան ժամերին, ուստի լուսավորությունն այս առումով նույնպես կարևորվում է, կարծում են բնակիչները:

Միաժամանակ, բնակիչների մի փոքր խումբը համարում է, որ լուսավորությունը գիշերային ժամերին կխանգարի բնակիչների հանգիստը: Նրանք համարում են, որ համայնքը փողոցային լուսավորության համար պետք է միջոցները հատկացնի բացառապես այն պարագայում, եթե լուսավորվեն համայնքի բոլոր հիմնական փողոցները:

Լողավազա՞ն, թե այգի

Լուկաշինցիների մի խումբ կարծում է, որ վերակառուցված լողավազանը կարող է դառնալ ժամանցի վայր երիտասարդների և երեխաների համար: Նրանք գտնում են, որ լողավազանի վերանորոգումից հետո հարևան համայնքների բնակիչները նույնպես կօգտվեն լողավազանից, ուստի այն կարող է դառնալ հավելյալ եկամուտի աղբյուր համայնքի ու նրա բնակիչների համար:

Միաժամանակ, համայնքի բնակիչների մեկ այլ խումբ համարում է, որ ժամանցն առավել մատչելի ու արդյունավետ կազմակերպելու համար հարկավոր է ոչ թե վերակառուցել լողավազանը, այլ բարեկարգել համայնքի այգին և կարուսելները: այս խումբը նշում է, որ այգուց կօգտվեն բնակիչների ավելի շատ բնակիչներ, քան լողավազանից, այդ թվում՝ կանայք ու աղջիկները:

Աշխատատեղեր

Աշխատանք կանանց համար

Լուկաշինցիները նշում են, որ վերակառուցված լողավազանի գործարկումը աշխատանքով կապահովի համայնքի մի քանի բնակիչների, այդ թվում՝ վերապատրաստված մարզիչների: Բնակիչների նշում են նաև, որ կին մարզչի պարագայում աղջիկները, թերևս, նույնպես կհաճախեն լողավազան:

Նմանապես, մանկապարտեզի վերագործարկումը նոր աշխատատեղեր կստեղծի համայնքում: Մանկավարժներն ու դաստիարակները կունենան աշխատանք, իսկ մայրերը երեխաներին բերելով մանկապարտեզ նույնպես կկարողանան աշխատել: Բնակիչները նաև նշում են, որ թեև մանկավարժները գյուղում շատ են, սակայն նրանց համապատասխան աշխատանք՝ չկա:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Լրացուցիչ ծախս, թե եկամտի աղբյուր

Լուկաշինցիները համարում են, որ վերակառուցված լողավազանի գործարկումից հետո հարևան համայնքների բնակիչները կօգտվեն լողավազանից, ինչը հավելյալ եկամտի աղբյուր կդառնա համայնքի համար: Այս միջոցները, կարելի կլինի ուղղել, մասնավորապես, ենթակառուցվածքների պահպանման և շահագործման ընթացիկ ծախսերը, օրինակ՝ փողոցային լուսավորության էլեկտրաէներգիայի վճարները ծածկելուն:

Լուկաշինցիների մեկ այլ խումբ համարում է, որ քչերը կօգտվեն լողավազանի վճարովի ծառայություններից, քանի որ համայնքի բնակիչների վճարունակությունը ցածր է: Նրանց կարծիքով լողավազանից ստացված հասույթը հազիվ ծածկի լողավազանի ընթացիկ ծախսերը:

Վերագործարկում և շահագործում

Լուկաշինցիների մի խումբ մանկապարտեզի ընդհանուր վիճակը բավարար է համարում: Որպես փաստարկ, նշում են, թե մանկապարտեզը գտնվում է բարվոք վիճակում, գազաֆիկացված է, ունի նոր գույք և խաղալիքներ: Այս խումբն առավելապես կարևորում է մանկապարտեզի վերագործարկումը և համարում է, որ վերանորոգումը ցանկալի է, սակայն պարտադիր պայման չէ մանկապարտեզը վերագործարկելու համար: Նրանց կարծիքով մանկապարտեզին անհրաժեշտ է ֆինանսավորում՝ առաջին հերթին գործելու, և ապա միայն, հնարավորության դեպքում՝ վերանորոգման համար: Նշում են, որ իրենց կարծիքով տանիքը երբեք մեծ խնդիր չի

եղել, իսկ մանկապարտեզը չի գործում բյուջեի սղության պատճառով: Այս խումբը համարում է, որ մանկապարտեզի վարձավճարը բարձր է և ծնողները վճարել չեն կարողանում: Շատ հաճախ, հատկապես ձմռանը, ծնողները նախընտրում են երեխային պահել տանը, քանի որ հիմնականում չեն աշխատում և կարող են երեխային խնամել, և մանկապարտեզի համար վճարելու կարիք չի առաջանում:

Միաժամանակ, բնակիչների մեկ այլ խումբ կարևորում է մանկապարտեզի ջեռուցման խնդիրը: Այսպես, բնակիչները նշում են, որ եթե մանկապարտեզում կենտրոնական ջեռուցում լինի, ապա մանկապարտեզը կարող է գործել տարվա բոլոր ամիսներին: Այդուհանդերձ, բնակիչների մեկ այլ խումբ մտահոգություն է հայտնում, որ համայնքում երեխաների թիվը տարեց-տարի նվազում է, ուստի աստիճանաբար նվազում է նաև մանկապարտեզի վերաբացման կարևորությունը: Այս խումբը վստահ չէ, որ մանկապարտեզը վերագործարկումից հետո տարիներ անց կշարունակի գործել: Միաժամանակ, նշում են նաև, որ նախկինում նույնիսկ հարևան գյուղերից երեխաներ են բերել մանկապարտեզ:

Նորոգ ճանապարհ, մաքուր համայնք՝ քիչ ծախսեր

Լուկաշինցիների մեծ մասը կարևորում է կենտրոնական ճանապարհների նորոգումը, քանզի համարում է, որ այն կազատի բնակիչներին հավելյալ հոգսերից ու ծախսերից: Այսպես, աշնանը և ձմռանը բնակիչները ստիպված են ավելի շատ հագուստ օգտագործել ու կոշիկ մաշել, քանի որ լվացված հագուստը արագ չի չորանում: Երեխաներն էլ դպրոցի անբարեկարգ ճանապարհին փոշոտվում են, ցեխոտվում, թրջվում են, ընկնում ու վնասվում: Երեխաները ցեխոտ մտնում են դպրոց, տներ ու ցեխոտում դրանք: Նրանք համարում են, որ կենտրոնական ճանապարհների վերանորոգումը կօգնի ազատվել հավելյալ ծախսերից, կանանց հոգսը կթեթևանա: Ուսուցիչները նույնպես դպրոց ու դասարան կմտնեն մաքուր զգեստով:

Բնակիչների մեկ այլ խումբ, գտնում է, որ եթե փողոցները լուսավորված լինեն, ապա ճանապարհը տեսանելի կլինի և մեծերն ու փոքրերը չեն ընկնի ու ցեխոտվի:

Վերանորոգված ցանկապատ՝ հանգանակության միջոցով

Լուկաշինցիների մեծ մասը կարծում է, որ գերեզմանատան ցանկապատը կարելի է վերանորոգել հանգանակության միջոցով՝ ըստ բնակիչների կարողության ու ցանկության: Այս խումբը համարում է, որ այս կերպ հնարավոր կլինի լուծել գերեզմանատան խնդիրը, և, միաժամանակ, համայնքի բյուջեն ազատել այս բեռից:

Բնակիչների մեկ այլ խումբ համարում, սակայն, որ բոլորը չէ, որ վճարելու հնարավորություն ունեն: Նշում են, թե. «բնակիչները երբեմն չեն կարողանում անգամ իրենց հարազատների գերեզմանը բարեկարգ պահել, էլ ինչպե՞ս կարող են ամբողջ գերեզմանատան ցանկապատի մասին հոգալ»:

Անվտանգություն

Երեկոներն այստեղ խաղաղ են

Լուկաշինցիների մեծամասնությունը կարևորում է փողոցների լուսավորության խնդիրը: Բնակիչների կարծիքով երիտասարդները՝ ուսանողները, հատկապես՝ աղջիկները, ուշ ժամերին խուսափում են փողոց դուրս գալ՝ փողոցային շների պատճառով: Կանայք գերազանցապես աշխատում են երեկոյան ժամերին տանը մնալ: Միաժամանակ, եթե փողոցները լուսավորվեն մութ ժամերին, ապա հասարակական տրանսպորտը կաշխատի մինչև ուշ երեկո, բնակիչները երեկոյան ժամերին համայնքում հասարակական կյանքը կաշխուժանա, բնակիչները կկարողանան մինչև ուշ երեկո շփվել՝ հյուրընկալել և հյուրընկալվել:

Այդուհանդերձ, համայնքի բնակիչների մի ստվար խումբ փողոցների լուսավորության բացակայությունը մեծ խնդիր չի համարում: Նրանք, մասնավորապես, նշում են, որ այս փողոցներում գտնվող խանութներն ու տները այս կամ այն չափով լուսավորում են փողոցը: Իսկ հասարակական տրասպորտը նույնիսկ ամռանը աշխատում է մինչև ժամը 17:00-ն և փողոցների լուսավորությունը դրանց չվացուցակի հետ ամենևին կապ չունի:

Դպրոցի ճամփան դժվար է, երկար՝ շատերի համար

Համայնքի բնակիչների կարծիքով դպրոց տանող ճանապարհն անմխիթար վիճակում է: Անձրևոտ ու ձնառատ օրերին աշակերտները դպրոց գնալու ճանապարհին ընկնում են, վնասվում: Ուսուցիչները ոտքից՝ գլուխ թրջված, փոշոտված կամ քերծված երեխային հաճախ ստիպված տուն են ուղարկում: Միաժամանակ, բնակիչների մի մասը կարծում է, որ դպրոց տանող ճանապարհը վերանորոգելով խնդիրն ամբողջությամբ չի լուծվի: Չէ՞ որ, հեռու՝ նույնքան ցեխոտ փողոցներով էլ են երեխաները դպրոց հասնում: Ավելին, բնակիչները նշում են, որ գյուղով երթևեկող գյուղտեխնիկան վնասում, քանդում է ասֆալտապատ ճանապարհը:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Բնակիչների կարծիքով գյուղի ճանապարհների վերանորոգումը կնպաստի համայնքի բնակիչների առողջության պահպանմանը: Այսպես,

լուկաշինցիները նշում են, որ երեխաները հաճախ ընկնում և վնասվում են քարուքանդ փողոցներում, իսկ ձմռանը և աշնանը հաճախ հիվանդանում, քանի որ ընկնում են, թրջվում ու մրսում: Նշում են նաև դեպքեր, երբ կանչված շտապ օգնությունն անանցանելի ճանապարհների պատճառով մեքենան տեղ չի հասել:

Մշակույթ, արժեքներ

Գերեզմանոցը՝ պատմամշակութային արժեք

Լուկաշինցիների համարում են, որ հայերիս համար գերեզմանները պատմամշակութային ժառանգության մաս են, ուստի հարկավոր է դրանք պահպանել ու պաշտպանել հավուր պատշաճի: Բնակիչները նշում են, որ «անհրաժեշտ է մեր նախնիների հիշտակը բարձր պահել՝ չվերածելով գերեզմանոցը արոտավայրի»: Այսպես, բնակիչները համարում են, որ գերեզմանատունը հարկավոր է ցանկապատել բոլոր կողմերից:

Միաժամանակ, լուկաշինցիների մի խումբ պնդում է, որ ցանկապատելով խնդիրը չի լուծվի, քանի որ հոտաղները հոտը միևնույն է կուղղեն գերեզմանատուն, դեռ մի բան էլ՝ ցանկապատը կգողանան: Նրանք նշում են, թե «առօրյա կյանքում այնքան հոգսեր կան, որ գերեզմանի մասին մտածելու ժամանակ ուղակի չի մնում»:

Երեխաներ և երիտասարդներ

Լողավազան՝ երիտասարդների համար

Լուկաշինցիների մեծ մասը համարում է, որ լողավազան առաջին հերթին անհրաժեշտ է երեխաներին և երիտասարդներին: Նրանք կարծում են, որ լողավազանի գործարկումից հետո երիտասարդները բոլորից շատ կօգտվեն դրանից:

Միաժամանակ բնակիչների մի մասը գտնում է, որ երիտասարդները հեռանում են համայնքից և «մինչև լողավազանը կառուցվի՝ համայնքում այլևս երիտասարդ չի մնա»:

Մանկապարտեզ. կրթություն՝ երեխային, աշխատանք՝ ծնողին

Լուկաշինցիների կարծիքով մանկապարտեզը խիստ անհրաժեշտ է՝ երեխաների կրթության համար, անգամ եթե ծնողը չի աշխատում և կարող է երեխային խնամել տանը՝ առանց լրացուցիչ ծախսերի: Նրանց կարծիքով նախադպրոցական կրթությունն անհրաժեշտ է համայնքի երեխանե-

րի ապահով ապագայի համար՝ երեխաները դպրոց կգնան որոշակի գիտելիք ստացած և ավելի որակյալ կրթություն կստանան:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Լուսավորությունն ու շփումները

Լուկաշին համայնքի բնակիչների մի մասի կարծիքով հենց լուսավորությունն է պատճառը, որ երեկոյան ժամերին կանայք գերադասում են տանը մնալ, ինչի արդյունքում նրանց շփումների հնարավորությունը նվազում է: Լուկաշինցիների մի մասը համարում է, որ եթե կենտրոնական փողոցները լուսավորվեն, ապա կենտրոնում գործող կանանց կոմիտեն կարող է նաև երեկոյան աշխատել:

Բնակիչների մի մասն էլ համարում է, որ կանանց՝ տանից դուրս չգալու պատճառը լուսավորության բացակայությունը չէ: Նրանց գտնում են, որ համայնքում չկան ժամանցի կենտրոններ և կանայք հասարակական նշանակության հետաքրքիր զբաղմունք չունեն:

Կարծրատիպերը՝ խոչընդոտ, սակայն հաղթահարելի

Լուկաշինցիների զգալ մի խումբ համարում է, որ վերակառուցված լողավազանից հիմնականում կօգտվեն տղամարդիկ: Լուկաշինցիները նշում են, որ «գյուղում մտածելակերպը ուրիշ է» և կանայք տղամարդկանց հետ չեն կարող լողավազանից օգտվել: Որպես փաստարկ, նրանք նշում են համայնքում տարածված այն կարծիքը, թե կնոջը պատիվ չի բերում լողավազանից օգտվելը: Որոշ կանայք հաստատում են այս կարծրատիպը, ասելով, թե իրենք չեն գնա լողավազան: Նրանց կարծիքով լողավազանի պայմանները նշանակություն չեն ունենա՝ կհաղթեն կարծրատիպերն ու աղջիկները միևնույն է չեն օգտվի լողավազանից՝ ծնողները թույլ չեն տա:

Լուկաշինցիների մեծ մասը համարում է, որ, չնայած առկա կարծրատիպերին, լողավազանը վերակառուցելուց հետո կարճ ժամանակ անց լողավազանից օգտվելու՝ կանանց խոչընդոտող մշակութային նորմերը հաղթահարելի են: Երկար ժամանակ չի պահանջվի, և կանայք ու աղջիկները՝ տղամարդկանց հավասար կհաճախեն լողավազան: Այս առումով, լուկաշինցիները կարևորում են վերակառուցված լողավազանում հարմարությունների ու պայմանների առկայությունը, սանիտարա-հիգիենիկ նորմերի հետևողական պահպանումը, կին աշխատակիցների ու մարզիչների առկայությունը և առանձին տարիքային խմբերի համար սահմանված ժամերը, միայն կանանց համար նախատեսված ժամեր և այլն:

Հնչած կարծիքների հանրագումարը

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում

- Կենտրոնի լուսավորությունը բոլորի համար է, դրանից կօգտվի ամբողջ գյուղը:
- Իհարկե լուսավորությունը կարևոր է, Հունան Ավետիսյան փողոցը լրիվ կարիք չկա լուսավորելու, խանութները ահագին տարածք լուսավորում են, եթե երեք կետում էլ դրվեն սյուներ, ամբողջ փողոցը կլուսավորվի:
- Անշարժ գույքի արժեքն ինչ-որ չափով կավելանա լուսավորության հարցի լուծման հետ մեկտեղ:
- Կենտրոնական փողոցների լուսավորությունը դրական ազդեցություն կունենա գյուղի ընդհանուր տեսքի վրա:
- Մեր մշակույթի տունը գտնվում է կենտրոնական փողոցի վրա, ու կան պիկ ժամեր, երբ գյուղի ժողովուրդը տարբեր առիթներով այնտեղ է հավաքվում, ու այդ ժամերը երեկոյան են: Պետք է լուսավորությունը վերանորոգել:
- Հենց մթությունից էլ դուրս չեն գալիս երբեմն կանայք, այ իսկ որ լուսավոր լինի, շատ բան կփոխվի:
- Ավելի լավ է փողոցները բարեկարգ լինեն, բայց չլուսավորված, քան քանդված, բայց լուսավորված:
- Գյուղում կան տեղեր, ուր անհրաժեշտ է լուսավորություն, օրինակ՝ հանրակացարանի մոտ, գերեզմանիի տարածքում:
- 1970-ականներին լուսավորություն կար, շատ լավ էր, բայց հիմա դա այնքան էլ արդիական հարց չէ:
- Եթե լուսավորությունը կարգավորվեր բոլոր փողոցներում, ապա կարելի է փողը դրան տրամադրել:
- Համայնքի խանութները գտնվում են նշված փողոցներում, և դրանք իրենց տարածքները հիմնականում լուսավորում են:
- Լուսավորության խնդիրը կարևոր է, քանի որ խոսքը վերաբերում է

հիմնական բանուկ փողոցին:

- Լուսավորությունն այդքան էլ կարևոր չի, ավելի կարևոր խնդիրներ ունենք:
- Լուսավորության խնդիրը առաջնային չի:
- Այսպես թե այնպես փողոցները լուսավորվում են խանութների լույսերով: Ավելի լավ է ավելի կարևոր բաների վրա փողը ծախսենք:
- Բերքի տեղափոխման սեզոնին լուսավորության հարցը մեծ խնդիր է:
- Փողոցի վրայի տները նույնպես ամբողջ գիշերվա ընթացքում լույսեր են վառում և փողոցը լուսավորվում է:
- Համայնքի միջոցներով էլ հնարավոր է լուսավորություն անցկացնել, եթե հարևանները հավաքվեն իրենց տարածքում ընդհանուր լուսավորությունն ապահովեն:
- Լույսի առկայությունը կարևոր է, բայց առաջնային չէ:
- Լուսավորությունը նշված փողոցների բնակիչներին ոչ մի ֆինանսական օժանդակություն էլ չի տա:
- Արմավիր քաղաքում Բաղրամյան փողոցի լուսավորությունը գիշերային ժամերին խանգարում է բնակչությանը:
- Այդքան գումար չարժե ծախսել լույսերի վրա կարելի է երեք հարյուր մետրի վրա լույսեր դնել մի քանի հատ և այդ փողոցները ամբողջությամբ կլուսավորվեն:
- Գյուղի լուսավորությունը կարելի է ասել լուծվող խնդիր է, եթե բյուջեի միջոցները ներդրվեն և համայնքն էլ մասնակցի:

Լողավազանի վերակառուցում

- Լողավազանի համար ջուր տալու փոխարեն թող մեր խմելու ջրի հոսքը ուժեղացվի, վերանորոգման փոխարեն թող բարեկարգեն այգին, կարուսելներ դնեն: Այգի աղջիկներ էլ կգնան:
- Գյուղն ունի ոռոգման խնդիր, ինչպես կլուծվի այս խնդիրը:
- Եթե լողավազանը լինի, ապա կողքի համայնքներից էլ կգան օգտվելու համար: ԵՎ դա համայնքին լրացուցիչ եկամուտի աղբյուր կլինի:
- Միայն լողավազանը վերանորոգել առանց ընդհանուր այգին բարեկարգելու, ինձ թվում է, անիմաստ է:
- Լողավազանի խնդիրը ժամանցի տեսանկյունից կարևոր է, սակայն դրանից առաջ ավելի կարևոր խնդիրներ կան:

Մանկապարտեզի մասնակի վերանորոգում

- Դպրոցում վեց հարյուր երեխայից մնացել է ընդամենը երեք հարյուր ու գնալով պակասում է: Մանկապարտեզի ներդրումային արդյունավետությունը կարող է շատ ցածր լինել:
- Երեխաների քանակը գնալով քչանում է, ուստի մանկապարտեզը կարող է երկար կյանք չունենա:
- Նոթբուքը կառնենք կդնենք երեխայի դիմաց, մանկապարտեզ պետք չի գնա երեխան:
- Մանկապարտեզի վերանորոգումն առաջնային խնդիր է:
- Մանկապարտեզի վիճակը այնքան լավ է եղել, որ կողքի գյուղերից էլ են եկել մեզ մոտ: Վերանորոգումը խնդիրը չէ, խնդիրը վերաբացելն է:
- Կարևոր է նաև ջեռուցման խնդիրը, եթե ջեռուցում լինի մանկապարտեզը տարին կլոր կարող է գործել:
- Մանկապարտեզը բացենք՝ դրա մնացած խնդիրները կլուծվեն:

Աշխատատեղեր

Լողավազանի վերակառուցում

- Լողավազանի վերակառուցումը նպաստի համայնքում մարզիչներ վերապատաստմանը:
- Կարևոր է, որ աշխատողները լինեն համայնքից:
- Լողավազանի աշխատողները բնականաբար կանայք պետք է լինեն...

Մանկապարտեզի մասնակի վերանորոգում

- Մանկապարտեզը պետք է ոչ միայն երեխաներին, այն նաև աշխատատեղեր է բացում:
- Մանկապարտեզի վերաբացումը կտա աշխատատեղեր, երեխաները զբաղմունք կունենա, վերջապես կեսուրս տնից կգնա:
- Մանկապարտեզը նախ և առաջ մանկավարժների համար աշխատանքի խնդիր կլուծի, ինչպես նաև դպրոց հաճախելուց առաջ երեխաները ավելի պատրաստված կլինեն:
- Մանկավարժները գյուղում շատ են, բայց աշխատանք չկա:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում

- Գյուղի լուսավորությունը կարելի է ասել լուծվող խնդիր է, եթե բյուջեի միջոցները ներդրվեն և համայնքն էլ մասնակցի:
- Լուսավորության խնդիրը միայն համայնքի բյուջեով հնարավոր չէ լուծել, դոնորների օգնությունն էլ պետք:
- Լուսավորության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի գումարի հարցը էական դեր կարող է խաղալ այս սցենարի առավելությունները գնահատելուց:

Լողավազանի վերակառուցում

- Լողավազանը շահույթ կբերի գյուղին, կողքի գյուղերից կգան կլողանան, փող կտան, այդ փողով հետո կլուսավորենք:
- Ոնց հասկանում ենք, լողավազանը որ վերկառուցենք, վճարովի է լինելու, էնպես որ պետք չի:
- Ինձ թվում է, որ լողավազանի վրա պետք է խաչ քաշել, դա ընդհանրապես ռեալ չի:
- Ասենք լողավազանի պոմպը փչացավ, ո՞վ պիտի սարքի, էլի գյուղի բնակիչների վրա են մնալու ծախսերը:
- Լողավազանը անպայման կլինի վճարովի, իսկ գյուղը վճարունակ չէ:
- Նիսյայով համաձա՞յն եք լողավազանը վերանորոգել: Եթե այո, ապա համաձայն ենք: Եթե ոչ, փող չունենք՝ անցանք առաջ:
- լողավազանը անպայման կլինի վճարովի, իսկ գյուղը վճարունակ չէ:
- Լողավազանի վերանորոգումը հսկայական ծախսեր է պահանջում: Մենք հաշվարկել ենք հնարավորինս մինիմալ ծախսերով տասնմեկ միլիոն գումար էր հարկավոր:
- Ծնողը հացի փող չունի, պետք է վճարի լողավազանի համար... Լուկաշինը այդ վիճակում չէ, որ լողի պարապմունքների համար վճարեն:
- Լողավազանի վերանորոգումը շատ առաջնային խնդիր չէ:
- Լողավազանը եթե վճարովի եղավ, գրեթե ոչ մեկ չի գնա, եկամուտ չի լինի, ծախսն էլ շատ կլինի, ու կփակվի, անիմաստ բան է լինում:
- Լողավազանը պահպանման ծախսեր հետո չի պահանջի: Ոնց արել

ենք, տենց էլ կանենք՝:

- Կգնանք ինքներս բահով բանով կմաքրենք, նորից ջուրը կլցնենք ու կլողանանք:
- Իրականում լողավազանը չի կարող եկամուտի աղբյուր լինել: Այն կարող է միայն իր:
- Համայնքը առավել հրատապ հարցեր ունի, քան լողավազանի վերանորոգումը:
- Եթե լողավազանը լինելու է վճարովի, ուրեմն մյուս հարցերը էական չեն, մեկ է, չենք:
- Բնակիչը չի կարողանա ոչ գնալ, ոչ էլ երեխաներին ուղարկել:
- Նվազագույն գումարը լողավազանի համար... ձրին է:
- Լողավազանը կա, բետոնված է, ջուրը գալիս է կողքից, արտեզյան ջրերից, ու նրա վերակառուցումը կլուծի նաև գյուղի ոռոգման հարցը:

Մանկապարտեզի մասնակի վերանորոգում

- Մանկապարտեզը խփում ա տղամարդու գրպանին:
- Ծնողը չի կարողանում երեխային տանել մանկապարտեզ, որովհետև վարձը շատ բարձր է:
- Մանկապարտեզը վատ վիճակում չի, կարող է աշխատի ու վերանորոգման կարիք չունի, բացեցինք, մի ամիս աշխատես ու փակվեց, որովհետև թանկ էր, երեխեքին չէին բերում:
- Մանկապարտեզը ավելի լավ է ոչ թե վերանորոգեն, այլ ֆինանսավորեն, որ գինը հարմար լինի:
- Մանկապարտեզի միայն աշխատողների համար առնվազն ութ հարյուր հազար գումար է հարկավոր:
- Մանկապարտեզի վերանորոգումը ձեռնտու կլինի, եթե հետագայում վարձը ցածր լինի:
- առաջարկ է եղել մանկապարտեզ գնալը լինի անվճար, սակայն գումար ավելանա հողի հարկին, սակայն դա չընդունվեց:
- Մանկապարտեզը բարվոք վիճակում է, գազաֆիկացված է, միայն աշխատելուն խանգարող հանգամանքը գումարն է, ներդրումները դրանց պետք է ուղղվեն:
- Տանիքը երբեք խնդիր չի եղել, ուղակի ռեսուրսներ չկան: Բյուջեն է պատճառը, որ չի բացվում:

- Մանկապարտեզի փակման պատճառը աշխատողներին աշխատավարձ չվճարելն էր:
- Մանկապարտեզը շատ նվերներ է ստացել անցած տարի հունիսի երկուսին նվերներ ստացան, իսկ երեքին մանկապարտեզը փակվեց: Աշխատավարձ չտալու պատճառով:
- Մանկապարտեզի վերագործարկումը մեծ գումարների հետ է կապված՝ աշխատավարձ, ջեռուցում, երեխաների սնունդ, այլ պահպանման ծախսեր: Չենք կարող այսքանը ապահովել:
- Շատ երեխաներից դաստիարակչուհիները բողոքում էին, շուտ էին գնում տուն, մի խոսքով շատ մութ հարցեր կային մանկապարտեզի փակման գործում: Գյուղապետարանը կիմանա:
- Գյուղի բոլոր երեխաներն էլ գնում են դպրոց, լավ սովորող երեխաներն էլ շատ են, բայց փող չլինելու պատճառով հետո էլ չեն շարունակում ուսուցումը:
- Ձմռանը գյուղի կանայք աշխատանք չունեն, հազիվ հանգստանում են ամռան չարչարանքից:
- Մանկապարտեզի ամսական վարձը ութ հազար դրամ է, ծնողին որտեղից՞ էդքան փող:
- Մանկապարտեզը հիմնականում վերանորոգված է, բացվելուն խանգարում է աշխատացնելու համար գումարը:
- Գյուղապետը հինգ հազար դրամ առաջարկեց, որ ամեն երեխայի համար վճարեն, որից կվճարեին աշխատողներին, երեխաների սննդին կհատկացվի, հարկերը կվճարվի, բայց ժողովրդի համար դա մեծ ծախս է:
- Ծնողը տալիս էր վեց-յոթ հազար դրամ ամսական մանկապարտեզի համար, ու կողքից էլ ալյուր, որ հաց թխեն երեխեքի համար:
- Մանկապարտեզի բոլոր պայմանները այնպիսին են, որ կարելի է այն լիովին օգտագործել, սակայն վճարները շատ բարձր էին: ԵՎ մանկապարտեզը չի ֆինանսավորվում, որ աշխատի:
- Եթե տանիքը վերանորոգելուց հետո, մանկապարտեզը պիտի աշխատի, եկեք վերանորոգենք, եթե՝ ոչ, ապա՝ ոչ: Չէ՞ որ վերագործակելուց հետո պետք է համայնքային բյուջեով այն աշխատացնենք:
- Ծնողները վճարունակ չեն, մանկապարտեզի բացումից մի քանի ամիս հետո դադարեցին երեխաներին ուղարկել:
- Մանկապարտեզի հարցը կարևոր է, պետք է միջոցներ ձեռնարկել աշ-

խատացնելու համար, բայց պետք է հարմարացնել բնակիչների վճարունակության հետ:

- Տղամարդիկ էլ են օգտվում մանկապարտեզից, գնում ա դաշտ աշխատի, ուզում ա կինն էլ հետը գա, բայց քանի որ երեխա ունի չի կարող գա:
- Ամուսիններին կօգնեն գյուղատնտեսական գործերում:
- Լողավազանը լցվի չլցվի արտեզյան ջուրը մեկա գնում ա, ոռոգման խնդիր չկա:
- Եթե արտեզյանը լցվի լողավազա, կողքերը էլ ոչ մեկ հողամաս չի դնի:
- Լողավազանի համար ջուր տալու փոխարեն թող մեր խմելաջրի հոսքը ուժեղացվի, վերանորոգման փոխարեն թող բարեկարգեն այգին, կառուսելներ դնեն: Այգի աղջիկներ էլ կգնան:
- Լողավազանի խնդիրը երկրորդական է:
- Այս բոլոր սցենարներից ամենաանկարևորը լողավազանի վերանորոգումն է:

Գյուղամիջյան ճանապարհահատվածի բարեկարգում

- Միայն չորրորդ սցենարը կմնա մեզ “օգուտ”:
- Կիսատ-պռատ բաներ անելը, ինձ թվում է անիմաստ է: Կամ պետք է ամբողջ գյուղը լուսավորվի, կամ ամբողջ գյուղի ճանապարհները վերանորոգվեն, կամ էլ պետք չի ոչինչ անել:
- Հողը պարապ նստած ա, տասը տոկոսը չի մշակվում, որովհետև հնարավորություն չունի գյուղացին հողը ցանելու, քանի որ ցանածից հետո եկամուտ չի լինում, ինչ կապ ունի երեխան գնում ա մանկապարտեզ թե չէ, կինը զբաղված է թե չէ:
- Շատ շոր ենք առնում, որովհետև այս սեզոնին լվացքը շուտ չի չորանում, պետք է հինգ կոմպլեկտ ունենանք, որ դիմանան:
- Կանայք կազատվեն գործերից, իսկ տղամարդիկ՝ ավելորդ ծախսերից:
- Կարող են ուղղակի ճանապարհները ավելի քիչ փողով շեբենապատեն:
- Ծնողը երեխային նորմալ հագցնում ա, մինչև հասնում ա դպրոց լինում ա ոտից գլուխ ցեխ, հետո ցեխը մտնում ա դպրոց, ու մաքրելն էլ դառնում ա ծախս:
- Առուները փակել են, ջուրը լցվում է փողոցները և ցեխոտվում են փողոցները:

- Ճանապարհը նորմալ մաքուր լինելու պարագայում, օրինակ, մեր երեխաները դպրոցից տուն գալուց, չեն ցեխոտվի, ու մենք նրանց համար հաց դնելու փոխարեն, ջուր չենք տաքացնի նրանց ու շորերը լվանալու համար:
- Եթե ճանապարհը լուսավորված լինի, մարդիկ ճանապարհը կտեսնեն և ցեխի մեջ չեն ընկնի:
- Ամեն օր երեխայի շորերը լվանում ենք, դա էլ է ժամանակի կորուստ:
- Սա հիմնական փողոց է, որից օգտվում են բնակչության գրեթե ութսուն տոկոսը: ԵՎ համաձայն ենք նույնիսկ նման նորոգմանը:
- Փողոցի նորոգումը կօգնի հավելյալ ծախսերից խուսափելուն:
- Կանանց հոգսը ճանապարհը բարեկարգելուց ավելի կթեթևանա, քանի որ շոր լվացողը կինն ա:
- Նշված ճանապարհից կօգտվի գյուղի բնակչության 90 տոկոսը:
- Դպրոցի ճանապարհների վերանորոգումը կարևոր է նաև ուսուցիչների համար, ցեխող, կեղտոտ մտնում են դասարան:
- Երեխաներից շատերը ջրի մեջ են ընկնում, հաճախ տուն ենք ուղարկում:
- Ճանապարհների վատ վիճակի պատճառով լինում են դեպքեր, երբ երեխաները վատ եղանակին չեն կարողանում գնալ դպրոց:

Գերեզմանատան տարածքի պարսպապատում

- Այս խնդիրը կարևոր է, բայց առաջնային չէ: Մենք մեր ուժերով էլ կարող ենք բարեկարգ պահել:
- Բոլորն այդ հնարավորությունը չունեն, որ ցանկապատեն իրենց հարազատների գերեզմանը:
- Նպաստում է տնտեսական, հիգիենայի, առողջության խնդիրների լուծմանը:
- Գերեզմանոցից ալյումիններ են գողանում, խնկի ամաններ, կենդանիներին են տանում արածացնում:
- Ողջերի խնդիրները թողած, մեռելների մասին ենք մտածում:
- Մարդիկ իրանց մեռելի վրա սկի քար չեն քաշում, ինչ պարիսպ:
- Գերեզմանը չի մեծանում դեպի գյուղը, գնում ա դեպի Թալին, ու դեռ մեծանալու ա, ինչքանը պարսպապատենք:
- Ոչ թե գերեզմանատան հարցը պետք է դնել, այլ գյուղում չկա դեղա-

տուն պետ է այդ հարցը լուծել:

- Գերեզմանոցի տարածքի համար թող ամեն մեկը վճարվի, կազմված գումարից թող հետո ցանկապատը կառուցեն:
- Երևի գերեզմանոցի ցանկապատի խնդիրը կարող ենք գյուղացիներով հավաքվել ու լուծել: Ավելի լավ է ավելի կարևոր խնդիրների վրա կենտրոնանանք:
- Պարսպի խնդիրը կարելի է լուծել հանգանակության միջոցով:
- Գերեզմանոցի հարցը արժի լուծել, սակայն ոչ հիմա:
- Գյուղում ավելի կարևոր հարցեր էլ կան լուծելու, օրինակ խմելու ջրի հարցը, ու ինքը ավելի կարևոր ա, դույլով ջուր ենք առնում խմելու համար, լիտրը ութսուն-հարյուր դրամ:
- Գերեզմանների վերակառուցումը առաջնային չի:

Անվտանգություն

Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում

- Գլխավոր փողոցների լուսավորությունը կարևոր է, որովհետև երեխաները ավելի անվտանգ կլինեն երեկոյան: Մայթերն ու ասֆալտը արդեն նորմալ են:
- Լուսավորությունը շատ կարևոր է, ասենք գնում ենք խանութ կամ հյուր երեկոյան, մեկ էլ շները վրա են տալիս:
- Երեկոյան ժամին խանութ գնալը մի քիչ դժվար է, ընտանիքներ կան, որ տղամարդ չկա տանը:
- Փողոցային շներն առավել վտանգավոր են այգում, հանքի փողոցում:
- Կանանց համար վտանգավոր չէ գյուղում, նույնիսկ եթե լուսավորված չէ:
- Հատկապես երեկոյան ժամերին լուսավորությունը կնպաստի, որ և՛ մեծերը, և՛ երեխաներն ապահով տուն կհասնեն:
- Երիտասարդ աղջիկներն ու ուսանողներն ուշ ժամի դժվար են տուն գնում լուսավորության բացակայության պատճառով:
- Հիմնական կարևոր փողոցները լուսավորության համար նշված փողոցներն են: Հատկապես հանքի ճանապարհը՝ Թամանյանը, որով բեռնա-

տարներ են անցնում և նույնիսկ ցերեկը այստեղ վտանգավոր է:

- Լուսավորությունը ավելի օգտակար կլինի հենց տղամարդկանց համար:
- Երեխաների մի մասը դպրոց ու մանկապարտեզ են գալիս այդ կողմից, մյուսներն էլ գալիս են մյուս կողմից, ինչի՞ ենք լուսավորվում միայն նշված փողոցները:
- Առավել նպատակահարմար է Հոկտեմբերյանից եկող ճանապարհը բարեկարգել:
- Մենք տրանսպորտ չունենք, որ լույսի խնդիրն էլ խանգարող կամ օգնող լինի:
- Եթե լուսավորությունը լինի առանց ասֆալտապատման, ապա դժվարություններ կառաջանան, և կնոջ, և տղամարդու համար:
- Ժամը յոթին էլ եթե տրանսպորտ լինի, լուսավորությունը դեր չի խաղա, կգնանք-կգանք:
- Վարորդները նույնիսկ ամռանն են մինչև հինգը աշխատում, լույսը խնդիր չէ:
- Ժամը յոթին էլ եթե տրանսպորտ լինի, լուսավորությունը դեր չի խաղա, կգնանք-կգանք:

Մանկապարտեզի մասնակի վերանորոգում

- Հոկտեմբերյանում «Ինչուիկ» կա, շաբաթը երեք օր, օրը երկու ժամ, էլի վեց հազար դրամ արժի, տանում ենք այնտեղ, իսկ եթե ստեղ լիներ ամեն օր ու ամբողջ օրով շատ լավ կլիներ:
- Մանկապարտեզի համար երեխին քաղաք չեն տանի:

Գյուղամիջյան ճանապարհահատվածի բարեկարգում

- Եթե ճանապարհը հարթեցվի գյուղ. տեխնիկա է անցնելու, կարող է ճանապարհը քանդի:
- Գյուղի տղամարդիկ էլ կարող է համաձայնվեն որոշ ճանապարհաշինարարական աշխատանքներ անել դպրոցի ճանապարհը վերանորոգելու համար:
- Ճամփեն ու վերջ:
- Դպրոցին մոտ 850 մետր ճանապարհը վերանորոգելով հարց չես լուծում: Չէ՞ որ, հեռու ցեխոտ փողոցներից էլ են դպրոց երեխաներ գալիս:
- Կոմունիստների ժամանակ ճամփա էլ կար, լույս էլ կար ճամփին...

- Ճանապարհն անտանելի է, միայն այս ճանապարհը սարքեք, երեխաները նորմալ գնան-գան:
- Եթե ճանապարհը հարթ լինի երեխաների համար ավելի անվտանգ կլինի դպրոց գնալը, չեն ընկնի փոսը և վնասվեն:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Գյուղամիջյան ճանապարհահատվածի բարեկարգում

- Ճանապարհների վերանորոգումը շատ կարևոր է: Օրինակ, շտապ օգնություն ես կանչում, ճանապարհի պատճառով չի գալիս:
- Երեխաները մինչև հասնում են դպրոց, ոտքերը թրջվում ու սառում են, հիվանդանում են:

Լողավազանի վերակառուցում

- Լողը համ բոյովացնում ա, համ ախորժակն ա բարձրացնում, որ լիներ, ես իմ երեխուն կտայի լողի:
- Գյուղում շատ երեխաներ կան, որ բժիշկները լող են նշանակել, քանի որ համակարգչի առաջ շատ նստելուց ողնաշարի խնդիրներ են առաջանում, իսկ գյուղում լողավազան չկա, Երևան պե՞տք է գնան լողավազան:

Գերեզմանատան տարածքի պարսպապատում

- Առուն գյուղից հեռու է, և գերեզմանոցի ճանապարհին չի խանգարում:
- Գերեզմանոցի մոտ կա բնական առու, որը վարարելուց լցվում է գերեզմանոց: Դրա համար պետք է այն պարսպապատել, որ այդ խնդիրը չունենանք:

Մշակույթ, արժեքներ

Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում

- Առաջին սցենարով պիվա խմողները կլուբի պատի տակ մթության մեջ չեն խմի, լուսավոր հանգիստ կխմեն:
- Լուսավորության բացակայության դեպքում «մութ» գործերն ավելի լավ են իրականանում:

- Եկե՛ք առանց լուսավորության սպորտը զարգացնենք մեր գյուղում:

Լողավազանի վերակառուցում

- Մոսկվան միանգամից չի կառուցվել: Եկեք լողավազանը կառուցենք, հետո կամաց-կամաց համոզենք կանայք գան ու օգտվեն, ու հենց լողավազանից սկսենք գենդերային խնդիրների աստիճանական լուծումը:
- Եթե լողավազանը վերանորոգվի, ապա միայն տղամարդիկ կօգտվեն դրանից, որովհետև կանանց, ուղղակի, չեն թողնի:
- Գյուղում բոլորը միմյանց ճանաչում են, այնպես որ այստեղ կանայք լողավազանից չեն օգտվի՝ դա պատիվ չի բերում գյուղացի կնոջը:
- Բարքերը թույլ չեն տվել, որն կանայք գնան լողավազան:
- Սովետի ժամանակ էլ, երբ ընդհանուր քաղաքականություն տղամարդկանց ու կանանց հավասարությունն էր, միևնույն է գյուղում խտրականությունը կար:
- Լողավազան որ կառուցենք մենակ ռուս աղջիկները կլողանային, բայց ռուս աղջիկներ չունենք:
- Գյուղում մի կին մի օր քսվում է, դրանից հետո մի երկու օր հետևից խոսում են: Մնում էր կանայք լողավազան գնային:
- Լողավազանը կնպաստի լող մարզաձևի զարգացմանը:
- Աղջիկները ամեն դեպքում չեն գնա: Աղջիկները երբեք էլ չեն գնացել լողավազան, նույնիսկ անցյալում:
- Աղջիկ երեխային թույլ չէի տա գնալ լողավազան:
- Գյուղը մնում է գյուղ, աղջկան սազական չէ լողավազանից օգտվելը:
- Զարգացվածության մակարդակը թույլ չի տալիս, որ և կանայք, և աղջիկները գնան լողավազան:
- Վերակառուցել ՝ և աղջիկներն էլ կգնան լողավազան:
- Սակայն եթե լողավազանը լավ պայմաններ ունենա, ապա դա կօգնի նաև մշակութային:
- Լողավազան միայն տղաներ են գնացել: Աղջիկները չեն գնում: Գյուղում ընդունված չէ:
- Նույնիսկ վերանորոգվելուց հետո էլ աղջիկները չեն գնա:
- Ես ամուսնուս չեմ էլ հարցնի, կարելի ա գնալ լողավազան, թե չէ:
- Բարքերը փոխելու համար լողավազանը կարող է օգտակար լինել:

- Եթե մարզիչը կին լինի, աղջիկները կարող է գնան լողավազան... Կամ էլ չեն գնա:

Մանկապարտեզի մասնակի վերանորոգում

- Ամենակարևոր խնդիրը, որ մանկապարտեզը լուծում է, դա երեխաների հոգևոր զարգացումն է, նրանց մյուս երեխաների հետ հարաբերվելու ունակությունների զարգացումը և այլն: Իմ կարծիքով, սա այնքան կարևոր է, որ արժե դրա բոլոր ծախսերը հոգալ:
- Գյուղն առանց մանկապարտեզի հնարավոր չէ պատկերացնել:
- Մեր մանկապարտեզը շատ լավն էր:
- Մանկապարտեզի վերաբացումը կտա աշխատատեղեր, երեխաները զբաղմունք կոնենա, վերջապես կեսուրս տնից կգնա:

Գերեզմանատան տարածքի պարսպապատում

- Գերեզմանները հայերի համար պատմամշակութային արժեք են, իսկ հիմա դառել են արոտավայր:
- Գերեզմանոցը միակ տեղն ա, որտեղ մարդը իրան հանգիստ ա զգում, մտնում ա ներս ու կտրվում ա հոգսերից, էս մեր համար շատ կարևոր ա:
- Մեր պապերի ու տատերի հիշատակը պետք է պաշտպանված լինի: Բա թողնենք անասունները գան ու ամեն ինչ փչացնեն:
- Ես ապրելու մասին եմ մտածում, ոչ թե մեռնելու, էնպես որ գերեզմանների մասին չեմ մտածում, որ մեռնեմ ոչինչ թող առանց պարիսպ տեղ թաղեն:
- Թող մեզ ներեն մեր հանգուցյալները, սակայն գերեզմանի նորոգումը առաջնային խնդիր չէ համայնքի համար:
- Յոթանասունականներին գերեզմանոցը ցանկապատվել է, սակայն մարդիկ գողացան, փչացրեցին ցանկապատը: Նույն վիճակը հիմա էլ կկրկնվի:
- Արդեն մեկ անգամ ցանկապատել են, բայց ցանկապատները գողացել են:
- Եթե գյուղապետարանը ճիշտ կազմակերպի իր աշխատանքները գերեզմանատունը արոտավայրի չի վերածվի:
- Եթե գերեզմանատունը պարսպապատեն, դա չի փրկի, մեկա նորից արածացնողը նորից կտանի կենդանիներին:

- Այնքան են կենդանիներին տարել գերեզմանոց արածացնելու, որ արդեն բնազդաբար «ինքնուրույն» գնում են արածելու:

Երեխաներ և երիտասարդներ

Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում

- Փողոցի լուսավորումը ավելի բացասական ազդեցություն ունի, երեխաները տանը մնալու և կարևոր գործերով զբաղվելու փոխարեն դրսում կլինեն:

Լողավազանի վերակառուցում

- Լողավազանը երիտասարդներին է պետք: Բայց մինչև լողավազանը սարքեն, գյուղում էլ երիտասարդ չի մնա:
- Տարիքային խմբակների դեպքում աղջիկ երեխաներին թույլ կտան գնալ լողավազան:
- Ծնողը հիմա գնում ա դաշտ, երեխուն էլ ա հետը տանում, նստացնում ծառի տակ, իրա գործը անում, որովհետև երեխային ուրիշ թողնելու տեղ չկա:
- Երեխաների համար ժամանցի կենտրոն կլինի:
- Հիմա որ երեխային հարցնում ես, լողալ գիտես, թե չէ, ասում է՝ չէ: Մեր գյուղը այսպես չի եղել:
- Դեռահաս աղջիկներին թույլ չեն տա գնալ լողավազան:
- Ես նոր այդ ճանապարհով եկա էստեղ ու մտածում էի վաղը իմ երեխան ոնց ա տեղով գալու դպրոց:
- Երեխաների ոտքերը թրջվում են, սառում են, դրա պատճառով երեխաները հաճախ հիվանդանում են, հագուստը կեղտոտվում է:
- Ձմռանը երեխաները դպրոցի ճանապարհին ցեխոտվում են, իսկ ամռանը ՝ փոշոտվում:
- Մայրուղուն կապող ճանապարհն էլ վատ վիճակում է, բայց մարդիկ իրենց մեքենաներով են գնում, իսկ երեխաները ոտքով են գնում դպրոց:
- Համայնքի համար կարևորը դպրոցի ճանապարհն է, առավել ևս, որ դրա վրա է գտնվում նաև մանկապարտեզը:
- Տատիկ-պապիկներն էլ են օրվա ընթացքում աշխատում հողամասում,

միշտ չի, որ նրանք էլ ազատ ժամանակ ունեն երեխաներով զբաղվելու համար: Միևնույն ժամանակ մանկապարտեզն ավելի ապահով են:

- Երեխաները որ տուն են գալիս, լրիվ ցեխի մեջ կորած են, դպրոցի ճանապարհը լավն է եղել կոմունիստների ժամանակ, մի հիսուն տարի առաջ:
- Դպրոցի բարձր դասարաններում ունենք երեխաներ, որ ծնողներին օգնելու համար էլ դպրոց չեն գալիս:
- Լողավազանի վերանորոգումից ավելի շատ երիտասարդները կօգտվեն:

Մանկապարտեզի մասնակի վերանորոգում

- Մանկապարտեզը կարևոր է նախադպրոցական կրթություն տալու տեսանկյունից՝ որ երեխաները անտեղյակ ու անպատրաստ չգնան դպրոց:
- Մանկապարտեզի վերաբացումը կտա աշխատատեղեր, երեխաները զբաղմունք կոնենա, վերջապես կեսուրս տնից կգնա:
- Եթե մանկապարտեզ լինի, երեխաները փողոցից կկտրվեն, կկրթվեն:
- Երեխաները դպրոց կգնան որոշակի գիտելիք ստացած, երեխաները փողոցներից կկտրվեն, կսովորեն վարվեցողության տարրական կանոնները:
- Մանկապարտեզը նախ և առաջ մանկավարժների համար աշխատանքի խնդիր կլուծի, ինչպես նաև դպրոց հաճախելուց առաջ երեխաները ավելի պատրաստված կլինեն:
- Մանկապարտեզում երեխան ավելի շատ ա զարգանում:
- Մանկապարտեզի անհրաժեշտությունը միանշանակ կա: Երեխաները հիմա լրիվ անգրագետ են գալիս դպրոց:
- Ծնողները կաշխատեն, երեխաները զբաղմունք կունենան:
- Դպրոց եկող երեխաների մեջ շատ տարբերություն կա մանկապարտեզից են գալիս, թե տնից, մանկապարտեզի երեխաներն ավելի աշխույժ են ու խելացի:
- Մանկապարտեզ գնացած երեխաները տարբերվում են:
- Նորաստեղծ ընտանիքի համար, երբ ծնողներն աշխատում են քաղաքում, գյուղում մանկապարտեզի հարցը կարևոր է, որ վստահ լինեն իրենց երեխաների ապահովության համար:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում

- Երեկոյան ժամերին կանայք դուրս չեն գալիս, քանի որ չկան ժամանցի վայրեր, երբ գյուղը կունենա մշակույթի տուն, բարեկարգ մանկապարտեզ նոր առաջ կգա ճանապարհը բարեկարգելու խնդիր:
- Կանայք հիմնականում երեկոյան ժամերին դուրս չեն գալիս, հետաքրքիր զբաղմունք չկա նրանց համար գյուղում:
- Գյուղում կա կանանց կոմիտե, որը գտնվում է կենտրոնական փողոցում: Լուսավորությունը կարող է օգնել կոմիտեին:
- Կանաց տեսանկյունից կանայք ուշ ժամին դուրս չեն գա, իսկ տղամարդիկ լուսավորության դեպքում ավելի ուշ տուն կգան:
- Գյուղում կանայք ուշ ժամին դուրս չեն գալիս:

Լողավազանի վերակառուցում

- Գենդերային տեսանկյունից կանայք չեն շահի:
- Գյուղի մտածելակերպը լրիվ ուրիշ է, երևի պետք է առանձին ժամեր սահմանել աղջիկների և տղաների համար:
- Լողավազանի աշխատողները բնականաբար կանայք պետք է լինեն...
- Լողավազանից կօգտվեն միայն տղաները, աղջիկները չեն գնա, գյուղ ա չէ:
- Աղջիկներն ուզում են լողալ, լողալու համար գնում են ուրիշ տեղեր, գետեր, Սևան, բայց լողավազան չեն գնա:
- Կանայք միանշանակ ավելի պարտաճանաչ են, իսկ տղամարդիկ կարող «ա սկսեն բլոտ խաղալ ու մոռանան, որ լողավազանում երեխա կա»:
- Մենք՝ կանայք միանշանակ լողավազան չենք գնա, դա տղամարդկանց գործն է:
- Էս բուկլետների մեջ ոչ մի կանանց հավասարություն էլ չկա...

Մանկապարտեզի մասնակի վերանորոգում

- Ձմռանը մայրերը նախընտրում են երեխաներին տանը պահել:

- Ձմռանը մայրերը կնախընտրեն երեխաներին տանը պահել, որ չվճարեն մանկապարտեզի գումարը:
- Մանկապարտեզի բացումը կնպաստի կանանց ինքնազբաղվածությանը:
- Մանկապարտեզի վերաբացումը կազատի կնոջը երեխա պահելու հոգսից աշխատանքային ժամերին ու կինը կարող է գնալ որևէ խանութում, ասենք, աշխատել:
- Մանկապարտեզից կօգտվեն հիմնականում կանայք:
- Գենդերային տեսանկյունից կանայք կշահեն, հնարավորության հնարավորություն կստանան աշխատելու:
- Կլուծվի կանանց աշխատատեղերի հարցը:
- Մայրերից ոչ մեկը որպես կամավոր չի աշխատի մանկապարտեզում:
- Ամենաշատը որգևորվել է հարսը, ում սկեսուրը և տալը աշխատանք կունենան:
- Կան կանայք, ովքեր դուրս եկան աշխատանքից երեխային պահելու համար, այժմ էլ չեն կարողանում աշխատանք գտնել:
- Մանկապարտեզ երեխային ուղարկելու արդյունքում կինը կարող է ազատ լինել ու աշխատել: Բայց կամ արդյոք աշխատանք կանանց համար: Ես կարծում եմ, որ գենդերային խտրականության պատճառով չկա:

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Կենտրոնի լուսավորությունը բոլորի համար է, դրանից կօգտվի ամբողջ գյուղը:

Իհարկե լուսավորությունը կարևոր է, Հունան Ավետիսյան փողոցը լրիվ կարիք չկա լուսավորելու, խանութները ահագին տարածք լուսավորում են, եթե երեք կետում էլ դրվեն սյուներ, ամբողջ փողոցը կլուսավորվի:

Անշարժ գույքի արժեքն ինչ-որ չափով կավելանա լուսավորության հարցի լուծման հետ մեկտեղ:

Կենտրոնական փողոցների լուսավորությունը դրական ազդեցություն կունենա գյուղի ընդհանուր տեսքի վրա:

Մեր մշակույթի տունը գտնվում է կենտրոնական փողոցի վրա, ու կան պիկ ժամեր, երբ գյուղի ժողովուրդը տարբեր առիթներով այնտեղ է հավաքվում, ու այդ ժամերը երեկոյան են: Պետք է լուսավորությունը վերանորոգել:

Հենց մթությունից էլ դուրս չեն գալիս երբեմն կանայք, այ իսկ որ լուսավոր լինի, շատ բան կփոխվի:

Եթե լուսավորությունը կարգավորվեր բոլոր փողոցներում, ապա կարելի է փողը դրան տրամադրել:

Լուսավորության խնդիրը կարևոր է, քանի որ խոսքը վերաբերում է հիմնական բանուկ փողոցին:

Բերքի տեղափոխման սեզոնին լուսավորության հարցը մեծ խնդիր է:

Համայնքի միջոցներով էլ հնարավոր է լուսավորություն անցկացնել, եթե հարևանները հավաքվեն իրենց տա-

Ավելի լավ է փողոցները բարեկարգ լինեն, բայց չլուսավորված, քան քանդված, բայց լուսավորված:

Գյուղում կան տեղեր, ուր անհրաժեշտ է լուսավորություն, օրինակ՝ հանրակացարանի մոտ, գերեզմանի տարածքում:

1970-ականներին լուսավորություն կար, շատ լավ էր, բայց հիմա դա այնքան էլ արդիական հարց չէ:

Համայնքի խանութները գտնվում են նշված փողոցներում, և դրանք իրենց տարածքները հիմնականում լուսավորում են:

Փաստորեն մեր հինգ միլիոնը չի էլ հերիքում նույնիսկ լուսավորելու համար, ինչի ենք էլ քննարկում, սա անիրականանալի է:

Լուսավորության խնդիրը առաջնային չի:

Լուսավորությունն այդքան էլ կարևոր չի, ավելի կարևոր խնդիրներ ունենք:

Լուսավորությունը նշված փողոցների բնակիչներին ոչ մի ֆինանսական օժանդակություն էլ չի տա:

Լույսի առկայությունը կարևոր է, բայց առաջնային չէ:

Այսպես թե այնպես փողոցները լուսավորվում են խանութների լույսերով: Ավելի լավ է ավելի կարևոր բաների վրա փողը ծախսենք:

Լուսավորության խնդիրը միայն համայնքի բյուջեով հնարավոր չէ լուծել, դոնորների օգնությունն էլ պետք:

ռածքում ընդհանուր լուսավորությունն ապահովեն: Այդքան գումար չարժե ծախսել լույսերի վրա կարելի է երեք հարյուր մետրի վրա լույսեր դնել մի քանի հատ և այդ փողոցները ամբողջությամբ կլուսավորվեն: Գյուղի լուսավորությունը կարելի է ասել լուծվող խնդիր է, եթե բյուջեի միջոցները ներդրվեն և համայնքն էլ մասնակցի:	Արմավիր քաղաքում Բաղրամյան փողոցի լուսավորությունը գիշերային ժամերին խանգարում է բնակչությանը:
Եթե լողավազանը լինի, ապա կողքի համայնքներից էլ կգան օգտվելու համար: ԵՎ դա համայնքին լրացուցիչ եկամուտի աղբյուր կլինի: Լողավազանի խնդիրը ժամանցի տեսանկյունից կարևոր է, սակայն դրանից առաջ ավելի կարևոր խնդիրներ կան:	Լողավազանի համար ջուր տալու փոխարեն թող մեր խմելաջրի հոսքը ուժեղացվի, վերանորոգման փոխարեն թող բարեկարգեն այգին, կառուսելներ դնեն: Այգի աղջիկներ էլ կգնան: Գյուղն ունի ոռոգման խնդիր, ինչպես կլուծվի այս խնդիրը: Միայն լողավազանը վերանորոգել առանց ընդհանուր այգին բարեկարգելու, ինձ թվում է, անիմաստ է: Երկրորդ սցենարի լուծումն էլ այնքան էական չի, մեր համայնքի համար:
Մանկապարտեզի վերանորոգումն առաջնային խնդիր է: Մանկապարտեզի վիճակը այնքան լավ է եղել, որ կողքի գյուղերից էլ են եկել մեզ մոտ: Վերանորոգումը խնդիրը չէ, խնդիրը վերաբացելն է: Կարևոր է նաև ջեռուցման խնդիրը, եթե ջեռուցում լինի մանկապարտեզը տարին կլոր կարող է գործել: Մանկապարտեզը բացենք, խնդիրները կլուծվեն:	Դպրոցում վեց հարյուր երեխայից մնացել է ընդամենը երեք հարյուր ու գնալով պակասում է: Մանկապարտեզի ներդրումային արդյունավետությունը կարող է շատ ցածր լինել: Երեխաների քանակը գնալով քչանում է, ուստի մանկպարտեզը կարող է երկար կյանք չունենա: Նոթբուքը կառնենք կդնենք երեխայի դիմաց, մանկապարտեզ պետք չի գնա երեխան:

Աշխատատեղեր

Լողավազանի վերանորոգումը կնպաստի համայնքում մարզիչներ վերապատրաստմանը: Կարևոր է, որ աշխատողները լինեն համայնքից: Լողավազանի աշխատողները բնականաբար կանայք պետք է լինեն...	
Մանկապարտեզը պետք է ոչ միայն երեխաներին, այն նաև աշխատատեղեր է բացում: Մանկապարտեզի վերաբացումը կտա աշխատատեղեր, երեխաները զբաղմունք կունենա, վերջապես կեսուրս տնից կգնա: Մանկապարտեզը նախ և առաջ մանկավարժների համար աշխատանքի խնդիր կլուծի, ինչպես նաև դպրոց հաճախելուց առաջ երեխաները ավելի պատրաստված կլինեն:	Մանկավարժները գյուղում շատ են, բայց աշխատանք չկա:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Գյուղի լուսավորությունը կարելի է ասել լուծվող խնդիր է, եթե բյուջեի միջոցները ներդրվեն և համայնքն էլ մասնակցի: Լուսավորության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի գումարի հարցը էական դեր կարող է խաղալ այս սցենարի առավելությունները գնահատելուց:	Լուսավորության խնդիրը միայն համայնքի բյուջեով հնարավոր չէ լուծել, դոնորների օգնությունն էլ պետք:
Լողավազանը շահույթ կբերի գյուղին, կողքի գյուղերից կգան կլողանան, փող կտան, այդ փողով հետո կլուսավորենք: Լողավազանը պահպանման ծախսեր հետո չի պահանջի: Ոնց արել ենք, տենց էլ կանենք՝:	Ոնց հասկանում ենք, լողավազանը որ վերակառուցենք, վճարովի է լինելու, էնպես որ պետք չի: Ինձ թվում է, որ լողավազանի վրա պետք է խաչ քաշել, դա ընդհանրապես ռեալ չի: Ասենք լողավազանի պոմպը փչացավ, ով պիտի սարքի, էլի գյուղի բնակիչների վրա են մնալու ծախսերը:

կգնանք ինքներս բահով բանով կմաքրենք, նորից ջուրը կլցնենք ու կլողանանք: Նվազագույն վճարը լողավազանի համար... ձրին է:	Լողավազանն անպայման կլինի վճարովի, իսկ գյուղը վճարունակ չէ: Նիսյայով համաձայն եք լողավազանը վերանորոգել: Եթե այո, ապա համաձայն ենք: Եթե ոչ, փող չունենք՝ անցանք առաջ: Լողավազանը անպայման կլինի վճարովի, իսկ գյուղը վճարունակ չէ: Լողավազանի վերանորոգումը հսկայական ծախսեր է պահանջում: Մենք հաշվարկել ենք հնարավորինս մինիմալ ծախսերով տասնմեկ միլիոն գումար էր հարկավոր: Ծնողը հացի փող չունի, պետք է վճարի լողավազանի համար... Լուկաշինը այդ վիճակում չէ, որ լողի պարապմունքների համար վճարեն: Լողավազանի վերանորոգումը շատ առաջնային խնդիր չէ: Լողավազանը եթե վճարովի եղավ, գրեթե ոչ մեկ չի գնա, եկամուտ չի լինի, ծախսն էլ շատ կլինի, ու կփակվի, անիմաստ բան է լինում: Իրականում լողավազանը չի կարող եկամուտի աղբյուր լինել: Այն կարող է միայն իր հոգսերը հոգալ: Համայնքը առավել հրատապ հարցեր ունի, քան լողավազանի վերանորոգումը: Եթե լողավազանը լինելու է վճարովի, ուրեմն մյուս հարցերը էական չեն, մեկ է, չենք կարողանա ոչ գնալ, ոչ էլ երեխաներին ուղարկել:
Մանկապարտեզը վատ վիճակում չի, կարող է աշխատի ու վերանորոգման կարիք չունի, բացեցինք, մի ամիս աշխատես ու փակվեց, որովհետև թանկ էր, երեխեքին չէին բերում: Մանկապարտեզը ավելի լավ է ոչ թե վերանորոգեն, այլ ֆինանսավորեն, որ գինը հարմար լինի:	Մանկապարտեզը խփում ա տղամարդու գրպանին: Ծնողը չի կարողանում երեխային տանել մանկապարտեզ, որովհետև վարձը շատ բարձր է: Մանկապարտեզի վերագործարկումը մեծ գումարների հետ է կապված՝ աշխատավարձ, ջեռուցում, երեխաների սնունդ, այլ պահպանման ծախսեր: Չենք կարող այսքանը ապահովել:

Մանկապարտեզի միայն աշխատողների համար առնվազն ութ հարյուր հազար գումար է հարկավոր:

Մանկապարտեզի վերանորոգումը ձեռնտու կլինի, եթե հետագայում վարձը ցածր լինի:

առաջարկ է եղել մանկապարտեզ գնալը լինի անվճար, սակայն գումար ավելանա հողի հարկին, սակայն դա չընդունվեց:

Մանկապարտեզը բարվոք վիճակում է, գազաֆիկացված է, միայն աշխատելուն խանգարող հանգամանքը գումարն է, ներդրումները դրանց պետք է ուղղվեն:

Տանիքը երբեք խնդիր չի եղել, ուղակի ռեսուրսներ չկան: Բյուջեն է պատճառը, որ չի բացվում:

Մանկապարտեզի փակման պատճառը աշխատողներին աշխատավարձ չվճարելն էր:

Մանկապարտեզը շատ նվերներ է ստացել անցած տարի հունիսի երկուսին նվերներ ստացան, իսկ երեքին մանկապարտեզը փակվեց: Աշխատավարձ չտալու պատճառով:

Եթե տանիքը վերանորոգելուց հետո, մանկապարտեզը պիտի աշխատի, եկեք վերանորոգենք, եթե՝ ոչ, ապա՝ ոչ: Չէ՞ որ վերագործակելուց հետո պետք է համայնքային բյուջեով այն աշխատացնենք:

Մանկապարտեզի հարցը կարևոր է, պետք է միջոցներ ձեռնարկել աշխատացնելու համար, բայց պետք է հարմարացնել բնակիչների վճարունակության հետ:

Շատ երեխաներից դաստիարակչուհիները բողոքում էին, շուտ էին գնում տուն, մի խոսքով շատ մութ հարցեր կային մանկապարտեզի փակման գործում: Գյուղապետարանը կիմանա:

Գյուղի բոլոր երեխաներն էլ գնում են դպրոց, լավ սովորող երեխաներն էլ շատ են, բայց փող չլինելու պատճառով հետո էլ չեն շարունակում ուսուցումը:

Ձմռանը գյուղի կանայք աշխատանք չունեն, հազիվ հանգստանում են ամռան չարչարանքից:

Մանկապարտեզի ամսական վարձը ութ հազար դրամ է, ծնողին որտեղից՞ էդքան փող:

Մանկապարտեզը հիմնականում վերանորոգված է, բացվելուն խանգարում է աշխատացնելու համար գումարը:

Գյուղապետը հինգ հազար դրամ առաջարկեց, որ ամեն երեխայի համար վճարեն, որից կվճարեին աշխատողներին, երեխաների սնունդին կհատկացվի, հարկերը կվճարվի, բայց ժողովրդի համար դա մեծ ծախս է:

Ծնողը տալիս էր վեց-յոթ հազար դրամ ամսական մանկապարտեզի համար, ու կողքից էլ ալյուր, որ հաց թխեն երեխեքի համար:

Մանկապարտեզի բոլոր պայմանները այնպիսին են, որ կարելի է այն լիովին օգտագործել, սակայն վճարները շատ բարձր էին: ԵՎ մանակապարտեզը չի ֆինանսավորվում, որ աշխատի:

Ծնողները վճարունակ չեն, մանկապարտեզի բացումից մի քանի ամիս հետո դադարեցին երեխաներին ուղարկել:

Միայն չորրորդ սցենարը կմնա մեզ “օգուտ”:

Շատ շոր ենք առնում, որովհետև այս սեզոնին լվացքը շուտ չի չորանում,

Կիսատ-պռատ բաներ անելը, ինձ թվում է անիմաստ է: Կամ պետք է ամբողջ գյուղը լուսավորվի, կամ ամբողջ գյուղի ճանապարհները վերանորոգվեն, կամ էլ պետք չի ոչինչ անել:

պետք է հինգ կոմպլեկտ ունենանք, որ դիմանան: Կանայք կազատվեն գործերից, իսկ տղամարդիկ՝ ավելորդ ծախսերից: Կարող են ուղղակի ճանապարհները ավելի քիչ փողով շեբենապատեն:	Հողը պարապ նստած ա, տասը տոկոսը չի մշակվում, որովհետև հնարավորություն չունի գյուղացին հողը ցանելու, քանի որ ցանածից հետո եկամուտ չի լինում, ինչ կապ ունի երեխան գնում ա մանկապարտեզ թե չէ, կինը զբաղված է թե չէ:
Այս խնդիրը կարևոր է, բայց առաջնային չէ: Մենք մեր ուժերով էլ կարող ենք բարեկարգ պահել: Նպաստում է տնտեսական, հիգիենայի, առողջության խնդիրների լուծմանը: Գերեզմանոցի տարածքի համար թող ամեն մեկը վճարվի, կազմված գումարից թող հետո ցանկապատը կառուցեն: Երևի գերեզմանոցի ցանկապատի խնդիրը կարող ենք գյուղացիներով հավաքվել ու լուծել: Ավելի լավ է ավելի կարևոր խնդիրների վրա կենտրոնանանք: Պարսպի խնդիրը կարելի է լուծել հանգանակության միջոցով: Գերեզմանոցի հարցը արժի լուծել, սակայն ոչ հիմա: Գյուղում ավելի կարևոր հարցեր էլ կան լուծելու, օրինակ խմելու ջրի հարցը, ու ինքը ավելի կարևոր ա, դույլով ջուր ենք առնում խմելու համար, լիտրը ութսուն-հարյուր դրամ: Գերեզմանների վերակառուցումը առաջնային չի:	Բոլորն այդ հնարավորությունը չունեն, որ ցանկապատեն իրենց հարազատների գերեզմանը: Գերեզմանոցից ալյումիններ են գողանում, խնկի ամաններ, կենդանիներին են տանում արածացնում: Կենդանիների խնդիրները թողել են, մեռելների մասին են մտածում: Մարդիկ իրանց մեռելի վրա սկի քար չեն քաշում, ինչ պարիսպ: Գերեզմանը չի մեծանում դեպի գյուղը, գնում ա դեպի Թալին, ու դեռ մեծանալու ա, ինչքանը պարսպապատենք: Ոչ թե գերեզմանատան հարցը պետք է դնել, այլ գյուղում չկա դեղատուն պետ է այդ հարցը լուծել:
Լողավազանը կա, բետոնված է, ջուրը գալիս է կողքից, արտեզյան ջրերից, ու նրա վերակառուցումը կլուծի նաև գյուղի ոռոգման հարցը: Լողավազանը լցվի չլցվի արտեզյան ջուրը մեկա գնում ա, ոռոգման խնդիր չկա:	Եթե արտեզյանը լցվի լողավազա, կողքերը էլ ոչ մեկ հողամաս չի դնի: Լողավազանի համար ջուր տալու փոխարեն թող մեր խմելաջրի հոսքը ուժեղացվի, վերանորոգման փոխարեն թող բարեկարգեն այգին, կառուսելներ դնեն: Այգի աղջիկներ էլ կգնան: Լողավազանի խնդիրը երկրորդական է:

	Այս բոլոր սցենարներից ամենաանկարևորը լողավազանի վերանորոգումն է:
Տղամարդիկ էլ են օգտվում մանկապարտեզից, գնում ա դաշտ աշխատի, ուզում ա կինն էլ հետը գա, բայց քանի որ երեխա ունի չի կարող գալ: Ամուսիններին կօգնեն գյուղատնտեսական գործերում:	
Ծնողը երեխային նորմալ հագցնում ա, մինչև հասնում ա դպրոց լինում ա ոտից գլուխ ցեխ, հետո ցեխը մտնում ա դպրոց, ու մաքրելն էլ դառնում ա ծախս: Առուները փակել են, ջուրը լցվում է փողոցները և ցեխոտվում են փողոցները: Ճանապարհը նորմալ մաքուր լինելու պարագայում, օրինակ, մեր երեխաները դպրոցից տուն գալուց, չեն ցեխոտվի, ու մենք նրանց համար հաց դնելու փոխարեն, ջուր չենք տաքացնի նրանց ու շորերը լվանալու համար: Ամեն օր երեխայի շորերը լվանում ենք, դա էլ է ժամանակի կորուստ: Սա հիմնական փողոց է, որից օգտվում են բնակչության գրեթե ութսուն տոկոսը: Եվ համաձայն ենք նույնիսկ նման նորոգմանը: Փողոցի նորոգումը կօգնի հավելյալ ծախսերից խուսափելուն: Կանանց հոգսը ճանապարհը բարեկարգելուց ավելի կթեթևանա, քանի որ շոր լվացողը կինն ա: Նշված ճանապարհից կօգտվի գյուղի բնակչության 90 տոկոսը: Կնպաստի համայնքի մաքրությանը: Դպրոցի ճանապարհների վերանորոգումը կարևոր է նաև ուսուցիչների համար, ցեխոտ, կեղտոտ մտնում են դասարան:	Եթե ճանապարհը լուսավորված լինի, մարդիկ ճանապարհը կտեսնեն և ցեխի մեջ չեն ընկնի:

Երեխաներից շատերը ջրի մեջ են ընկնում, հաճախ տուն ենք ուղարկում:

Ճանապարհների վատ վիճակի պատճառով լինում են դեպքեր, երբ երեխաները վատ եղանակին չեն կարողանում գնալ դպրոց:

Անվտանգություն

Գլխավոր փողոցների լուսավորությունը կարևոր է, որովհետև երեխաները ավելի անվտանգ կլինեն երեկոյան: Մայթերն ու ասֆալտը արդեն նորմալ են:

Լուսավորությունը շատ կարևոր է, ասենք գնում ենք խանութ կամ հյուր երեկոյան, մեկ էլ շները վրա են տալիս:

Երեկոյան ժամին խանութ գնալը մի քիչ դժվար է, ընտանիքներ կան, որ տղամարդ չկա տանը:

Հատկապես երեկոյան ժամերին լուսավորությունը կնպաստի, որ և՛ մեծերը, և՛ երեխաներն ապահով տուն կհասնեն:

Երիտասարդ աղջիկներն ու ուսանողներն ուշ ժամի դժվար են տուն գնում լուսավորության բացակայության պատճառով:

Հիմնական կարևոր փողոցները լուսավորության համար նշված փողոցներն են: Հատկապես հանքի ճանապարհը՝ Թամանյանը, որով բեռնատարներ են անցնում և նույնիսկ ցերեկը այստեղ վտանգավոր է:

Հոկտեմբերյանում «Ինչուիկ» կա, շաբաթը երեք օր, օրը երկու ժամ, էլի վեց հազար դրամ արժի, տանում ենք այնտեղ, իսկ եթե ստեղ լիներ ամեն օր ու ամբողջ օրով շատ լավ կլիներ:

Երեխային մանկապարտեզի համար քաղաք չեն հասցնի:

Կանանց համար վտանգավոր չէ գյուղում, նույնիսկ եթե լուսավորված չէ:

Առավել վտանգավոր են փողոցային շները այգիում, հանքի փողոցում:

Երեխաների մի մասը դպրոց ու մանկապարտեզ են գալիս այդ կողմից, մյուսներն էլ գալիս են մյուս կողմից, ինչի՞ ենք լուսավորվում միայն նշված փողոցները:

Առավել նպատակահարմար է Հոկտեմբերյանից եկող ճանապարհը բարեկարգել:

Մենք տրանսպորտ չունենք, որ լույսի խնդիրն էլ խանգարող կամ օգնող լինի:

Եթե լուսավորությունը լինի առանց ասֆալտապտման դժվարություններ կառաջանան, և կնոջ, և տղամարդու համար:

Ժամը յոթին էլ եթե տրանսպորտ լինի, լուսավորությունը դեր չի խաղա, կգնանք-կգանք:

Վարորդները նույնիսկ ամռանն են մինչև հինգը աշխատում, լույսը խնդիր չէ:

Գյուղի տղամարդիկ էլ կարող է համաձայնվեն որոշ ճանապարհաշինարարական աշխատանքներ անել դպրոցի ճանապարհը վերանորոգելու համար: Ճամփեն ու վերջ: Կոմունիստների ժամանակ ճամփա էլ կար, լույս էլ կար ճամփին... Ճանապարհն անտանելի է, միայն այս ճանապարհը սարքեք, երեխաները նորմալ գնան-գան: Եթե ճանապարհը հարթ լինի երեխաների համար ավելի անվտանգ կլինի դպրոց գնալը, չեն ընկնի փոսը և վնասվեն:	Եթե ճանապարհը հարթեցվի գյուղ. տեխնիկա է անցնելու, կարող է ճանապարհը քանդի: Դպրոցին մոտ 850 մետր ճանապարհը վերանորոգելով հարց չես լուծում: Չէ՞ որ, հեռու ցեխոտ փողոցներից էլ են դպրոց երեխաներ գալիս:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Ճանապարհների վերանորոգումը շատ կարևոր է: Օրինակ, շտապ օգնություն ես կանչում, ճանապարհի պատճառով չի գալիս: Երեխաները մինչև հասնում են դպրոց, ոտքերը թրջվում ու սառում են, հիվանդանում են: Լողը համ բոյովացնում ա, համ ախորժակն ա բարձրացնում, որ լիներ, ես իմ երեխուն կտայի լողի: Գյուղում շատ երեխաներ կան, որ բժիշկները լող են նշանակել, քանի որ համակարգչի առաջ շատ նստելուց ողնաշարի խնդիրներ են առաջանում, իսկ գյուղում լողավազան չկա, Երևան պետք է գնան լողավազան:	
Գերեզմանոցի մոտ կա բնական առու, որը վարարելուց լցվում է գերեզմանոց: Դրա համար պետք է այն պարսպապատել, որ այդ խնդիրը չունենանք:	Առուն գյուղից հեռու է, և գերեզմանոցի ճանապարհին չի խանգարում:
Երեխաների ոտքերը թրջվում են, սառում են, դրա պատճառով երեխաները հաճախ հիվանդանում են, հագուստը կեղտոտվում է:	

Մշակույթ, արժեքներ

	Մենք չունենք մշակութային կենտրոններ, ինչի մասին է խոսքը: Առաջին սցենարով պիվա խմողները կլուբի պատի տակ մթության մեջ չեն խմի, լուսավոր հանգիստ կխմեն: Լուսավորության բացակայության դեպքում «մութ» գործերն ավելի լավ են իրականանում: Եկեք առանց լուսավորության սպորտը զարգացնենք մեր գյուղում:
Մոսկվան միանգամից չի կառուցվել: Եկեք լողավազանը կառուցենք, հետո կամաց-կամաց համոզենք կանայք գան ու օգտվեն, ու հենց լողավազանից սկսենք գենդերային խնդիրների աստիճանական լուծումը: Լողավազան որ կառուցենք մենակ ռուս աղջիկները կլողանային, բայց ռուս աղջիկներ չունենք: Այս սցենարը կնպաստի լող մարզաձևի զարգացմանը: Սակայն եթե լողավազանը լավ պայմաններ ունենա, ապա դա կօգնի նաև մշակութային խոչընդոտները հաղթահարել և աղջիկներն էլ կգնան լողավազան: Բարքերը փոխելու համար լողավազանը կարող է օգտակար լինել: Եթե մարզիչը կին լինի, աղջիկները կարող է գնան լողավազան... Կամ էլ չեն գնա:	Եթե լողավազանը վերանորոգվի, ապա միայն տղամարդիկ կօգվեն դրանից, որովհետև կանանց, ուղղակի, չեն թողնի: Գյուղում բոլորը միմյանց ճանաչում են, այնպես որ այստեղ կանայք լողավազանից չեն օգտվի՝ դա պատիվ չի բերում գյուղացի կնոջը: Բարքերը թույլ չեն տվել, որն կանայք գնան լողավազան: Սովետի ժամանակ էլ, երբ ընդհանուր քաղաքականություն տղամարդկանց ու կանանց հավասարությունն էր, միևնույն է գյուղում խտրականությունը կար: Գյուղում մի կին մի օր քսվում է, դրանից հետո մի երկու օր հետևից խոսում են: Մնում էր կանայք լողավազան գնային: Անցյալում աղջիկ երեխային թույլ չէի տա գնալ լողավազան: Գյուղը մնում է գյուղ, աղջկան սազական չէ լողավազանից օգտվելը: Զարգացվածության մակարդակը թույլ չի տալիս, որ և կանայք, և աղջիկները գնան լողավազան: Աղջիկները ամեն դեպքում չեն գնա: Աղջիկները երբեք էլ չեն գնացել լողավազան, նույնիսկ:

	Լողավազան միայն տղաներ են գնացել: Աղջիկները չեն գնում: Գյուղում ընդունված չէ: Նույնիսկ վերանորոգվելուց հետո էլ աղջիկները չեն գնա: Ես ամուսնուս չեմ էլ հարցնի, կարելի ա գնալ լողավազան, թե չէ:
Ամենակարևոր խնդիրը, որ մանկապարտեզը լուծում է, դա երեխաների հոգևոր զարգացումն է, նրանց մյուս երեխաների հետ հարաբերվելու ունակությունների զարգացումը և այլն: Իմ կարծիքով, սա այնքան կարևոր է, որ արժե դրա բոլոր ծախսերը հոգալ: Գյուղն առանց մանկապարտեզ հնարավոր չէ պատկերացնել: Մեր մանակապարտեզը շատ լավն էր: Մանկապարտեզի վերաբացումը կտա աշխատատեղեր, երեխաները զբաղմունք կունենա, վերջապես կեսուրս տնից կգնա:	
Գերեզմանները հայերի համար պատմամշակութային արժեք են, իսկ հիմա դառել են արոտավայր: Գերեզմանոցը միակ տեղն ա, որտեղ մարդը իրան հանգիստ ա զգում, մտնում ա ներս ու կտրվում ա հոգսերից, էս մեր համար շատ կարևոր ա: Մեր պապերի ու տատերի հիշատակը պետք է պաշտպանված լինի: Բա թողնենք անասունները գան ու ամեն ինչ փչացնեն: Եթե գյուղապետարանը ճիշտ կազմակերպի իր աշխատանքները գերեզմանատունը արոտավայրի չի վերածվի:	

Երեխաներ և երիտասարդներ

	Փողոցի լուսավորումը ավելի բացասական ազդեցություն ունի, երեխաները տանը մնալու և կարևոր գործերով զբաղվելու փոխարեն դրսում կլինեն:
Լողավազանը երիտասարդներին է պետք: Լողավազանի վերանորոգումից ավելի շատ երիտասարդները կօգտվեն: Տարիքային խմբակների դեպքում աղջիկ երեխաներին թույլ կտան գնալ լողավազան: Երեխաների համար ժամանցային կենտրոն կլինի:	Բայց մինչև լողավազանը սարքեն, գյուղում էլ երիտասարդ չի մնա: Ծնողը հիմա գնում ա դաշտ, երեխուն էլ ա հետը տանում, նստացնում ծառի տակ, իրա գործը անում, որովհետև երեխային ուրիշ թողելու տեղ չկա: Հիմա որ երեխային հարցնում ես, լողալ գիտես, թե չէ, ասում է՝ չէ: Մեր գյուղը այսպես չի եղել: Դեռահասության տարիքում արդեն աղջիկ երեխաներին թույլ չեն տա գնալ լողավազան:
Ես նոր այդ ճանապարհով եկա ստեղ ու մտածում էի վաղը իմ երեխան ոնց ա տեղով գալու դպրոց: Ձմռանը երեխաները դպրոցի ճանապարհին ցեխոտվում են, իսկ ամռանը՝ փոշոտվում: Մայրուղուն կապող ճանապարհն էլ վատ վիճակում է, բայց մարդիկ իրենց մեքենաներով են գնում, իսկ երեխաները ոտքով են գնում դպրոց: Համայնքի համար կարևորը դպրոցի ճանապարհն է, առավել ևս, որ դրա վրա է գտնվում նաև մանկապարտեզը: Տատիկ-պապիկներն էլ են օրվա ընթացքում աշխատում հողամասում, միշտ չի, որ նրանք էլ ազատ ժամանակ ունեն երեխաներով զբաղվելու համար: Միևնույն ժամանակ մանկապարտեզն ավելի ապահով են: Երեխաները որ տուն են գալիս, լրիվ ցեխի մեջ կորած են, դպրոցի ճանապարհը լավն է եղել կոմունիստների ժամանակ, մի հիսուն տարի առաջ:	Դպրոցի բարձր դասարաններում ունենք երեխաներ, որ ծնողներին օգնելու համար էլ դպրոց չեն գալիս:

Մանկապարտեզը կարևոր է նախադպրոցական կրթություն տալու տեսանկյունից՝ որ երեխաները անտեղյակ ու անպատրաստ չգնան դպրոց:

Մանկապարտեզի վերաբացումը կտա աշխատատեղեր, երեխաները զբաղմունք կոնենա, վերջապես կեսուրս տնից կգնա:

Եթե մանկապարտեզ լինի, երեխանները փողոցից կկտրվեն, կկրթվեն:

Երեխաները դպրոց կգնան որոշակի գիտելիք ստացած, երեխաները փողոցներից կկտրվեն, կսովորեն վարվեցողության տարրական կանոնները:

Մանկապարտեզը նախ և առաջ մանկավարժների համար աշխատանքի խնդիր կլուծի, ինչպես նաև դպրոց հաճախելուց առաջ երեխաները ավելի պատրաստված կլինեն:

Մանկապարտեզում երեխան ավելի շատ ա զարգանում:

Մանկապարտեզի անհրաժեշտությունը միանշանակ կա: Երեխաները հիմա լրիվ անգրագետ են գալիս դպրոց:

Ծնողները կաշխատեն, երեխաները զբաղմունք կունենան:

Դպրոց եկող երեխաների մեջ շատ տարբերություն կա մանկապարտեզից են գալիս, թե տնից, մանկապարտեզի երեխաներն ավելի աշխույժ են ու խելացի:

Մանկապարտեզ գնացած երեխաները տարբերվում են:

Նորաստեղծ ընտանիքի համար, երբ ծնողներն աշխատում են քաղաքում, գյուղում մանկապարտեզի հարցը կարևոր է, որ վստահ լինեն իրենց երեխաների ապահովության համար:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Գյուղում կա կանանց կոմիտե, որը գտնվում է կենտրոնական փողոցում: Լուսավորությունը կարող է օգնել կոմիտեին:	Երեկոյան ժամերին կանայք դուրս չեն գալիս, քանի որ չկան ժամանցի վայրեր, երբ գյուղը կունենա մշակույթի տուն, բարեկարգ մանկապարտեզ նոր առաջ կգա ճանապարհը բարեկարգելու խնդիր: Կանայք հիմնականում երեկոյան ժամերին դուրս չեն գալիս, հետաքրքիր զբաղմունք չկա նրանց համար գյուղում: Կանաց տեսանկյունից կանայք ուշ ժամին դուրս չեն գա, իսկ տղամարդիկ լուսավորության դեպքում ավելի ուշ տուն կգան: Գյուղում կանայք ուշ ժամին դուրս չեն գալիս:
Գյուղի մտածելակերպը լրիվ ուրիշ է, երևի պետք է առանձին ժամեր սահմանել աղջիկների և տղաների համար: Լողավազանի աշխատողները բնականաբար կանայք պետք է լինեն... Աղջիկներն ուզում են լողալ, լողալու համար գնում են ուրիշ տեղեր, գետեր, Սևան, բայց լողավազան չեն գնա: Կանայք միանշանակ ավելի պարտաճանաչ են, իսկ տղամարդիկ կարող «ա սկսեն բլոտ խաղալ ու մոռանան, որ լողավազանում երեխա կա»:	Գենդերային տեսանկյունից կանայք չեն շահի: Լողավազանից կօգտվեն միայն տղաները, աղջիկները չեն գնա, գյուղ ա չէ: Մենք՝ կանայք միանշանակ լողավազան չենք գնա, դա տղամարդկանց գործն է: Էս բուկլետների մեջ ոչ մի կանանց հավասարություն էլ չկա...
Մանկապարտեզի բացումը կնպաստի կանանց ինքնազբաղվածությանը: Մանկապարտեզի վերաբացումը կազատի կնոջը երեխա պահելու հոգսից աշխատանքային ժամերին ու կինը կարող է գնալ որևէ խանութում, ասենք, աշխատել: Մանկապարտեզից կօգտվեն հիմնականում կանայք:	Ձմռանը մայրերը նախընտրում են երեխաներին տանը պահել: Ձմռանը մայրերը կնախընտրեն երեխաներին տանը պահել, որ չվճարեն մանկապարտեզի գումարը: Մայրերից ոչ մեկը որպես կամավոր չի աշխատի մանկապարտեզում: Կան կանայք, ովքեր դուրս եկան աշխատանքից երեխային պահելու համար, այժմ էլ չեն կարողանում աշխատանք գտնել:

Գենդերային տեսանկյունից կանայք կշահեն, հնարավորության հնարավորություն կստանան աշխատելու:

Կլուծվի կանանց աշխատատեղերի հարցը:

Ամենաշատը որգևորվել է հարսը, ում սկեսուրը և տալը աշխատանք կունենան:

Մանկապարտեզ երեխային ուղարկելու արդյունքում կինը կարող է ազատ լինել ու աշխատել: Բայց կա՞ արդյոք աշխատանք կանանց համար: Ես կարծում եմ, որ գենդերային խտրականության պատճառով չկա:

Քվեարկության արդյունքներ

Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում	11
Լողավազանի վերակառուցում	4
Մանկապարտեզի մասնակի վերանորոգում	13
Գյուղամիջյան ճանապարհահատվածի բարեկարգում	52
Գերզեմանատան տարածքի պարսպապատում	2

ՀՀ Շիրակի մարզի Ազատան համայնք





Ազատան համայնքը Շիրակի մարզում երկրորդ ամենամեծ գյուղական համայնքն է: Մարզկենտրոն Գյումրիից 8 կիլոմետր հեռավորությամբ գտնվող համայնքի բյուջեն մարզում զիջում է միայն Գյումրի և Արթիկ քաղաքներին և Ախուրյան համայնքին:

Ավելի քան 38.5 քառակուսի կիլոմետր մակերեսի վրա փռված համայնքը գտնվում է Մանթաշ գետի աջ ափին, Շիրակի դաշտում՝ ծովի մակարդակից շուրջ 1,500 մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառն այստեղ տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը կազմում է շուրջ 350-600մմ: Գերակշռում են սևահողային լեռնատափաստանները: Գյուղի շրջակայքում կան արդյունաբերական նշանակություն ունեցող ավազի, բազալտի պաշարներ:

Գյուղն ունի կաթոլիկ (7-րդ դար) և առաքելական (15-րդ դար) գործող եկեղեցիներ: Գյուղի բնակչությունն արմատներով սերում է մասամբ Ալաշկերտից և Կարսից 1828-1830 թվականներին այստեղ տեղափոխվածներից: Ազատանի բնակչությունը շարունակաբար ավելացել է՝ ներկայում համայնքն ունի ավելի քան հազար տնտեսություն, այդ թվում՝ 40 եզդի ընտանիք: Համայնքում բնակիչների շուրջ մեկ հինգերորդը Հայ կաթողիկե եկեղեցու հետևորդներ են:

Պատկեր 2. Ազատան համայնքի բնակիչների թիվը



Ազատանցիների շուրջ 56%-ը կանայք են, 44%-ը՝ տղամարդիկ: Համայնքը երի-տասարդ է.

Պատկեր 3. Ազատան համայնքի բնակչության տարիքային կազմը



Շուրջ 2000 հա գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Շիրակի ջրանցքի ջրերով և գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահող: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Ազատանցիները զբաղվում են պտղաբուծությամբ, հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Նախկինում մեծ մակերես են զբաղեցրել շաքարի ճակնդեղի ցանքատարածությունները, հումքը վերամշակվում էր Սպիտակի շաքարի գործարանում: Զբաղվում են նաև անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Ունի կաթնամթերքի և պանրի արտադրություն: Ասում են. «Ազատանցուն հոր տուր, մի կողմ քաշվիր...»

Համայնքում գործում է դպրոց՝ երկու տարածքներում (առաջինը համայնքի կենտրոնում, երկրորդը հին գերեզմանոց տանող հատվածում): Գործում են գրադարան, հիվանդանոց, մանկապարտեզ, բուժկետ, անասնաբուժարան, կապի հանգույց: Արվեստի դպրոցը գործում է գյուղապետարանի վարչական շենքում (տես՝ սցենար 2):

Բյուջեն

Ազատան համայնքում բյուջետային ծախսերը 2012 թվականին կազմել են շուրջ 124 միլիոն դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեն (ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կազմել է շուրջ 101 միլիոն դրամ, իսկ ֆոնդայինը՝ շուրջ 23 միլիոն դրամ: Համայնքի 2012թ. վարչական բյուջեում աշխատանքի վարձատրության ծախսը կազմել է մեկ երրորդից ավելին՝ 38.3%: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով ծախսվել է վարչական բյուջեի շուրջ մեկ քառորդը, սուբսիդիաների նպատակով՝ մեկ տասներորդից քիչ ավելին և գրեթե նույնքան՝ դրամաշնորհների և սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ տրամադրելու նպատակով՝ միասին:

Պատկեր 4. Ազատան համայնքի բյուջետային վարչական ծախսերը



Ազատան համայնքի 2012 թվականի բյուջեի վարչական ծախսերի կեսից քիչ ավելին՝ 52.5 տոկոսը կատարվել է ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ մատուցելու նպատակով: Կրթությանն ուղղված ծախսերը կազմել են շուրջ 13% և կատարվել են բացառապես վարչական բյուջեի միջոցներով: Գրեթե նույնքան է կազմել հանգստի, մշակույթի և կրոնական ծառայությունների կազմակերպման և սոցիալական պաշտպանություն նպատակով կատարված ծախսերի հանրագումարը: Շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով ծախսվել է համայնքի վարչական բյուջեի 5.2, իսկ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների նպատակով՝ 1.7 տոկոսը: Տնտեսական հարաբերությունների դասակարգիչով կատարված ծախսերը կատարվել են գրեթե բացապես ֆոնդային բյուջեի միջոցներով: Միաժամանակ, ֆոնդային բյուջեի ծախսերի 97.8%-ն ուղղվել է այս դասակարգման խնդիրների լուծմանը:

Պատկեր 5. Ազատան համայնքի բյուջետային ծախսերում վարչական և ֆոնդային մասերից կատարված ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման



2008 թվականից Ազատան համայնքի ղեկավարը 1965 թվականին ծնված Վարդան Իկիլիկյանն է, մասնագիտությամբ՝ գյուղատնտես: Ունի մասնագիտական և կազմակերպական աշխատանքի հարուստ փորձ: 1997-2008 թվականներին եղել է Ազատան համայնքի աշխատակազմի քարտուղար: ՀՀԿ անդամ է, ամուսնացած է, ունի երկու որդի (հեռախոս. +374 93 269 972, +374 312 60 013):

Համայնքի ավագանու անդամներն են. Կարեն Ոսկանյանը, Գոռ Ալեքսանյանը, Պարույր Ազատյանը, Անդրանիկ Իկիլիկյանը, Վարդան Մկրտչյանը, Ավետիս Դավթյանը, Գևորգ Աբրահամյանը, Հրաչյա Իկիլիկյանը, Հովհաննես Անանյանը:

Համայնքի զարգացման խնդիրները

Ազատան համայնքի զարգացման հիմնական խնդիրներն ամբողջականացված են համայնքի զարգացման քառամյա ծրագրում, ուր ներառված են թե՛ համայնքի ավագանու, ղեկավարի և աշխատակազմի կողմից առաջ քաշված խնդիրները, այնպես էլ համայնքի բնակիչների հետ առանձին քննարկումների ընթացքում բարձրաձայնված մի շարք հարցեր: Համայնքի զարգացման խնդիրների շրջանակը ներառում է թե՛ առավել հրատապ և համայնքի միջոցներով լուծվող, թե՛ հեռանկարային՝ համայնքի զարգացման տեսլականի հորիզոնում գտնվող հարցեր: Համայնքի ղեկավարի և աշխատակազմի ղեկավարի կողմից առանձնացվել են մի շարք խնդիրներ, այդ թվում.

1. Հեղհեղատարի[1] հունի իջեցում

Գյուղի կենտրոնով անցնող գետակի հունը 1980-ականներին բետոնապատվել է, գետի հունը բարձրացվել է և այժմ չի ապահովում ստորգետնյա ջրերի հեռացումը: Հեղհեղատարի մերձակայքը ճահճացվել է: Հարակից տները գերխոնավ են: 2.5կմ երկարությամբ բետոնապատ հունը ապամոնտաժելու և հեղհեղատարի՝ ստորգետնյա ջրերի հեռացման համար անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է շուրջ 15 միլիոն դրամ: Հեղհեղատարի ամբողջական վերակառուցումը պահանջում է շուրջ 300 միլիոն դրամ:

1 Ջաջուռ գետակ

2. Արվեստի դպրոցը՝ առանձին շենքում

Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը գործում են նույն շենքում, ինչը խաթարում է երկու հաստատությունների բնականոն գործունեությանը: Նոր խմբեր բացելու կարիք ու մտադրություն կա, սակայն ներկա պայմաններում 90 աշակերտ ունեցող արվեստի դպրոցը նման հնարավորություն չունի: Համայնքի մանկապարտեզի հին շենքը, որը կառուցվել է 50-60 ականներին և ամրացվել 80-ականներին, վերանորոգելու դեպքում արվեստի դպրոցը հնարավոր է տեղափոխել առանձին շենք: Շուրջ 25 միլիոն դրամով հնարավոր է շենքը վերանորոգել և ջեռուցել՝ արվեստի դպրոցը՝ առկա կահավորմամբ, պարագաներով տեղափոխելով այս շենք:

3. Հայրենիք պաշտպանի թանգարան

Մեծ Հայրենականի հուշարձանի տարածքում ցանկալի է ստեղծել Մեծ Հայրենականի և Արցախյան գոյամարտի մասնակիցների թանգարան՝ շենքում, որի համար կպահանջվի շուրջ 10 միլիոն դրամ:

4. Դաշտամիջյան ճանապարհի բարեկարգում

Դաշտամիջյան ճանապարհը բարեկարգման կարիք ունի: Համայնքի միջոցներն ու շուրջ 20 միլիոն դրամ ներգրավելու դեպքում հնարավոր է ավազակոպճային մեթոդով հնարավոր է ամրացնել ու բարեկարգել շուրջ 25 կիլոմետր երկարությամբ ճանապարհի գրունտը:

5. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում

Համայնքի կենտրոնական փողոցն ունի գիշերային լուսավորության 70 կետ: Համայնքում գիշերային լուսավորությունն ընդլայնելու նպատակով շուրջ երկու տարվա ընթացքում անհրաժեշտ է համայնքի միջոցներից տրամադրել շուրջ 3 միլիոն դրամ և ներգրավել արտաքին աղբյուրներից այլ միջոցներ՝ գյուղի ծայրամասերում շուրջ 50 լուսավորության կետ ավելացնելու նպատակով: Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը շուրջ 40 կիլոմետր է: Լուսավորությունը հրատապ է, քանի որ գյուղի ծայրամասեր գայլեր են մտնում: Հատկապես կարևոր է գերեզմանոց տանող ճանապարհի հատվածի լուսավորումը, քանի որ այս հատվածում է գտնվում դպրոցի երկու տարածքներից մեկը:

6. Մշակույթի դահլիճի կահավորում

Մշակույթի կենտրոնը վերանորոգված է, այստեղ է Մինասի լավագույն որմնանկարներից մեկը, գործում է պարի ինքնագործունեության խումբ: Սակայն կենտրոնը չունի բավարար կահավորում, մասնավորապես չկան դահլիճային աթոռներ: Շուրջ 15-20 միլիոն դրամ հատկացնելու պարագայում, հնարավոր է կահավորել դահլիճը որակյալ աթոռներով՝ զգալիորեն ընդլայնելով մշակույթի կենտրոնի հնարավորությունները:

7. Ոռոգման համակարգի վերանորոգում

Համայնքում իրականացվել են 50-60 ականներին կառուցված ոռոգման համակարգի վերանորոգման նշանակալի աշխատանքներ, համայնքի հողերի շուրջ 80 տոկոսը ներկայում ոռոգելի է: Սակայն հիմնականում հողի մշակմամբ ապրող համայնքում անհրաժեշտ է շարունակաբար ընդլայնել ոռոգելի հողատարածքների մակերեսը: Շուրջ 10-15 միլիոն դրամ տրամադրելու և արտաքին աղբյուրներից շուրջ 70 միլիոն դրամ ապահովելու դեպքում հնարավոր է վերականգնել ստորգետնյա ցանցի շուրջ 1.5կմ երկարությամբ 300մմ տրամաչափի խողովակների հատվածը, ինչը կապահովի ևս 90հա մակերեսով գյուղատնտեսական հողերի ոռոգումը: Արդյունքում էապես կշահեն շուրջ 60 համեմատաբար խոշոր ու շուրջ 150 տնամերձ հողամասերի սեփականատերերը:

8. Գյուղամիջյան ճանապարհի ասֆալտապատում

Շուրջ 25-30 միլիոն դրամ հատկացնելու պարագայում հնարավոր է ամբողջովին ասֆալտապատել 19-րդ փողոցի՝ դեպի դպրոցի տարածքներից մեկը և հին գերեզմանատուն տանող ճանապարհի, 400-450 մետր երկարությամբ հատվածը:

9. Նոր գերեզմանատան հիմնում

Համայնքի ներկա գերեզմանատուն ընդլայնել հնարավոր չէ: Գյուղն ունի նոր գերեզմանատան կարիք: Շուրջ 2-3 միլիոն դրամ հատկացնելու պարագայում հնարավոր է իրականացնել նոր գերեզմանատուն հիմնելու համար անհրաժեշտ նախագծա-նախահաշվարկային աշխատանքները, հետագայում, լրացուցիչ միջոցներ ներգրավելով, հնարավոր կլինի պարսպապատել և հարդարել գերեզմանատունը:

10. Երիտասարդական կենտրոնի հիմնում

Շուրջ 10-12 միլիոն դրամ հատկացնելու պարագայում հնարավոր է գյուղապետարանի նախկին՝ վթարային վարչական շենքը վերակառուցել՝ 1-ին հարկը ապամոնտաժելու միջոցով, և վերակառուցված շենքում հիմնել երիտասարդական կենտրոն:

11. Պուրակի հիմնում

Շուրջ 10 միլիոն դրամ հատկացնելու և արտաքին աղբյուրներից միջոցներ ներգրավելու պարագայում հնարավոր է բարեկարգել մշակույթի կենտրոնին հարակից շուրջ 700 քառակուսի մետր տարածքը՝ ցանկապատ կանաչ գոտի, զբոսայգի և ժամանացի կենտրոն հիմնելու նպատակով:

12. Ֆուտբոլի դպրոցի վերանորոգում

Համայնքում, գործարարների ներդրումների ներգրավման արդյունքում, գործում է ֆուտբոլի դպրոց, ուր հաճախում է շուրջ 60 երեխա: Շուրջ 4-5 միլիոն դրամ հատկացնելու արդյունքում հնարավոր է ամբողջականացնել դպրոցի ներկայում գրեթե 70 տոկոսով ավարտված հանդերձարանի վերանորոգման աշխատանքները:

13. Հակակարկտային համակարգի ընդլայնում

Համայնքում գործում է 7 հակակարկտային համակարգերի ցանց: Շուրջ 10-15 միլիոն դրամ հատկացնելու պարագայում հնարավոր է տեղակայել նման ևս 4 համակարգ՝ ապահովելով ևս 300հա մակերեսով հողատարածքների պաշտպանությունը կարկտից:

14. Բազմաբնակարան շենքերի կառուցում

Համայնքի նորաստեղծ և անապահով ընտանիքներին մատչելի բնակարանով ապահովելու նպատակով, արտաքին աղբյուրներից միջոցներ ներգրավելու ճանապարհով, հնարավոր է նախաձեռնել բազմաբնակարան շենքերի կառուցումը: Այդ նպատակով անհրաժեշտ է քննարկել համայնքի որևէ տարածքում բնակիչների սեփականությունը հանդիսացող տարածքների կոնսոլիդացման տարբեր մեխանիզմներ:

Քննարկման դրված սցենարները

Սցենար 1. Ջաջուռ գետի հունի մակարդակի իջեցում

Ազատան համայնքի տարածքով անցնող Ջաջուռ գետակի հունը 1980-ականներին բետոնապատվել է, որի արդյունքում գետի հունը բարձրացել է: Գյուղի համար նախկինի նման գետը ծառայում է որպես ոռոգման աղբյուր և հեղհեղատար: Սակայն, հունը բարձրացնելուց հետո այն այլևս չի ապահովում ստորգետնյա ջրերի բնականոն հեռացումը, ինչի արդյունքում շրջակա տարածքները գերխոնավանում են և ճահճանում: Գերխոնավության հետևանքով գետի հունի երկայնքով աջ և ձախ կողմերում շուրջ 300-500 մետր հեռավորության վրա գտնվող տների հիմքերն ու պատերը խարխլվում: Բնակելի տներում խոնավության հետևանքով տարածվող բորբոսասունկը սպառնում է կանանց, տղամարդկանց և երեխաների առողջությանը: Տարվա տաք ու շոք եղանակներին ճահճի գարշահոտը

տարածվում է ողջ գյուղով: Շարունակվող ճահճացման պայմաններում գետի հունին հարակից հողամասերը մշակել հնարավոր չէ, ուստի շատ ընտանիքներ զրկվում են եկամուտի աղբյուրից: Միաժամանակ, այդ հողամասերի սեփականատերերը շարունակում են հողի հարկ վճարել նախկին դրույքաչափով:

Համայնքի 2014 թվականի բյուջեում շուրջ 15 միլիոն դրամ է նախատեսվում շուրջ 1.5կմ երկարությամբ բետոնապատ հունը ապամոնտաժելու, գետի հունը իջեցնելու և ստորգետնյա ջրերի հեռացման համար բնական պայմաններ ապահովելու համար: Խնդրին ավելի ամբողջական լուծում տալու համար համայնքի իշխանությունները աշխատանքներ են տանում այլ աղբյուրներից ֆինանսական լրացուցիչ միջոցներ ներգրավելու ուղղությամբ: Աշխատանքների իրականացմանը նախատեսվում է համայնքի ներգրավումը:

Ծրագրի իրականացման արդյունքում կվերականգնվի շրջակա միջավայրի հավասարակշռությունը: Կնվազի գետի հունի երկայնքով բնակվող ընտանիքներում (հատկապես կանանց և դեռահասների) հիվանդացության ցուցանիշը. կնվազեն գերխոնավության պատճառով առաջացող հիվանդությունները և կբարելավվի համայնքում հանրային առողջության վիճակը: Կկանխվի ճահճացած տարածքների ավելացման վտանգը: Հնարավոր կլինի միջոցառումներ իրականացնել վնասված գյուղատնտեսական հողերը վերականգնելու և մշակելի դարձնելու ուղղությամբ: Կմեծանա դրանց սեփականատերերի եկամուտ ստանալու հնարավորությունը: Կբարձրանա հողօգտագործման արդյունավետությունը: Համայնքի կենտրոնը կռադնա ավելի բարեկարգ: Համայնքի բյուջեից գետի բետոնե հունն ամեն տարի մաքրելու նպատակով հատկացվող միջոցները հնարավոր կլինի ուղղել համայնքային այլ խնդիրների լուծմանը:

Սցենար 2. Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը՝ առանձին շենքերում

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանից Ազատանում գործում էր արվեստի դպրոց, ուր հաճախում էին հարյուրավոր երեխաներ: Ներկայում էլ արվեստի դպրոցը շարունակում է իր գործունեությունը Ազատան համայնքում և իր անգնահատելի նպաստն ու ներդրումն է բերում երիտասարդ սերնդի մշակութային և հոգևոր դաստիարակության ու զարգացման գործին: Դպրոցն ունի շուրջ 90 աշակերտ:

1988թ. ավերիչ երկրաշարժից հետո համայնքում անվնաս մնացած շինություններն առավելագույն ծանրաբեռնելու և համայնքային հաստատությունների բնականոն գործունեությունը կազմակերպելու նպատակով արվեստի դպրոցն ու գյուղապետարանը տեղավորվեցին միևնույն տանիքի տակ: Իհարկե, դա արդարացված քայլ էր, սակայն ներկայում, միևնույն

հարկի տակ այս երկու հաստատությունները «խանգարում են» միմյանց: Շենքային պայմանները սահմանափակում են արվեստի դպրոցում նոր դասարաններ բացելու և ավելի մեծ թվով երեխաների ընդգրկելու հնարավորությունը, այն դեպքում, երբ դպրոցը հիմնականում ապահովված է անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով:

Համայնքի 2014 թվականի բյուջեում նախատեսվում է մոտ 25 միլիոն դրամ արժեցող ծրագրի համաֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցներ, որպեսզի արվեստի դպրոցը տեղափոխվի առանձին շենքում: Այդ նպատակով նախատեսվում է հիմնանորոգել նախկին մանկապարտեզի 1950-60-ականներին կառուցված շենքը, որը 80-ականներին ամրացվել է, վերանորոգվել է տանիքը: Նախատեսվում է շենքն ապահովել ջեռուցման լոկալ համակարգով, իրականացնել ներքին հարդարման աշխատանքներ:

Արվեստի դպրոցին նոր շենքային պայմաններ տրամադրելու արդյունքում համայնքում կընդլայնվի երեխաների կրթություն ստանալու հնարավորությունները: Հնարավոր կլինի դպրոց հաճախող երեխաների թիվը ավելացնել 30-40-ով, բացել երգի, պարի, թատերական նոր դասարաններ: Նոր շենքում արվեստի դպրոցը կգործի ավելի արդյունավետ: Նպաստավոր պայմաններ կստեղծվեն համայնքում երեխաների մշակութային դաստիարակության, արվեստի հետ անմիջական հաղորդակցման, միջհամայնքային մշակութային կապերի զարգացման համար:

Սցենար 3. Ոռոգման համակարգի մասնակի վերանորոգում

Ազատանի համայնքի վարելահողերի ընդհանուր մակերեսը 2,837 հեկտար է, որից 2,000 հա ոռոգելու նպատակով 50-60 թվականներին կառուցվել է ոռոգման համակարգ: 90-ականներից հետո պետական և տեղական բյուջեների միջոցով իրականացվել են ոռոգման համակարգի առանձին հատվածների մասնակի կամ կապիտալ վերանորոգման աշխատանքներ: Սակայն ոռոգման համակարգի տվյալ հատվածի քայքայվածության պատճառով 380 հեկտար հողատարածքները ոռոգելիս ջրային ռեսուրսների մեծաքանակ կորուստներ են լինում: Հատկանշական է, որ նշված հողատարածքները գտնվում են հակակարկտային պաշտպանության համակարգի ծածկույթում:

Նշված հողատարածքներում հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվությունը հեկտարից 45-50 ցենտներ է, կարտոֆիլինը՝ 50 տոննա: Սակայն ոռոգման ցանցի մաշվածության պատճառով այս հողերի մշակումը խիստ դժվարացել է, դարձել է նվազ եկամտաբեր, ինչի արդյունքում այդ հողերի սեփականատերերը վնասներ են կրում: Գյուղացին սերմացու գնելու համար հաճախ վարկ է վերցնում, մինչդեռ, այդ հողերից ստացվող բերքի սակավության պատճառով, երբեմն ստիպված է լինում վարկը մա-

ռելու նպատակով վաճառել խոշոր եղջերավոր անասունները կամ ընտանիքի գույքը, կամ մեկնել արտագնա աշխատանքի: Արդյունքում, տուժում է ընտանիքը, ընկնում է բարեկեցությունը:

Համայնքի 2014 թվականի բյուջեում նախատեսվում է առանձնացնել մոտ 15-20 միլիոն դրամ արժեցող ծրագրի համաֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցներ, ոռոգման համակարգի 1.5կմ երկարությամբ հատվածում 300մմ տրամագծով նոր խողովակներ տեղադրելու նպատակով: Ոռոգման համակարգն ամբողջությամբ վերանորոգելու նպատակով համայնքի ղեկավարությունը աշխատանքներ է տանում այլ աղբյուրներից լրացուցիչ 70 միլիոն դրամ ներգրավելու ուղղությամբ:

Ծրագրի իրականացման արդյունքում շուրջ 90 հա մակերեսով հողատարածք կդառնա ոռոգելի: Համայնքի համեմատաբար շուրջ 60 խոշոր հողակտորների և տնամերձ հողամասերի շուրջ 150 սեփականատերեր կունենան ավելի մեծ եկամուտ ստանալու հնարավորություն: Կբարձրանա այդ ընտանիքների կենսամակարդակը: Մեծ թվով տնային տնտեսությունների եկամուտների մակարդակի բարձրացումը կկանխի արտագաղթը: Կմեծանա հողերի սեփականատերերի վարկունակությունը և գյուղատնտեսական վարկերը սպասարկելու հնարավորությունը:

Սցենար 4. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում և նոր գերեզմանատան հիմնում

Ազատանի համայնքի կենտրոնական փողոցը բավարար չափով լուսավորված է: Դրա երկայնքով տեղադրված է գիշերային լուսավորության 70 կետ: Սակայն համայնքի մյուս փողոցները, որոնց ընդհանուր երկարությունը 36-40 կմ է, լուսավորված չեն: Մութն ընկնելուն պես փողոցները դատարկվում են: Սա հատկապես խնդրահարույց է ձմեռային ամիսներին, երբ ցերեկվա տևողությունը կարճանում է: Երեկոյան ժամերին կանանց և երեխաների տեղաշարժը դադարում է. գյուղի ծայրամասային փողոցներում շների և գայլերի հարձակման վտանգն իրական է: Լուսավորության բացակայության պատճառով սահմանափակվում է ներհամայնքային կյանքի ակտիվությունը: Բարեկամները դժվարանում են իրար հյուր գնալ, երիտասարդները՝ մշակույթի տուն այցելել:

Համայնքի 2014 թվականի բյուջեում նախատեսվում է միջոցներ հատկացնել համայնքի հինգ փողոցներում լուսավորության 40-50 նոր կետերի տեղադրելու նպատակով: Համայնքի շուրջ 3500 մետր ընդհանուր երկարությամբ 19-րդ, 24-րդ, 33-րդ, 45-րդ և 17-րդ փողոցներում գիշերային լուսավորությունն ընդլայնելու նպատակով պահանջվում է շուրջ 3 միլիոն դրամ:

Համայնքի թաղամասերն իրար կապող այս փողոցների լուսավորման արդյունքում կակտիվանա ներհամայնքային կյանքը: Բնակիչները հնա-

րավորություն կունենան հաճախել կենտրոնական փողոցներում գործող մարզական, կրթական և ժամանցի այլ հաստատություններ: Կաշխուժանա առևտրի և սպասարկման օբյեկտների գործունեությունը երեկոյան ժամերին: Կաշխուժանա երթևեկությունը կենտրոնական փողոցներում՝ դառնալով առավել անվտանգ և հարմարավետ: Կանանց և երեխաների երեկոյան տեղաշարժը կդառնա առավել անվտանգ:

Նոր գերեզմանատան հիմնում

Համայնքի ներկա գերեզմանատունն ընդլայնել հնարավոր չէ, քանի որ տարածքով անցնելու է հյուսիս-հարավ միջպետական նշանակության մայրուղին: Ի լրումն, տարածքում գտնվող «Մեգալիթյան պարիսպները» համարվում է պատմամշակութային հուշարձան և հատուկ պահպանվող գոտի է: Համայնքի համար նոր գերեզմանատան հիմնումը օրախնդիր է:

Համայնքի իշխանությունները նախատեսում են համայնքի 2014 թվականի բյուջեում շուրջ 2-3 միլիոն դրամ առանձնացնել նոր գերեզմանատուն հիմնելու համար անհրաժեշտ նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Հետագայում գերեզմանատունը պարսպապատելու և բարեկարգելու նպատակով համայնքի իշխանությունները աշխատանքներ են տանում արտաքին և համայնքային աղբյուրներից լրացուցիչ միջոցներ ներգրավելու ուղղությամբ:

Սցենար 5. Բնակարան՝ երիտասարդ ընտանիքներին

Ազատան համայնքը Շիրակի մարզի երկրորդ ամենամեծ գյուղական համայնքն է: Համայնքն ունի շուրջ 6 հազար բնակչություն, որի գրեթե կեսը մինչև 25 տարեկան երեխաներ են ու երիտասարդները: Ազատան համայնքը հանրապետության մասշտաբով բավական երիտասարդ և զարգացման հեռանկար ունեցող համայնք է: Սակայն, ինչպես հանրապետության այլ վայրերում, Ազատանում նույնպես, նորաստեղծ ընտանիքները հաճախ բախվում են բնակարանային խնդրին: Քիչ չեն նաև անապահով ընտանիքները, որոնք բնակարանային պայմանների բարելավման կամ նոր բնակարանի կարիք ունեն:

Նշված ընտանիքներին մատչելի բնակարանով ապահովելու նպատակով համայնքի իշխանությունները նախատեսում են իրականացնել բազմաբնակարան շենքերի կառուցման ծրագիր: Ակնկալվում է, որ ծրագրի իրականացումը կնպաստի երիտասարդ ընտանիքների գյուղում հաստատվելուն և կխթանի համայնքի շարունակական զարգացումը:

Համայնքի իշխանություններն առաջարկում են բազմաբնակարան շենքերը կառուցել համայնքի ծայրամասերի չօգտագործվող հողատարածքների վրա: Համայնքի ծայրամասային հատվածներում համայնքի բնակիչ-

ներին 1992 թվականից բնակարանաշինության համար հատկացվել են հողատարածքներ, սակայն սոցիալ-տնտեսական դժվարությունների, այդ տարածքներում տրանսպորտային, գազի, էլեկտրականության, ջրամատակարարման ենթակառուցվածքների բացակայության կամ թերզարգացվածության պատճառով դրանք մինչև օրս մնացել են չկառուցապատված:

Համայնքի իշխանություններն առաջարկում են միավորել բնակիչներին սեփականության իրավունքով տրամադրված առանձին 800-1200քմ մակերես ունեցող փոքր հողակտորները, դրանց վրա կառուցել բազմաբնակարան շենքեր և լուծել բնակարանի և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների խնդիրները: Ծրագրի իրականացման արդյունքում կբարեկարգվի նաև գյուղի տարածքը, մասնավորապես գյուղի «դարպասները» կդառնան առավել հրապուրիչ:

Որպես հողակտորների միավորման տարբերակ կարող է քննարկվել սեփականատերերի կողմից հողատարածքները կոոպերատիվ սկզբունքով կառուցապատողին հատկացնելը: Հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքը զիջելու դիմաց յուրաքանչյուր սեփականատեր, հողատարածքի չափից կախված, ձեռք կբերի իր հողատարածքի գնին համապատասխան մասնաբաժին կառուցվող շենքում: Ծրագիրն անխտիր լինելու է սոցիալական բնույթի, բնակարանները տրամադրվելու են ինքնարժեքով և հիփոթեքային վարկերի ներգրավումը առավել իրատեսական կդարձնի ծրագրի իրականացումը: Բնակարանների ապագա սեփականատերերի աշխատուժի ներգրավումը ծրագրում, զգալիորեն կնվազեցնի շինարարության ինքնարժեքը: Համայնքաբնակներից շատերը շինարար արհեստավորներ են և ծրագրի միջոցով հնարավոր է մասամբ լուծել նաև աշխատատեղերի խնդիրներ: Թերևս 1-2 տարով երիտասարդ ընտանիքների հայրերը ստիպված չեն լինի մեկնել արտագնա աշխատանքի:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

«Փոփոխության հեղինակները սովորական մարդիկ, որոնք անսովոր բաներ են անում»:

Բարաք Օբամա, քաղաքական գործիչ

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Տնտեսական աճի և բարեկեցության գրավականը

Ազատանցիներից շատերը վստահ են, ոռոգման համակարգի վերականգնումը մեծ դեր կունենա համայնքի տնտեսական կյանքն աշխուժացնելու և բնակիչների բարեկեցությունը բարձրացնելու գործում: «Մարդուն կերակրողը հողն է», ասում է գյուղացին. մարդիկ նշում են, որ առանց ոռոգման, առավել ևս՝ անբարենպաստ եղանակային պայմանների տարում, գյուղացին չի կարողանում բերք ստանալ, չի կարողանում հոգալ ծախսերն ու սպասարկել վարկերը, արդյունքում՝ բախվում է մի շարք անլուծելի խնդիրների: Ազատանցիները համարում են, որ գերազանցապես գյուղատնտեսությամբ զբաղվող համայնքում ոռոգման համակարգի վերականգնումը հնարավորության կտա բարձրացնել հողերի բերքատվությունը, կրճատել մշակման ծախսերը: Բնակիչները նշում են, որ շատերը խուսափում են հողը մշակելուց ոռոգման, ինչպես նաև մի շարք այլ խնդիրների պատճառով, մինչդեռ ոռոգման համակարգի վերականգնումը հողը մշակելը գյուղացու համար կդարձնի ավելի գրավիչ ու շահավետ: Բազմաթիվ սոցիալական խմդիրների լուծումը ազատանցիները պայմանավորում են հենց ոռոգման բարելավմամբ: Ոռոգման համակարգի վերանորոգումը գերակա համարող ազատանցիները այլ փաստարկների թվում նշում են նաև այս ծրագրի իրականացումից օգտվող ընտանիքների թվի մեծությունը:

Միաժամանակ, ազատանցիները մտավախություն ունեն, որ անգամ ոռոգման համակարգի վերանորոգման և բերքատվության աճի պարագայում գյուղացու կյանքում էական փոփոխություններ կարող են և չլինել, քանի որ բերքի իրացման դժվարությունները լուրջ մարտահրավեր են գյուղացու եկամտի աղբյուրների ու բարեկեցության ապահովման համար: Համայնքի բնակիչները ոռոգման համակարգի բարելավմանը զուգահեռ կարևորում են մթերքի իրացման հնարավորությունների ընդլայնումը, առանց որի ոռոգման համակարգում ներդրումները համարում են անհեռանկարային: Ազատանցիները բարձրաձայնում են նաև ոռոգման նպատակով կոյուղաջ-

ների օգտագործման և դրանով պայմանավորված՝ մի շարք խնդիրներ, այդ թվում՝ նման ջրերով աճեցված մթերքի իրացման հարցը: Հնչում են նաև կարծքիներ, թե ոռոգման համակարգի բարելավման աշխատանքների բեռը իր ուսերին պիտի վերցնի պետությունը, քանի որ նկատելի փոփոխությունները պահանջում են մեծ ներդրումներ, ինչը համայնքի միջոցներով դժվար է ապահովել: Այդուհանդերձ, պետությունից ազատանցիների ակնկալիքները առավելապես վերաբերվում են իրացման հնարավորությունների ընդլայնմանը և ոլորտի կարգավորմանը:

Արտագնա աշխատանքն ապրուստի միջոց

Ազատանցիները միաբերան բարձրաձայնում են իրենց մտահոգությունն արտագաղթի ու դրա հետևանքների վերաբերյալ: Նշելով արտագաղթի մտահոգիչ ծավալները, բնակիչները դրա պատճառների թվում նշում են կայուն և արժանավայել եկամուտ ապահովող զբաղվածության պակասը, ինչպես նաև նախկին տարիներին գյուղացիների կուտակած պարտքերը, որոնք մարելու համար ազատանցին հաճախ հարկադրված է մեկնել արտագնա աշխատանքի: Ազատանցուն ամենից առավել մտահոգում են արտագաղթի հետևանքները. երիտասարդներն ու տղամարդիկ աշխատանքի, եկամտի ու բախտի հետևից մեկնում են արտերկիր, գյուղը ծերանում է, ընտանիքի հոգսերը երբեմն մնում են միայն կանանց ուսերին: Գյուղը լքում են նաև բազմազավակ ընտանիքների անդամներ, ովքեր տեղափոխվում են քաղաք՝ ընտանիքի վիճակը փոքր-ինչ բարելավելու և հոգսը թեթևացնելու համար: Գյուղացիները մտահոգություն են հայտնում, որ գյուղատնտեսության համար աննպաստ պայմաններում արտագնա աշխատանքի մեկնածներն ընդմիշտ կլքեն համայնքը:

Շատերը համարում են, թե ոռոգման համակարգի բարելավումը, նոր բնակելի թաղամասի կառուցումը հնարավորություն կընձեռեն էականորեն կրճատել արտագաղթի հոսքերը և կպահեն երիտասարդներին գյուղում: Մյուսները գտնում են, թե ոռոգման հարցի լուծումը արտագնա աշխատանքային միգրանտների հոսքը կնվազեցնի սոսկ մասնակիորեն, քանի որ արտագաղթի հիմնական պատճառը եկամտի կայուն աղբյուր չունենալն է, իսկ բնակարան գնելու և ջրի ծախսը հոգալու համար անհրաժեշտ է գումար, որը գյուղացին հաճախ չունի:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Խոնավ տներ, ճահճացած հողատարածքներ. ավելորդ ծախսեր

Ազատանցիների մեծ մասը նշում է, որ Ջաջուռ գետի երկայնքով տեղադրված տներում խոնավությունը շատ բարձր է, զգալի անգամ երկ-

որդ, երրորդ հարկերում: Գետի խոնավությունից տուժում են բոլոր, կին, թե տղամարդ, ավելի շատ՝ գետին մոտ ապրողները: Իսկ գետի ափին են կառուցված բազմաթիվ ազատանցիների տներ, ուստի խնդրին անմասն չէ գրեթե ոչ ոք, հարուստ, թե աղքատ: Շատ ընտանիքները ստիպված են ամեն տարի վերանորոգել իրենց բնակարանները՝ զգալի գումարներ ծախսելով: Տնամերձ հողերը ճահճացած են և մշակման համար անպիտան: Ավելին, դրանք լրացուցիչ հարկային բեռ են դարձել ազատանցիների համար: Զարմանալի չէ, որ ազատանցիներից շատերը կարևորում են հենց այս խնդրի լուծումը: Նրանք համարում են, որ անգամ եթե գետի հունի մակարդակն իջեցնելու արդյունքները միանգամից չեն զգացվի, սակայն աստիճանաբար դրանց մեծ օգուտը ակնառու կդառնա. ջրի հունի իջեցումից հետո հողերը բնականոն պտղաբերություն կապահովեն, վնասի փոխարեն ժողովուրդը օգուտ կունենա, կբարելավվի գյուղի էկոլոգիան

Միաժամանակ, կա կարծիք, թե նախատեսված գումարն անչափ փոքր է խնդրի վերջնական լուծման համար: Ազատանցիների կարծիքով, միայն գետի հունի իջեցումը բավարար չի: Թերևս այն կլուծի խոնավության խնդիրը, սակայն քանի որ կոյուղաջրերը միացված են եղել գետին, իսկ դրանց ապամոնտաժումը խնդրահարույց է, ապա մշակելի հողերի հարցը կմնա բաց: Անհրաժեշտ է համալիր մոտեցում. աշխատանքներ պետք է տանել նաև գետին մոտ հողերը գյուղատնտեսական նպատակներով կիրառելի դարձնելու ուղղությամբ, որպեսզի դրանք ապագայում հնարավոր լինի օգտագործել: Եվ անգամ նման պարագայում հինգից տասը տարի է անհրաժեշտ, որ խնդրո առարկա հողերը լիարժեք օգտագործելի դառնան:

Նոր գերեզմանատուն հին համայնքին

Ազատանցիների զգալի մասը համարում է, որ գյուղին անհրաժեշտ է նոր գերեզմանատեղի, այս խնդիրը կարևորելով շատ այլ խնդիրներից առավել: Բնակիչները կարծում են, թե դրա համար պահանջվող միջոցները մեծ չեն, ուստի այս խնդիրը կարելի է լուծել այլ կապիտալ ծրագրերին զուգահեռ՝ ներգրավելով նաև համայնքի մասնագիտական ներուժը:

Ազատանցիների մեկ այլ խումբ համարում է, թե նոր գերեզմանատան հիմնումը երկրորդային և ոչ այդքան հեշտ խնդիր է:

Վարկեր. աջակցություն, թե անփորձ մարդու համար ծուղակ

Շատ ազատանցիներ նշում են, որ գյուղատնտեսական վարկերը իրենց ապրուստի միջոցը հոգալուն աջակցելու փոխարեն դարձել են իսկական «փորձանք»: Գյուղացիները դժվարանում են մարել վերցված վարկերը, քանի որ բերքը լավ չէ, իսկ ջուր չլինելու պատճառով շատ տարածքներ ամայանում են: Գյուղացին հաճախ մի վարկը վերցնում է, մյուս վարկը փակելու համար: Ստեղծված արատավոր շղթան կտրելու համար ազա-

տանցիներն առաջարկում են լուծումներ, որոնք ուղղված են ֆինանսական միջոցների հոսքերի կարգավորմանը: Այսպես, բնակիչները նշում են, որ ոռոգման վճարները բարձր են, իսկ ոռոգման վարձի գումարը պահանջում են «միանգամից», մինչդեռ մշակելուց և բերքն իրացնելուն զուգահեռ վճարումներ կատարելն ավելի նպատակահարմար կլիներ:

Անվտանգություն

Կենտրոնական փողոցների լուսավորման կարևորությունը

Ազատանցիներից շատերը կարևորում են փողոցների լուսավորության խնդիրը: Նշում են, թե եղել են դեպքեր, երբ երեկոյան ժամերին գայլերը հարձակվել են գյուղի վրա: Գյուղում տղամարդիկ շատ չեն, իսկ կանայք չեն կարողանում պաշտպանել իրենց և երեխաներին, ուստի երեկոյան ժամերին հաճախ նախընտրում են մնալ տանը: Նույնիսկ արտակարգ իրավիճակներում, երբ հարկավոր է շտապ օգնության մեքենա դիմավորել, մարդիկ վախենում են դուրս գալ տանից: Ազատանցիներից շատերը նշում են, որ գայլերի «թիրախը» հիմնականում ծայրամասային փողոցներն են, ինչը նշանակում է, որ կենտրոնական փողոցների լուսավորումից գայլերի հարձակումները չեն դադարի: Ազատանցիները նշում են նաև, որ մարզական խմբակներ հաճախող երեխաները դասերը հաճախ ավարտում են երեկոյան և մթին երեխայի համար տուն դառնալը վտանգավոր է: Լուսավորությունն անհրաժեշտ է նաև սեզոնային աշխատանքներից հաճախ ուշ տուն դարձող շատ բնակիչների, հատկապես՝ գիշերվա մթին ջուր անող կանանց:

Ազատանցիները նշում են նաև, որ լուսավորության խնդրի լուծմանը հարկ է ներգրավել գյուղի գործարարներին: Շատերը լուսավորության խնդրից ավելի կարևորում են ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը, և համարում, թե առանց բարեկարգման փողոցների լուսավորությունը ցանկալի չէ, քանի որ ցերեկային ժամերին դասի հաճախող կամ դրսում խաղացող երեխաների և նրանց ընտանիքների համար անբարեկարգ ու կեղտոտ փողոցներն ավելի լուրջ խնդիր են: Ոմանք էլ լուսավորությունից ավելի կարևորում են ոռոգման և գետի աղտոտման խնդիրները:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Գետը շրջակա միջավայրի ու հանրային առողջության թիվ մեկ հիմնախնդիր

Ազատանցիների մի ստվար զանգված նշում է, որ Ջաջուռ գետը վերածվել է «կոյուղու». գյուղացիներն իրենց կենցաղային աղբը լցնում են գետը, այստեղ են թափվում գետի երկայնքով ապրող ընտանիքների, ինչպես նաև Գյումրու մի շարք թաղամասերի կոյուղաջրերը, ինչի հետևանքով գետի հունը բարձրանում, աղտոտվում և գարշահոտություն է տարածվում գետի ողջ երկայնքով: Նրանք նշում են, որ խոնավության պատճառով համայնքից անպակաս են ողնաշարային և սնկային հիվանդությունները, վիրուսները: Երեխաները անընդհատ հիվանդանում են և հաճախ բացակայում դասերից: Խոնավությունը զգալի է անգամ մանկապարտեզի շենքում: Բնակիչները աղտոտված ջրերով ոռոգում են իրենց հողամասերը, ինչը նույնպես հիվանդությունների բուն է: Տների խոնավությունից առավելապես տուժում են կանայք ու երեխաները: Շուրջ 150 ընտանիքի համար գետի աղտոտվածությունն ու խոնավությունը պատուհաս են:

Ազատանցիների մի մասը շեշտում է, որ գետի հունի իջեցումը հարցի լուծում չէ: Նրանք կարծում են, որ անհրաժեշտ է գետը տարին մի քանի անգամ մաքրել, սերմանել գետի մեջ աղբ թափելու հանդեպ անհանդուրժողություն, հսկողություն և վարչական մեծ տուգանքներ սահմանել գետում աղբ թափելու համար:

Երեխաներ և երիտասարդներ

Նոր բնակարան միայն եկամտի կայուն աղբյուրի դեպքում

Ազատանցիները զգալի փաստարկներ են բերում ի օգտուտ երիտասարդ ընտանիքներին բնակարանով ապահովելու նախաձեռնության: Բնակիչները փաստում են, որ գյուղը բնակֆոնդի լուրջ խնդիր ունի. նշում են, որ առանձին տներում բնակվում է տասնհինգ և ավելի անձ: Ընդունելով նախաձեռնության կարևորությունը երիտասարդների համար, ընդգծելով, որ երիտասարդ ընտանիքների համար ավելի ձեռնտու է բնակարան ձեռք բերելը, քան նոր տուն կառուցելը և կարևորելով նախաձեռնության դերը երիտասարդների արտագաղթը կրճատելու առումով, ազատանցիները նշում են նաև, որ համայնքի առանձին խմբերի, այդ թվում՝ միայնակ մայրերի համար խնդիրը ոչ պակաս սուր է:

Բնակիչները միակարծիք են, թե բազմաբնակարան շենքերի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքների տրամադրման խնդիրը կլու-

ծի հեշտությամբ, համարում են, որ այս հարցում գյուղը միասնական դիրքորոշում կունենա և առաջարկում են համայնքի կամ կառուցապատողի և համապատասխան հողատարածքների սեփականատերերի միջև համաձայնության գալու մի շարք տարբերակներ, այդ թվում՝ կառուցված շենքում հողի սեփականատերերին բնակարան հատկացնելու հնարավորություն նախատեսելը: Ազատանցիների նշում են նաև, որ շենքերի կառուցման և բնակարանների իրացման շղթայում կարևոր է հիպոթեկային վարկային միջոցների ներգրավումը և բնակարանների կառուցումը բարձր որակով և ենթակառուցվածքներին մոտ տարածքում:

Միաժամանակ, բնակիչները նշում են, որ նորաստեղծ ընտանիքների համար դժվար կլինի եկամուտների ներկա մակարդակով սպասարկել հիպոթեկային վարկը, կոմունալ և սոցիալական ծախսերը: Ազատանցիները մտահոգ են բնակարանաշինության ծրագրի ֆինանսական մեխանիզմներով և երիտասարդ ընտանիքների վարկունակության խնդրով: Մի կողմից, բնակարանի ձեռքբերումը երիտասարդին ու նրա ապագան կարող է կապել գյուղին, մյուս կողմից նոր վարկերը սպասարկելու համար երիտասարդները կարող են հարկադրաբար գնալ արտագնա աշխատանքի, եթե կայուն եկամտի աղբյուր չունենան համայնքում: Ավելին, ազատանցիները օրինակներ են բերում, երբ վարկերի պատճառով շատ ընտանիքներ միացել ու ապրում են նույն հարկի տակ: Այս և այլ մտահոգություններին պատասխան գտնելու նպատակով, բնակիչներն առաջարկում են նախաձեռնությունը սկսել պիլոտային ծրագրով՝ մեկ շենքով:

Բարեկարգ արվեստի դպրոց գյուղում. անհրաժեշտություն, թե՞ ավելորդ շքեղություն

Ազատանցիների մի մասը կարծում է, թե արվեստի դպրոցն անհրաժեշտություն է գյուղի համար, քանի որ երեխաները դրա շնորհիվ կտրվում են փողոցից, կրթվում ու դաստիարակվում: Նրանք նշում են, որ արվեստի դպրոցում սովորում են նաև երեխաներ հարևան գյուղերից: Կան երեխաներ, ովքեր լավ չեն սովորում հանրակրթական դպրոցում, սակայն իրենց փայլուն դրսևորում են արվեստի դպրոցում: Ազատանցիները նշում են, թե ավելի լավ արվեստի դպրոցն ու մանկապարտեզը կարող են կրճատել բնակիչների հոսքը դեպի Գյումրի: Բնակիչները համարում են, որ արվեստի դպրոցը պետք է առանձնացվի գյուղապետարանից, քանի որ երաժշտության ձայնը, երեխաների մուտք-ու-ելքը խանգարում են թե գյուղապետարանի աշխատանքներին, թե աշակերտներին:

Ազատանցիների մեկ այլ հատված համարում է, որ նոր արվեստի դպրոցի առանձնացումը չի ավելացնի դպրոց հաճախող երեխաների թիվը: Նրանք գտնում են, որ երեխաների մեծ մասն արվեստի դպրոց հաճախել չի ցանկանում: Շատ են ընտանիքները, որոնք օրվա ապրուստի խնդիր են լուծում և երեխայի հավելյալ կրթության մասին հոգալ չեն կարող: Շատերը

արվեստի դպրոցից ավելի կարևորում են դպրոցի ֆիզկուլտուրայի դահլիճի, տրանսպորտի, մանկապարտեզի խնդիրները: Մյուսները համարում են, որ ավելի նպատակահարմար է վերանորոգել գյուղապետարանի հին շենքը և տեղափոխել գյուղպետարանը, կամ գետակի խնդրի լուծումից հետո նախկին մանկապարտեզը օգտագործել որպես արվեստի դպրոց:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Տղամարդը «խոպանում», հոգսը՝ կնոջ ուսերին

Ազատանցիները բազմիցս նշում են, որ գյուղում մեծ է արտագնա աշխատանքի մեկնող տղամարդկանց թիվը, և շատ ընտանիքներում հոգսը կանանց ուսերին է: Կանայք երբեմն ստիպված են անել գործեր, որ «քաղաքի» տղամարդն էլ գուցե չկարողանա կատարել: Կանայք հաճախ ստիպված են աշխատել մինչև ուշ գիշեր: Նման իրավիճակը գենդերային դերերի առումով լուրջ խնդիրներ է ստեղծում համայնքում, որոնք ազատանցիների մեծ մասը հստակ առանձնացնում են և ընկալում: Համայնքի համար խնդրահարույց բազմաթիվ հարցեր առաջին հերթին վտանգում են կանանց ու երեխաների առողջությունն ու ապահովությունը: Առավել դժվար է միայնակ մայրերի համար:

Ազատանցիների մեկ այլ խումբ հակված է չտարբերակել համայնքի առջև ծառացած մարտահրավերների ազդեցությունը կանանց ու տղամարդկանց համար, նշելով, որ, ի վերջո, տղամարդիկ նույնպես որոշակիորեն տուժում են դրանցից:

Հնչած կարծիքների հանրագումարը

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Սցենար 1. Ջաջուռ գետի հունի մակարդակի իջեցում

- Մենք ունենք հողեր, որը գետի հունը փոխելուց ամբողջովին փչացել են... 1500-ից 700-ը փչացել է և մենք չենք կարողանում մշակել դրանք: Դրանց մի մասը ճահիճ է դարձել և ճանապարհներն էլ փչացել են: Գետի հունը անպայման պետք է փոխել:

- Այսօր տասնհինգ միլիոն դրամը շատ քիչ գումար է Ջաջուռ գետի խնդիրը լուծելու համար, անհրաժեշտ է շատ ավելի մեծ գումար:
- Մեր հարևանի հողատարածքը ամբողջությամբ ճահճացել է և այդ մարդը ոչ մի օգուտ չի ստանում իր հողից, իսկ անասունը, երբ ուտում է այն խոտը, որն աճում է այդտեղ սատկում է:
- Գետի խոնավությունը տների երկրորդ ու երրորդ շարքերն է հասնում արդեն:
- Սա առաջնահերթ խնդիր է, թափվող վտակը դարձել է ճահճացած:
- Խնդիրը ոչ այնքան հունի բարձրացման, որքան մաքրության մեջ է, կարծեմ միայն գյուղինը չէ, նաև Գյումրիի կոյուղաջրերն են գետը լցվում, իսկ դրանով էլ ոռոգվում են դաշտերը: Մեր ապրանքը հենց շուկա է դուրս գալիս, մենակ ոռոգման ջրի պատճառով չի վաճառվում:
- Գետի խնդիրը առնչվում է հողին, մարդուն կերակրողն էլ հողն է, դրա համար էլ գետի հարցը առաջնային է:
- Մենք չկարողացանք բնության դեմ պայքարել, այնտեղ շատ լավ հողեր էին, որոնք մշակվում էին և շատ լավ մթերք էինք ստանում, բայց գետակը ամենը ոչնչացրեց, շատ-շատ ընտանիքներ են վնասվում դրանից:
- Մարդիկ ճահճային տարածքներում իրենց տները թողնում են ու կա՛մ տուն կառուցում չոր տարածքներում, կա՛մ գնում Ռուսաստան:
- Մեր մթերքների իրացման խնդիրը՝ կապված կոյուղաջրերով ոռոգման հետ, տարիների խնդիր է՝ դեռ մեր տատերի, պապերի ժամանակվանից, ճահճացումը գնալով շատացել է և հոսքը չքացել:
- Գյուղի տղամարդկանց 90 տոկոսը այստեղ չէ:
- Տարածքում ապրում են մոտ երեք հարյուր ընտանիք, որը շատ մեծ թիվ է:
- Ազատանի տները գրեթե բոլոր էլ կառուցված են գետի ափերին, այդ պատճառով այս հարցը վերաբերում է ամբողջ համայնքին:
- Ինչ պարտադիր է, որ գետի խնդիրը ազդի հենց իմ տան վրա, դա համայնքային խնդիր է:
- Ինձ թվում է, եթե գետը բետոնե պատնեշ չունենա, ապա ավելի վատ կլինի:
- Հնարավոր չէ՞ գետի հունի կողքին փոքր կանալ կառուցել:
- Առաջին սցենարի արդյունքները միանգամից չենք զգա, կզգանք աստիճանաբար, բայց այն շատ անհրաժեշտ է, քանի որ օգուտը շատ մեծ

է:

- Իմ կարծիքով կարող ենք ապամոնտաժել և թողել հողային հունը, որպեսզի ջրերը կարողանան միանալ առվակներին:
- Պրոբլեմը միանգամից չի եղել, այլ ժամանակին հունը ձևափոխելուց հետո, ժամանակի ընթացքում դրենաժների կոտրվածության պատճառներով արտեզյան ջրերի հոսքի դադարեցումը բերեց խնդրին:
- Հին Գերզմանատանը այլևս ճանապարհ չկա, հետո հյուսիս-հարավ ճանապարհը սկսեցին սարքել, որը նոր գերեզմանատունը կիսեց երկու մասի և հիմա չենք կարող օգտագործել: Առաջարկում եմ նոր գերեզմանատունը կառուցել գյուղից դուրս՝ 17 վերջում:

Սցենար 2. Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը՝ առանձին շենքերում

- Գյուղում հաշվետվություն ապահովելու խնդիր չկա. գյուղում եթե աշխատանքն արվում է, ապա այն երևում է:
- Համայնքում խնդիրները փոխկապակցված են:
- Գյուղացիների մեծ մասը տեղյակ չէ գյուղի զարգացման ծրագրից, ու այս քննարկումը բացը լրացնելու շատ լավ տարբերակ է:
- Մանկապարտեզի շենքը գտնվում է դրենաժի զոնայում, ու առանց առաջինի երկրորդն անիմաստ է:
- Իսկ ավելի լավ չէ՞ գյուղապետարանի հին շենքը վերանորոգենք, ու գյուղապետարանը տեղափոխվի այնտեղ:
- Գյուղապետարանն ու արվեստի դպրոցը իրոք միմյանց խանգարում են, բայց ավելի լուրջ է մյուս դպրոցի ֆիզկուլտի դահլիճի խնդիրը: Երեխաները հիմա դրսում են ֆիզկուլտ անում՝ անձրևի ու ձյան տակ:

Սցենար 3. Ոռոգման համակարգի մասնակի վերանորոգում

- Կարտոֆիլի մեծ բերք ունենք, բայց չենք կարողանում վաճառել: Ոռոգման համակարգի վերանորոգումը ոչինչ չի փոխի:
- Մենք այսօր տնտեսապես շատ վատ վիճակում ենք: Անցյալ տարի շոգ էր ու երաշտ, իսկ ոռոգման ջուր էլ չկար: Դրա համար ամբողջ կարտոֆիլը փչացավ ու մենք կորցրինք մեր բերքը: Շատերը վարկով էին սերմացուն գնել, ինչ հետևանքով ընկան տոկոսների տակ:
- Մի քանի տարի առաջ Վրաստանից գալիս մեր կարտոֆիլը տանում էին: Հիմա դա չկա:

- Աշնանը, տանջանքով հողը մշակած գյուղացին միշտ մնում է ձեռնունայն: Եթե ոռոգում էլ լինի գյուղացու վիճակը չի փոխվի, քանի որ իրացում չկա:
- Երրորդ սցենարի իրականացման դեպքում, բերքատվությունը կավելանա:
- Երբեմն էլ միայն գիշերներն են ջուր տալիս, երբ մարդիկ քնած են: Որն է դրա պատճառը, այդպես էլ չհասկացանք: Մենք տասը հեկտար հող մշակեցինք, մեր փողը դրեցինք հողի տակ՝ այդպես էլ չկարողացանք հանել: Մեծ գումարներ կորցրինք:
- Միայն մշակելը հարց չի լուծի, կա նաև իրացման խնդիր: Այսօրվա դրությամբ մենք շուկա չունենք մթերքը իրացնելու համար:
- Եթե գյուղատնտեսական առումով ևս մի երկու այսպիսի տարի լինի, արտագնա աշխատանքի մեկնածներն էլ չեն էլ վերադառնա:
- Այստեղ մարդիկ ապրում են միայն արտագնա աշխատանքի շնորհիվ, իսկ նրանք, ովքեր այստեղ են մնում, կորցնում են այն, ինչ ունեն:
- Ոռոգման հարցի լուծումը արտագնա աշխատանքի խնդիրը կլուծի միայն մասնակի:
- Եթե մշակումը էժանանա, էլի շահագրգիռ կլինի գյուղացին՝ մշակելու, թեկուզ էժան գնով վաճառելու համար:
- Ես չգիտեմ, կա՞ մի գյուղացի, ով վարկ է վերցրել ու այդ վարկը մարել է: Մարդիկ հարսանիք են անում, հաջորդ օրը հարսի վրայից ոսկին հանում ու վազեցնում բանկ:
- Երևանում իրացնելը ձեռնտու չի:
- Եթե գյուղը գյուղատնտեսության վրա է հիմնված, ապա ոռոգումն առաջնային է:
- Կան խոշոր հողատերեր, որոնք հիմնականում օգտվում են ոռոգման ջրից և գյուղացուն բան չեն թողում:
- Եթե իրացման խնդիրը պետական մասշտաբով է, ապա ոռոգման խնդիրն էլ պետք է պետական մասշտաբով լուծվի, ոչ թե համայնքային:
- Ոռոգնամ աշխատանքների բարեկարգման համար աշխատանքներ տեղական բյուջեով միշտ էլ իրականացվել են, և կատարվելու են, այս խնդիրը ընթացիկ լուծվում է:
- Իննսուն հեկտար ավել ոռոգելը գյուղի մասշտաբով թիվ չի:
- Ինչո՞ւ պետք է գյուղապետարանը փող ծախսի ոռոգման համակարգի

վրա: Դա Հայաստանի կառավարության հարցն է:

- Մեր գյուղը տարիքային առումավ բավականին երիտասարդ է, բայց մեր գյուղն էլ է արդեն «ցեցն ընկել»:
- Խոշոր հողակտորները ավելի շատ ջրվում են Կառնուտի ջրամբարի ջրով, Ջաջուռի հարցի լուծումը չի կարգավորի ոռոգման խնդիրը:
- Էսօր բերքի մեծ մասը կովերն են ուտում, իրացում չկա, նույնիսկ Երևանում չի վաճառվում:
- Կառավարությունն է մեղավոր. ինչու չեն բացում Վրաստանի հետ սահմանը, որ վրացին գա կառտոշկա առնի՝ գնա:
- Թունաքիմիկատների որակն էլ սարսափելի է. իր նպատակին չի ծառայում, գնում են մի քանի անգամ, մեծ գումարներ ներդնում՝ շահութ գրեթե չկա:
- Սերմերը որ տվել են, մեր մոտ փորձաշրջան չեն անցել, դրա համար էլ բերք չի ստացվում իննսուն տոկոսի մոտ:
- Արտագաղթը ֆինանսական պատճառ չունի, այլ ընդհանուր առմամբ՝ «երգիրը երգիր չի»:
- Եթե առաջին սցենարի դեպքում խոսում ենք գետի մերձակա հողատարածքների մշակման խնդրի մասին, ապա երրորդ սցենարի դեպքում խոսքը գնում է արդեն հսկայական հեկտարների մասին, այդ իսկ պատճառով սա ավելի կարևոր է:
- Ինչի չեն ամուսնանում էս ջահելները… Կառտոշկա չկա, կառտոշկա՛:
- Կորուստների պատճառով գյուղացիները հաճախ գիշերներն են ոռոգում իրենց հողերը:
- Թե՛ գետի, և թե՛ ոռոգման հարցը շատ կարևոր են մեր համայնքի համար, պետք է պարզենք, թե որի լուծումից ավելի շատ ընտանիքներ կշահեն:
- Ոռոգման խնդրի լուծումը չի իջեցնի արտագաղթի մակարդակը: Իմ երեխայի դասարանում 30 երեխաներից միայն մեկի հայրն է այստեղ:
- Հիմա շատ մեծ տարածքներ ոռոգվում են, բայց արտագաղթի հարցը չի լուծվում:
- Այսօր մենք վախենում ենք բերք ցանել. ջուր չկա, նորմալ սերմ չկա, պարարտանյութեր չկա: Նախ պետք է այս հարցերը լուծել:
- Մեր գյուղատնտեսության նախարարը չի կարողանում մի նորմալ համակարգ ստեղծել որով իրացումը կիրականանա, մեր գյուղում հենց

այս պահին կա 100.000 տոննա կարտոֆիլ, որը շուտով թափելու ենք: Պետք է երրորդ սցենարը անվանել ինչպես իրացնել գյուղացու պահեստավորած գյուղմթերքը:

- Մի ժամանակ մենք կարտոֆիլը ուղարկում էինք Վրաստան, բայց հիմա հայկական կողմից այնքան բարձր մաքսեր են նշանակված, որ այլևս վրացիները չեն գալիս կարտոֆիլ տանելու:
- Մարդուն կերակրողը հողն է, որը հիմա ոչ մի արդյունք չի ապահովում:
- Գյուղը նորմալ եկամուտներ ունի, բայց ժողովուրդը ոչ թե ստեղ է աշխատում, այլ Ռուսաստանում:
- Մենք չունենք կոյուղի, ոռոգման ջրեր, ճանապարհներ. կատարյալ վատ պայմաններ են. սրանք շատ կարևոր են մեր գյուղի զարգացման համար:
- Մեծ պարտքերի պատճառով գյուղի բնակչության 10-15 տոկոսը մեկնում է արտագնա աշխատանքի:
- Ամեն ինչը շատ թանկ է՝ սերմը, մշակումները, պարարտանյութը, իսկ շահույթ՝ չկա: Անգամ եթե բերք ենք ստանում, իրացումը շատ դժվար է: Այս տարի մեր կարտոֆիլի մեծ մասը մնաց անասուններին կեր, քանի որ շատ էժան էր:

Սցենար 4. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում և նոր գերեզմանատան հիմնում

- Ինչ ուզում եք արեք, միևնույն է երիտասարդները այստեղից գնալու են:
- Մեր գյուղացիներով որ գումար հավաքենք, կարող ենք նույնիսկ մնացած գյուղերի պրոբլեմներն էլ լուծել:
- Լուսավորության հարցի լուծման գործում պետք է գյուղի գործարարներին ներգրավել:
- Պետության ջուրն է, ինչ կուզի, կանի:
- Գերեզմանատունն անհրաժեշտ է, մարդուն հո չես կարող ասել “մի մահացի, որովհետև տեղ չունենք”:
- Նոր գերեզմանոցի տեղը հիմա վարելահող է, որը գերեզմանոցի համար տրամադրելը բարդ է:
- Չորրորդը պետք չի առանձին ֆիքսել, այլ անել զուգահեռ այլ սցենարներին:
- Բոլոր սցենարների հետ պետք է գերազմանատների հարցը միացրաց լիեր, որովհետև առանց սրա, ոչինչ չենք կարող անել:

- Նոր գերեզմանատան հիմնումն իմ կարծիքով երկրորդային խնդիր է:
- Պետք է միավորել ոռոգումը և գերեզմանը, ու այս սցենարով լուծել:
- Ես գտնում եմ, որ գերեզմանատան կառուցումը առաջնային չէ, ուրիշ կարևոր խնդիրներ ունենք:
- Մեր փողոցների վերնորոգման համար շատ կարճաժամկետ լուծումներ են տրվում, ասենք, շեբեն են փռում ու վերջ, ու մի ամիս հետո նույն վիճակն է:
- Մեր գյուղում հարկահավաքության պրոբլեմ չունենք:
- Առանց ոռոգման հարցի լուծման մի կերպ ապրում ենք, բայց գերեզմանատուն եթե չկառուցենք, արդեն էլ չենք կարող այսպես ապրել:
- Կան բաներ, որոնք հաճելի են, կան՝ որոնք անհրաժեշտ են, պետք է սկզբում անհրաժեշտ խնդիրները լուծել:
- Գերեզմանատան հարցը ավելի շատ մասնագիտական հարց է: Մենք շատ բան ասել չենք կարող:
- Երկրորդային փողոցներում լուսավորություն չկա, պետք է այս հարցն անհապաղ լուծել:

Սցենար 5. Բնակարան՝ երիտասարդ ընտանիքներին

- Մարդիկ աշխատանք չունեն և վարկ չեն ստանա: Վարկը հարց չի լուծի:
- Հինգերորդը հեռանկարային է, ցանկալի է, կկանխի արտահոսքը:
- Երիտասարդներին այս բնակարաանային ծրագիրը շատ կշահագրգռի և գյուղից չեն գնա:
- Մենք շատ ենք ուզում, որ մեր գյուղը բարգավաճի, երիտասարդները չփախնեն գյուղից:
- Բազմազավակ ընտանիքները ձգտում են քաղաքում ապել, եթե այս ծրագիր իրականացվի քաղաք չեն գնա:
- Տներ կան, որտեղ տասնհինգ հոգի մարդ է բնակվում: Գյուղը բնակֆոնդի խնդիր իրոք ունի:
- Բնակարաշինության ծրագիրը իրատեսական է, քանի որ մեր գյուղը միասնական է: Միասնականության դեպքում հարցերը շատ ավելի հեշտ են լուծվում:
- Անասնապահությամբ էլ չենք կարող զբաղվել. կերը թանկ է, խոտը թանկ է… ստացվում է, որ էլի պիտի խոպանի ճանապրհը բռնես: Ասենք թե բնակարաններ սարքեցին, ոնց պիտի առնենք, ինչով:

- Թող մի շենք կառուցեն, տեսնենք, ինչ է լինում, հետո մնացած շենքերի մասին կմտածենք:
- Բնակարանները պետք է որակով կառուցել, շինարարն էլ լինի գյուղի բնակիչն ու իր ձեռքով կառուցի:
- Պետք է կառուցել հիմնականում երկհարկ տներ, բազմաբնակարան, հիմնականում ներգրավելով հիպոթեկային վարկեր, իսկ գյուղապետարանի դերը հողատարածք հատկացնելն է:
- Սեփականատերերը կհամաձայնեն իրենց հողերը տալ, քանի որ իրենք այդ հողերը չեն օգտագործվում: թող քառահարկ կառուցեն ու դրա առաջին հարկը պայմանագրով տրամադրեն հողատիրոջը:
- Թող համատեղ համաձայնության պայմանագիր կնքեր հողատիրոջ և գնողի միջև: Պայմանագրով բոլոր հարցերը կարգավորվեն:
- Թող իմ տան տարածքը վերցնեն քառահարկ բնակարանը կառուցեն ու առաջին հարկը տան ինձ, մնացածն էլ ում ուզում են թող տալ:
- Այդ նոր շենքերը կարել է քաղաքին մոտ կառուցել:
- Հողը տամ, ինձ երեք սենյականոց բնակարան տվեք:
- Բոլորս էլ ունենք փոքր հողակտորներ, ու այն սիրով կտամ:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Սցենար 1. Ջաջուռ գետի հունի մակարդակի իջեցում

- Ամեն տարի խոնավության պատճառով վերանորոգում ենք տունը: Ավելորդ ծախս է դա մեզ համար:
- Տնամերձ հողամասերը ճահճացել են, բայց դե հարկը տալիս ենք: Ժողովուրդը զրկվել է իր տարածքներից:
- Իմ համար սա մեծ խնդիր է մենք ամեն տարի վերանորոգման վրա ահռելի գումարներ ենք ծախսում, որը կարող էինք այլ բանի վրա օգտագործել:
- Գետի երկայնքով տարբեր եկամուտների տեր մարդիկ են ապրում, և, անկախ միջոցների առկայությունից, ոչ ոք անհատապես իր տան խոնավության հարցը չի կարողանում լուծել:
- Նշված տարածքների պահպանման ծախսերը ամբողջովին բնակչությունն է ծածկում, որը աններելի է:

- Եթե ներկայումս բոլոր ծախսերը բնակչության վրա են, ապա ջրի հունի իջեցումից հետո այդ հողերը կապահովեն բնականոն պտղաբերություն, ու վնասի փոխարեն ժողովուրդը օգուտ կունենա:
- Տարիներ շարունակ կոյուղաջրերը միացված են եղել գետին: Հիմա դժվար էլ ապամոնտաժում արվի, ինչպե՞ս մարդուն ասես կոյուղիդ ապամոնտաժի:
- Միայն գետի հունի վրա աշխատանք անելով հարցը չի լուծվի: Գետի մոտի հողերը անպիտան են դարձել: Համապատասխան աշխատանքներ են պետք այդ հողերի վրա իրականացնել հետագայում:
- Ճահճուտներում ո՛չ մի բույս չի աճում, հինգից տասը տարի է պետք, որ նշված տարածքները պիտանելի դառնան, լիարժեք հող դառնան:
- Շատ կարևոր ծրագիր է, ժողովուրդը գարշահոտից կազատվի, հողերը կսկսեն մշակել, գյուղը կծաղկի:
- Թե՛ գետի, և թե՛ ոռոգման հարցը շատ կարևոր են մեր համայնքի համար, պետք է պարզենք, թե որի լուծումից ավելի շատ ընտանիքներ կշահեն:
- Որ հարցի վրա էլ գումար ներդրվի, մեզ օգուտ է. գյուղում էնքան խնդիր կա, մենք շատ պրոբլեմներ ունենք: Որն էլ լուծվի, մեզ համար կարևոր է:
- Գետի խոնավությունից տուժում են բոլոր, ինչի եք միայն կանանց և երեխաներին նշում, տղամարդիկ հո ամբողջ տարի խոպան չե՞ն:
- Գետի խնդրից տուժում են առանց սեռական պատկանելության, պարզապես ավելի շատ տուժում են ավելի մոտ ապրող մարդիկ:

Սցենար 2. Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը՝ առանձին շենքերում

- Մենք մեր մեծ գյուղում չունենք մանկապարտեզ. այդ հարցն է պետք լուծել: Մենք երեխաներին ուղարկում ենք Գյումրի, որը մեզ վրա բավականին թանկ է նստում:
- Բազմազավակ ընտանիքները ձգտում են քաղաքում ապրել, եթե այս ծրագիր իրականացվի քաղաք չեն գնա:
- Անցյալ տարի ենք տունը վերանորոգել, այս տարի արդեն պատերը նորից վերանորոգելու կարիք ունենք, հատակն էլ ստիպված ամբողջը սալիկապատել ենք, որովհետև փայտի հատակը փտում է:
- Հարկ վճարելուց ազատվելու միակ տարբերակը մարդու կողմից կամավոր այդ հողից հրաժարվելն է, քանի որ անգամ եթե եկամուտ չես

ստանում հողից, միևնույն է պիտի վճարես:

- Արվեստի դպրոցն էլ իր տեղը ունի, չէ որ դա մեր երեխայի ապագայի խնդիր է: Բայց եթե ապրուստի միջոց ունենաս, երեխայիդ ապագայի հարցերը լուծելը ավելի կհեշտանան:
- Պետք է առանձնացնել տեղական խնդիրները մարզայինից, դպրոցների հետ կապված խնդիրները մեր իրավասության ներքո չեն գտնվում, չնայած շատ խնդիրներ ունեն մեր դպրոցները, բայց ավելի լավ է փորձենք լուծել այն խնդիրները, որը իրավասու ենք լուծելու

Սցենար 3. Ոռոգման համակարգի մասնակի վերանորոգում

- Ինչո՞ւ պետք է գյուղապետարանը փող ծախսի ոռոգման համակարգի վրա: Դա Հայաստանի կառավարության հարցն է:
- Թունաքիմիկատների որակն էլ սարսափելի է. իր նպատակին չի ծառայում, գնում են մի քանի անգամ, մեծ գումարներ ներդնում՝ շահութ գրեթե չկա:
- Սերմերը որ տվել են, մեր մոտ փորձաշրջան չեն անցել, դրա համար էլ բերք չի ստացվում իննսուն տոկոսի մոտ:
- Գյուղացիները այսօր վարկ են վերցնում և դժվարանում են վարկը մարել, քանի որ բերքը լավ չէ, ջուր չլինելու պատճառով շատ տարածքներ ամայանում են:
- Ավագանին կարող է վերահսկողություն սահմանել և հետևել, որ շինարարության վրա ցածրորակ շինանյութ չօգտագործվի: Մենք ավագանուն վստահում ենք:
- Մեր հարսների վրա այլևս ոսկի չկա: Ամբողջ ոսկին գրավ է դրված գյուղատնտեսական վարկերի դիմաց:
- Գյուղի 80 տոկոսը գյուղատնտեսական վարկ է վերցնում: Մի վարկը վերցնում է, մյուս վարկը փակելու համար: Պետք է ստեղծել սպառման շուկա:
- Օրինակ հիմա ոռոգման համար միանգամից փող են ուզում, բայց որ մշակենք, հետո ուզեն, ավելի ճիշտ կլինի:
- Մեր գյուղի ոռոգման համակարգը լուծելու համար շատ մեծ գումարներ են հարկավոր: Դրա համար էլ ես հույս չունեմ, որ կարելի է այդ հարցը լուծել կարճ ժամանակում:
- Ջրամատակարարի հետ կապել պայմանագիր, որ բերքը վաճառելուց հետո վճարենք մի մասի համար, հետո մյուս մասինը: Ոռոգումը շատ

թանկ է:

- Ոռոգման մի հեկտարը տասնվեց հազար է...
- Ամբողջ Հայաստանում ոռոգման ջուրը մի սակագին ունի, բայց Արարատյան դաշտն ու Շիրակը ուրիշ է:
- Բոլոր գյուղացիները ամբարած կարտոֆիլ ունեն, որը ծլում է, մեր խնդիրը ոչ թե ավելի արտադրելն է, այլ եղածը իրացնելը: Եթե այս տարի չիրացնենք, եկող տարի էլ չենք էլ աճեցնի:
- Այսօր նոր գերեզմանատան ստեղծումը անհրաժեշտություն է, բայց եղածներն էլ լավը չեն, սխալ տեղ են կառուցված, ստեղծում են խնդիրներ, որովհետև գյուղին շատ մոտ են:
- Մեր գյուղում աշխատանքի լուրջ խնդիր կա: Արտագաղթը շատ է, կանանց ուսերին մեծ հոգս է: Կանայք տղամարդկանց գործերն են ստիպված անում, պարկեր կրում, որ քաղաքի տղամարդն էլ գուցե չկարողանա բարձրացնել:
- Մենք կարտոֆիլը չենք կարողանում վաճառել 50-60 դրամով, ու դրանից ստացած գումարով ինչպես կարող ես վճարել ոռոգման, թունաքիմիկատների, մարդկային աշխատանքի և այլնի համար:
- Քաղաքի ճանապարհի մոտ տեղ կա, որ կորուստները շատ են, հողակտորներն անհամաչափ են ջրվում:
- Հողատարածքները, 4-5 անգամ նախատեսված ոռոգման փոխարեն, երեք անգամ են ոռոգվել:
- Կարծում եմ, ոռոգման խնդիրը ամենաառաջնայինն է մեր գյուղի համար, հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսությունն է, բացի այդ ոռոգման համակարգի վատ վիճակի պատճառով ջրի կորուստ էլ շատ է:
- Եթե գետի հունի պրոբլեմը լուծվի, ապա գետի երկայնքով ապրողների քանակը կավելանա, ու ավելի շատ կոյուղաջրեր կլցվի գետը: Արդյունքում կտուժի ոռոգման համակարգը:

Սցենար 4. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում և նոր գերեզմանատան հիմնում

- Մեր գյուղացիներով որ գումար հավաքենք, կարող ենք նույնիսկ մնացած գյուղերի պրոբլեմներն էլ լուծել:
- Լուսավորության հարցի լուծման գործում պետք է գյուղի գործարարներին ներգրավել:

- Այս խնդիրները շատ մանր են, նրանցից ոչ մեկը չեն լուծում արտագնա աշխատանքի հարցը, սրա հիմնական պատճառն այն է, որ մարդիկ իրենց արտադրած ապրանքը չեն կարողանում իրացնել:
- Ոռոգման աշխատանքների բարեկարգման համար աշխատանքներ տեղական բյուջեով միշտ էլ իրականացվել են, և կատարվելու են, այս խնդիրը ընթացիկ լուծվում է:
- Լուսավորության հարցը լուծելը կապահովի բարեկեցություն, բայց ոռոգման հարցը հացի խնդիր է լուծում, սրանք համեմատելու չեն:
- Տարբեր սցենարներով տարբեր չափի գումարներ են նախատեսվում, սա էլ պիտի հաշվի առնենք:
- Նոր գերեզմանը արդեն անհրաժեշտություն է, ընդ որում, երեք միլիոնը մեծ գումար չէ, այն կարելի է անել ցանկացած այլ սցենարին զուգահեռ, անկախ ամենից:
- Գերեզմանատան համար քիչ գումար է անհրաժեշտ, պետք է այն իրականացնել, իսկ մնացած գումարն ուղղել ոռոգման խնդրի լուծմանը:
- Մենք գյուղում նախագծող և այլ մասնագետներ ունենք: Այնպես որ գերեզմանատան տեղափոխման հետ կապված ծախսերը կարող են շատ ավելի քիչ լինել:
- Լուսավորությունից առաջ շատ կարևոր է նաև ճանապարհների հարցը. մենք ասֆալտապատ ճանապարհ չունենք: Մինչև դրանք չվերանորոգվեն, ինչ լուսավորության մասին է խոսելը: Երեխաները դասից ուշանում են, քանի որ լրիվ ցեխ է ու կեղտ: Լինում է, որ սեզոնում մի քնաի զույգ կոշիկ է մաշվում: Պետք է մտածել ճանապարհների վերանորոգման մասին:
- Երեք միլիոնով չորորդ սցենարն ամբողջությամբ հերիք է, ժամանակի ընթացքում կանենք:
- Գերեզմանատան նոր տարածքը բավականին ուսումնասիրված է, ու այնտեղ ջրերի հոսքի կամ գրունտի հարց չկա:
- Մինչ լուսավորության հարցը, պետք է երկրորդային ճանապարհի վերանորգման հարցը լուծել: Այդ ճանապարհի պատճառով չեմ ուզում տնից դուրս գալ:
- Ամառը այնքան ենք հոգնում, որ էլ ո՞վ է ուժ ունենում, որ հյուր գնա, որ մի հատ էլ լուսավորությանը նայի:
- Երկրորդական փողոցների լուսավորությունից առաջ պետք է այդ երկրորդական փողոցները վերանորոգել, որ երեխաները մինչև վիզը ցե-

խոտված տուն չգան:

- Նոր գերեզմանոցի տեղը հիմա վարելահող է, որը գերեզմանոցի համար տրամադրելը բարդ է:
- 19 փողոցը դպրոցինն է, դա էլ կարևոր է երեխաների տուն գալու համար, հատկապես հոգսերը շատ են, միշտ չի, որ կարողանում ենք երեխաների հետևից գնալ:

Սցենար 5. Բնակարան՝ երիտասարդ ընտանիքներին

- Պետք է կառուցել հիմնականում երկհարկ տներ, բազմաբնակարան, հիմնականում ներգրավելով հիպոթեկային վարկեր, իսկ գյուղապետարանի դերը հողատարածք հատկացնելն է:
- Անասնապահությամբ էլ չենք կարող զբաղվել. կերը թանկ է, խոտը թանկ է... ստացվում է, որ էլի պիտի խոպանի ճանապարհը բռնես: Ասենք թե բնակարաններ սարքեցին, ոնց պիտի առնենք, ինչով:
- Ես նորաստեղծ ընտանիք եմ, աշխատում եմ նվազագույն աշխատավարձով, ինչպես վճարեմ, բոլոր կոմունալ ծախսերը, երեխաներիս վճարները: Աշխատավարձի բարձրացում է անհրաժեշտ:
- Մարդիկ աշխատանք չունեն և վարկ չեն ստանա: վարկը հարց չի լուծի:
- Պետք է պարզել բնակարան ցանկացողների քանակը, հիպոթեքային վարկեր տրամադրել:
- Բնակարանների կառուցման հարցը շատ կարևոր է, բայց հարկավոր է, որ ցածր տոկոսադրույքներով մեզ վարկ տրամադրեն: Բայց այստեղ առաջանում է ևս մի հարց. եթե դու աշխատանք չունես, ինչպես ես վճարելու վարկերը:
- Նույնիսկ դպրոցական երեխան է այսօր մտածում արտագնա աշխատանքի մասին. իններորդ դասարանցի երեխաս ուզում է թողնել դպրոցն ու գնալ, քանի որ հայրը հիվանդ է և ի վիճակի չէ աշխատել: Իսկ այստեղ ինչ ձեռնարկում են, միևնույնն է՝ շահույթ չունես: Առաջին հերթին այս հարցերը պետք լուծել:
- Ազատանում շատ մեծ է բնակարանների հարցը: Մինչև երիտասարդները, պետք է մտածել այն մասին, որ շատ մարդիկ չունեն ապրելու կացարան: Իմ աղջիկը միայնակ մայր է, չունի բնակարան և ստիպված է ինքը գնալ արտագնա աշխատանքի, որ մի բա ստեղծի իր երեխայի համար: Բայց այդ դեպքում նրա երեխան կմնա նաև առանց մայր:
- Տներ կան, որտեղ տասնհինգ հոգի մարդ է բնակվում: Գյուղը բնակֆոնդի խնդիր իրոք ունի:

- Երիտասարդներին այս բնակարանային ծրագիրը շատ կշահագրգռի և գյուղից չեն գնա:
- Ինքս ապրում եմ քաղաքում, իսկ գյուղում աշխատում եմ, ու գտնում եմ, որ միևնույն է ոռոգման հարցն է ամենից կարևոր:
- Վարկերի պատճառով շատ ընտանիքներ միացել են ու ապրում են նույն հարկի տակ:
- Բազմաբնակարան շենքերի ծրագիրը շատ լավն է, եթե իհարկե հողատերերը համաձայնեն իրենց տարածքները միավորել:

Անվտանգություն

Սցենար 1. Ջաջուռ գետի հունի մակարդակի իջեցում

- Այսօր գրունտային ջրերի մակարդակն այնքան է բարձրացել, որ առաջացնում է սեյսմիկ վտանգ:

Սցենար 2. Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը՝ առանձին շենքերում

- Բետոնի պատնեշները հանելը վտանգավոր է նաև երեխաների համար, որովհետև եթե պատնեշ չլինի երեխաները կարող են պարզապես ընկնել գետը և խեղդվել:

Սցենար 4. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում և նոր գերեզմանատան հիմնում

- Այսօր Ազատանում լուսավորված է միայն կենտրոնական փողոցը: Մութը ընկնում է, մենք այլևս վախենում են դուրս գալ տանից:
- Նույնիսկ ծայրահեղ վիճակում, երբ, օրինակ, հարկավոր է շտապ օգնության մեքենային դիմավորել, մենք վախենում ենք դուրս գալ տանից: Բավական չէ, որ լուսավորություն չկա, նաև ճանապարհ չկա:
- Երկրորդային փողոցներում լուսավորություն չկա, պետք է այս հարցն անհապաղ լուծել: Մութը գայլերի տեղաշարժման համար խթան է հանդիսանում:
- Մեր գյուղի վրա գայլերի հարձակում եղել է, բայց նշված փողոցները լուսավորելը այդ խնդիրը չի լուծի, քանի որ գայլերը հարձակվում են ծայրամասերի վրա, իսկ սրանք կենտրոնական փողոցներ են:
- Լուսավորելը ցանկալի է: Ներկայում արդեն գայլեր կան, շներն են

շատացել...

- Լուսավորությունը կարևոր է, երեխաները սպորտի են գնում, դասերը վերջացնում են երեկոյան, մթին երեխայի համար վտանգավոր է տուն գալ, շներ, գայլեր, աղվեսներ կան թափառող:
- Հաճելի կլինի, ապահով կլինի...
- Սեզոնային աշխատանքներից շատ հաճախ ուշ ենք գալիս, հոսքը շատ է, պետք է լուսավորել:
- Լուսավորությունը պետք է, սեզոնին կանայք են դրսում՝ ջուր են անում գիշերվա մթին:
- Տղամարդ չկա, կանայք էլ ինչքա՞ն կարող են երեխաներին պաշտպանել գայլերից:
- Տարրական պայմաններ մեր գյուղում չկա. կոյուղի չկա, ոռոգման ջուր չկա, ճանապարհները քանդված են, լուսավորություն չկա, գիշերները թափառող շները վխտում են: Պետք է հերթով լուծել այս հարցերը: Բոլորն էլ առաջնային են:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Սցենար 1. Ջաջուռ գետի հունի մակարդակի իջեցում

- Անմխիթար վիճակում է գտնվում է Ջաջուռ գետը, ջուրը ամբողջությամբ չի հեռացվում, ստեղծում է վտանգ շրջակայքում գտնվող տների համար:
- Մարդիկ էդ խոնավության մեջ, ճահիճների մոտ շարունակում են ապրել՝ մինչև դրան ինչ-որ լուծում տրվի:
- Իմ կարծիքով պետք է բնապահպանական խումբ հավաքել, որ մասնագիտական որոշում կայացնեն և հետազոտություններ իրականացնեն, քանի որ սովորական գյուղացին անձամբ չի կարող դա կատարել:
- Ջրի հունի իջեցումը խնդրի լուծում է, միանշանակ:
- Շատ կարևոր է նաև այն, որ մարդկանց մեջ սերմանեն, որ այդ գետում աղբ թափել չի կարելի: Դրա համար կարելի է նույնիսկ սահմանել տուգանքներ:
- Ջրի իջեցումն անհրաժեշտ է, քանի որ ջուրը լցվում է մարդկանց տները, աղբը նույնպես լցնում են այդ ջրի մեջ: Կեղտոտ ջրով ոռոգվում են հողերը և առաջացնում տարբեր տեսակի հիվանդություններ: Տարին

մեկ տրակտորով մաքրում են աղբը, բայց դա չնչին բան է: Գետը վերածվել է աղբատար խողովակի: Դրանից էլ օձեր են հայտնվում, որոնք մինչև տները հասնում են:

- Գետը ամեն տարի գոնե մի քանի անգամ մաքրվի, որ հոտը կտրվի, բացի այդ կոյուղին է այդ գետը թափվում: Գյուղացիներն էլ պետք է սովորեն աղբը չթափել:
- Խնդիրը ոչ այնքան հունի բարձրացման, որքան մաքրության մեջ է, կարծեմ միայն գյուղինը չի, նաև Գյումրիի կոյուղաջրերն են գետը լցվում, իսկ դրանով էլ ոռոգվում են դաշտերը: Մեր ապրանքը հենց շուկա է դուրս գալիս, մենակ ոռոգման ջրի պատճառով չի վաճառվում:
- Գետակի հունը մաքուր չէ, ինչ աղբ կա թափվում է գետակի մեջ:
- Պետք է խիստ հսկողություն սահմանել աղբ թափողների նկատմամբ:
- Երբ մենք երեխա էինք, գետը մաքուր էր, ու մենք ամռանը այդտեղ լողանում էինք:
- Խոնավության խնդիրը միշտ էլ այստեղ եղել է. մի պահ սարքեր տեղադրվեցին և վիճակն ահագին բարելավվեց: Հունի իջեցումից բացի շատ կարևոր է մաքրության հարցը: Հիմա տարիներով կեղտը հավաքվում է, դրանից էլ նաև բարձրանում է հունը: Սա նույնպես շատ կարևոր հարց է:
- Գետը մասամբ կանալիզացիայի է վերածվել:
- Ամռանը գարշահոտությունը ահավոր է, գոնե դրա համար ինչ-որ միջոցառում պետք է կազմակերպվի ՏԻՄ-ի կողմից:
- Գետի մեջ լցվում են Գյումրու կոյուղու ջրերը, որ հոսում գալիս են մեր մոտ, անկախ նրանից, թե մեր կոյուղին էլ գետը լցվի թե չէ, գարշահոտը միևնույն է մնալու է:
- Տհաճ հոտի և հիվանդությունների մասին խոսելն անգամ անիմաստ է: Այդ ջրից մենք է ենք օգտվում և հիվանդություններ են առաջանում:
- Գետի հունի խնդիրը առաջնային է նրանով, որ գարշահոտությունն արդեն ահավոր է, կամուրջը խարխուլ վիճակում է և երեխաները անընդհատ անցնում են դրանով, սա նաև հիվանդությունների աղբյուր կարող է դառնալ:
- Առօրյայի վրա առաջին սցենարը չի ազդի, բայց պատերի խոնավության հարցը կլուծվի, բացի այդ էլ խոնավության պատճառով ցանքի աշխատանքները ափամերձ շրջաններում ավելի ուշ են սկսվում, և որոշ բույսեր չեն հասցնում հասունանալ:

- Այդ ջուրն այնքան կեղտոտ է, մամռակալած, որ եթե մարդ մտնի, մազութով ծածկված դուրս կգա: Բայց մենք ստիպված ենք դրանով ջրել մեր հողերը, որովհետև այլ տարբերակ չունենք:
- Ճահճացած տարածքներում երեխաները անառողջ են մեծանում:
- Տների խոնավությունից կանայք ու երեխաներն են հիմնականում տուժում, քանի որ տղամարդկանց մեծ մասը այստեղ չի լինում: Բայց տղամարդիկ այս խնդրի մասին տեղյակ են:
- Այդ ջրից առաջանում են սնկեր, որոնք շատ վտանգավոր են առողջության համար: Հիմա շատերի բնակարանում խոնավությունն ու բորբոսը թույլ չեն տալիս առողջ ապրել:
- Գետի պատճառով գարշահոտության հարց կա, գետով ամառը նաև քիմիական նյութեր են գալիս, գետի հետ կապված շատ հարցեր կան:
- Մենք մեր կաշվի վրա զգացել ենք խոնավությունը, ողնաշարի հիվանդություն ենք ստացել:
- Ռևմատիզմը, վիրուսը, հիվանդությունները անպակաս են մեր գյուղից, իսկ որ երաշտ է լինում «ֆրանսիական օծանելիքի» հոտը անպակաս է գյուղից:
- Ջաջուռի երկայնքով 100-150 ընտանիք է ապրում, որ ողնաշարային և այլ հիվանդություններ են ձեռք բերել:
- Մայրերը ռեզինե սապոգներով գրկած բերում են երեխաներին դպրոց: Երեխաների մեծ մասը անգինայով են հիվանդանում ձմռանը:

Սցենար 2. Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը՝ առանձին շենքերում

- Գետի մեջ լցվում են Գյումրու կոյուղու ջրերը, որ հոսում գալիս են մեր մոտ, անկախ նրանից, թե մեր կոյուղին էլ գետը լցվի թե չէ, գարշահոտը միևնույն է մնալու է:
- Արվեստի դպրոցը գյուղապետարանից առանձնացնելը ոչ մի խնդիր չի լուծի. դա պատճառ չէ, որ երեխաները հաճախեն այդ դպրոցը: Մեզ մոտ առաջնայինը այդ ջրի հարցը լուծելն է: Մարդկանց տները մնացել են ջրերի մեջ, խոնավ բորբոսները պատերի վրա են, զարգանում են հիվանդությունները: Այ սրանք են կարևոր:
- Ջաջուռն ազդում է նաև մանկապարտեզի շենքի վրա, խոնավ է, երեխաները չեն կարողանում հաճախել:

Սցենար 4. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում և նոր գերեզմանատան հիմնում

- Մեր ունեցած նոր գերեզմանները հիմա գտնվում են պատմամշակութային նշանակություն ունեցող տարածքի վրա: Այնպես որ գերեզմանատունը տեղափոխել է պետք:

Երեխաներ և երիտասարդներ

Սցենար 1. Ջաջուռ գեղի հունի մակարդակի իջեցում

- Ամռան ընթացքում, երիտասարդները արտագնա աշխատանքի են լինում և կամավորության վրա հնարավոր չէ վերանորոգում անել:

Սցենար 2. Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը՝ առանձին շենքերում

- Գյուղապետարանն ու արվեստի դպրոցը իրոք միմյանց խանգարում են, բայց ավելի լուրջ է մյուս դպրոցի ֆիզկուլտի դահլիճի խնդիրը: Երեխաները հիմա դրսում են ֆիզկուլտ անում՝ անձրևի ու ձյան տակ:
- Արվեստի դպրոցը պետք է առանձնացվի գյուղապետարանից: Երաժշտության ձայնը, երեխաների մուտքուելքը խանգարում են գյուղապետարանի աշխատանքներին:
- Գյուղում երկու պարի խումբ կա 50-60 երեխաներով: Մեզ համար շատ կարևոր է արվեստի դպրոցը: Երկրաշարժից հետո մեր եղբայրական Ուզբեկստանը եկավ և կիսաքանդ մանկապարտեզը հոյակապ վերանորոգեց, սակայն այդ նույն չարաբաստիկ գետակի պատճառով, շենքը ամբողջությամբ խոնավացավ, բակը ճահճակալվեց, և հիմա չի օգտագործվում: Եթե գետակի հարցը լուծվի կարող ենք նախկին մանկապարտեզը օգտագործել որպես արվեստի դպրոց:
- Երկրորդ սցենարը իմ կարծիքով այնքան էլ առաջնային հարց չէ: Մեզ մոտ ավելի կարևոր լուծելու հարցեր կան: Մեր երեխաները այնքան էլ ցանկություն չունեն արվեստի դպրոց հաճախելու: Դա գալիս է նրանից, որ ծնողները այնքան հոգսաշատ են, որ ժամանակ և հնարավորություն չունեն երեխաներին արվեստի ուղղությամբ կրթելու:
- Երկրորդ սցենարը կարևոր է, քանի որ կնպաստի երեխաների մշակութային կրթվածությանը:
- Ազատանում սովորում են տարբեր գյուղերի երեխաներ, ու տարածաշրջանի համար այն շատ կարևոր նշանակություն ունի:

- Մեծերն այսօր շատ հոգսեր ունեն, իսկ գյուղով մենակ գնալ-գալը շատ վտանգավոր է: Մենք այսօր պայմաններ չունենք, որ երեխաներին տրամադրենք ամբողջ օրը: Դրա համար էլ այսօր արվեստի հարցը երկրորդական պլան է մղվել: Մեզ մոտ հարկավոր է նաև տրանսպորտի հարց լուծել:
- Մենք դեպի զարգացում ենք գնում: Ինչքան լավ ծրագրեր լինեն, մեր երեխաներն ավելի շատ կրթված կլինեն, ինչու՞ գնան հասնեն քաղաք, եթե կարող են գյուղում կրթվել:
- Մեր երեխաները հաճախ են արվեստի դպրոցով տարբեր միջոցառումների մասնակցում, դա շատ կարևոր է երեխաների համար:
- Երեխաները կկտրվեն փողոցից, կդաստիարակվեն:
- Իմ երեխան եկող տարի պետք է գնա դպրոց և ես շատ կուզեմ, որ արվեստի դպրոց լինի, որ իմ երեխան դրսից ու փողոցի փոշուց կտրվի ու գնա զարգանա:
- Երեխան սնվում է հողից, եթե հողը չոռոգվեց ու երեխան սոված մնաց, էլ ինչ կարևոր է, թե նա երաժշտական կրթություն ստանում է, թե ոչ:
- Երեխաների մեծ մասը արվեստի դպրոց չի հաճախում: Ու տարածք ավելացնելը աշակերտի թիվը չի ավելացնելու:
- Իմ աղջիկը պարապում էր ուսուցչանոցում, որտեղ անընդհատ ելումուտ է, դա խանգարում է պարապմունքներին:
- Ներկայումս դպրոցը գործում է, լավ խմբակներ կան, լավ են աշխատում:
- Ուրիշ գյուղերից մի ժամանակ երեխաները այցելում էին մեր արվեստի դպրոցը, բայց հիմա այդպես չէ:
- Արվեստի դպրոցը կարող է օգտակար լինել նաև հարակից գյուղերի երեխաների համար:
- Մենք ունենք երեխաներ, ովքեր լավ չեն սովորում դպրոցում, բայց շատ լավ տաղանդ ունեն երաժշտության հարցում, իրենց անհրաժեշտ է գեղագիտորեն զարգացնել:
- Գյուղը շատ հետ է մնացել. Ազատանը ամենամեծ գյուղն է, բայց շատ տխուր վիճակում է: Մեր երեխաները չեն օգվում տարրական բաներից: Այս հարցերի ամսին է հարկավոր մտածել:
- Արվեստի դպրոցում լավ կլինի գորգագործության խմբակներ լինեն, երիտասարդ մասնագետների բերեն ու աշխատատեղերով ապահովեն:
- Իմ աղջիկը պարապում էր ուսուցչանոցում, որտեղ անընդհատ ելումուտ է, դա խանգարում է պարապմունքներին:

Սցենար 3. Ոռոգման համակարգի մասնակի վերանորոգում

- Երեխան սնվում է հողից, եթե հողը չոռոգվեց ու երեխան սոված մնաց, էլ ինչ կարևոր է, թե նա երաժշտական կրթություն ստանում է, թե ոչ:
- Մեզ ամեն ինչ էլ պետք է. այս բոլոր հարցերը կապակցված են իրար հետ: Առաջ Լենինականից գալիս էին մեր արվեստի դպրոց, իսկ այսօր մեր երեխաներին չենք կարողանում ուղարկել: Դա խոսում է այն մասին, որ պետք է զարգացնել դպրոցը: Մենք ունենք երկու դպրոց, որոնք դահլիճ անգամ չունեն, նույնիսկ սպորտդահլիճ չկա:
- Ամենից կարևորը ոռոգումն է, հետո գետի խնդիրը, իսկ արվեստի դպրոցը թող սպասի:
- Մեր գյուղը տարիքային առումով բավականին երիտասարդ է, բայց մեր գյուղն էլ է արդեն «ցեցն ընկել»:
- Ինչի՞ չեն ամուսնանում էս ջահելները... Կառտոշկա չկա, կառտոշկա՛:

Սցենար 4. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում և նոր գերեզմանատան հիմնում

- Ինչ ուզում եք արեք, միևնույն է երիտասարդները այստեղից գնալու են:
- Մենք շատ ենք ուզում, որ մեր գյուղը բարգավաճի, երիտասարդները չփախնեն գյուղից:
- Այն փողը, որը պետք է ծախսվի չորրորդ սցենարի վրա, թող մի հողատարածք վերցնեն ու երեխաների համար խաղահրապարակ ստեղծեն:
- Այն փողը, որը պետք է ծախսվի չորրորդ սցենարի վրա, թող մի հողատարածք վերցնեն ու երեխաների համար խաղահրապարակ ստեղծեն:
- Ինչ ուզում եք արեք, միևնույն է երիտասարդները այստեղից գնալու են:
- 19 փողոցը դպրոցինն է, դա էլ կարևոր է երեխաների տուն գալու համար, հատկապես հոգսերը շատ են, միշտ չի, որ կարողանում ենք երեխաների հետևից գնալ:

Սցենար 5. Բնակարան՝ երիտասարդ ընտանիքներին

- Ազատանում շատ մեծ է բնակարանների հարցը: Մինչև երիտասարդները, պետք է մտածել այն մասին, որ շատ մարդիկ չունեն ապրելու կացարան: Իմ աղջիկը միայնակ մայր է, չունի բնակարան և ստիպված է ինքը գնալ արտագնա աշխատանքի, որ մի բա ստեղծի իր երեխայի համար: Բայց այդ դեպքում նրա երեխան կմնա նաև առանց մայր:

- Երիտասարդներին այս բնակարանային ծրագիրը շատ կշահագրգռի և գյուղից չեն գնա:
- Բնակարանները պետք է որակով կառուցել, շինարարն էլ լինի գյուղի բնակիչն ու իր ձեռքով կառուցի:
- Օրինակ եթե ես ջահել լինեի ու այդ փողոցում մի հատ ջահել-ջիվան յար ունենաի, հեչ էլ չէի ուզենա, որ լույս քաշեին:
- Մենք շատ ենք ուզում, որ մեր գյուղը բարգավաճի, երիտասարդները չփախնեն գյուղից
- Ես նորաստեղծ ընտանիք եմ, աշխատում եմ նվազագույն աշխատավարձով, ինչպես վճարեմ, բոլոր կոմունալ ծախսերը, երեխաներիս վճարները: Աշխատավարձի բարձրացում է անհրաժեշտ:
- Երիտասարդ ընտանիքներին ավելի ձեռնտու է բնակարան ձեռք բերելը, քան նոր տուն կառուցելը

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Սցենար 1. Ջաջուռ գեղի հունի մակարդակի իջեցում

- Գյուղի տղամարդիկ արտագնա աշխատանքի են, ամբողջ հոգսը կանանց ուսերին է:
- Մայրերը ռեզինե սապոգներով գրկած բերում են երեխաներին դպրոց: Երեխաների մեծ մասը անգինայով են հիվանդանում ձմռանը:
- Գետի խոնավությունից տուժում են բոլոր, ինչի եք միայն կանանց և երեխաներին նշում, տղամարդիկ հո ամբողջ տարի խոպան չեն:
- Տների խոնավությունից կանայք ու երեխաներն են հիմնականում տուժում, քանի որ տղամարդկանց մեծ մասը այստեղ չի լինում: Բայց տղամարդիկ այս խնդրի մասին տեղյակ են:
- Գյուղի տղամարդկանց 90 տոկոսը այստեղ չէ:
- Գետի խոնավությունից տուժում են բոլոր, ինչի եք միայն կանանց և երեխաներին նշում, տղամարդիկ հո ամբողջ տարի խոպան չեն:

Սցենար 2. Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը՝ առանձին շենքերում

- Գյուղապետարանը ներկայում մասնագետ չունի, որ պրոֆեսիոնալ

գնահատական տա շենքի վիճակին:

- Արվեստի դպրոցում լավ կլինի գորգագործության խմբակներ լինեն, երիտասարդ մասնագետների բերեն ու աշխատատեղերով ապահովեն:
- Աշխատատեղերի հարցով էլ կօգնի արվեստի դպրոցը:
- Մենք ունենք և՛ մասնագետներ, և՛ աշակերտներ: Նրանք կարող են աշխատել: Վերջերս նույնիսկ բեմադրություն էին դրել և գյուղացիներն ուղակի հիացած էին:

Սցենար 3. Ոռոգման համակարգի մասնակի վերանորոգում

- Մեր գյուղում աշխատանքի լուրջ խնդիր կա: Արտագաղթը շատ է, կանանց ուսերին մեծ հոգս է: Կանայք տղամարդկանց գործերն են ստիպված անում, պարկեր կրում, որ քաղաքի տղամարդն էլ գուցե չկարողանա բարձրացնել:

Սցենար 4. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում և նոր գերեզմանատան հիմնում

- Այս խնդիրները բոլորն էլ շատ կարևոր են, պետք չի առանձնացնել թե կանանց համար որն է կարևոր, տղամարդկանց համար որը, տարբերություն չկա:
- Լուսավորությունը պետք է, սեզոնին կանայք են դրսում՝ ջուր են անում գիշերվա մթին:
- Տղամարդ չկա, կանայք էլ ինչքա՞ն կարող են երեխաներին պաշտպանել գայլերից:

Սցենար 5. Բնակարան՝ երիտասարդ ընտանիքներին

- Ազատանում շատ մեծ է բնակարանների հարցը: Մինչև երիտասարդները, պետք է մտածել այն մասին, որ շատ մարդիկ չունեն ապրելու կացարան: Իմ աղջիկը միայնակ մայր է, չունի բնակարան և ստիպված է ինքը գնալ արտագնա աշխատանքի, որ մի բա ստեղծի իր երեխայի համար: Բայց այդ դեպքում նրա երեխան կմնա նաև առանց մայր:

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Մենք ունենք հողեր, որը գետի հունը փոխելուց ամբողջովին փչացել են... 1500-ից 700-ը փչացել է և մենք չենք կարողանում մշակել դրանք: Դրանց մի մասը ճահիճ է դարձել և ճանապարհներն էլ փչացել են: Գետի հունը անպայման պետք է փոխել:

Մեր հարևանի հողատարածքը ամբողջությամբ ճահճացել է և այդ մարդը ոչ մի օգուտ չի ստանում իր հողից, իսկ անասունը, երբ ուտում է այն խոտը, որն աճում է այդտեղ սատկում է:

Գետի խնդիրը առնչվում է հողին, մարդուն կերակրողն էլ հողն է, դրա համար էլ գետի հարցը առաջնային է:

Մենք չկարողացանք բնության դեմ պայքարել, այնտեղ շատ լավ հողեր էին, որոնք մշակվում էին և շատ լավ մթերք էինք ստանում, բայց գետակը ամենը ոչնչացրեց, շատ-շատ ընտանիքներ են վնասվում դրանից:

Մենք այսօր տնտեսապես շատ վատ վիճակում ենք: Անցյալ տարի շոգ էր ու երաշտ, իսկ ոռոգման ջուր էլ չկար: Դրա համար ամբողջ կարտոֆիլը փչացավ ու մենք կորցրինք մեր բերքը: Շատերը վարկով էին սերմացուն գնել, ինչ հետևանքով ընկան տոկոսների տակ:

Ոռոգման համակարգի վերանորոգման դեպքում, բերքատվությունը կավելանա:

Երբեմն էլ միայն գիշերներն են ջուր տալիս, երբ մարդիկ քնած են: Որն է դրա պատճառը, այդպես էլ չհասկացանք: Մենք տասը հեկտար հող մշակեցինք, մեր փողը դրեցինք հողի

Այսօր տասնհինգ միլիոն դրամը շատ քիչ գումար է Ջաջուռ գետի խնդիրը լուծելու համար, անհրաժեշտ է շատ ավելի մեծ գումար:

Խնդիրը ոչ այնքան հունի բարձրացման, որքան մաքրության մեջ է, կարծեմ միայն գյուղինը չէ, նաև Գյումրիի կոյուղաջրերն են գետը լցվում, իսկ դրանով էլ ոռոգվում են դաշտերը: Մեր ապրանքը հենց շուկա է դուրս գալիս, մենակ ոռոգման ջրի պատճառով չի վաճառվում:

Մեր մթերքների իրացման խնդիրը՝ կապված կոյուղաջրերով ոռոգման հետ, տարիների խնդիր է՝ դեռ մեր տատերի, պապերի ժամանակվանից, ճահճացումը գնալով շատացել է և հոսքը չքացել:

Կարտոֆիլի մեծ բերք ունենք, բայց չենք կարողանում վաճառել: Ոռոգման համակարգի վերանորոգումը ոչինչ չի փոխի:

Մի քանի տարի առաջ Վրաստանից գալիս մեր կարտոֆիլը տանում էին: Հիմա դա չկա:

Աշնանը, տանջանքով հողը մշակած գյուղացին միշտ մնում է ձեռնունայն: Եթե ոռոգում էլ լինի գյուղացու վիճակը չի փոխվի, քանի որ իրացում չկա:

Միայն մշակելը հարց չի լուծի, կա նաև իրացման խնդիր: Այսօրվա դրությամբ մենք շուկա չունենք մթերքը իրացնելու համար:

Ոռոգման հարցի լուծումը արտագնա աշխատանքի խնդիրը կլուծի միայն մասնակի:

տակ՝ այդպես էլ չկարողացանք հանել: Մեծ գումարներ կորցրինք:

Եթե մշակումը էժանանա, էլի շահագրգիռ կլինի գյուղացին՝ մշակելու, թեկուզ էժան գնով վաճառելու համար:

Եթե գյուղը գյուղատնտեսության վրա է հիմնված, ապա ոռոգումն առաջնային է:

Եթե առաջին սցենարի դեպքում խոսում ենք գետի մերձակա հողատարածքների մշակման խնդրի մասին, ապա երրորդ սցենարի դեպքում խոսքը գնում է արդեն հսկայական հեկտարների մասին, այդ իսկ պատճառով սա ավելի կարևոր է:

Ի՞նչի չեն ամուսնանում էս ջահելները... Կառտոշկա չկա, կառտոշկա՛:

Կորուստների պատճառով գյուղացիները հաճախ գիշերներն են ոռոգում իրենց հողերը:

Թե՛ գետի, և թե՛ ոռոգման հարցը շատ կարևոր են մեր համայնքի համար, պետք է պարզենք, թե որի լուծումից ավելի շատ ընտանիքներ կշահեն:

Այսօր մենք վախենում ենք բերք ցանել. ջուր չկա, նորմալ սերմ չկա, պարարտանյութեր չկա: Նախ պետք է այս հարցերը լուծել:

Մարդուն կերակրողը հողն է, որը հիմա ոչ մի արդյունք չի ապահովում:

Մենք չունենք կոյուղի, ոռոգման ջրեր, ճանապարհներ. կատարյալ վատ պայմաններ են. սրանք շատ կարևոր են մեր գյուղի զարգացման համար:

Գյուղացիները այսօր վարկ են վերցնում և դժվարանում են վարկը մարել, քանի որ բերքը լավ չէ, ջուր չլինելու պատճառով շատ տարածքներ ամայանում են:

Հողատարածքները, 4-5 անգամ նախատեսված ոռոգման փոխարեն, երեք անգամ են ոռոգվել:

Կարծում եմ, ոռոգման խնդիրը ամենաառաջնայինն է մեր գյուղի հա-

Ես չգիտեմ, կամ մի գյուղացի, ով վարկ է վերցրել ու այդ վարկը մարել է: Մարդիկ հարսանիք են անում, հաջորդ օրը հարսի վրայից ոսկին հանում ու վազեցնում բանկ:

Երևանում իրացնելը ձեռնտու չի:

Կան խոշոր հողատերեր, որոնք հիմնականում օգտվում են ոռոգման ջրից և գյուղացուն բան չեն թողում:

Եթե իրացման խնդիրը պետական մասշտաբով է, ապա ոռոգման խնդիրն էլ պետք է պետական մասշտաբով լուծվի, ոչ թե համայնքային:

Ոռոգման աշխատանքների բարեկարգման համար աշխատանքներ տեղական բյուջեով միշտ էլ իրականացվել են, և կատարվելու են, այս խնդիրը ընթացիկ լուծվում է:

Իննսուն հեկտար ավել ոռոգելը գյուղի մասշտաբով թիվ չի:

Ինչո՞ւ պետք է գյուղապետարանը փող ծախսի ոռոգման համակարգի վրա: Դա Հայաստանի կառավարության հարցն է:

Խոշոր հողակտորները ավելի շատ ջրվում են Կառնուտի ջրամբարի ջրով, Ջաջուռի հարցի լուծումը չի կարգավորի ոռոգման խնդիրը:

Էսօր բերքի մեծ մասը կովերն են ուտում, իրացում չկա, նույնիսկ Երևանում չի վաճառվում:

Կառավարությունն է մեղավոր. ինչու չեն բացում Վրաստանի հետ սահմանը, որ վրացին գա կառտոշկա առնի՝ գնա:

Թունաքիմիկատների որակն էլ սարսափելի է. իր նպատակին չի ծառայում, գնում են մի քանի անգամ, մեծ գումարներ ներդնում՝ շահութ գրեթե չկա:

Սերմերը որ տվել են, մեր մոտ փորձաշրջան չեն անցել, դրա համար էլ բերք չի ստացվում իննսուն տոկոսի մոտ:

մար, հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսությունն է, բացի այդ ոռոգման համակարգի վատ վիճակի պատճառով ջրի կորուստ էլ շատ է:

Երեխան սնվում է հողից, եթե հողը չոռոգվեց ու երեխան սոված մնաց, էլ ինչ կարևոր է, թե նա երաժշտական կրթություն ստանում է, թե ոչ:

Ամենից կարևորը ոռոգումն է, հետո գետի խնդիրը, իսկ արվեստի դպրոցը թող սպասի:

Մեր գյուղատնտեսության նախարարը չի կարողանում մի նորմալ համակարգ ստեղծել որով իրացումը կիրականանա, մեր գյուղում հենց այս պահին կա 100.000 տոննա կարտոֆիլ, որը շուտով թափելու ենք: Պետք է երրորդ սցենարը անվանել ինչպես իրացնել գյուղացու պահեստավորածգյուղմթերքը:

Մի ժամանակ մենք կարտոֆիլը ուղարկում էինք Վրաստան, բայց հիմա հայկական կողմից այնքան բարձր մաքսեր են նշանակված, որ այլևս վրացիները չեն գալիս կարտոֆիլ տանելու:

Ամեն ինչը շատ թանկ է՝ սերմը, մշակումները, պարարտանյութը, իսկ շահույթ՝ չկա: Անգամ եթե բերք ենք ստանում, իրացումը շատ դժվար է: Այս տարի մեր կարտոֆիլի մեծ մասը մնաց անասուններին կեր, քանի որ շատ էժան էր:

Թունաքիմիկատների որակն էլ սարսափելի է. իր նպատակին չի ծառայում, գնում են մի քանի անգամ, մեծ գումարներ ներդնում՝ շահութ գրեթե չկա:

Մեր գյուղի ոռոգման համակարգը լուծելու համար շատ մեծ գումարներ են հարկավոր: Դրա համար էլ ես հույս չունեմ, որ կարելի է այդ հարցը լուծել կարճ ժամանակում:

Բոլոր գյուղացիները ամբարած կարտոֆիլ ունեն, որը ծլում է, մեր խնդիրը ոչ թե ավելի արտադրելն է, այլ եղածը իրացնելը: Եթե այս տարի չիրացնենք, եկող տարի էլ չենք էլ աճեցնի:

Մենք կարտոֆիլը չենք կարողանում վաճառել 50-60 դրամով, ու դրանից ստացած գումարով ինչպես կարող ես վճարել ոռոգման, թունաքիմիկատների, մարդկային աշխատանքի և այլնի համար:

Քաղաքի ճանապարհի մոտ տեղ կա, որ կորուստները շատ են, հողակտորներն անհամաչափ են ջրվում:

Ոռոգման խնդրի լուծումը չի իջեցնի արտագաղթի մակարդակը: Իմ երեխայի դասարանում 30 երեխաներից միայն մեկի հայրն է այստեղ:

Եթե գետի հունի պրոբլեմը լուծվի, ապա գետի երկայնքով ապրողների քանակը կավելանա, ու ավելի շատ կոյուղաջրեր կլցվի գետը: Արդյունքում կտուժի ոռոգման համակարգը:

Բնակարանների հարցը հեռանկարային է, ցանկալի է, կկանխի արտահոսքը:

Երիտասարդներին այս բնակարանային ծրագիրը շատ կշահագռգռի և գյուղից չեն գնա:

Մենք շատ ենք ուզում, որ մեր գյուղը բարգավաճի, երիտասարդները չփախնեն գյուղից:

Բազմազավակ ընտանիքները ձգտում են քաղաքում ապել, եթե բնակարանների ծրագիր իրականացվի քաղաք չեն գնա:

Արտագաղթը ֆինանսական պատճառ չունի, այլ ընդհանուր առմամբ՝ «երգիրը երգիր չի»:

Մեր գյուղը տարիքային առումով բավականին երիտասարդ է, բայց մեր գյուղն էլ է արդեն «ցեցն ընկել»:

Եթե գյուղատնտեսական առումով ևս մի երկու այսպիսի տարի լինի, արտագնա աշխատանքի մեկնածներն էլ չեն էլ վերադառնա:

Մարդիկ ճահճային տարածքներում իրենց տները թողնում են ու կամ տուն կառուցում չոր տարածքներում, կամ գնում Ռուսաստան:

Գյուղի տղամարդկանց 90 տոկոսը այստեղ չէ:

Այստեղ մարդիկ ապրում են միայն արտագնա աշխատանքի շնորհիվ, իսկ նրանք, ովքեր այստեղ են մնում, կորցնում են այն, ինչ ունեն:

Ոռոգման հարցի լուծումը արտագնա աշխատանքի խնդիրը կլուծի միայն մասնակի:

Ոռոգման խնդրի լուծումը չի իջեցնի արտագաղթի մակարդակը: Իմ երեխայի դասարանում 30 երեխաներից միայն մեկի հայրն է այստեղ:

Հիմա շատ մեծ տարածքներ ոռոգվում են, բայց արտագաղթի հարցը չի լուծվում:

Գյուղը նորմալ եկամուտներ ունի, բայց ժողովուրդը ոչ թե ստեղ է աշխատում, այլ Ռուսաստանում:

Մեծ պարտքերի պատճառով գյուղի բնակչության 10-15 տոկոսը մեկնում է արտագնա աշխատանքի:

Մեր գյուղում աշխատանքի լուրջ խնդիր կա: Արտագաղթը շատ է, կանանց ուսերին մեծ հոգս է: Կանայք տղամարդկանց գործերն են ստիպված անում, պարկեր կրում, որ քաղաքի տղամարդն էլ գուցե չկարողանա բարձրացնել:

Ինչ ուզում եք արեք, միևնույն է երիտասարդները այստեղից գնալու են:

Այս խնդիրները շատ մանր են, նրանցից ոչ մեկը չեն լուծում արտագնա աշխատանքի հարցը, սրա հիմնական պատճառն այն է, որ մարդիկ իրենց արտադրած ապրանքը չեն կարողանում իրացնել:

Անասնապահությամբ էլ չենք կարող զբաղվել. կերը թանկ է, խոտը թանկ է... ստացվում է, որ էլի պիտի խոպանի ճանապրհը բռնես: Ասենք թե բնակարաններ սարքեցին, ոնց պիտի առնենք, ինչով:

Նույնիսկ դպրոցական երեխան է այսօր մտածում արտագնա աշխատանքի մասին. իններորդ դասարանցի երեխաս ուզում է թողնել դպրոցն ու գնալ, քանի որ հայրը հիվանդ է և ի վիճակի չէ աշխատել: Իսկ այստեղ ինչ ձեռնարկում են, միևնույնն է՝ շահույթ չունես: Առաջին հերթին այս հարցերը պետք լուծել:

Ամռան ընթացքում, երիտասարդները արտագնա աշխատանքի են լինում և կամավորության վրա հնարավոր չէ վերանորոգում անել:

Տղամարդ չկա, կանայք էլ ինչքա՞ն կարող են երեխաներին պաշտպանել գայլերից:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Գետի հունի մակարդակն իջեցնելու արդյունքները միանգամից չենք զգա, կզգանք աստիճանաբար, բայց այն շատ անհրաժեշտ է, քանի որ օգուտը շատ մեծ է:

Ամեն տարի խոնավության պատճառով վերանորոգում ենք տունը: Ավելորդ ծախս է դա մեզ համար:

Իմ համար սա մեծ խնդիր է մենք ամեն տարի վերանորոգման վրա ահռելի գումարներ ենք ծախսում, որը կարող էինք այլ բանի վրա օգտագործել:

Տնամերձ հողամասերը ճահճացել են, բայց դե հարկը տալիս ենք: Ժողովուրդը զրկվել է իր տարածքներից:

Գետի երկայնքով տարբեր եկամուտների տեր մարդիկ են ապրում, և, անկախ միջոցների առկայությունից, ոչ ոք անհատապես իր տան խոնավության հարցը չի կարողանում լուծել:

Նշված տարածքների պահպանման ծախսերը ամբողջովին բնակչությունն է ծածկում, որը աններելի է:

Եթե ներկայումս բոլոր ծախսերը բնակչության վրա են, ապա ջրի հունի իջեցումից հետո այդ հողերը կապահովեն բնականոն պտղաբերություն, ու վնասի փոխարեն ժողովուրդը օգուտ կունենա:

Շատ կարևոր ծրագիր է, ժողովուրդը գարշահոտից կազատվի, հողերը կսկսեն մշակել, գյուղը կծաղկի:

Թե՛ գետի, և թե՛ ոռոգման հարցը շատ կարևոր են մեր համայնքի համար, պետք է պարզենք, թե որի լուծումից ավելի շատ ընտանիքներ կշահեն:

Գետի խոնավությունից տուժում են բոլոր, ինչի եք միայն կանանց և երեխաներին նշում, տղամարդիկ հո ամբողջ տարի խոպան չե՞ն:

Գետի խնդրից տուժում են առանց սեռական պատկանելության, պարտարիներ շարունակ կոյուղաջրերը միացված են եղել գետին: Հիմա դժվար էլ ապամոնտաժում արվի, ինչպե՞ս մարդուն ասես կոյուղիդ ապամոնտաժի:

Միայն գետի հունի վրա աշխատանք անելով հարցը չի լուծվի: Գետի մոտի հողերը անպիտան են դարձել: Համապատասխան աշխատանքներ են պետք այդ հողերի վրա իրականացնել հետագայում:

Ճահճուտներում ո՛չ մի բույս չի աճում, հինգից տասը տարի է պետք, որ նշված տարածքները պիտանելի դառնան, լիարժեք հող դառնան:

զապես ավելի շատ տուժում են ավելի մոտ ապրող մարդիկ:

Իմ կարծիքով կարող ենք ապամոնտաժել և թողել հողային հունը, որպեսզի ջրերը կարողանան միանալ առվակներին:

Ազատանի տները գրեթե բոլոր էլ կառուցված են գետի ափերին, այդ պատճառով այս հարցը վերաբերում է ամբողջ համայնքին:

Ինչ պարտադիր է, որ գետի խնդիրը ազդի հենց իմ տան վրա, դա համայնքային խնդիր է:

Մեր ունեցած նոր գերեզմանները հիմա գտնվում են պատմամշակութային նշանակություն ունեցող տարածքի վրա: Այնպես որ գերեզմանատունը տեղափոխել է պետք:

Գերեզմանատունն անհրաժեշտ է, մարդուն հո չես կարող ասել «մի՛ մահացիր, որովհետև տեղ չունենք»:

Առանց ոռոգման հարցի լուծման մի կերպ ապրում ենք, բայց գերեզմանատուն եթե չկառուցենք, արդեն էլ չենք կարող այսպես ապրել:

Հին գերզմանատանը այլևս ճանապարհ չկա, հետո հյուսիս-հարավ ճանապարհը սկսեցին սարքել, որը նոր գերեզմանատունը կիսեց երկու մասի և հիմա չենք կարող օգտագործել: Առաջարկում եմ նոր գերեզմանատունը կառուցել գյուղից դուրս՝ 17 վերջում:

Նոր գերեզմանը արդեն անհրաժեշտություն է, ընդ որում, երեք միլիոնը մեծ գումար չէ, այն կարելի է անել ցանկացած այլ սցենարին զուգահեռ, անկախ ամենից:

Բոլոր սցենարների հետ պետք է գերազմանատների հարցը միացրած լիներ, որովհետև առանց սրա, ոչինչ չենք կարող անել:

Նոր գերեզմանոցի տեղը հիմա վարելահող է, որը գերեզմանոցի համար տրամադրելը բարդ է:

Նոր գերեզմանատան հիմնումն իմ կարծիքով երկրորդային խնդիր է:

Ես գտնում եմ, որ գերեզմանատան կառուցումը առաջնային չէ, ուրիշ կարևոր խնդիրներ ունենք:

Կան բաներ, որոնք հաճելի են, կան՝ որոնք անհրաժեշտ են, պետք է սկզբում անհրաժեշտ խնդիրները լուծել:

Երեք միլիոնով լուսավորության ու գերեզմանատան խնդիրները լուծելի են, ժամանակի ընթացքում կանենք:

Պետք է միավորել ոռոգումը և գերեզմանը, ու այս սցենարով լուծել:

Գերեզմանատան համար քիչ գումար է անհրաժեշտ, պետք է այն իրականացնել, իսկ մնացած գումարն ուղղել ոռոգման խնդրի լուծմանը:

Մենք գյուղում նախագծող և այլ մասնագետներ ունենք: Այնպես որ գերեզմանատան տեղափոխման հետ կապված ծախսերը կարող են շատ ավելի քիչ լինել:

Գերեզմանատան նոր տարածքը բավականին ուսումնասիրված է, ու այնտեղ ջրերի հոսքի կամ գրունտի հարց չկա:

Մեր հարսների վրա այլևս ոսկի չկա: Ամբողջ ոսկին գրավ է դրված գյուղատնտեսական վարկերի դիմաց:

Գյուղացիները այսօր վարկ են վերցնում և դժվարանում են վարկը մարել, քանի որ բերքը լավ չէ, ջուր չլինելու պատճառով շատ տարածքներ ամայանում են:

Գյուղի 80 տոկոսը գյուղատնտեսական վարկ է վերցնում: Մի վարկը վերցնում է, մյուս վարկը փակելու համար: Պետք է ստեղծել սպառման շուկա:

Օրինակ հիմա ոռոգման համար միանգամից փող են ուզում, բայց որ մշակենք, հետո ուզեն, ավելի ճիշտ կլինի:

Ջրամատակարարի հետ կապել պայմանագիր, որ բերքը վաճառելուց հետո վճարենք մի մասի համար, հետո մյուս մասինը: Ոռոգումը շատ թանկ է:

Ոռոգման մի հեկտարը տասնվեց հազար է...

Ամբողջ Հայաստանում ոռոգման ջուրը մի սակագին ունի, բայց Արարատյան դաշտն ու Շիրակը ուրիշ է:

Անվտանգություն

Այսօր Ազատանում լուսավորված է միայն կենտրոնական փողոցը: Մութը ընկնում է, մենք այլևս վախենում են դուրս գալ տանից:

Նույնիսկ ծայրահեղ վիճակում, երբ, օրինակ, հարկավոր է շտապ օգնության մեքենային դիմավորել, մենք վախենում ենք դուրս գալ տանից: Բավական չէ, որ լուսավորություն չկա, նաև ճանապարհ չկա:

Երկրորդային փողոցներում լուսավորություն չկա, պետք է այս հարցն անհապաղ լուծել: Մութը գայլերի տեղաշարժման համար խթան է հանդիսանում:

Մեր գյուղի վրա գայլերի հարձակում եղել է, բայց նշված փողոցները լուսավորելը այդ խնդիրը չի լուծի, քանի որ գայլերը հարձակվում են ծայրամասերի վրա, իսկ սրանք կենտրոնական փողոցներ են:

Լուսավորելը ցանկալի է: Ներկայում արդեն գայլեր կան, շներն են շատացել...

Լուսավորությունը կարևոր է, երեխաները սպորտի են գնում, դասերը վերջացնում են երեկոյան, մթին երեխայի համար վտանգավոր է տուն գալ, շներ, գայլեր, աղվեսներ կան թափառող:

Հաճելի կլինի, ապահով կլինի...

Սեզոնային աշխատանքներից շատ հաճախ ուշ ենք գալիս, հոսքը շատ է, պետք է լուսավորել:

Լուսավորությունը պետք է, սեզոնին կանայք են դրսում՝ ջուր են անում գիշերվա մթին:

Տղամարդ չկա, կանայք էլ ինչքա՞ն կարող են երեխաներին պաշտպանել գայլերից:

Տարրական պայմաններ մեր գյուղում չկա. կոյուղի չկա, ոռոգման ջուր չկա, ճանապարհները քանդված են, լուսավորություն չկա, գիշերները թափառող

Լուսավորության հարցի լուծման գործում պետք է գյուղի գործարարներին ներգրավել:

Լուսավորությունից առաջ շատ կարևոր է նաև ճանապարհների հարցը. մենք ասֆալտապատ ճանապարհ չունենք: Մինչև դրանք չվերանորոգվեն, ինչ լուսավորության մասին է խոսելը: Երեխաները դասից ուշանում են, քանի որ լրիվ ցեխ է ու կեղտ: Լինում է, որ սեզոնում մի քնաի զույգ կոշիկ է մաշվում: Պետք է մտածել ճանապարհների վերանորոգման մասին:

Մինչ լուսավորության հարցը, պետք է երկրորդային ճանապարհի վերանորոգման հարցը լուծել: Այդ ճանապարհի պատճառով չեմ ուզում տնից դուրս գալ:

Ամառը այնքան ենք հոգնում, որ էլ ո՞վ է ուժ ունենում, որ հյուր գնա, որ մի հատ էլ լուսավորությանը նայի:

Երկրորդական փողոցների լուսավորությունից առաջ պետք է այդ երկրորդական փողոցները վերանորոգել, որ երեխաները մինչև վիզը ցեխոտված տուն չգան:

Լուսավորության հարցը լուծելը կապահովի բարեկեցություն, բայց ոռոգման հարցը հացի խնդիր է լուծում, սրանք համեմատելու չեն:

19 փողոցը դպրոցինն է, դա էլ կարևոր է երեխաների տուն գալու համար, հատկապես հոգսերը շատ են, միշտ չի, որ կարողանում ենք երեխաների հետևից գնալ:

շները վխտում են: Պետք է հերթով լուծել այս հարցերը: Բոլորն էլ առաջնային են:

Այսօր գրունտային ջրերի մակարդակն այնքան է բարձրացել, որ առաջացնում է սեյսմիկ վտանգ:

Բետոնի պատնեշները հանելը վտանգավոր է նաև երեխաների համար, որովհետև եթե պատնեշ չլինի երեխաները կարող են պարզապես ընկնել գետը և խեղդվել:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Անմխիթար վիճակում է գտնվում է Ջաջուռ գետը, ջուրը ամբողջությամբ չի հեռացվում, ստեղծում է վտանգ շրջակայքում գտնվող տների համար:

Մարդիկ էդ խոնավության մեջ, ճահիճների մոտ շարունակում են ապրել՝ մինչև դրան ինչ-որ լուծում տրվի:

Ջրի հունի իջեցումը խնդրի լուծում է, միանշանակ:

Ջրի իջեցումն անհրաժեշտ է, քանի որ ջուրը լցվում է մարդկանց տները, աղբը նույնպես լցնում են այդ ջրի մեջ: Կեղտոտ ջրով ոռոգվում են հողերը և առաջացնում տարբեր տեսակի հիվանդություններ: Տարին մեկ տրակտորով մաքրում են աղբը, բայց դա չնչին բան է: Գետը վերածվել է աղբատար խողովակի: Դրանից էլ օձեր են հայտնվում, որոնք մինչև տները հասնում են:

Ամռանը գարշահոտությունը ահավոր է, գոնե դրա համար ինչ-որ միջոցառում պետք է կազմակերպվի ՏԻՄ-ի կողմից:

Պատերի խոնավության հարցը կլուծվի, բացի այդ էլ խոնավության պատճառով ցանքի աշխատանքները ափամերձ շրջաններում ավելի ուշ են

Խնդիրը ոչ այնքան հունի բարձրացման, որքան մաքրության մեջ է, կարծեմ միայն գյուղինը չի, նաև Գյումրիի կոյուղաջրերն են գետը լցվում, իսկ դրանով էլ ոռոգվում են դաշտերը: Մեր ապրանքը հենց շուկա է դուրս գալիս, մենակ ոռոգման ջրի պատճառով չի վաճառվում:

Իմ կարծիքով պետք է բնապահպանական խումբ հավաքել, որ մասնագիտական որոշում կայացնեն և հետազոտություններ իրականացնեն, քանի որ սովորական գյուղացին անձամբ չի կարող դա կատարել:

Շատ կարևոր է նաև այն, որ մարդկանց մեջ սերմանեն, որ այդ գետում աղբ թափել չի կարելի: Դրա համար կարելի է նույնիսկ սահմանել տուգանքներ:

Գետը ամեն տարի գոնե մի քանի անգամ մաքրվի, որ հոտը կտրվի, բացի այդ կոյուղին է այդ գետը թափվում: Գյուղացիներն էլ պետք է սովորեն աղբը չթափել:

Գետակի հունը մաքուր չէ, ինչ աղբ կա թափվում է գետակի մեջ:

Պետք է խիստ հսկողություն սահմանել աղբ թափողների նկատմամբ:

սկսվում, և որոշ բույսեր չեն հասցնում հասունանալ:

Ճահճացած տարածքներում երեխաները անառողջ են մեծանում:

Տների խոնավությունից կանայք ու երեխաներն են հիմնականում տուժում, քանի որ տղամարդկանց մեծ մասը այստեղ չի լինում: Բայց տղամարդիկ այս խնդրի մասին տեղյակ են:

Այդ ջրից առաջանում են սնկեր, որոնք շատ վտանգավոր են առողջության համար: Հիմա շատերի բնակարանում խոնավությունն ու բորբոսը թույլ չեն տալիս առողջ ապրել:

Մենք մեր կաշվի վրա զգացել ենք խոնավությունը, ողնաշարի հիվանդություն ենք ստացել:

Ջաջուռի երկայնքով 100-150 ընտանիք է ապրում, որ ողնաշարային և այլ հիվանդություններ են ձեռք բերել:

Մայրերը ռեզինե սապոգներով գրկած բերում են երեխաներին դպրոց: Երեխաների մեծ մասը անգինայով են հիվանդանում ձմռանը:

Մեզ մոտ առաջնայինը գետի հարցը լուծելն է: Մարդկանց տները մնացել են ջրերի մեջ, խոնավ բորբոսնեը պատերի վրա են, զարգանում են հիվանդությունները: Այ սրանք են կարևոր:

Ջաջուռն ազդում է նաև մանկապարտեզի շենքի վրա, խոնավ է, երեխաները չեն կարողանում հաճախել:

Երբ մենք երեխա էինք, գետը մաքուր էր, ու մենք ամռանը այդտեղ լողանում էինք:

Խոնավության խնդիրը միշտ էլ այստեղ եղել է. մի պահ սարքեր տեղադրվեցին և վիճակն ահագին բարելավվեց: Հունի իջեցումից բացի շատ կարևոր է մաքրության հարցը: Հիմա տարիներով կեղտը հավաքվում է, դրանից էլ նաև բարձրանում է հունը: Սա նույնպես շատ կարևոր հարց է:

Գետը մասամբ կանալիզացիայի է վերածվել:

Գետի մեջ լցվում են Գյումրու կոյուղու ջրերը, որ հոսում գալիս են մեր մոտ, անկախ նրանից, թե մեր կոյուղին էլ գետը լցվի թե չէ, գարշահոտը միևնույն է մնալու է:

Տհաճ հոտի և հիվանդությունների մասին խոսելն անգամ անիմաստ է: Այդ ջրից մենք է ենք օգտվում և հիվանդություններ են առաջանում:

Գետի հունի խնդիրը առաջնային է նրանով, որ գարշահոտությունն արդեն ահավոր է, կամուրջը խարխուլ վիճակում է և երեխաները անընդհատ անցնում են դրանով, սա նաև հիվանդությունների աղբյուր կարող է դառնալ:

Այդ ջուրն այնքան կեղտոտ է, մամռակալած, որ եթե մարդ մտնի, մազութով ծածկված դուրս կգա: Բայց մենք ստիպված ենք դրանով ջրել մեր հողերը, որովհետև այլ տարբերակ չունենք:

Գետի պատճառով գարշահոտության հարց կա, գետով ամառը նաև քիմիական նյութեր են գալիս, գետի հետ կապված շատ հարցեր կան:

Ռևմատիզմը, վիրուսը, հիվանդությունները անպակաս են մեր գյուղից, իսկ որ երաշտ է լինում «ֆրանսիական օծանելիքի» հոտը անպակաս է գյուղից:

Երեխաներ և երիտասարդներ

Պետք է կառուցել հիմնականում երկհարկ տներ, բազմաբնակարան, հիմնականում ներգրավելով հիպոթեկային վարկեր, իսկ գյուղապետարանի դերը հողատարածք հատկացնելն է:

Պետք է պարզել բնակարան ցանկացողների քանակը, հիպոթեքային վարկեր տրամադրել:

Տներ կան, որտեղ տասնհինգ հոգի մարդ է բնակվում: Գյուղը բնակֆոնդի խնդիր իրոք ունի:

Երիտասարդներին այս բնակարանային ծրագիրը շատ կշահագրգռի և գյուղից չեն գնա:

Բազմաբնակարան շենքերի ծրագիրը շատ լավն է, եթե իհարկե հողատերերը համաձայնեն իրենց տարածքները միավորել:

Երիտասարդ ընտանիքներին ավելի ձեռնտու է բնակարան ձեռք բերելը, քան նոր տուն կառուցելը:

Բնակարաշինության ծրագիրը իրատեսական է, քանի որ մեր գյուղը միասնական է: Միասնականության դեպքում հարցերը շատ ավելի հեշտ են լուծվում:

Բնակարանները պետք է որակով կառուցել, շինարարն էլ լինի գյուղի բնակիչն ու իր ձեռքով կառուցի:

Սեփականատերերը կհամաձայնեն իրենց հողերը տալ, քանի որ իրենք այդ հողերը չեն օգտագործվում: թող քառահարկ կառուցեն ու դրա առաջին հարկը պայմանագրով տրամադրեն հողատիրոջը:

Թող համատեղ համաձայնության պայմանագիր կնքեր հողատիրոջ և գնողի միջև: Պայմանագրով բոլոր հարցերը կարգավորվեն:

Թող իմ տան տարածքը վերցնեն քառահարկ բնակարանը կառուցեն ու առաջին հարկը տան ինձ, մնացածն էլ ում ուզում են թող տալ:

Ես նորաստեղծ ընտանիք եմ, աշխատում եմ նվազագույն աշխատավարձով, ինչպես վճարեմ, բոլոր կոմունալ ծախսերը, երեխաներիս վճարները: Աշխատավարձի բարձրացում է անհրաժեշտ:

Մարդիկ աշխատանք չունեն և վարկ չեն ստանա: վարկը հարց չի լուծի:

Բնակարանների կառուցման հարցը շատ կարևոր է, բայց հարկավոր է, որ ցածր տոկոսադրույքներով մեզ վարկ տրամադրեն: Բայց այստեղ առաջանում է ևս մի հարց. եթե դու աշխատանք չունես, ինչպես ես վճարելու վարկերը:

Վարկերի պատճառով շատ ընտանիքներ միացել են ու ապրում են նույն հարկի տակ:

Թող մի շենք կառուցեն, տեսնենք, ինչ է լինում, հետո մնացած շենքերի մասին կմտածենք:

Այդ նոր շենքերը կարել է քաղաքին մոտ կառուցել:

Հողը տամ, ինձ երեք սենյականոց բնակարան տվեք:

Բոլորս էլ ունենք փոքր հողակտորներ, ու այն սիրով կտամ:

Ազատանում շատ մեծ է բնակարանների հարցը: Մինչև երիտասարդները, պետք է մտածել այն մասին, որ շատ մարդիկ չունեն ապրելու կացարան: Իմ աղջիկը միայնակ մայր է, չունի բնակարան և ստիպված է ինքը գնալ արտագնա աշխատանքի, որ մի բա ստեղծի իր երեխայի համար: Բայց այդ դեպքում նրա երեխան կմնա նաև առանց մայր:

Բազմազավակ ընտանիքները ձգտում են քաղաքում ապրել, եթե արվեստի դպրոցի հարցը լուծվի քաղաք չեն գնա:

Արվեստի դպրոցը պետք է առանձնացվի գյուղապետարանից: Երաժշտության ձայնը, երեխաների մուտք-ու-ելքը խանգարում են գյուղապետարանի աշխատանքներին:

Արվեստի դպրոցը կարևոր է, քանի որ կնպաստի երեխաների մշակութային կրթությանը:

Ազատանում սովորում են տարբեր գյուղերի երեխաներ, ու տարածաշրջանի համար այն շատ կարևոր նշանակություն ունի:

Մենք դեպի զարգացում ենք գնում: Ինչքան լավ ծրագրեր լինեն, մեր երեխաներն ավելի շատ կրթված կլինեն, ինչու՞ գնան հասնեն քաղաք, եթե կարող են գյուղում կրթվել:

Մեր երեխաները հաճախ են արվեստի դպրոցով տարբեր միջոցառումների մասնակցում, դա շատ կարևոր է երեխաների համար:

Երեխաները կկտրվեն փողոցից, կդաստիարակվեն:

Բազմազավակ ընտանիքները ձգտում են քաղաքում ապրել, եթե արվեստի դպրոցի հարցը լուծվի քաղաք չեն գնա:

Արվեստի դպրոցը պետք է առանձնացվի գյուղապետարանից: Երաժշտության ձայնը, երեխաների մուտք-ու-ելքը խանգարում են գյուղապետարանի աշխատանքներին:

Արվեստի դպրոցը կարևոր է, քանի որ կնպաստի երեխաների մշակութային կրթությանը:

Ազատանում սովորում են տարբեր գյուղերի երեխաներ, ու տարածաշրջանի համար այն շատ կարևոր նշանակություն ունի:

Մենք դեպի զարգացում ենք գնում: Ինչքան լավ ծրագրեր լինեն, մեր երեխաներն ավելի շատ կրթված կլինեն, ինչու՞ գնան հասնեն քաղաք, եթե կարող են գյուղում կրթվել:

Մեր երեխաները հաճախ են արվեստի դպրոցով տարբեր միջոցառումների մասնակցում, դա շատ կարևոր է երեխաների համար:

Երեխաները կկտրվեն փողոցից, կդաստիարակվեն:

Իմ երեխան եկող տարի պետք է գնա դպրոց և ես շատ կուզեմ, որ արվեստի դպրոց լինի, որ իմ երեխան դրսից ու փողոցի փոշուց կտրվի ու գնա զարգանա:

Իմ աղջիկը պարապում էր ուսուցչանոցում, որտեղ անընդհատ ելումուտ է, դա խանգարում է պարապմունքներին:

Ներկայում դպրոցը գործում է, լավ խմբակներ կան, լավ են աշխատում:

Արվեստի դպրոցը կարող է օգտակար լինել նաև հարակից գյուղերի երեխաների համար:

Մենք ունենք երեխաներ, ովքեր լավ չեն սովորում դպրոցում, բայց շատ լավ տաղանդ ունեն երաժշտության հարցում, իրենց անհրաժեշտ է գեղագիտորեն զարգացնել:

Գյուղը շատ հետ է մնացել. Ազատանը ամենամեծ գյուղն է, բայց շատ տխուր վիճակում է: Մեր երեխաները չեն օգվում տարրական բաներից: Այս հարցերի ամսին է հարկավոր մտածել:

Արվեստի դպրոցում լավ կլինի գորգագործության խմբակներ լինեն, երիտասարդ մասնագետների բերեն ու աշխատատեղերով ապահովեն:

Մեզ ամեն ինչ էլ պետք է. այս բոլոր հարցերը կապակցված են իրար հետ: Առաջ Լենինականից գալիս էին մեր արվեստի դպրոց, իսկ այսօր մեր երեխաներին չենք կարողանում ուղարկել: Դա խոսում է այն մասին, որ պետք է զարգացնել դպրոցը: Մենք ունենք երկու դպրոց, որոնք դահլիճ անգամ չունեն, նույնիսկ սպորտդահլիճ չկա:

Իմ երեխան եկող տարի պետք է գնա դպրոց և ես շատ կուզեմ, որ արվեստի դպրոց լինի, որ իմ երեխան դրսից ու փողոցի փոշուց կտրվի ու գնա զարգանա:

Իմ աղջիկը պարապում էր ուսուցչանոցում, որտեղ անընդհատ ելումուտ է, դա խանգարում է պարապմունքներին:

Ներկայում դպրոցը գործում է, լավ խմբակներ կան, լավ են աշխատում:

Արվեստի դպրոցը կարող է օգտակար լինել նաև հարակից գյուղերի երեխաների համար:

Մենք ունենք երեխաներ, ովքեր լավ չեն սովորում դպրոցում, բայց շատ լավ տաղանդ ունեն երաժշտության հարցում, իրենց անհրաժեշտ է գեղագիտորեն զարգացնել:

Գյուղը շատ հետ է մնացել. Ազատանը ամենամեծ գյուղն է, բայց շատ տխուր վիճակում է: Մեր երեխաները չեն օգվում տարրական բաներից: Այս հարցերի ամսին է հարկավոր մտածել:

Արվեստի դպրոցում լավ կլինի գորգագործության խմբակներ լինեն, երիտասարդ մասնագետների բերեն ու աշխատատեղերով ապահովեն:

Մեզ ամեն ինչ էլ պետք է. այս բոլոր հարցերը կապակցված են իրար հետ: Առաջ Լենինականից գալիս էին մեր արվեստի դպրոց, իսկ այսօր մեր երեխաներին չենք կարողանում ուղարկել: Դա խոսում է այն մասին, որ պետք է զարգացնել դպրոցը: Մենք ունենք երկու դպրոց, որոնք դահլիճ անգամ չունեն, նույնիսկ սպորտդահլիճ չկա:

Քվեարկության արդյունքներ

Ջաջուռ գետի հունի մակարդակի իջեցում	48
Արվեստի դպրոցն ու գյուղապետարանը՝ առանձին շենքերում	11
Ոռոգման համակարգի մասնակի վերանորոգում	32
Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում և նոր գերեզմանատան հիմնում	1

	ԿՈՂՄ	ԴԵՄ
Բնակարան՝ երիտասարդ ընտանիքներին	74	3

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնք





Երևանից 22կմ հեռավորության վրա գտնվող Աշտարակ քաղաքային համայնքը Արագածոտնի մարզկենտրոնն է: Համայնքի վարչական տարածքը ներառում է Աշտարակ քաղաքը և Մուղնի գյուղը: Քաղաքի կարգավիճակ է ստացել 1963 թվականին:

Քաղաքի մակերեսը 42.33ք.կմ է, գտնվում է ծովի մակարդակից 1130 մ բարձրության վրա՝ Քասաղ գետի ափերի հարթության վրա: Կլիման մերձարևադարձային է:

2012թ. Աշտարակն ուներ շուրջ 6,540 ընտանիք (ծուխ) և 19,000 բնակիչ (20,600 մշտական բնակիչ), այդ թվում՝ 49% տղամարդ և 51%՝ կին:

Աշտարակում աշխատունակ են շուրջ 16,000 մարդ (բնակչության 74%-ը), այդ թվում՝ շուրջ 5,200 զբաղված (բնակչության թվի շուրջ 25%-ը), 590 աշխատանք փնտրող, այդ թվում 660-ը՝ կին: Կին գործազուրկների 60%-ից ավելին ունի դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխա:

Պատկեր 1. Աշտարակ համայնքի բնակչության տարիքային կազմը



Աշտարակում գործող վեց հանրակրթական, մեկ ավագ, հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների համար նախատեսված դպրոցներում սովորում է շուրջ 2,600 աշակերտ, այդ թվում՝ ավագ դպրոցում՝ շուրջ 790 և աշխատում է 320 ուսուցիչ (շուրջ 100-ը՝ ավագ դպրոցում): Հինգ մանկապարտեզներում նախադպրոցական կրթություն է ստանում 3-6 տարեկան շուրջ 600 երեխա:

Համայնքում գործող 4 մասնագիտական դպրոցներում (երաժշտական, գեղարվեստի, պարարվեստի և մարզական) սովորողների ընդհանուր թիվը 413 է: Նորակառույց շենք տեղափոխված երաժշտական դպրոցի դաշնամուրային, լարային, ժող. գործիքների, վոկալի դասարաններում ուսանում է 145 աշակերտ: Գեղարվեստի դպրոցում 100 աշակերտի ուսուցանվում է գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, դեկորատիվ կիրառական արվեստ, քանդակ, դիզայն, արվեստի պատմություն: Պարարվեստի դպրոց-ստուդիայում սովորում է 100 սան:

Քաղաքային մշակույթի տունն ունի 450 նստատեղ, իսկ «Արայի» մշակույթի տունը, ուր տեղակայված է գրադարանը՝ վթարային է: Գործում են Հայորդաց տուն, 3 թանգարան և երիտասարդական կազմակերպություն (Երիտասարդական հիմնադրամի Արագածոտնի մասնաճյուղ) և 1 մարզային գրադարան: Գործում են քաղաքային մարզադպրոց, հանրակրթական դպրոցների տարբեր սպորտային խմբակներ, տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների տարածքային կազմակերպություններ, սպորտային ակումբ, մարզադաշտի ենթակայության տակ գործող մի շարք խմբակներ: Մարզադպրոցի 8 խմբում 3 մարզաձևով է սովորում 90 մարզիկ: 2009թ. սկսվել է նոր մարզական համալիրի կառուցումը:

Աշտարակում բժշկական մեկ կենտրոն, բժշկական ամբուլատոր պոլիկլինիկա, սանէպիդկայան, ատամնաբուժարան, շտապ բուժօգնության կայան և տասից ավելի դեղատներ ուր աշխատում է շուրջ 150 բուժաշխատող. Այդ թվում՝ հիվանդանոցում՝ շուրջ 90 բժիշկ: Յոթ բաժանմունք ունեցող բժշկական կենտրոնը և հինգ բաժանմունք ունեցող պոլիկլինիկան տարեկան սպասարկվում են շուրջ 2,000 մարդու:

Քաղաքն ունի մեկ ընդարձակ զբոսայգի, երեք բացօթյա խաղահրապարակ, մեկ մարզադաշտ և Քասախի կիրճի բնական հանգիստի գոտին, ուր գործում են հանրապետությունում հայտնի «Աշտարակի Ձոր», «Աշտարակի լիճ» ժամանցի վայրերը, «Արևիկ» և հանգստի այլ գոտիներ:

Աշտարակում են վաղ միջնադարի ժամանակաշրջանի պատմամշակութային կոթողներ՝ 5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցին, 7-րդ դարի սբ. Աստվածածին (Կարմրավոր) եկեղեցին: Քաղաքի կենտրոնում է գտնվում սբ. Մարինե եկեղեցին (13-րդ դար): Քասաղի եռակամար կամուրջը կառուցվել է քանաքեռցի մեծահարուստի կողմից 1664թ.: Մուղնի գյուղում է գտնվում սբ. Գևորգի վանքը (17-րդ դար):

Գործում են առևտրի փոքր և միջին 70 օբյեկտ, 2 տոնավաճառ, հանրային սննդի 10 օբյեկտ, բենզինի լիցքավորման 10 և գազի լիզքավորման՝ 14 կետ, 9 տաքսի ծառայություն, 6 միկրոավտոբուսային երթուղի խաղատնային, զվարճանքի, շահումներով խաղերի 5 օբյեկտ: Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը 51.6 կմ է:

Տնտեսության գերակա ճյուղն արդյունաբերությունն է: Զարգացած է սննդի արդյունաբերությունը: Գործում են խաղողի վերամշակման և գինու հումքի ստացման կետեր: Աշտարակը հնուց

հայտնի է անուշահամ գինիների և չոր մրգերի պատրաստմամբ:

Զարգացած է նաև գյուղատնտեսությունը, հատկապես պտղաբուծությունը և խաղողագործությունը: Պահուստային հողերում բազմամյա տնկարկները կազմում են 58 հա, արոտավայրերը՝ 433 հա: Մշակում են նաև հացահատիկային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ (900 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուն), թռչնաբուծությամբ: Կա թռչնի մսի և ձվի արտադրություն:

Բյուջեն

Աշտարակ համայնքի բյուջետային ծախսերը 2012 թվականին կազմել են շուրջ 288 միլիոն դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի ծախսերը՝ շուրջ 287 միլիոն դրամ, իսկ ֆոնդայինը՝ շուրջ 1 միլիոն դրամ: Համայնքի 2012թ. վարչական բյուջեում աշխատանքի վարձատրության ծախսը կազմել է շուրջ մեկ հինգերորդը: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով ծախսվել է վարչական բյուջեի շուրջ երեք քառորդը: Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ տրամադրելու նպատակով Աշտարակի բյուջեից հատկացվել է միջոցների շուրջ 3.5%, իսկ սուբսիդիաների և դրամաշնորհների նպատակով հատկացված միջոցները կազմել են շուրջ 0.5%:

Աշտարակ համայնքի 2012 թվականի բյուջեի վարչական ծախսերի շուրջ մեկ երրորդն ուղղվել է ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ մատուցմանը: Կրթության ծախսերը կազմել են շուրջ 45% և կատարվել են բացառապես վարչական բյուջեի միջոցներով: Հանգստի, մշակույթի և կրոնական ծառայությունների կազմակերպմանը հատկացվել է միջոցները շուրջ 6%, սոցիալական պաշտպանության նպատակով կատարված ծախսերը կազմել են շուրջ 3%: Վարչական բյուջեի շուրջ 12%-ն ուղղվել է շրջակա միջավայրի պաշտպանությանը՝ աղբահանություն կազմակերպմանը: Աշտարակի վարչական և ֆոնդային բյուջեներից շուրջ 16.5 մլն դրամ հատկացվել է բնակարանաշինությանն ու փողոցների լուսավորմանը:

Պատկեր 1. Աշտարակ համայնքի 2010-2013թթ. բյուջետային մուտքերի ցուցանիշները



Համայնքի կառավարումը

Համայնքի ղեկավար Արմեն Անտոնյանը ծնվել է 1957թ. քաղաք Աշտարակ քաղաքում, մասնագիտությամբ ֆիզիկոս է: Ունի մասնագիտական և կազմակերպական աշխատանքի հարուստ փորձ: 1996-1999թթ. եղել է Աշտարակի քաղաքապետի տեղակալ, 2012թ. ընտրվել է Աշտարակի քաղաքապետ: Անկուսակցական է, ունի ունի երկու զավակ: (Հեռախոս. +374 232/ 3-10-26, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի 1):

Աշտարակ համանքի ավագանին բաղկացած է 15 անդամից՝ Նորիկ Սիմոնի Անդրեասյան, Տիգրան Վանուշի Գալստյան, Կարո Համլետի Գասպարյան, Անդրանիկ Պողոսի Ծատուրյան, ԱՍշոտ Դանիելի Հունանյան, Արսեն Հմայակի Ղարաչյան, Վահագն Արմուշի Մկրտչյան, Արթուր Հենրիկի Կարապետյան, Կարեն Լիպարիտի Շահազիզյան, Թովմաս Սարգսի Շահվերդյան, Արմենակ Գևորգի Սարգսյան, Մուշեղ Սայաթ Նովայի Տաշչյան, Արամ Հենրիկի Քամալյան, Ստյոպա Համբարձումի Քասյան, Սարիբեկ Մեսրոպի Օվոյան:

Համայնքի զարգացման խնդիրները

Աղյուսակ 1. Համայնքի զարգացման խնդիրներն ըստ գերակայության (Համայնքի քառամյա ծրագիր)

Գ/Հ	Ծրագրի անվանում	Ծրագրի արժեք (հազ. դրամ)
1	Ա.Այվազյանի անվան երաժշտական դպրոցն ապահովել անհրաժեշտ գույքով և սարքավորումներով	35,000
2	Գեղարվեստի դպրոցի համար ստեղծել շենքային պայմաններ	50,000
3	Մարզադպրոցի գործունեության համար ստեղծել նպաստավոր պայմաններ	15,000
4	Թարմացնել նախակրթարանների և մասնագիտացված դպրոցների նյութատեխնիկական բազան	50,000

5	Փողոցների շենքերի և շինությունների գիշերային լուսավորության ապահովում, գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում (2 կմ)	40,000
6	Գեղարվեստական լուսավորությամբ ապահովել քաղաքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանները, խորհրդանիշ հանդիսացող շենքերն ու շինությունները (15-20 շենք)	50,000
7	Քաղաքի բոլոր փողոցների ու մայթերի քանդված հատվածների ասֆալտապատում, անվանատախտակների տեղադրում (18 հա)	90,000
8	Ջինիշյան խաղահրապարակի տեղափոխում	14,000
9	Ձախ ափի զբոսայգու վերականգնում (նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրում, ցանկապատի կառուցում, ոռոգման և խմելու ջրի համակարգի կառուցում, կանաչապատում, անցուղիների և ծառուղիների կառուցում, կարուսելների տեղադրում, լուսավորության համակարգի ստեղծում, WiFi ցանցի ստեղծում - 7 հա)	150,000
10	Քաղաքային մշակույթի տան ջերմամեկուսացում և ջեռուցման համակարգի ստեղծում (մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային և ջեռուցման համակարգերի ստեղծում, տանիքի ջերմամեկուսացում - 2,200 ք.մ.)	50,000
11	Աջ ափի զբոսայգու վերականգնում (ոռոգման և խմելու ջրի համակարգի կառուցում, կանաչապատում, անցուղիների կառուցում, կարուսելների տեղադրում, լուսավորության համակարգի ստեղծում, WiFi ցանցի ստեղծում - 1,300 ք.մ.)	40,000
12	«Հասմիկ» մանկապարտեզի հիմնանորոգում (հիմքերի ամրացում, տանիքի հիմնանորոգում, մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային ստեղծում, գազամատակարարման ապահովում, գույքի ձեռք բերում - 1,012 ք.մ.)	45,000
13	«Արաքս Մուրադյան» մանկապարտեզի հիմնանորոգում (հիմքերի ամրացում, տանիքի հիմնանորոգում, մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային և ջեռուցման համակարգերի ստեղծում, գույքի ձեռք բերում - 1,054 ք.մ.)	45,000
14	«Արևիկ» մանկապարտեզի հիմնանորոգում (հիմքերի ամրացում, տանիքի մասնակի նորոգում, մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային և ջեռուցման համակարգերի ստեղծում, գույքի ձեռք բերում - 1128 ք.մ.)	35,000

15	Պարարվեստի դպրոցի հիմնանորոգում (հիմքերի ամրացում, տանիքի հիմնանորոգում, մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային ստեղծում, գազամատակարարման ապահովում, գույքի ձեռք բերում - 230 ք.մ.)	25,000
16	Տարեցների համար ժամանցի կազմակերպման կենտրոնի ստեղծում	3,000
17	Սոցիալական բնակարանների շինարարության իրականացում (2 հա)	
18	բանուկ մասերում նստարանների տեղադրում,	5,000
19	7-10 բակերի վերանորոգում և մանկական խաղահրապարակների կառուցում (3,000 ք.մ.)	60,000
20	Անապահով ընտանիքների երեխաների համար մանկապարտեզներում ստեղծել նախադպրոցական կրթության անվճար խմբեր:	8,000
21	Բնակարանային ֆոնդի պահպանում, շահագործում և նորոգում	45,000
22	Համատիրությունների ստեղծում և տարածքային կառավարման տեղամասերի աշխատանքների կանոնակարգում	3,000
23	Վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցերում, ջրհորդան խողովակների վրա, շքմուտքերում, աստիճանավանդակներում (15)	50,000
24	Համայնքի բնակչության կենցաղային աղբի և փոշու հավաքման և տեղափոխման հաճախականությունը դարձնել շաբաթական 3 անգամ	60,000
25	Նախկինում տեղադրված բոլոր աղբարկղների վերանորոգում և դրանց քանակի կրկնակի ավելացում	7,000
26	Փողոցների փոքր աղբարկղերի տեղադրում	8,000
27	Աղբատար մեքենաների թիվը ավելացնել 3-ով	60,000
28	Ձյուն մաքրող 1 մեքենայի ձեռք բերում	20,000
29	Քասաղի կիրճում ակտիվ հանգստի և ժամանցի կազմակերպման հանրային գոտիների ստեղծում (20,000 հա)	15,000
30	Համայնքային նշանակության փողոցների երթևեկելի և մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ	
31	Հասարակական 3 զուգարանների կառուցում	3,000
32	Համայնքային աղբավայրի աշխատանքների կանոնակարգում	12,000

33	Աղբարկղերի մոտ բետոնյա պատվարների կառուցում, կափարիչների տեղադրում	8,000
34	Համայնքի բնակչությանը սպասարկվող միջքաղաքային երթուղային տրանսպորտի կարգավորում և համայնքի ծայրամասային փողոցների հասանելիություն	1,000
35	Խաչմերուկներում լուսաֆորների տեղադրում (3)	15,000
36	Ճանապարհային երթևեկության նշանների փոփոխում, նորացում, տեղադրում	5,000
37	Ճանապարհների պարբերաբար նշագծում	3,000
38	Երթուղային ժամատախտակների տեղադրում կանգառներում	2,000
39	Թափառող շների վնասազերծման աշխատանքներ	
40	Ստեղծել Աշտարակ քաղաքի ինտերնետային էջ	500
41	Հասնել խմելու ջրի շուրջօրյա ջրամատակարարման	150,000
42	Բագավան թաղամասում մարզադաշտի վերականգնում (3,500 ք.մ.)	5,000
43	Բռնադատվածների հուշարձանի կառուցում	10,000

Աղյուսակ 2. Համայնքի զարգացման խնդիրներն ըստ ծրագրի արժեքի (Համայնքի քառամյա ծրագիր)

Գ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեք (հազ. դրամ)
40	Ստեղծել Աշտարակ քաղաքի ինտերնետային էջ	500
34	Համայնքի բնակչությանը սպասարկվող միջքաղաքային երթուղային տրանսպորտի կարգավորում և համայնքի ծայրամասային փողոցների հասանելիություն	1,000
38	Երթուղային ժամատախտակների տեղադրում կանգառներում	2,000
16	Տարեցների համար ժամանցի կազմակերպման կենտրոնի ստեղծում	3,000
22	Համատիրությունների ստեղծում և տարածքային կառավարման տեղամասերի աշխատանքների կանոնակարգում	3,000
31	Հասարակական 3 զուգարանների կառուցում	3,000
37	Ճանապարհների պարբերաբար նշագծում	3,000

18	բանուկ մասերում նստարանների տեղադրում,	5,000
36	Ճանապարհային երթևեկության նշանների փոփոխում, նորացում, տեղադրում	5,000
42	Բագավան թաղամասում մարզադաշտի վերականգնում (3,500 ք.մ.)	5,000
25	Նախկինում տեղադրված բոլոր աղբարկղների վերանորոգում և դրանց քանակի կրկնակի ավելացում	7,000
20	Անապահով ընտանիքների երեխաների համար մանկապարտեզներում ստեղծել նախադպրոցական կրթության անվճար խմբեր:	8,000
26	Փողոցների փոքր աղբարկղերի տեղադրում	8,000
33	Աղբարկղերի մոտ բետոնյա պատվարների կառուցում, կափարիչների տեղադրում	8,000
43	Բռնադատվածների հուշարձանի կառուցում	10,000
32	Համայնքային աղբավայրի աշխատանքների կանոնակարգում	12,000
8	Ջինիշյան խաղահրապարակի տեղափոխում	14,000
3	Մարզադպրոցի գործունեության համար ստեղծել նպաստավոր պայմաններ	15,000
29	Քասաղի կիրճում ակտիվ հանգստի և ժամանցի կազմակերպման հանրային գոտիների ստեղծում (20,000 հա)	15,000
35	Խաչմերուկներում լուսաֆորների տեղադրում (3)	15,000
28	Ձյուն մաքրող 1 մեքենայի ձեռք բերում	20,000
15	Պարարվեստի դպրոցի հիմնանորոգում (հիմքերի ամրացում, տանիքի հիմնանորոգում, մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային ստեղծում, գազամատակարարման ապահովում, գույքի ձեռք բերում - 230 ք.մ.)	25,000
1	Ա.Այվազյանի անվան երաժշտական դպրոցն ապահովել անհրաժեշտ գույքով և սարքավորումներով	35,000
14	«Արևիկ» մանկապարտեզի հիմնանորոգում (հիմքերի ամրացում, տանիքի մասնակի նորոգում, մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային և ջեռուցման համակարգերի ստեղծում, գույքի ձեռք բերում - 1128 ք.մ.)	35,000
5	Փողոցների շենքերի և շինությունների գիշերային լուսավորության ապահովում, գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում (2 կմ)	40,000

11	Աջ ափի զբոսայգու վերականգնում (ոռոգման և խմելու ջրի համակարգի կառուցում, կանաչապատում, անցուղիների կառուցում, կարուսելների տեղադրում, լուսավորության համակարգի ստեղծում, WiFi ցանցի ստեղծում - 1,300 ք.մ.)	40,000
12	«Հասմիկ» մանկապարտեզի հիմնանորոգում (հիմքերի ամրացում, տանիքի հիմնանորոգում, մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային ստեղծում, գազամատակարարման ապահովում, գույքի ձեռք բերում - 1,012 ք.մ.)	45,000
13	«Արաքս Մուրադյան» մանկապարտեզի հիմնանորոգում (հիմքերի ամրացում, տանիքի հիմնանորոգում, մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային և ջեռուցման համակարգերի ստեղծում, գույքի ձեռք բերում - 1,054 ք.մ.)	45,000
21	Բնակարանային ֆոնդի պահպանում, շահագործում և նորոգում	45,000
2	Գեղարվեստի դպրոցի համար ստեղծել շենքային պայմաններ	50,000
4	Թարմացնել նախակրթարանների և մասնագիտացված դպրոցների նյութատեխնիկական բազան	50,000
6	Գեղարվեստական լուսավորությամբ ապահովել քաղաքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանները, խորհրդանիշ հանդիսացող շենքերն ու շինությունները (15-20 շենք)	50,000
10	Քաղաքային մշակույթի տան ջերմամեկուսացում և ջեռուցման համակարգի ստեղծում (մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում, ջրամատակարարման, հակահրդեհային և ջեռուցման համակարգերի ստեղծում, տանիքի ջերմամեկուսացում - 2,200 ք.մ.)	50,000
23	Վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցերում, ջրհորդան խողովակների վրա, շքմուտքերում, աստիճանավանդակներում (15)	50,000
19	7-10 բակերի վերանորոգում և մանկական խաղահրապարակների կառուցում (3,000 ք.մ.)	60,000
24	Համայնքի բնակչության կենցաղային աղբի և փոշու հավաքման և տեղափոխման հաճախականությունը դարձնել շաբաթական 3 անգամ	60,000
27	Աղբատար մեքենաների թիվը ավելացնել 3-ով	60,000

7	Քաղաքի բոլոր փողոցների ու մայթերի քանդված հատվածների ասֆալտապատում, անվանատախտակների տեղադրում (18 հա)	90,000
9	Ձախ ափի զբոսայգու վերականգնում (նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրում, ցանկապատի կառուցում, ռոգման և խմելու ջրի համակարգի կառուցում, կանաչապատում, անցուղիների և ծառուղիների կառուցում, կարուսելների տեղադրում, լուսավորության համակարգի ստեղծում, WiFi ցանցի ստեղծում - 7 հա)	150,000
41	Հասնել խմելու ջրի շուրջօրյա ջրամատակարարման	150,000
17	Սոցիալական բնակարանների շինարարության իրականացում (2 հա)	
30	Համայնքային նշանակության փողոցների երթևեկելի և մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ	
39	Թափառող շների վնասազերծման աշխատանքներ	

Քննարկման դրված սցենարները

Սցենար 1. Համատիրությունների հիմնում

Աշտարակ համայնքում կա 100 բազմաբնակարան շենք, որոնց մի մասին սպասարկում է «Բարեկարգում» ՀՈԱԿ-ը, իսկ մյուսին՝ տարածքային կառավարման տեղամասերը (թաղային լիազորներ): Առաջին դեպքում սպասարկումն իրականացվում է վարձավճարների և համայնքի բյուջեից կատարվող մասհանումների, իսկ երկրորդ դեպքում՝ բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Բազմաբնակարան շենքերի կառավարումն արդյունավետ չի իրականացվում. բազմաթիվ բնակիչներ չեն վճարում սպասարկման վարձը կամ վճարում են անկանոն և մասնակի: Վարձավճարների կուտակված պարտքը հասնում է շուրջ 50 մլն. դրամի: Բազմաբնակարան շատ շենքեր գտնվում են անմխիթար վիճակում: Շենքերի շքամուտքերը, տանիքներն ու աստիճանավանդակները Խորհրդային Միության փլուզումից ի վեր չեն վերանորոգվել կամ վերանորոգվել են մասամբ: Շենքերի բակերում չկան խաղահրապարակներ, ինչի արդյունքում երեխաների հանգիստն ու ժա-

մանցը կազմակերպվում է հաճախ վտանգավոր վայրերում: Աշտարակի բազմաբնակարան շենքերը չունեն թեքահարթակներ, և հաշմանդամների տեղաշարժը շենքերում խնդրահարույց է: Իրավիճակն էլ ավելի վատթար է Կույրերի միավորման բազմաբնակարան երեք շենքերի՝ հիմնականում վատ տեսողություն ունեցողների համար: Շքամուտքերն ու բակային տարածքները մաքրվում են բնակիչների՝ հիմնականում կանանց և տարեցների ուժերով:

Աշտարակ համայնքում բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է հիմնադրել 5 համատիրություն: Դրանք կներկայացնեն և կպաշտպանեն շենքերի, շինությունների սեփականատերերի ընդհանուր շահերը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական և այլ ատյաններում, կոմունալ ծառայություններ մատուցողների հետ կկնքեն պայմանագրեր, կկազմակերպեն համատիրության անդամներին հուզող հարցերի քննարկումներ և կտան լուծումներ: Համատիրությունների ստեղծմանը նպաստելու և դրանցում բնակիչների ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով համայնքի իշխանությունները նախատեսում են համատիրություններին ֆինանսական միջոցներ տրամադրել համայնքային բյուջեից՝ բնակիչների կողմից հավաքագրված սեփական գումարների համամասնությամբ:

Նախատեսված աշխատանքների կատարման արդյունքում համատիրության մեջ մտնող բազմաբնակարան շենքերի բնակիչները հնարավորություն կստանան.

- **ինքնուրույն** ընտրել ընդհանուր բաժնային սեփականության կառավարման մարմին.
- **տեղեկատվություն** և **հաշվետվություն** ստանալ համատիրության գործունեության և ընդհանուր միջոցների ծախսերի վերաբերյալ.
- **մասնակցել** համատիրության մեջ մտնող բոլոր շենքերի վերաբերյալ որոշումների կայացմանը, այդ թվում՝ վարձավճարների (փայավճարների) սահմանման, ծախսերի ուղղությունների և ծառայությունների մատուցման վերաբերյալ.
- **օգտվել** ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ու շահագործման ավելի կատարյալ ծառայություններից.
- **ինքնուրույն լուծումներ տալ** երեխաների, տարեցների և մեծահասակների ժամանցի և հանգստի կազմակերպման, հաշմանդամների տեղաշարժը հեշտացնելու խնդիրներին.
- **ինքնուրույն որոշել** շենքերում առկա հիմնախնդիրների առաջնահերթությունը (շքամուտքերի ընթացիկ վերանորոգում, շքամուտքերի և բակային հատվածների սանիտարական մաքրում, դռների և պատուհան-

ների տեղադրում) և դրանց լուծման ուղիները:

Սցենար 2. Երթևեկության անվտանգության բարելավում

Աշտարակ համայնքում ճանապարհային երթևեկության կարգավորման գործում կարևոր նշանակություն ունեցող մի շարք ենթակառուցվածքներ դեռևս թերի են: Այսպես, քաղաքում լուսացույցներով կարգավորվում է միայն մեկ խաչմերուկ, փողոցները, այդ թվում՝ կենտրոնական, նշագծված չեն, ճանապարհային երթևեկության նշանների քանակը չնչին է:

Ճանապարհների նշագծման և ճանապարհային երթևեկության նշանների բացակայության պատճառով համայնքի փողոցներում հաճախակի են խցանումները: Խնդրահարույց է երթևեկության մասնակիցների՝ վարորդների և հետիոտների կարգապահությունը, մտահոգիչ է երթևեկության անվտագնությունը: Պատշաճ կարգավորման դեպքում շատ ավտովթարներ կարող էին չլինել: Երթևեկությունն անվտանգ չէ հատկապես Աշտարակի կենտրոնական հատվածում, Մուղնու հատուկ դպրոցի, Պերճ Պռոշյանի անվան դպրոցի հարակից խաչմերուկներում, մինչդեռ հենց այս հատվածներում երթևեկությունը հատկապես խիտ է ու մարդաշատ: Երթևեկության մասնակիցների թվում շատ են դպրոցահասակ և նախադպրոցական տարիքի երեխաներն ու նրանց ուղեկցող մայրերը, տատիկներն ու պապիկները:

Աշտարակ համայնքի 2013 թվականի բյուջեում հնարավորություն է ստեղծվել շուրջ 15 մլն դրամ հատկացնել կենտրոնական փողոցներում լուսացույցների, ճանապարհային երթևեկության նշանների տեղադրման և ճանապարհների նշագծման համար: Համայնքի ճանապարհային նշանների տեղադրումն ու ճանապարհների նշագծումը նախատեսված է սկսել կենտրոնական՝ առավել բանուկ փողոցներից: Հենց այստեղ են գտնվում վարչական, մշակութային, կրթական և սոցիալական հաստատությունները, այդ թվում՝ մարզպետարանը, քաղաքապետարանը, փոստը, Ն. Աշտարակեցու և Ս. Շահազիզի անվան դպրոցները, «Հասմիկ» և «Արաքս Մուրադյան» մանկապարտեզները: Լուսացույցներ են տեղադրվելու նաև Աշտարակից դեպի Օշական և Թալին տանող ճանապարհների խաչմերուկում: Թարթող լուսացույցներ կտեղադրվեն Մուղնու հիմնական, հատուկ դպրոցի, Պ. Պռոշյանի և Գ. Ղափանցյանի անվան դպրոցների խաչմերուկներում:

Նախատեսված աշխատանքների կատարման արդյունքում.

- համայնքում կբարձրանա երթևեկության **կարգավորումն** ու **կարգապահությունը**.
- զգալիորեն կբարելավվի երթևեկության մասնակիցների, այդ թվում՝

երեխաների, կանանց, տարեցների և հաշմանդամների **անվտանգությունը** ճանապարհներին.

- համայնքի կենտրոնական փողոցների ճանապարհները կդառնան **անվտանգ**, **հարմարավետ** և **գրավիչ**.
- համայնքում էականորեն **կնվազեն** ճանապարհային պատահարների, ավտովթարների, դրանց հետևանքով **խեղումների** և **մահացության** դեպքերը.

Միաժամանակ, հարկ է նշել, որ ճանապարհների նշագծումը պահանջում է պարբերական ծախսեր՝ նշագծման թարմացման նպատակով:

Սցենար 3. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում

Աշտարակ համայնքում գիշերային լուսավորությամբ ապահովված են հիմնականում կենտրոնական և կենտրոնամերձ փողոցները, մինչդեռ ծայրամասային թաղամասերում գիշերային լուսավորությունը բացակայում է: Մասնավորապես, լուսավորված չեն Ղ. Փարպեցու, Զորավար Սմբատ, Շահազիզ, Ս. Մարինե, Պռոշյան, Մաշտոցի փակուղի, Սաժումյան, Բեկնազարյան, Թաղիադյան և այլ փողոցներն և թաղամասները:

Գիշերային լուսավորություն չունեցող թաղամասերում օրվա մութ ժամերին երթևեկությունը դառնում է վտանգավոր: Մութն ընկնելուն պես փողոցները դատարկվում են: Սա հատկապես զգալի է ձմեռային 6-7 ամիսներին, երբ օրվա ցերեկային տևողությունը կարճ է: Անբարեկարգ մայթերի և երբեմն բաց դիտահորերի պայմաններում բնակիչները, մասնավորապես՝ երեխաներն ու տարեցները, երեկոյան չեն կարողանում անվտանգ զբոսնել չլուսավորված փողոցներում: Չլուսավորված փողոցներում զբոսնելը երբեմն ավելի վտանգավոր է դառնում թափառող շների պատճառով: Սահմանափակվում է ներհամայնքային կյանքի ակտիվությունը:

Աշտարակ համայնքի 2013թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել շուրջ 8 մլն. դրամ հատկացնել գիշերային լուսավորության ընդլայման նպատակով: Նախատեսվում է գիշերային լուսավորությամբ ապահովել ևս 2կմ ընդհանուր երկարությամբ փողոցներ և շենքերի բակեր: Ծրագրի այս փուլում կընդգրկվի շուրջ 17 փողոց, որոնց երկայնքով պահպանվել են գիշերային լուսավորության հենասյուներն, ու որտեղ բնակիչների շարժն առավել ակտիվ է: Հատկացված միջոցներով կանցկացվեն հոսանքագծեր և կտեղադրվեն լուսավորության լամպեր:

Աշխատանքների արդյունքում համայնքի մեկուկես տասնյակից ավելի փողոցներում երեկոյան ժամերին էականորեն կաշխուժանա ներհամայնքային կյանքը, առևտրի և սպասարկման օբյեկտների գործունեությունը:

Լուսավորված փողոցներում օրվա մութ ժամերին երթևեկությունը կդառնա առավել անվտանգ և հարմարավետ: Կանանց և երեխաների երեկոյան տեղաշարժը կդառնա առավել անվտանգ:

Սցենար 4. Փողոցներում աղբարկղերի տեղադրում

Աշտարակ համայնքում համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից կատարվում է կանոնավոր աղբահանություն: Միաժամանակ, առկա միջոցները բավարար չեն քաղաքի մաքրությունը ցանկալի մակարդակի հասցնելու համար: Այսպես, համայնքում աղբահանությունը լիարժեք կազմակերպելու համար անհրաժեշտ է առնվազն վեց աղբատար մեքենա, մինչդեռ ներկայում դրանք ընդամենը երեքն են՝ այն էլ բնավ ոչ լավագույն վիճակում: Տեղադրված աղբարկղերի ոչ բավարար քանակի պատճառով հաճախ անհրաժեշտ է լինում երկար քայլել աղբը սահմանված տեղում թափելու համար: Բնակիչները սովորություն են դարձրել իրենց աղբը նետել քաղաքի, այսպես ասած, «անտեր» վայրերում, որոնք աղբահանության ներկա մշակույթի պայմաններում շատ արագ վերածվում են աղբավայրի: Թափառող կենդանիներն էլ իրենց «նպաստն» են ունենում քաղաքի աղտոտման գործում. աղբակույտերում և նույնիսկ տեղադրված ծածկով աղբարկղերից քրքրում են աղբն ու տարածում ողջ քաղաքով մեկ:

Աղբի տհաճ հոտը, տարբեր հիվանդությունների տարածմանը նպաստող առնետների բազմանալը, առողջության համար վտանգավոր սանիտարահիգիենիկ վիճակը, հատկապես տարվա տաք և շոգ օրերին, խստորեն անհանգստացնում են թե՛ բնակիչներին և թե՛ համայնքի իշխանություններին:

Աղբահանության խնդիրը ներառվել է համայնքի զարգացման քառամյա ծրագրում. տեղադրված աղբարկղերի վերանորոգման և դրանց կրկնապատկման նպատակով արդեն իսկ տրամադրվել է 7 մլն. դրամ, իսկ աղբարկղերի շուրջ բետոնե պատվարների կառուցման և կափարիչների տեղադրման համար հատկացվել է 8 մլն. դրամ:

Աշտարակ համայնքի 2013 թվականի բյուջեում նախատեսվում է շուրջ 8 մլն. դրամ հատկացնել համայնքի փողոցներում (մայթեզրերում) նոր փոքր աղբարկղերի տեղադրման համար:

Աշխատանքների արդյունքում.

- կբարելավվի համայնքում շրջակա միջավայրը, համայնքի մաքրությունը.
- կանանց, երեխաների և տղամարդկանց առողջության համար առավել նպաստավոր սանիտարահիգիենիկ պայմաններ կստեղծվեն.
- Աշտարակում կյանքը կդառնա ավելի բարեկեցիկ.
- պատմամշակութային բազմաթիվ գոհարներ և հանգստի անկրկ-

նելի գոտի ունեցող միջպետական երկու ճանապարհների խաչմերուկում գտնվող Աշտարակ համայնքը մաքուր դեմքով կընդունի իր այցելուներին:

Սցենար 5. Խաղահրապարակների կառուցում

Աշտարակ համայնքի բազմաբնակարան շենքերի բակերում չկան մանկական խաղահրապարակներ: Առանձին բակերում պահպանվել են խորհրդային ժամանակների կարուսելներ, որոնք խիստ մաշվել են և շահագործման համար դարձել չափազանց վտանգավոր: Ն. Աշտարակեցու անվան հրապարակին հարակից տարածքում «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» միջոցներով կառուցվել է մանկական խաղահրապարակ, որը սակայն նույնպես չի ծառայում նպատակին: Բոլոր սահարաններն ու ճոճանակները կոտրված են: Տարածքն ավազով է լցված, որը երեկոյան ժամերին դառնում է թափառող շների սիրած հավաքատեղին, ինչի հետևանքով վատացել են սանիտարահիգիենիկ պայմանները:

Խաղահրապարակների բացակայության պատճառով երեխաները իրենց ազատ ժամանակը նախընտրում են անցկացնել տանը, համակարգչի առջև, ինչի արդյունքում միջանձնային շփումը, հաղորդակցումը զգալիորեն նվազում է, երեխաները սկսում են մեկուսանալ իրենց հասակակիցներից: Հասարակության համար կենսական նշանակություն ունեցող սոցիալականացման, շփման գործընթացները կաղում են: Բակերում չկան կանաչապատ տարածքներ, որտեղ երեխաները, մեծահասակները, տարեցները կարող են անցկացնել իրենց ժամանակը:

Աշտարակ համայնքի 2013թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել մանկական համալիր՝ խաղահրապարակ և մարզադաշտ կառուցել բազմաբնակարան շենքերի բակերից մեկում: Այդ նպատակով կհատկացվի շուրջ 5 մլն դրամ: Մանկական համալիրին հարակից տարածքներում կտեղադրվեն նստարաններ, որտեղ կկարողանան նստել և իրենց հանգիստը վայելել նաև մեծահասակները:

Ծրագրի իրագործման արդյունքում.

- բակի և մերձակա թաղամասերի երեխաները կկարողանան ժամանցն ու հանգիստն անցկացնել խաղահրապարակում և մարզադաշտում.
- ակտիվ խաղերը կնպաստեն երեխաների առողջությանն ու ֆիզիկական զարգացմանը, անմիջական շփումներին ու ակտիվ սոցիալականացմանը, դաստիարակությանը.
- միջանձնային շփման արդյունքում կամրապնդվի կապը հասակակիցների և տարբեր սերունդների ներկայացուցիչների միջև:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

“Բնավորությունը սեփական կյանքի համար պատասխանատվություն ստանձնելու պատրաստակամություն է, այն ակունքը, որից հորդում է ինքնահարգանքը”

Ջոան Դիդյոն, գրող, հրապարակախոս

Տնտեսական և սոցիալական աշխուժություն, բյուջե, ծախսեր, հոգսեր

Համատիրությունների ստեղծման անհրաժեշտն ու բավարարը

Աշտարակցիների մի մասը համարում է, որ համատիրությունների ստեղծումը նպատակահարմար է և բազմաբնակարան շենքերի խնդիրների լուծման ու կառավարման արդյունավետ մոդել է: Միաժամանակ, բնակիչները նշում են, որ հաշվի առնելով քաղաքում համատիրությունների գործունեության փորձի բացակայությունը, համատիրությունների ինստիտուտի հաջողությունը մեծապես պայմանավորված կլինի դրանց գործունեության հստակ մեխանիզմների մշակմամբ և ներդրումով, ինչպես նաև մի շարք այլ գործոններով: Այսպես, աշտարակցիները կարևորում են բազմաբնակարան շենքերի սեփականության կարգավիճակի խնդիրները, համատիրության ղեկավարի անձնական, գործնական ու կազմակերպչական հատկությունները, թաղամասի խնդիրներին քաջատեղյակությունը, հետևողական աշխատանքը, նրա վարձատրության խնդիրն ու մոտիվացիան:

Քաղաքացիները նշում են նաև այն հանգամանքը, որ բազմաբնակարան շենքում հաճախ բնակվում են մի քանի ընտանիք, ինչը կարող է հանգեցնել ծախսերի խիստ անհամաչափ ու անարդար բաշխման, և հիմնականում շենքում բնակվող տնային տնտեսությունների վրա կծանրանա ծախսերի բեռը: Ընդհանուր առմամբ, բնակիչները կարևորում են համատիրության գործող մոդելի ստեղծումը և բնակիչների շրջանում այս ինստիտուտի հանդեպ վստահության ձևավորումը, ինչն անհրաժեշտ է վճարների հավաքագրման, ուստի և՝ համատիրության կենսունակության համար: Համատիրությունների ձևավորման փուլում վճարների հավաքագրումը խթանելու նպատակով աշտարակցիներն առաջարկում են նաև քննարկել բնակիչների կողմի հավաքագրված գումարներին համեմատական համայնքի բյուջեից ֆինանսական հատկացումներ կատարել համա-

տիրությանը («ավելին՝ ավելի դիմաց» սկզբունքով): Ի լրումն, բնակիչները առաջարկում են ավելի մեծ ուշադրություն դարձներ կույրերի շենքի զարգացմանը՝ մեծապես կարևորելով ապագա համատիրությանը համայնքի կողմից համաֆինանսավորման տրամադրումը: Բնակիչները նշում են, որ համատիրությունը պիտի անհրաժեշտ իրավական լծակներ ունենա շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներն ու ռեսուրսները տնօրինելու համար:

Թերևս հենց համապատասխան փորձի պակասի պատճառով էլ աշտարակցիներից շատերը մեծ թերահավատությամբ են մոտենում համատիրությունների ստեղծման գաղափարին: Հոռետեսները նշում են, թե աղքատության բարձր մակարդակի պայմաններում օրվա հացի մասին մտածող բնակիչն անհրաժեշտ պատրաստակամություն և ակտիվություն չի ցուցաբերի, ինչը կարող է կործանարար լինել այս ինստիտուտի համար: Բնակչի ցածր վճարունակությունն ու նման պայմաններում միջոցների հավաքագրման բարդությունները աշտարակցին համարում է համատիրության ստեղծման և գործունեության հիմնական խոչընդոտ: Միաժամանակ, ցածր վճարունակ ընտանիքների համար աշտարակցիներն առաջարկում են նախատեսել համատիրության վճարներին համարժեք աշխատանքով ներդրման հնարավորությունը:

Մյուսների ընկալմամբ այլ քաղաքներում համատիրությունների ներդրման և գործունեության փորձը այս ինստիտուտի հանդեպ վստահության համար անհրաժեշտ հիմք չի ձևավորել և տեղյակ չեն հաջողված փորձին: Բնակիչները բարձրացնում են նաև «սեփական» տների՝ առանձնատների թաղամասերի ընդհանուր խնդիրների արդյունավետ կառավարման խնդիրը: Աշտարակցիները թերահավատ են նաև համատիրության կարող ղեկավարներ գտնելու հարցում:

Բնակիչները մտահոգ են ընդհանուր բարիքի գիտակցության և սոցիալական համաձայնության ցածր մակարդակով, թերահավատ են միահամուռ որոշումներ ընդունելու կարողության վերաբերյալ: Մյուսները նշում են, որ համատիրության գործառույթները որոշ հաջողությամբ ներկայում կատարում են այլ օղակներ՝ թաղային լիազորը, բարեկարգման օղակները, խնդիրը տեսնում են առավելապես ֆինանսների հավաքագրման մեջ, սակայն չեն նկատում բազմաբնակարան շենքերի կառավարման մոդելի, դրանց գործունեության և վստահության ու ֆինանսական միջոցների հավաքագրման միջև կապը: Համատիրությունների ստեղծման և դրանց գործունեության փորձաքարը Աշտարակում թերևս կդառնա ինստիտուտի հանդեպ վստահությունը, որի ձևավորումը պայմանավորված է որոշումների ընդունմանը բնակիչների մասնակցության, համատիրության գործունեության վերահսկողության, թափանցիկության և հաշվետվողականության խնդիրների լուծման հաջողությամբ:

Անվտանգություն

Ապահով երթևեկության հրամայականները

Աշտարակցիները համարում են, որ երթևեկության անվտանգության ապահովումն առաջնահերթ խնդիր է համայնքի համար: Քաղաքացիներից շատերն այս խնդրի լուծումն առաջին հերթին պայմանավորում են քաղաքի առավել բանուկ և կենտրոնական խաչմերուկներում լուսացույցերի տեղադրմամբ: Մարդիկ շեշտում են, որ լուսացույցների բացակայության ու անբավարար նշագծման պայմաններում հաճախակի են վթարները, հազվադեպ չեն մահացու ելքով պատահարները: Աշտարակցիների պնդմամբ հատկապես վտանգավոր են Երևանյան փողոցի հատվածը, Տիգրան Մեծի փողոցը, որի դիմաց դպրոց տանող ճանապարհն է, շուկա տանող ճանապարհի հատվածում, Վ. Պետրոսյան փողոցում, դպրոցների մոտ և այլուր: Լուսացույցների բացակայության պայմաններում լինում են դեպքեր, երբ շտապ օգնության մեքենան չի կարողանում չկարգավորված երթևեկության մեջ ժամանակին տեղ հասնել: Բնակիչները համարում են, թե անհրաժեշտ են երթևեկությունը լիարժեք կարգավորող լուսացույցներ, որովհետև թարթող լուսակիները բավարար չեն երթևեկության անվտանությունն ապահովելու համար: Լուսացույցների տեղադրումն անհրաժեշտ է թե՛ վարորդին, թե՛ հետիոտնին, մեծին ու հատկապես՝ փոքրին, նշում են քաղաքացիները: Առանց դրանց, երթևեկության ներկա մշակույթի պայմաններում երեխաներին ուղեկցող ծնողներին անգամ վարորդները ճանապարհ չեն զիջում, նշում են աշտարակցիները: Լուսացույցների տեղադրմանը զուգահեռ անհրաժեշտ է նաև բարեկարգել փողոցները և հատկապես մանկապարտեզի հատվածում փակել հոսող առուն, որը հաճախ լուրջ պատահարների պատճառ է:

Աշտարակցիների մեկ այլ խումբ համարում է, որ լուսացույցներից էլ ավելի կարևոր է երթևեկության գոտիների նշագծման խնդիրը: Բնակիչները հատկապես կարևորում են հետիոտնային անցումների նշագծումը: Հատկապես վտանգավոր է դպրոցի հատվածը. դպրոցին հարակից տարածքում անցումներ չկան և երեխաները փողոցն անցնում են պատահած կերպ: Բավարար գծանշումներ չկան անգամ Երևանից եկող ճանապարհի հատվածում և հետիոտնը դժվարանում է փողոցն անցնել: Նման իրավիճակը մի կողմից, ճանապարհային ոստիկանությունից երթևեկության ապահովման համար լրացուցիչ ջանքերը ու ռեսուրսներ է պահանջում, ինչը միշտ չէ, որ առկա է: Մյուս կողմից, պատշաճ նշագծումների բացակայությունը ճանապարհային ոստիկանության տեսուչների կողմից հաճախ հայեցողական որոշումների կայացման, ուստի և՝ կոռուպցիայի ռիսկեր է ստեղծում: Առանձնակի նշում են գետնանցումների խնդիրը, ընդ որում, մինչ ոմանք գետնանցումները համարում են անհրաժեշտություն, մյուս-

ները նշում են Տիգրան Մեծ փողոցի ճանապարհային անցումի օրինակը, որը չի գործում: Մեկ հարցում քաղաքացիները համակարծիք են որպեսզի գետնանցումները գործեն, անհրաժեշտ է դրանք պահել մաքուր ու լուսավոր: Հնչում են նաև առանձին մանկապարտեզի և դպրոցի հատվածում փողոցների վրա «պառկած ոստիկաններ»՝ երթևեկության ընթացքը խոչընդոտող ու դանդաղեցնող ասֆալտե արգելքներ կառուցել, ինչպես նաև վերանորոգել մայթերը:

Աշտարակցիները մտահոգ են նաև երթևեկության ոչ պատշաճ կարգարվորման պայմաններում ձևավորված երթևեկության արատավոր մշակույթի համար: Քաղաքացիները նշում են, թե Աշտարակում հետիոտնին զիջելն ընդունված չէ, իսկ զիջող վարորդին, հետևից եկող մեքենաները ազդանշանով հարկադրում են չզիջել: Միաժամանակ, Երևանի փորձին ականատես աշտարակցիները վստահ են, որ երթևեկության կարգավորման, լուսացույցերի տեղադրման և պատշաճ նշագծման պարագայում քաղաքում երթևեկության ավելի ընդունելի, հանդուրժող, կարգապահ ու օրինահարգ մշակույթ կձևավորվի:

Քաղաքացիների մեկ այլ ստվար հատված կարևորում է ներհամայնքային հասարակական տրանսպորտի կանոնավոր գործունեության խնդիրը: Աշտարակցիները շեշտում են տրասնպորտի ավելի մեծ թվով բարեկարգ կանգառների անհրաժեշտությունը, հատկապես՝ քաղաքի կենտրոնի առավել բանուկ հատվածներում: Դրանց բացակայության պայմաններում բնակիչը չգիտե, որտեղ սպասել տրանսպորտին: Բնակիչները նշում են նաև քաղաքի ծայրամասային թաղամասերը կենտրոնին կապող հասարակական տրանսպորտի անբավարարությունը. Երբեմն ավելի հեշտ է ծայրամասից այլ քաղաք ուղևորվել, քան Աշտարակի կենտրոն, նշում են քաղաքացիները: Խնդիրը հատկապես սուր է ծայրամասերի երեխա ունեցող ընտանիքների համար, որոնք երեխային հարկադրված են տաքսիով դպրոց ուղարկել կամ ձմռան ցրտին երեխային երկու կիլոմետր քայլելով բերել մանկապարտեզ: ընդհանուր առմամբ, բնակիչներն առաջարկում են հնարավորինս ընդլայնել հասարակական տրանսպորտի ծածկույթի շառավիղը:

Եղիցի՛ լույս

Քաղաքացիներն Աշտարակում անվտանգության լուրջ մարտահրավեր են համարում ճանապարհների անբավարար լուսավորությունը գիշերային ժամերին: Եթե քաղաքի կենտրոնական փողոցը ողջ գիշեր լուսավորվում է, ապա ծայրամասերը մութ ժամերին մնում են խավարում, նշում են աշտարակցիները: Գիշերային լուսավորության բացակայութան պայմաններում բնակիչները «երեկոյան ժամերին չեն կարողանում տնից դուրս գալ, զբոսնել»: Ստեղծված իրավիճակն անվտանգության համար մի շարք մարտահրավերներ է ստեղծում. մութ փողոցներով երթևեկելը վտանգավոր է,

մութ փողոցներում մեծ վտանգ են թափառող շները, մութ փողոցներն ու թաղամասերը նպաստավոր պայմաններ են հանցագործությունների համար, առանձին վայրեր դարձել են «հարբեցողների հավաքատեղի»: Չլուսավորված բնակավայրը հատկապես վտանգավոր է երեխաների համար: Մութ փողոցներով դասից տուն դարձող աղջիկներին հարազատները հաճախ ստիպված են ուղեկցել տուն: Անվտագության խնդիրներն ավելի են սրվում կեսգիշերից հետո, ինչպես նաև ձմռան երկար գիշերներին: Ձմռան ամիսներին անգամ «հացի գնալու» անհրաժեշտությունը չի կարող բնակչին ստիպել տանից դուրս գալ մթանը: «Եթե երկու աշտարակցի ուզում են հանդիպել, նախընտրում են հանդիպել Երևանում», ախտորոշումն ամփոփում են բնակիչները:

Բնակիչներն առաջարկում են յուրաքանչյուր փողոցում օրվա մութ ժամերին առնվազն մինչև կեսգիշեր ապահովել նվազագույն լուսավորություն, լուսավորել միջպետական ճանապարհները, կենտրոնական փողոցների խաչմերուկում գտնվող զբոսայգու տարածքը, տեղադրել էներգախնայող լամպեր, ինչպես նաև ճանտեսել Աշտարակի ոչ մի թաղամաս:

Աշտարակցիների մի խումբ էլ նշում է, որ գիշերային լուսավորության առկայությունը շատ բան չի փոխի, քանի որ շները լույսից չեն վախենում, և միևնույն է, իրենք վախով են շարունակելու անցնել աղբամանների կողքով, որտեղ հավաքվում են շները: Լուսավորությունը առանձնապես չի նպաստի ժամանցի կազմակերպմանը, քանի դեռ քաղաքում չկան զբոսայգիներ, սրճարաններ և ժամանցի վայրեր, նշում են հոռետեսները:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Աղբահանության հավն ու ձուն

Աշտարակցիների մեծամասնությունը համարում է, որ համայնքում աղբահանության կազմակերպումը բարելավելու գործում անելիքներ կան: Բնակիչների մի հատվածը առավել կարևորում է աղբարկղերի տեղադրման խնդիրը: Առավել արդյունավետ են համարվում ծածկված աղբարկղերը, որոնք արդեն իսկ տեղադրված են քաղաքի առանձին թաղամասերում. Բնակիչները կարծում են, որ դրանց շնորհիվ այդ թաղամասերում վերացան թափառող շները և առաջարկում են այս ծածկված աղբամանների տեղադրումը շարունակել քաղաքի մյուս բոլոր հատվածներում: Առաջարկում են աղբարկղներ տեղադրել ոչ միայն բազմաբնակարան շենքերի բակերում, այլև հրապարակում և կենտրոնական փողոցներում: Ավելի՛ն, աշտարակցիները հաճախ դեմ են իրենց շենքերի հարևանությամբ բաց աղբամանների տեղադրմանը հենց այն պատճառով, որ դրանք թափառող կենդանիների և հակասանիտարական վիճակի պատճառ են դառնում. Բնակիչները երբեմն թափառող շներից ու կատուներից հեռու մնալու

նպատակով աղբը նետում են հեռվից, ինչի արդյունքում գետնին հայտնվող աղբն էլ ավելի է աղտոտում շրջակայքը: Բնակիչներն առաջարկում են նաև նախքան փակ աղբամանների տեղադրումը բաց աղբամանների շուրջ բետոնապատել: Քաղաքացիները նշում են, թե ճիշտ տեղում դրված աղբամանը կստիպի բնակչին աղբը գետնին չթափել, և աղբամանների տեղադրումը համարում են բնակիչների վերաբերմունքը փոխելու նախապայման: Առաջարկում են նաև փոքր մետաղյա աղբամաններ տեղադրել ավելի խիտ:

Աշտարակցիների մեկ այլ խումբ աղբարկղերից ավելի կարևորում է, աղբահանության և աղբատար մեքենաների խնդիրը: Այս խումբը համարում է, որ աղբահանության գործընթացի թերությունները մեծապես պայմանավորված են աղբատար մեքենաների սակավությամբ ու եղածի մաշվածությամբ: Արդյունավետ է համարվում շաբաթական առնվազն երկու անգամ աղբահանության մոդելը: Բնակիչներն առաջարկում են աղբահանության պատշաճ հաճախականություն և ծածկույթ ապահովելու նպատակով համայնքի միջոցներով ձեռք բերել նոր աղբատար մեքենաներ: Հատկանշական է, որ ընդունելի է համարվում անգամ այն մոդելը, երբ հաճախակի աղբահանության պարագայում բնակիչներն աղբն ուղղակիորեն մեքենայի մեջ են թափում, առանց անհրաժեշտ թվով մոտ աղբարկղերի, բերելով Գիտավան թաղամասի օրինակը: Ընդհանուր առմամբ, աղբահանության խնդրին համալիր լուծում տալու համար անբավարար ռեսուրսների պարագայում, բնակիչների այս խումբը համարում է, որ ավելի հաճախ աղբահանությունն ավելի լավ այլընտրանք է աղբարկղերի ֆիզիկական հասանելությանը: Որպես օրինակ նշվում են այն դեպքերը, երբ աղբարկղերը տեղադրված են, սակայն աղբահանությունը կատարվում է հազվադեպ՝ ամիսը մեկ: Նման իրավիճակում չեն փրկում անգամ բետոնապատված աղբարկղերն ու աղբատեղիները, ինչպես օրինակ Մուղնիի պարագայում: Հատկանշական է նաև, որ բնակիչները նշում են համատիրությունների դրական դերակատարման հնարավորությունը աղբահանության կազմակերպման բարելավման գործում:

Քաղաքացիների երրորդ խումբն ամենից առավել կարևորում է բնակիչների մոտեցումն ու վարքագիծը աղբահանության ու շրջակա միջավայրը մաքուր պահելու խնդրին: Աշտարակցիները նշում են, որ տեխնիկական-կազմակերպական-ենթակառուցվածքային խնդիրների լուծումից առավել և դրանց զուգընթաց անհրաժեշտ է փոխել բնակչի վերաբերմունքն ու ուժեղացնել աղտոտողների նկատմամբ վարչական ներգործության մեխանիզմները: Անհրաժեշտ է ավելի խստացնել տուգանքները և դրանց հետևողական կիրարկումը: Ներքին կանոնակարգերի սահման գործում ևս կարևորվում է համատիրությունների հնարավոր դերակատարումը:

Աշտարակցիները նշում են նաև աղբահանության վճարների գանձման խնդիրը, նշելով, որ ավելի որակյալ աղբահանությունը, ինչպես նաև մի-

ջոցների ծախսման ավելի բարձր թափանցիկությունը կնպաստեն գումարների հավաքագրման կարգապահության բարձրացմանը:

Երեխաներ և երիտասարդներ

Խաղահրապարակներ. ինչ, որտեղ, երբ

Աշտարակցիները մտահոգ են քաղաքում երեխաների համար պատշաճ խաղահրապարակների բացակայությամբ: Կահավորված խաղահրապարակներ, սահարանները, ֆուտբոլի դաշտը, հողային հարթեցված տարածքներ կարուսելներ չկան, եղածից էլ մնացել է երկաթի մի քանի կտոր: Երեխաները անցանկալիորեն շատ ժամանակ են անցկացնում ինտերնետ ակումբներում կամ տանը՝ համակարգիչների առջև, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց առողջության վրա, մինչդեռ խաղահրապարակների առկայությունը մասամբ կարող էր երեխաներին կտրել համակարգիչներից և հանել դուրս: Երեխաների ժամանցը կազմակերպելու համար աշտարակցիները հաճախ ստիպված են լինում գնալ մայրաքաղաք, ինչը ոչ բոլորի համար է մատչելի կամ ընդունելի:

Աշտարակցիները առաջարկներ ունեն նաև խաղահրապարակ կառուցելու համար բակերի, թաղամասերի ընտրության չափորոշիչների վերաբերյալ: Այսպես, բնակիչները գտնում են, որ Աշտարակին անհրաժեշտ է առնվազն երեք խաղահրապարակ. մեկը՝ կենտրոնում, մյուս երկուսը՝ գետի երկու ափերին: Միաժամանակ կան կարծիքներ, որ մեկ մեծ համալիրի կառուցումը կարող է ավելի նպատակահարմար լինել, քան առանձին բակերում փոքր խաղահրապարակներ կառուցելը: Քաղաքացիները առաջարկում են նաև խաղահրապարակների կառուցման համար համայնքի միջոցներն առաջին հերթին ուղղել այն թաղերին ու բակերին, որոնք միավորվել են համատիրության մեջ: Բնակիչներն առաջարկում են նաև խաղահրապարակները կառուցվել առավել բանուկ թաղամասերում, օրինակ՝ բազմաբնակարան շենքերի բակերում կամ հին շուկայի հարևանությամբ, և կամ Սիսակյան դպրոցի հարևանությամբ, կենտրոնում՝ երկու բարձրահարկ շենքերի արանքում: Աշտարակցիները գտնում են նաև, որ խաղահրապարակից բացի համայնքին անհրաժեշտ է մարզահրապարակ, ավելի ճիշտ՝ երեքը, քաղաքի երեկ թևերում: Առաջարկում են նաև վերակառուցել Կոմիտասի այգին:

Աշտարակցիները վստահ են, որ բարեխնամ խաղահրապարակ և մարզահրապարակ ունենալու դեպքում քաղաքացիները խնամքով կվերաբերվեն ունեցածին ու կպահպանեն դժվարությամբ ձեռք բերածը: Բնակիչները նշում են, որ խաղահրապարակը կծառայի ոչ միայն երեխաներին, այլև կդառնա ծնողների, տարեցների, տատիկների ու պապիկների հանգստի գոտի: Միաժամանակ, աշտարակցիները կարևորում են հանգստի գո-

տում հանրային տարածքները և մտահոգություն հայտնում դրանք սրճարաններով և սննդի մասնավոր օբյեկտներով լցնելու հնարավորության վերաբերյալ:

Միաժամանակ, աշտարակցիների մեկ այլ հատված առանձնապես շահագրգիռ չէ խաղահրապարակի կառուցման նախաձեռնությամբ: Մասամբ, բնակիչները նման վերաբերմունքը հիմնավորում են նախկին փորձով, նշելով Ջինիշյան հիմնադրամի կողմից ստեղծված խաղահրապարակի օրինակը, որը վերահսկողության և այլ խնդիրների պատճառներով աստիճանաբար հայտնվեց անմխիթար վիճակում: Աշտարակցիները շեշտում են կառուցվածի կառավարման և պահպանման խնդիրների շուրջ մտահոգությունները: Մյուսները կարծում են, որ համայնքի ունեցած միջոցները ներկայում բավարար չեն պատշաճ խաղահրապարակ կառուցելու ու կահավորելու համար, իսկ ավելի մեծ միջոցների տրամադրումը համարում են աննպատակահարմար: Երրորդները համարում են, որ համայնքն ունի ավելի հրատապ՝ ենթակառուցվածքների խնդիրներ և առկա միջոցներն առաջարկում է ուղղել դրանց լուծմանը: Քաղաքացիները գտնում են, որ առկա միջոցները անհրաժեշտ է տրամադրել կրթական հաստատություններին՝ դպրոցներին, արվեստի դպրոցին, սպորտդպրոցին, մանկապարտեզներին, այդ թվում՝ հարդարել ու կահավորել մանկապարտեզների բակերը: «Թող երեխաս նորմալ կրթություն ստանա, մի ճոճանակ էլ քիչ նստի» տրամաբանությունը հաճախ է հնչում: Բնակիչները նշում են նաև, որ միջոցները կրթօջախներում ժամանցի հնարավորություններին ուղղելու պարագայում այդ կառույցներն էլ հենց պատասխանատու կլինեն կառուցվածի վերահսկողության ու պահպանման համար:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Կանայք և՛ առավել խոցելի, և՛ որոշում կայացնող

Աշտարակցիները կարևորում են համայնքի խնդիրների լուծման և համայնքային ինստիտուտների կառավարման գործում կանանց ակտիվ մասնակցությունը: Մասնավորապես, շատերը համարում են, որ համատիրությունները առավել արդյունավետ կարող են ղեկավարել հենց կանայք: Մյուսները համարում են, որ կարևորը ոչ թե համատիրության ղեկավարի սեռն է, այլ գործնական հատկանիշները, թեպետ ընդունում են, որ արտագաղթի մեծ հոսքերի պայմաններում կանայք էլ ավելի գործուն մասնակցություն պետք է ունենան համայնքի կառավարմանը:

Քաղաքացիները նշում են նաև, որ համայնքի առջև ծառացած բազմաթիվ հիմնախնդիրներ՝ բակերի ու ճանապարհների բարեկարգումից, մինչև գիշերային լուսավորություն և անվտանգության ապահովում, առանձնակի

ազդեցություն ունեն կանանց վրա: Նշված խնդիրների լուծումը կթեթևացնի կանանց հոգսը, ինչը հնարավորություն կտա նրանց ուժերը կենտրոնացնել տնտեսության, ընտանիքի և երեխաների դաստիարակության խնդիրների վրա:

Հնչած կարծիքների հանրագումարը

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Սցենար 1. Համատիրությունների հիմնում

- Բնակչությունը պետք է կամենա և ակտիվություն ցուցաբերի, որպեսզի համատիրությունը ստեղծվի, իսկ բնակիչներն այս մասին չեն մտածում, քանի որ բոլորը օրվա հացի խնդրի մասին են մտածում:
- Առաջին սցենարում նկարագրված չեն կոնկրետ մեխանիզմներ, չկա սխեմա, թե ինչպես պետք է համատիրությունները հիմնվեն, ում և ինչպես պետք է հաշվետու լինեն:
- Պետք է գործուն մեխանիզմներ մշակվեն, որպեսզի առաջին սցենարն իրականացնենք:
- Փորձը ցույց է տալիս, որ համատիրությունները իրենց չեն արդարացնում: Հիմա բոլոր շենքերի բակերը բաժանված են՝ ավտոտնակներ, հողատարածքներ, համատիրությունը պետք է իրավական լծակներ ունենա, որ այդ տարածքների բաշխումը կարգավորվի, երեխաների համար խաղահրապարակներ ստեղծի, պետությունը փոխհատուցման մեխանիզմ պետք է մտածի:
- Պարտադիր չէ համատիրությունների ստեղծումը, խնդիրը կարող է լուծվել այլ միջոցներով:
- Համատիրության ստեղծումը արդյունավետ կլինի: Եթե մարդը չի կարողանում գումարը վճարել, թող փոխհատուցի սեփական աշխատանքով:
- Պրակտիկան ցույց է տալիս, որ ոչ մի հարց էլ չեն լուծում համատիրությունները:
- Համատիրության ղեկավարը պետք է կարող ուժ լինի, կազմակերպիչ լինի, կարողանա ու ուզենա աշխատել:

- Համատիրության աշխատանքներն արդյունավետ կդառնան, եթե ժամանակացույցը ճիշտ բաշխվի:
- Համատիրությունների ստեղծումը կրում է սոցիալական համատեքստ:
- Շենքերի կարգավիճակի փոփոխություն պետք է կարողանա անել համատիրությունը, մենք ունենք շենքեր, որոնք սեփականաշնորհված չեն:
- Աշտարակը Երևան չի, մեր շենքերում շատ կան բնակարաններ, որտեղ ոչ ոք չի բնակվում, կարող է հսկայական շենքում ընդամենը մի քանի ընտանիք բնակվի, և շենքից շենք համատիրության մոդելը շատ կտատանվի, նույն մոդելը մի քանի շենքերում կիրառել չի լինի:
- Ոչինչ չանելը ամենասխալ տարբերակն է, չնայած առաջին սցենարում չկան նշված կոնկրետ մեխանիզմներ, այնուամենայնիվ կարելի է փորձել կիրառել այս մեթոդը, հետո արդեն նորից հավաքվել ու քննարկել, թե ինչ խնդիրներ են առաջանում և ինչպես կարելի է լուծել այդ խնդիրները:
- Եթե բնակչությունը արդյունքը տեսնի, եթե խաղահրապարակ կառուցվի մյուս համատիրությունում, օրինակելի դաս կլինի:
- Եթե համատիրությունը նորմալ գործի, ապա արդյունավետ կարող է լինել
- Համատիրություններն արդյունավետ չեն սեփական տների պարագայում
- Եթե բնակիչների խոսքը անցնի բոլորն էլ կմասնակցեն, հիմա չեն մասնակցում քանի որ գիտեն, որ իրենց կարծիքը հաշվի չի առնվում:
- Ես վստահ չեմ, որ համատիրություն ստեղծելով մեր հարցերը կլուծվեն: Համատիրություն ստեղծելու համար պետք են անհատներ, ովքեր կկարողանան կառավարել այդ համակարգը: Բայց միթե կկարողանանք գտնել այդպիսի անհատներ:
- Շենքերը գտնվում են շատ վատ վիճակում, սկսած ջրագծերից, էլէկտրաէներգիայից: Մի քանի անգամ դիմել ենք, չեն արձագանքել:
- Աշխատանքը պետք է զուտ ցուցադրական լինի, պետք է համատիրությունը հետևողական լինի:
- Համատիրության նախագահը պետք է լինի թաղամասի բնակիչ, դրսի մարդն ի՞նչ իմանա ինչ խնդիրներ կան
- Եթե Երևանում համատիրության ստեղծման փորձը հաջողվեր, մարզերում էլ կկիրառվեր:
- մեկ ամիս առաջ հարցումներ են անցկացրել համատիրության ստեղծ-

ման մասին:

- Ես գտնում եմ, որ համատիրությունը ստեղծելն արդյունավետ չի լինի: Մի վերահսկող կառույց էլ հարկավոր է համատիրության աշխատանքը հսկելու համար:
- Բազմաբնակարանային շենքերի խնդիրները տարբեր են առանձնատներում բնակվող անձանց խնդիրներից, մեզնից քչերն են բնակվում բազմաբնակարանային շենքերում, մենք առաջին սցենարի մասին որևէ կարծիք արտահայտելուց առաջ ունենք խնդիր պատկերացնելու մեզ այդ մարդկանց դերում, քանի որ շատերիս համար խնդիրն անծանոթ է:
- Առաջին խնդիրը կամավոր առաջնորդի խնդիրն է: Անհրաժեշտ է ամեն մի համայնքում ունենալ մի ակտիվ և իր ժամանակը համայանքին նվիրող անձ, ով կհամախմբի բոլորին:
- Համատիրության ղեկավարից է գալիս ինչպես կկառուցվի համատիրության և բնակչության հարաբերությունները, ինչպես մարդիկ նույնպես մասնակցություն կունենան:
- Նույն գործողությունն անում է թաղայինը, էլ ինչ կարիք կա համատիրություն ստեղծելու: Կարծում եմ դա անիմաստ ներդրում է:
- Համատիրությունը կարծում ենք լուծում է այս խնդիրների համար:
- Ողջունելի փաստ է համատիրության ստեղծումը: Փորձենք արդյունքները կստանանք:
- Եթե համատիրությունները ստեղծվեն, սեփական տների բնակչների խնդիրներով ո՞վ է զբաղվելու:

Սցենար 2. Երթևեկության անվտանգության բարելավում

- Երկրորդ սցենարում բացթողնված է հասարակական տրանսպորտի կանոնավոր գործունեության հարցը:
- Ինձ թվում է երթևեկության նշանների պակասություն չկա Աշտարակում:
- Ոչ միայն ճանապարհի խնդիր ունենք, այլև տրանսպորտի: Անգամ կանգառներ չկան: Մարդիկ չգիտեն, որտեղ սպասեն մեքենայի և որտեղից անցնեն
- Երկրորդ սցենար: Տիգրան Մեծ փողոցում կա ճանապարհային անցում, որը չի գործում:
- Ծայրամասային թաղամասերից կենտրոն գալու հնարավորություն չկա, ավելի հեշտ է այլ քաղաք գնալ:

- Աշտարակում հետիոտնին զիջելն ընդունված չի, որ վարելիս կանգնում եմ որ զիջեմ, հետևից մեքենաները ազդանշում են, բա այդ հետիոտնե-րը ինչ անեն:
- Նշագծումն ավելի կարևոր խնդիր է, քան լուսաֆորները
- Լուսաֆորներ դնելը խստացում չի, որ դրան վատ վերաբերվենք, դրանք կարգավորում են, մենք շատ կողմ ենք դրան՝ պարտադիր է:
- Գետնանցումների խնդիր կա Աշտարակում, լավ կլինի, որ այս հարցը ներառվի երկրորդ սցենարում
- Պետք է մեզնից սկսենք և օրենքով անցնենք փողոցը, հիշենք ամրագո-տիները, երթևեկության մշակույթ է ձևավորվում
- Տրանսպորտը սպասարկում է միայն կենտրոնական փողոցները, միջ-քաղաքայինի խնդիր էլ ունենք, պետք է ընտրել մի քանի տարածքներ, որոնք կսպասարկվեն
- Վարչական մարմինները պետք չէ առանձնացնել բնակիչներից

Սցենար 3. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում

- Լուսավորված են կենտրոնական փողոցները, ընդհանուր լավ է լուսավորությունը
- Միջպետական ճանապարհները գոնե պետք է լուսավորվեն:
- Փողոցներում մարդ չի մնացել, որ լուսացույցներին նայեն, անցուդարձ անող չկա
- Ամենակարևոր հիմախնդիրներից լուսավորությունն է, ճանապարհնե-րի անմխիթար վիճակը և տրանսպորտը:
- Կենտրոնական փողոցում ամբողջ գիշեր լուսավորում կա և նորմալ է ի տարբերություն ծայրամասերի
- Լուսավորության հարցը կարևոր խնդիր է Աշտարակ համայնքում
- Գոնե ամեն փողոցում պետք է գոնե մեկ լուսավորում
- Զբոսայգու տարածքը բացարձակապես լուսավորված չէ՝ չնայած գտնվում է կենտրոնական փողոցների խաչմերուկում
- Լուսավորության բացակայութան դեպքում երեկոյան ժամերին չենք կարողանում տնից դուրս գալ, զբոսնել

Սցենար 4. Փողոցներում աղբարկղերի տեղադրում

- Քաղաքապետարանը պետք է կանչի թաղի լիազորին և ճշտի ինչ հուզող հարցեր կան: Այս անելու դեպքում քաղաքապետարանը կօգնի: Խնդիրը քաղաքապետին չի հասնում: Թաղայինը պետք է գնա քաղաքապետին խնդիրներ ներկայացնի:
- Մեր փողոցում հինգ-վեց աղբարկղ կա:
- Բոլոր սցենարները մեզ անհրաժեշտ են: Անգամ խմելու ջուր չունենք: Դա էլ է կարելի սցենարների մեջ ավելացնել
- Աղբահանությունը մասամբ է կատարվում, որոշ շենքերի մոտ աղբն օրերով կուտակվում է
- Փողոցներում աղբարկղերի տեղադրումը կարևոր խնդիր է, բայց ոչ կարևորագույնը:
- Չորրորդ սցենար: Եվ պետք է աղբարկղեր տեղադրվեն, և մարդկանց ուսուցանեն:
- Չորրորդ սցենար: Կարող ենք աղբը ավելի նպատակային օգտագործել:
- Կարծում եմ, Աշտարակը ընդդիմադիր քաղաք է, դրա համար էլ բոլոր հարցերը մնում են չլուծված:
- Փողոցներոմ աղբամանները դատարկ են, իսկ կողքը տոպրակներով աղբ է դրված

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Սցենար 1. Համատիրությունների հիմնում

- Կույրերի շենքի զարգացման համամասնությունը կարել է փոխել, այդ շենքերին ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել
- Ես կարծում եմ, որ համատիրություն ստեղծելը շատ ճիշտ է: Ես ապրել եմ Կիրովականում, որտեղ համատիրությունները շատ ակտիվ աշխատում էին: Իսկ Աշտարակում դա այդպես չէ: Կարծում եմ, որ համատիրություն ստեղծելու գաղափարը ճիշտ է:
- Բնակչությունը պետք է ֆինանսական ներդրումներ կատարի, սակայն բնակիչները վճարունակ չեն:
- Կան մուտքերի, բակերի աղբահանության խնդիրներ
- Մարդկանց ֆինանսական վիճակները թույլ չեն տալիս լուծել խնդիրնե-

ը, չեն միավորվում խնդրի լուծմա շուրջ

- Թող աշխատավարձերը բարձրացնեն, որպեսզի կարողանա բնակիչը գումար ներդնել:
- Պետական միջոցներն այս պահին համատիրություն ստեղծելու վրա ծախսելը կարծում եմ անիմաստ է, քանի որ չեմ հավատում, որ դա կարդարացվի: Ես ապրում եմ բազմաբնակարան շենքում և ոչ մի հարց միահամուռ կերպով չի լուծվում: Ինչ պիտի փոխվի համատիրություն ստեղծելուց հետո:
- Եթե համատիրության ղեկավարը գումար ստանա, ապա ավելի սրտացավ կմոտենա հարցին:
- Առաջին հարկի ապրողը չի մտածում որ պետք է վճարեն բոլորի համար, այլ ոչ միայն իր համար
- Համատիրությունը չի կարող ճիշտ որոշել, թե ինչպես ծախսել գումարը՝ կառաջանա հակասություն, օրինակ՝ վերևի հարկերում բնակվողների համար առաջնային է վերելակի հարցը, իսկ ներքևում ապրողների համար՝ կոյուղին, ու՞մ շահերն են առաջնային, ո՞րը պետք է լուծվի, մեխանիզմ չկա
- Ամենակարևորը մարդկանց մտածելակերպի փոփոխումն է: Մենք պետք է պահանջենք, որ մեր հարկերը նպատակային ծառայեն:
- Այս սցենարի քննարկումն անիմաստ է, քանի որ բնակիչը վճարունակ չէ: Եթե չի կարողանալու վճարել, հիմա ինչու ժամանակ ծախսենք ու անիմաստ քննարկենք
- Մարդիկ վճարունակ չեն, աշխատանք չունեն, որ վճարումներ կատարեն: Մեծ մասշտաբի գործեր չեն արվում, պետական աջակցություն է անհրաժեշտ:
- Մենք վստահություն չունենք, որ համատիրությունը ինչ-որ բան կփոխի, քանի որ մինչ այսօր ոչ մի լումա քաղաքապետարանը չի ներդրել ծայրամասային փողոցները բարեկարգելու համար
- Մարդիկ մեկ, երկու տալիս են վարձերը, տեսնում են մյուսները չեն տալիս, իրենք էլ են սկսում չվճարել: Դրա համար էլ պարտքեր են կուտակվել:
- Միգուցե մեխանիզմը աշխատի, բայց որքանով. դա հայտնի չէ: Ժողովուրդն այսօր վճարունակ չէ, ինչպես պիտի համատիրությունն իրականացնի խնդիրների լուծումը: Առաջին հերթին պետք է մարդկանց վճարունակության մասին մտածել:

- Մասնակիցներից մեկը նշում է, որ շենքում ինքը կատարել է բավականին վերանորոգումներ իր գումարով, սակայն նշում է ինչքան է ինքը միայնակ հոգալու այդ խնդիրները, եթե ոչ մեկ չի ցանկանում օգնել
- Բնակիչը վճարունակ չի, ապա գումարը որտեղից է հավաքվելու, որպեսզի քաղաքապետարանն էլ ըստ այդմ գումար ավելացնի: Այս առումով օդում ծրագիր է կազմվում: Բնակիչների 90% աղքատ է և վճարումներ չի կարող կատարել:
- Ենթադրենք ես ունեմ հազար բնակիչ և շատ լավ համագործակցում եմ նրանց հետ: Բայց ինչպես լուծեմ ես այդ խնդիրները, եթե մարդիկ վճարունակ չեն: Ինչ տարբերություն բաժին թե համատիրություն: Կարևորը կարողանանք հարցերը լուծել:
- Համատիրության ստեղծումը ռեալ չէ
- Մեծ դեր պետք է կատարեն մեծահարուստներն ու բարերարները: Նրանք պետք է ավելի գումար ներդնեն, քան հասարակ բնակիչները: Հասարակ բնակիչն այսօր գնում է արտերկիր գումար վաստակելու համար, նա ինչպես մի հատ էլ համատիրության համար գումար վճարի:
- Բնակիչների վճարումից հետո էլ այդ խնդիրները չեն լուծվի ամբողջապես
- Շատ կարևոր է աշխատող համատիրության մոդել ստեղծել, որ մարդիկ էլ հասկանան, որ դա անհրաժեշտ կառույց է, դրանից հետո վճարումներ էլ նորմալ կանեն: Կարևոր է, որ սկզբում լավ աշխատի համատիրությունը:
- Խնդիրները շատ են, որոնք մեծ գումարներ են պահանջում՝ սկսած տանիքների վերանորոգումից
- Եթե համատիրություն լինի, և կուտակված գումարի 50%-ի չափով քաղաքապետարանը տրամադրի, ապա դա լավ կլինի, սակայն մտավախություն ունենք, որ կոռուպցիոն խնդիրներ կառաջանան և գումարը մասամբ կօգտագործվի:
- Համատիրությունների հարցում ամենաառաջին խնդիրը վստահության պակասն է, բողոքում են, որ մեր բնակիչները չեն վճարում գումարները, բայց ինչի համար վճարեն, եթե ոչ մի աշխատանք կատարված միևնույն է չեն տեսնում, վստահություն չկա, որ մեր դրած գումարը կհասնի նպատակին. հարցի հնարավոր լուծում կլինի, եթե քաղաքապետարանը կատարի յուրաքանչյուր գործում ներդրման առաջին մասը
- Հիմա շենքեր կան, որ շատ վատ վիճակում են, ժեկին են դիմում, ոչ մի արդյունք, քաղաքապետը ոչ մի բան չի անում, մեզ պետք է աշխատող համատիրություն, սակայն դրա փորձ Աշտարակում չկա:

- Բնակիչը կիմանա ում դիմի: Օրինակ աղբը չի տարվել, բնակիչը կիմանա ում դիմել:
- Պետք է խնդիրները լուծվեն կառավարությունում, աշխատավարձ բարձրացնեն, հետո նոր գան ասեն ինչու չեք հատկացումներ անում և խնդիրները լուծում
- Մենք ունենք Բարեկարգում օղակ, որը կատարում է այսօր նույն ֆունկցիաները: Ինչ իմաստ ունի ստեղծել համատիրություն: Այսօր կա ֆինանսական խնդիր. եթե այն լուծվի, մնացած բոլոր հարցերն էլ կլուծվեն:
- Նախընտրելին համատիրությունն է, սակայն լսել ենք, որ այդ կուտակված գումարները ոչ նպատակային են կիրառվել, մենք մտավախություն ունենք, որ այստեղ էլ այդպես կլինի:
- Բա ասենք, եթե բնակիչներից մեկը եկել է գյուղից ու բնակվում է վարձով, ու մենք համատիրությունով մի բան ենք որոշում, իսկ ինքն ասում է, որ տունն իրենը չէ ու ինքը չի կարող հարցերի լուծմանը մասնակցել, բա այդ ժամանակ համատիրությունն ինչ պիտի անի:
- Ամեն ինչ հին է, պետք է կատարվի ամբողջական վերանորգում
- Շենքի վերականգնման համար բազմիցս դիմել ենք քաղաքապետարանին, պատասխան չի եղել, մինչև հովանավոր եկավ և վերանորոգեց:

Սցենար 2. Երթևեկության անվտանգության բարելավում

- Եթե բնակիչների ներկայիս պարտքերը ժամանակավորապես սառեցվեն, առաջին ներդրումներն էլ անի քաղաքապետարանը, պայմանը ստեղծեն ու բնակիչը արդեն հստակ տեսնի փոփոխությունը համատիրության համար էլ կվճարի, ցանկացած այլ ծառայության համար էլ, իր պարտքն էլ հետագայում կմարի:
- Երթևեկության խնդիրների լուծումը Աշտարակում առաջնահերթ խնդիր է: Ես կողմ եմ, որ պետությունը գումար հատկացնի այս խնդիրների լուծմանը: Ամբողջ Աշտարակում կա մեկ լուսակիր: Իսկ դա շատ մեծ խնդիր է:
- Հատկապես դպրոցների մոտ լուսակիրների տեղադրումը, ցուցանակները և նշագծերը շատ ակտուալ են: Աշտարակում այսօր բարվոք ապրելու համար ոչ մի պայման չկա: Միանշանակ, ներդրումներ են հարկավոր:
- Ճանապարհային ոստիկանները մեր ճանապարհները կարգավորում են ինչպես իրենց այդ պահին հարմար է, նույն խաչմերուկը մեկ հավա-

սարազոր են համարում, մեկ ոչ, տուգանում են ենթադրյալ հոծ գիծը խախտելու համար. նշանների առկայությունը շատ կարևոր է:

- Եթե երթևեկության կանոնները նշագրվեն, երեխաներին դասավանդեն այդ նշանները, հսկողություն կատարվի պետավտոտեսուչների կողմից ապա բոլորի հոգսը կպակասի:
- Քաղաքապետարանը կանչում է վարորդին ասում երեք անգամ պետք է մտնես, վերևից ստիպում են վարորդին փող մուծեն իրենց մենակ, ուրիշ ոչ մի բանի մասին չեն մտածում, վարորդ էլ մինչև վերջին շունչը մարդ է վերցնում:
- Ավելի արդյունավետ կլինի, եթե համատիրություններից յուրաքանչյուրն առանջին բյուջե ստեղծեն

Սցենար 3. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում

- Լուսացույցերն ավելորդ ծախս են:
- Քաղաքային տրանսպորտը շատ փոքր տարածքում է երթևեկում, պետք է ընդլայնվի քաղաքային տրանսպորտի երթևեկության շառավիղը: Եթե ծայրամասի բնակիչը ցանկանում է գնալ Երևան, ապա նա ոտքով պետք է գա հասնի ավտոկանգառ:
- Երրորդ սցենար: Քաղաքապետարանը չունի համապատասխան միջոցներ տեխնիկա գնելու և սպասարկելու համար:
- Եթե օրենքը բոլորի համար գործի, մարդ իր գրպանից վճարի, ապա լուսաֆորների միտքն ընդունելի կլինի:
- Երբ ասում ենք ճանապարհային խնդիրների կարգավորում, այստեղ պետք է ներառենք նաև քաղաքային տրանսպորտի կանոնակարգումը, մենք ունենք շատ մեծ թաղամասեր, որտեղ ոչ մի հասարակական տրանսպորտ չի գնում, մարդիկ չեն կարող հո միշտ տաքսիով շրջել:
- Այն փողոցներում, որտեղ չկա լուսավորություն կան խանութներ, սակայն անհարմարություն է առաջացնում օգտվելը:
- Եթե երկու աշտարակցի ուզում են հանդիպել գնում են Երևանում են հանդիպում, որովհետև այստեղ ոչ տեղ կա գնալու, ոչ էլ լույս կա, որ կարողանան ուղղակի զբոսնել:
- Մայթերը շատ վատ վիճակում են: Եթե մայթի վրա կա խանութ ապա այդ մասը վերանորոգված է, սակայն մի քիչ քայլում ես լրիվ անհարմար է դառնում:

Սցենար 4. Փողոցներում աղբարկղերի տեղադրում

- Աշտարակը քնած քաղաք է, բայց այսպես պետք է չլիներ, սա քաղաք է ոչ թե գյուղ: Մենք ունեինք կինո, կարուսել, այսօր ոչինչ չկա: Նույնիսկ կանաչ գոտի չկա:
- Իրականում խնդիրները Աշտարակում շատ են. կյանքը միայն կենտրոնի համար է որոշ չափով: Չկա լուսավորություն, բարեկարգ փողոցներ, բակերը լիքն են թափառող շները...Մի խոսքով խնդիրներն իսկապես շատ են:
- Լուսավորությունը այնքան էլ առաջնային չի, մենք ջուր չունենք, մանկապարտեզներում, դպրոցներում, բնակարաններում ջրամատակարարաում չկա:
- Լուսավորության խնդիրը կարևոր է նաև երթևեկության համար, վարելիս չես տեսնում, որտեղ կա փոս, որ շրջանցես, գալիս ընկնում ես մեջը: մի շարք փողոցներում լույսերը տեղադրված են, բայց չեն աշխատում, մյուսներում՝ առհասարակ տեղադրված չեն:
- Տրանսպորտի վիճակը շատ վատ է, քառասուն րոպե սպասում ենք, վեցից հետո տրանսպորտ չկա, իսկ աշխատանքը վեցին ենք ավարտում:
- Ամենամեծ խնդիրը աշխատավարձն է: Եթե բարձրացնեն, ապա մարդիկ նորմալ հարկեր կվճարեն, որից էլ հետո ծախսերը կանեն մեր համար էլի:
- Լուսավորության և շների խնդիրները իրար հետ կապված չեն: Երբ որ լուսավորություն լինի, փողոցները մաքուր, ապա շների թիվն էլ այսքան չի լինի:
- Չորրորդ սցենար: Բնակչությունը տեղյակ չէ, թե ինչ գումարներ են ծախսվում աղբահանության վրա:
- Եթե լուսավորությունը թանկ է սպասարկելը, կարող են էներգախնայող լամպեր տեղադրել և ավելի մատչելի կլինի:
- Չորրորդ սցենար: Փոքր աղբարկղեր տեղադրելու փոխարեն, ավելի լավ է ձեռք բերել նոր մեքենաներ:
- Կարծում եմ, որ նշված գումարի սահմաններում հնարավոր չէ իրականացնել ամբողջ քաղաքի լուսավորությունը, բայց գոնե մի տեղաշարժ կլինի: Պետք է պարզապես հետևողական լինել և իսկապես ներդրումներ անել քաղաքը բարեկարգելու համար:
- Չորրորդ սցենար: Համայնքի նոր ղեկավարները հեռացնում են նախկին ղեկավարների տեղադրված աղբամանները, տեղադրում են նորը,

որպեսզի բյուջեից նոր հատկացումներ անեն: Որտեղ են նախկինում տեղադրված աղբարկղերը:

- Սովխոզի տարածքի բնակիչները չեն վճարում և մեքենան այդ տարածք չի մտնում, որ աղբը հավաքի:
- Կարելի է տեսախցիկներ դնել, ու փողոցում աղբ թափողներին տուգանել: Մի հատ էլ յութուբ գցել այդ մարդուն, կդաստիարակվի:
- Բնակիչը բերում է աղբը թափում է աղբարկղի կողքը, կափարիչը չի բացում և հետո ասում է իմ աղբը չեք հավաքում և դրա համար չեմ վճարում:
- Մինչ պահանջել, որ մարդկանց տուգանենք աղտոտելու համար, պետք է պարտադիր նախ բնակչին ապահովես պայմաններով, ասել աղբը մի նետիր գետնին, նետիր աղբարկղում այն դեպքում, երբ ամբողջ ճանապարհին մի հատ աղբարկղ չկա չի կարելի:
- Մենք մի հոյակապ շուկա ունեինք այստեղ, սակայն հիմա այն վերածվել է մարզային աղբանոցի, շներն ու «բուրմունքն» անպակաս են: Թող այդ տարածքը մաքրեն, մենք էլ կօգնենք, թող մաքրեն, այգի սարքեն, խաղահրապարակ երեխաների համար:
- Մուղնիում աղբարկղերի շուրջ բետոնապատում իրականացված է, սակայն միևնույն է կեղտոտ է, որովհետև աղբահանման մեքենան այնքան ուշ-ուշ է գալիս, որ աղբը չի տեղավորում, պետք է ոչ թե բետոնապատել, այլ ճիշտ կազմակերպել աղբահանումը:
- Չորրորդ սցենար: պետք է նշանակել տեսուչների, ովքեր կտուգանեն աղբը թափելու համար:
- Պետք է մեքենաներ բերեն, աղբարկղները ճիշտ տեղադրվեն, վարչական իրավախախտումների օրենքում էլ փոփոխություն արվի, որ մարդիկ տուգանքի վախից դրսում աղբ չթափեն:
- Երթևեկության անվտանգության վերաբերյալ մի լրացում, կարելի է դպրոցներին տրանսպորտ հատկացնել, որ երեխաներին գա տանի, տուն բերի, կարծում եմ բոլոր ծնողներն էլ կհամաձայնեն:
- Թող կառավարությունը ամեն քաղաքի երկու կամ երեք մեքենա հատկացնի նոր, որ նորմալ կատարվի աղբահանությունը, բնակիչը ի վիճակի չէ հոգալ այդ ծախսերը:
- Անհրաժեշտ է մշակել հատուկ մեխանիզմ, կոնկրետ ժամեր երբ են աղբահանում անել, երբ մարդիկ տեսնեն, որ ըստ գրաֆիկի է ամեն բան տեղի ունենում, կսկսեն վճարել:

- Հինգերորդ սցենար: Թող հին այգին վերականգնվի մաս-մաս, սկզբից թող խաղահրապարակը կառուցեն, հետո ծառեր տնկեն:
- Պետք է տուգանք սահմանել աղբը գետնին թափելու համար:
- Այսօր կան մարդիկ, որ նույնիսկ աղբարկղներն էլ են գողանում: Դա ահավոր է:
- Աշտարակում մեքենա չկա, աղբարկղները սխալ տեղերում են դրված:
- Չորրորդ սցենար: Խնդիրը ոչ թե համայնքի աղբահանության մակարդակի բարձրացումն է, այլ կենտրոնական փողոցներում փոքր աղբամանների տեղադրումն է:
- Չի բավարարում աղբահանության տեխնիկան, այս սակավ ռեսուրսով ծառայությունը չի կարող նորմալ կատարվել:
- Քաղաքապետը ասում է, որ պետք է մեքենա բերեն, բան չեն անում: Եթե համատիրություն ունենանք , գուցե աղբահանությունն էլ կարգավորենք:
- Ունենք ընդամենը երեք մեքենա, որոնք անընդհատ վերանորոգման կարիք ունեն և նորմալ չեն գործառնում:
- Աղբի մեքենան ավելի կարևոր և անհրաժեշտ է, քան աղբարկղերի քանակը

Սցենար 5. Խաղահրապարակների կառուցում

- Ոչ մի տեղ խաղահրապարակներ չկան, Ջինիշյան հիմնադրամը ստեղծեց, սակայն չվերահսկվեց և վատթարացավ, պետք է մեկը անպայման հսկի, դրանից ո՞վ է օգտվում, մեծերը, թե՞ երեխաները:
- Հինգերորդ սցենար: Ընտանիքս առաջարկում էր իրենք տրամադրեն տնկիներ կանաչապատման ծրագրի համար, բայց արձագանք չկա, քանի որ անձնական եկամտի ակնկալիք չկա:
- Ես համաձայն եմ ժողովրդի միջոցներով կառուցենք խաղահրապարակ, սակայն դա անհնար է, չի աշխատի: Դա պետք է արվի, բայց այսպիսի աշխատավարձով բնակիչն ի վիճակի չի դա անել:
- Սցենարներում շատ լավ ամեն ինչ շարադրված է, բայց իրականացման համար պետք են թե ներդրումներ, թե կամքի ուժ: Մենք արդեն չենք հավատում, որ այդ խնդիրներ կլուծվեն:
- Մարդիկ անվճարունակ են և այն դեպքում, երբ կա տունը երկու երեք երեխա ապա սա դառնում է շատ ավելի դժվար, մարդ չգիտի ոնց իր երեխաներին պահի և չի կարա գումար հատկացնի խաղահրապարակի համար:

- Մի քանի խաղահրապարակ կառուցելը ավելի շատ վնաս կտա, քան օգուտ, քանի որ ոչ բոլոր բակերում են կառուցվելու, մյուս բակի բնակիչ-ները ավելի դժգոհ կլինի, քան հիմա:
- Հինգերորդ սցենար: Ես կողմ եմ մեծ համալիրի կառուցմանը, քան առանձին փոքր խաղահրապարակների:
- Շատ քիչ է հինգ միլիոնը խաղահրապարակների համար: Մեկը հազիվ դրանով սարքեն:
- Եթե այգին ծառայելու է հասարակության համար, ապա մի մասը պաղ-պաղակ է գնելու, իսկ մնացածն էլ չկարողանալով երեխաների համար պաղպաղակ կամ այլ բան գնել, չեն տանի երեխաներին այնտեղ, պետք է զերծ մնալ սննդի կետերից:
- Համատիրություն որ ստեղծվի և ակտիվ լինի, բնակիչներն էլ կնախա-ձեռնեն ու կստեղծեն: Գիտավանում ամեն ընտանիք հազար դրամ է դրել ու խաղահրապարակ ենք ստեղծել: Երեխաներ էլ ավելի պատաս-խանատուն կլինեն, չեն փչացնի:
- Ինչու ամեն շաբաթ ծախս անենք գանք Երևան, եթե այդ պայմանները կարող ենք ունենալ այստեղ:
- Այսօր մեր երեխաների համար որևէ հանգիստ կազմակերպելու համար մենք ստիպված ենք լինում Երևան հասնել: Բայց դա բոլորի համար հա-սանելի չեն: Պետք է անպայման մտածել Աշտարակում բնակվող երե-խաների համար խաղահրապարակներ և այգիներ կառուցելու գործում: Իհարկե դրա համար մեծ ներդրումներ են հարկավոր: Բայց կարելի սկսել նաև փոքրից: Ցանկացած ներդրում կարևոր կլինի մեր քաղաքի համար:
- հինգ միլիոնը խաղահրապարակի համար բյուջեից հատկացնելը քիչ է և գործը կիսատ կմնա, պետությունն է սնում ամեն ինչ և պետությունն էլ պետք է հատկացում անի:
- Քաղաքապետարանը պետք է գումար հատկացնի խաղահրապարա-կի վերանորոգման, համալրման, բարեկարգման համար: Քաղաքա-պետարանը եթե չի կարողանում անի, ապա պետք է ինչ-որ կառույցի հանձնի, որպեսզի այդ կառույցները զբաղվեն այդ խնդիրներով:
- Խաղահրապարակի կառուցումը ձախ ափի բնակիչներին ձեռնտու չէ, միջքաղաքային տրանսպորտի խնդիր կա, հիմնականում ոտքով պետք է գան:
- Առաջարկներից կան ավելի հրատապ խնդիրներ: Օրինակ զվարճանքի կենտրոններ, հանգստի վայրեր բացակայությունը, մեծ էկրանին ֆիլմ

նայելու համար գնում ենք Երևան, նրբանցքների ասֆալտապատման և լուսավորության խնդիրը, հոսքագծի՝ կանալիզացիայի խնդիրը:

- Խաղահրապարակները թող կառուցվեն բանուկ հատվածներում:
- Աշտարակը ունի երկու երեք մաս և եթե մեկում կառուցվի խաղահրապարակ մյուսում չկառուցի, ապա կդառնա կռվախնձոր, այսինքն պետք է կառուցել երկուսի համար էլ:
- Առաջարկներից կան ավելի հրատապ խնդիրներ՝ համաքաղաքային տրանսպորտի բարելավում, ավելի շատ փողոցների ընդգրկում:
- Պետք է գումար տալ դպրոցներին, մանկապարտեզներին, միջոցներ չունեն, պայմաններ չունեն դպրոցները: Պետք է դրանք զարգացնեն:
- Առաջարկում ենք քաղաքապետարանին խաղահրապարակ կառուցել այն բակերում, որտեղ որպես նախապայման կստեղծվեն համատիրություններ:

Անվտանգություն

Սցենար 2. Երթևեկության անվտանգության բարելավում

- Աշտարակի երևանյան փողոցի հատվածում սարսափելի վթարային խաչմերուկ է: Ամեն օր մի դեպք է գրանցվում, հաճախ են մահվան ելքով դեպքերը: Հարկավոր է լուծել այդ խնդիրը:
- Դա պարտավոր են կատարել, դա քննարկման կարիք չունի: Լուսաֆորները անպայման պետք է լինեն: Տիգրան Մեծի փողոցը շատ վտանգավոր է, դիմացը դպրոց տանող ճանապարհ է ու միշտ վթարներ են լինում:
- Երկրորդ սցենարի իրագործումը շատ կարևոր եմ համարում, քանի որ վտանգավոր ճանապարհները մեր քաղաքում շատ են: Չկան լուսակիրներ, չկան նշագծեր: Անընդհատ զոհեր են լինում: Քանի տարի է այս վտանգավոր իրավիճակը մեր քաղաքում:
- Բայց համատիրությունն էլ այդ մեծ խնդիրները չի կարող լուծել, կլուծի միջին կամ փոքր խնդիրներ, ամեն դեպքում պետք է հաշվի նստեն ժողովրդի հետ, կառավարությունը պետք է վաստակի ժողովրդի վստահությունը:
- Եթե համեմատենք Երևանի հետ, այստեղ ոչ մի կարգավորում չկա երթևեկության, Երևանում լուսակիրներ, գծանիշերը արդեն մարդկանց

մոտ մշակույթ են ստեղծել կանոնները պահելու, իսկ այստեղ ոչ զեբր կա, ոչ էլ վարորդներն են զիջում:

- Մարդիկ չգիտեն փողոցը ոնց անցնեն և ինչ անեն: Դպրոց մոտենալը շատ վտանգավոր է:
- Երեխաների համար շատ ենք անհանգստանում, դպրոցից մենք պետք է գնանք բերենք, որ հանգիստ լինենք երեխաների համար:
- Լուսաֆորները պետք է հիմնական խաչմերուկներում տեղադրել: Սակայն միայն դրանով խնդիրը չի կարգավորվի. ճանապարհները պետք է վերանորոգեն:
- Աշտարակում ձևավորվեց ավագ դպրոց, սակայն երեխաները չեն գալիս ավագ դպրոց հենց այս ճանապարհների և տրանսպորտի պատճառով: Դպրոցին հարակից տարածքում երեխաները իսկապես վտանգված են, քանի որ չկա ոչ մի նշան և վարորդները շատ արագ են վարում:
- Լուսացույցերի տեղադրումը բոլորի համար կարևոր է, որովհետև այդ նույն վարորդը վաղը հետիոտն է, հետիոտնը վարորդ և այլն: Վերջ ի վերջո երեխաները անվտանգ կանցնեն, մարդիկ կիմանան որտեղից անցնեն, որպեսզի անվտանգ լինի:
- Երևանից եկող ճանապարհի վրա մի կողմից մյուսը անցնելու համար գծանշումներ չկան, չենք կարողանում փողոցի մյուս կողմն անցնել:
- Կարելի է մանկապարտեզի և դպրոցի մոտ բարձր ասֆալտներ սարքել, որպեսզի մեքենաները դանդաղ վարեն:
- Ավելի լավա ոստիկանությունը մտածի գծանիշերի մասին, իսկ քաղաքացիները՝ մայթերի մասին: Ոստիկաններին խնդրում ենք, որ հսկի երթևեկությունը երեխաների դասից գալու ժամանակ, դա էլ չեն անում, երբ դա հենց իրենց պարտականությունն է:
- Դպրոցին հարակից տարածքում չկան անցումներ և երեխաները դպրոց են գնում փողոցի մեջտեղով:
- Շուկա տանող ճանապարհը նույնպես վատն է չկան լուսակիրներ, անցումներ, անընդհատ վթարներ են տեղի ունենում:
- Տրանսպորտ չկա, դպրոցն էլ հեռու է, ոտքի ճանապարհ չի, ամեն օր երեխաներին տաքսիով ենք դասի տանում, թող տրանսպորտի հացն էլ լուծեն, ինչ-որ մեկը սեփականացրել է:
- Ես մանկապարտեզի տնօրեն եմ, մեր մանկապարտեզի դիմաց անցման նշանը գծված է, բայց ծնողները երեխաներին բերում են, ու քսան րոպե չեն կրողանում փողոցն անցնեն, որ մտնեն շենք, նշանն էլ կա,

բայց վարորդը վարելու շնորք չունի, գոնե նման վայրերում պետք է սեղմովի նշան լինի, սեղմես, մեքենաները կանգնեն, ու անցնեն:

- Վ. Պետրոսյան փողոցում չկան լուսակիրներ, միշտ մեքենաների վթար է լինում: Շտապ օգնության մեքենան չի կարողանում քաղաքի ավտոմեքենաների միջով անցնի և շուտ տեղ հասնի:
- Պետք է անցումների մոտ ոստիկաններ կանգնացնեն, որպեսզի մարդիկ միայն անցումներով անցնեն և սովորեն ճիշտ անցնելու վայրերը: Մեկ ամսում արդեն կսկսեն օգտվել անցումներից և երթևեկությունը առավել անվտանգ և ապահով կլինի:
- Գծանիշերը կոսմետիկ հարցեր են: Նախ պետք է տրանսպորտը կարգավորեն, ճանապարհները բարեկարգեն: Հիմա անվտանգության հարց կա հենց դրանց հետ կապված: Մարդիկ ոնց որ արժանազրկվեն տրանսպորտում “խցկվելուց”:
- Թարթող լուսակիներն անիմաստ են: Հարկավոր են նորմալ լուսակիրներ, որպեսզի ճանապարհային երթևեկության տարրական կանոնները պահպանվեն:
- Այս հարցի լուծումը շատ կարևոր է աշտարակցու համար, քանի որ տարրական դասարանի երեխաներին դպրոց են բերում մայրերը: Եթե անցումներ լինեն և լինի ապահով, ապա երեխան կարող է ինքն էլ դպրոց գնալ:
- Տրանսպորտի բացակայության պատճառով ձմռան ցրտին երեխայիս երկու կիլոմետր քայլելով բերում եմ մանկապարտեզ - երկրորդ սցենար:
- Չկան գծված հետիոտնի ճանապարհ: Չգիտես որտեղով փողոց անցնել, որպեսզի մեքենայի տակ չընկնես:
- Վարդգես Պետրոսյան փողոցով հնարավոր չէ անցնել, կանգառներ չկան, բոլոր գործող պետական հիմնարկներն այդ փողոցի վրա են:

Սցենար 3. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում

- Անվտանգությունն Աշտարակում միայն լուսակիրներով էլ չի լուծվի: Մանկապարտեզի մոտ հոսում է առու, որը ոչ ի ձևով ապահովված չէ: Պարբերաբար առվում զոհեր են լինում: Գոնե ինչ-որ կերպ փակեն այդ հատվածը:
- Լուսավորությունը շատ կարևոր է, բայց մարդիկ երեկոյան ժամերին դուրս չեն գալիս, որովհետև թափառող շներն են շատ: Մարդիկ վախենում են դուրս գալ: Որքան էլ լուսավորես, շները այդ լույսից չեն փախչի:

Շատ վտանգավոր է զբոսնել:

- Հիմա միայն կենտրոնական փողոցներ են լուսավորված, մյուս փողոցներով չենք կարողանում քայլել, համ երթևեկությունն է վտանգավոր, համ էլ թափառող շներ կան:
- Աշտարակում լուսավորությունը նույնպես անտերության է մատնված: Լուսավորված են մի այն կենտրոնական մի քանի փողոցներ: Ժամը տասներկուսից հետո փողոց դուրս գալը շատ վտանգավոր է: Իսկ մինչև այդ գոնե լուսավորվեն մյուս փողոցներն էլ: Դա շատ կարևոր է նաև երթևեկության համար, քանի որ փողոցներում շատ են շները: Իսկ երբ լուսավորություն չկա, վթարներն անխուսափելի են:
- Լուսավորությունը կարգավորելու դեպքում շների առկայության և նրանց հանդեպ վախը կնվազի, քանի որ կնկատենք նրանց և կզգուշանանք:
- Լուսավորությունը կարևոր է, բայց մայթ պետք է լինի, որ մարդիկ այդ լույսի ներքո կարողանան զբոսնեն:
- Աշտարակում օրերը կարճ են: Հենց մութն ընկնում է բոլորը մտնում են տուն և դռները փակում: Մթության մեջ մութ գործերը շատ են լինում: Եթե լույս լինի հանցագործությունները կնվազեն:
- Ժամը տասներկուսից հետո Աշտարակն ընկղմվում է խավարի մեջ: Բոլոր տեսակի ընտրությունների ժամանակ մենք պարբերաբար բարձրացնում ենք այս հարցերը Սակայն մեզ միայն խոստումներ են տալիս, որոնք երբեք իրականություն չեն դառնում:
- Լուսավորությունը կարևոր է հատկապես ձմռան ամիսներին, վեցին արդեն մութ է: Թափառող շներ են շատ, աղբակույտեր, փոսեր, տուն հասնելն էլ է վտանգավոր:
- Շների հարցը լուրջ է, պետք է շներին հավաքեն և “ստերիլիզացնեն”, որպեսզի չտարածվեն, չբազմանան: Իսկ հիվանդ շներին վերացնել:
- Ընդամենը հիսուն տոկոսն է լուսավորված և ժամը տասներկուսից հետո անջատվում են և լրիվ մութ է:

Սցենար 4. Փողոցներում աղբարկղերի տեղադրում

- Գիշերը շները հարձակվում են մարդկանց վրա: Վտանգավոր է գիշերը տանից դուրս գալ: Երեկոյան բնակիչները նույնիսկ վախենում են շքամուտք մտնել:
- Աղջիկները դասից տուն գնալու համար զանգում են մարդ են կանչում, որ իրենց տուն տանեն, վախենում են:
- Աշտարակում մեքենաների կայանատեղեր չկան՝ ոչ վճարովի, ոչ

անվճար:

- Ես կարծում եմ, որ մինչև գոնե կեսգիշեր պետք է լուսավորվեն պարտադիր բոլոր փողոցները: Իսկ շների հարցով պետք է զբաղվեն հատուկ մարմինները: Աղբարկղերի կողքով անցնել չի լինի: Դա շատ վտանգավոր է , անգամ կյանքի և մահվան խնդիր կարելի է համարել:
- Երիտասարդ աղջիկները տանից չեն էլ կարողանում դուրս գան, եթե կենտրոնական փողոց էլ չի, ուրեմն տանից կարող ենք դուրս գալ միայն ֆանարիկներով, բայց դա թափառական շների հարցը չի լուծում, սպանելն էլ չի օգնում, մեկին սպանում ես, հաջորդ օրը ուրիշն է գալիս:
- Լուսավորության և շների խնդիրները իրար հետ կապված չեն: Երբ որ լուսավորություն լինի, փողցները մաքուր, ապա շների թիվն էլ այսքան չի լինի:
- Դպրոցի բակում են դրել աղբամանները, աղբը կուտակվում է, շներ են հավաքվում, քանդում, երեխաների համար հակահիգենիկ է ու վտանգավոր: Երեխաները դրանց կողքով են անցնում:
- Թող լույս լինի, որ երիտասարդները դուրս գան մարդու դեմք տեսնեն, ոչ թե պադվալներում հավաքվեն Աստված գիտի ում հետ, որ հանցագործ մեծանան:
- Մուղնին Աշտարակի թաղամաս է, մեզ մոտ էլ շատ ուսանողներ են բնակվում, սակայն կապը Աշտարակից կտրված է, քանի որ երեկոյան ժամերին Մուղնի գալ անհնար է, շուրջդ ոչինչ չես տեսնում, խնդրում եմ նշեք, որ լոսավորելիս Մուղնին էլ չմոռանան:
- Քաղաքի տրանսպորտի և լոսավորության մեջ մեծ կապ կա, քանի որ տրանսպորտները գլխավոր փողոցներով են երթևեկում, իսկ մենք ստիպված ենք լինում մթով քայլել շների հանդեպ վախով, որպեսզի մեր բնակարաններին հասնենք: Լուսավորության հարցը լուծելը շատ կարևոր է, նաև տրանսպորտի հարցը պետք է լուծել:
- Ձմռանը, եթե բնակարանում հաց չի լինում, պետք է սոված մնանք, քանի որ շներից վախենում ենք և փողոցներն էլ բավարար լուսավորված չեն:
- Կենտրոնական այգու տարածքը հատում ենք ճանապարհը կրճատելու նպատակով, իսկ այդ տարածքը լուսավորված չէ, հարբեցողների հավաքատեղի է, շատ վտանգավոր է հատկապես երեխաների համար
- Մենք խնդրել ենք, որ մեզ մոտ աղբարկղ չդնեն, որովհետև շների հավաքատեղի է դառնում: Մեքենա է գալիս, մարդիկ գիտեն ժամը քանիսին է մոտենում և գցում մեքենան: Սակայն մեքենան պետք է հաճախ

գա և սահմանված ժամանակով:

- Ավելի լավ կլինի աղբամանները մետաղից լինի, որ ծխախոտից չայրվեն:
- Այո՛, Այս հարցը կապ ունի կանանց հետ, քանի որ կինն է երեխային դաստիարակում, որ երեխան իմանա թե ինչպես պետք է աղբը թափի, եթե նա տեսնում թե մեծն ինչպես է դնում աղբամանի կողքն ու գնում, նույնն էլ սովորում է: Սակայն միաժամանակ պետք է նշեմ, որ այդ նույն աղբամանների մոտ ապրում են հսկայական շներ, որոնցից նույնիսկ մեծահասակներն են վախենում:

Սցենար 5. Խաղահրապարակների կառուցում

- Եղել է տարածք, որտեղ մարդիկ ցանկացել են խաղահրապարակ կառուցեն, հետո մեկը հայտնվել է և նշել, որ դա իր սեփական տարածքն է: Բոլոր վայրերը վաճառված են, խաղահրապարակի տեղ չկա: Ամեն թիզ հող վաճառել են ու շատերն էլ գնել են և ամայի թողել: Տարածքները ամայի են մնացել և օձի բների վերածվել:
- Առաջարկներից կան ավելի հրատապ խնդիրներ՝ Քասախ գետի մաքրության խնդիրը, կոյուղագծերի հարցերի լուծում, քանի որ մարդիկ իրենց տներիմ մոտակայքում փոս են փորում, և մի քան տարի կոյուղաջրերը լցվում են այդ փոսերը: մայթեր չունենալու հետևանքով ավելանում է վթարների քանակը:
- Աշտարակում կար մի խաղահրապարակ, որն արդեն քարուքանդ է եղել:Պետք էկառուցել մի քանիսը, որպեսի ամբողջ քաղաքն այդտեղ չկենտրոնանա: Այսօր Այդ խաղահրապարակը խիստ վերանորոգման կարիք ունի: Ստացվում է, որ ամբողջ Աշտարակում այսօր մի նորմալ խաղահրապարակ էլ չկա:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Սցենար 1. Համատիրությունների հիմնում

- Ամեն մեկը պետք է իր մաքրությունը անի, բացի այդ կան ընդհանուր խնդիրներ, որոնք պետք է բոլորի կողմից լուծվեն, պետությունը պետք է լուծի այս խնդիրները:

Սցենար 2. Երթևեկության անվտանգության բարելավում

- Ես երեխայիս գետնանցում մտնել չեմ թողնում, որովհետև ոնց որ հասարակական զուգարան լինի: Ահավոր կեղտոտ է:

- Լավ կլինի գետնանցումները հասարակական զուգարան չդարձնեն: Միշտ պետք է մաքուր պահել և լուսավոր, որ մարդիկ կարողանան օգտագործեն:
- Ընդունենք, որ բոլորս էլ տեր ենք, բայց մեր գիտակցության մեջ կա, որ մենք ենք մեր տարածքի համար պատասխանատու:
- Գետնանցումը Տիգրան Մեծի փողոցում միայն մեկ օր է գործել, այսօր այն վերածվել է աղբանոցի: Եթե գետնանցումը կամ ընդհանրապես անցումները սարքում են, ապա թող նաև հետևեն դրանց, որպեսզի մաքուր մնան և բնակիչները կարողանան օգտվել:
- Երրորդ սցենար քննարկված խնդիրը հրատապ խնդիր է, բայց կարևոր է նաև հետևողականությունը: Կա փողոց, որտեղ կա լուսավորություն, բայց հետո չեն հետևում, որպեսզի ընթացքում առաջացած խնդիրները լուծվեն:

Սցենար 3. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում

- Միանշանակ լուսավորությունը շատ կարևոր է, սակայն զբսայգի եթե չունենք, որտեղ ենք զբոսնելու, զբոսանքի վայր չունենք: Այդ գումարով կարելի է զբոսայգիներ ստեղծել: Այս պարագայում այդ լուսավորությունը մեքենայի համար է ստացվում:

Սցենար 4. Փողոցներում աղբարկղերի տեղադրում

- Աղբարկղերը տեղադրված են դպրոց տանող ճանապարհին, որը դժվարություններ է առաջացնում դպրոց հասնելու համար:
- Ավելի առաջնային է ջրի, աղբահանության հարցը, դրանք նախ կարգավորեն, շենքերը, հուշարձանները աղբանոց են վերածված, հետո մտածեն լուսավորելու մասին:
- Չորրորդ սցենար: Աշտարակի հարակից տարածքում ուզում են կառուցել աղբահավաքման տարածք, բնակչությունը դեմ է, չեն ուզում կանաչ տարածքները կորցնել:
- Մարդիկ էլ պետք է դաստիարակվեն, որ իրենք էլ իրենց միջավայրը չկեղտոտեն, ծխախոտը, աղբը բակերում չթափեն, մեր երեխաներն են այդտեղ խաղում, գոնե համատիրությունները բակերը վերանորոգեն, մաքրությունն էլ հսկեն:
- Մենք ավելի լուրջ խնդիրներ ունենք քան լուսավորությունը, որոնք ավելի կարևոր են: Գոնե նստարաններ, խաղահրապարակներ կառուցվեն, կանաչ տարածություններ չկան:

- Չորրորդ սցենար: Մեքենաների պակասությունից ելնելով աղբահանությունը նորմալ չի ընթանում: Մեքենաները հին են, առաջարկվում է ձեռք բերել նոր մեքենաներ:
- Եթե աղբը դնում եմ բակում, ապա շները դրանք ցրում են և քաղաքը աղտոտում: Դրա համար շատ երկար քայլում եմ մինչ հասնեմ աղբարկղին:
- Այն վայրերում որտեղ աղբի կուտակումներ են տեղի ունենում, առաջարկում ենք նախ մաքրել, բարեկարգել, բայց հետո էլ անպայման ցուցանակ դնել, որ այդտեղ աղբ նետելը տուգանվում է, ու ամենակարևորը՝ հետևողական լինել և տուգանել:
- Ես աղբահանությունից դժգոհ չեմ, մեքենաները շրջում են և հավաքում աղբը:
- Մեր տան կողքը կա աղբարկղ, մարդիկ տանում են կողքն են դնում ու օրերով կուտակվում է: Մենք ենք զանգում ասում եկեք աղբը տարեք, դա էլ չի օգնում, հետո աղբատար մեքենա էլ չկա: Եթե աղբարկղ դրվում է, ինտենսիվ աղբահանում իրականացվի, թե չէ միևնույն է կուտակվում է, հոտը տարածվում է:
- Աղբամանների շուրջ բետոնապատելը շատ կարևոր է, այդ դեպքում շները չեն կարողանա միջից բան տանել, գուցե այդքան էլ չի տարածվի:
- Սովխոզի տարածքի բնակիչները չեն վճարում և մեքենան այդ տարածք չի մտնում, որ աղբը հավաքի:
- Աղտոտվածության խնդիրը միայն աղբամաններից չի գալիս, քո բակն ավլում ես, տասը րոպե հետո արդեն կեղտոտ է, մեր մարդկանց մտածելակերպն է խնդիրը, ուզում եք ամբողջ քաղաքում աղբարկղեր տեղադրեք, միևնույն է կեղտոտ է լինելու քաղաքը:
- Բնակիչը բերում է աղբը թափում է աղբարկղի կողքը, կափարիչը չի բացում և հետո ասում է իմ աղբը չեք հավաքում և դրա համար չեմ վճարում:
- Մարդկանց գիտակցության մեջ մտցնել, որ աղբը պետք է աղբամանի մեջ գցել, ոչ թե դնել կողքը ու գնալ: Կարելի պլակատներ սարքել, սոցիալական գովազդներ անել, որ մարդիկ հասկանան դա գեղեցիկ չէ, ճիշտ չէ: Իսկ եթե ոչ ապա թող տուգանեն այդ մարդկանց:
- Գիտավան թաղամասում մեքենա է գալիս միանգամից մեքենայի մեջ ենք թափում, էլ աղբ չի կուտակվում: Սա կարելի է տարածել, աշխատող տարբերակ է:
- Չորրորդ սցենար: Աղբակղի տեղադրումը շատ կարևոր է: Օրինակ եթե

մարդը տեսնի որ աղբարկղ է տեղադրված, աղբը չի թափի գետնին:

- Մենք մի հոյակապ շուկա ունեինք այստեղ, սակայն հիմա այն վերածվել է մարզային աղբանոցի, շներն ու «բուրմունքն» անպակաս են: Թող այդ տարածքը մաքրեն, մենք էլ կօգնենք, թող մաքրեն, այգի սարքեն, խաղահրապարակ երեխաների համար:
- Աշտարակը լի է խնդիրներով: Դրանցից մեկն էլ աղբահանության խնդիրն է:Եվ դրա համար պետք է սկսել մարդկանց կրթելուց: Պետք է փոխել մեր ազգի մենթալիտետը: Երբեմն լինում են դեպքեր, երբ աղբը թափվում է աղբարկղերի կողքին:
- Քաղաքը ամեն օր լվացվում է, ամեն օր անհնար է զրոյով աշխատել, քանի որ չկան ռեսուրսներ:
- Մուղնիում աղբարկղերի շուրջ բետոնապատում իրականացված է, սակայն միևնույն է կեղտոտ է, որովհետև աղբահանման մեքենան այնքան ուշ-ուշ է գալիս, որ աղբը չի տեղավորում, պետք է ոչ թե բետոնապատել, այլ ճիշտ կազմակերպել աղբահանումը:
- Աշտարակի որոշ թաղամասերում այս տարի աղբահանությունը իրականացվել է բավականին լավ: Դա պետք է կիրառել ամբողջ քաղաքում: Շատ արդյունավետ էին ծածկված աղբարկղերը, որի հետևանքով թափառող շները անհետացան որոշ թաղամասերից: Բայց դա պետք է կիրառել ամբողջ քաղաքում:
- Եթե երեխային ուղարկում ես աղբը թափելու, գնում-տեսնում է աղբը աղբարկղի մոտ է թափված, ինքն էլ գցում է կողքը և գալիս, այսպես էլ կեղտոտվում է քաղաքը:
- Կան մարդիկ, որ բարձր հարկերից իջեցնում են աղբն ու դնում առաջին հարկում ու գնում, գիտակցությունն է պետք փոխել:
- Պետք է մեքենաներ բերեն, աղբարկղները ճիշտ տեղադրվեն, վարչական իրավախախտումների օրենքում էլ փոփոխություն արվի, որ մարդիկ տուգանքի վախից դրսում աղբ չթափեն:
- Մայր առուն հոսում է մանկապարտեզի մոտով և տեսել եմ, որ վերևից աղբ են գցել գետի մեջ:
- Կարծում եմ շատ արդյունավետ է նաև այն համակարգը, որի դեպքում շաբաթական գոնե երկու անգամ մեքենաները գալիս են և աղբ տանում: Մեր թաղամասում այդ համակարգն է կիրառվում և բավականին արդյունավետ է:
- Պետք է փոքր աղբմաններ տեղադրվեն, որ մարդիկ չաղտոտեն միջավայրը: Օրինակ ի ձեռքում հնարավոր է ինչ-որ թուղթ լինի, չգիտեմ որ-

տեղ նետեմ: Պետք է 50 մետրը մեկ տեղադրված լինեն:

- Համայնքում ընդամենը երեք աղբահան մեքենա կա, որոնք չեն հասցնում իրենց աշխատանքը,մենք ինքներս ենք մեր սեփական մեքենաներով տանում աղբը թափում:
- Աղբահանությունը իրականացվում է հատուկ ՀՈԱԿ-ի կողմից, բայց նրանց ռեսուրսներն էլ բավարար չեն, մի շարք թաղամասերում հասցնում են աղբահանությունը նորմալ կազմակերպեն, մյուսներում ոչ. մեզ անհրաժեշտ են առնվազն ևս վեց աղբահանման մեքենա, որ ամեն ինչ պատշաճ կատարվի:
- Ես դեմ եմ աղբը վառելու գաղափարին, որի մասին խոսվել է: Դրա ամբողջ ծուխը կլցվի Աշտարակ, քանի որ մեր քաղաքը ցածր դիրքում է գտնվում:
- Երթևեկության անվտանգության վերաբերյալ մի լրացում, կարելի է դպրոցներին տրանսպորտ հատկացնել, որ երեխաներին գա տանի, տուն բերի, կարծում եմ բոլոր ծնողներն էլ կհամաձայնեն:
- Մեծ աղբամաններ պետք չեն, աղբի կողքը շները, կատուները և այլ կենդանիներ են հավաքվում, մենք էլ տանում հեռվից նետում ենք ու արդյունքում գետնին է հայտնվում:
- Մեր քաղաքը աշխարհագրորեն փոսի մեջ է և կառավարությունը կարծես թռնում է մեր վրայով՝ անտեսելով ամեն ինչ Ապարանը իր Ապարան հալով ավելի մաքուր է, քան մեր քաղաքը:
- Բնակիչները սովորություն ունեն աղբի տոպրակը աղբամանի կողքը դնել: Մարդիկ ասում են հավես ունեմ աղբամանին հասնեմ: Այդ դեպքում մարդկանց մտածելակերպը պետք է փոխել:
- Հինգերորդ սցենար: Նորը կառուցելու փոխարեն թող Կոմիտասի այգին վերանորոգեն:
- Եթե մեքենաները շատ լինեն, ապա աղբը չի կուտակվի և բնակիչները չեն բողոքի, որ իրենց տան մոտ կա աղբարկղ:
- Պրակտիկան ցույց է տալիս, որ մեր փողոցներում մարդիկ աղբ գցելու տեղ չունեն:
- Այսօր մենք աղբը տանում ենք մեր ձեռքով նետում ենք աղբահանման մեքենայի մեջ, որը անցնում է կենտրոնական փողոցներով, չի գալիս բակից տանի:
- Աղբարկղներ կան տեղադրված, սակայն աղբահանություն չի կատարվում: Երևի ամիսը մեկ է աղբահանություն կատարվում: Սա էլ հիվան-

դությունների, առնետների, շների առաջացման աղբյուր է հանդիսանում: Պետք է ամեն օր կամ օրը մեջ կատարեն:

- Մարդիկ անգամ իրենց բնակարանների կողքն են դնում աղբը, մի քանի անգամ հարևանիս աղբն էլ եմ թափել, որ շենքից հոտ չգա:
- Չորրորդ սցենար: Մարդիկ մինչև սպասեն աղբահանության օրերին, աղբը թափում են դրսում:
- Փողոցներում աղբի կույտեր են հավաքվում, ավելի լավ կլինի, որ մեքենաներն ավելի հաճախ գան, քան աղբամաններ տեղադրեն:
- Աղբարկղները շատ քիչ են տեղադրված, միայն շենքերի բակերում են դնում, իսկ կարելի է նաև հրապարակում և կենտրոնական փողոցներում էլ տեղադրել:
- Մենք պետք է կանխենք, թույլ չտանք որ փողոցներում էլ շշեր, ծխախոտ թափեն: Բայց անհարմար ես զգում քեզ նկատողություն անել դրսում անծանոթ մարդու:
- Շաբաթօրյակ ենք անում, ամբողջ աղբը հավաքում ենք տոպրակների մեջ, մի վարորդ եկավ մեր առաջ հենց աղբ գցեց, ասում է հավաքեք, դա ձեր գործն է. այսինքն աղբահանման խնդիրը մարդկանցից է:
- Աղբը այրելու կենտրոններ, քաղաքին մոտ կառուցել պետք չի ու չի կարելի, այդ թունավոր օդը քամին կբերի քաղաքացի վրա, մեր երեխաներն ու ծնողներն են այդ օդը շնչելու՝ դա հարցի լուծում չի:

Սցենար 5. Խաղահրապարակների կառուցում

- Հինգերորդ սցենար: Այս խնդիրը առաջնային չի, թող միջավայրը ավելի մաքուր լինի, հետ նոր մտածենք խաղահրապարակների մասին:
- Սանեպիդկայանը չի գործում, Աշտարակում վարակային, համաճարակային օջախներ են ստեղծվում այս աղբի պատճառով:
- Հենց դպրոցի մոտ կա աղբ, որի շուրջ մշտապես շներ են հավաքված և դրանք շատ վտանգավոր են երեխաների համար: Հարկավոր է առաջին հերթին աղբարկղեր տեղադրել հենց դպրոցի մոտ: Բացի դա, այդ աղբի հոտը տարածվում է նաև ամբողջ շրջակայքում՝ ստեղծելով ոչ սանիտարահիգիենիկ պայմաններ:
- Զբոսնելու տարածք չկա: Ամբողջությամբ փոս և քար է: Նույնիսկ ցերեկային ժամերին չենք կարողանում քայլել, ինչ մնաց խաղահրապարակ լինի: Թող ճանապարհները վերանորոգեն, հետո նոր խաղահրապարակներ տեղադրեն:
- Մեզ պետք են ջրցան մեքենաներ, որ ամռանը փողոցները մաքրեն, և

փողոցների համար հավաքարարներ, որ տարին կլոր մաքուր կպահեն քաղաքը:

- Նորը ստեղծելը դժվար է իսկ հինը պետք է պահպանել, նորոգել, ներկել, մաքրել, որպեսզի այն չփչանա:
- Ես ամաչում եմ, երբ տուրիստները գալիս են և նկարում մեր աղբը...
- Մենք ունենք այգի, որը լավ վիճակում չի, չես կարող գնալ զբոսնել, այգին ևս պետք է բարեկարգել, միայն խաղահրապարակը չի:
- Միշտ վատն ենք տեսել և եթե ունենանք բարեկեցիկ պայմաններ, ապա կտեսնենք և ավելի դրական կվերաբերվենք և կսկսենք խնամել և պահպանել:
- Մենք էլ ենք գնահատում գեղեցիկը, սակայն պետք է տեսնենք այդ գեղեցիկը, որ պահպանենք այդ դրականը:
- Ամենից հարմար տեղը Սիսակյան դպրոցի հարևանությամբ է, նախ կենտրոն է, երկրորդն էլ այդ ազատ տեղը գտնվում է երկու բարձրահարկ շենքերի միջև, բոլորին էլ հարմար կլինի:
- Պետք է մարդկանց հոգեբանությունը փոխել և օրենքի գերակայությամբ և ուսուցմամբ: Գալի նոր վերանորոգած ճանապարհը քանդում ջուր են քաշում, հետո անգամ իրենց քանդածը չեն վերանորոգում: Դա էլ մեծ փոսի է վերածվում:
- Եկեք առաջին հարվածով մաքրենք քաղաքի աղբը, հետո կսկսենք մյուս խնդիրների մասին խոսել, քանի որ աղբը քաղաքը տեսքից գցում է:
- Ես կուզեի, որ մեր հին այգին վերանորոգվեր, հիմա այն վերածվել է աղբանոցի, մարդիկ գնում են այդտեղ ինչ որ թաքուն գործեր անում գալիս: Վտանգավոր է բոլորի համար, իսկ եթե մաքրեն բլորիս համար լավ կլինի:

Երեխաներ և երիտասարդներ

Սցենար 2. Երթևեկության անվտանգության բարելավում

- Կարելի է մանկապարտեզի և դպրոցի մոտ բարձր ասֆալտներ սարքել, որպեսզի մեքենաները դանդաղ վարեն:
- Երեխաների համար շատ ենք անհանգստանում, դպրոցից մենք պետք է գնանք բերենք, որ հանգիստ լինենք երեխաների համար:

- Դպրոցին հարակից տարածքում չկան անցումներ և երեխաները դպրոց են գնում փողոցի մեջտեղով:
- Ծնողները չեն կարողանում ուղեկցել երբեմն երեխաներին և դա առաջացնում է խնդիրներ, քանի որ չկան երթևեկության կանոններ:
- Տրանսպորտ չկա, դպրոցն էլ հեռու է, ոտքի ճանապարհ չի, ամեն օր երեխաներին տաքսիով ենք դասի տանում, թող տրանսպորտի հացն էլ լուծեն, ինչ-որ մեկը սեփականացրել է:
- Հատկապես դպրոցների մոտ լուսակիրների տեղադրումը, ցուցանակները և նշագծերը շատ ակտուալ են: Աշտարակում այսօր բարվոք ապրելու համար ոչ մի պայման չկա: Միանշանակ, ներդրումներ են հարկավոր:
- Եթե երթևեկության կանոնները նշագրվեն, երեխաներին դասավանդեն այդ նշանները, հսկողություն կատարվի պետավտոտեսուչների կողմից ապա բոլորի հոգսը կպակասի:
- Ես երեխայիս գետնանցում մտնել չեմ թողնում, որովհետև ոնց որ հասարակական զուգարան լինի: Ահավոր կեղտոտ է:
- Աշտարակում ընդամենը մեկ լուսակիր կա, Երևանում զեբրաներ կան, իսկ այստեղ չկան երեխաները չգիտեն դրա մասին և սա շատ կարևոր խնդիր է:

Սցենար 3. Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում

- Երեխաները եթե երկու անգամ տեսնեն ինչպես պետք է անցնեն, ապա այլևս խնդիր չի առաջանա:
- Լուսավորությունն էլ թուլացնում են, որ երիտասարդներին էլ չթողնեն երեկոներն հավաքվեն, իսկ նրանք էլ զբաղմունք չունեն:

Սցենար 4. Փողոցներում աղբարկղերի տեղադրում

- Լուսավորության առկայության դեպքում բոլորը կշահեն, սակայն տղամարդիկ մեքենայով են երթևեկում, նրանց համար խնդիր չէ, կանայք և երեխաներն են տուժում, խնդրի կարգավորման դեպքում երեխաները և կանայք կշահեն:
- Աղջիկները դասից տուն գնալու համար զանգում են մարդ են կանչում, որ իրենց տուն տանեն, վախենում են:
- Մայրերը կկարողանան երեխաներին երեկոյան դուրս հանել, որ մի քիչ մաքուր օդ շնչեն, ոչ թե տանը փակվեն համակարգչի առաջ:

- Աշտարակում չկան երեխաների համար խաղահրապարակներ: Կար մի խաղահրապարակ, որը մի քանի օր հետո այլևս բարվոք վիճակում չէր:

Սցենար 5. Խաղահրապարակների կառուցում

- Մեզ մոտ անգամ սրճարան չի գործում, մի ամիս գործում հետո փակվում է, ինչ խաղահրապարակի մասին է խոսքը:
- Հինգերորդ սցենար: Հինգ տարեկան երեխային աղբի խնդիրը չի հետաքրքրում , նրան հետաքրքրում է իր զբաղմունքը, երեխան չի կարող իր քաղաքում իր հանգիստը անցկացնել:
- Առաջարկ կա կառուցել խաղահրապարակ Պռոշյան տասը հասցեում՝ հին շուկայի կողքը, այդտեղ անցուդարձը շատ է, հետո միայն կառուցել խաղահրապարակներ այլ վայրերում, որտեղ այդքան երևացող չի ու անցուդարձն էլ քիչ է:
- Մարդիկ անվճարունակ են և այն դեպքում, երբ կա տունը երկու երեք երեխա ապա սա դառնում է շատ ավելի դժվար, մարդ չգիտի ոնց իր երեխաներին պահի և չի կարա գումար հատկացնի խաղահրապարակի համար:
- Կազմակերպում ենք շաբաթօրյակներ, սակայն քաղաքապետարանը ոչնչով չի օգնում, անցած անգամ երեխաները երեք պարկ աղբ էին հավաքել, սակայն այդ աղբը այդպես էլ մնաց փողոցի վրա:
- Ես խաղահրապարակների կառուցումն ամենակարևորն եմ համարում, դա մեր երեխաների համար ենք անում:
- Մարզահրապարակը պետք է առանձին լինի խաղահրապարակից ու պետք է լինի առնվազն երեքը, մեկը կենտրոնում, երկուսն էլ գետի տարբեր ափերին:
- Խաղարհրապարկի կառուցումը կդառնա մի այլ վայր, որտեղ կհանգստանան ծնողները, տատիկներն ու պապիկները, հանգստի գոտի կդառնա, պահանջում ենք, որ այնտեղ չլինեն սրճարաններ:
- Որտեղ կստեղծվի համատիրություն, այնտեղ էլ խաղահրապարակ կսարքվի, որ վերահսկվի ու պահպանվի: Դա էլ արդարացի չէ, որովհետև մյուս շենքերի երեխաները էլի փողոցներում են խաղալու:
- Այսօր քանի որ մենք չունենք խաղահրապարակներ, մեր երեխաները ամբողջ ժամանակ անց են կացնում ինտերնետային ակումբներում ու համակարգիչների առջև:
- Ավելի լավ է այդ գումարը տան մանկապարտեզներին ու դրանց բակերը սարքեն, ավելի քիչ գումար պետք կգա, մանկապարտեզն էլ կհսկի

հրապարակը:

- Երևանում ամեն ինչ կա և ծերերի և երիտասարդների համար, իսկ այստեղ պայմաններ չկան: Պապիկները նստում մենակ նարդի են խաղում, տաղավարներ էլ չկան: Խաղահրապարակը նաև մեծերի համար է անհրաժեշտ, ծերերն էլ են ուզում հանգստանալու տեղ ունենան:
- Խաղահրապարակ ունենք, սակայն երեխաների զբաղվելու ոչինչ չունենք: Բացակայում է երեխաների խաղալու համար սահարանները, ֆուտբոլի դաշտը, կաչելի, հողային հարթեցված տարածք: Երկու հատ երկաթի կտոր է մնացել:
- Խաղահրապարակը լուծում է երեխաներին համակարգիչների դիմացից հանելու խնդիրը:
- Պետք է առաջնային լինի ոչ թե ժամանցի հարցը, այլ երեխաների զարգացման: Ես մանկավարժ եմ, արվեստի դպրոց դիմեցի ընդունվելու, ինձ ասում են պետք է տասնհինգ աշակերտ ապահովես:
- Շենքի բնակիչը իր տարածքը ցանկապատել է, աղբ է լցնում, ասում եմ, որ քաղաքապետարանից գան ուզեն խաղահրապարակ կառուցեն կտաս, ասեց կտամ, ասում եմ, դե ինչի ես սպասում գան, մեզ տուր մենք անենք, ասում է չէ, դու չես կարող, չես դնի, բայց մարդիկ պատրաստ են տարածքը տան:
- Այսօր մեր երեխաների համար որևէ հանգիստ կազմակերպելու համար մենք ստիպված ենք լինում Երևան հասնել: Բայց դա բոլորի համար հասանելի չեն: Պետք է անպայման մտածել Աշտարակում բնակվող երեխաների համար խաղահրապարակներ և այգիներ կառուցելու գործում: Իհարկե դրա համար մեծ ներդրումներ են հարկավոր: Բայց կարելի սկսել նաև փոքրից: Ցանկացած ներդրում կարևոր կլինի մեր քաղաքի համար:
- Լավ կառավարման խնդիր կա: Քաղաքապետարանին կից արվեստի դպրոցի պայմանները ահավոր են, ոչ մի տեխնիկա չունեն: Թող երեխաս նորմալ կրթություն ստանա, մի ճոճանակ էլ քիչ նստի:
- Աշտարակի երեխաներն ընդհանրապես զբաղվելու տեղ չունեն: Ժամանակին ունեինք նաև Կոմիտասի այգին, կարելի է դա էլ վերանորոգել: Բայց առավել կարևոր է շենքերի բակերում երեխաների համար խաղահրապարակներ կառուցելը, հատկապես բազմաբնակարան շենքերի բակերում:
- Խաղահրապահակն էլ ժամանցային, մակերեսային խնդիր է, զարգացմանը պետք է ուշադրություն դարձնել: Սպորտդպրոց, արվեստի դպրոց պետք է զարգացնել:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Սցենար 1. Համատիրությունների հիմնում

- Լավ կլինի, որ համատիրության ղեկավարը կին լինի:
- Համատիրության ղեկավարը կարևորը լինի աշխատող, կանանց այնքան էլ չեն լսում, չնայած նրանք ավելի աշխատող են:
- Ազդեցիկ կինը չի գողանա, կաշխատի, համատիրությունները լավ կաշխատացնի: Մենք պետք է քաղաքակիրթ ապրենք:
- Կանայք գտնում են, որ պետք է տղամարդ լինի ղեկավարը, տղամարդիկ՝ հակառակը:
- եթե ստեղծվի և իդեալական աշխատի, ապա բոլորը կշահեն, և երեխաները, և տարեցները, և կանայք, և տղամարդիկ:
- Եթե բարեկարգվեն բակերը լավ կլինի կանանց ու երեխաների համար: Կանանց հոգսերը ավելի կքչանան, ավելի քիչ երեխաները կփոշոտվեն և մայրերը ավելի քիչ լվացք կանեն:
- Քանի որ տղամարդիկ երկրում չեն կանայք կմասնակցեն համատիրության աշխատանքերին:
- Եթե համայնքը բարելավվի, կբարելավվեն նաև ներընտանեկան մի շարք խնդիրներ:

Սցենար 2. Երթևեկության անվտանգության բարելավում

- Կանանց խնդիրը հիմնականում հետիոտնի խնդիրն է, իսկ տղամրդկանց խնդիրը վարորդների խնդիր է, բայց մեր քաղաքում երկուսն էլ հավասարապես խնդիր են:

Սցենար 4. Փողոցներում աղբարկղերի տեղադրում

- Լուսավորության առկայության դեպքում բոլորը կշահեն, սակայն տղամարդիկ մեքենայով են երթևեկում, նրանց համար խնդիր չէ, կանայք և երեխաներն են տուժում, խնդրի կարգավորման դեպքում երեխաները և կանայք կշահեն:
- Աղջիկները դասից տուն գնալու համար զանգում են մարդ են կանչում, որ իրենց տուն տանեն, վախենում են:
- Մայրերը կկարողանան երեխաներին երեկոյան դուրս հանել, որ մի քիչ

մաքուր օդ շնչեն, ոչ թե տանը փակվեն համակարգչի առաջ:

- Մենք տղամարդիկ ենք, սակայն եթե շունը մեզ վրա հարձակվի, մենք օրենքով շանը վնասելու իրաունք չունենք: Դեպք է եղել, որ քաղաքացին հարվածել է շանը, այդ մասին իմացել են, բողոքել և անգամ այդ դեպքում եկեղեցուն խառնեցին և մեզ խայտառակ արեցին:
- Երիտասարդ աղջիկները տանից չեն էլ կարողանում դուրս գան, եթե կենտրոնական փողոց էլ չի, ուրեմն տանից կարող ենք դուրս գալ միայն ֆանարիկներով, բայց դա թափառական շների հարցը չի լուծում, սպանելն էլ չի օգնում, մեկին սպանում ես, հաջորդ օրը ուրիշն է գալիս:
- Աշտարակի ավագանում կանայք ներգրավված չեն.դա շատ վատ է:
- Քաղաքապետը որպեսզի իրեն պարտավոր զգա, խնդիրները կարգավորի,պետք է հետ կանչելու իրավունք ունենանք: Ավագանին էլ իրանք են էլի:
- Ես վիրավորվում եմ, որ աղբահանությունը կապում են կանանց հետ: Մենք սիրված ենք, երբ աղբ ենք թափում, և երբ լվացք ենք անում, ինչ պարտադիր է, որ կանանց հետ կապեք: սա ընդհանուր հարց է, որ բոլորին էլ վերաբերում է:
- Այո՛, Այս հարցը կապ ունի կանանց հետ, քանի որ կինն է երեխային դաստիարակում, որ երեխան իմանա թե ինչպես պետք է աղբը թափի, եթե նա տեսնում թե մեծն ինչպես է դնում աղբամանի կողքն ու գնում, նույնն էլ սովորում է: Սակայն միաժամանակ պետք է նշեմ, որ այդ նույն աղբամանների մոտ ապրում են հսկայական շներ, որոնցից նույնիսկ մեծահասակներն են վախենում:

Սցենար 5. Խաղահրապարակների կառուցում

- Մենք բոլորս խոսում ենք այս հարցերի մասին, սակայն երբ հերթը հասնում է գործելուն ոչինչ չենք ձեռնարկում: Անհրաժեշտ է մի մարդ, որ բոլորին կհամախմբի, ու ստիմուլ կլինի աշխատելու համար:
- Մենք՝ կանայքս առավոտվանից սպասում ենք, որ մի մեքենա գա բանջարեղեն բերի, որ գնենք, իսկ մենք լավ շուկա ունեինք, այն կարելի է մաքրել մի մասը սարքել խաղահրապարակ, մյուս մասն էլ շուկա:
- Խաղարհրապարկի կառուցումը կդառնա մի այլ վայր, որտեղ կհանգստանան ծնողները, տատիկներն ու պապիկները, հանգստի գոտի կդառնա, պահանջում ենք, որ այնտեղ չլինեն սրճարաններ:

Տնտեսական և սոցիալական աշխուժություն, բյուջե, ծախսեր, հոգսեր

Փորձը ցույց է տալիս, որ համատիրությունները իրենց չեն արդարացնում: Հիմա բոլոր շենքերի բակերը բաժանված են՝ ավտոտնակներ, հողատարածքներ, համատիրությունը պետք է իրավական լծակներ ունենա, որ այդ տարածքների բաշխումը կարգավորվի, երեխաների համար խաղահրապարակներ ստեղծի, պետությունը փոխհատուցման մեխանիզմ պետք է մտածի:

Համատիրության ստեղծումը արդյունավետ կլինի: Եթե մարդը չի կարողանում գումարը վճարել, թող փոխհատուցի սեփական աշխատանքով:

Եթե համատիրությունը նորմալ գործի, ապա արդյունավետ կարող է լինել:

Համատիրությունը կարծում ենք լուծում է այս խնդիրների համար:

Ողջունելի փաստ է համատիրության ստեղծումը: Փորձենք արդյունքները կստանանք:

Եթե համատիրությունները ստեղծվեն, սեփական տների բնակչների խնդիրներով ո՞վ է զբաղվելու:

Ես կարծում եմ, որ համատիրություն ստեղծելը շատ ճիշտ է: Ես ապրել եմ Կիրովականում, որտեղ համատիրությունները շատ ակտիվ աշխատում էին: Իսկ Աշտարակում դա այդպես չէ: Կարծում եմ, որ համատիրություն ստեղծելու գաղափարը ճիշտ է:

Բնակիչը կիմանա ում դիմի: Օրինակ աղբը չի տարվել, բնակիչը կիմանա ում դիմել:

Բնակչությունը պետք է կամենա և ակտիվություն ցուցաբերի, որպեսզի համատիրությունը ստեղծվի, իսկ բնակիչներն այս մասին չեն մտածում, քանի որ բոլորը օրվա հացի խնդրի մասին են մտածում:

Պարտադիր չէ համատիրությունների ստեղծումը, խնդիրը կարող է լուծվել այլ միջոցներով:

Պրակտիկան ցույց է տալիս, որ ոչ մի հարց էլ չեն լուծում համատիրությունները:

Համատիրություններն արդյունավետ չեն սեփական տների պարագայում:

Ես վստահ չեմ, որ համատիրություն ստեղծելով մեր հարցերը կլուծվեն: Համատիրություն ստեղծելու համար պետք են անհատներ, ովքեր կկարողանան կառավարել այդ համակարգը: Բայց միթե կկարողանանք գտնել այդպիսի անհատներ:

Եթե Երևանում համատիրության ստեղծման փորձը հաջողվեր, մարզերում էլ կկիրառվեր:

Ես գտնում եմ, որ համատիրությունը ստեղծելն արդյունավետ չի լինի: Մի վերահսկող կառույց էլ հարկավոր է համատիրության աշխատանքը հսկելու համար:

Նույն գործողությունն անում է թաղայինը, էլ ինչ կարիք կա համատիրություն ստեղծելու: Կարծում եմ դա անիմաստ ներդրում է:

Պետական միջոցներն այս պահին համատիրություն ստեղծելու վրա ծախսելը կարծում եմ անիմաստ է, քանի որ չեմ հավատում, որ դա կարդարացվի:

Ես ապրում եմ բազմաբնակարան շենքում և ոչ մի հարց միահամուռ կերպով չի լուծվում: Ինչ պիտի փոխվի համատիրություն ստեղծելուց հետո:

Համատիրության ստեղծումը ռեալ չէ:

Մենք ունենք Բարեկարգում օղակ, որը կատարում է այսօր նույն ֆունկցիաները: Ինչ իմաստ ունի ստեղծել համատիրություն: Այսօր կա ֆինանսական խնդիր. եթե այն լուծվի, մնացած բոլոր հարցերն էլ կլուծվեն:

Մեզ մոտ անգամ սրճարան չի գործում, մի ամիս գործում հետո փակվում է, ինչ խաղահրապարակի մասին է խոսքը:

Պետք է գործուն մեխանիզմներ մշակվեն, որպեսզի համատիրությունները ստեղծվեն:

Համատիրության ղեկավարը պետք է կարող ուժ լինի, կազմակերպիչ լինի, կարողանա ու ուզենա աշխատել:

Համատիրության աշխատանքներն արդյունավետ կդառնան, եթե ժամանակացույցը ճիշտ բաշխվի:

Շենքերի կարգավիճակի փոփոխություն պետք է կարողանա անել համատիրությունը, մենք ունենք շենքեր, որոնք սեփականաշնորհված չեն:

Աշտարակը Երևան չի, մեր շենքերում շատ կան բնակարաններ, որտեղ ոչ ոք չի բնակվում, կարող է հսկայական շենքում ընդամենը մի քանի ընտանիք բնակվի, և շենքից շենք համատիրության մոդելը շատ կտատանվի, նույն մոդելը մի քանի շենքերում կիրառել չի լինի:

Եթե բնակչությունը արդյունքը տեսնի, եթե խաղահրապարակ կառուցվի մյուս համատիրությունում, օրինակելի դաս կլինի:

Աշխատանքը չպետք է զուտ ցուցադրական լինի, պետք է համատիրությունը հետևողական լինի:

Նկարագրված չեն կոնկրետ մեխանիզմներ, չկա սխեմա, թե ինչպես պետք է համատիրությունները հիմնվեն, ում և ինչպես պետք է հաշվետու լինեն:

Ոչինչ չանելը ամենասխալ տարբերակն է, չնայած չկան նշված կոնկրետ մեխանիզմներ, այնուամենայնիվ կարելի է փորձել կիրառել այս մեթոդը, հետո արդեն նորից հավաքվել ու քննարկել, թե ինչ խնդիրներ են առաջանում և ինչպես կարելի է լուծել այդ խնդիրները:

Եթե բնակիչների խոսքը անցնի բոլորն էլ կմասնակցեն, հիմա չեն մասնակցում քանի որ գիտեն, որ իրենց կարծիքը հաշվի չի առնվում:

Շենքերը գտնվում են շատ վատ վիճակում, սկսած ջրագծերից, էլէկտրաէներգիայից: Մի քանի անգամ դիմել ենք, չեն արձագանքել:

Բազմաբնակարանային շենքերի խնդիրները տարբեր են առանձնատներում բնակվող անձանց խնդիրներից, մեզնից քչերն են բնակվում բազմաբնակարանային շենքերում, մենք համատիրությունների մասին որևէ կարծիք արտահայտելուց առաջ ու-

Համատիրության նախագահը պետք է լինի թաղամասի բնակիչ, դրսի մարդն ինչ իմանա ինչ խնդիրներ կան:

Առաջինը կամավոր առաջնորդի խնդիրն է: Անհրաժեշտ է ամեն մի համայնքում ունենալ մի ակտիվ և իր ժամանակը համայանքին նվիրող անձ, ով կհամախմբի բոլորին:

Համատիրության ղեկավարից է գալիս ինչպես կկառուցվի համատիրության և բնակչության հարաբերությունները, ինչպես մարդիկ նույնպես մասնակցություն կունենան:

Կոյրերի շենքի զարգացման համամասնությունը կարել է փոխել, այդ շենքերին ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել:

Եթե համատիրության ղեկավարը գումար ստանա, ապա ավելի սրտացավ կմոտենա հարցին:

Շատ կարևոր է աշխատող համատիրության մոդել ստեղծել, որ մարդիկ էլ հասկանան, որ դա անհրաժեշտ կառույց է, դրանից հետո վճարումներ էլ նորմալ կանեն: Կարևոր է, որ սկզբում լավ աշխատի համատիրությունը:

Եթե համատիրություն լինի, և կուտակված գումարի 50%-ի չափով քաղաքապետարանը տրամադրի, ապա դա լավ կլինի, սակայն մտավախություն ունենք, որ կոռուպցիոն խնդիրներ կառաջանան և գումարը մասամբ կօգտագործվի:

Հիմա շենքեր կան, որ շատ վատ վիճակում են, ժեկին են դիմում, ոչ մի արդյունք, քաղաքապետը ոչ մի բան չի անում, մեզ պետք է աշխատող համատիրություն, սակայն դրա փորձ Աշտարակում չկա:

Շենքի վերականգնման համար բազմիցս դիմել ենք քաղաքապետարանին, պատասխան չի եղել, մինչև հովանավոր եկավ և վերանորոգեց:

նենք խնդիր պատկերացնելու մեզ այդ մարդկանց դերում, քանի որ շատերիս համար խնդիրն անծանոթ է:

Բնակչությունը պետք է ֆինանսական ներդրումներ կատարի, սակայն բնակիչները վճարունակ չեն:

Մարդկանց ֆինանսական վիճակները թույլ չեն տալիս լուծել խնդիրները, չեն միավորվում խնդրի լուծման շուրջ

Թող աշխատավարձերը բարձրացնեն, որպեսզի կարողանա բնակիչը գումար ներդնել:

Առաջին հարկի ապրողը չի մտածում որ պետք է վճարեն բոլորի համար, այլ ոչ միայն իր համար:

Համատիրությունը չի կարող ճիշտ որոշել, թե ինչպես ծախսել գումարը՝ կառաջանա հակասություն, օրինակ՝ վերևի հարկերում բնակվողների համար առաջնային է վերելակի հարցը, իսկ ներքևում ապրողների համար՝ կոյուղին, ու՞մ շահերն են առաջնային, ո՞րը պետք է լուծվի, մեխանիզմ չկա:

Ամենակարևորը մարդկանց մտածելակերպի փոփոխումն է: Մենք պետք է պահանջենք, որ մեր հարկերը նպատակային ծառայեն:

Բնակիչը վճարունակ չէ: Եթե չի կարողանալու վճարել, հիմա ինչու ժամանակ ծախսենք ու անիմաստ քննարկենք:

Մարդիկ վճարունակ չեն, աշխատանք չունեն, որ վճարումներ կատարեն: Մեծ մասշտաբի գործեր չեն արվում, պետական աջակցություն է անհրաժեշտ:

Մենք վստահություն չունենք, որ համատիրությունը ինչ-որ բան կփոխի, քանի որ մինչ այսօր ոչ մի լումա քաղաքապետարանը չի ներդրել ծայրամասային փողոցները բարեկարգելու համար:

Մարդիկ մեկ, երկու տալիս են վարձերը, տեսնում են մյուսները չեն տալիս,

իրենք էլ են սկսում չվճարել: Դրա համար էլ պարտքեր են կուտակվել:

Միգուցե մեխանիզմը աշխատի, բայց որքանով. դա հայտնի չէ: Ժողովուրդն այսօր վճարունակ չէ, ինչպես պիտի համատիրությունն իրականացնի խնդիրների լուծումը: Առաջին հերթին պետք է մարդկանց վճարունակության մասին մտածել:

Մասնակիցներից մեկը նշում է, որ շենքում ինքը կատարել է բավականին վերանորոգումներ իր գումարով, սակայն նշում է ինչքան է ինքը միայնակ հոգալու այդ խնդիրները, եթե ոչ մեկ չի ցանկանում օգնել:

Բնակիչը վճարունակ չի, ապա գումարը որտեղից է հավաքվելու, որպեսզի քաղաքապետարանն էլ ըստ այդմ գումար ավելացնի: Այս առումով օդում ծրագիր է կազմվում: Բնակիչների 90% աղքատ է և վճարումներ չի կարող կատարել:

Ենթադրենք ես ունեմ հազար բնակիչ և շատ լավ համագործակցում եմ նրանց հետ: Բայց ինչպես լուծեմ ես այդ խնդիրները, եթե մարդիկ վճարունակ չեն: Ինչ տարբերություն բաժին թե համատիրություն: Կարևորը կարողանանք հարցերը լուծել:

Մեծ դեր պետք է կատարեն մեծահարուստներն ու բարերարները: Նրանք պետք է ավելի գումար ներդնեն, քան հասարակ բնակիչները: Հասարակ բնակիչն այսօր գնում է արտերկիր գումար վաստակելու համար, նա ինչպես մի հատ էլ համատիրության համար գումար վճարի:

Բնակիչների վճարումից հետո էլ այդ խնդիրները չեն լուծվի ամբողջապես:

Խնդիրները շատ են, որոնք մեծ գումարներ են պահանջում՝ սկսած տանիքների վերանորոգումից:

Համատիրությունների հարցում ամենաառաջին խնդիրը վստահության պակասն է, բողոքում են, որ մեր

բնակիչները չեն վճարում գումարները, բայց ինչի համար վճարեն, եթե ոչ մի աշխատանք կատարված միևնույն է չեն տեսնում, վստահություն չկա, որ մեր դրած գումարը կհասնի նպատակին. հարցի հնարավոր լուծում կլինի, եթե քաղաքապետարանը կատարի յուրաքանչյուր գործում ներդրման առաջին մասը:

Պետք է խնդիրները լուծվեն կառավարությունում, աշխատավարձ բարձրացնեն, հետո նոր գան ասեն ինչու չեք հատկացումներ անում և խնդիրները լուծում:

Նախընտրելին համատիրությունն է, սակայն լսել ենք, որ այդ կուտակված գումարները ոչ նպատակային են կիրառվել, մենք մտավախություն ունենք, որ այստեղ էլ այդպես կլինի:

Բա ասենք, եթե բնակիչներից մեկը եկել է գյուղից ու բնակվում է վարձով, ու մենք համատիրությունով մի բան ենք որոշում, իսկ ինքն ասում է, որ տունն իրենը չէ ու ինքը չի կարող հարցերի լուծմանը մասնակցել, բա այդ ժամանակ համատիրությունն ինչ պիտի անի:

Անվտանգություն

Երթևեկության խնդիրների լուծումը Աշտարակում առաջնահերթ խնդիր է: Ես կողմ եմ, որ պետությունը գումար հատկացնի այս խնդիրների լուծմանը: Ամբողջ Աշտարակում կա մեկ լուսակիր: Իսկ դա շատ մեծ խնդիր է:

Լուսաֆորներ դնելը խստացում չի, որ դրան վատ վերաբերվենք, դրանք կարգավորում են, մենք շատ կողմ ենք դրան՝ պարտադիր է:

Հատկապես դպրոցների մոտ լուսակիրների տեղադրումը, ցուցանակները և նշագծերը շատ ակտուալ են: Աշտարակում այսօր բարվոք ապրելու

Նշագծումն ավելի կարևոր խնդիր է, քան լուսաֆորները:

Ինձ թվում է երթևեկության նշանների պակասություն չկա Աշտարակում:

Ճանապարհային ոստիկանները մեր ճանապարհները կարգավորում են ինչպես իրենց այդ պահին հարմար է, նույն խաչմերուկը մեկ հավասարազոր են համարում, մեկ ոչ, տուգանում են ենթադրյալ հոծ գիծը խախտելու համար. նշանների առկայությունը շատ կարևոր է:

Եթե երթևեկության կանոնները նշագրվեն, երեխաներին դասավանդեն այդ նշանները, հսկողություն կա-

համար ոչ մի պայման չկա: Միանշանակ, ներդրումներ են հարկավոր:

Աշտարակի Երևանյան փողոցի հատվածում սարսափելի վթարային խաչմերուկ է: Ամեն օր մի դեպք է գրանցվում, հաճախ են մահվան ելքով դեպքերը: Հարկավոր է լուծել այդ խնդիրը:

Լուսաֆորները անպայման պետք է լինեն: Տիգրան Մեծի փողոցը շատ վտանգավոր է, դիմացը դպրոց տանող ճանապարհ է ու միշտ վթարներ են լինում:

Վտանգավոր ճանապարհները մեր քաղաքում շատ են: Չկան լուսակիրներ, չկան նշագծեր: Անընդհատ զոհեր են լինում: Քանի տարի է այս վտանգավոր իրավիճակը մեր քաղաքում:

Անվտանգությունն Աշտարակում միայն լուսակիրներով էլ չի լուծվի: Մանկապարտեզի մոտ հոսում է առու, որը ոչ մի ձևով ապահովված չէ: Պարբերաբար առվում զոհեր են լինում: Գոնե ինչ-որ կերպ փակեն այդ հատվածը:

Լուսաֆորները պետք է հիմնական խաչմերուկներում տեղադրել: Սակայն միայն դրանով խնդիրը չի կարգավորվի. ճանապարհները պետք է վերանորոգեն:

Լուսացույցերի տեղադրումը բոլորի համար կարևոր է, որովհետև այդ նույն վարորդը վաղը հետիոտն է, հետիոտնը վարորդ և այլն: Վերջ ի վերջո երեխաները անվտանգ կանցնեն, մարդիկ կիմանան որտեղից անցնեն, որպեսզի անվտանգ լինի:

Լուսացույցերն ավելորդ ծախս են:

Շուկա տանող ճանապարհը նույնպես վատն է չկան լուսակիրներ, անցումներ, անընդհատ վթարներ են տեղի ունենում:

Ես մանկապարտեզի տնօրեն եմ, մեր մանկապարտեզի դիմաց անցման նշանը գծված է, բայց ծնողները երեխաներին բերում են, ու քսան տարվի պետավտոտեսուչների կողմից ապա բոլորի հոգսը կպակասի:

Մարդիկ չգիտեն փողոցը ոնց անցնեն և ինչ անեն: Դպրոց մոտենալը շատ վտանգավոր է:

Երևանից եկող ճանապարհի վրա մի կողմից մյուսը անցնելու համար գծանշումներ չկան, չենք կարողանում փողոցի մյուս կողմն անցնել:

Կարելի է մանկապարտեզի և դպրոցի մոտ բարձր ասֆալտներ սարքել, որպեսզի մեքենաները դանդաղ վարեն:

Մայթերը շատ վատ վիճակում են: Եթե մայթի վրա կա խանութ ապա այդ մասը վերանորոգված է, սակայն մի քիչ քայլում ես լրիվ անհարմար է դառնում:

Ավելի լավա ոստիկանությունը մտածի գծանիշերի մասին, իսկ քաղաքացիները՝ մայթերի մասին: Ոստիկաններին խնդրում ենք, որ հսկի երթևեկությունը երեխաների դասից գալու ժամանակ, դա էլ չեն անում, երբ դա հենց իրենց պարտականությունն է:

Դպրոցին հարակից տարածքում չկան անցումներ և երեխաները դպրոց են գնում փողոցի մեջտեղով:

Չկան գծված հետիոտնի ճանապարհ: Չգիտես որտեղով փողոց անցնել, որպեսզի մեքենայի տակ չընկնես:

Վարդգես Պետրոսյան փողոցով հնարավոր չէ անցնել, կանգառներ չկան, բոլոր գործող պետական հիմնարկներն այդ փողոցի վրա են:

Գետնանցումների խնդիր կա Աշտարակում, լավ կլինի, որ այս հարցը ներառվի երկրորդ սցենարում

Տիգրան Մեծ փողոցում կա ճանապարհային անցում, որը չի գործում:

Ես երեխայիս գետնանցում մտնել չեմ թողնում, որովհետև ոնց որ հասարակական զուգարան լինի: Ահավոր կեղտոտ է:

Լավ կլինի գետնանցումները հասարակական զուգարան չդարձնեն: Միշտ

րոպե չեն կրողանում փողոցն անցնեն, որ մտնեն շենք, նշանն էլ կա, բայց վարորդը վարելու շնորք չունի, գոնե նման վայրերում պետք է սեղմո-վի նշան լինի, սեղմես, մեքենաները կանգնեն, ու անցնեն:

Թարթող լուսակիներն անիմաստ են: Հարկավոր են նորմալ լուսակիրներ, որպեսզի ճանապարհային երթևեկության տարրական կանոնները պահպանվեն:

Վ. Պետրոսյան փողոցում չկան լուսակիրներ, միշտ մեքենաների վթար է լինում: Շտապ օգնության մեքենան չի կարողանում քաղաքի ավտոմեքենաների միջով անցնի և շուտ տեղ հասնի:

պետք է մաքուր պահել և լուսավոր, որ մարդիկ կարողանան օգտագործեն:

Գետնանցումը Տիգրան Մեծի փողոցում միայն մեկ օր է գործել, այսօր այն վերածվել է աղբանոցի: Եթե գետնանցումը կամ ընդհանրապես անցումները սարքում են, ապա թող նաև հետևեն դրանց, որպեսզի մաքուր մնան և բնակիչները կարողանան օգտվել:

Աշտարակում հետիոտնին զիջելն ընդունված չի, որ վարելիս կանգնում եմ որ զիջեմ, հետևից մեքենաները ազդանշում են, բա այդ հետիոտները ինչ անեն:

Պետք է մեզնից սկսենք և օրենքով անցնենք փողոցը, հիշենք ամրագոտիները, երթևեկության մշակույթ է ձևավորվում:

Եթե համեմատենք Երևանի հետ, այստեղ ոչ մի կարգավորում չկա երթևեկության, Երևանում լուսակիրներ, գծանիշերը արդեն մարդկանց մոտ մշակույթ են ստեղծել կանոնները պահելու, իսկ այստեղ ոչ զեբր կա, ոչ էլ վարորդներն են զիջում:

Երեխաների համար շատ ենք անհանգստանում, դպրոցից մենք պետք է գնանք բերենք, որ հանգիստ լինենք երեխաների համար:

Աշտարակում ձևավորվեց ավագ դպրոց, սակայն երեխաները չեն գալիս ավագ դպրոց հենց այս ճանապարհների և տրանսպորտի պատճառով: Դպրոցին հարակից տարածքում երեխաները իսկապես վտանգված են, քանի որ չկա ոչ մի նշան և վարորդները շատ արագ են վարում:

Տարրական դասարանի երեխաներին դպրոց են բերում մայրերը: Եթե անցումներ լինեն և լինի ապահով, ապա երեխան կարող է ինքն էլ դպրոց գնալ:

Պետք է անցումների մոտ ոստիկաններ կանգնացնեն, որպեսզի մարդիկ միայն անցումներով անցնեն և սովորեն ճիշտ անցնելու վայրերը: Մեկ

Բացթողնված է հասարակական տրանսպորտի կանոնավոր գործունեության հարցը:

Ոչ միայն ճանապարհի խնդիր ունենք, այլև տրանսպորտի: Անգամ կանգառներ չկան: Մարդիկ չգիտեն, որտեղ սպասեն մեքենայի և որտեղից անցնեն:

Ծայրամասային թաղամասերից կենտրոն գալու հնարավորություն չկա, ավելի հեշտ է այլ քաղաք գնալ:

Տրանսպորտը սպասարկում է միայն կենտրոնական փողոցները, միջքաղաքայինի խնդիր էլ ունենք, պետք է ընտրել մի քանի տարածքներ, որոնք կսպասարկվեն:

Քաղաքապետարանը կանչում է վարորդին ասում երեք անգամ պետք է մտնես, վերևից ստիպում են վարորդին փող մուծեն իրենց մենակ, ուրիշ ոչ մի բանի մասին չեն մտածում, վարորդ էլ մինչև վերջին շունչը մարդ է վերցնում:

Տրանսպորտ չկա, դպրոցն էլ հեռու է, ոտքի ճանապարհ չի, ամեն օր երեխաներին տաքսիով ենք դասի տանում, թող տրանսպորտի հացն էլ լուծեն, ինչ-որ մեկը սեփականացրել է:

Գծանիշերը կոսմետիկ հարցեր են: Նախ պետք է տրանսպորտը կարգավորեն, ճանապարհները բարեկարգեն: Հիմա անվտանգության հարց կա հենց դրանց հետ կապված: Մարդիկ ոնց որ արժանազրկվեն տրանսպորտում «խցկվելուց»:

Տրանսպորտի բացակայության պատճառով ձմռան ցրտին երեխայիս երկու կիլոմետր քայլելով բերում եմ մանկապարտեզ:

Քաղաքային տրանսպորտը շատ փոքր տարածքում է երթևեկում, պետք է ամսում արդեն կսկսեն օգտվել անցումներից և երթևեկությունը առավել անվտանգ և ապահով կլինի:

ընդլայնվի քաղաքային տրանսպորտի երթևեկության շառավիղը: Եթե ծայրամասի բնակիչը ցանկանում է գնալ Երևան, ապա նա ոտքով պետք է գա հասնի ավտոկանգառ:

Երբ ասում ենք ճանապարհային խնդիրների կարգավորում, այստեղ պետք է ներառենք նաև քաղաքային տրանսպորտի կանոնակարգումը, մենք ունենք շատ մեծ թաղամասեր, որտեղ ոչ մի հասարակական տրանսպորտ չի գնում, մարդիկ չեն կարող հո միշտ տաքսիով շրջել:

Միջպետական ճանապարհները գոնե պետք է լուսավորվեն:

Կենտրոնական փողոցում ամբողջ գիշեր լուսավորում կա և նորմալ է ի տարբերություն ծայրամասերի:

Ամենակարևոր հիմախնդիրներից լուսավորությունն է, ճանապարհների անմխիթար վիճակը և տրանսպորտը:

Լուսավորության հարցը կարևոր խնդիր է Աշտարակ համայնքում:

Գոնե ամեն փողոցում պետք է գոնե մեկ լուսավորում:

Զբոսայգու տարածքը բացարձակապես լուսավորված չէ՝ չնայած գտնվում է կենտրոնական փողոցների խաչմերուկում:

Լուսավորության բացակայութան դեպքում երեկոյան ժամերին չենք կարողանում տնից դուրս գալ, զբոսնել:

Այն փողոցներում, որտեղ չկա լուսավորություն կան խանութներ, սակայն անհարմարություն է առաջացնում օգտվելը::

Եթե երկու աշտարակցի ուզում են հանդիպել գնում են Երևանում են հանդիպում, որովհետև այստեղ ոչ տեղ կա գնալու, ոչ էլ լույս կա, որ կարողանան ուղղակի զբոսնել:

Լուսավորության խնդիրը կարևոր է նաև երթևեկության համար, վարե-

Լուսավորված են կենտրոնական փողոցները, ընդհանուր լավ է լուսավորությունը:

Լուսավորությունը այնքան էլ առաջնային չի, մենք ջուր չունենք, մանկապարտեզներում, դպրոցներում, բնակարաններում ջրամատակարարաում չկա:

Լուսավորությունը շատ կարևոր է, բայց մարդիկ երեկոյան ժամերին դուրս չեն գալիս, որովհետև թափառող շներն են շատ: Մարդիկ վախենում են դուրս գալ: Որքան էլ լուսավորես, շները այդ լույսից չեն փախչի: Շատ վտանգավոր է զբոսնել:

Միանշանակ լուսավորությունը շատ կարևոր է, սակայն զբսայգի եթե չունենք, որտեղ ենք զբոսնելու, զբոսանքի վայր չունենք: Այդ գումարով կարելի է զբոսայգիներ ստեղծել: Այս պարագայում այդ լուսավորությունը մեքենայի համար է ստացվում:

Լուսավորությունը կարևոր է, բայց մայթ պետք է լինի, որ մարդիկ այդ լույսի ներքո կարողանան զբոսնեն:

Ավելի առաջնային է ջրի, աղբահանության հարցը, դրանք նախ կարգավորեն, շենքերը, հուշարձանները աղբանոց են վերածված, հետո մտածեն լուսավորելու մասին:

լիս չես տեսնում, որտեղ կա փոս, որ շրջանցես, գալիս ընկնում ես մեջը: Մի շարք փողոցներում լույսերը տեղադրված են, բայց չեն աշխատում, մյուսներում՝ առհասարակ տեղադրված չեն:

Տրանսպորտի վիճակը շատ վատ է, քառասուն րոպե սպասում ենք, վեցից հետո տրանսպորտ չկա, իսկ աշխատանքը վեցին ենք ավարտում:

Լուսավորության և շների խնդիրները իրար հետ կապված չեն: Երբ որ լուսավորություն լինի, փողոցները մաքուր, ապա շների թիվն էլ այսքան չի լինի:

Եթե լուսավորությունը թանկ է սպասարկելը, կարող են էներգախնայող լամպեր տեղադրել և ավելի մատչելի կլինի:

Կարծում եմ, որ նշված գումարի սահմաններում հնարավոր չէ իրականացնել ամբողջ քաղաքի լուսավորությունը, բայց գոնե մի տեղաշարժ կլինի: Պետք է պարզապես հետևողական լինել և իսկապես ներդրումներ անել քաղաքը բարեկարգելու համար:

Հիմա միայն կենտրոնական փողոցներ են լուսավորված, մյուս փողոցներով չենք կարողանում քայլել, համ երթևեկությունն է վտանգավոր, համ էլ թափառող շներ կան:

Աշտարակում լուսավորությունը նույնպես անտերության է մատնված: Լուսավորված են մի այն կենտրոնական մի քանի փողոցներ: Ժամը տասներկուսից հետո փողոց դուրս գալը շատ վտանգավոր է: Իսկ մինչև այդ գոնե լուսավորվեն մյուս փողոցներն էլ: Դա շատ կարևոր է նաև երթևեկության համար, քանի որ փողոցներում շատ են շները: Իսկ երբ լուսավորություն չկա, վթարներն անխուսափելի են:

Լուսավորությունը կարգավորելու դեպքում շների առկայության և նրանց հանդեպ վախը կնվազի, քանի որ կնկատենք նրանց և կզգուշանանք:

Աշտարակում օրերը կարճ են: Հենց մութն ընկնում է բոլորը մտնում են տուն և դռները փակում: Մթության մեջ մութ գործերը շատ են լինում: Եթե լույս լինի հանցագործությունները կնվազեն:

Ժամը տասներկուսից հետո Աշտարակն ընկղմվում է խավարի մեջ: Բոլոր տեսակի ընտրությունների ժամանակ մենք պարբերաբար բարձրացնում ենք այս հարցերը Սակայն մեզ միայն խոստումներ են տալիս, որոնք երբեք իրականություն չեն դառնում:

Լուսավորությունը կարևոր է հատկապես ձմռան ամիսներին, վեցին արդեն մութ է: Թափառող շներ են շատ, աղբակույտեր, փոսեր, տուն հասնելն էլ է վտանգավոր:

Ընդամենը հիսուն տոկոսն է լուսավորված և ժամը տասներկուսից հետո անջատվում են և լրիվ մութ է:

Գիշերը շները հարձակվում են մարդկանց վրա: Վտանգավոր է գիշերը տանից դուրս գալ: Երեկոյան բնակիչները նույնիսկ վախենում են շքամուտք մտնել:

Աղջիկները դասից տուն գնալու համար զանգում են մարդ են կանչում, որ իրենց տուն տանեն, վախենում են:

Ես կարծում եմ, որ մինչև գոնե կեսգիշեր պետք է լուսավորվեն պարտադիր բոլոր փողոցները: Իսկ շների հարցով պետք է զբաղվեն հատուկ մարմիններ: Աղբարկղերի կողքով անցնել չի լինի: Դա շատ վտանգավոր է, անգամ կյանքի և մահվան խնդիր կարելի է համարել:

Թող լույս լինի, որ երիտասարդները դուրս գան մարդու դեմք տեսնեն, ոչ թե պադվալներում հավաքվեն Աստված գիտի ում հետ, որ հանցագործ մեծանան:

Մուղնին Աշտարակի թաղամաս է, մեզ մոտ էլ շատ ուսանողներ են բնակվում, սակայն կապը Աշտարակից կտրված

է, քանի որ երեկոյան ժամերին Մուղնի գալ անհնար է, շուրջդ ոչինչ չես տեսնում, խնդրում եմ նշեք, որ լոսավորելիս Մուղնին էլ չմոռանան:

Երիտասարդ աղջիկները տանից չեն էլ կարողանում դուրս գան, եթե կենտրոնական փողոց էլ չի, ուրեմն տանից կարող ենք դուրս գալ միայն ֆանարիկներով, բայց դա թափառական շների հարցը չի լուծում, սպանելն էլ չի օգնում, մեկին սպանում ես, հաջորդ օրը ուրիշն է գալիս:

Քաղաքի տրանսպորտի և լոսավորության մեջ մեծ կապ կա, քանի որ տրանսպորտները գլխավոր փողոցներով են երթևեկում, իսկ մենք ստիպված ենք լինում մթով քայլել շների հանդեպ վախով, որպեսզի մեր բնակարաններին հասնենք: Լուսավորության հարցը լուծելը շատ կարևոր է, նաև տրանսպորտի հարցը պետք է լուծել:

Ձմռանը, եթե բնակարանում հաց չի լինում, պետք է սոված մնանք, քանի որ շներից վախենում ենք և փողոցներն էլ բավարար լուսավորված չեն:

Կենտրոնական այգու տարածքը հատում ենք ճանապարհը կրճատելու նպատակով, իսկ այդ տարածքը լուսավորված չէ, հարբեցողների հավաքատեղի է, շատ վտանգավոր է հատկապես երեխաների համար:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Մեքենաների պակասությունից ելնելով աղբահանությունը նորմալ չի ընթանում: Մեքենաները հին են, առաջարկվում է ձեռք բերել նոր մեքենաներ:

Գիտավան թաղամասում մեքենա է գալիս միանգամից մեքենայի մեջ ենք թափում, էլ աղբ չի կուտակվում: Սա կարելի է տարածել, աշխատող տարբերակ է:

Մեր փողոցում հինգ-վեց աղբարկղ կա:

Աղբարկղերը տեղադրված են դպրոց տանող ճանապարհին, որը դժվարություններ է առաջացնում դպրոց հասնելու համար:

Դպրոցի բակում են դրել աղբամանները, աղբը կուտակվում է, շներ են հավաքվում, քանդում, երեխաների

Կարծում եմ շատ արդյունավետ է նաև այն համակարգը, որի դեպքում շաբաթական գոնե երկու անգամ մեքենաները գալիս են և աղբ տանում: Մեր թաղամասում այդ համակարգն է կիրառվում և բավականին արդյունավետ է:

Համայնքում ընդամենը երեք աղբահան մեքենա կա, որոնք չեն հասցնում իրենց աշխատանքը,մենք ինքներս ենք մեր սեփական մեքենաներով տանում աղբը թափում:

Աղբահանությունը իրականացվում է հատուկ ՀՈԱԿ-ի կողմից, բայց նրանց ռեսուրսներն էլ բավարար չեն, մի շարք թաղամասերում հասցնում են աղբահանությունը նորմալ կազմակերպեն, մյուսներում ոչ. մեզ անհրաժեշտ են առնվազն ևս վեց աղբահանման մեքենա, որ ամեն ինչ պատշաճ կատարվի:

Այսօր մենք աղբը տանում ենք մեր ձեռքով նետում ենք աղբահանման մեքենայի մեջ, որը անցնում է կենտրոնական փողոցներով, չի գալիս բակից տանի:

Եթե մեքենաները շատ լինեն, ապա աղբը չի կուտակվի և բնակիչները չեն բողոքի, որ իրենց տան մոտ կա աղբարկղ:

Աղբարկղներ կան տեղադրված, սակայն աղբահանություն չի կատարվում: Երևի ամիսը մեկ է աղբահանություն կատարվում: Սա էլ հիվանդություններիի, առնետների, շների առաջացման աղբյուր է հանդիսանում: Պետք է ամեն օր կամ օրը մեջ կատարեն:

Փողոցներում աղբի կույտեր են հավաքվում, ավելի լավ կլինի, որ մեքենաներն ավելի հաճախ գան, քան աղբամաններ տեղադրեն:

Փոքր աղբարկղեր տեղադրելու փոխարեն, ավելի լավ է ձեռք բերել նոր մեքենաներ:

համար հակահիգիենիկ է ու վտանգավոր: Երեխաները դրանց կողքով են անցնում:

Հենց դպրոցի մոտ կա աղբ, որի շուրջ մշտապես շներ են հավաքված և դրանք շատ վտանգավոր են երեխաների համար: Հարկավոր է առաջին հերթին աղբարկղեր տեղադրել հենց դպրոցի մոտ: Բացի դա, այդ աղբի հոտը տարածվում է նաև ամբողջ շրջակայքում՝ ստեղծելով ոչ սանիտարահիգիենիկ պայմաններ:

Աղբամանների շուրջ բետոնապատելը շատ կարևոր է, այդ դեպքում շները չեն կարողանա միջից բան տանել, գուցե այդքան էլ չի տարածվի:

Աղբարկղի տեղադրումը շատ կարևոր է: Օրինակ եթե մարդը տեսնի որ աղբարկղ է տեղադրված, աղբը չի թափի գետնին:

Աշտարակի որոշ թաղամասերում այս տարի աղբահանությունը իրականացվել է բավականին լավ: Դա պետք է կիրառել ամբողջ քաղաքում: Շատ արդյունավետ էին ծածկված աղբարկղերը, որի հետևանքով թափառող շները անհետացան որոշ թաղամասերից: Բայց դա պետք է կիրառել ամբողջ քաղաքում:

Պետք է փոքր աղբամաններ տեղադրվեն, որ մարդիկ չաղտոտեն միջավայրը: Օրինակ ի ձեռքում հնարավոր է ինչ-որ թուղթ լինի, չգիտեմ որտեղ նետեմ: Պետք է 50 մետրը մեկ տեղադրված լինեն:

Պրակտիկան ցույց է տալիս, որ մեր փողոցներում մարդիկ աղբ գցելու տեղ չունեն:

Աղբարկղները շատ քիչ են տեղադրված, միայն շենքերի բակերում են դնում, իսկ կարելի է նաև հրապարակում և կենտրոնական փողոցներում էլ տեղադրել:

Մինչ պահանջել, որ մարդկանց տուգանենք աղտոտելու համար, պետք է

Չի բավարարում աղբահանության տեխնիկան, այս սակավ ռեսուրսով ծառայությունը չի կարող նորմալ կատարվել:

Ունենք ընդամենը երեք մեքենա, որոնք անընդհատ վերանորոգման կարիք ունեն և նորմալ չեն գործառնում:

Աղբի մեքենան ավելի կարևոր և անհրաժեշտ է, քան աղբարկղերի քանակը

Մեր տան կողքը կա աղբարկղ, մարդիկ տանում են կողքն են դնում ու օրերով կուտակվում է: Մենք ենք զանգում ասում եկեք աղբը տարեք, դա էլ չի օգնում, հետո աղբատար մեքենա էլ չկա: Եթե աղբարկղ դրվում է, ինտենսիվ աղբահանում իրականացվի, թե չէ միևնույն է կուտակվում է, հոտը տարածվում է:

Մուղնիում աղբարկղերի շուրջ բետոնապատում իրականացված է, սակայն միևնույն է կեղտոտ է, որովհետև աղբահանման մեքենան այնքան ուշ-ուշ է գալիս, որ աղբը չի տեղավորում, պետք է ոչ թե բետոնապատել, այլ ճիշտ կազմակերպել աղբահանումը:

Թող կառավարությունը ամեն քաղաքի երկու կամ երեք մեքենա հատկացնի նոր, որ նորմալ կատարվի աղբահանությունը, բնակիչը ի վիճակի չէ հոգալ այդ ծախսերը:

Քաղաքապետը ասում է, որ պետք է մեքենա բերեն, բան չեն անում: Եթե համատիրություն ունենանք, գուցե աղբահանությունն էլ կարգավորենք:

Ավելի առաջնային է ջրի, աղբահանության հարցը, դրանք նախ կարգավորեն, շենքերը, հուշարձանները աղբանոց են վերածված, հետո մտածեն լուսավորելու մասին:

Եթե աղբը դնում եմ բակում, ապա շները դրանք ցրում են և քաղաքը աղտոտում: Դրա համար շատ երկար քայլում եմ մինչ հասնեմ աղբարկղին:

պարտադիր նախ բնակչին ապահովես պայմաններով, ասել աղբը մի նետիր գետնին, նետիր աղբարկղում այն դեպքում, երբ ամբողջ ճանապարհին մի հատ աղբարկղ չկա չի կարելի:

Խնդիրը ոչ թե համայնքի աղբահանության մակարդակի բարձրացումն է, այլ կենտրոնական փողոցներում փոքր աղբամանների տեղադրումն է:

Մեծ աղբամաններ պետք չեն, աղբի կողքը շները, կատուները և այլ կենդանիներ են հավաքվում, մենք էլ տանում հեռվից նետում ենք ու արդյունքում գետնին է հայտնվում:

Համայնքի նոր ղեկավարները հեռացնում են նախկին ղեկավարների տեղադրված աղբամանները, տեղադրում են նորը, որպեսզի բյուջեից նոր հատկացումներ անեն: Որտեղ են նախկինում տեղադրված աղբարկղերը:

Փողոցներում աղբարկղերի տեղադրումը կարևոր խնդիր է, բայց ոչ կարևորագույնը:

Եվ պետք է աղբարկղեր տեղադրվեն, և մարդկանց ուսուցանեն:

Ավելի լավ կլինի աղբամանները մետաղից լինի, որ ծխախոտից չայրվեն:

Մենք խնդրել ենք, որ մեզ մոտ աղբարկղ չդնեն, որովհետև շների հավաքատեղի է դառնում: Մեքենա է գալիս, մարդիկ գիտեն ժամը քանիսին է մոտենում և գցում մեքենան: Սակայն մեքենան պետք է հաճախ գա և սահմանված ժամանակով:

Մարդիկ էլ պետք է դաստիարակվեն, որ իրենք էլ իրենց միջավայրը չկեղտոտեն, ծխախոտը, աղբը բակերում չթափեն, մեր երեխաներն են այդտեղ խաղում, գոնե համատիրությունները բակերը վերանորոգեն, մաքրությունն էլ հսկեն:

Այն վայրերում որտեղ աղբի կուտակումներ են տեղի ունենում, առաջար-

Մենք մի հոյակապ շուկա ունեինք այստեղ, սակայն հիմա այն վերածվել է մարզային աղբանոցի, շներն ու «բուրմունքն» անպակաս են: Թող այդ տարածքը մաքրեն, մենք էլ կօգնենք, թող մաքրեն, այգի սարքեն, խաղահրապարակ երեխաների համար:

Պետք է մեքենաներ բերեն, աղբարկղները ճիշտ տեղադրվեն, վարչական իրավախախտումների օրենքում էլ փոփոխություն արվի, որ մարդիկ տուգանքի վախից դրսում աղբ չթափեն:

Աշտարակում մեքենա չկա, աղբարկղները սխալ տեղերում են դրված:

Սանեպիդկայանը չի գործում, Աշտարակում վարակային, համաճարակային օջախներ են ստեղծվում այս աղբի պատճառով:

Ես ամաչում եմ, երբ տուրիստները գալիս են և նկարում մեր աղբը...

Եկեք առաջին հարվածով մաքրենք քաղաքի աղբը, հետո կսկսենք մյուս խնդիրների մասին խոսել, քանի որ աղբը քաղաքը տեսքից գցում է:

Ես կուզեի, որ մեր հին այգին վերանորոգվեր, հիմա այն վերածվել է աղբանոցի, մարդիկ գնում են այդտեղ ինչ որ թաքուն գործեր անում գալիս: Վտանգավոր է բոլորի համար, իսկ եթե մաքրեն բլորիս համար լավ կլինի:

կում ենք նախ մաքրել, բարեկարգել, բայց հետո էլ անպայման ցուցանակ դնել, որ այդտեղ աղբ նետելը տուգանվում է, ու ամենակարևորը՝ հետևողական լինել և տուգանել:

Եվ պետք է աղբարկղեր տեղադրվեն, և մարդկանց ուսուցանեն:

Եթե երեխային ուղարկում ես աղբը թափելու, գնում-տեսնում է աղբը աղբարկղի մոտ է թափված, ինքն էլ գցում է կողքը և գալիս, այսպես էլ կեղտոտվում է քաղաքը:

Ես աղբահանությունից դժգոհ չեմ, մեքենաները շրջում են և հավաքում աղբը:

Սովխոզի տարածքի բնակիչները չեն վճարում և մեքենան այդ տարածք չի մտնում, որ աղբը հավաքի:

Աղտոտվածության խնդիրը միայն աղբամաններից չի գալիս, քո բակն ավլում ես, տասը րոպե հետո արդեն կեղտոտ է, մեր մարդկանց մտածելակերպն է խնդիրը, ուզում եք ամբողջ քաղաքում աղբարկղեր տեղադրեք, միևնույն է կեղտոտ է լինելու քաղաքը:

Մարդկանց գիտակցության մեջ մտցնել, որ աղբը պետք է աղբամանի մեջ գցել, ոչ թե դնել կողքը ու գնալ: Կարելի պլակատներ սարքել, սոցիալական գովազդներ անել, որ մարդիկ հասկանան դա գեղեցիկ չէ, ճիշտ չէ: Իսկ եթե ոչ ապա թող տուգանեն այդ մարդկանց:

Աշտարակը լի է խնդիրներով: Դրանցից մեկն էլ աղբահանության խնդիրն է: Եվ դրա համար պետք է սկսել մարդկանց կրթելուց: Պետք է փոխել մեր ազգի մենթալիտետը: Երբեմն լինում են դեպքեր, երբ աղբը թափվում է աղբարկղերի կողքին:

Քաղաքը ամեն օր լվացվում է, ամեն օր անհնար է զրոյով աշխատել, քանի որ չկան ռեսուրսներ:

Կան մարդիկ, որ բարձր հարկերից իջեցնում են աղբն ու դնում առաջին

հարկում ու գնում, գիտակցությունն է պետք փոխել:

Մայր առուն հոսում է մանկապարտեզի մոտով և տեսել եմ, որ վերևից աղբ են գցել գետի մեջ:

Մեր քաղաքը աշխարհագրորեն փոսի մեջ է և կառավարությունը կարծես թռնում է մեր վրայով՝ անտեսելով ամեն ինչ Ապարանը իր Ապարան հալով ավելի մաքուր է, քան մեր քաղաքը:

Բնակիչները սովորություն ունեն աղբի տոպրակը աղբամանի կողքը դնել: Մարդիկ ասում են հավես ունեմ աղբամանին հասնեմ: Այդ դեպքում մարդկանց մտածելակերպը պետք է փոխել:

Մարդիկ անգամ իրենց բնակարանների կողքն են դնում աղբը, մի քանի անգամ հարևանիս աղբն էլ եմ թափել, որ շենքից հոտ չգա:

Մարդիկ մինչև սպասեն աղբահանության օրերին, աղբը թափում են դրսում:

Մենք պետք է կանխենք, թույլ չտանք որ փողոցներում էլ շշեր, ծխախոտ թափեն: Բայց անհարմար ես զգում քեզ նկատողություն անել դրսում անծանոթ մարդու:

Շաբաթօրյակ ենք անում, ամբողջ աղբը հավաքում ենք տոպրակների մեջ, մի վարորդ եկավ մեր առաջ հենց աղբ գցեց, ասում է հավաքեք, դա ձեր գործն է. այսինքն աղբահանման խնդիրը մարդկանցից է:

Աղբը այրելու կենտրոններ, քաղաքին մոտ կառուցել պետք չի ու չի կարելի, այդ թունավոր օդը քամին կբերի քաղաքացի վրա, մեր երեխաներն ու ծնողներն են այդ օդը շնչելու՝ դա հարցի լուծում չի:

Բնակչությունը տեղյակ չէ, թե ինչ գումարներ են ծախսվում աղբահանության վրա:

Կարելի է տեսախցիկներ դնել, ու փողոցում աղբ թափողներին տուգանել:

Մի հատ էլ յութուբ գցել այդ մարդուն, կդաստիարակվի:

Փողոցներում աղբամանները դատարկ են, իսկ կողքը տոպրակներով աղբ է դրված

Բնակիչը բերում է աղբը թափում է աղբարկղի կողքը, կափարիչը չի բացում և հետո ասում է իմ աղբը չեք հավաքում և դրա համար չեմ վճարում:

Պետք է նշանակել տեսուչների, ովքեր կտուգանեն աղբը թափելու համար:

Անհրաժեշտ է մշակել հատուկ մեխանիզմ, կոնկրետ ժամեր երբ են աղբահանում անել, երբ մարդիկ տեսնեն, որ ըստ գրաֆիկի է ամեն բան տեղի ունենում, կսկսեն վճարել:

Պետք է տուգանք սահմանել աղբը գետնին թափելու համար:

Այսօր կան մարդիկ, որ նույնիսկ աղբարկղներն էլ են գողանում: Դա ահավոր է:

Աշտարակի հարակից տարածքում ուզում են կառուցել աղբահավաքման տարածք, բնակչությունը դեմ է, չեն ուզում կանաչ տարածքները կորցնել:

Ես դեմ եմ աղբը վառելու գաղափարին, որի մասին խոսվել է: Դրա ամբողջ ծուխը կլցվի Աշտարակ, քանի որ մեր քաղաքը ցածր դիրքում է գտնվում:

Կարող ենք աղբը ավելի նպատակային օգտագործել:

Երեխաներ և երիտասարդներ

Ինչու ամեն շաբաթ ծախս անենք գանք Երևան, եթե այդ պայմանները կարող ենք ունենալ այստեղ:

Քաղաքապետարանը պետք է գումար հատկացնի խաղահրապարակի վերանորոգման, համալրման, բարեկարգման համար: Քաղաքապետարանը եթե չի կարողանում անի, ապա պետք է ինչ-որ կառույցի հանձնի, որպես-

Ոչ մի տեղ խաղահրապարակներ չկան, Ջինիշյան հիմնադրամը ստեղծեց, սակայն չվերահսկվեց և վատթարացավ, պետք է մեկը անպայման հսկի, դրանից ո՞վ է օգտվում, մեծերը, թե՞ երեխաները:

Եթե այգին ծառայելու է հասարակության համար, ապա մի մասը պաղպաղակ է գնելու, իսկ մնացածն էլ

զի այդ կառույցները զբաղվեն այդ խնդիրներով:

Հինգ տարեկան երեխային աղբի խնդիրը չի հետաքրքրում, նրան հետաքրքրում է իր զբաղմունքը, երեխան չի կարող իր քաղաքում իր հանգիստը անցկացնել:

Ես խաղահրապարակների կառուցումն ամենակարևորն եմ համարում, դա մեր երեխաների համար ենք անում:

Խաղարհրապարկի կառուցումը կդառնա մի այլ վայր, որտեղ կհանգստանան ծնողները, տատիկներն ու պապիկները, հանգստի գոտի կդառնա, պահանջում ենք, որ այնտեղ չլինեն սրճարաններ:

Այսօր քանի որ մենք չունենք խաղահրապարակներ, մեր երեխաները ամբողջ ժամանակ անց են կացնում ինտերնետային ակումբներում ու համակարգիչների առջև:

Խաղահրապարակը լուծում է երեխաներին համակարգիչների դիմացից հանելու խնդիրը:

Երևանում ամեն ինչ կա և ծերերի և երիտասարդների համար, իսկ այստեղ պայմաններ չկան: Պապիկները նստում մենակ նարդի են խաղում, տաղավարներ էլ չկան: Խաղահրապարակը նաև մեծերի համար է անհրաժեշտ, ծերերն էլ են ուզում հանգստանալու տեղ ունենան:

Խաղահրապարակ ունենք, սակայն երեխաների զբաղվելու ոչինչ չունենք: Բացակայում է երեխաների խաղալու համար սահարանները, ֆուտբոլի դաշտը, կաչելի, հողային հարթեցված տարածք: Երկու հատ երկաթի կտոր է մնացել:

Այսօր մեր երեխաների համար որևէ հանգիստ կազմակերպելու համար մենք ստիպված ենք լինում Երևան հասնել: Բայց դա բոլորի համար հասանելի չեն: Պետք է անպայման չկարողանալով երեխաների համար պաղպաղակ կամ այլ բան գնել, չեն տանի երեխաներին այնտեղ, պետք է զերծ մնալ սննդի կետերից:

Խաղահրապարակի կառուցումը ձախ ափի բնակիչներին ձեռնտու չէ, միջքաղաքային տրանսպորտի խնդիր կա, հիմնականում ոտքով պետք է գան:

Շատ քիչ է հինգ միլիոնը խաղահրապարակների համար: Մեկը հազիվ դրանով սարքեն:

Հինգ միլիոնը խաղահրապարակի համար բյուջեից հատկացնելը քիչ է և գործը կիսատ կմնա, պետությունն է սնում ամեն ինչ և պետությունն էլ պետք է հատկացում անի:

Կան ավելի հրատապ խնդիրներ: Օրինակ զվարճանքի կենտրոններ, հանգստի վայրեր բացակայությունը, մեծ էկրանին ֆիլմ նայելու համար գնում ենք Երևան, նրբանցքների ասֆալտապատման և լուսավորության խնդիրը, հոսքագծի՝ կանալիզացիայի խնդիրը:

Կան ավելի հրատապ խնդիրներ՝ համաքաղաքային տրանսպորտի բարելավում, ավելի շատ փողոցների ընդգրկում:

Պետք է գումար տալ դպրոցներին, մանկապարտեզներին, միջոցներ չունեն, պայմաններ չունեն դպրոցները: Պետք է դրանք զարգացնեն:

Ավելի լավ է այդ գումարը տան մանկապարտեզներին ու դրանց բակերը սարքեն, ավելի քիչ գումար պետք կգա, մանկապարտեզն էլ կհսկի հրապարակը:

Պետք է առաջնային լինի ոչ թե ժամանցի հարցը, այլ երեխաների զարգացման: Ես մանկավարժ եմ, արվեստի դպրոց դիմեցի ընդունվելու, ինձ ասում են պետք է տասնհինգ աշակերտ ապահովես:

Լավ կառավարման խնդիր կա: Քաղաքապետարանին կից արվեստի

մտածել Աշտարակում բնակվող երեխաների համար խաղահրապարակներ և այգիներ կառուցելու գործում: Իհարկե դրա համար մեծ ներդրումներ են հարկավոր: Բայց կարելի սկսել նաև փոքրից: Ցանկացած ներդրում կարևոր կլինի մեր քաղաքի համար:

Միշտ վատն ենք տեսել և եթե ունենանք բարեկեցիկ պայմաններ, ապա կտեսնենք և ավելի դրական կվերաբերվենք և կսկսենք խնամել և պահպանել:

Մենք էլ ենք գնահատում գեղեցիկը, սակայն պետք է տեսնենք այդ գեղեցիկը, որ պահպանենք այդ դրականը:

դպրոցի պայմանները ահավոր են, ոչ մի տեխնիկա չունեն: Թող երեխաս նորմալ կրթություն ստանա, մի ճոճանակ էլ քիչ նստի:

Խաղահրապահակն էլ ժամանցային, մակերեսային խնդիր է, զարգացմանը պետք է ուշադրություն դարձնել: Սպորտդպրոց, արվեստի դպրոց պետք է զարգացնել:

Եղել է տարածք, որտեղ մարդիկ ցանկացել են խաղահրապարակ կառուցեն, հետո մեկը հայտնվել է և նշել, որ դա իր սեփական տարածքն է: Բոլոր վայրերը վաճառված են, խաղահրապարակի տեղ չկա: Ամեն թիզ հող վաճառել են ու շատերն էլ գնել են և ամայի թողել: Տարածքները ամայի են մնացել և օձի բների վերածվել:

Նորը ստեղծելը դժվար է իսկ հինը պետք է պահպանել, նորոգել, ներկել, մաքրել, որպեսզի այն չփչանա:

Զբոսնելու տարածք չկա: Ամբողջությամբ փոս և քար է: Նույնիսկ ցերեկային ժամերին չենք կարողանում քայլել, ինչ մնաց խաղահրապարակ լինի: Թող ճանապարհները վերանորոգեն, հետո նոր խաղահրապարակներ տեղադրեն:

Համատիրություն որ ստեղծվի և ակտիվ լինի, բնակիչներն էլ կնախաձեռնեն ու կստեղծեն: Գիտավանում ամեն ընտանիք հազար դրամ է դրել ու խաղահրապարակ ենք ստեղծել: Երեխաներ էլ ավելի պատասխանատու կլինեն, չեն փչացնի:

Առաջարկում ենք քաղաքապետարանին խաղահրապարակ կառուցել այն բակերում, որտեղ որպես նախապայման կստեղծվեն համատիրություններ:

Խաղահրապարակները թող կառուցվեն բանուկ հատվածներում:

Աշտարակը ունի երկու երեք մաս և եթե մեկում կառուցվի խաղահրապարակ մյուսում չկառուցի, ապա կդառնա

Մի քանի խաղահրապարակ կառուցելը ավելի շատ վնաս կտա, քան օգուտ, քանի որ ոչ բոլոր բակերում են կառուցվելու, մյուս բակի բնակիչները ավելի դժգոհ կլինի, քան հիմա:

Ես կողմ եմ մեծ համալիրի կառուցմանը, քան առանձին փոքր խաղահրապարակների:

Մարդիկ անվճարունակ են և այն դեպքում, երբ կա տունը երկու երեք երեխա ապա սա դառնում է շատ ավելի դժվար, մարդ չգիտի ոնց իր երեխաներին պահի և չի կարա գումար հատկացնի խաղահրապարակի համար:

Որտեղ կստեղծվի համատիրություն, այնտեղ էլ խաղահրապարակ կարք-

կռվախնձոր, այսինքն պետք է կառուցել երկուսի համար էլ:

Աշտարակում կար մի խաղահրապարակ, որն արդեն քարուքանդ է եղել: Պետք է կառուցել մի քանիսը, որպեսզի ամբողջ քաղաքն այդտեղ չկենտրոնանա: Այսօր Այդ խաղահրապարակը խիստ վերանորոգման կարիք ունի: Ստացվում է, որ ամբողջ Աշտարակում այսօր մի նորմալ խաղահրապարակ էլ չկա:

Առաջարկ կա կառուցել խաղահրապարակ Պռոշյան տասը հասցեում՝ հին շուկայի կողքը, այդտեղ անցուդարձը շատ է, հետո միայն կառուցել խաղահրապարակներ այլ վայրերում, որտեղ այդքան երևացող չի ու անցուդարձն էլ քիչ է:

Մարզահրապարակը պետք է առանձին լինի խաղահրապարակից ու պետք է լինի առնվազն երեքը, մեկը կենտրոնում, երկուսն էլ գետի տարբեր ափերին:

Աշտարակի երեխաներն ընդհանրապես զբաղվելու տեղ չունեն: Ժամանակին ունեինք նաև Կոմիտասի այգին, կարելի է դա էլ վերանորոգել: Բայց առավել կարևոր է շենքերի բակերում երեխաների համար խաղահրապարակներ կառուցելը, հատկապես բազմաբնակարան շենքերի բակերում:

Մենք ունենք այգի, որը լավ վիճակում չի, չես կարող գնալ զբոսնել, այգին ևս պետք է բարեկարգել, միայն խաղահրապարակը չի:

Ամենից հարմար տեղը Սիսակյան դպրոցի հարևանությամբ է, նախ կենտրոն է, երկրորդն էլ այդ ազատ տեղը գտնվում է երկու բարձրահարկ շենքերի միջև, բոլորին էլ հարմար կլինի:

Կարելի է մանկապարտեզի և դպրոցի մոտ բարձր ասֆալտներ սարքել, որպեսզի մեքենաները դանդաղ վարեն:

վի, որ վերահսկվի ու պահպանվի: Դա էլ արդարացի չէ, որովհետև մյուս շենքերի երեխաները էլի փողոցներում են խաղալու:

Շենքի բնակիչը իր տարածքը ցանկապատել է, աղբ է լցնում, ասում եմ, որ քաղաքապետարանից գան ուզեն խաղահրապարակ կառուցեն կտաս, ասեց կտամ, ասում եմ, դե ինչի ես սպասում գան, մեզ տուր մենք անենք, ասում է չէ, դու չես կարող, չես դնի, բայց մարդիկ պատրաստ են տարածքը տան:

Թող հին այգին վերականգնվի մասմաս, սկզբից թող խաղահրապարակը կառուցեն, հետո ծառեր տնկեն:

Երթևեկության անվտանգության վերաբերյալ մի լրացում, կարելի է դպրոցներին տրանսպորտ հատկացնել, որ երեխաներին գա տանի, տուն բերի, կարծում եմ բոլոր ծնողներն էլ կհամաձայնեն:

Երեխաների համար շատ ենք անհանգստանում, դպրոցից մենք պետք է գնանք բերենք, որ հանգիստ լինենք երեխաների համար:

Դպրոցին հարակից տարածքում չկան անցումներ և երեխաները դպրոց են գնում փողոցի մեջտեղով:

Ծնողները չեն կարողանում ուղեկցել երբեմն երեխաներին և դա առաջացնում է խնդիրներ, քանի որ չկան երթևեկության կանոններ:

Տրանսպորտ չկա, դպրոցն էլ հեռու է, ոտքի ճանապարհ չի, ամեն օր երեխաներին տաքսիով ենք դասի տանում, թող տրանսպորտի հացն էլ լուծեն, ինչ-որ մեկը սեփականացրել է:

Հատկապես դպրոցների մոտ լուսակիրների տեղադրումը, ցուցանակները և նշագծերը շատ ակտուալ են: Աշտարակում այսօր բարվոք ապրելու համար ոչ մի պայման չկա: Միանշանակ, ներդրումներ են հարկավոր:

Եթե երթևեկության կանոնները նշագրվեն, երեխաներին դասավանդեն այդ նշանները, հսկողություն կատարվի պետավտոտեսուչների կողմից ապա բոլորի հոգսը կպակասի:

Ես երեխայիս գետնանցում մտնել չեմ թողնում, որովհետև ոնց որ հասարակական զուգարան լինի: Ահավոր կեղտոտ է:

Աշտարակում ընդամենը մեկ լուսակիր կա, Երևանում զեբրաներ կան, իսկ այստեղ չկան երեխաները չգիտեն դրա մասին և սա շատ կարևոր խնդիր է:

Երեխաները եթե երկու անգամ տեսնեն ինչպես պետք է անցնեն, ապա այլևս խնդիր չի առաջանա:

Լուսավորությունն էլ թուլացնում են, որ երիտասարդներին էլ չթողնեն երեկոներն հավաքվեն, իսկ նրանք էլ զբաղմունք չունեն:

Աշտարակում չկան երեխաների համար խաղահրապարակներ:

Մայրերը կկարողանան երեխաներին երեկոյան դուրս հանել, որ մի քիչ մաքուր օդ շնչեն, ոչ թե տանը փակվեն համակարգչի առաջ:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Լավ կլինի, որ համատիրության ղեկավարը կին լինի:

Համատիրության ղեկավարը կարևորը լինի աշխատող, կանանց այնքան էլ չեն լսում, չնայած նրանք ավելի աշխատող են:

Ազդեցիկ կինը չի գողանա, կաշխատի, համատիրությունները լավ կաշխատացնի: Մենք պետք է քաղաքակիրթ ապրենք:

Կանայք գտնում են, որ պետք է տղամարդ լինի ղեկավարը, տղամարդիկ՝ հակառակը:

Քանի որ տղամարդիկ երկրում չեն կանայք կմասնակցեն համատիրության աշխատանքերին:

Աշտարակի ավագանում կանայք ներգրավված չեն.դա շատ վատ է:

Եթե բարեկարգվեն բակերը լավ կլինի կանանց ու երեխաների համար: Կանանց հոգսերը ավելի կքչանան, ավելի քիչ երեխաները կփոշոտվեն և մայրերը ավելի քիչ լվացք կանեն:

Եթե համայնքը բարելավվի, կբարելավվեն նաև ներընտանեկան մի շարք խնդիրներ:

Կանանց խնդիրը հիմնականում հետիոտնի խնդիրն է, իսկ տղամրդկանց խնդիրը վարորդների խնդիր է, բայց մեր քաղաքում երկուսն էլ հավասարապես խնդիր են:

Լուսավորության առկայության դեպքում բոլորը կշահեն, սակայն տղամարդիկ մեքենայով են երթևեկում, նրանց համար խնդիր չէ, կանայք և երեխաներն են տուժում, խնդրի կարգավորման դեպքում երեխաները և կանայք կշահեն:

Աղջիկները դասից տուն գնալու համար զանգում են մարդ են կանչում, որ իրենց տուն տանեն, վախենում են:

Մայրերը կկարողանան երեխաներին երեկոյան դուրս հանել, որ մի քիչ մաքուր օդ շնչեն, ոչ թե տանը փակվեն համակարգչի առաջ:

Երիտասարդ աղջիկները տանից չեն էլ կարողանում դուրս գան, եթե կենտրոնական փողոց էլ չի, ուրեմն տանից կարող ենք դուրս գալ միայն ֆանարիկներով, բայց դա թափառական

շների հարցը չի լուծում, սպանելն էլ չի օգնում, մեկին սպանում ես, հաջորդ օրը ուրիշն է գալիս:

Այո՛, Այս հարցը կապ ունի կանանց հետ, քանի որ կինն է երեխային դաստիարակում, որ երեխան իմանա թե ինչպես պետք է աղբը թափի, եթե նա տեսնում թե մեծն ինչպես է դնում աղբամանի կողքն ու գնում, նույնն էլ սովորում է: Սակայն միաժամանակ պետք է նշեմ, որ այդ նույն աղբամանների մոտ ապրում են հսկայական շներ, որոնցից նույնիսկ մեծահասակներն են վախենում:

Ես վիրավորվում եմ, որ աղբահանությունը կապում են կանանց հետ: Մենք սիրված ենք, երբ աղբ ենք թափում, և երբ լվացք ենք անում, ինչ պարտադիր է, որ կանանց հետ կապեք: Սա ընդհանուր հարց է, որ բոլորին էլ վերաբերում է:

Մենք՝ կանայքս առավոտվանից սպասում ենք, որ մի մեքենա գա բանջարեղեն բերի, որ գնենք, իսկ մենք լավ շուկա ունեինք, այն կարելի է մաքրել մի մասը սարքել խաղահրապարակ, մյուս մասն էլ շուկա:

Քվեարկության արդյունքներ

Երթևեկության անվտանգության բարելավում	26
Գիշերային լուսավորության համակարգի ընդլայնում	18
Փողոցներում աղբարկղերի տեղադրում	13
Խաղահրապարակների կառուցում	40

	ԿՈՂՄ	ԴԵՄ
Համատիրությունների հիմնում	80	19

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք



Չարենցավան քաղաքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում Հրազդան գետի ձախ ափին, ծովի մակարդակից 600-1700 մետր բարձրության վրա: Մոտ է Երևան–Սևան մայրուղուն և գտնվում է Երևանից 38 կմ, իսկ, մարզկենտրոն Հրազդանից՝ 15 կմ հեռավորության վրա: Քաղաքը հիմնադրվել է 1947թ., որպես Գյումուշի հիդրոէլեկտրակայանի բանվորական ավան: Նախկին Լուսավանը 1967թ. վերանվանվել է Չարենցավանի, Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակին: Համայնքի կլիման որպես չափավոր ցամաքային է:

Քաղաքի վարչական տարածքը շուրջ 557 հեկտար է, բնակարանային ֆոնդը՝ շուրջ 43 հա, արտադրական նշանակության հողերը շուրջ 208 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ շուրջ 47 հա, հանգստի գոտիները՝ շուրջ 20 հա, անտառային գոտին՝ շուրջ 30 հա:

2013 թվականի տարեսկզբին համայնքի շուրջ 7,570 տնային տնտեսություններում մշտական բնակություն թիվը կազմել է շուրջ 25,200 մարդ, այդ թվում՝ շուրջ 285 փախստական: Բնակչության 51,3 %-ը կանայք են, 48,7%-ը՝ տղամարդիկ:

Պատկեր 1. Չարենցավան համայնքի մշտական բնակչության թվաքանակը, 2005-2012թ. (տարեսկզբին, հազար մարդ)



Քաղաքի բնակչության միջին տարիքը 2009թ. տարեսկզբին կազմել է շուրջ 35.7, 2012թ. դեկտեմբերին՝ 36.8: Աշխատունակ բնակչության թիվը կազմում է շուրջ 23 հազար մարդ: Համայնքում զբաղված է շուրջ 3100 մարդ: Զբաղվածության կենտրոնում գրանցված է շուրջ 2000 աշխատանք փնտրող, մեծ մասամբ կանայք (80%):

Շուրջ 3,650 չարենցավանցի կենսաթոշակառու է, շուրջ 1,500-ը՝ ընտանեկան նպաստառու: Շուրջ 1,150 չարենցավանցի հաշմանդամ է:

Քաղաքի տարածքում գործում է 7 համեմատաբար խոշոր արդյունաբերական ձեռնարկություն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

Ինը մսուր մանկապարտեզներից այսօր գործում է 5-ը: Գործում են 5 հիմնական և մեկ ավագ դպրոցներ, մեկ պետական քոլեջ, որն ունի 6 բաժին:

Մշակույթի տան շենքում գործում է Գառզուի անվան Արվեստի դպրոցը, որն ունի երաժշտական, գեղարվեստի (նկարչության, քանդակագործության, ասեղնագործության), պարարվեստի բաժիններ: Գործում են մանկական պարային համույթներ, կերպարվեստի, քանդակագործության, ձեռագործության, դաշնամուրի, լարային և վոկալի բաժիններ: Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցում գործում են դաշնամուրի, լարային, փողային, վոկալի և ժողգործիքների բաժիններ: Առավել մասսայականություն են վայելում ժողգործիքների բաժիններ: Գործում է Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը 7 խմբերով: Քաղաքն ունի 350 տեղանոց համերգային դահլիճ: Արա Մանուկյանի անվան մարզադպրոցում գործում են 7 տարբեր մարզաձևերի խմբեր, իսկ 2010 թվականից կառուցվում է նոր մարզադպրոց:

Գործում է գրադարան, գրքային ֆոնդը կազմում է 40,700 գիրք:

Քաղաքն ունի 3 հանգստի գոտի. «Հաղթանակի պուրակը», «Գանգրահեր տղա» համալիրը, քաղաքային զբոսայգին՝ որտեղ գտնվում է Ե.Չարենցի անվան տուն-թանգարանի հուշասրահը: 2000 թվականից համայնքում գործում է Սուրբ Փրկիչ եկեղեցին:

Քաղաքի կոմունալ սպասարկումն իրականացնում են 3 համատիրություններ: Քաղաքում գործում են մի շարք ՀԿ–ներ՝ Չարենցավանի համայնքային աջակցության կենտրոնը, Քաղաքացիական Կրթության կենտրոնը, Երիտասարդական ուսանողական ՀԿ, Ռեսուրս Կենտրոն:

Բյուջեն

Չարենցավան համայնքում բյուջետային ծախսերը 2012 թվականին կազմել են շուրջ 532 միլիոն դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեն (ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կազմել է շուրջ 454 միլիոն դրամ, իսկ ֆոնդայինը՝ շուրջ 78 միլիոն դրամ: Համայնքային կառույցներին հատկացված սուբսիդիաները կազմել են համայնքի 2012թ. վարչական բյուջեի շուրջ երկու երրորդը՝ 63.3%: Աշխատանքի վարձատրության ծախսը կազմել է վարչական բյուջեի 16.5%-ը և գրեթե նույնքան ծախսվել է ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով՝ 17.1%: սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ տրամադրելուն և այլ ծախսերին միասին ուղղվել է վարչական բյուջեի շուրջ 3%-ը:

Պատկեր 2. Չարենցավան համայնքի բյուջետային վարչական ծախսերը 2012 թվականին



Չարենցավան համայնքի 2012 թվականի բյուջեի վարչական ծախսերի 40 տոկոսից քիչ ավելին՝ 41.4%-ը ուղղվել է կրթությանը: Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցման նպատակով ծախսվել է համայնքի վարչական բյուջեի 28.5%-ը: Աղբահանության կազմակերպման ծախսերը կազմել են համայնքի վարչական բյուջեի գրեթե մեկ հինգերորդը՝ 19.6%: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների մատուցման ծախսերը կատարվել են բացառապես ֆոնդային բյուջեի հաշվին: Համայնքի 2012 թվականի ֆոնդային բյուջեի ծախսերը գրեթե բացառապես ուղղվել են այս դասակարգիչով կատարված ծախսերին: Տրանսպորտի ծախսերը համայնքի վարչական բյուջեում կազմել են շուրջ 4 տոկոս: Գրեթե նույնքան ծախսվել է հանգստի, մշակույթի և կրոնի դասակարգչով՝ 3.8%: Սոցիալական պաշտպանության ծախսերը կազմել են վարչական բյուջեի 1.7 տոկոսը:

Պատկեր 3. Չարենցավան համայնքի բյուջետային ծախսերում վարչական և ֆոնդային մասերից կատարված ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման



2007 թվականից Չարենցավանի քաղաքապետը 1974թ. ծնված Հակոբ Շահգալդյանն է, մասնագիտությունը՝ գյուղատնտեսության մեքենայացում: Ունի մասնագիտական և կազմակերպական աշխատանքի հարուստ փորձ: Անկուսակցական է: Ամուսնացած է, ունի երկու որդի:

Համայնքի ավագանու անդամներն են. Արթուր Աբգարյանը, Գարիկ Ազարյանը, Մանուկ Ասատրյանը, Վալերի Բաբայանը, Կամո Բաղդասարյանը, Անատոլի Գասպարյանը, Արտակ Գրիգորյանը, Համլետ Դավթյանը, Գագիկ Կոստանդյանը, Գարիկ Ղամբարյանը, Նորիկ Մալխասյանը, Մարտին Մանասյանը, Մաքսիմ Մելիքյաը, Նորայր Վարդանյանը, Նորիկ Վարդանյանը:

Համայնքի զարգացման խնդիրները

Չարենցավան համայնքի զարգացման հիմնական խնդիրներն ամբողջականացված են համայնքի զարգացման քառամյա ծրագրում, ուր ներառված են թե՛ համայնքի ավագանու, ղեկավարի և աշխատակազմի կողմից առաջ քաշված խնդիրները, այնպես էլ համայնքի բնակիչների հետ առանձին քննարկումների ընթացքում բարձրաձայնված մի շարք հարցեր:

Աղյուսակ 1. Համայնքի զարգացման խնդիրներն ըստ գերակայության (Համայնքի քառամյա ծրագիր)

Գ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
1	Ասֆալտապատ տարածքների հիմնանորոգում	190,000
2	Քաղաքի մսուր-մանկապարտեզների հիմնանորոգում	200,000
3	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում (65 շենք)	190,000
4	Նոր մարզադպրոցի կառուցում	1,150,000

5	Քաղաքապետարանի շենքի վերանորոգում	70,000
6	Գանգրահեր տղա հուշահամալիրի վերագործում	30,000
7	Հրապարակի շատրվանի կառուցում	10,000
8	Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում	10,000
9	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնանորոգում	40,000
10	Չարենցի հուշահամալիրի կառուցում	3,000

Աղյուսակ 2. Համայնքի զարգացման խնդիրներն ըստ ծրագրի արժեքի (Համայնքի քառամյա ծրագիր)

Գ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
10	Չարենցի հուշահամալիրի կառուցում	3,000
7	Հրապարակի շատրվանի կառուցում	10,000
8	Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում	10,000
6	Գանգրահեր տղա հուշահամալիրի վերագործում	30,000
9	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնանորոգում	40,000
5	Քաղաքապետարանի շենքի վերանորոգում	70,000
1	Ասֆալտապատ տարածքների հիմնանորոգում	190,000
3	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում (65 շենք)	190,000
2	Քաղաքի մսուր-մանկապարտեզների հիմնանորոգում	200,000
4	Նոր մարզադպրոցի կառուցում	1,150,000

Քննարկման դրված սցենարները

Սցենար 1. Երիտասարդական փողոցի բարեկարգում

Չարենցավան համայնքի ասֆալտապատ Երիտասարդական փողոցն ու դրան հարակից փողոցներն անմխիթար վիճակում են՝ կիսաքանդ,

խորդուբորդ, մեծ ու փոքր ակոսներով, ջրափոսերով: Ձմռանը և անձրևոտ օրերին այս կենտրոնական ճանապարհները դժվարանցանելի են մարդկանց ու մեքենաների համար: Անբարեկարգ է նաև փողոցի միակ հարակից մայթը: Մինչդեռ այս փողոցի վրա են գտնվում համայնքի մի շարք կարևոր հանրային հաստատություններ, այդ թվում՝ դատարանը, զբոսայգին, եկեղեցին, հիվանդանոցը, թիվ 3 դպրոցը, բազմաթիվ խանութներ և սպասարկման այլ կետեր: Այս փողոցներով են նաև ամեն օր աշխատանքի գնում ու տուն դառնում քաղաքի հիմնական արդյունաբերական հիմնարկների բազմաթիվ աշխատողները:

Քաղաքային տրանսպորտի բացակայության պայմաններում նախադպրոցական հաստատություններ և դպրոց հաճախող երեխաներն ու նրանց ուղեկցող ծնողները, հաշմանդամներն ու տարեցներն ամեն օր հիմնականում ոտքով են անցնում այս ճանապարհները: Ճանապարհների վիճակը վտանգավոր է դարձնում թե՛ հետիոտնի, թե՛ մեքենաների երթևեկը: Փողոցի վիճակը նվազեցնում է նաև շտապ օգնության ծառայության արձագանքման արագությունը: Շատ վթարներ կարող էին չլինել, եթե ճանապարհները բարեկարգ լինեին:

Չարենցավան համայնքի 2014թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել հատկացնել շուրջ 8 մլն. դրամ՝ Երիտասարդական փողոցի ամբողջական փոսային նորոգման համար: Նախատեսվում է վերանորոգել շուրջ 500 ք.մ. ընդհանուր մակերեսով փոսեր, հիմնանորոգել մայթն ու եզրաքարերը:

Վերանորոգման արդյունքում.

- քաղաքի ամենամեծ փողոցներից մեկը կդառնա ավելի բարեկարգ և հրապուրիչ.
- կբարձրանա քաղաքացիների երթևեկության անվտանգությունը և կնվազի ճանապարհային պատահարների թիվը.
- կմեծանա շտապ օգնության ծառայության արձագանքման արագությունը.
- կթեթևանա դպրոցահասակ երեխա ունեցող ընտանիքների հոգսը.
- համայնքի բնակիչները, մասնավորապես երիտասարդները, երեկոյան ժամերին կկարողանան կազմակերպել իրենց համատեղ ժամանցը:

Սցենար 2. Թիվ 6 մանկապարտեզի կոյուղագծերի վերանորոգում

Չարենցավան համայնքի թիվ 6 մանկապարտեզը կառուցման օրից չի հիմնանորոգվել: Մանկապարտեզի 3 խմբերում սովորում է շուրջ 120

երեխա: Մանկապարտեզը ջեռուցում չունի. տարվա ցուրտ եղանակներին օգտագործվում են բացառապես արևկող սենյակները, իսկ ձմռան 3 ամիսներին մանկապարտեզը չի գործում, ինչը լուրջ խնդիրներ է ստեղծում նախադպրոցական տարիքի երեխա ունեցող, աշխատող ծնողների համար և խաթարում է երեխաների շարունակական կրթությունն ու դաստիարակությունը: Մանկապարտեզը հիմնականում ապահովված է գույքով, սակայն գույքն ավելի քան 30 տարվա հնություն ունի: Մանկապարտեզի կոյուղու համակարգն ու սանիտարական հանգույցները անմխիթար վիճակում են: Մանկապարտեզը Չարենցավանի միկրոթաղամասերին ամենամոտ նախադպրոցական հաստատությունն է: Այստեղ բնակվող շատ ընտանիքների երեխաներ հենց այս մանկապարտեզն են հաճախում:

Ստեղծված իրավիճակը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն ապահովել երեխայի իրավունքների իրականացումը: Այս պայմաններում մանկավարժները, դայակներն ու սպասարկող անձնակազմը հարկադրված են մեծ դժվարություններով պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններ ապահովել երեխաների խնամքի համար: Ավելի՛ն, մանկապարտեզը պարբերաբար անհարկի տուգանքներ է վճարում հակահամաճարակային կենտրոնի ստուգումների արդյունքում, ինչը լրացուցիչ ֆինանսական բեռ է համայնքի համար: Ներկայում մանկապարտեզի վիճակը հնարավորություն չի տալիս ընդլայնել խմբերի քանակն ու հաճախող երեխաների թիվը, ինչը մանկապարտեզին հարակից թաղամասերում և քաղաքի միկրոթաղամասերում բնակվող շատ երիտասարդ ընտանիքների և երիտասարդ մայրերի համար զարգացման լուրջ խոչընդոտ է:

Չարենցավան համայնքի 2014թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել շուրջ 3 մլն. դրամ հատկացնել՝ թիվ 6 մանկապարտեզի սանհանգույցների և կոյուղագծերի հիմնանորոգման համար: Դոնորների և մասնավոր ներդրողների կողմից լրացուցիչ ֆինանսավորման պարագայում հնարավոր է ամբողջապես հիմնանորոգել մանկապարտեզն ու տեղադրել ջեռուցման սեփական համակարգ:

Մանկապարտեզի սանհանգույցների և կոյուղու համակարգի վերանորոգման արդյունքում.

- կբարելավվեն մանկապարտեզի աշխատակազմի աշխատանքային պայմանները, ինչը հնարավորություն կտա ավելի շատ ջանքեր ուղղել երեխաների խնամքին ու դաստիարակությանը.
- երեխաների համար կապահովվեն սանիտարահիգիենիկ պատշաճ պայմաններ.
- ջեռուցման համակարգի տեղադրման պարագայում հանրավոր կլինի բացել նոր խմբեր.
- նախադպրոցական տարիքի երեխաները հնարավորություն կունենան

ստանալու գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են զարգացման և հետագա կրթության համար.

- երիտասարդ ընտանիքների ծնողներն ու հատկապես երեխա խնամող մայրերը կունենան աշխատելու հնարավորություն:

Սցենար 3. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում, շքամուտքերի հիմնանորոգում

Չարենցավան համայնքում բազմաբնակարան շենքերի վերելակներն ու շքամուտքերը պարբերաբար հիմնանորոգվել են: Այդուհանդերձ, կան շենքեր, որոնք վերելակ չունեն, վերելակների հորանները վերածվել են պահեստների ու խորդանոցների, շքամուտքերն էլ անբարեկարգ են: Շքամուտքերը գիշերային ժամերին հիմնականում չեն լուսավորվում՝ չկա լուսավորության համակարգ, պատուհանները ապակեպատ չեն, մուտքերը հիմնականում դուռ չունեն, բազրիքները կիսաքանդ են, ճաղերը՝ տեղ-տեղ պոկված, հոսանքի ու հեռախոսի լարերը երբեմն առանց պատշաճ մեկուսացման փռված են պատերին: Առանձին շենքերում առնետներն իրենց զգում են ինչպես տանը:

Այս շենքերի բարձր հարկերի բնակիչների և նրանց հյուրերի համար տուն հասնելը իսկական փորձություն է: Հատկապես դժվար է ծերերի, հաշմանդամների, հղիների, գրկի երեխա ունեցողների համար: Բարձր հարկեր հասնելը դժվար է անգամ շտապ օգնության ծառայության համար: Չլուսավորված շքամուտքերում երեկոյան ժամերին ելումուտն անվտանգ չէ:

Համատիրություններն ինքնուրույն չեն կարողանում լուծել այս խնդիրները, և նախկինում համայնքը սուբսիդավորման միջոցով բազմիցս ձեռք է մեկնել բնակիչ-փայատերերին՝ բազմաբնակարանների ընդհանուր օգտագործման գույքը հիմնանորոգելու գործում: Չարենցավան համայնքի 2014 թվականի բյուջեում հնարավորություն է ստեղծվել շուրջ 18 մլն. դրամ հատկացնել՝ 4 շենքերում վերելակներ տեղադրելու և 20 բազմաբնակարան շենքերի շքամուտքերը հիմնանորոգելու համար: Նախատեսվում է իրականացնել շքամուտքերի կոսմետիկ վերանորոգում, տեղադրել պատուհաններ և դռներ: Ակնակալվում է, որ աստիճանավանդակն ու սանդղահարթակները լուսավորելու աշխատանքները կկազմակերպեն համատիրությունները:

Ծրագրի իրագործման արդյունքում.

- համայնքի 4 շենք կդառնա ավելի հարմարավետ բնակիչների և հյուրերի, հատկապես՝ տարեցների, հաշմանդամների և հղի կանանց համար.
- բնակիչները կօգտվեն շտապ օգնության ավելի օպերատիվ

ծառայությունից.

- բնակիչները և հյուրերն իրենց ավելի ապահով և հարմարավետ կզգան.
- կբարելավվի հակահամաճարակային իրավիճակը, կնվազեն հանրային առողջության խնդիրներն ու հիվանդացությունը.
- տարվա ցուրտ եղանակներին կնվազեն շենքերում բնակվող ընտանիքների ջեռուցման ծախսերը.
- շենքերում կնվազի ցրտով պայմանավորված վթարների թիվը և դրանք վերացնելուն ուղղված ծախսերը:

Սցենար 4. Քաղաքապետարանի շենքի տանիքի և սանհանգույցների վերանորոգում

Չարենցավանի քաղաքապետարանի ավելի քան հիսնամյա շենքի սանհանգույցները հակասանիտարական վիճակում են, ինչն էապես անդրադառնում է քաղաքապետարանի աշխատակազմի աշխատունակության վրա: Կանայք և տղամարդիկ օգտվում են միևնույն սանհանգույցներից, ինչը զգալի անհարմարություններ է ստեղծում: Պահպանված չեն սանիտարահիգիենիկ տարրական նորմերը, ինչն աշխատողների և այցելուների առողջության համար խնդիրներ է ստեղծում: Շենքում գործում են նաև գանձապետարանի, Վիճակագրության ազգային ծառայության տարածքային ստորաբաժանումները, բարեկարգման և կանաչապատման հարցերով զբաղվող համայնքային կազմակերպությունը:

Քաղաքապետարանի շենքը համայնքի կարևորագույն վարչական ներկայացուցչական հաստատությունն է, ուր ամեն օր այցելում են ոչ միայն քաղաքի բազմաթիվ բնակիչները, նաև հյուրեր՝ հանրապետության այլ համայնքներից ու կառույցներից, ինչպես նաև արտերկրից: Շենքի տանիքն անբարեկարգ է, ինչի հետևանքով երրորդ հարկի աշխատասենյակների առաստաղներն ու պատերը խոնավացած են, բորբոսապատ: Այս պայմաններում վտանգվում է ոչ միայն համակարգչային տեխնիկայի աշխատանքը, այլև՝ աշխատակիցների առողջությունը: Շենքը չունի թեքահարթակներ, ինչը զգալիորեն սահմանափակում է քաղաքապետարանի և շենքում տեղակայված այլ ծառայությունների հասանելիությունը հաշմանադամների համար: Շենքի ընդհանուր վիճակն անհրաժեշտ պայմաններ չի ապահովում քաղաքացիներին համայնքային որակյալ ծառայություններ մատուցելու համար:

Չարենցավան համայնքի 2014 թվականի բյուջեում հնարավորություն է ստեղծվել շուրջ 5 մլն. դրամ հատկացնել քաղաքապետարանի շենքի սանհանգույցների և տանիքի մասնակի վերանորոգման համար:

Քաղաքապետարանի շենքի վերանորոգման աշխատանքների արդյունքում.

- ՏԻՄ աշխատանքները և բնակիչներին համայնքային ծառայությունների մատուցումը կկազմակերպվեն հարմարավետ պայմաններում և ավելի բարձր որակով.
- բարեկարգ սենյակներում կապահովվեն կազմտեխնիկայի շահագործման անվտանգ պայմաններ.
- կբարձրանա աշխատանքի արդյունավետությունը.
- շենքում գործող կառույցներում աշխատող և այցելու կանայք և տղամարդիկ կկարողանան օգտվել հիգիենայի առանձնացված հանգույցներից.
- կբարձրանա համայնքի բնակշահագործման հուսալիությունը.
- կավելանա համայնքի սեփականություն հանդիսացող քաղաքապետարանի շենքի կյանքի տևողությունը.
- Չարենցավանն իր բնակչին ու հյուրերին կընդունի ավելի ներկայանալի դեմքով:

Սցենար 5. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

Չարենցավան համայնքի շուրջ շուրջ յոթ տասնյակ շենքերի թեք ու հարթ տանիքներ վերանորոգման կարիք ունեն: Վիճակն առավել վատթար է համայնքի 4-րդ և 5-րդ թաղամասերում, ուր շենքերը համեմատաբար հին են: Առավել վթարային է հինգ շենքի տանիք: Բնակիչները պարբերաբար ահազանգում են առաստաղների, պատերի խոնավացման, ջրհորդանների վթարների, բնակարանների հեղեղման, շքամուտքերում ջրի կուտակման, էլեկտրական համակարգերի վթարների մասին: Շենքերի համատիրություններն ինքնուրույն չեն կարողանում կազմակերպել տանիքների վերանորոգումը:

Խոնավությունը պատուհաս է ոչ միայն վերջին, այլև ստորին հարկերի բնակիչների համար: Շքամուտքերի և բնակարանների խոնավ առաստաղներն ու պատերը բորբոսապատվում են, ինչն էականորեն սպառնում է մարդկանց, հատկապես՝ կանանց և երեխաների առողջությանը: Առաստաղներից ու պատերից մշտապես թափվում է ծեփը, որը ոչ միայն աղտոտում է ընդհանուր օգտագործման տարածքները, այլև բնակչի ոտքի հետ մտնում է բնակարաններ՝ լրացուցիչ հոգս ստեղծելով տանտիրուհիների համար: Հորդառատ անձրևներին շքամուտք մտնելը դառնում է գրեթե անհնարին: Անձրևաջրերի քայքայիչ ազդեցության տակ շենքերի բետոնե

ծածկերը (պանելներ) արագորեն քայքայվում են՝ սպառնալով բնակիչների կյանքին ու առողջությանը: Տարեկան երկու անգամ բնակիչները բախվում են ընդհանուր օգտագործման տարածքները, երբեմն էլ բնակարանը, վերանորոգելու անհրաժեշտությանն ու անհարկի ծախսերին:

Չարենցավան համայնքի 2014 թվականի բյուջեում հնարավորություն է ստեղծվել շուրջ 1 մլն. դրամ հատկացնել հինգ բազմաբնակարան շենքերի թեք ու հարթ տանիքների վերանորոգման համար:

Վթարային տանիքների վերանորոգման արդյունքում.

- կբարձրանա համայնքի բնակշահագործման հուսալիությունը.
- շենքերի, հատկապես վերին հարկերի, բնակիչները կազատվեն վերանորոգման անհարկի պարբերական ծախսերից.
- կբարելավվի շենքերի բնակիչների, այդ թվում՝ կանանց և երեխաների առողջությունը.
- շենքերի տանիքների բարեկարգ վիճակը քաղաքի ճարտարապետական ընդհանուր տեսքը կդարձնի ավելի հրապուրիչ ու հարմարավետ.
- վերանորոգված շենքերում կբարձրանա բնակարանների գինը:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

«Երբեք չգիտես, թե գործելուդ արդյունքում ինչ կունենաս, անգործությանդ արդյունքում՝ կունենաս ոչինչ»:

Մահաթմա Գանդի, առաջնորդ

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Քաղաքի դեմքն ու քաղաքի գրպանը

Չարենցավանցիներից շատերը կարծում են, որ քաղաքապետարանը քաղաքի «դեմքն» է: Այստեղ են ընդունում քաղաքի բոլոր հյուրերին՝ դեսպաններ, պատվիրակություններ: Այստեղ են վերջիններս իրենց առաջին կարծիքը կազմում քաղաքի մասին, ստանում առաջին տպավորությունները: Քաղաքացիների կարծիքով, քաղաքապետարանը միայն աշխատա-

վայր չէ իր աշխատակիցների համար, այլ ծառայում է չարենցավանցիներին, և գրեթե բոլորը, այս կամ այն խնդրով, դիմում են քաղաքապետարան:

Ու մինչդեռ այս հաստատությունը համայնքի կյանքում նման կենտրոնական դեր ունի, քաղաքապետարանի հակասանիտարական պայմաններ են, երեք հարկանի շենքում գտնվում է մեկ սանհանգույց, որից օգտվում են թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, զուգարանների դռներն անգամ չեն փակվում, քաղաքապետարանի աշխատակիցները ստիպված ընդմիջման ժամին տուն են գնում զուգարանից օգտվելու համար: Ամռան ամիսներին էլ քաղաքապետարանի միջանցքներում անտանելի գարշահոտ է: Անձրևային եղանակին էլ երրորդ հարկն է թրջվում, կաթում, ու հենց կաթոցի տակ մարդիկ աշխատում են:

Բնակիչները համարում են, որ անհրաժեշտ է վերանորոգել քաղաքապետարանը, քանի որ նորոգված շենքը դրական ազդեցություն կունենա տեղական ինքնակառավարման արդյունավետության վրա, շուրջ կես հարյուրյակ համայնքային ծառայողները բարվոք պայմաններում ավելի բարեխղճորեն կաշխատեն և ավելի որակյալ ծառայություններ կմատուցեն բնակիչներին:

Չարենցավանցիների մյուս մասն էլ գտնում է, որ քաղաքապետարանի վերանորոգումը համայնքի համար գերակայություն չէ: Քաղաքապետարանի վերանորոգման համար անհրաժեշտ միջոցները հարկավոր է ուղղել ավելի առաջնահերթ խնդիրների լուծմանը (օրինակ՝ պոլիկլինիկայի սանհանգույցի վերանորոգում), գտնում են նրանք: Բնակիչները նշում են, որ քաղաքապետարանի վերանորոգման համար անհրաժեշտ միջոցները նպատակահարմար է հայթհայթել այլ աղբյուրներից:

Բյուջե, ծախսեր, հոգսեր, շրջակա միջավայր և հանրային առողջություն

Հոգսը փիրոջն է

Չարենցավանցիների մի մասը կարևորում է բազմաբնակարան շենքերի վերելակների և շքամուտքերի հիմնանորոգման անհրաժեշտությունը: Շենքերում ապրում են հիվանդ ու ծեր մարդիկ, ովքեր ստիպված են լինում ինը հարկ բարձրանալ, շենքերում օդատարներով ջուրը լցվում է նկուղները, վերանորոգված տները խոնավությունից փչանում են, շքամուտքերի դռները չեն փակվում, քամին ուղիղ տուն է մտնում, աստիճաններն անբարեկարգ են, բարձրանալն անհարմար, իսկ շատ բնակիչներ անապահով են և համատիրությունն ի վիճակի չէ ինքուրույն լուծել այս խնդիրները: Բնակիչներն ակնկալում են համայնքի աջակցությունը նշված խնդիրների լուծմանը:

Այդուհանդերձ, շատերը համարում են, որ այս խնդիրները համայնքի համար գերակա չեն: Շատ խնդիրներ, բնակիչները լուծել և լուծում են սեփական ուժերով: Չէ որ դա հենց իրենց՝ բազմաբնակարանների բնակիչների և դրանց համատիրությունների լուծելու խնդիրն է, ոչ թե համայնքինը, համոզված են քաղաքացիները:

Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման արդիականության խնդրում չարենցավանցիներն ավելի միահամուռ են. չարենցավանցին ահով է սպասում անձրևների սեզոնին: Տանիքները խարխուլ են, ինչի պատճառով բնակարանների պատերը մի քանի հարկ խոնավ են ու վտանգում են բնակիչների առողջությունը, և չարենցավանցին հաճախ անգամ լավ եղանակին հարկադրված ջեռուցում է բնակարանը, որ պատերը չբորբոսնեն: Պատերն անգամ դրսից են խոնավ, օդատարներով ջուրը լցվում է նկուղներն, էլ ավելի բարդացնելով իրավիճակը, ասում են բնակիչները: Քանդված են ջրհորդանները, կանայք գարնանը չենք կարողանում լվացք փռել, որովհետև ձնհալի ժամանակ ջուրը թափվում է լվացքի վրա: Տանիքների ճաղավանդակները վնասված են և կարիք ունեն վերանորոգման, այլապես հնարավոր են մահացու ելքով դժբախտ պատահարներ: Այդուհանդերձ, վերանորոգումն անհրաժեշտ է կատարել լավ որակով և տրամադրել դրա համար անհրաժեշտ համարժեք ֆինանսական միջոցներ, վստահ են քաղաքացիները: Առաջարկում են նաև նախատեսել վեցերորդ թաղամասի շենքերի տանիքների վերանորոգումը: Ոմանք, կարծում են, թե խնդիրն, այնուամենայնիվ, համատիրությանն է և տանիքների վերանորոգման բեռը բնակիչները պիտի կրեն, մինչդեռ համայնքի միջոցները հարկ է ուղղել ավելի գերակա խնդիրների լուծմանը:

Անվտանգություն

Ճանապարհ դեպի գերակայություններ

Չարենցավանցիները կարևորում են քաղաքի կենտրոնական փողոցներից մեկի՝ հիվանդանոց, դպրոց, եկեղեցի ու զբոսայգի տանող Երիտասարդական փողոցի բարեկարգման անհրաժեշտությունը: Բնակիչները գտնում են, որ անբարեկարգ ճանապարհը վթարների պատճառ է, դրանով անցնող շտապօգնության մեքենան անգամ կանչի կամ դեպքի վայր ու հիվանդանոց ժամանակին հասնել չի կարողանում: Եթե քարուքանդ փողոցով անցնող վարորդը վտանգում է իր մեքենայի վիճակը, կանայք՝ կոշիկները, ապա անմայթ ճանապարհով երեխաները դպրոց գնացող-եկող երեխան վտանգում է կյանքն ու առողջությունը, նշում են քաղաքացիները: Թեև այն քաղաքի հիմնական փողոցներից է, սակայն քայլելը գրեթե անհնարին է: Բնակիչները համոզված են, որ փողոցն անհրաժեշտ է հիմնանորոգվել, բարեկարգել մայթերը, մաքրել ու գործարկել գետնանցումը. այս

փողոցը ծառայում է ողջ քաղաքին, նշում են նրանք: Բարեկարգ փողոցը կնվազեցնի այլ փողոցների ծանրաբեռնվածությունը, դրանով հաճելի կլինի զբոսնելը: Բնակիչները պնդում են, որ փողոցը հարկավոր է որակով ու հիմնովին նորոգել, այլապես կարկատաններով նորոգվող ճանապարհը տարուց տարի հայտնվում է նույն վիճակում:

Չարենցավանցիների մեկ ուրիշ խումբ այլ կարծիք ունի. Սա հիմնական ճանապարհ չէ, դրանով հիմնականում երթևեկում են միկրո թաղամասի բնակիչները, փողոցն այնքան էլ բանուկ չէ, վթարները գերազանցապես անզգուշության հետևանք են, շտապօգնությունը ուզենա հասնել՝ կհասնի, գործարաններն ու այգին չեն գործում, երեխաները այդ փողոցով չեն իջնում, եկեղեցու հատվածը վերանորոգված է, դպրոցի ու դատարանի հատվածը բավարար է, մնացած հատվածներն՝ էական չեն... մի խոսքով՝ Երիտասարդականի վերանորոգումը Չարենցավանի ամենակարևոր խնդիրը չէ: Քաղաքի բնակիչներն ավելի կարևոր՝ սոցիալական խնդիրներ ունեն. լավ բժիշկների ու շտապ օգնության մեքենաների կարիք կա, հարկ է վերանորոգել այգին, կարուսելներ տեղադրել, ջրահեռացման համակարգը բարելավել, վերանորոգել մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը, ասֆալտապատել բակերն ու երեխաների համար խաղահրապարակների կառուցել, նշում են նրանք: Քաղաքացիները նաև կարծում են, թե համայնքն այլ՝ նորոգման ավելի առաջնահերթ կարիք ունեցող ճանապարհներ ունի. միկրոթաղամասից իջնող փողոցը ուր ծերեր են ապրում, կամ ասենք քաղաքի մուտքի հատվածը:

Երեխաներ և երիտասարդներ

«Ապրեք երեխեք...»

Ինչպես երեխաներին և մատաղ սերնդի դաստիարակությանը վերաբերվող ցանկացած այլ խնդիր, չարենցավանցիները մեծապես կարևորում են համայնքում մանկապարտեզների վիճակը: Քաղաքացիները նշում են, որ մանկապարտեզների շենքերը անմխիթար վիճակում են: Հատկապես վատթար է վեցերորդ մանկապարտեզի վիճակը, նշում են բնակիչները: Թեպետ քաղաքի միկրոշրջանի երեխաների մեծ մասն օգտվում է հենց վեցերորդ մանկապարտեզից, այն երբևէ չի վերանորոգվել, համոզված են մարդիկ: Ծնողները հաճախ գերադասում են երեխային հիգիենայի պատշաճ պայմաններ, ջրամատակարարում ու ջրահեռացում, ջեռուցում ու սանհանգույց չունեցող ու անհարմարավետ վիճակում գտնվող մանկապարտեզ չտանել ընդհանրապես կամ տանել ավելի հեռու գտնվող մանկապարտեզ, ինչը հանգեցնում է վերջինների գերծառնաբեռնվածության: Երեխաներին էլ բնականաբար չի ձգում կրթության ու դաստիարակության նման միջավայրը, փաստում են չարենցավանցիները: Մինչ «երեխայի

աչքը գեղեցիկ ու հարմարավետ միջավայրին պետք է սովորի դեռ մանկությունից», սովորի «տեսնել լավն ու գեղեցիկը», մանկապարտեզն, ըստ էության տրամագծորեն հակառակ միջավայր է, կարծում են մարդիկ: Հակասանիտարական պայմանները երբեմն երեխաների հիվանդությունների պատճառ են դառնում. մանկապարտեզում անգամ ջրից թունավորվելու դեպք է արձանագրվել, և դրա կրկնությունը նման պայմաններում չի կարելի բացառել, համոզված են քաղաքացիները: Միաժամանակ, սանիտարական պայմանների խախտումների պատճառով մանկապարտեզը փակելը աննպատակահարմար է, որովհետև թաղամասում նախակրթական այլ հաստատություն չկա:

Բնակիչների խոսքերով. «մանկապարտեզի պատերը քանդված են, ծաղիկներ են փակցնում այդ փլված տեղերը, որ երեխաների համար այդքան տխուր չլինի հաճախելը»: Ի լրումն, չջեռուցվող մանկապարտեզը «սեզոնային» է գործում, ինչը լուրջ մարտահրավեր է աշխատող մայրերի ու ընտանիքների համար: Շարենցավանցիները կարծում են նաև, որ համայնքի երեխաները պիտի մեծանան հնարավորինս հավասար պայմաններում, մինչդեռ ոմանք հաճախում են վերանորոգված ու կահավորված մանկապարտեզ, մինչդեռ շատերը այդ հնարավորությունից զուրկ են, թեպետ բնակվում են նույն համայնքում և վճարում նույն հարկերն ու տուրքերը:

Քաղաքացիները վստահ են, որ մանկապարտեզն անհրաժեշտ է վերանորոգել, ընդ որում, եթե ընթացիկ տարում միջոցները բավարար չեն բոլոր խնդիրներին համալիր լուծում տալու համար, ապա անհրաժեշտ է առաջնահերթ կերպով լուծել հենց կոյուղագծերի խնդիրը: Ավելի հիմնարար նորոգման և ջեռուցման համակարգի առկայության դեպքում վեցերորդը կկարողանան հաճախել առնվազն 240 երեխա, կստեղծվեն մի քանի նոր աշխատատեղ:

Որոշ բնակիչներ էլ գտնում են, որ նախակրթության ոլորտում վեցերորդի ստեղծած բացը հաջողությամբ լրացնում են մյուս՝ նորոգ ու ջեռուցվող մանկապարտեզները, քաղաքը փոքր է, և դրա մի ծայրից մյուսը երեխային հասցնելը մեծ խնդիր չէ ընտանիքների համար: Մյուսները համարում են, որ առանց ջեռուցման համակարգի և համալիր մոտեցման որևէ ներդրում կոյուղագծերի նորոգման համար արդարացված չէ, մասնավորապես, քանի որ մանկապարտեզն ի վիճակի չի լինելու ապահովել երեխաների նախակրթությունը կլոր տարին: Կարծիքներ են հնչում նաև, որ ձմռան ամիսներին մանկապարտեզի անհրաժեշտությունը համայնքում նվազում է, իսկ քաղաքապետարանն էլ ձմռան ամիսներին «կրճատված պահանջարկը» կարող բավարարում է այլ մանկապարտեզների գործունեությունն ապահովելով:

Չարենցավանցիների մեկ այլ խումբ համարում է, որ վեցերորդը վերանորոգելու փոխարեն ավելի նպատակահարմար է ֆինանսական միջոցներն ուղղել ողջ տարին երրորդ մանկապարտեզի լիարժեք գործունեութ-

յան ապահովմանը, հատկապես մանկապարտեզ հաճախող երեխաների տարեց-տարի կրճատվող թվաքանակի պայմաններում: Ոմանց կարծիքով էլ վեցերորդ մանկապարտեզի խնդիրը գերակայություն չէ ընդհանրապես, քանի որ մանկապարտեզից օգտվում են սահմանափակ թվով ընտանիքներ, ուստի առկա միջոցներն անհրաժեշտ է ուղղել այլ՝ իրենց կարծիքով ավելի գերակա խնդիրների լուծմանը (մշակույթի տուն, բակերի ասֆալտապատում, խաղահրապարակներ և այլն): Քաղաքիցների մեկ այլ խումբ էլ առաջարկում է մանկապարտեզների վերանորոգման ու կահավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրել ոչ թե համայնքի բյուջեից, այլ հայթհայթել այլ աղբյուրներից:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Չարենցավանցիները նշում են, որ համայնքի գերակա խնդիրները առանձնակի ազդեցություն ունեն կանանց և տղամարդկանց վրա: Քաղաքացիները, մասնավորապես, նշում են, որ մանկապարտեզների վերանորոգումն ու շուրջամյա գործարկումը մեծապես կթեթևացնի կանանց, հատկապես՝ աշխատող մայրերի հոգսը: Վերելակների անմխիթար վիճակը հատկապես դժվարություններ է առաջացնում տան առևտուրը հոգացող և իրերը վերին հարկեր բարձրացնող կանանց ու հղիների համար: Կանանց ուսերին է շենքերին վերաբերվող շատ խնդիրների հոգսը: Անգամ քաղաքապետարանի սանիտարահիգիենիկ իրավիճակից առավելապես տուժում է կանանց առողջությունը: Քաղաքացիները համոզված են նաև, որ համայնքի կառավարման խնդիրներում ցանկալի է կանանց ավելի լայն մասնակցությունը, ինչը շատ հարցեր ավելի ճիշտ ու հեշտ լուծելու հնարավորություն կընձեռի:

Հնչած կարծիքների հանրագումարը

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Սցենար 1. Երիտասարդական փողոցի բարեկարգում

- Երիտասարդական փողոցի վերանորոգումն ամենակարևոր խնդիրը չէ Չարենցավանում, քաղաքի բնակիչների համար կան ավելի կարևոր

սոցիալական խնդիրներ

- Առաջին սցենարով ներկայացված արդյունքները մենք չենք ստանա:
- Դա հիմնական ճանապարհ չի: Այն այնքան էլ բանուկ չի:
- Այդ փողոցն իրոք շատ կարևոր է, վրան դպրոց է. շատ կարևոր է:
- Երիտասարդական փողոցի գերխնդիրը գետնանցումն է
- Առաջին սցենարով քննարկված փողոցը ավելի հարմար է միկրո թաղամասում բնակվողների համար:
- Սա կարևոր է, քանի որ հիմնական երթևեկությունը այստեղ է կենտրոնացած: Դեպի հիվանդանոց, զբոսայգի տանող ճանապարհը պետք է բարեկարգել:
- Եթե ասֆալտապատեն, ավելի հաճելի կլինի զբոսնել: Դա հիմնական փողոցներից մեկն է, սակայն քայլելը անհնարին է:
- Կան ավելի կարևոր սոցիալական խնդիրներ:
- Առաջին սցենարով քննարկված փողոցը կնվազեցնի այլ փողոցների ծանրաբեռնվածությունը:
- Քաղաքը լուսավորության հետ կապված ոչ մի խնդիր չունի, ճանապարհները լուսավորված են:
- Առաջին սցենարով քննարկված փողոցի դերը կմեծանա եթե քաղաքային տրանսպորտը գործի:
- Դպրոցի ու դատարանի մասը նորմալ է, իսկ մնացած մասերը արդեն էական չեն: Այգին չի գործում, գործարանները չեն գործում:
- Մեր քաղաքը փոքր է, ծայրից-ծայր տասը րոպեում կանցնես, քաղաքային տրանսպորտ չունենք
- Միկրոթաղամասից իջնող փողոցն ավելի կարևոր է, քան ներկայացվածը, այնտեղ ծերեր են ապրում, ու դժվար են տեղաշարժվում:

Սցենար 2. Թիվ 6 մանկապարտեզի կոյուղագծերի վերանորոգում

- քննարկված հարցի հետ բոլորս էլ համաձայն ենք
- Ես իմ երեխային չեմ ուղարկի այդ մանկապարտեզը:
- Երկրորդ սցենար: Մանկապարտեզը, եթե չի ջեռուցվում, կոյուղին ինչ կապ ունի: Ձմռանը միևնույն է չի աշխատելու:

Սցենար 3. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում, շքամուտքերի հիմնանորոգում

- Մենք չենք ապրում բարձրահարկերում, դժվարանում ենք պատասխանել հարցերին:
- Շքամուտքերի լույսը առաջին հարկի բնակիչներն են լուծել՝ իրանց դռան առաջ լույս վառելով:
- Բոլոր դեպքերում կան հիվանդ ու ծեր մարդիկ, ովքեր ստիպված են լինում ինը հարկ բարձրանալ:
- Իսկ ինչ սկզբունքով են ընտրվելու շենքները
- Բազմաբնակարան շենքերում կա տանիքների ջրահեռացման խնդիր, ջուրը լցվում է մեր պատերի մեջ. պատճառներից մեկը անտենաների տեղադրումն է:
- Համատիրության, բնակիչների ջանքերով է տեղի ունենում շենքերի բարեկարգ վիճակի պահպանումը:
- Իհարկե անչափ կարևոր խնդիր է նաև վերելակների վերանորոգման հարցը, չէ որ կան շատ տարեց մարդիկ, երեխաներ, հղի կանայք, ովքեր շատ խնդիրներ են ունենում : Բայց սա այնքան էլ առաջնային չէ. եթե կա ընտրելու հնարավորություն, ապա իհարկե նպատակահարմար է առավել առաջնային հարցեր լուծել: Վերելակները կարելի նորոգել կամաց-կամաց, ժամանակի ընթացքում: Ի վերջո, համատիրությունը արդեն սկսել է այդ գործընթացը:
- Բազմաբնակարան շենքերում օդատարներով ամբողջ ջուրը լցվում է նկուղները, նկուղներում կան նաև կանալիզացիայի խնդիր, մեր տները վերանորոգում ենք, բայց պատերը նորից խոնավությունից փչանում են:
- Շքամուտքերի վերանորոգումը կարևոր է, մեզ համար էլ հաճելի է, որ դա լուծվի
- Շքամուտքերի հարցը պետք է համատիրությունն էլ լուծի: Միայն քաղաքապետարանից չպետք է պահանջել:
- Շենքերի շքամուտքերի լուսավորության հարցն ամեն բնակարան ինքնություն է լուծում, պետք է մի ընդհանուր համակարգ լինի
- Եղել են դեպքեր, որ խողովակները սառում են մուտքերի դռների բացակայության պատճառով, չնայած մեր շենքում մի քանի անգամ դուռը գողացել են: Պահպանել չգիտեն մարդիկ:
- Հիմա բոլոր ունեն բջջային հեռախոսներ, որոնց միջոցով կարող են լուսավորել իրենց ճանապարհը:

- Մեզ համար կարևոր է, որ ավելի նպատակային հարց լուծվի, ձմռանը եթե հարց է առաջանում, համայնքապետարանը անդրադառնում է այդ խնդիրներին
- Խնդիրների լուծումը նաև շենքի բնակիչների ցանկությունն է, սրտացավ է պետք հարցին մոտենալ
- Ավելի կարևոր է օրինակ ստեղծագործական կենտրոնի բարեկարգումը, որը նկուղային հարկում է, բայց ունեն շատ լավ մասնագետներ:
- Երբ լինում են շքամուտքերի հետ լուրջ խնդիրներ, բողոքում ենք, գալիս լուծում են:
- Ջրահեռացման «գերազանց» աշխատանքների շնորհիվ մենք մի օր ամբողջ շենքով փլուզվելու ենք նկուղ, թող այս հարցը լուծեն:

Սցենար 4. Քաղաքապետարանի շենքի տանիքի և սանհանգույցների վերանորոգում

- Քաղաքը ներկայանում է քաղաքապետարանի միջոցով, երբ հյուրեր ենք ընդունում: Այնպես որ կարևոր է:
- Զարմացած եմ, որ այդ վիճակում է քաղաքապետարանը
- Քաղաքապետարանում զուգարաններում դռները չեն փակվում ու կանանցն ու տղամարդկանցը իրար մոտ են, բայց մի կերպ դիմանում ենք:
- Ես չեմ ուզում, որ քաղաքապետարանի շենքը վերանորոգվի: Ավելի կարևոր հարցեր կան:
- Սա քաղաքապետարանի աշխատողների համար է միայն, այդ գումարը մեր խնդիրներին պետք է հատկացվեն:
- Չորրորդ սցենար: Եթե ինքը նորմալ սպասարկում ցուցաբերի հյուրերին դա էլ կբավարարի:
- Քաղաքապետարանը մեր քաղաքի գլխավոր վայրն է, շատ հյուրեր ենք ունենում, ամոթ է այդ վիճակում դեսպաններ հյուրընկալել
- Քաղաքապետարանը մեր քաղաքի ներկայացուցչական դեմքն է, հիմնական աշխատատեղն է, գալիս են դրսից մարդիկ, այնտեղից են մեր քաղաքի մասին կարծիք կազմում, շատ կարևոր է, այն բարեկարգելը:
- Եթե չլիներ մանկապարտեզի հարցը, կարելի էր նաև քաղաքապետարանի հարցին անդրադառնալ:
- Քաղաքապետարանը չի աշխատում ինքն իր համար, դա տեղ է, որտեղ ցանկացած մարդ գնում է, միայն իրենց համար չեն վերանորոգելու, այլ բոլորիս համար է

- Կարելի է վերանորոգել, դրսից պատվիրակություն էր եկել, ուղղակի փախել են:
- Գնացինք Ալավերդի, այստեղի քաղաքապետարանն ավելի ակտիվ էր աշխատում, բայց ավելի անբարեկարգ վիճակում էր, այնպես որ կարելի է վատ պայմաններում էլ լավ աշխատել:
- Երրորդ հարկը անձրևների ժամանակ լրիվ թռչվում է, կաթում է, դրա տակ են աշխատում:
- Քաղաքապետարանը մեր քաղաքի «դեմքն» է, վերանորոգումը շատ կարևոր խնդիր է
- Չորրորդ սցենարով քննարկված հիմնահարցը առաջնահերթ չէ:
- Քաղաքապետարանում ինչ են անում. ամբողջ օրը թուղթ են մրոտում միայն, որից ոչ մի հարց էլ չի լուծվում: Առանց տանիքի վերանորոգման էլ յոլա կգնան:
- Քաղաքի դեմքը քաղաքապետարանից է սկսվում, դրա համար միայն պետք է վերանորոգել, ու հենց նշված խնդիրները:
- ինչը պիտի փոխվի աշխատանքի արդյունավետության տեսակետից
- Մենք էլ ենք մարդ, մենք էլ մեր կարիքները ունենք
- Եթե քաղաքապետարանի շենքը բարեկարգենք, այնտեղ աշխատողները ավելի բարի ու սրտացավ կլինեն քաղաքի այլ խնդիրների լուծման հարցում:
- Ձմռանը մայթերով չենք կարողանում քայլել սառույցի պատճառով, չեն մաքրում ընդհանրապես, թող այս հարցը լուծեն, ոչ թե քաղաքապետարանի սանհանգույցի մասին մտածեն, դա վերջին տեղում է:
- Քաղաքապետարանի բարեկարգ վիճակը դրականորեն կազդի այնտեղ աշխատող անձնակազմի վրա, քանի որ մարդիկ չեն ջղայնանա և նեղվի անբարենպաստ պայմաններից և քաղաքացիներին ավելի լավ կսպասարկեն
- Եթե քաղաքապետները հարմարվել են այդ հարցին, մենք մտածելու բան չունենք
- Քաղաքապետարանի սանհանգույցի վերանորոգումը միայն աշխատակիցներին է վերաբերում, ամբողջ քաղաքի խնդիրը չէ
- Երբ որ մեր քաղաքի մնացած խնդիրները կլուծվեն, որոնք շատ կարևոր են ու արդիական, այն ժամանակ էլ կմտածենք քաղաքապետարանի տանիքի մասին: Կամ էլ թող քիչ մսխեն փողերը:

Սցենար 5. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

- Բնակիչները տանիքի հարցով բազմիցս դիմում են գրել, սակայն այդ հարցը այդպես էլ լուծում չի ստացվել:
- Երբ բնակարան են գնում միշտ նայում են տանիքի վիճակը, հատկապես եթե հինգերորդ հարկում են բնակարանները:
- Գարնանը չենք կարող լվացք փռել, որովհետև ձնհալի ժամանակ ամբող ջուրը թափվում է լվացքի վրա, ջուրը հասնում է մինչև երրորդ հարկ:
- Վերևի հարկերում տներում լրիվ ջրհեղեղ է, իրենք էլ կորցնելու բան չունեն:
- Խնդիրը միայն տանիքը չի, շատ շենքերում ջրհորդաններն էլ են քանդված, ու պատերը դրսից էլ են խոնավանում:
- Ես չորրորդ թաղամասի բնակիչ եմ և տեսնում եմ, որ տանիքների վերանորոգումն արդիական խնդիր է
- Ձևի համար կարող էր մի հատ մանկական զբոսայգի կամ սրճարան լինել:
- Երբեմն հակասություն է առաջանում առաջին և վերջին հարկերի բնակիչների միջև տանիքի վերանորոգման հարցում
- Չարենցավանում նոր շենքերի կառուցման կարիք ունենք
- Բարձրահարկ շենքերում ջրահեռացման համակարգը շենքի ներսից է կատարվում, իսկ այդ ջրերը նկուղներն են լցվում և այս խնդրի կարգավորումը նաև կարող է այդ հարցը լուծել:
- Թող մի հատ շարժական զուգարան բերեն դնեն քաղաքապետարանի առաջ:
- Քաղաքում գործազրկության խնդիր կա, միգրացիայի: Քաղաքապետարանը դրա համար ինչ է անում՞:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Սցենար 1. Երիտասարդական փողոցի բարեկարգում

- Եթե ճանապարհը վերանորոգեն այգի այցելողների թիվը չի ավելանա:
- Պարբերաբար աշխատանքներ տարվում են փողոցի վերանորոգման համար, կարիք չկա այդքան գումար տրամադրել այս հարցին

- Ամեն տարի ասֆալտապատում են, բայց աշխատանքներն էլ որակով պետք է լինեն, դրա անվան տակ գումարներ “չկորեն”
- Այս ճանապարհի պատճառով մեքենաները հաճախ փչանում են, կանայք են մայթերով քայլում և հաճախ կոշիկներն են փչացնում: Փողոցը պետք է վերանորոգվի, քանի որ այդ փողոցի վրա են գտնվում հիվանդանոցը, այգին և ամենակարևորը եկեղեցին: Կարծում եմ մայթերի վերանորոգումն ավելի կարևոր են:
- Եղանակային պայմաններն ու մասնակի վերանորոգումը բերում են նրան, որ փողոցը ստիպված ենք լինում վերանորոգել, պրոբլեմն առկա է բոլոր քաղաքներում:
- Ավելի լավ է հիմնովին կառուցել փողոցը, քան ամեն տարի «կարկատաններ» անել
- Հենց միայն նրա համար, որ այդտեղ գտնվում են դպրոցն ու հիվանդանոցը, այդ փողոցը պետք է առաջին հերթին վերանորոգվի: Տարեցներն ու երեխաները չեն կարողանում հասնել անհրաժեշտ վայրը: Քաղաքի կենտրոնում այն կամաց-կամաց վերածվում է չօգտագործվող փողոցի:
- Կարևոր է բոլորի համար, թե՛ վարորդ, թե՛ հիվանդանոց գնացողների:
- Երիտասարդական փողոցին հարող զբոսայգին գրեթե չի գործում, միայն սիրահարներն են գալիս, գուցե եթե զբոսայգին ամբողջությամբ գործի, այդ դեպքում նոր փողոցը կդառնա զբոսանքի փողոց. առավել առաջնային է զբոսայգին բարեկարգելը, ոչ թե փողոցը:
- Եթե շտապօգնությունը ցանկություն ունենա հասնել, և բժիշկն էլ իր մասնագիտության գիտակ լինի մեքենան տեղ կհասնի ու հիվանդին կօգնեն, ճանապարհի վերանորոգումը էական փոփոխություն չի բերի: Թող լավ բժիշկներ բերեն ու հիվանդանոցին մեքենաներ տան, թե չէ ճանապարհն ինչ...
- Վերանորոգման կարիք կա, բայց եթե խոսքը գնում է որակյալ նորոգման մասին: Հաճախ է լինում, որ փողոցներում փոսեր են փորվում և այդպես էլ անիմաստ դրանք մնում են: Անիմաստ ծախսեր շատ են արվում: Պետք է իսկապես նորոգել մեկ անգամ և որակով ու ընդմիշտ:
- Ութ միլիոնով թող վերանորոգեն այգին և շտապօգնության համար մեքենաներ գնեն: Թող կարուսելներ դնեն, որ երեխաներին Երևան չհասցնենք:
- Առաջին սցենարը կարևոր է, մասնակի վերանորոգումը հարցի լուծում չէ, պետք է արվի հիմնական վերանորոգում:
- Ցանկալի է, որ Երիտասարդական փողոցը վերանորոգվի, բայց դրա-

նից հետո ոչ մի ակտիվություն չի ավելանա

- Սցենարը խաբում է, այդքան էլ անբարեկարգ ու անմխիթար վիճակում չէ: Մայթերը վերանորոգեն լավ է:
- Քաղաքում իսպառ բացակայում է ջրահեռացման համակարգը: Ջրահեռացման համակարգը չբարելավելու դեպքում, վերանորոգված ճանապարհը նորից շարքից դուրս կգա: Անպայման պետք է անձրևաջրերի կուտակումները հեռացում: Մարդիկ բահերով տանում ջուրը այլ տեղեր են լցնում: Ջրահեռացման բոլոր համակարգերը չեն գործում: Մարդիկ ստիպված կոշիկները, գուլպաները հանում ու նոր ճանապարհները անցնում:
- Այդ գումարով թող վերանորոգեն ու մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի խոնավությունը վերացնեն:
- Տեղումները Չարենցավանում ավելի շատ են լինում, այդ պատճառով էլ պետք է վերանորոգել փողոցները, բայց բարձր որակով: Ամեն տարի ծախսեր անել , բայց անորակ շինարարություն կատարել, լրիվ անիմաստ է:
- Եթե գործարանները վերանորոգեն, մարդիկ զբաղմունք ունեն, ճանապարհը հետո էլ կվերանորոգեն:
- Փողոցը թող այդպես մնա, որ դզող-փչողներն էլ գործ ունենան:
- Փողոցի համար նախատեսված էր ութը միլիոն դրամ, ինչու՞ են մանկապարտեզին ընդամենը երեք միլիոն տրամադրում, եթե ութը միլիոն ունենք, ուրեմն կարող ենք մի քանի ծրագիր անել:
- Եթե նախընտրություն է տրվում ճանապարհների բարեկարգման, ապա պետք է լրիվ հիմնանորոգել, ոչ թե միայն փոսեր լցնել:
- Ճանապարհների վերանորոգումը միայն ի օգուտ վարորդների կլինի: Այդ փողոցը քաղաքի ծայրամասում է:
- Ես այդ փողոցում եմ ապրում, վերանորոգումը գերխնդիր չէ, բանուկ վիճակում է գտնվում, ավելի քիչ է ծանրաբեռնված, միայն մայթերն են, որ համեմատած ավելի անբարեկարգ են
- Ութ մլն. կարելի է ծախսել բակերի ասֆալտապատման և երեխաների համար խաղահրապարակների կառուցման վրա:
- Իհարկե փողոցն էլ, քաղաքն էլ անմխիթար վիճակում են, բայց բնակիչների հոգսն այնքան մեծ է, որ երբեմն դրանց վրա էլ ուշադրություն չենք դարձնում:
- Բարեկարգման աշխատանքները որակով չեն անում, սա կարծես “հնա-

ռավորություն” է ամեն տարի գումար բյուջեից հանելու:

Սցենար 2. Թիվ 6 մանկապարտեզի կոյուղագծերի վերանորոգում

- Առաջին մանկապարտեզը ոչ բակ ունի, ոչ խաղահրապարակ, բայց հիմա դա է փոխարինում ստիպված:
- Յուրաքանչյուր շենքի դիմաց ջրահեռացման ցանցեր գոյություն ունեին, եթե դա վերանորոգվի, ջրակույտերը շենքերի դիմաց չի լինի, իսկ ճանապարները ժամանակից շատ շարքից դուրս չեն գա: Ճիշտը ջրահեռացման համակարգերի ամբողջական բարելավումն է:
- Մանկապարտեզը այնպիսի հարց է, որ բոլոր հարցերն էլ լուծվեն , կոյուղագծերի վերանարոգումը բավարար չէ:
- Մանկապարտեզի վերանորոգման հարցն իսկապես արդիական է, քանի որ տարվա գրեթե կեսը այն չի գործում: Ոչ ջեռուցվում է, ոչ սանհանգույց կա: Դա նաև գենդերային խնդիր է. մայրերն աշխատում են, բայց երեխաներին տեղ չունեն տանելու:
- Մանկապարտեզների հիմնահարցը համայնքի հիմնական խնդիրներից է:
- Ինձ թվում է, որ միայն 6-րդ մանկապարտեզը չէ, որ վերանորոգման հարց ունի, այն պետք է հիմնովին վերանորոգել, այլ ոչ մասամբ
- Միայն կոյուղագիծը չէ, որ պետք է նորոգել, մանկապարտեզը պետք է հիմնովին նորոգել
- Պետք է ամբողջ մանկապարտեզը վերանորոգել: Մանկապարտեզի ջեռուցումը շատ հրատապ հարց է: Մենք անգամ երեխաների միջոցառումներին չենք կարողանում նստել, իսկ մեր երեխաները պետք է այդ ցրտին գնան ու մնա ամբողջ օրը:
- Երկրորդ սցենար: Ութ միլիոն տրամադրում են փողոցին, եթե այդ գումարը ավելանա մանկապարեզին տրվող գումարին, մանկապարտեզը կհիմնանորոգվի:
- այդ գումարով, ավելի լավ է, որ վերջնական վիճակի հասցնել այն մանկապարտեզները, որոնք կիսակառույց են և հինգ ամիս չեն աշխատում:
- Մանկապարտեզից օգտվում են ընդամենը մի քանի ընտանիքներ, սա այն խնդիրը չէ, որ պետք է այդքան գումար ծախսել վերանորոգման վրա
- Ավելի արդիական է մանկապարտեզում ջեռուցման խնդրի լուծումը

- Միայն կոյուղու վերանորոգմամբ խնդիր չի լուծվի: Պետք է ջրի խնդիրը լուծել, ինչպես նաև վերանորոգել սենյակները:
- Այդ գումարը չի բավարարի մանկապարտեզների վերանորոգմանը, այնպես որ միգուցե ավելի նպատակային կարելի է ծախսել գումարը:
- Մանկապարտեզների համար տրամադրվում են գումարներ «ՎիվաՍելլ» ՄՏՍ-ի կողմից: Մի մասը վերանորոգված է, այնպես որ, միգուցե իրենք զբաղվեն այդ հարցերով:
- Բոլոր մանկապարտեզներից հենց սա պետք է առաջինը նորոգվի, մյուսներում ինչ-որ աշխատանքներ արվել են, այստեղ ոչ մի ներդրում չի եղել:
- Երեք միլիոն դրամով դժվար կարողանան լուծել ջեռուցման համակարգի հարցը, բայց այդ գումարով հնարավոր է կոյուղագծերի վերանորոգման հարցը լուծել
- Միգուցե ավելի լավ կլինի այդ գումարով բոլոր մանկապարտեզներում լուծվեն ջեռուցման ծախսեր, ոչ թե ծախսվի մեկ մանկապարտեզի ամբողջական վերանորոգման համար:
- Մանկապարտեզի ղեկավարությունը պետք է ինքն էլ ակտիվ լինի ֆինանսավորման աղբյուրներ գտնելու հարցում, միայն պետական բյուջեից հատկացված գումարով հարցը չի լուծվի:
- Մենք 3-րդ մանկապարտեզում ենք աշխատում, սակայն համեմատած 6-րդի հետ, այն ավելի անմխիթար վիճակում է: Այնտեղ խմելու ջրի, շինության հետ կապված, ինչպես նաև կոյուղու համակարգի հետ կապված խնդիրներ կան
- Եթե օրինակ մանկապարտեզները վերանորոգվեն, բացվեն նոր աշխատատեղեր , ապա ինքնըստինքյան գումարները կավելանան և հնարավոր կլինի վերանորոգել փողոցները:
- Ձմռանը մանկապարտեզները երեք-չորս ամիս փակված են լինում, ինչ պիտի անեն ծնողները, ովքեր աշխատում են: Կարևոր է:
- Բնակիչները ճամպրուկները հավաքած ամեն օր գնում են, աշակերտ չունենք, ինչներիս է պետք այդքան մանկապարտեզները: Թող մի քանի կիսակառույց մանկապարտեզ փակեն, այդ ֆինանսավորումը տրամադրել երրորդի, որպեսզի երրորդը ամբողջ տարին աշխատի:
- Մեծ թաղամասերից 6-րդ մանկապարտեզ են հաճախում, խնդիրը պետք է ամբողջականությամբ լուծվի, այլ ոչ թե միայն կոյուղին: Դա խնդիրը չի լուծի: Պետք է ժամանակավոր փակել մանկապարտեզը, մինչև վերջնականորեն վերանորոգվի

- Սցենար երկրորդ Պետք է բարեկարգել ոչ միայն վեցերորդ, այլև երրորդ մանկապարտեզը:
- Քաղաքի մյուս մանկապարտեզները փոքր-փոքր բարեկարգվել են այլ ֆոնդերից, իսկ թիվ վեցը երբեք չի վերանորոգվել, դա նորոգելու համար շատ ավելի գումար է պետք, քան մյուսները վերանորոգելուն:

Սցենար 3. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում, շքամուտքերի հիմնանորոգում

- Չարենցավանում բոլոր վերելակները վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի բնակիչների միջոցներով, մնացել է մոտ մի չորս շենք առանց վերելակի, թող իրենք էլ իրենց գումարով վերանորոգեն:
- Երրորդ սցենար: Վերելակները վերանորոգվում են բայց ոչ հիմնովին, հետագայում չեն հետևում:
- Ավելի լավ կլինի ամբողջ գումարը ծախսվի վերելակների խնդրի համար, քանի որ շքամուտքի բարեկարգումը գոնե մարդիկ իրենք կարող են իրականացնել:
- Եթե հատկացված գումարի մասին խոսակցություն չլիներ, ապա վերելակների վերանորոգումը նույնպես շատ կարևոր է: Բայց եթե տրամադրվում է 18 մլն դրամ, ապա ավելի նպատակահարմար է իրականացնել առաջնային, ավելի կարևոր խնդիրներ: Վերը նշված գումարի սահմաններում կարելի է վերանորոգել թե մանկապարտեզը, թե ճանապարհները...
- Չեմ հասկանում հիմքից շենք են կառուցելու, որ 18 մլն. գումար են տրամադրում երրորդ սցենարին:
- Թող տասնութ մլն. բաժանեն մանկապարտեզներին: Դա ավելի արդյունավետ կլինի:
- Վերելակի խնդիր կարելի է ասել չկա: Վերելակները հիմնականում նորոգվել, փոխվել են: Այդ լիֆտերի գումարը կարելի է այլ խնդիրների համար ծախսել՝ մուտքերի համար, պատուհաններ դրվի, թող մանկապարտեզին տրվի:
- Շենքերի շքամուտքերի վերանորոգման համար հատկացվել է գումար, բայց նպատակային չի օգտագործվել:
- Վերելակների վերանորոգման համար հատկացվող գումարը շատ մեծ է:
- Բարձրահարկի համար 18 միլիոն են տրամադրում, իսկ մանկապարտեզի համար ընդամենը երեք, միգուցե ճիշտ հակառակը լիներ: Ավելի

կարևոր հարցեր կլուծվեին:

- Բազմաբնակարաններում բնակիչներն են իրանց գրպանից գումար տրամադրել ու վերանորոգել իրենց շենքերի վերելակները:
- Չորս վերելակի գումարը ահագին գումար է : Դրանով կարելի է ութ բարձրահարկի մուտք վերանորոգել: Դա ավելի արդյունավետ կլինի:
- Տարիներ առաջ գումար էր հատկացվել շքամուտքերի վերանորոգման համար, որն իր արդյունքը տվել էր
- Շքամուտքերը չեն մաքրում դրա հետ մեկտեղ գալիս են սպասարկման գումար են պահանջում, չէ որ ես եմ շքամուտքը մաքրում, ինչու՞ վճարեմ:
- Տասնութ միլիոնը չափազանց շատ է վերելակների նորոգման համար, այդ գումարով կարելի է նոր շենք կառուցել:
- Մեր քաղաքը սոցիալապես անապահով քաղաք է, ով կտա գումար, որ համատիրությունն այդ հարցը լուծի, բնակիչն ի վիճակի չէ գումար տրամադրել
- Լուրջ խնդիր կա շենքերի դռների հետ: Դռները չեն փակվում, քամին ուղիղ տուն է մտնում: Աստիճանները անբարեկարգ վիճակում են, բարձրանալը անհարմար է: Պետք է այս խնդիրների հետ կապված քաղաքապետարանը աջակցի: Ոչ բոլոր բնակիչներն են կարող իրենց միջոցներով վերանորոգեն:
- Այս պահին Չարենցավանի ավելի արդիական խնդիրների մեջ այդ չորս շենքի վերելակը չի, քաղաքը ուրիշ խնդիրներ ունի, իսկ սա մոտ չորս միլիոնի գումար է, որից ավել լավ է երկուսը արվի՝ տաս շենք, մյուս կեսն էլ մյուս տարի, ավելացած մասն էլ ուրիշ խնդիրների ուղղել:
- Հետաքրքիր է ինչ հիմքով եմ շենքերը ընտրվելու: Գումարը շատ է, թող քիչ-քիչ անեն, ամեն տարի մի շենք վերանորոգեն ու բոլորը:
- Միգուցե կարելի է այդ ծախսն անել ոչ թե շքամուտքի բարեկարգում, այլ օրինակ այդ գումարը ծախսել շքամուտքի լույսի ապահովման համար, որ առաջին հարկի հարևանը ստիպված ողջ գումարն ինքը չտա:
- Եթե գումարը տրամադրվելու է 4 շենքի վերանորոգման համար, այն էլ 18 մլն. դրամ ներդնել դա մեզ անհրաժեշտ չէ: Ավելի լավ է այդ ողջ գումարը ներդնել մանկապարտեզի վրա և մանկապարտեզը լիովին վերանորոգել:
- Ես իմ շենքի վերելակը վերանորոգել եմ իմ սեփական գումարով հինգ հարյուր դոլար: Սակայն հիմա սպասարկումն ավելի թանկ է նստում:

Դրա մասին է պետք մտածել, սպասարկումը տարեկան մեկ անգամ է կատարվում:

- Բնակիչները շենքի շքամուտքերի հետ կապված հարցերը հիմնականում իրենց միջոցներով լուծել են:
- Եթե հնարավոր է 18մլն գումարով իրականացնել առաջին չորս սցենարները, ապա ինչու դա ծախսել միայն վերելակների վերանորգման վրա: Եկեք առաջին չորս կարևոր խնդիրները լուծենք, որից հետո նոր անցնենք վերելակներին:
- Առաջարկում եմ երեք մլն. տալ վեցերորդ պարտեզին: Հինգ մլն. երկու շենքի վերելակներ վերանորոգեն, ութ մլն. էլ տան մյուս պարտեզների, որպեսզի լուծեն ջեռուցման խնդիրը:
- Համարում ենք, որ կարևոր խնդիր է, բայց հրատապ չէ, հատկացվող գումարի մի մասով կարող են լուծվել շենքերի շքամուտքերի և վերելակների հարցը, իսկ մյուս մասով այլ խնդիրներ կարելի է լուծել:
- Քաղաքապետարանը շատ վատ վիճակում է, վերանորոգման կարիք ունի:
- Վերելակները այնքան էլ հրատապ չեն: Մեծ գումարներ է պահանջվում ու ընդհամենը չորս շենքի համար, իսկ ամբողջ քաղաքի հարցերը թողնենք պետք է չորս շենք բարեկարգենք

Սցենար 4. Քաղաքապետարանի շենքի տանիքի և սանհանգույցների վերանորոգում

- Քաղաքապետարանը սեփական միջոցներով կարող է այդ հարցը լուծել
- Օրական 100 և ավելի հոգու են սպասարկում, սակայն անմխիթար վիճակում է տանիքը: Դա շատ տհաճ է: Քաղաքապետարանը քաղաքի դեմքն է և երբ հյուր են գալիս, մենք շատ ամաչում ենք դրանից: Սակայն քաղաքապետը միշտ կարևորում է այդ գումարները առավել կարևոր տեղ ծախսել, քաղաքի խնդիրները լուծել:
- Չարենցավանի քաղաքապետարանից ԱԺ շատ պատգամավորներ են գնացել, թող իրենք գումար տրամադրեն, դա էլ իրենց հաշվին վերանորոգեն, ոչ թե քաղաքի գումարի հաշվին:
- Խնդիր կարելի է տարանջատել, ավելի կարևոր է սանհանգույցը, բայց հինգ մլն. շատ գումար է:
- Թող քաղաքապետարանի աշխատակիցներին կրճատեն, այդ գումարով վերանորոգեն ամեն բաժնում տասնհինգ հոգի պարապ նստած սուրճ է խմում

- Մեզ համար ավելի կարևոր է մանկապարտեզների վերանորոգումը, քան քաղաքապետարանի տանիքը: Այնպես որ, ավելի լավ է գումարները հատկացեն դրանց: Եթե ամբողջ ազգաբնակչությունը բարվոք վիճակում չէ, ինչու պիտի քաղաքապետարանը լինի լավ վիճակում:
- Կան նաև շատ գործարարներ, ովքեր կարող են աջակցել քաղաքապետարանին. իսկ ինչու չեն դիմում նրանց, իսկ բյուջեն օգտագործում՝ մանկապարտեզների շինարարության համար:
- Մարդը երբ գալիս է քաղաքապետարան և տեսնում անմխիթար վիճակ, պատկերացում է կազմում ողջ քաղաքի մասին: Սակայն քաղաքապետարանի պատը կարող է ընկած լինի, սակայն քաղաքը լավ վիճակում լինի: 18 մլն.-ից կարելի է 5 մլն տալ քաղաքապետարանին, իսկ 13 մլն.-ը տրամադրել երեխաների մանկապարտեզի վերանորոգման համար:
- Քաղաքապետարանն ունի հիսուն աշխատատեղ, երեք հարկանի շենք է, բավականին կոմպակտ, հիմնանորոգելը հեշտ կլինի:
- Միանշանակ պետք է այդ գումարները երկու ուղղությամբ ուղղել: Մանկապարտեզ և քաղաքապետարան:
- Քաղաքում անընդհատ աշխատանքներ իրականացվում են քաղաքապետարանի կողմից՝ բակային լուսավորություն, աղբահանություն: Բոլոր հարցերը լուծված են: Անում են աշխատանքներ՝ ըստ իրենց բյուջետային հնարավորությունների:
- Քաղաքապետարանը նաև ջեռուցման խնդիր ունի, բայց դա շատ ծախսատար է, թող նշված խնդիրները լուծեն:
- Քաղաքապետարանն ունի սեփական բյուջե, իսկ դպրոցն ու մանկապարտեզն այդ հնարավորությունը չունեն, այդ պատճառով չեմ գտնում, որ քաղաքապետարանի վերանորոգումը գերխնդիր է
- Պետք է գումարների բաշխում լինի բոլոր խնդիրներն էլ պետք է ինչ-որ չափով լուծել: Միայն մեկին գումարները չուղղել:
- Քաղաքապետարանում աշխատող մարդկանց վիճակն այնքան էլ վատ չէ, կոպիտ ասած, ձեռները քարի տակ չէ. թող ներդրումներ անեն իրենց աշխատավայրի համար:
- Ինը հարկանի շենքերում տանիքի խնդրի պատճառով մինչև առնվազն յոթերորդ հարկ պատերը խոնավ են լինում ու բորբոսնում են, անգամ լավ եղանակին հաճախ ջեռուցում ենք միացնում, որ չբորբոսնի:
- Զուգարանի վերանորոգման փոխարեն թող քաղաքապետարանում տպագրական սարք տեղադրեն, որ պատճենահանման համար ուրիշ տեղ չուղարկեն:

- Երկրի պետական բյուջեից թող գումար տրամադրեն քաղաքապետարանի վերանորոգման համար
- Թող երկու ամիս աշխատողներից տաս հազար դրամ պահեն և նորոգեն իրենց սանհանգույցը:
- Չորրորդ սցենարի գումարի մի մասով կվերանորոգվի պոլիկլինիկայի սանհանգույցը:

Սցենար 5. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

- Հատկապես մեկ միլիոնը այնքան էլ մեծ չի, եթե դրանով կլուծեն շենքերի հարցը, թող վերանորոգվեն: Բայց սա չպետք է դառնա հիմնական խնդիրը:
- Գազատարը դնելուց տանիքն այնքան են վնասել, որ այդ անցքերից ջուրը գալիս լցվում է տուն:
- Հինգերորդ սցենարն այնքան էլ խելամիտ չէ, քանի որ մեր շենքերի տանիքները այսպես թե այնպես , համատիրության ուժերով կամաց -կամաց վերանորոգվում է:
- Այս պահին ամենակարևորը մանկապարտեզի խնդիրն է, ապա ասֆալտապատումը, ապա միայն քաղաքապետարանի և վերալակների հարցը, դրա հետ էլ կարելի է նորոգել շենքերի տանիքները:
- Հինգերորդ սցենար: Սա ամենահրատապ հարցն է: Բայց ընդամենը մեկ մլն են տրամադրում, ձեռ են առնում, իրենց սանհանգույցին հինգ մլն են ուզում տրամադրել, մեր շենքերին՝ մե՞կ: Էտ գումարով նույնիսկ մեր շենքի շքամուտքը չեն վերանորոգի:
- Հինգերորդ սցենարով քննարկված հարցը մեծ գումարային ներդրումներ չեն պահանջում, ուղղակի պետք է լինել ավելի հետևողական:
- Տանիքների վերանորոգումն էլ իհարկե կարևոր խնդիր է, բայց եթե հիշենք, որ տասնութ միլիոն է հատկացվելու վերելակներին, ապա կարելի է հանրագումարի բերել դա և իրականացնել միանգամից մի քանի ծրագիր:
- Հատկացված գումարը բավարար չէ շենքերի տանիքների համար, կարող են օգտագործել, բայց դա անհավասարության խնդիր կստեղծի, ոչ բոլորը կկարողանան վերանորոգել:
- Եթե մաքսիմում 18 մլն դրամ տրամադրում են, ապա չորս սցենարներն էլ կարելի է այդ գումարով լուծել
- Խնդիրը միայն տանիքը չի, շատ շենքերում ջրհորդաններն էլ են քանդ-

ված, ու պատերը դրսից էլ են խոնավանում:

- Մեր մոտ կարևոր խնդիրներ են զբոսայգու բարեկարգումը, երաժշտական դպրոցի դուռ-լուսամուտի հարցը:
- Ես ապրում եմ շենքի հինգերորդ հարկում: Ես վերանորոգել եմ և տանիքը, և ջրահեռացման խողովակներ տեղադրել, սակայն հարևանս միջոցներ չունի, որ ինքն էլ վերանորոգի, ամեն ձմեռ իրենց կողմից ձյունը գալիս է ու մեր կողմը լցվելով քանդում ամբողջ նորոգումը:
- Հինգերորդ սցենարին հատկացված գումարը շատ քիչ է:
- 18 մլն. դրամով կարելի է բոլոր մնացած հարցերը լուծել: Եթե այդ գումարը կարող են տրամադրել, եթե հաղթում է այդ արժեքի սցենարը, նշանակում է, որ այդ հարցը պետք է լուծվի, հետևաբար այս գումարը կարելի է ավելի ռացիոնալ օգտագործել: Եկեք այս 4 խնդիրներն էլ լուծենք
- Քաղաքում կա մարզադպրոց ու այն շատ ավելի վատթար վիճակում է գտնվում, քան անգամ վեցերորդ մանկապարտեզը, սանհանգույց չկա, իսկ այստեղ հաճախում են 400 հոգի, պատերը քանդվում են, այս հարցն էլ է պետք քաղաքի հրատապ հարցերի մեջ ներառել:
- Չարենցավանում բացի նշվածներից, շատ խնդիրներ կան, որոնք պետք է հերթականությամբ լուծել: Պարզապես պետք է տարբերակել առաջնայինը երկրորդականից:
- Մենք առաջարկում ենք զբոսայգի կառուցեն այդ տրամադրված գումարով, դրանից բոլորը կօգտվեն
- Քաղաքապետարանը մասնակի վերանորոգում էր իրականացրել ջրահեռացման խնդիրները բարելավելու համար, սակայն շատ վատ էին կատարել: Վերանորոգելու դեպքում խնդիրը որակի վրա պետք է դրվի:
- Քաղաքի գրեթե բոլոր բնակիչներն ահով են սպասում անձրևներին: Ամենահրատապ խնդիրը մնում է հարթ տանիքների նորմալ և ոչ կցկտուր վերանորոգմանը:

Անվտանգություն

Սցենար 1. Երիտասարդական փողոցի բարեկարգում

- Փողոցը վերանորոգված չի, մեքենաները ժամանակին չեն հասնում հիվանդանոց, վթարներ է լինում: Դրա բարեկարգումը կլուծի այս խնդիրները:

- Ճանապարհի պատճառով, շտապ օգնության մեքենան չի կարողանում արագ հասնել դեպքի վայր
- Կարծում եմ, որ առաջին հերթին իսկապես պետք է վերանորոգվի հենց այդ փողոցը, քանի որ այն ամբողջ Չարենցավանի համար է, դրանից օգտվում է ոչ միայն այդ հատվածի բնակչությունը, այլև ամբողջ քաղաքը: Դա կարևոր է նաև անվտանգության համար, քանի որ դպրոց գնալու համար երեխաները քայլում են փողոցով, քանի որ մայթեր չկան:
- Ես վարորդ եմ, ամեն օր գնում-գալիս եմ, փողոցի վիճակը տանելի է, վթարներն էլ տեղի են ունենում միայն անզգուշության պատճառով. մարդիկ իմանալով, որ երթևեկությունը քիչ է, զգույշ չեն քշում, մի մեքենա որ դիմացն է դուրս գալիս վթար է լինում, բայց դա ճանապարհի որակից չի գալիս:
- Շտապ օգնության մեքենան չի կարողանում անցնել, նաև կանչերին ուշ են հասնում հենց ճանապարհների պատճառով:
- Եթե շտապօգնությունը ցանկություն ունենա հասնել, և բժիշկն էլ իր մասնագիտության գիտակ լինի մեքենան տեղ կհասնի ու հիվանդին կօգնեն, ճանապարհի վերանորոգումը էական փոփոխություն չի բերի: Թող լավ բժիշկներ բերեն ու հիվանդանոցին մեքենաներ տան, թե չէ ճանապարհն ինչ...
- Երիտասարդական ճանապարհով ոչ մեկ չի անցնում դպրոց գնալու համար, այլընտրանքային ճանապարհ են փնտրում
- Ճանապարհների բարեկարգման տեսանկյունից իսկապես սա ամենակարևոր նշանակության ճանապարհն է: Բացի այդ մարդկանց անվտանգության հարցն էլ կա, հերիք չի մայթերով չեն քայլում, մի հատ էլ վարորդներն են փոսերի պատճառով ոնց ասես քշում:
- Շտապ օգնության մեքենան փողոցի պատճառով չի, որ չի հասնում ժամանակին, այլ իր վատ գործելու:
- Փողոցը պետք է հիմնանորոգել ու մայթերն էլ բարեկարգել: Մայթ չկա, դրա համար մարդիկ փողոցի “մեջտեղով” են գնում:
- Սակայն փոսերը նաև օգտակար են, քանի որ վարորդները մեքենան արագ չեն կարողանում վարել և վթարներ քիչ են լինում: Լավ ճանապարհի դեպքում վթարները կշատանան: Պետք է նաև հարց դնել, վթարների բացառման համար:
- Վարորդների մեծամասնությունը տղամարդիկ են, նրանց համար շատ վտանգավոր է փողոցի քարուքանդ վիճակը

Սցենար 5. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

- Հինգերորդ սցենար: Այստեղ քննարկվող հարցը պարտադիր պետք է լուծվի, քանի որ կարող է հանգեցնել մահվան դեպքերի:
- Հինգերորդ սցենար: Բացի չորրորդ և հինգերորդ թաղամասերց պետք է ներառվի նաև վեցերորդ թաղամասի շենքերի տանիքները, քանի որ վտանգավոր են:
- Օրինակ ավելի կարևոր խնդիր կա տանիքների վրա տեղադրել ձյան հոսքերից պաշտպանող տարրեր:
- Ձմռանը ձյան հետևանքով ճաղավանդակները վնասվել են, դրանք էլ արժի վերանորոգել, որ վտանգավոր չլինի, հանկարծ վնաս չհասցնեն անցորդներին:
- Խոնավություն է դրա պատճառով, ցեխոտ ոտքերով մտնում են տուն, պետք է սպորտսմեն լինես, որ այդ ջրափոսերի վրայով թռչես, որ տուն մտնես, շենքի վերևից մինչև առաջին հարկ ջուրը հասնում է:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Սցենար 1. Երիտասարդական փողոցի բարեկարգում

- Երիտասարդական փողոցի այն հատվածը, որտեղ դպրոցն է բարեկարգ է, բնակելի շենքերից դպրոց հասնում են բակերով, բայց այդ փողոցից չեն օգտվում:
- Փողոցն այդքան քարուքանդ չէ, որքան մայթերն են անբարեկարգ, գետնանցումն անմխիթար վիճակում է գտնվում
- Եկեղեցի բոլորն են գնում, մենք ներքին տրանսպորտ չունենք, մարդիկ դժվարություններ են ունենում ճանապարհորդելու կամ ոտքով քայլելու համար: Մայթեզրերը նորմալ վիճակում չեն, զբոսնելը անհնարին է: Միայն դպրոցի մոտ է մի քիչ նորմալ վիճակ, բայց մնացած հատվածը անբարեկարգ է
- Հենց միայն նրա համար, որ այդտեղ գտնվում են դպրոցն ու հիվանդանոցը, այդ փողոցը պետք է առաջին հերթին վերանորոգվի: Տարեցներն ու երեխաները չեն կարողանում հասնել անհրաժեշտ վայրը: Քաղաքի կենտրոնում այն կամաց-կամաց վերածվում է չօգտագործվող փողոցի:
- Չարենցավան քաղաքի մուտքի հատվածն ավելի անբարվոք վիճակում է գտնվում, քան Երիտասարդական փողոցը

- Երիտասարդական փողոցին հարող զբոսայգին գրեթե չի գործում, միայն սիրահարներն են գալիս, գուցե եթե զբոսայգին ամբողջությամբ գործի, այդ դեպքում նոր փողոցը կդառնա զբոսանքի փողոց. առավել առաջնային է զբոսայգին բարեկարգելը, ոչ թե փողոցը:
- Քաղաքում իսպառ բացակայում է ջրահեռացման համակարգը: Ջրահեռացման համակարգը չբարելավելու դեպքում, վերանորոգված ճանապարհը նորից շարքից դուրս կգա: Անպայման պետք է անձրևաջրերի կուտակումները հեռացում: Մարդիկ բահերով տանում ջուրը այլ տեղեր են լցնում: Ջրահեռացման բոլոր համակարգերը չեն գործում: Մարդիկ ստիպված կոշիկները, գուլպաները հանում ու նոր ճանապարհները անցնում:
- Երիտասարդական փողոցի վրա, եկեղեցու մոտ կա անցում, որը չի մաքրվում, կարևոր է նաև այդ հարցը:

Սցենար 2. Թիվ 6 մանկապարտեզի կոյուղագծերի վերանորոգում

- Սանէպիդկայանը խախտումներ, եթե գտնի էլ, ոնց փակի, եթե այդ հսկայական թաղամասում այլընտրանք մանկապարտեզ չկա:
- Եթե մենք երեխային սովորեցնում ենք տեսնել լավն ու գեղեցիկը, գնահատել մաքրությունը, բայց դա չենք կարողանում ցույց տալ, քանի որ շրջապատում դա չկա, դա շատ մեծ խնդիր է: Պետք է մանկությունից երեխայի աչքը սովորի գեղեցիկ ու հարմարավետ միջավայրին:
- Եթե կոյուղու համակարգը վերանորոգեն, դա հարցի լուծում չէ: Միևնույն է փոշոտ շենքին է դիպչելու ու նորից աղտոտվի
- Անցյալ տարի վեցերորդ մանկապարտեզում ջրից թունավորվելու դեպք էր եղել, նման բան այս հակասանիտարական պայմաններում կարող է հաճախ կրկնվել:

Սցենար 3. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում, շքամուտքերի հիմնանորոգում

- Բժշկությունը ապացուցել է, որ ոտքով քայլելն ավելի առողջարար է, քան վերելակով, այնպես որ երրորդ սցենարը մեզ պետք չի:
- Քաղաքապետարանը պետք է սանիտարական վերահսկողությունը ուժեղացնի, փողոցային առևտուրն էլ հսկի:
- Եթե շենքի շքամուտքը վերանորոգված չի, շենքում առնետները վխտում են, պետք է ոչ միայն վերանորոգել, այլև սանիտարական միջոցառումներ իրականացնել:

Սցենար 4. Քաղաքապետարանի շենքի տանիքի և սանհանգույցների վերանորոգում

- Քաղաքապետարանի սանհանգույցն իրոք շատ վատ վիճակում է, չեմ պատկերացնում, թե աշխատողներն ինչպես են օգտվում
- Չորրորդ սցենար: Քաղաքապետարանը գտնվում է հակասանիտարական վիճակում, ամբող երեք հարկանի շենքում գտնվում է մեկ սանհանգույց որից օգտվում են և իգական, և արական սեռի ներկայացուցիչները:
- Քաղաքապետարանի աշխատակիցները ընդմիջման ժամին գնում են տուն, որ զուգարանից օգտվեն, աշխատանքի վայրում չեն օգտվում:
- Ամռան ամիսներին տհաճ հոտ է գալիս քաղաքապետարանի միջանցքներից
- Պոլիկլինիկայի սանհանգույցը տեսե՞լ եք: Ուրիշ հիմնարկների սանահանգույցները ավելի վատ վիճակում են գտնվում: Հիվանդները ոնց են օգտվում մտածել եք
- Երբ տանիքները բարեկարգ չեն, պատերը խոնավանում են, դա արդեն մարդկանց առողջության վրա է անդրադառնում:
- Ջեռուցման սեզոնին պատերը մի փոքր չորանում են, բայց գարնանը հենց ջեռուցումն անջատում ես, պատերը սկսում են բորբոսնել, մեր երեխաների առողջությունն էլ վնասվում է:

Սցենար 5. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

- Քաղաքը միայն մի այգի ունի ու մտնել չենք կարողանում, պետք է նաև “բիսետկաներ” դնել բակերում: Բակերի նորոգման մեջ պետք է դրանք էլ մտցնել:
- Այգին գերեզմանոց է դարձել, ժամանցի ոչ մի տեղ չկա: Նստարաններ դրվի, սրճարան բացվի, մի քանի ճոճանակ երեխաների համար՝ դրանով արդեն ահագին գործ արած կլինեն:
- Խոնավություն է դրա պատճառով, ցեխոտ ոտքերով մտնում են տուն, պետք է սպորտսմեն լինես, որ այդ ջրափոսերի վրայով թռչես, որ տուն մտնես, շենքի վերևից մինչև առաջին հարկ ջուրը հասնում է:
- Քաղաքում մաքրությունը, աղբահանությունը, լուսավորությունը շատ լավ վիճակում են, Չարենցավանում նման խնդիրներ չկան:

Երեխաներ և երիտասարդներ

Սցենար 1. Երիտասարդական փողոցի բարեկարգում

- Երիտասարդները, եթե ուզենան հանդիպել Երևանում կհանդիպեն, ոչ թե այստեղ, որ չհանդիպած՝ ամբողջ քաղաքն իմանում է:
- Երիտասարդականը բանուկ փողոց չի, գործարանները չեն գործում: Երեխաները չեն իջնում այդ փողոցով: Եկեղեցու փողոցը վերանորոգված է: Ավելի կարևոր, լուրջ հարցեր կան:
- Քաղաքի համար առաջին խնդիրը մանկապարտեզներն են: Մանկապարտեզների շենքերը անմխիթար վիճակում են գնվում:
- Ութ մլն. կարելի է ծախսել բակերի ասֆալտապատման և երեխաների համար խաղահրապարակների կառուցման վրա:
- Բնականաբար, ինչը որ երեխաներին է վերաբերում, կարևոր է:

Սցենար 2. Թիվ 6 մանկապարտեզի կոյուղագծերի վերանորոգում

- Միկրոշրջանի երեխաների մեծ մասն օգտվում է վեցերորդ մանկապարտեզից: Բայց հաճախ ծնողները անգամ գերադասում են չտանել մանկապարտեզ, քանի որ բացարձակ պայմաններ չկան: Բայց երեխաները մեր ապագան են և պետք է մտածել նրանց մասին:
- Մանկապարտեզը այնպիսի հարց է, որ բոլոր հարցերն էլ լուծվեն , կոյուղագծերի վերանարոգումը բավարար չէ:
- Մեր հիմնարկությունը շատ վատ վիճակում է, ստեղծագործականության կենտրոն է, բայց պայմանները վատն են: Մանկապարտեզը շատ կարևոր է:
- Մանկապարտեզի վերանորոգման հարցն իսկապես արդիական է, քանի որ տարվա գրեթե կեսը այն չի գործում: Ոչ ջեռուցվում է, ոչ սանհանգույց կա: Դա նաև գենդերային խնդիր է. մայրերն աշխատում են, բայց երեխաներին տեղ չունեն տանելու:
- Ոչ միայն մանկապարտեզում, այլև մշակույթի տանը բազում խնդիրներ կան: Անգամ բավարար վիճակում գտնվող սենյակներ չկան:
- Մանկապարտեզը ամենահրատապ և ամենակարևոր խնդիրներից մեկն է, քանի որ մատաղ սերնդի դաստիարակությունը այսօր միանշանակ առաջնահերթություն է, իսկ մանկապարտեզներից ամենավատթար վիճակում վեցերորդ մանկապարտեզն է:

- Պետք է ամբողջ մանկապարտեզը վերանորոգել: Մանկապարտեզի ջեռուցումը շատ հրատապ հարց է: Մենք անգամ երեխաների միջոցառումներին չենք կարողանում նստել, իսկ մեր երեխաները պետք է այդ ցրտին գնան ու մնա ամբողջ օրը:
- Եթե մենք երեխային սովորեցնում ենք տեսնել լավն ու գեղեցիկը, գնահատել մաքրությունը, բայց դա չենք կարողանում ցույց տալ, քանի որ շրջապատում դա չկա, դա շատ մեծ խնդիր է: Պետք է մանկությունից երեխայի աչքը սովորի գեղեցիկ ու հարմարավետ միջավայրին:
- Ես իմ երեխային չեմ ուղարկի այդ մանկապարտեզը:
- 6-րդ մանկապարտեզը երբևէ չի վերանորոգվել, երեխան հենց ներս է մտնում մանկական հիմնարկ, առաջինը նայում է ուր գնաց: Երբ մտնում եք և տեսնում, որ հիգիենիկ չէ, անհարմարավետ, ջրամատակարարում չունի, հիասթափվում ենք և երեխան էլ չի ցանկանում այցելել
- Սա հրատապ խնդիր է: Երեխաները ինչ հիվանդություն ասես չեն ձեռք բերի ցրտի, սանիտարական խնդիրների պատճառով:
- Մանկապարտեզի վերանորոգումը կլուծի նաև մի շարք այլ խնդիրներ. նախ ավելի շատ երեխաներ կկարողանան հաճախել մանկապարտեզ, բացի այդ, կստեղծվեն նոր աշխատատեղեր:
- Վեցերորդ մանկապարտեզի հնարավորությունն ավելի մեծ է, եթե նորոգվի կարող է շատ ավելի երեխաներ ընդգրկի, իսկ հիմա ծնողները ստիպված տանում են հեռու մանկապարտեզներ ու այնտեղ ստեղծվում է գերծանրաբեռնվածություն:
- Ես աշխատող մայր եմ և ինձ պետք է տարին կլոր աշխատող մանկապարտեզ, ես ինչպե՞ս վեց ամիս արձակուրդ վերցնեմ և երեխային պահեմ:
- Մանկապարտեզը “սեզոնային” է : Ձմեռը ոչ աշխատանք ունենք, ոչ էլ երեխաներն են դուրս գալիս տանից:
- Բոլորն էլ ձգտում են, որ իրենց երեխաները հաճախեն բարեկարգ մանկապարտեզ, ուստի առաջանում է երեխաների ընդունման խնդիրներ:
- Ստեղծագործական կենտրոնը կարևոր է նաև, թող մանկապարտեզներին հաջորդի այդ կենտրոնի վերանորոգումը:
- Վեցերորդ մանկապարտեզ կարող են հաճախել միաժամանակ առնվազն 240 երեխա, ու աշխատատեղեր էլ կստեղծվեն:
- Շատ կարևոր է, որ բոլոր երեխաները մեծանան հավասար պայմաններում: Կա մանկապարտեզ, որը նորոգված է, բայց այնտեղ չեն կարող

հաճախել բոլոր երեխաները: Իսկ ինչու մյուսները չհաճախեն վերանորոգված և նորմալ պայմաններով մանկապարտեզ:

- Մանկապարտեզի պատերը քանդված են, ծաղիկներ են փակցնում այդ փլված տեղերը, որ երեխաների համար այդքան տխուր չլինի հաճախելը:
- Չարենցավանը շատ փոքր քաղաք է անհարմարություն չի լինի, մի ծայրից մյուսը տաս րոպեում ես հասնում: Ավելի լավ է տաս րոպե շուտ տանից դուրս գան, բայց երեխաներին տանեն նորմալ ջեռուցվող մանկապարտեզ, որ ամբողջ տարին աշխատում է:
- Պետք է օգտագործել մանկապարտեզի կոյուղագծերի վերափոխման հարցը, քանի որ խոսքը վերաբերում է մեր երեխաներին
- Քաղաքապետարանը պայմաններ է տրամադրում, որպեսզի ձմռան երեք ամիսներին երեխաները կարողանան ուրիշ մանկապարտեզ հաճախել

Սցենար 3. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում, շքամուտքերի հիմնանորոգում

- Մանկապարտեզի շենքի վերանորոգումը բոլորին օգտակար է: Սա լուրջ խնդիր է ձմռանը: Երեխային մանկապարտեզ ենք տանում, դայակը փայտ է կտրատելու, որ տաքացնի: Սա լուրջ խնդիր է, որովհետև համ երեխաներն են մրսում և հիվանդանում, ինչպես նաև, զբաղվելով այլ գործերով, կորցնում է զգոնությունը:

Սցենար 4. Քաղաքապետարանի շենքի տանիքի և սանհանգույցների վերանորոգում

- Երիտասարդների անունից պահանջում ենք նորոգել քոլեջը և ոչ թե քաղաքապետարանի տանիքը: Չէ որ երիտասարդները մեր երկրի ապագան են: Այսօր առաջնահերթը ապագա սերունդն է:
- Քաղաքապետարանի տանիքի համար հատկացված հինգ միլիոնը թող գումարվի մանկապարտեզի նախագծին, որ երեխաները չքնեն աթոռների վրա: Նույնիսկ մահճակալներ չկան:
- Ջեռուցման սեզոնին պատերը մի փոքր չորանում են, բայց գարնանը հենց ջեռուցումն անջատում ես, պատերը սկսում են բորբոսնել, մեր երեխաների առողջությունն էլ վնասվում է:

Սցենար 5. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

- Մանկապարտեզը ու ժամանցի հարցերը ամենակաևորն են: Երիտա-

սարդները անգամ ժամադրվելու տեղ չունեն:

- Առաջնահերթը մանկապարտեզն է: Ցանկացած հնարավոր գումար պետք է դրան հատկացնել: Բայց այգին էլ շատ կարևոր է: Մարդիկ տանից դուրս են գալիս գնալու, քայլելու տեղ չունեն:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Սցենար 1. Երիտասարդական փողոցի բարեկարգում

- Այս ճանապարհի պատճառով մեքենաները հաճախ փչանում են, կանայք են մայթերով քայլում և հաճախ կոշիկներն են փչացնում: Փողոցը պետք է վերանորոգվի, քանի որ այդ փողոցի վրա են գտնվում հիվանդանոցը, այգին և ամենակարևորը եկեղեցին: Կարծում եմ մայթերի վերանորոգումն ավելի կարևոր են:
- Վարորդների մեծամասնությունը տղամարդիկ են, նրանց համար շատ վտանգավոր է փողոցի քարուքանդ վիճակը

Սցենար 2. Թիվ 6 մանկապարտեզի կոյուղագծերի վերանորոգում

- Կնոջ հոգսն է թեթևանում այսպիսով:
- Կինը հազիվ հնարավորություն է ունենում երեխային ուղարկելու մանկապարտեզ: Նպաստում է ընտանիքի զարգացմանը:
- Վերանորոգումը կօգնի կանանց, որ մանկապարտեզը բացվի, կինն էլ կարողանա աշխատել:
- Մանկապարտեզի վերանորոգումը կլուծի նաև մի շարք այլ խնդիրներ. նախ ավելի շատ երեխաներ կկարողանան հաճախել մանկապարտեզ, բացի այդ, կստեղծվեն նոր աշխատատեղեր:
- Ես աշխատող մայր եմ և ինձ պետք է տարին կլոր աշխատող մանկապարտեզ, ես ինչպե՞ս վեց ամիս արձակուրդ վերցնեմ և երեխային պահեմ:
- Եթե հիմնովին վերանորոգվի մանկապարտեզը աշխատատեղեր կբացվեն:
- Մանկապարտեզի վերանորոգման հարցն իսկապես արդիական է, քանի որ տարվա գրեթե կեսը այն չի գործում: Ոչ ջեռուցվում է, ոչ սանհանգույց կա: Դա նաև գենդերային խնդիր է. մայրերն աշխատում են, բայց

երեխաներին տեղ չունեն տանելու:

Սցենար 3. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում, շքամուտքերի հիմնանորոգում

- Շուկայի առևտուրը կինն է բարձր հարկեր բարձրացնում:
- Չարենցավանում տղամարդիկ քիչ են, մեծամասնությունը կանայք են, և բոլոր հարցերը կանանց ուսերի վրա են մնում, բայց որ այստեղ էլ է բնակվում, ամբողջ օրը աշխատանքի են լինում, շենքի խնդիրներից միևնույն է տեղյակ չեն լինում:
- Իհարկե անչափ կարևոր խնդիր է նաև վերելակների վերանորոգման հարցը, չէ որ կան շատ տարեց մարդիկ, երեխաներ, հղի կանայք, ովքեր շատ խնդիրներ են ունենում: Բայց սա այնքան էլ առաջնային չէ. եթե կա ընտրելու հնարավորություն, ապա իհարկե նպատակահարմար է առավել առաջնային հարցեր լուծել: Վերելակները կարելի նորոգել կամաց-կամաց, ժամանակի ընթացքում: Ի վերջո, համատիրությունը արդեն սկսել է այդ գործընթացը:

Սցենար 4. Քաղաքապետարանի շենքի տանիքի և սանհանգույցների վերանորոգում

- Քաղաքապետարանում զուգարաններում դռները չեն փակվում ու կանանցն ու տղամարդկանցը իրար մոտ են, բայց մի կերպ դիմանում ենք:

Սցենար 5. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

- Եթե Չարենցավանի կառավարման համակարգում կանայք ավելի շատ լինեին, շատ հարցեր ավելի ճիշտ ու հեշտ կլուծվեին:

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Քաղաքը ներկայանում է քաղաքապետարանի միջոցով, երբ հյուրեր ենք ընդունում: Այնպես որ կարևոր է:

Զարմացած եմ, որ այդ վիճակում է քաղաքապետարանը:

Քաղաքապետարանում զուգարաններում դռները չեն փակվում ու կանանցն ու տղամարդկանցը իրար մոտ են, բայց մի կերպ դիմանում ենք:

Քաղաքապետարանը մեր քաղաքի գլխավոր վայրն է, շատ հյուրեր ենք ունենում, ամոթ է այդ վիճակում դեսպաններ հյուրընկալել:

Քաղաքապետարանը մեր քաղաքի ներկայացուցչական դեմքն է, հիմնական աշխատատեղն է, գալիս են դրսից մարդիկ, այնտեղից են մեր քաղաքի մասին կարծիք կազմում, շատ կարևոր է, այն բարեկարգելը:

Կարելի է վերանորոգել, դրսից պատվիրակություն էր եկել, ուղղակի փախել են:

Երրորդ հարկը անձրևների ժամանակ լրիվ թրջվում է, կաթում է, դրա տակ են աշխատում:

Քաղաքապետարանը մեր քաղաքի «դեմքն» է, վերանորոգումը շատ կարևոր խնդիր է:

Քաղաքի դեմքը քաղաքապետարանից է սկսվում, դրա համար միայն պետք է վերանորոգել, ու հենց նշված խնդիրները:

Մենք էլ ենք մարդ, մենք էլ մեր կարիքները ունենք:

Եթե քաղաքապետարանի շենքը բարեկարգենք, այնտեղ աշխատողները ավելի բարի ու սրտացավ կլինեն

Ես չեմ ուզում, որ քաղաքապետարանի շենքը վերանորոգվի: Ավելի կարևոր հարցեր կան:

Սա քաղաքապետարանի աշխատողների համար է միայն, այդ գումարը մեր խնդիրներին պետք է հատկացվեն:

Թող մի հատ շարժական զուգարան բերեն դնեն քաղաքապետարանի առաջ:

Եթե ինքը նորմալ սպասարկում ցուցաբերի հյուրերին դա էլ կբավարարի:

Եթե չլիներ մանկապարտեզի հարցը, կարելի էր նաև քաղաքապետարանի հարցին անդրադառնալ:

Քաղաքապետարանը չի աշխատում ինքն իր համար, դա տեղ է, որտեղ ցանկացած մարդ գնում է, միայն իրենց համար չեն վերանորոգելու, այլ բոլորիս համար է:

Գնացինք Ալավերդի, այստեղի քաղաքապետարանն ավելի ակտիվ էր աշխատում, բայց ավելի անբարեկարգ վիճակում էր, այնպես որ կարելի է վատ պայմաններում էլ լավ աշխատել:

Քաղաքապետարանի հիմնահարցը առաջնահերթ չէ:

Քաղաքապետարանում ինչ են անում. ամբողջ օրը թուղթ են մրոտում միայն, որից ոչ մի հարց էլ չի լուծվում: Առանց տանիքի վերանորոգման էլ յոլա կգնան:

Ինչը պիտի փոխվի աշխատանքի արդյունավետության տեսակետից:

Ձմռանը մայթերով չենք կարողանում քայլել սառույցի պատճառով, չեն մաքրում ընդհանրապես, թող այս հարցը

քաղաքի այլ խնդիրների լուծման հարցում:

Քաղաքապետարանի բարեկարգ վիճակը դրականորեն կազդի այն-տեղ աշխատող անձնակազմի վրա, քանի որ մարդիկ չեն ջղայնանա և նեղվի անբարենպաստ պայմաններից և քաղաքացիներին ավելի լավ կսպասարկեն:

Օրական 100 և ավելի հոգու են սպասարկում, սակայն անմխիթար վիճակում է տանիքը: Դա շատ տհաճ է: Քաղաքապետարանը քաղաքի դեմքն է և երբ հյուր են գալիս, մենք շատ ամաչում ենք դրանից: Սակայն քաղաքապետը միշտ կարևորում է այդ գումարները առավել կարևոր տեղ ծախսել, քաղաքի խնդիրները լուծել:

Քաղաքապետարանի սանհանգույցն իրոք շատ վատ վիճակում է, չեմ պատկերացնում, թե աշխատողներն ինչպես են օգտվում:

Քաղաքապետարանը գտնվում է հակասանիտարական վիճակում, ամբող երեք հարկանի շենքում գտնվում է մեկ սանհանգույց որից օգտվում են և՛ իգական, և՛ արական սեռի ներկայացուցիչները:

Քաղաքապետարանի աշխատակիցները ընդմիջման ժամին գնում են տուն, որ զուգարանից օգտվեն, աշխատանքի վայրում չեն օգտվում:

Ամռան ամիսներին տհաճ հոտ է գալիս քաղաքապետարանի միջանցքներից:

Միանշանակ պետք է այդ գումարները երկու ուղղությամբ ուղղել: Մանկապարտեզ և քաղաքապետարան:

Քաղաքապետարանն ունի հիսուն աշխատատեղ, երեք հարկանի շենք է, բավականին կոմպակտ, հիմնանորոգելը հեշտ կլինի:

Քաղաքապետարանը շատ վատ վիճակում է, վերանորոգման կարիք ունի:

լուծեն, ոչ թե քաղաքապետարանի սանհանգույցի մասին մտածեն, դա վերջին տեղում է:

Եթե քաղաքապետները հարմարվել են այդ հարցին, մենք մտածելու բան չունենք:

Քաղաքապետարանի սանհանգույցի վերանորոգումը միայն աշխատակիցներին է վերաբերում, ամբողջ քաղաքի խնդիրը չէ:

Երբ որ մեր քաղաքի մնացած խնդիրները կլուծվեն, որոնք շատ կարևոր են ու արդիական, այն ժամանակ էլ կմտածենք քաղաքապետարանի տանիքի մասին: Կամ էլ թող քիչ մսխեն փողերը:

Քաղաքապետարանը սեփական միջոցներով կարող է այդ հարցը լուծել:

Չարենցավանի քաղաքապետարանից ԱԺ շատ պատգամավորներ են գնացել, թող իրենք գումար տրամադրեն, դա էլ իրենց հաշվին վերանորոգեն, ոչ թե քաղաքի գումարի հաշվին:

Խնդիր կարելի է տարանջատել, ավելի կարևոր է սանհանգույցը, բայց հինգ մլն. շատ գումար է:

Այդ գումարի մի մասով կվերանորոգվի պոլիկլինիկայի սանհանգույցը:

Թող երկու ամիս աշխատողներից տաս հազար դրամ պահեն և նորոգեն իրենց սանհանգույցը:

Երկրի պետական բյուջեից թող գումար տրամադրեն քաղաքապետարանի վերանորոգման համար:

Պոլիկլինիկայի սանհանգույցը տեսել եք: Ուրիշ հիմնարկների սանահանգույցները ավելի վատ վիճակում են գտնվում: Հիվանդները ոնց են օգտվում մտածել եք:

Զուգարանի վերանորոգման փոխարեն թող քաղաքապետարանում տպագրական սարք տեղադրեն, որ պատճենահանման համար ուրիշ տեղ չուղարկեն:

Քաղաքապետարանում աշխատող մարդկանց վիճակն այնքան էլ վատ չէ, կոպիտ ասած, ձեռները քարի տակ չէ. թող ներդրումներ անեն իրենց աշխատավայրի համար:

Քաղաքապետարանն ունի սեփական բյուջե, իսկ դպրոցն ու մանկապարտեզն այդ հնարավորությունը չունեն, այդ պատճառով չեմ գտնում, որ քաղաքապետարանի վերանորոգումը գերխնդիր է:

Քաղաքապետարանը նաև ջեռուցման խնդիր ունի, բայց դա շատ ծախսատար է, թող նշված խնդիրները լուծեն:

Մարդը երբ գալիս է քաղաքապետարան և տեսնում անմխիթար վիճակ, պատկերացում է կազմում ողջ քաղաքի մասին: Սակայն քաղաքապետարանի պատը կարող է ընկած լինի, սակայն քաղաքը լավ վիճակում լինի: 18 մլն.-ից կարելի է 5 մլն տալ քաղաքապետարանին, իսկ 13 մլն.-ը տրամադրել երեխաների մանկապարտեզի վերանորոգման համար:

Կան նաև շատ գործարարներ, ովքեր կարող են աջակցել քաղաքապետարանին. իսկ ինչու չեն դիմում նրանց, իսկ բյուջեն օգտագործում՝ մանկապարտեզների շինարարության համար:

Մեզ համար ավելի կարևոր է մանկապարտեզների վերանորոգումը, քան քաղաքապետարանի տանիքը: Այնպես որ, ավելի լավ է գումարները հատկացեն դրանց: Եթե ամբողջ ազգաբնակչությունը բարվոք վիճակում չէ, ինչու պիտի քաղաքապետարանը լինի լավ վիճակում:

Թող քաղաքապետարանի աշխատակիցներին կրճատեն, այդ գումարով վերանորոգեն ամեն բաժնում տասնհինգ հոգի պարապ նստած սուրճ է խմում:

Երիտասարդների անունից պահանջում ենք նորոգել քոլեջը և ոչ թե քաղաքապետարանի տանիքը: Չէ որ երիտասարդները մեր երկրի ապագան են: Այսօր առաջնահերթը ապագա սերունդն է:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Բոլոր դեպքերում կան հիվանդ ու ծեր մարդիկ, ովքեր ստիպված են լինում ինը հարկ բարձրանալ:

Շքամուտքերի վերանորոգումը կարևոր է, մեզ համար էլ հաճելի է, որ դա լուծվի:

Ավելի լավ կլինի ամբողջ գումարը ծախսվի վերելակների խնդրի համար, քանի որ շքամուտքի բարեկարգումը գոնե մարդիկ իրենք կարող են իրականացնել:

Տարիներ առաջ գումար էր հատկացվել շքամուտքերի վերանորոգման համար, որն իր արդյունքը տվել էր:

Մեր քաղաքը սոցիալապես անապահով քաղաք է, ով կտա գումար, որ համատիրությունն այդ հարցը լուծի, բնակիչն ի վիճակի չէ գումար տրամադրել

Լուրջ խնդիր կա շենքերի դռների հետ: Դռները չեն փակվում, քամին ուղիղ տուն է մտնում: Աստիճանները անբարեկարգ վիճակում են, բարձրանալը անհարմար է: Պետք է այս խնդիրների հետ կապված քաղաքապետարանը աջակցի: Ոչ բոլոր բնակիչներն են կարող իրենց միջոցներով վերանորոգեն:

Բժշկությունը ապացուցել է, որ ոտքով քայլելն ավելի առողջարար է, քան վերելակով:

Քաղաքապետարանը պետք է սանիտարական վերահսկողությունը ուժեղացնի, փողոցային առևտուրն էլ հսկի:

Եթե շենքի շքամուտքը վերանորոգված չի, շենքում առնետները վխտում են, պետք է ոչ միայն վերանորոգել, այլև սանիտարական միջոցառումներ իրականացնել: Մենք չենք ապրում բարձրահարկերում, դժվարանում ենք պատասխանել հարցերին:

Շքամուտքերի լույսը առաջին հարկի բնակիչներն են լուծել՝ իրենց դռան առաջ լույս վառելով:

Իսկ ինչ սկզբունքով են ընտրվելու շենքները:

Համատիրության, բնակիչների ջանքերով է տեղի ունենում շենքերի բարեկարգ վիճակի պահպանումը:

Իհարկե անչափ կարևոր խնդիր է նաև վերելակների վերանորոգման հարցը, չէ որ կան շատ տարեց մարդիկ, երեխաներ, հղի կանայք, ովքեր շատ խնդիրներ են ունենում: Բայց սա այնքան էլ առաջնային չէ. եթե կա ընտրելու հնարավորություն, ապա իհարկե նպատակահարմար է առավել առաջնային հարցեր լուծել: Վերելակները կարելի նորոգել կամաց-կամաց, ժամանակի ընթացքում: Ի վերջո, համատիրությունը արդեն սկսել է այդ գործընթացը:

Շքամուտքերի հարցը պետք է համատիրությունն էլ լուծի: Միայն քաղաքապետարանից չպետք է պահանջել:

Շենքերի շքամուտքերի լուսավորության հարցն ամեն բնակարան ինքնուրույն է լուծում, պետք է մի ընդհանուր համակարգ լինի:

Եղել են դեպքեր, որ խողովակները սառում են մուտքերի դռների բացակայության պատճառով, չնայած մեր շենքում մի քանի անգամ դուռը գողացել են: Պահպանել չգիտեն մարդիկ:

Հիմա բոլոր ունեն բջջային հեռախոսներ, որոնց միջոցով կարող են լուսավորել իրենց ճանապարհը:

Մեզ համար կարևոր է, որ ավելի նպատակային հարց լուծվի, ձմռանը եթե հարց է առաջանում, համայնքապետարանը անդրադառնում է այդ խնդիրներին:

Խնդիրների լուծումը նաև շենքի բնակիչների ցանկությունն է, սրտացավ է պետք հարցին մոտենալ:

Ավելի կարևոր է օրինակ ստեղծագործական կենտրոնի բարեկարգումը, որը նկուղային հարկում է, բայց ունեն շատ լավ մասնագետներ:

Երբ լինում են շքամուտքերի հետ լուրջ խնդիրներ, բողոքում ենք, գալիս լուծում են:

Ջրահեռացման «գերազանց» աշխատանքների շնորհիվ մենք մի օր ամբողջ շենքով փլուզվելու ենք նկուղ, թող այս հարցը լուծեն:

Չարենցավանում բոլոր վերելակները վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի բնակիչների միջոցներով, մնացել է մոտ մի չորս շենք առանց վերելակի, թող իրենք էլ իրենց գումարով վերանորոգեն:

Վերելակները վերանորոգվում են բայց ոչ հիմնովին, հետագայում չեն հետևում:

Եթե հատկացված գումարի մասին խոսակցություն չլիներ, ապա վերելակների վերանորոգումը նույնպես շատ կարևոր է: Բայց եթե տրամադրվում է 18 մլն դրամ, ապա ավելի նպատակահարմար է իրականացնել առաջնային, ավելի կարևոր խնդիրներ: Վերը նշված գումարի սահմաններում կարելի է վերանորոգել թե մանկապարտեզը, թե ճանապարհները...

Չեմ հասկանում հիմքից շենք են կառուցելու, որ 18 մլն. գումար են տրամադրում երրորդ սցենարին:

Թող տասնութ մլն. բաժանեն մանկապարտեզներին: Դա ավելի արդյունավետ կլինի:

Վերելակի խնդիր կարելի է ասել չկա: Վերելակները հիմնականում նորոգվել, փոխվել են: Այդ լիֆտերի գումարը կարելի է այլ խնդիրների համար ծախսել՝ մուտքերի համար, պատուհաններ դրվի, թող մանկապարտեզին տրվի:

Շենքերի շքամուտքերի վերանորոգման համար հատկացվել է գումար, բայց նպատակային չի օգտագործվել:

Վերելակների վերանորոգման համար հատկացվող գումարը շատ մեծ է:

Բարձրահարկի համար 18 միլիոն են տրամադրում, իսկ մանկապարտեզի համար ընդամենը երեք, միգուցե ճիշտ հակառակը լիներ: Ավելի կարևոր հարցեր կլուծվեին:

Բազմաբնակարաններում բնակիչներն են իրանց գրպանից գումար տրամադրել ու վերանորոգել իրենց շենքերի վերելակները:

Չորս վերելակի գումարը ահագին գումար է: Դրանով կարելի է ութ բարձրահարկի մուտք վերանորոգել: Դա ավելի արդյունավետ կլինի:

Շքամուտքերը չեն մաքրում դրա հետ մեկտեղ գալիս են սպասարկման գումար են պահանջում, չէ որ ես եմ շքամուտքը մաքրում, ինչու՞ վճարեմ:

Տասնութ միլիոնը չափազանց շատ է վերելակների նորոգման համար, այդ գումարով կարելի է նոր շենք կառուցել:

Այս պահին Չարենցավանի ավելի արդիական խնդիրների մեջ այդ չորս շենքի վերելակը չի, քաղաքը ուրիշ խնդիրներ ունի, իսկ սա մոտ չորս միլիոնի գումար է, որից ավել լավ է երկուսը արվի՝ տաս շենք, մյուս կեսն էլ մյուս տարի, ավելացած մասն էլ ուրիշ խնդիրների ուղղել:

Հետաքրքիր է ինչ հիմքով եմ շենքերը ընտրվելու: Գումարը շատ է, թող քիչ-քիչ անեն, ամեն տարի մի շենք վերանորոգեն ու բոլորը:

Միգուցե կարելի է այդ ծախսն անել ոչ թե շքամուտքի բարեկարգում, այլ օրինակ այդ գումարը ծախսել շքամուտքի լույսի ապահովման համար, որ առաջին հարկի հարևանը ստիպված ողջ գումարն ինքը չտա:

Եթե գումարը տրամադրվելու է 4 շենքի վերանորոգման համար, այն էլ 18 մլն. դրամ ներդնել դա մեզ անհրաժեշտ չէ: Ավելի լավ է այդ ողջ գումարը ներդնել մանկապարտեզի վրա և մանկապարտեզը լիովին վերանորոգել:

Ես իմ շենքի վերելակը վերանորոգել եմ իմ սեփական գումարով հինգ հարյուր դոլար: Սակայն հիմա սպասարկումն ավելի թանկ է նստում: Դրա մասին է պետք մտածել, սպասարկումը տարեկան մեկ անգամ է կատարվում:

Բնակիչները շենքի շքամուտքերի հետ կապված հարցերը հիմնականում իրենց միջոցներով լուծել են:

Եթե հնարավոր է 18մլն գումարով իրականացնել առաջին չորս սցենարները, ապա ինչու դա ծախսել միայն վերելակների վերանորգման վրա: Եկեք առաջին չորս կարևոր խնդիրները լուծենք, որից հետո նոր անցնենք վերելակներին:

Առաջարկում եմ երեք մլն. տալ վեցերորդ պարտեզին: Հինգ մլն. երկու շենքի վերելակներ վերանորոգեն, ութ մլն. էլ տան մյուս պարտեզների, որպեսզի լուծեն ջեռուցման խնդիրը:

Համարում ենք, որ կարևոր խնդիր է, բայց հրատապ չէ, հատկացվող գումարի մի մասով կարող են լուծվել շենքերի շքամուտքերի և վերելակների հարցը, իսկ մյուս մասով այլ խնդիրներ կարելի է լուծել:

Վերելակները այնքան էլ հրատապ չեն: Մեծ գումարներ է պահանջվում ու ընդհամենը չորս շենքի համար, իսկ ամբողջ քաղաքի հարցերը թողնենք պետք է չորս շենք բարեկարգենք:

Ինը հարկանի շենքերում տանիքի խնդրի պատճառով մինչև առնվազն յոթերորդ հարկ պատերը խոնավ են լինում ու բորբոսնում են, անգամ լավ եղանակին հաճախ ջեռուցում ենք միացնում, որ չբորբոսնի:

Բնակիչները տանիքի հարցով բազմիցս դիմում են գրել, սակայն այդ հարցը այդպես էլ լուծում չի ստացվել:

Երբ բնակարան են գնում միշտ նայում են տանիքի վիճակը, հատկապես եթե հինգերորդ հարկում են բնակարանները:

Բազմաբնակարան շենքերում օդատարներով ամբողջ ջուրը լցվում է նկուղները, նկուղներում կան նաև կանալիզացիայի խնդիր, մեր տները վերանորոգում ենք, բայց պատերը նորից խոնավությունից փչանում են:

Բազմաբնակարան շենքերում կա տանիքների ջրահեռացման խնդիր, ջուրը լցվում է մեր պատերի մեջ. պատճառներից մեկը անտենաների տեղադրումն է:

Գարնանը չենք կարող լվացք փռել, որովհետև ձնհալի ժամանակ ամբող ջուրը թափվում է լվացքի վրա, ջուրը հասնում է մինչև երրորդ հարկ:

Երբեմն հակասություն է առաջանում առաջին և վերջին հարկերի բնակիչների միջև տանիքի վերանորոգման հարցում:

Չարենցավանում նոր շենքերի կառուցման կարիք ունենք:

Մեր շենքերի տանիքները այսպես, թե այնպես, համատիրության ուժերով կամաց-կամաց վերանորոգվում է:

Այս պահին ամենակարևորը մանկապարտեզի խնդիրն է, ապա ասֆալտապատումը, ապա միայն քաղաքապետարանի և վերալակների հարցը, դրա հետ էլ կարելի է նորոգել շենքերի տանիքները:

Հատկացված գումարը բավարար չէ շենքերի տանիքների համար, կարող են օգտագործել, բայց դա անհավասարության խնդիր կստեղծի, ոչ բոլորը կկարողանան վերանորոգել:

Հատկացված գումարը շատ քիչ է:

Վերևի հարկերում տներում լրիվ ջրհեղեղ է, իրենք էլ կորցնելու բան չունեն:

Ես չորրորդ թաղամասի բնակիչ եմ և տեսնում եմ, որ տանիքների վերանորոգումն արդիական խնդիր է:

Բարձրահարկ շենքերում ջրահեռացման համակարգը շենքի ներսից է կատարվում, իսկ այդ ջրերը նկուղներն են լցվում և այս խնդրի կարգավորումը նաև կարող է այդ հարցը լուծել:

Հատկապես մեկ միլիոնը այնքան էլ մեծ չի, եթե դրանով կլուծեն շենքերի հարցը, թող վերանորոգվեն: Բայց սա չպետք է դառնա հիմնական խնդիրը:

Գազատարը դնելուց տանիքն այնքան են վնասել, որ այդ անցքերից ջուրը գալիս լցվում է տուն:

Սա ամենահրատապ հարցն է: Բայց ընդամենը մեկ մլն են տրամադրում, ձեռ են առնում, իրենց սանհանգույցին հինգ մլն են ուզում տրամադրել, մեր շենքերին՝ մեկ: Էտ գումարով նույնիսկ մեր շենքի շքամուտքը չեն վերանորոգի:

Քննարկված հարցը մեծ գումարային ներդրումներ չի պահանջում, ուղղակի պետք է լինել ավելի հետևողական:

Տանիքների վերանորոգումն էլ իհարկե կարևոր խնդիր է, բայց եթե հիշենք, որ տասնութ միլիոն է հատկացվելու վերելակներին, ապա կարելի է հանրագումարի բերել դա և իրականացնել միանգամից մի քանի ծրագիր:

Խնդիրը միայն տանիքը չի, շատ շենքերում ջրհորդաններն էլ են քանդված, ու պատերը դրսից էլ են խոնավանում:

Ես ապրում եմ շենքի հինգերորդ հարկում: Ես վերանորոգել եմ և՛ տանիքը, և՛ ջրահեռացման խողովակներ տեղադրել, սակայն հարևանս միջոցներ չունի, որ ինքն էլ վերանորոգի, ամեն ձմեռ իրենց կողմից ձյունը գալիս է ու մեր կողմը լցվելով քանդում ամբողջ նորոգումը:

Քաղաքապետարանը մասնակի վերանորոգում էր իրականացրել ջրահեռացման խնդիրները բարելավելու համար, սակայն շատ վատ էին կատարել: Վերանորոգելու դեպքում խնդիրը որակի վրա պետք է դրվի:

Քաղաքի գրեթե բոլոր բնակիչներն ահով են սպասում անձրևներին: Ամենահրատապ խնդիրը մնում է հարթ տանիքների նորմալ և ոչ կցկտուր վերանորոգմանը:

Տանիքները պետք է վերանորոգել, քանի որ կարող է հանգեցնել մահվան դեպքերի:

Բացի չորրորդ և հինգերորդ թաղամասերց պետք է ներառվի նաև վեցերորդ թաղամասի շենքերի տանիքները, քանի որ վտանգավոր են:

Ձմռանը ձյան հետևանքով ճաղավանդակները վնասվել են, դրանք էլ արժի վերանորոգել, որ վտանգավոր չլինի, հանկարծ վնաս չհասցնեն անցորդներին:

Օրինակ ավելի կարևոր խնդիր կա տանիքների վրա տեղադրել ձյան հոսքերից պաշտպանող տարրեր:

Երբ տանիքները բարեկարգ չեն, պատերը խոնավանում են, դա արդեն մարդկանց առողջության վրա է անդրադառնում:

Խոնավություն է դրա պատճառով, ցեխոտ ոտքերով մտնում են տուն, պետք է սպորտսմեն լինես, որ այդ ջրափոսերի վրայով թռչես, որ տուն մտնես, շենքի վերևից մինչև առաջին հարկ ջուրը հասնում է:

Անվտանգություն

Փողոցը վերանորոգված չի, մեքենաները ժամանակին չեն հասնում հիվանդանոց, վթարներ է լինում: Դրա բարեկարգումը կլուծի այս խնդիրները:

Ես վարորդ եմ, ամեն օր գնում-գալիս եմ, փողոցի վիճակը տանելի է, վթարներն էլ տեղի են ունենում միայն անզգուշության պատճառով. մարդիկ իմանալով, որ երթևեկությունը քիչ է, զգույշ

Ճանապարհի պատճառով, շտապ օգնության մեքենան չի կարողանում արագ հասնել դեպքի վայր:

Շտապ օգնության մեքենան չի կարողանում անցնել, նաև կանչերին ուշ են հասնում հենց ճանապարհների պատճառով:

Կարծում եմ, որ առաջին հերթին իսկապես պետք է վերանորոգվի հենց այդ փողոցը, քանի որ այն ամբողջ Չարենցավանի համար է, դրանից օգտվում է ոչ միայն այդ հատվածի բնակչությունը, այլև ամբողջ քաղաքը: Դա կարևոր է նաև անվտանգության համար, քանի որ դպրոց գնալու համար երեխաները քայլում են փողոցով, քանի որ մայթեր չկան:

Երիտասարդական ճանապարհով ոչ մեկ չի անցնում դպրոց գնալու համար, այլընտրանքային ճանապարհ են փնտրում:

Փողոցը պետք է հիմնանորոգել ու մայթերն էլ բարեկարգել: Մայթ չկա, դրա համար մարդիկ փողոցի “մեջտեղով” են գնում:

Վարորդների մեծամասնությունը տղամարդիկ են, նրանց համար շատ վտանգավոր է փողոցի քարուքանդ վիճակը:

Քննարկված փողոցը կնվազեցնի այլ փողոցների ծանրաբեռնվածությունը:

Եթե ասֆալտապատեն, ավելի հաճելի կլինի զբոսնել: Դա հիմնական փողոցներից մեկն է, սակայն քայլելը անհնարին է:

Այդ փողոցն իրոք շատ կարևոր է, վրան դպրոց է. շատ կարևոր է:

Ճանապարհների բարեկարգման տեսանկյունից իսկապես սա ամենակարևոր նշանակության ճանապարհն է: Բացի այդ մարդկանց անվտանգության հարցն էլ կա, հերիք չի մայթերով չեն քայլում, մի հատ էլ վարորդներն են փոսերի պատճառով ոնց ասես քշում: չեն քշում, մի մեքենա որ դիմացն է դուրս գալիս վթար է լինում, բայց դա ճանապարհի որակից չի գալիս:

Շտապ օգնության մեքենան փողոցի պատճառով չի, որ չի հասնում ժամանակին, այլ իր վատ գործելու:

Սակայն փոսերը նաև օգտակար են, քանի որ վարորդները մեքենան արագ չեն կարողանում վարել և վթարներ քիչ են լինում: Լավ ճանապարհի դեպքում վթարները կշատանան: Պետք է նաև հարց դնել, վթարների բացառման համար:

Երիտասարդական փողոցի վերանորոգումն ամենակարևոր խնդիրը չէ Չարենցավանում, քաղաքի բնակիչների համար կան ավելի կարևոր սոցիալական խնդիրներ:

Երիտասարդականը բանուկ փողոց չի, գործարանները չեն գործում: Երեխաները չեն իջնում այդ փողոցով: Եկեղեցու փողոցը վերանորոգված է: Ավելի կարևոր, լուրջ հարցեր կան:

Դա հիմնական ճանապարհ չի: Այն այնքան էլ բանուկ չի:

Երիտասարդական փողոցի գերխնդիրը գետնանցումն է

Քննարկված փողոցը ավելի հարմար է միկրո թաղամասում բնակվողների համար:

Եթե շտապօգնությունը ցանկություն ունենա հասնել, և բժիշկն էլ իր մասնագիտության գիտակ լինի մեքենան տեղ կհասնի ու հիվանդին կօգնեն, ճանապարհի վերանորոգումը էական փոփոխություն չի բերի: Թող լավ բժիշկներ բերեն ու հիվանդանոցին մեքենաներ տան, թե չէ ճանապարհն ինչ...

Կան ավելի կարևոր սոցիալական խնդիրներ:

Քաղաքը լուսավորության հետ կապված ոչ մի խնդիր չունի, ճանապարհները լուսավորված են:

Սա կարևոր է, քանի որ հիմնական երթևեկությունը այստեղ է կենտրոնացած: Դեպի հիվանդանոց, զբոսայգի տանող ճանապարհը պետք է բարեկարգել:

Քննարկված փողոցի դերը կմեծանա եթե քաղաքային տրանսպորտը գործի:

Եկեղեցի բոլորն են գնում, մենք ներքին տրանսպորտ չունենք, մարդիկ դժվարություններ են ունենում ճանապարհորդելու կամ ոտքով քայլելու համար: Մայթեզրերը նորմալ վիճակում չեն, զբոսնելը անհնարին է: Միայն դպրոցի մոտ է մի քիչ նորմալ վիճակ, բայց մնացած հատվածը անբարեկարգ է:

Երիտասարդական փողոցի վրա, եկեղեցու մոտ կա անցում, որը չի մաքրվում, կարևոր է նաև այդ հարցը: Եթե ճանապարհը վերանորոգեն այգի այցելողների թիվը չի ավելանա:

Այս ճանապարհի պատճառով մեքենաները հաճախ փչանում են, կանայք են մայթերով քայլում և հաճախ կոշիկներն են փչացնում: Փողոցը պետք է վերանորոգվի, քանի որ այդ փողոցի վրա են գտնվում հիվանդանոցը, այգին և ամենակարևորը եկեղեցին: Կարծում եմ մայթերի վերանորոգումն ավելի կարևոր են:

Հենց միայն նրա համար, որ այդտեղ գտնվում են դպրոցն ու հիվանդանոցը, այդ փողոցը պետք է առաջին հերթին վերանորոգվի: Տարեցներն ու երեխաները չեն կարողանում հասնել անհրաժեշտ վայրը: Քաղաքի կենտրոնում այն կամաց-կամաց վերածվում է չօգտագործվող փողոցի:

Կարևոր է բոլորի համար, թե՛ վարորդ, թե՛ հիվանդանոց գնացողների:

Վերանորոգման կարիք կա, բայց եթե խոսքը գնում է որակյալ նորոգման մասին: Հաճախ է լինում, որ փողոցներում փոսեր են փորվում և այդպես էլ

Դպրոցի ու դատարանի մասը նորմալ է, իսկ մնացած մասերը արդեն էական չեն: Այգին չի գործում, գործարանները չեն գործում:

Մեր քաղաքը փոքր է, ծայրից-ծայր տասը րոպեում կանցնես, քաղաքային տրանսպորտ չունենք

Միկրոթաղամասից իջնող փողոցն ավելի կարևոր է, քան ներկայացվածը, այնտեղ ծերեր են ապրում, ու դժվար են տեղաշարժվում:

Երիտասարդական փողոցի այն հատվածը, որտեղ դպրոցն է բարեկարգ է, բնակելի շենքերից դպրոց հասնում են բակերով, բայց այդ փողոցից չեն օգտվում:

Փողոցն այդքան քարուքանդ չէ, որքան մայթերն են անբարեկարգ, գետնանցումն անմխիթար վիճակում է գտնվում:

Չարենցավան քաղաքի մուտքի հատվածն ավելի անբարվոք վիճակում է գտնվում, քան Երիտասարդական փողոցը:

Պարբերաբար աշխատանքներ տարվում են փողոցի վերանորոգման համար, կարիք չկա այդքան գումար տրամադրել այս հարցին

Ամեն տարի ասֆալտապատում են, բայց աշխատանքներն էլ որակով պետք է լինեն, դրա անվան տակ գումարներ «չկորեն»:

Եղանակային պայմաններն ու մասնակի վերանորոգումը բերում են նրան, որ փողոցը ստիպված ենք լինում վերանորոգել, պրոբլեմն առկա է բոլոր քաղաքներում:

Ավելի լավ է հիմնովին կառուցել փողոցը, քան ամեն տարի «կարկատաններ» անել

Երիտասարդական փողոցին հարող զբոսայգին գրեթե չի գործում, միայն սիրահարներն են գալիս, գուցե եթե զբոսայգին ամբողջությամբ գործի,

անիմաստ դրանք մնում են: Անիմաստ ծախսեր շատ են արվում: Պետք է իսկապես նորոգել մեկ անգամ և որակով ու ընդմիշտ:

այդ դեպքում նոր փողոցը կդառնա զբոսանքի փողոց. առավել առաջնային է զբոսայգին բարեկարգելը, ոչ թե փողոցը:

Ութ միլիոնով թող վերանորոգեն այգին և շտապօգնության համար մեքենաներ գնեն: Թող կարուսելներ դնեն, որ երեխաներին Երևան չհասցնենք:

Մասնակի վերանորոգումը հարցի լուծում չէ, պետք է արվի հիմնական վերանորոգում:

Փողոցն այդքան էլ անբարեկարգ ու անմխիթար վիճակում չէ: Մայթերը վերանորոգեն լավ է:

Ցանկալի է, որ Երիտասարդական փողոցը վերանորոգվի, բայց դրանից հետո ոչ մի ակտիվություն չի ավելանա:

Քաղաքում իսպառ բացակայում է ջրահեռացման համակարգը: Ջրահեռացման համակարգը չբարելավելու դեպքում, վերանորոգված ճանապարհը նորից շարքից դուրս կգա: Անպայման պետք է անձրևաջրերի կուտակումները հեռացում: Մարդիկ բահերով տանում ջուրը այլ տեղեր են լցնում: Ջրահեռացման բոլոր համակարգերը չեն գործում: Մարդիկ ստիպված կոշիկները, գուլպաները հանում ու նոր ճանապարհները անցնում:

Այդ գումարով թող վերանորոգեն ու մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի խոնավությունը վերացնեն:

Տեղումները Չարենցավանում ավելի շատ են լինում, այդ պատճառով էլ պետք է վերանորոգել փողոցները, բայց բարձր որակով: Ամեն տարի ծախսեր անել , բայց անորակ շինարարություն կատարել, լրիվ անիմաստ է:

Եթե գործարանները վերանորոգեն, մարդիկ զբաղմունք ունեն, ճանապարհը հետո էլ կվերանորոգեն:

Փողոցը թող այդպես մնա, որ դզողփչողներն էլ գործ ունենան:

Փողոցի համար նախատեսված էր ութը միլիոն դրամ, ինչու՞ են մանկապարտեզին ընդամենը երեք միլիոն տրամադրում, եթե ութը միլիոն ունենք, ուրեմն կարող ենք մի քանի ծրագիր անել:

Եթե նախընտրություն է տրվում ճանապարհների բարեկարգման, ապա պետք է լրիվ հիմնանորոգել, ոչ թե միայն փոսեր լցնել:

Ճանապարհների վերանորոգումը միայն ի օգուտ վարորդների կլինի: Այդ փողոցը քաղաքի ծայրամասում է:

Ես այդ փողոցում եմ ապրում, վերանորոգումը գերխնդիր չէ, բանուկ վիճակում է գտնվում, ավելի քիչ է ծանրաբեռնված, միայն մայթերն են, որ համեմատած ավելի անբարեկարգ են

Ութ մլն. կարելի է ծախսել բակերի ասֆալտապատման և երեխաների համար խաղահրապարակների կառուցման վրա:

Իհարկե փողոցն էլ, քաղաքն էլ անմխիթար վիճակում են, բայց բնակիչների հոգսն այնքան մեծ է, որ երբեմն դրանց վրա էլ ուշադրություն չենք դարձնում:

Բարեկարգման աշխատանքները որակով չեն անում, սա կարծես «հնարավորություն» է ամեն տարի գումար բյուջեից հանելու:

Երեխաներ և երիտասարդներ

Մանկապարտեզների հիմնահարցը համայնքի հիմնական խնդիրներից է:

Բնականաբար, ինչը որ երեխաներին է վերաբերում, կարևոր է:

Քաղաքի համար առաջին խնդիրը մանկապարտեզներն են: Մանկապարտեզների շենքերը անմխիթար վիճակում են գնվում:

Միկրոշրջանի երեխաների մեծ մասն օգտվում է վեցերորդ մանկապարտեզ-

Ոչ միայն մանկապարտեզում, այլև մշակույթի տանը բազում խնդիրներ կան: Անգամ բավարար վիճակում գտնվող սենյակներ չկան:

Չարենցավանը շատ փոքր քաղաք է անհարմարություն չի լինի, մի ծայրից մյուսը տաս րոպեում ես հասնում: Ավելի լավ է տաս րոպե շուտ տանից դուրս գան, բայց երեխաներին տանեն նորմալ ջեռուցվող մանկապարտեզ, որ ամբողջ տարին աշխատում է:

զից: Բայց հաճախ ծնողները անգամ գերադասում են չտանել մանկապարտեզ, քանի որ բացարձակ պայմաններ չկան: Բայց երեխաները մեր ապագան են և պետք է մտածել նրանց մասին:

Մեր հիմնարկությունը շատ վատ վիճակում է, ստեղծագործականության կենտրոն է, բայց պայմանները վատն են: Մանկապարտեզը շատ կարևոր է:

Մանկապարտեզի վերանորոգման հարցն իսկապես արդիական է, քանի որ տարվա գրեթե կեսը այն չի գործում: Ոչ ջեռուցվում է, ոչ սանհանգույց կա: Դա նաև գենդերային խնդիր է. մայրերն աշխատում են, բայց երեխաներին տեղ չունեն տանելու:

Մանկապարտեզը ամենահրատապ և ամենակարևոր խնդիրներից մեկն է, քանի որ մատաղ սերնդի դաստիարակությունը այսօր միանշանակ առաջնահերթություն է, իսկ մանկապարտեզներից ամենավատթար վիճակում վեցերորդ մանկապարտեզն է:

Եթե մենք երեխային սովորեցնում ենք տեսնել լավն ու գեղեցիկը, գնահատել մաքրությունը, բայց դա չենք կարողանում ցույց տալ, քանի որ շրջապատում դա չկա, դա շատ մեծ խնդիր է: Պետք է մանկությունից երեխայի աչքը սովորի գեղեցիկ ու հարմարավետ միջավայրին:

6-րդ մանկապարտեզը երբևէ չի վերանորոգվել, երեխան հենց ներս է մտնում մանկական հիմնարկ, առաջինը նայում է ուր գնաց: Երբ մտնում եք և տեսնում, որ հիգիենիկ չէ, անհարմարավետ, ջրամատակարարում չունի, հիասթափվում ենք և երեխան էլ չի ցանկանում այցելել:

Սա հրատապ խնդիր է: Երեխաները ինչ հիվանդություն ասես չեն ձեռք բերի ցրտի, սանիտարական խնդիրների պատճառով:

Մանկապարտեզի վերանորոգումը կլուծի նաև մի շարք այլ խնդիրներ.

Յուրաքանչյուր շենքի դիմաց ջրահեռացման ցանցեր գոյություն ունեին, եթե դա վերանորոգվի, ջրակույտերը շենքերի դիմաց չի լինի, իսկ ճանապարները ժամանակից շատ շարքից դուրս չեն գա: Ճիշտը ջրահեռացման համակարգերի ամբողջական բարելավումն է:

Ես իմ երեխային չեմ ուղարկի այդ մանկապարտեզը:

Ես աշխատող մայր եմ և ինձ պետք է տարին կլոր աշխատող մանկապարտեզ, ես ինչպե՞ս վեց ամիս արձակուրդ վերցնեմ և երեխային պահեմ:

Ստեղծագործական կենտրոնը կարևոր է նաև, թող մանկապարտեզներին հաջորդի այդ կենտրոնի վերանորոգումը:

Մանկապարտեզը այնպիսի հարց է, որ բոլոր հարցերն էլ լուծվեն, կոյուղագծերի վերանարոգումը բավարար չէ:

Քաղաքապետարանը պայմաններ է տրամադրում, որպեսզի ձմռան երեք ամիսներին երեխաները կարողանան ուրիշ մանկապարտեզ հաճախել:

Ութ մլն. կարելի է ծախսել բակերի ասֆալտապատման և երեխաների համար խաղահրապարակների կառուցման վրա:

Մանկապարտեզը, եթե չի ջեռուցվում, կոյուղին ինչ կապ ունի: Ձմռանը միևնույն է չի աշխատելու:

Պետք է ամբողջ մանկապարտեզը վերանորոգել: Մանկապարտեզի ջեռուցումը շատ հրատապ հարց է: Մենք անգամ երեխաների միջոցառումներին չենք կարողանում նստել, իսկ մեր երեխաները պետք է այդ ցրտին գնան ու մնա ամբողջ օրը:

Առաջին մանկապարտեզը ոչ բակ ունի, ոչ խաղահրապարակ, բայց հիմա դա է փոխարինում ստիպված:

Ինձ թվում է, որ միայն 6-րդ մանկապարտեզը չէ, որ վերանորոգման հարց

նախ ավելի շատ երեխաներ կկարողանան հաճախել մանկապարտեզ, բացի այդ, կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Վեցերորդ մանկապարտեզի հնարավորությունն ավելի մեծ է, եթե նորոգվի կարող է շատ ավելի երեխաներ ընդգրկի, իսկ հիմա ծնողները ստիպված տանում են հեռու մանկապարտեզներ ու այնտեղ ստեղծվում է գերծանրաբեռնվածություն:

Մանկապարտեզը «սեզոնային» է : Ձմեռը ոչ աշխատանք ունենք, ոչ էլ երեխաներն են դուրս գալիս տանից:

Բոլորն էլ ձգտում են, որ իրենց երեխաները հաճախեն բարեկարգ մանկապարտեզ, ուստի առաջանում է երեխաների ընդունման խնդիրներ:

Վեցերորդ մանկապարտեզ կարող են հաճախել միաժամանակ առնվազն 240 երեխա, ու աշխատատեղեր էլ կստեղծվեն:

Շատ կարևոր է, որ բոլոր երեխաները մեծանան հավասար պայմաններում: Կա մանկապարտեզ, որը նորոգված է, բայց այնտեղ չեն կարող հաճախել բոլոր երեխաները: Իսկ ինչու մյուսները չհաճախեն վերանորոգված և նորմալ պայմաններով մանկապարտեզ:

Մանկապարտեզի պատերը քանդված են, ծաղիկներ են փակցնում այդ փլված տեղերը, որ երեխաների համար այդքան տխուր չլինի հաճախելը:

Չարենցավանը շատ փոքր քաղաք է անհարմարություն չի լինի, մի ծայրից մյուսը տաս րոպեում ես հասնում: Ավելի լավ է տաս րոպե շուտ տանից դուրս գան, բայց երեխաներին տանեն նորմալ ջեռուցվող մանկապարտեզ, որ ամբողջ տարին աշխատում է:

Պետք է օգտագործել մանկապարտեզի կոյուղագծերի վերափոխման հարցը, քանի որ խոսքը վերաբերում է մեր երեխաներին:

ունի, այն պետք է հիմնովին վերանորոգել, այլ ոչ մասամբ:

Միայն կոյուղագիծը չէ, որ պետք է նորոգել, մանկապարտեզը պետք է հիմնովին նորոգել:

Մանկապարտեզից օգտվում են ընդամենը մի քանի ընտանիքներ, սա այն խնդիրը չէ, որ պետք է այդքան գումար ծախսել վերանորոգման վրա:

Միայն կոյուղու վերանորոգմամբ խնդիր չի լուծվի: Պետք է ջրի խնդիրը լուծել, ինչպես նաև վերանորոգել սենյակները:

Այդ գումարը չի բավարարի մանկապարտեզների վերանորոգմանը, այնպես որ միգուցե ավելի նպատակային կարելի է ծախսել գումարը:

Մանկապարտեզների համար տրամադրվում են գումարներ «ՎիվաՍելլ» ՄՏՍ-ի կողմից: Մի մասը վերանորոգված է, այնպես որ, միգուցե իրենք զբաղվեն այդ հարցերով:

Միգուցե ավելի լավ կլինի այդ գումարով բոլոր մանկապարտեզներում լուծվեն ջեռուցման ծախսեր, ոչ թե ծախսվի մեկ մանկապարտեզի ամբողջական վերանորոգման համար:

Մանկապարտեզի ղեկավարությունը պետք է ինքն էլ ակտիվ լինի ֆինանսավորման աղբյուրներ գտնելու հարցում, միայն պետական բյուջեից հատկացված գումարով հարցը չի լուծվի:

Մենք 3-րդ մանկապարտեզում ենք աշխատում, սակայն համեմատած 6-րդի հետ, այն ավելի անմխիթար վիճակում է: Այնտեղ խմելու ջրի, շինության հետ կապված, ինչպես նաև կոյուղու համակարգի հետ կապված խնդիրներ կան:

Ձմռանը մանկապարտեզները երեքչորս ամիս փակված են լինում, ինչ պիտի անեն ծնողները, ովքեր աշխատում են: Կարևոր է:

Մանկապարտեզի շենքի վերանորոգումը բոլորին օգտակար է: Սա լուրջ խնդիր է ձմռանը: Երեխային մանկապարտեզ ենք տանում, դայակը փայտ է կտրատելու, որ տաքացնի: Սա լուրջ խնդիր է, որովհետև համ երեխաներն են մրսում և հիվանդանում, ինչպես նաև, զբաղվելով այլ գործերով, կորցնում է զգոնությունը:

Մանկապարտեզը ու ժամանցի հարցերը ամենակաևորն են: Երիտասարդները անգամ ժամադրվելու տեղ չունեն:

Առաջնահերթը մանկապարտեզն է: Ցանկացած հնարավոր գումար պետք է դրան հատկացնել: Բայց այգին էլ շատ կարևոր է: Մարդիկ տանից դուրս են գալիս գնալու, քայլելու տեղ չունեն:

Բոլոր մանկապարտեզներից հենց սա պետք է առաջինը նորոգվի, մյուսներում ինչ-որ աշխատանքներ արվել են, այստեղ ոչ մի ներդրում չի եղել:

Երեք միլիոն դրամով դժվար կարողանան լուծել ջեռուցման համակարգի հարցը, բայց այդ գումարով հնարավոր է կոյուղագծերի վերանորոգման հարցը լուծել:

Եթե օրինակ մանկապարտեզները վերանորոգվեն, բացվեն նոր աշխատատեղեր, ապա ինքնըստինքյան գումարները կավելանան և հնարավոր կլինի վերանորոգել փողոցները:

Քաղաքի մյուս մանկապարտեզները փոքր-փոքր բարեկարգվել են այլ ֆոնդերից, իսկ թիվ վեցը երբեք չի վերանորոգվել, դա նորոգելու համար շատ ավելի գումար է պետք, քան մյուսները վերանորոգելուն:

Անցյալ տարի վեցերորդ մանկապարտեզում ջրից թունավորվելու դեպք էր եղել, նման բան այս հակասանիտարական պայմաններում կարող է հաճախ կրկնվել:

Բնակիչները ճամպրուկները հավաքած ամեն օր գնում են, աշակերտ չունենք, ինչներիս է պետք այդքան մանկապարտեզները: Թող մի քանի կիսակառույց մանկապարտեզ փակեն, այդ ֆինանսավորումը տրամադրել երրորդի, որպեսզի երրորդը ամբողջ տարին աշխատի:

Մեծ թաղամասերից 6-րդ մանկապարտեզ են հաճախում, խնդիրը պետք է ամբողջականությամբ լուծվի, այլ ոչ թե միայն կոյուղին: Դա խնդիրը չի լուծի: Պետք է ժամանակավոր փակել մանկապարտեզը, մինչև վերջնականորեն վերանորոգվի:

Պետք է բարեկարգել ոչ միայն վեցերորդ, այլև երրորդ մանկապարտեզը:

Սանէպիդկայանը խախտումներ, եթե գտնի էլ, ոնց փակի, եթե այդ հսկայական թաղամասում այլընտրանք մանկապարտեզ չկա:

Եթե կոյուղու համակարգը վերանորոգեն, դա հարցի լուծում չէ: Միևնույն է փոշոտ շենքին է դիպչելու ու նորից աղտոտվի:

Քաղաքապետարանի տանիքի համար հատկացված հինգ միլիոնը թող գումարվի մանկապարտեզի նախագծին, որ երեխաները չքնեն աթոռների վրա: Նույնիսկ մահճակալներ չկան:

Ջեռուցման սեզոնին պատերը մի փոքր չորանում են, բայց գարնանը հենց ջեռուցումն անջատում ես, պատերը սկսում են բորբոսնել, մեր երեխաների առողջությունն էլ վնասվում է:

Ութ միլիոն տրամադրում են փողոցին, եթե այդ գումարը ավելանա մանկապարեզին տրվող գումարին, մանկապարտեզը կհիմնանորոգվի:

Այդ գումարով, ավելի լավ է, որ վերջնական վիճակի հասցնել այն մանկապարտեզները, որոնք կիսակառույց են և հինգ ամիս չեն աշխատում:

Ավելի արդիական է մանկապարտեզում ջեռուցման խնդրի լուծումը:

Քաղաքում կա մարզադպրոց ու այն շատ ավելի վատթար վիճակում է գտնվում, քան անգամ վեցերորդ մանկապարտեզը, սանհանգույց չկա, իսկ այստեղ հաճախում են 400 հոգի, պատերը քանդվում են, այս հարցն էլ է պետք քաղաքի հրատապ հարցերի մեջ ներառել:

Կանանց և տղամարդկանց ավասարության խնդիրներ

Այս ճանապարհի պատճառով մեքենաները հաճախ փչանում են, կանայք են մայթերով քայլում և հաճախ կոշիկներն են փչացնում: Փողոցը պետք է վերանորոգվի, քանի որ այդ փողոցի վրա են գտնվում հիվանդանոցը, այգին և ամենակարևորը եկեղեցին: Կարծում եմ մայթերի վերանորոգումն ավելի կարևոր են:

Վերանորոգումը կօգնի կանանց, որ մանկապարտեզը բացվի, կինն էլ կարողանա աշխատել:

Կինը հազիվ հնարավորություն է ունենում երեխային ուղարկելու մանկապարտեզ: Նպաստում է ընտանիքի զարգացմանը:

Վարորդների մեծամասնությունը տղամարդիկ են, նրանց համար շատ վտանգավոր է փողոցի քարուքանդ վիճակը:

Ես աշխատող մայր եմ և ինձ պետք է տարին կլոր աշխատող մանկապարտեզ, ես ինչպե՞ս վեց ամիս արձակուրդ վերցնեմ և երեխային պահեմ:

Մանկապարտեզի վերանորոգման հարցն իսկապես արդիական է, քանի որ տարվա գրեթե կեսը այն չի գործում: Ոչ ջեռուցվում է, ոչ սանհանգույց կա: Դա նաև գենդերային խնդիր է. մայրերն աշխատում են, բայց երեխաներին տեղ չունեն տանելու:

Շուկայի առևտուրը կինն է բարձր հարկեր բարձրացնում:

Եթե Չարենցավանի կառավարման համակարգում կանայք ավելի շատ լինեին, շատ հարցեր ավելի ճիշտ ու հեշտ կլուծվեին:

Չարենցավանում տղամարդիկ քիչ են, մեծամասնությունը կանայք են, և բոլոր հարցերը կանանց ուսերի վրա են մնում, բայց որ այստեղ էլ է բնակվում, ամբողջ օրը աշխատանքի են լինում, շենքի խնդիրներից միևնույն է տեղյակ չեն լինում:

Իհարկե անչափ կարևոր խնդիր է նաև վերելակների վերանորոգման հարցը, չէ որ կան շատ տարեց մարդիկ, երեխաներ, հղի կանայք, ովքեր շատ խնդիրներ են ունենում: Բայց սա այնքան էլ առաջնային չէ. եթե կա ընտրելու հնարավորություն, ապա իհարկե նպատակահարմար է առավել առաջնային հարցեր լուծել: Վերելակները կարելի նորոգել կամաց-կամաց, ժամանակի ընթացքում: Ի վերջո, համատիրությունը արդեն սկսել է այդ գործընթացը:

Քաղաքապետարանում զուգարաններում դռները չեն փակվում ու կանանցն ու տղամարդկանցը իրար մոտ են, բայց մի կերպ դիմանում ենք:

Քվեարկության արդյունքներ

Երիտասարդական փողոցի բարեկարգում	6
Թիվ 6 մանկապարտեզի կոյուղագծերի վերանորոգում	100
Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում, շքամուտքերի հիմնանորոգում	3
Քաղաքապետարանի շենքի տանիքի և սանհանգույցների վերանորոգում	1
Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	10

ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնք



Շահումյան գյուղը փռված է Վանաձոր քաղաքից հարավ-արևելք, Վանաձոր-Դիլիջան մայրուղու աջ և ձախ մասերում: Սահմանակից է Վանաձոր քաղաքին, Գուգարք, Լերմոնտովո համայնքներին: Գյուղի վարչական տարածքը շուրջ 8,500 հա է, որից վարելահողեր՝ շուրջ 160 հա, խոտհարք՝ շուրջ 1,500 հա, արոտավայր՝ շուրջ 3,000 հա:

Գյուղը ծովի մակերևույթից բարձր է շուրջ 1,800մ: Համայնքի վարչական տարածքում գտնվում են Մայմեխ (3,080մ) և Թեժ լեռ (3,100մ) սարերը, հոսում են Ղարփի և Տանձուտ գետերը: Գյուղի կլիման բարեխառն է՝ ձմեռը մեղմ, ամառը զով, տեղումների քանակը առատ՝ հատկապես մարտ-հուլիս ամիսներին: Գյուղը շրջապատված է անտառներով, որոնք 90-ականներից կրճատվել են շուրջ 70%-ով: Վերջին տարիներին հաճախ են բնական աղետները՝ կարկտահարություն, երաշտ, հեղեղումներ: Ձմռանը ճանապարհները չեն փակվում, քանի որ գյուղը սահմանակից է մարզկենտրոն Վանաձոր քաղաքին, կապը չի ընդհատվում:

1930-ականներին հիմնված Շահումյան գյուղը եղել է ադրբեջանաբնակ՝ մինչև 30-ականները հայերը բնակվել են «Ղամբարանց Թալա» կոչվող վայրում՝ քոթեջներում: Գյուղի այգիների մասամբ տնկված են 30-ական, և 60-ականներին թվականներին: Նախկինում գյուղում գործել է սովխոզ-գործարան: 1988թ-ից գյուղը վերաբնակեցվել է հայերով, մեծ թիվ են կազմում Ադրբեջանից հայ փախստականները՝ 424:

Համայնքի մշտական բնակչությունը կազմում է շուրջ 3,000 մարդ (2011թ.), ընտանիքների թիվը՝ 918, գրանցված ընտրողների թիվը՝ 1920:

Պատկեր 1. Բնակչության սեռատարիքային կազմն ու տարիքային կառուցվածքը



Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են այգեգործությամբ և անասնապահությամբ: Վառելանյութի թանկության, տեխնիկայի պակասի, ստացված բերքի անեկամտաբերության արդյունքում վարելահողերը, որոնք բերրի չեն վեր են ածվել խոտհարքների: Դրանք էլ համայնքից հեռու են, ճանապարհները՝ կիսաքանդ, առանիձն հատվածներում անանցանելի: Բնակիչները դժվարանում են վճարել հողի հարկը: Համայնքում տարածված է մեղվապահությունը:

Աշխատունակ բնակչության թիվը 1,120 է, վարձատրվող աշխատանքով զբաղված են 135 մարդ, հիմնականում՝ հիմնականում կրթական հաստատություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում, սպասարկման ոլորտում:: Բնակիչները զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Այդուհանդերձ, համայնքում աղքատության մակարդակը շուրջ 40% է: Բարձր է գործազրկության մակարդակը, ընտանիքների եկամուտների աղբյուրներից հիմանկանը արտագնա աշխատանքի մեկնածների ուղարկած գումարներն են:

Պատկեր 2. Չարենցավան համայնքի բյուջետային վարչական ծախսերը 2012 թվականին

1. Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	365
հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	29
միակողմանի ծնողազուրկ երեխաներ	12
մանկուց հաշմանդամ երեխաներ	5
միայնակ կենսաթոշակառուներ	17
զոհված ազատամարտիկների ընտանիքներ	5
2. Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, այդ թվում ՝	44
ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	4
3. Փախստականներ	424
4. Բռնադատվածներ	2
5. Բազմազավակ ընտանիքներ (3 և ավելի անչափահաս երեխա ունեցող)	112
6. Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը (միջինը), այդ թվում՝	153
ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	103
միանվագ դրամական օգնություն ստացողների միջին թիվը	8

Համայնքի բնակֆոնդի մակերեսն ավելի քան 53 հազար ք.մ է, որից առանձնատներ՝ շուրջ 42 հազար ք.մ, բազմաբնակարան շենքերի բնակարաններ՝ շուրջ 8 հազար ք.մ.: 2012թ. ՀՀ կառավարության աջակցությամբ վերանորոգվել է համայնքի թիվ 57 և 59 բազմաբնակարան շենքերի տանիքները: Շենքերը վթարային են, շենքերի պահպանման աշխատանքներն իրականացնում է համատիրությունը:

Նախկինում աղբահանությունն իրականացնում էր գյուղապետարանը՝ անվճար, ներկայում ՏԻՄ-ը աղբահանության ծառայությունը գնում է:

Համայնքային ենթակայության ճանապարհները մոտ 35 կմ են, այդ թվում՝ ասֆալտա-բետոնային՝ 3.6 կմ, խճակոպճային՝ 12 կմ, բնահողային՝ 19.4 կմ: Համայնքով անցնում է թիվ 13 ուղևորատար երթուղին, 5 երթուղային տաքսիների շարժակազմով, փոխադրավարձը արժեքը՝ 100 դրամ:

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, որը կառուցվել է 1977 թվականին և կապիտալ վերանորոգվել է 1997 թվականին: Դպրոցում սովորում է 244 աշակերտ, աշխատակազմը՝ 45 մարդ, այդ թվում՝ 33 մանկավարժ (մեկ ուսուցիչ՝ 8 աշակերտի հաշվով): Սովորողների թվաքանակը տարեց-տարի նվազում է՝ Վա-

նաձորի դպրոցներ տեղափոխվելու և արտագաղթի արդյունքում:

Դպրոցը գազաֆիկացված է, ջեռուցվում է վառարաններով, մշտական խմելու ջուր չունի: Դպրոցի տանիքը և սպորտդահլիճը կապիտալ վերանորոգման կարիք ունեն, անհրաժեշտ է ապահովել ջեռուցում, փոխել պատուհանները:

Համայնքում գործել է մանկապարտեզ, որն անբավարար կոմունալ հարմարությունների, սանիտարահիգենիկ իրավիճակի և գույքի բացակայության պատճառով փակվել է, իսկ շենքը հատկացվել է Շահումյանի «Առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ին: Դպրոցին կից գործում է նախակրթարան, ուր հաճախում է 35 երեխա:

Համայնքն ունի «Կրթամարզամշակութային համալիր» որտեղ գործում են պարի, երգի, սպորտի և շախմատի խմբակներ, նախատեսվում է ավելացնել խմբակները (նկարչության, թատերական): Համալիրի շենքը կապիտալ նորոգված է, ունի անհրաժեշտ հարմարությունները, սակայն գույքի կարիք ունի:

Համայնքային կենտրոնը 2011 թվականին կապիտալ վերանորոգվել է: Կենտրոնում գործում է գրադարան որն ունի 400 ընթերցող, ընթերցասրահ և ավելի քան 8,200 կտոր գրականություն: Համայնքային կենտրոնում գործում է համակարգչային կենտրոն, որն ունի 6 ժամանակակից համակարգիչ, ինտերնետ կապ, տպիչ, պատճենահանման և սկանավորման սարքեր: Կենտրոնն ունի նաև տարեցների ժամանցի սենյակ:

Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոնում աշխատում են բժիշկ, 3 բուժքույր, հաշվապահ, լաբորանտ և սանիտար: Կենտրոնի մասնաշենքը 2012 թվականին կապիտալ նորոգել է ՀՍՆՀ-ն: կենտրոնում:

Բյուջեն

Շահումյան համայնքում բյուջետային ծախսերը 2013թ. կազմել են շուրջ 47.5 միլիոն դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեն (ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կազմել է շուրջ 47 միլիոն դրամ, իսկ ֆոնդայինը՝ շուրջ 500 հազար դրամ: Համայնքի 2013թ. վարչական բյուջեում աշխատանքի վարձատրության ծախսը կազմել է ծախսերի շուրջ կեսը: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով ծախսվել է վարչական բյուջեի շուրջ մեկ հինգերորդը: 2013թ. բյուջեից սուբսիդիաներ չեն տրամադրվել, փոխարենը տրամադրվել են դրամաշնորհներ՝ շուրջ 20%-ի չափով, ինչպես նաև սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ՝ շուրջ 10%-ի չափով:

Պատկեր 2. Շահումյան համայնքի բյուջետային ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման



Շահումյան համայնքի 2013 թվականի բյուջեի վարչական ծախսերի շուրջ երկու երրորդը՝ 64.2 տոկոսը կատարվել է ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ մատուցելու նպատակով: Կրթությանն ուղղված ծախսերը կազմել են շուրջ 3% և կատարվել են բացառապես վարչական բյուջեի միջոցներով: Բյուջեի 17.6%-ը ծախսվել է հանգստի, մշակույթի և կրոնական ծառայությունների կազմակերպման նպատակով: Այդ ծախսի շուրջ 10%-ն իրականացվել է ֆոնդային բյուջեի հաշվին: Սոցիալական պաշտպանություն նպատակով ծախսերը կազմել են բյուջեի շուրջ 10%-ը: Շրջակա միջավայրի պաշտպանության, տնտեսական հարաբերությունների, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների, ինչպես նաև պաշտպանության ոլորտներում իրականացված ծախսերի հանրագումարը կազմել է բյուջեի 5.2%-ը:

Պատկեր 2. Շահումյան համայնքի բյուջետային ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման



2012թ. սեպտեմբերի 9-ին երկրորդ անգամ համայնքի ղեկավար է վերընտրվել Էդիկ Սենիկի Մանուկյանը (ծնվել է 1951թ. հունիսի 5-ին Սպիտակի շրջանի Արևաշող գյուղում, ՀՀԿ անդամ է):

Համայնքի ավագանու անդամներն են. Արեն Բեժանյան, Սվետլանա Կոռյան, Հրաչ Հակոբյան, Կամո Մանվելյան, Համլետ Դավթյան, Համազասպ Ղազախեցյան, Արմեն Ղումաշյան:

Գյուղապետարանի աշխատակազմը կազմված է 18 ծառայողներից: Հեռ՝ (+374 322) 5-24-62, էլ.հասցե՝ shahumyan.lori@mta.gov.am:

Համայնքի զարգացման խնդիրները

Ազատան համայնքի զարգացման հիմնական խնդիրներն ամբողջականացված են համայնքի զարգացման քառամյա ծրագրում, ուր ներառված են ինչպես համայնքի ավագանու, ղեկավարի և աշխատակազմի կողմից առաջ քաշված խնդիրները, այնպես էլ համայնքի բնակիչների հետ առանձին քննարկումների ընթացքում բարձրաձայնված մի շարք հարցեր: Համայնքի զարգացման խնդիրների շրջանակը ներառում է թե՛ առավել հրատապ և համայնքի միջոցներով լուծվող, թե՛ հեռանկարային՝ համայնքի զարգացման տեսլականի հորիզոնում գտնվող հարցեր: Համայնքի ղեկավարի և աշխատակազմի ղեկավարի կողմից առանձնացվել են մի շարք խնդիրներ, այդ թվում.

Մարզամշակութային համալիրի համար գույքի և համապատասխան պարագաների ձեռք բերում

ՀՀ կառավարության աջակցությամբ 2012թ. վերջին «Շահումյանի կրթամարզամշակութային համալիր» ՀՈԱԿ-ի համար ձեռք է բերվել 40 մլն. դրամ արժողությամբ, եռահարկ, 525 ք.մ. մակերեսով շենք: Շենքն ունի կոմունալ հարմարություններ, վերանորոգված է: Համալիրի լիարժեք գործունեության համար անհրաժեշտ է մասնաշենքը կահավորել համապատասխան գույքով և սարքավորումներով: Համալիրում է գործում հա-

մայնքի «Մայրասար» վոկալ-պարային համույթը, սակայն բեմն ունի կահավորման կարիք: Ծրագրի իրականացումը թույլ կտա համայնքում ձևավորել պարի, երգի, շախմատի, նկարչության, թատերական և այլ խմբակներ, կնպաստել համայնքի մշակութային կյանքի զարգացմանը:

Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է շուրջ 5 մլն. դրամ: Համայնքի 2013թ. բյուջեով գույքի ձեռքբերման համար նախատեսվել է 1 մլն. դրամ: Մնացած 4 մլն. դրամը նախատեսվում է ձեռք բերել բարեգործական կամ միջազգային կազմակերպություններից:

Գյուղատնտեսության զարգացում

Համայնքում գյուղատնտեսությունը զարգացած չէ, վարելահողերը չմշակվելու պատճառով վերածվել են խոտհարքների, իսկ արոտավայրերը հեռագնա են: Գուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում ցածր եկամտաբերություն ունի:

Համաշխարհային բանկի և «Գյուղատնտեսության բարեփոխումների ծրագրերի գրասենյակի» միջոցների, ինչպես նաև Շահումյանի գյուղապետարանի ներդրման հաշվին նախատեսվում է համայնքում ստեղծել կոլեկտիվ տնտեսություն, որի արդյունավետ աշխատանքի շնորհիվ (վարելահողերի կոլեկտիվ մշակման, արոտավայրերի ճիշտ օգտագործման, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման, կաթնամթերքի վերամշակման գործարանի ստեղծման) համայնքում կզարգանա անասնապահությունը և հողագործությունը: Ծրագրի նախնական արժեքը կազմում է 120 մլն. դրամ: Տնտեսության կոլեկտիվ վարումը թույլ կտա զարգացնել գյուղատնտեսությունը, ստեղծել աշխատատեղեր, նվազեցնել արտագաղթը, բարելավել բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը:

Սպորտ դահլիճի վերանորոգում, ջեռուցման ապահովում

Շահումյանի սպորտ դահլիճը համայնքի միջնակարգ դպրոցում է, որը վերանորոգվել է 1997թ-ին, ներկայում գտնվում է անմխիթար վիճակում, պատուհանները խարխլված են, չկա ջեռուցման համակարգ, հանդերձարան: Դահլիճում գործում է ազատ ոճի ըմբշամարտի խումբը, որտեղ մարզվում են շուրջ 30-35 սաներ, այստեղ են անցկացվում ֆիզկուլտուրայի դասերը:

Համայնքում երեխաների և երիտասարդների դասիտիարակության և առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել աշխատանքի և ուսման համար բավարար պայմաններ՝ ջեռուցում, հանդերձարան, լոգասենյակ: Այս խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կազմել սպորտ դահլիճի վերանորոգման և ջեռուցման համակարգի նախագիծ-նախահաշիվ, վերանորոգման և ջեռուցման ծրագրի ֆինանսավորման համար դիմել հիմնադրամների ու մի-

ջազգային կազմակերպությունների: Ծրագիրն իրականացումը պահանջում է 5-6 մլն. դրամ:

Արդյունքում ըմբշամարտով զբաղվող սաները, որոնք արդեն իսկ ունեն լավ արդյունքներ, կբարձրացնեն ցուցանիշները, կստեղծվեն այլ սպորտաձևերի խմբեր:

Կանգառների կառուցում

Շահումյան համայնքով է անցնում թիվ 13 ուղևորատար երթուղին: Երթուղին սպասարկում է 5 երթուղային տաքսի, յուրաքանչյուր 20 րոպեն մեկ ուղևորներ տեղափոխելով մարզկենտրոն: Համայնքում կանգառներ չկան, երթուղային տաքսիները կանգնում են որտեղ պատահի՝ վտանգելով երթևեկության և երեխաների անվտանգությունը:

Երթևեկության և ուղևորների համար տրանսպորտից անվտանգ և ապահով օգտվելու բնականոն պայմաններ ձևավորելու նպատակով անհրաժեշտ է կառուցել 4 կանգառ: Դրա համար հարկավոր է կազմել կանգառների կառուցման նախագիծ-նախահաշիվը և կատարել շինարարական աշխատանքներ: Շուրջ 1.5 մլն. դրամ արժեքով աշխատանքները ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Ներհամայնքային, միջհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

Վանաձոր-Դիլիջան մայրուղուց համայնքի 1-ին փողոց թեքվող ճանապարհի սկզբնական հատվածից սկսած գյուղամիջյան ճանապարհները անբարեկարգ են, կենտրոնական ճանապարհները ասֆալտապատվել են դեռևս խորհրդային տարիներին, և ասֆալտի հետքը հազիվ է նշմարվում: Երկրորդային խորդուբորդ ճանապարհները լի են ջրափոսերով: Խոտհարքները հեռագնա են, իսկ ճանապարհները դժվարանցանելի: Համայնքային բյուջեի միջոցներով պարբերաբար բարեկարգվում, խճապատվում են գյուղամիջյան ճանապարհների առանձին հատվածներ, սակայն թեք տեղանքի, սելավների պատճառով դրանք նորից քանդվում են:

Գյուղի փողոցները և ճանապարհները բարեկարգելու, սելավատարները մաքրելու և կառուցապատելու, կենտրոնական ճանապարհն ու բազմաբնակարան շենքեր տանող փողոցները ասֆալտապատելու, և համայնքը բարեկարգ դարձնելու նպատակով անհրաժեշտ է կատարել համայնքի փողոցների փոսային նորոգումներ, խճապատում, հարթեցում: Աշխատանքները նախատեսվում է կատարել համայնքի բյուջեի միջոցներից տրամադրելով շուրջ 2.5 մլն դրամ: Նախատեսվում է նաև հիմնանորոգել՝ ասֆալտապատել կենտրոնական ճանապարհները, 1-ին, 2-րդ փողոցների ամբողջ երկարությամբ: Այս նպատակով 120 մլն. դրամ ֆինանսական աջակցություն ստանալու համար նախատեսվում է դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին:

Ծրագրի իրականացման արդյունքում կբարեկարգվի համայնքի տարածքը, փողոցները, ճանապարհները, կվերանան փոսաջրերը, փոշին: Կկանոնավորվ և անվտանգ կդառնա տրանսպորտի աշխատանքն ու շահագործումը, թիվ 13 երթուղային տաքսու երթուղին կերկարի մինչև 2-րդ փողոցի վերջը, ինչը ներկայում անհնարին է դժվար երթևեկության պատճառով, կբարելավվի մարդկանց կենցաղը: Կմշակվեն և կինձվեն հեռագնա գյուղատնտեսական հողերը:

Եկեղեցու շինարարական աշխատանքների ավարտում և շրջակա տարածքի բարեկարգում

Նախկինում ադրբեջանաբնակ Շահումյանը, 1990-ականներին վերաբնակեցվել է հայերով: Համայնքում չկա եկեղեցի, խաչքար: 2010 թվականին ՏԻՄ նախաձեռնությամբ և բարերարների ֆինանսական օժանդակությամբ համայնքում կառուցվել է Սուրբ Հակոբ եկեղեցին: Եկեղեցու շենքն արդեն կանգուն է, սակայն անհրաժեշտ է կազմակերպել եղեկեցու ներքին հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքները: Եկեղեցու կառուցապատման և հարդարման աշխատանքներն ավարտելու համար անհրաժեշտ է շուրջ 4-5մլն. դրամ: Նախատեսվում է ֆինանսական միջոցներ հայթհայթել անհատ ներդրողների կողմից:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի բնակչությանը ավելի հաղորդակից կդառնա հոգևոր կյանքին, բնակիչները կունենան հոգևոր տուն, հոգևոր սպասավոր, եկեղեցում կանցկացվեն պատարագներ և հոգևոր ծիսակատարություններ: Եկեղեցու բակում, բարեկարգման աշխատանքներից հետո, կտեղադրվի Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքար:

Նոր գերեզմանատան ճանապարհի բարեկարգում

Համայնքն ունի բաց գերեզմանատուն 2 հա տարածքով, որը ամբողջովին գտնվում է սողանքների գոտում: ՀՀ կառավարության որոշմամբ 0.2 հա տարածքով հողերի նշանակությունը փոխվել է՝ նոր գերեզմանատուն ստեղծելու նպատակով: Գերեզմանատունն արդեն գործում է, սակայն ճանապարհը դժվարանցանելի է հատկապես ձմռան ամիսներին: Նախատեսվում է բարեկարգել նոր գերեզմանատան ճանապարհը, ասֆալտապատել, ապահովել շիրիմների պահպանությունը և մաքրությունը:

Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: Ծրագրի արժեքը գնահատվել է շուրջ 35 մլն. դրամ: Նախատեսվում է գտնել ծրագրի ֆինանսավորման աղբյուր: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա սողանքներից և քարաթափումներից զերծ, բարեկարգ ճանապարհով գերեզմանատուն:

Գերեզմանատան ցանկապատում և սողանքների վերացում

Համայնքի 2 հա տարածքով գերեզմանատունը ցանկապատված չէ. ընտանի կենդանիներն անարգել մտնում են գերեզմանատուն և վնասում շիրիմները: Սողանքների հետևանքով խիստ վնասվել են գերեզմանատան արևելյան հատվածի առանձին շիրիմներ:

Ընտանի կենդանիների մուտքը գերեզմանատուն կանխելու, շիրիմների պահպանությունն ու մաքրությունը ապահովելու, սողանքները վերացնելու նպատակով անհրաժեշտ է կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, ձեռք բերել ցանկապատման համար անհրաժեշտ փշալար և սյուներ, կառուցել պատնեշներ սողանքները կանգնեցնելու համար: Շուրջ 2-2.5 մլն դրամ ընդհանուր արժեքով ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Սելավատարի և հեղեղատարի կառուցում և մաքրում

Շահումյանի միջնակարգ դպրոցի հետնամասում սելավատարի բացակայության արդյունքում նախկինում գործող սպորտ-հրապարակը վեր ածվել է ճահճուտի: Ջրհեղեղներից 11-րդ փողոցի շուրջ 220 մ երկարությամբ ճանապարհը հետիոտնի համար դարձել է դժվարանցանելի, իսկ տրանսպորտի համար՝ անանցանելի: Համայնքի 9 բնակելի տներ կտրվել են ճանապարհից:

Բետոնե կոնստրուկցիաներով կամ մետաղյա խողովակներով շուրջ 80 մ երկարությամբ սելավատար կառուցելու, սպորտային հրապարակը ճահճացումից և սելավների քայքայիչ ազդեցությունից պաշտպանելու համար, 11-րդ փողոցի շուրջ 200 մ երկարությամբ հատվածում գետի հունը ամրացնելու և ճանապարհը վերականգնելու համար պահանջվում է շուրջ 8-10 մլն. դրամ: Ծրագրի իրականացումից անմիջականորեն կօգտվեն համայնքի 9 տնտեսությունները՝ 32 բնակիչ, ինչպես նաև դպրոցականներն ու նրանց ընտանիքները:

Քննարկման դրված սցենարները

Սցենար 1. Կենտրոնական փողոցների լուսավորություն

Շահումյան համայնքի կենտրոնական փողոցները, մանսավորապես առաջինը և երկրորդը, մասամբ լուսավորված են: Սակայն փողոցային լուսավորության 80 լամպերը մաշվածության պատճառով հաճախակի վնասվում են քամուց և անձրևներից: Լուսավորված չեն համայնքի կենտրոնական հատվածի մյուս փողոցները, որտեղ դպրոցը, ամբուլատորիան, գյուղապետարանը և եկեղեցին են:Մութն ընկնելուն պես փողոցները դատարկվում են, ինչը հատկապես խնդրահարույց է ձմռան ամիսներին: Երեկոյան ժամերին կենտրոնական փողոցներում դժվարանում է տրանսպորտի երթևեկությունը, մարդկանց, հատկապես՝ կանանց և աղջիկների տեղաշարժը: Լուսավորության բացակայության պատճառով սահմանափակվում է նաև ներհամայնքային կյանքի ակտիվությունը:

Համակարգը բարեկարգելու և ընդլայնելու համար նախատեսվում է տեղակայել 60 սյուն, անցկացնել հաղորդալարեր, տեղադրել տրանսֆորմատոր: Այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է շուրջ 8-10 մլն դրամ, որից 1.5 մլն դրամը կհատակացվի համայնքի բյուջեից: Կլուսավորվեն 1-ին, 2-րդ, 3-րդ փողոցներն ամբողջությամբ և 4-րդ փողոցը՝ մասամբ:

Համայնքի թաղամասերն իրար կապող այս փողոցների լուսավորման արդյունքում.

- կակտիվանա ներհամայնքային կյանքը.
- բնակիչները հնարավորություն կունենան հաճախել կենտրոնական փողոցներում գործող մարզական, կրթական և ժամանցի այլ հաստատություններ.
- կաշխուժանա առևտրի և սպասարկման օբյեկտների գործունեությունը երեկոյան ժամերին.
- կաշխուժանա երթևեկությունը կենտրոնական փողոցներում՝ դառնալով առավել անվտանգ և հարմարավետ.
- կանանց և երեխաների երեկոյան տեղաշարժը կդառնա առավել անվտանգ:

Սցենար 2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

Վանաձոր-Դիլիջան մայրուղուց համայնքի 1-ին փողոց թեքվող ճանապարհի սկզբնական հատվածից հետո գյուղամիջյան ճանապարհներն անբարեկարգ են: Կենտրոնական ճանապարհներն ասֆալտապատվել են դեռևս խորհրդային տարիներին, և ասֆալտի հետքն այժմ հազիվ է նշմարվում: Երկրորդային խորդուբորդ ճանապարհները լի են ջրափոսերով: Համայնքային բյուջեի միջոցներով պարբերաբար բարեկարգվում, խճապատվում են գյուղամիջյան ճանապարհների առանձին հատվածներ, սակայն թեք տեղանքի, հեղեղների պատճառով դրանք նորից քանդվում են: Շտապօգնությունը չի կարողանում հասնել համայնքի առանձին վայրեր: Խոտը անասունին հասցնելու համար բնակիչները հաճախ ստիպված են 500մ ոտքով քայլել:

Գյուղի փողոցները և ճանապարհները բարեկարգելու, հեղեղատարները մաքրելու և կառուցապատելու, կենտրոնական ճանապարհն ու բազմաբնակարան շենքեր տանող փողոցները ասֆալտապատելու, և համայնքը բարեկարգ դարձնելու նպատակով նախևառաջ անհրաժեշտ է կատարել փողոցների փոսային նորոգումներ, խճապատում, հարթեցում: Նախատեսվում է այդ աշխատանքները կատարել համայնքի բյուջեի միջոցներից տրամադրելով շուրջ 2.5 մլն դրամ: Նախատեսվում է նաև հիմնանորոգում՝ կենտրոնական փողոցների՝ 1-ին, 2-րդ և 3-րդ փողոցների ամբողջական, և 4-րդի մասնակի ասֆալտապատում: Այս նպատակով 120 մլն. դրամ ֆինանսական աջակցություն ստանալու համար նախատեսվում է դիմել ՀՀ կառավարությանը, հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին:

Ծրագրի իրականացման արդյունքում.

- կբարեկարգվի համայնքի տարածքը, փողոցները, ճանապարհները, կվերանան փոսաջրերը, փոշին.
- կկանոնավորվի և անվտանգ կդառնա տրանսպորտի աշխատանքն ու շահագործումը.
- թիվ 13 երթուղային տաքսու երթուղին կերկարի մինչև 2-րդ փողոցի վերջը, ինչը ներկայում անհնարին է դժվար երթևեկության պատճառով.
- կբարելավվի մարդկանց կենցաղը.
- կմշակվեն և կհնձվեն հեռագնա գյուղատնտեսական հողերը:

Սցենար 3. Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

Շահումյան համայնքում գյուղատնտեսության զարգացման ամենամեծ խոչընդոտը դաշտամիջյան ճանապարհների անմխիթար վիճակն է: Խոտհարքները հեռագնա են, իսկ ճանապարհները դժվարանցանելի, ինչը խոչընդոտ է հանդիսանում տարածքների մշակման և գյուղատնտեսական այլ աշխատանքների իրականացման համար:

Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը կնպաստի եկամտի հիմնական աղբյուր հանդիսացող այգեգործության և անասնապահության զարգացմանը: Բարեկարգման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է շուրջ 10 մլն. դրամ: Նախատեսվում է ճանապարհների հարթեցում, առկա հեղեղատարի նորոգում: Առաջնահերթ ճանապարհները կորոշվեն մի շարք չափորոշիչներով. բերքատու տարածքներ, եկամտաբերություն, շահառուների թվաքանակ:

Վառելանյութի թանկության, տեխնիկայի պակասի պայմաններում կհեշտացվի անասնակերի տեղափոխումը, ավելի արդյունավետ կօգտագործվեն վարելահողերն ու խոտհարքները, կզարգանա հողագործությունը՝ նպաստելով համայնքի բնակիչների սոցիալական վիճակի բարելավմանն ու եկամուտների աճին:

Սցենար 4. Նոր խաղահրապարակի կառուցում և հին խաղահրապարակում խաղասարքերի տեղադրում

Համայնքում հանրային հանգստի վայրի բացակայության պատճառով, երեխաներն ու երիտասարդները իրենց ազատ ժամանակը անց են կացնում տանը, որի արդյունքում նվազում է միջանձնային շփումը, հաղորդակցումը, երեխաները սկսում են մեկուսանալ իրենց հասակակիցներից:

Շահումյան համայնքի գյուղապետարանին կից տարածքը նախկինում անբարեկարգ տարածք էր և վերածվել էր աղբավայրի: Համայնքի իշխանությունների նախաձեռնությամբ և համայնքային բյուջեի, ինչպես նաև դոնոր կազմակերպության ներդրման շնորհիվ հնարավոր եղավ մաքրել տարածքը և բարեկարգել: Կառուցվեց Սբ. Հակոբ եկեղեցին և հիմնվեց համայնքային այգի: Համայնքի նախաձեռնությամբ այգում տեղադրվեց արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկներին նվիրված խաչքար, ինչի առիթով էլ այգին անվանվեց «Ազատամարտիկների պուրակ»: Պուրակում տնկվել են ծառեր, տեղադրվել է նստարան և սեղան, խաղային ինքնաշեն մի քանի սարքեր: Անգամ այս պայմաններում պուրակը սիրվեց համայնքի բնակիչների, հատկապես մանկահասակ երեխաների ու նրանց մայրերի կողմից:

Համայնքն իր ներդրման և դոնոր կազմակերպության օժանդակությամբ բարեկարգել է տարածքը, սակայն անհրաժեշտ է պուրակում տեղադրել մանկական շարժական 2-3 խաղասարք, ձեռք բերել սահարաններ, ճոճանակներ: Խաղահրապարակից կօգտվեն համայնքի շուրջ 200 երեխա, ինչպես նաև երիտասարդներ և մեծահասակներ: Այս ծրագրի իրագործման համար կպահանջվի շուրջ 8 մլն դրամ:

Շահումյան համայնքում նախատեսվում է կառուցել և կահավորել համայնքի կենտրոնում գտնվող խաղահրապարակը, որը կծառայի որպես ֆուտբոլի և վոլեյբոլի խաղահրապարակ: Խաղահրապարակի կառուցումը կնպաստի համայնքի երիտասարդների ֆիզիկական դաստիարակությանն ու առողջ ապրելակերպին:

Սցենար 5. Գերեզմանատան ցանկապատում

Շահումյան համայնքի շուրջ 2հա տարածքով գերեզմանոցը հիմնվել է 1980-ականներին, պարսպապատ չէ, տարածքը լրիվ բաց է: Գերեզմանատանն են հանգչում գյուղի հասարակ աշխատավորն ու մշակը, հայրենական պատերազմի վետերաններն ու արցախյան ազատամարտի հերոսամարտիկները: Գերեզմանատունն ունի պատմամշակութային արժեք:

Ամբողջական և հուսալի ցանկապատի բացակայության պատճառով գերեզմանատան տարածքում անասունների արոտը չի սահմանափակվում: Սողանքների հետևանքով խիստ վնասվել են գերեզմանատան արևելյան հատվածի առանձին շիրիմներ: Գերեզմանները տրորվում են ու փլուզվում, քանդվում են հուշաքարերն ու պաշտպանիչ եզրաքարերը: Այս հիմնախնդիրը կարևոր է համայնքի յուրաքանչյուր ընտանիքի համար:

Շուրջ 4-6 մլն դրամ ընդհանուր արժեքով ծրագիրն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, ձեռք բերել ցանկապատման համար անհրաժեշտ մետաղական ցանց և սյուներ, ինչպես նաև տեղադրել երկու դարպաս և դռնակներ: Շահումյան համայնքի 2014թ. բյուջեում հնարավորություն է ստեղծվել այս նախագծի համար հատկացնել շուրջ 2-2,5 մլն. դրամ: Աշխատանքներն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ հայթհայթել դոնորների և մասնավոր ներդրողների կողմից: Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում հնարավոր կլինի նաև սողանքների դեմ պայքարելու նպատակով կառուցել պատնեշներ:

Ծրագրի իրագործման արդյունքում.

- համայնքը կունենա պահպանված և պաշտպանված գերեզմանատուն.
- կկրճատվեն համայնքի բնակիչների հոգսերը և չնախատեսված ծախսերը:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

«Որպես կանոն, աղքատների վիճակը վատթարացնող յուրաքանչյուր միջամտության հետևում աղքատներն են՝ սոսկ որպես շահառու»:

Վանդանա Շիվա, բնապահպանական ակտիվիստ

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Երկրորդ փողոցը շահերի հանգուցակետ

Շահումյանցիների գտնում են, որ թեև համայնքը մեծ վարելահողեր ունի, սակայն դաշտամիջյան ճանապարհների վատթար վիճակի պատճառով գյուղատնտեսությունը համայնքում զգալիորեն տուժում է. շատ հողեր եկամտաբեր չեն, վերածվել են խոտհարքի, եղածն էլ չի հնձվում և մեծ մասամբ օգտագործվում է որպես արոտավայր: Շատերը հարկադրված ուրիշից են գնում խոտը կամ ստիպված վաճառում են անասունը: Դժվար է հատկապես տարեցների համար, որոնք ի վիճակի չեն վատ ճանապարհով հասնել խոտհարք: Շահումյանցիները վստահ են, որ դաշտամիջյան ճանապարհների նման վիճակն ու դրա հետևանքները մեծապես նպաստում են բնակիչների արտագաղթին ու արտագնա աշխատանքի մեծ հոսքերին. շատերը «վաճառում են իրենց տները և գնում»: Բնակիչները նշում են նաև, որ դաշտամիջյան քանդուքարափ ճանապարհները լուրջ մարտահրավեր են բեռնատարների, մեքենաների ու վարորդների համար. մեքենաները չեն կարողանում անցնել դաշտամիջյան ճանապարհներով, որոնց երկարությամբ անձրևաջրերը մեծ խորխորատներ են առաջացրել, դեպի խոտհարքեր տանող 2-րդ փողոցի վրա հսկայական փոս է, որը խոտը բարձած մեքենաները չեն կարողանում հաղթահարել: Եղել են անգամ դեպքեր, երբ խոտը տեղափոխելիս մեքենա է շուռ եկել վատ ճանապարհի պատճառով, մարդիկ են վնասվել: «Մեր երեխաներին մնաս բարով ենք ասում, նոր գնում սար. էդքան վտանգավոր են ճանապարհները», ասում է շահումյանցին:

Գյուղացիները վստահ են, որ դաշտային ճանապարհներն անհրաժեշտ է բարեկարգել և ակնկալում են, որ արդյունքում նաև տեխնիկայի հարցը կլուծվի, ավելի շատ խոտհարք կհնձվի, իսկ Մայմեխ տանող ճանապարհը բարեկարգելու դեպքում զգալիորեն կավելանա նաև տուրիստների հոսքը: Բնակիչները հավատում են նաև, որ դաշտամիջյան ճանապարհների վե-

ռանորոգումը հնարավոր է առանց մեծ ծախսերի և համայնքն ի զորու է իրականացնել այն իր ուժերով:

Միաժամանակ, շատ շահումյանցիներ կարծում են, որ դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը ձեռնտու է անասուն պահող տնտեսություններին միայն և դրանից կօգտվեն բացառապես դաշտ ու խոտհարք ունեցողները, մինչդեռ այլ խնդիրների լուծումից կշահի ողջ գյուղը: Անգամ բարեկարգ ճանապարհ ունենալու դեպքում համայնքը չունի արդյունավետ գյուղատնտեսություն վարելու համար անհրաժեշտ տեխնիկա և դաշտամիջյան ճանապարհի բարեկարգումը գյուղում վիճակն էականորեն չի փոխի: Գյուղատնտեսությունը շահութաբեր չէ, իրեն չի արդարացնում. կաթը քաղաքում իրացնելը հազիվ ճանապարհծախսն է ծածկում, գտնում են բնակիչները, հող մշակելը ձեռնտու չէ, հողը բերրի չէ, ավելի հարմար է խոտը գնել, քան հող մշակել, ասում են նրանք: Շահումյանցիների այս հատվածը հավատացած է, թե համայնքն ավելի գերակա խնդիրներ ունի, քան դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը: Մյուսները խնդրի լուծումը պատկերացնում են պահածոների գործարանի վերագործարկման «ծայրից». գործարկելու դեպքում գործարանն ինքը շահագրգռված կլինի դաշտամիջյան ճանապարհները բարեկարգելու խնդրում և մասնավոր ներդրում կլինի, կարծում են նրանք: Երկրորդ փողոցը, որը միաժամանակ և՛ ներհամայնքային ճանապարհ է, և՛ գյուղի խոտհարքներ տանող հիմնական զարկերակն է անհրաժեշտ է նորոգել, համաձայն են գրեթե բոլորը:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

«Ողբամ մեռելոց, կոչեմ ապրողաց»

Շահումյանցիների մի մասը կարևորում է գերեզմանների ցանկապատման անհրաժեշտությունը: Նրանք նշում են, թե նախիրն արածացնելու գրեթե միակ ճանապարհն անցնում է գերեզմանոցի մոտով և անասունն էլ գերզմանոցի միջով է անցնում: Ու թեև յուրաքանչյուրի համար գերեզմանոցը սրբավայր է, շեշտում են շահումյանցիները, գերեզմանատանը կենդանիներն ազատ կանգնում են ուր ուզում են, գյուղացիների հարազատների գերեզմանները պղծվում են, անասունները գերեզմանաքարեր են շուռ տալիս: «Եթե անցյալդ չես հիշում, ապագադ մշուշոտ է», ասում են բնակիչներն ու համարում, որ գերեզմանատուն անհրաժեշտ է ցանկապատել: Ընդհանուր ցանկապատի պարագայում մարդիկ լրացուցիչ ծախս չեն անի ընտանեկան գերեզմաններն առանձին-առանձին ցանկապատելու համար, պնդում են նրանք:

Այդուհանդերձ, շահումյանցիների մեծամասնությունը համարում է, որ համայնքն այլ՝ ավելի առաջնային գերակայություններ ունի: «Նախ մտածենք ապրողների մասին, ապա նոր մեռածների», ասում են նրանք և հա-

մարում, որ վիճակը բավական և պետք է գյուղի մյուս՝ ավելի կարևոր հարցերը լուծել, իսկ գերեզմանատան խնդիրը կարելի է պահակներով էլ լուծել: Գերեզմանատան ցանկապատման խնդիրը կարող են լուծել բնակիչները՝ նպատակային հանգանակությամբ, ճիշտ այնպես, ինչպես հավաքել են եկեղեցին կառուցելու համար, համոզված են շահումյանցիները: Գերեզմանատունը սողանքային գոտում է, նշում են մյուսները և համարում, որ նման պայմաններում ցանկապատումն անիմաստ է:

Անվտանգություն

Լուսավոր ուղի... նախ՝ ուղին

Շահումյանցիներն ընդունում են, որ համայնքի կենտրոնական փողոցների լուսավորության խնդիրն առկա է. փողոցները մութ են, լարերը լավ վիճակում չեն, ձմռանը հաճախ են վնասվում: Գյուղը մեծ է, մարդիկ էլ գերազանցապես քաղաքային կյանքով են ապրում, և գյուղի գիշերային լուսավորությունը մարդկանց համար կարևոր է, նշում են բնակիչները, մինչդեռ մութն ընկնելուն պես գյուղը մտնում է խավարի մեջ: Երեկոյան համայնքում կանգնում է երթևեկությունը, փակվում են խանութները: Երեկոյան ժամերին հատկապես վտանգավոր է կանանց և երեխաների համար. մութն ընկնելուց հետո նրանք աշխատում են դուրս չգալ: Երեկոյան-գիշերն աշխատող կանայք չեն կարողանում մթանն ապահով տուն վերադառնալ, մինչդեռ տաքսիներն անբարեկարգ ճանապարհների պատճառով հրաժարվում են տեղ հասնել: Մթանը տնից դուրս գալ խուսափում են անգամ տղամարդիկ: Գիշերային լուսավորությունը հատկապես կարևոր է պահածոների գործարանի գիշերային հերթափոխում աշխատողների համար: Գյուղը փռված է և հաղորդակցվելու, սոցիալական լիարժեք կյանքի համար փողոցները լուսավորությունը կարևոր է: Մութ գյուղում գայլեր են հայտնվում, թափառող շներն ու մթանը հարիր այլ վտանգները դարանում են խավարում քայլող բնակչին, համոզված են շահումյանցիները: Գյուղում պետք է լուսավորություն անցկացվի, վստահ են նրանք: Լուսավորությունը կփոխի մարդկանց, ամենից առավել՝ երիտասարդների և երեխաների կյանքը:

Այդուհանդերձ, շահումյանցիների զգալի մեծամասնությունը համոզված է, որ լուսավորությունը համայնքի համար կարևոր խնդիր է, սակայն ոչ ամենակարևորը: Բնակիչները համոզված են, որ ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը, ասֆալտապատումը էլ ավելի կենսական է Շահումյանի համար: Բակերի լուսավորությամբ բնակիչները մի կերպ «յոլա կգնան», սակայն առանց ճանապարհների կյանքն անտանելի է, համոզված են շահումյանցիները: «Ասֆալտ լինի, լապտերով էլ ման կգանք», եզրահանգում են մարդիկ: Գյուղատնտեսությամբ զբաղվող, արևից առաջ

զարթնող ու մութը չընկած հանգստացող կամ անկողին մտնող գյուղացու համար լուսավորությունը կենսական չէ, նշում են շատերը:

Շահումյանցիները համարում են նաև, որ մեծ տարածքի վրա սփռված համայնքի համար ավելի կենսական է ծայրամասային փողոցների գիշերային լուսավորությունը և «7-րդ փողոցում ապրող երեխան անվտանգության ավելի լուրջ խնդիր ունի», իսկ գյուղի «ձախ թևն ասես ընդհանրապես գոյություն չունի՝ ոչ ճանապարհ կա, ոչ լուսավորություն»: Ներդրումները հարկավոր է կատարել ծայրամասերը լուսավորելու ուղղությամբ, առաջարկում է շահումյանցին, նման պարագայում բնակիչը կկարողանա հասնել կենտրոնական փողոցներ: Մյուսներն էլ հակված են գիշերային լուսավորության համակարգի ավելի ռադիկալ՝ ամբողջական ներդրումների: Լուսավորություն անցկացնելու և համակարգը պահպանելու համար անհրաժեշտ է համագործակցել բաշխիչ ցանցի հետ, քանի որ այլ պարագայում կորուստներն ու ծախսը մեծ կլինեն՝ «լամպերը փոխելով հարցը չի լուծվի» «տրանսֆորմատոր է պետք»:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Բոլոր ճանապարհները տանում են դեպի... ճանապարհներ

Շահումյանցիները գրեթե միաձայն բարձրաձայնում են. գյուղի ճանապարհները գտնվում են անընդունելի վիճակում և դրանց բարեկարգումը համայնքի գերխնդիրն է: Վատ ճանապարհների պատճառով մեքենաները չեն հասնում բարձրադիր թաղամասեր, տաքսիները չեն համաձայնվում գյուղ մտնել, երթուղայինը հասնում է գյուղի կենտրոն, իսկ վերի թաղը չի բարձրանում, փողոցներ կան, ուր մեքենա ընդհանրապես չի կարող մտնել: Համայնքում կան փողոցներ, որ ոտքով դժվար է հասնել: Շտապ օգնությունն անգամ չի կարողանում կանչին հասնել. «ինֆակտով մարդուն մի կերպ պատգարակով հասցրեցին մինչև հիմնական ճանապարհ», հիշում են բնակիչներն ու հավելում. «մի կին ունեինք, հաշմանդամ, վերին թաղերում էր ապրում, շտապ օգնությունը չէր կարողանում հասնել: Ստիպված տեղափոխվեցին քաղաք»: Համայնքից արտագաղթի պատճառներից մեկը ահավոր ճանապարհներն են, համոզված են շահումյանցիները: «Հայաստանում էնպիսի համայնք, որտեղ ընդհանրապես ճանապարհ չկա, գոյություն չունի. միայն մերն է», բողոքում է բնակիչը:

Ձմռանը՝ ցեխ ու սառույց, ամռանը՝ փոշի: Մարդիկ ամեն օր փոխում են հագուստն ու կոշիկը, որովհետև «նույն հագուստով հաջորդ օրը չենք կարող դուրս գալ, ամբողջությամբ ցեխ ենք դառնում»: Տարվա ընթացքում շահումյանցիները մի քանի զույգ կոշիկ են մաշում: Մարդիկ վկայում են, թե շատերը երկու կոշիկով են տնից դուրս գալիս, լինի երիտասարդ աղջիկ,

դպրոցական, թե ուսուցիչ. մեկը մինչև տրանսպորտ, մյուսը տրանսպորտից քաղաք, մեկը մինչև դպրոց, մյուսը՝ դպրոցում: Դպրոցի ճանապարհը շատ վատն է ու վտանգավոր, նշում են բնակիչները, իսկ անձրևային եղանակին երեխաները դպրոց պարզապես չեն հաճախում: Քարուքանդ փողոցները հաճախ կոտրվածքների պատճառ են դառնում: Ձմռանն էլ, առաջին ձյան հետ կապը գրեթե կտրվում է. պատահարները, անկումներն ու կոտրվածքներն անպակաս են հենց ձմռանը: Թաղման թափորներն էլ ձմռանը հարկադրված են գրեթե մեկ կիլոմետր անցնել ոտքով. «երբեմն էլ սահնակով ենք թաղումն անում», ասում է բնակիչը:

Եթե նախկինում ճանապարհը կանոնավոր կերպով ասֆալտապատում էր քարհանքը, ապա այժմ՝ ոչ ոք: Վիճակը հատկապես վատացավ գյուղում ջրամատակարարում անցկացնելուց և ջրագծերը վերանորոգելուց հետո. ճանապարհները քանդեցին ու չվերանորոգեցին, բողոքում են բնակիչները:

Համայնքի զարգացման գրավականը լավ ճանապարհն է և գյուղի փողոցներն անհրաժեշտ է բարեկարգել, վստահ են գրեթե բոլորը: Շատերը գտնում են, որ ամենակարևորը դեպի բուժարան ու դպրոց տանող կենտրոնական փողոցն է: Մյուսները գտնում են, որ առաջնային են այլ փողոցներ. 13-րդը, քանի որ «այդ փողոցում շատերն են բնակվում»: Շահումյանցիները գրեթե միահամուռ պնդում են, թե 1-ին ու հատկապես՝ 2-րդ փողոցները պետք է հիմնովին վերանորոգել, երկրորդը բարեկարգել՝ մինչև վերջ: Կարևոր է նաև, որ թիվ 13 երթուղին հասնի մինչև 2-րդ փողոցի վերջը, շեշտում են նրանք:

Բնակիչները վստահ են, որ փողոցների մասնակի վերանորոգումն օգուտ չէ. հիմնական վերանորոգում է պետք: Հորդառատ անձրևները զրոյացնում են մասնակի նորոգման վրա փափված ջանքերն ու ծախսված միջոցները ի դերև հանում. առնվազն կենտրոնական փողոցները հարկ է ասֆալտապատել, վստահ են շահումյանցիները: Նրանք համոզված են, որ ճանապարհների բարեկարգումը կխթանի նաև փոքր բիզնեսի ու տուրիզմի զարգացումը, կկրճատվի մեքենաների պահպանման, լվացքի փոշու, շորերի, կոշիկի ծախսը: Համայնքում հանրային առողջության խնդիրներն էականորեն կբարելավվի:

Երեխաներ և երիտասարդներ

Խաղահրապարակն ու խաղադաշտը կարևոր բայց ոչ գերակա անհրաժեշտություն

Շահումյանցիները կարևորում են երեխաների դաստիարակությունն ու ժամանցը, նշելով, որ համայնքում ժամանցի կազմակերպման կարևորագույն վայրերից մեկը՝ խաղահրապարակն անբարվոք վիճակում է: Թեև

հարևան Վանաձորի շենքերի բակերում անվճար խաղասարքեր են տեղադրված, որտեղ երեխաները խաղում են, շահումյանցիները զրկված են նման հնարավորությունից և երեխաներին հաճախ քաղաք են տանում, խաղասարքերից օգտվելու նպատակով: Թեև երեխաների համար համայնքում պարբերաբար միջոցառումներ են կազմակերպվում, սակայն ամենօրյա ժամանցի համար անհրաժեշտ ճոճանակներ չկան, եղածներն էլ անվտանգ չեն, պնդում են բնակիչները: Շահումյանցիները նշում են, թե պատշաճ խաղահրապարակ չունեցող համայնքում. երեխաները սպորտով կամ չեն զբաղվում, կամ գյուղից շատ հեռու՝ «Հալայել» վայրում երբեմն ֆուտբոլ են խաղում: Այլ հետաքրքրություն գրեթե չունենալով, երեխաները, բակ դուրս գալու, հասակակիցների հետ շփվելու, մարդկանց հետ շփվել սովորելու փոխարեն, ստիպված, համակարգչի առաջ են անցկացնում ժամանակի մեծ մասը, քննարկում են դրանք: Արդյունքում, երեխաները հիմնականում մեծահասակների հետ են շփվում, մինչդեռ հասակակիցների հետ շփվում են հազվադեպ, տուժում է երեխաների թե՛ առողջ ապրելակերպը, թե՛ դաստիարակությունը: Երեխային առաջին հերթին հարկավոր է համակարգչից կտրել գտնում են ծնողները: Երբեմն էլ, ժամանցի խիստ սահմանափակ հնարավորություն ունեցող երեխան «մեծանում է անասունների մեջ, անասուն պահելով»:

Խաղադաշտ կառուցելը, խաղասարքեր ձեռք բերելը, մեծ միջոցներ չեն պահանջում կարծում են բնակիչները: Բարեկարգ ու կահավորված խաղահրապարակ ունենալու դեպքում երեխաների ժամանցն ավելի հետաքրքիր, հագեցած ու ապահով կլինի, ծնողներն էլ չեն անհանգստանա, գտնում են շահումյանցիները: Կարևոր է նաև երեխաների համար ֆուտբոլի խաղադաշտ կառուցելը, նշում են նրանք: Խաղահրապարակի կառուցումը մեծ դեր կունենա նաև «ինտերնետային զոմբիացման դեմ պայքարելու գործում»: Երեխաները կդառնան ավելի համախմբված, ընկերներական հարաբերությունները կզարգանան:

Շահումյանցիները նշում են նաև, թե համայնքին երկու խաղահրապարակը քիչ կլինի է և ցանկալի է, որ յուրաքանչյուր թաղամաս ունենար իր թեկուզ փոքրիկ խաղահրապարակը, քանի որ գյուղը աշխարհագրորեն տարածված է ու կտրտված, և կենտրոնից հեռու բնակվողների համար անհարմար կլինի երեխաներին ամեն օր ժամանցի համար կենտրոն բերելը: Շատերն առաջարկում են խաղահրապարակն ու խաղադաշտը կառուցել գյուղի դպրոցի կամ հարակից տարածքում. նման մոտեցումը հնարավորություն կտար պահպանել կառուցածը, ունենալ մեծ մարզադաշտ, որից կօգտվեն ավելի մեծ թվով երեխաներ: Մյուսները համարում են, որ դպրոցի մի շարք հիմնախնդիրներ էլ ավելի կարևոր են. սանհանգույց, տանիք, լուսամուտ, դահլիճ, ջեռուցվում և այլն:

Միաժամանակ, շահումյանցիների զգալի մասը համարում է, որ թեև համայնքին խաղահրապարակ անհրաժեշտ է, սակայն բազմաթիվ այլ

խնդիրների համեմատ դրա կառուցումը գերակա չէ: Նախ փաստարկներ են հնչում, թե համայնքում միգրացիան այնքան ահագնացող չափերի է հասել և երեխաներն ու երիտասարդներն այնքան սակավաթիվ են, որ ժամանացի այս վայրերը կմնան չպահանջված: Մյուսները նշում են իրենց կարծիքով ավելի գերակա խնդիրներ կամ համոզված են, որ համայնքն իր ուժերով ի վիճակի չի լինելու պատշաճ ժամանցի վայրեր կառուցել ու կահավորել: Հնչում են կարծիքներ, թե երեխաները խաղալու հնարավորություն ունեն հարակից դաշտերում: Բնակիչները նշում են, թե կնախընտրեն երեխային Վանաձոր տանել խաղալու համար: Մյուսներն էլ գտնում են, թե ինտերնետում ժամանցը, բակում «վազվզոցը», մշակութային խմբակները, գրադարանը, ամռանը նաև՝ ճամբարները խաղահրապարակ-խաղադաշտերին ավելի նախընտրելի այլընտրանք են, պարզապես անհրաժեշտ է եղածը թարմացնել: Հնչում են կարծիքներ, թե եղածը նորոգելու փոխարեն հարկավոր է կառուցել նոր խաղահրապարակ, ինչը սակայն նույնպես գերակա չեն համարում: Շատերը համոզված են, որ գյուղի մյուս թաղամասերում, հատկապես՝ ծայրամասերում բնակվողները երեխաներին չեն բերի կենտրոնում կառուցված խաղահրապարակ: Մյուսները պրոֆեսիոնալ մարզական կառույցներ են ուզում տեսնել «սիրողական» խաղահրապարակի փոխարեն:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Շահումյանցիները կարևորում են դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը մասամբ հիմնավորելով դրա անհրաժեշտությունը խոտհարքներում կանանց աշխատանքով: Մյուսները գտնում են, թե համայնքի շատ խնդիրների լուծման արդյունավետությունը սահմանափակվում է գենդերային կարծրատիպերով. «մտածելակերպի խնդիր կա, եթե իմ աղջիկը երեկոյան դուրս գա, կողքից այլ բան կմտածեն: Մեկ է թույլ չենք տա, որ մեր աղջիկները դուրս գան զբոսնեն»:

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Սցենար 1. Կենտրոնական փողոցների լուսավորություն

- Լուսավորությունն իհարկե շատ հարկավոր է, բայց մեզ առաջին հերթին հարկավոր է ասֆալտապատում:
- Մի երկու լույսը ոչ մի օգուտ չի տա. հարկավոր է նորմալ լուսավորել:
- Փողոցների լուսավորության խնդիր կա, բայց ավելի կարևորը կա. ճանապարհների վերանորոգման խնդիրը:
- Փողոցները մութ են, լարերը լավ վիճակում չեն, ձմռանը հաճախ են վնասվում
- Լուսավորության խնդիր կա, բայց առաջնային չէ, որովհետև գյուղում տրանսպորտը գործում է մինչև ժամը 8-ը, օգտվում ենք տաքսիներից:
- Սեփական տներում ենք ապրում, ամեն մեկս մեր բակն ունենք, էնտեղ ենք հավաքվում: Հիմա որ պետք լինի այլ թաղերից մարդկանց հետ հանդիպել, մեր բակերում կհավաքվենք:
- Գյուղում սովորույթն այնպիսին է, որ մարդիկ հոգնած մութն ընկնելուն պես երեկոյան ժամերին գերադասում են հանգստանալ, բայց լուսավորությունն էլ չէր խանգարի:
- Լուսավորությունը կարևոր է, բայց կան առավել կարևոր հարցեր, գյուղի հոգսեր, լուսավորությունից կարևոր:
- Լուսավորության խնդիր կա համայնքում: Տների բակերի լույսերն էլ փողոցները մասնակի լուսավորում են:
- Մեր ինչին է պետք լուսավորությունը, եթե մի կարգին փողոց չունենք:
- Գյուղում առկա է սոցիալական՝ «հացի» խնդիր և մարդկանց փողոցների լուսավորությունը գրեթե չի հուզում:
- Խնդիրը ճանապարհի վիճակն է և տրանսպորտի աշխատանքի տևողությունը: Գոնե մի երկու կանգառ ավել աշխատեր:
- Կարելի է, իհարկե, վերանորոգել լուսավորության համակարգը, բայց թե սա համայնքի ամենաառաջնային խնդիրը չի:

- Տոնական օրերին գյուղը լավ լուսավորվում է, մնացած օրերին՝ ոչ: Միթե հնարավոր չէ ամեն օր լուսավորել:
- Եթե լուսավոր էլ լինի, մարդկանց մեծամասնությունն ի վիճակի չի դուրս գալ զբոսնել կամ ինչ-որ տեղ գնալ:
- Գյուղը մեծ է և մարդիկ հիմնականում քաղաքային կյանքով են ապրում, դրա համար շատ կարևոր է լուսավորված գյուղ ունենալը:
- Գյուղի ժողովուրդը ժամը վեցից հետո էնքան հոգնած է, որ լուսավորությունն անհրաժեշտ չէ:
- Գյուղում պահածոների գործարան կա, որը գործարկվելու է մայիս ամսից, իսկ գիշերային հերթափոխում աշխատողների համար շատ կարևոր է գիշերային լուսավորության առկայությունը:
- Լուրջ խնդիրները թողած, երկրորդականն ենք քննարկում: Խոսենք ճանապարհի, աշխատատեղի, գյուղի պահածոների գործարանը վերագործարկելու մասին:
- Եթե երթուղայինը հասնի իր վերջին կանգառ, մեծ բան կլինի գյուղի համար: Էնտեղ էնքան բնակչություն կա, որ թողնում են իրենց տները:

Սցենար 2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

- Ճանապարհների բարեկարգումը ամենաառաջնային խնդիրն է համայնքի համար:
- Տաքսիները չեն համաձայնվում գյուղ մտնել:
- Շատ կարևոր է, որ թիվ 13 երթուղին հասնի մինչև 2-րդ փողոցի վերջը:
- Գերեզմանատան ճանապարհը էնքան վատն է, որ ձմռանը սահնակով ենք թաղումն անում:
- Կարևորը կենտրոնական փողոցն է, որ տանում է դեպի բուժարան, դեպի դպրոց...
- Զարգացման համար լավ ճանապարհը շատ կարևոր է:
- Գյուղի մի մասը, հատկապես ծայրամասերը, ոչնչից չեն օգտվում:
- Ժամանակին քարհանքն էր իր ճանապարհն ասֆալտապատում: Հիմա բարձիթողի վիճակ է:
- Ճանապարհ չլինելու դեպքում, մենք քանի տարի է մեր խոտը չենք հնձում՝ բերելը թանկ է նստում: Եթե վերանորոգեն, տնտեսական վիճակն էլ կլավանա:

- Ոչ տրանսպորտը, ոչ տաքսին չեն աշխատում որոշ փողոցներում: Փողոցներ կան, որ մեքենա ընդհանրապես չի գալիս:
- Ճանապարհները բարեկարգելիս պետք է օգտագործել գյուղի աշխատուժը:
- Եթե գյուղում հարազատ ունես, ձմռանը իրենց հյուր գնալու համար ՈՒԱԶ է պետք...
- Մեզ համար ասֆալտապատումը գերխնդիր է:
- Քանդված ճանապարհների պատճառով երթուղային տաքսին չի բարձրանում:
- Գյուղի մի մասի փողոցներն անուշադրության են մատնվում:
- Ձմռան ամիսներին մարդիկ սահնակով են իջնում:
- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում է պետք: Դաչաներն էլ են դատարկվել, քաղաքի մարդիկ էին այնտեղ ապրում, հիմա էլ ճանապարհների պատճառով թողել-գնացել են, գյուղացիներն էլ նրանց այգիներում անասուն են տանում կապում:
- Գյուղից դուրս մենք դեպի սար 4կմ ասֆալտապատ ճանապարհ ենք ունեցել, մեքենայով սար էինք գնում խոտհարքի:
- Հայաստանում էնպիսի համայնք, որտեղ ընդհանրապես ճանապարհ չկա, գոյություն չունի: Միայն մերն է:
- Կարևոր է 13-րդ փողոցի վերանորոգումը, քանի որ այդ փողոցում շատերն են բնակվում:
- Պատկերացրեք, եթե կենտրոնական ճանապարհ տաքսի չի գալիս, մյուս ճանապարհներին ինչ վիճակ է: Եթե ճանապարհները կարգավորվեն՝ մեզ գյուղ տեխնիկա էլ կտրամադրեն:
- Գյուղը հիմնվել է պահածոների գործարանի շնորհիվ: Եթե այն վերագործարկվի՝ գյուղը կշնչի:
- Եկեղեցու բարեկարգումը իսկի էլ առաջնային չէր գյուղի համար, քանի որ մարդիկ սոցիալական խնդիրներ ունեն:
- Գերեզմաններ տանող ճանապարհն անցյալ տարի վերանորոգեցին: Ճանապարհ ընդհանրապես չկար: Հուղարկավորության թափորը գալիս էր շենքերի մոտ, հետո ութ հարյուր մետր ոտքով քայլում մինչև գերեզման:
- «Ասֆալտ լինի, մենք լապտերով ման կգանք»:

Սցենար 3. Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

- Մեր դաշտերում այժմ անգամ կարտոֆիլ չի ցանվում, դրանք բոլորը խոտհարքի են վերածվել:
- Եթե դաշտային ճանապարհները բարեկարգեն շատ լավ կլինի:
- Այսօր հողերն անտեր են, քանի որ դրանք օգուտ չեն բերում:
- Մարդիկ ստիպված վաճառում են անասունը, որովհետև խոտհարք հասնելու համար պիտի սար բարձրանան, իսկ ճանապարհ չկա:
- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումից կօգտվեն միայն դաշտ ու խոտհարք ունեցողները: Ասֆալտապատումից՝ ողջ գյուղը:
- Գյուղում պետք է հողագործությամբ զբաղվես, բայց ճանապարհներ չկան. մարդիկ հիասթափվում ու արտագաղթում են:
- Ամենամեծ խնդիրն այն է, որ խոտ իջեցնելու համար ճանապարհները վատն են, դե խոտհարքերն էլ մատնվում են անուշադրության:
- Գյուղը տեխնիկա չունի, որ դաշտերը մշակեն:
- Խոտհարքերի մեծ մասն օգտագործվում է որպես արոտավայր, սակայն կան շատ լավ խոտհարքեր, որոնք երբեք չեն հնձում:
- Դաշտամիջյան ճանապարհը կա կամ չկա. գյուղում ոչ մի բան չի փոխվի:
- Խոտը տարին մեկ ես բերում, ոնց էլ լինի կբերենք: Խոտ բերելու համար չորս ավտո կա, որից երեքը ամենագնաց են, մյուսն էլ էլի յոլա տանում է: Էս հարցը մենք կլուծենք: Մեզ ասֆալտապատում է պետք:
- Եթե ճանապարհներ լինեն, ավելի շատ խոտհարք կհնձվի:
- Գետի հարցին էլ պետք է անդրադառնալ: Նախկինում գետից ձուկ էինք բռնում, հիմա ձուկ էլ չկա, գետի ջուրն էլ պակասել է:
- Գյուղատնտեսությունը շահույթ չի տալիս: Կաթը քաղաք տանել-վաճառելը հազիվ ճանապարհի ծախսն է հանում:
- Ճանապարհը լավը լինելու դեպքում մարդիկ իրենց դաշտը չեն թողնի հեռանան արտագնա աշխատանքի:
- Ոչինչ չի փոխվի դաշտամիջյան ճանապարհները սարքելուց հետո: Դրա համար էլ այս պահին դրա վրա գումար ծախսելն անիմաստ է:
- Եթե դաշտամիջյան ճանապարհը վերանորոգվի, սոցիալական խնդիր կլուծվի: Մարդիկ ավելի քիչ կարտագաղթեն:

- Գյուղը 480 հա այգիներ է ունեցել: հիմա ոչինչ չկա: Անգամ տան մոտի ծառի չաշկան չեն փորում: Բոլորը խոպանի ճամփա են բռնել:
- Ժամանակին ես էլ եմ մշակել հող, բայց դա բոլորովին չի արդարացրել իրեն, քանի որ երբեք շահույթ չեմ ստացել: Ավելի լավ է գումար ծախսեմ և առնեմ, քան մշակեմ: Այնպես որ դաշտամիջյան ճանապարհները վերանորոգելը լրիվ անիմաստ է մեզ համար:
- Եթե դաշտամիջյան ճանապարհներից օգտվում է համայնքի միայն մի մասը, ապա կենտրոնական ճանապարհներից օգտվում են բոլորը:
- Մարդիկ անգամ իրենց հողերը հետ են հանձնում, քանի որ մշակելու իմաստ չկա:
- Գյուղը չի դատարկվում, բայց ապրելու պայմաններ են պետք, հիմա ով անասուն կպահի, իր գործն է: Դաշտամիջյան ճանապարհները բարեկարգելը չի զարգացնի գյուղատնտեսությունը:
- Համայնքը շատ բազմազան է: Համայնքի բնակիչներից բոլորը չեն, որ գյուղատնտեսությամբ են զբաղվում:
- Այդ հողերի հարցն ուրիշ կերպ պետք է լուծել: Դրանից հետո նոր կարելի է մտածել ճանապարհի ամսին:
- Երկու-երեք կով ունեցողն այսօր չի գնում խոտ հնձելու, իսկ խորհրդային տարիներին, երբ ճանապարհները մի քիչ ավելի լավ էին, համայնքի շուրջ չհնձված տարածք չկար:
- Պահածոների գործարանի վերագործարկումը «շղթայի» առաջին օղակն է: Դրանից հետո հենց գործարանն ինքը շահագրգռված կլինի դաշտամիջյան ճանապարհները բարեկարգելու հարցով:
- Եթե ճանապարհն էլ լինի և խոտհարքներն օգտագործվեն, միևնույն է գյուղն ունի նաև տեխնիկայի խնդիր:
- Գյուղամիջյան ճանապարհն էլ է պետք, որպեսզի մեքենան կարողանա գյուղի միջով հասնել դաշտամիջյան ճանապարհին:
- Ճանապարհների անբարեկարգության պատճառով մարդիկ վաճառում են իրենց տները և գնում:
- Խոտը բերում են տարվա ընթացքում 10 օր, իսկ համայնքի ճանապարհներն ամեն օր են օգտագործվում:
- Էս գյուղի զարգացած ճյուղը կոֆե խմելն է: Ինչ գիշերային կյանքի ակտիվացում, մեկա հարևանի տանն ենք հավաքվում կոֆե խմելու: Ինչ լուսավորություն, մենք ճանապարհներ չունենք:
- Ճանապարհների պատճառով շատերը վաճառում են իրենց դաչաները:

- Ով անասուն չունի նրանց ճանապարհը չի հետաքրքրում, բայց ունեցողների համար շատ կարևոր է
- Համայնքից դուրս, դեպի Թեժ լեռ, մեծ վարելահողեր կան: Ուղիղ տեղ ա, բայց հլա փորձի ջիպով գնալ: Թե կարողացար դուրս գալ, մալադեց.... Էդ ամբողջ հողը անտեր ա, ոչ ոք չի վարում:
- Որ ճանապարհները բարեկարգվեն, տեխնիկայի հարցը կլուծվի, մարդիկ էլ կկարողանան խոտ հնձել:
- Գյուղատնտեսությունը մեր համայնքում մարում է: Գյուղացուն ասում եմ, ինչո՞ւ չես հնձում, ասում է, սպասում եմ, տղաս փող ուղարկի... Այս բոլոր խնդիրներն այնքան փոխկապակցված են, որ դժվար է որոշել, թե որն է առաջնային: Համալիր լուծում է պետք:

Սցենար 4. Նոր խաղահրապարակի կառուցում և հին խաղահրապարակում խաղասարքերի տեղադրում

- Այս տարի թող ճանապարհն անեն, մյուս տարի մեր երեխաներին խաղահրապարակ սարքեն:
- Գյուղից շատ մարդ է հեռացել: Առաջին դասարանում 20 երեխա հազիվ հավաքվի...
- Խաղահրապարակը բամբասանքի վայր է, ուստի պետք չէ:
- Գյուղի բնակիչները լքում են գյուղը: Եթե երեկոյան նայենք, վերևի թաղամասերում գրեթե լույս չի վառվում:
- Խաղահրապարակին մի հատ էլ պահակ պետք կլինի, որ երկար մնա:
- Ավելի կարևոր է վերանորոգել դաշտամիջյան ճանապարհները, քան կառուցել նոր խաղահրապարակ:

Սցենար 5. Գերեզմանատան ցանկապատում

- Գերեզմանատան հարցը կարելի է պահակներով էլ լուծել, եթե մի քանիսին կանգնացնեն, մարդիկ գործ էլ կունենան: Բայց ճանապարհները առաջնային են, էլ սենց ձգելու տեղ չկա:
- Եթե ավտոն գերեզման չի հասնում, ցանկապատը ինչներիս է պետք:
- Եկեք նախ մտածենք ապրողների մասին, նոր մեռածների:
- Ինչ որ արվել է այս ընթացքում, բավական է գերեզմանների համար: Նախ պետք է գյուղի կարևոր հարցերը լուծել:
- Ինչ վիճակ է սա, քաղաքին կպած գյուղ է, մարշուտկաներ կան, ճանապարհ չունենք, որ գան:

- Շատերը Ռուսաստանում են ապրում, իսկ իրենց հարազատների գերեզմանն այստեղ է: Եթե գյուղը գումար հավաքի, իրենք էլ այնտեղից կմասնակցեն գերեզմանատան բարեկարգմանը:
- Գուգարք գյուղում ցանկապատել են գերեզմանատունը 20 տարի առաջ ու մինչև հիմա լիարժեք պահպանված է:
- Ձուկը գլխից է հոտում: Եթե կառավարությունը շահագրգռված լինի մեր բոլոր խնդիրները հեշտությամբ կլուծվեն:
- Գյուղում միգրացիայի խնդիր կա, տղամարդիկ գնացել են արտագնա աշխատանքի:
- Գյուղի վերևի հատվածում ամառանոցներ կան, որտեղ ամռանը մեծ թվով հովեկներ են գնում: Նաև անտառապատ համայնք է, զբոսաշրջիկներ շատ են լինում: Եթե ճանապարհները նորմալ լինեն, գյուղի վերին հատվածում էլ կյանքը կաշխուժանա: Խանութը նորմալ կգործի: Նոր աշխատատեղեր կբացվեն:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Սցենար 1. Կենտրոնական փողոցների լուսավորություն

- Եթե ճանապարհ չկա, լուսավորությունը առաջնահերթություն չէ:
- Քիչ թե շատ լուսավորության կա, շատ քիչ է, բայց կա: Ավելի առաջնահերթ խնդիրներ ունենք:
- Ես կարծում եմ, որ լուսավորությունը երկրորդային խնդիր է. եթե ճանապարհը բարեկարգ լինի՝ միանգամայն բավարար է նորմալ տեղաշարժվելու համար:
- Լուսավորելու հետ կապված մեծ գումարներ են նշված. դրանցով կարելի է ավելի շատ հարցեր լուծել:
- Լուսավորությունը երկրորդային խնդիր է: Ասֆալտապատում է պետք. երեխաները մթության մեջ տուն դժվարանում են գնալ, տրանսպորտը մինչև ժամը 6-ն է աշխատում:
- Ուսուցիչները ձմռանը տաքսիով են գալիս, քանի որ տրանսպորտ չկա:
- Առաջնահերթն ասֆալտապատումն է. մեքենաները վերև չեն բարձրանում, չեն կարողանում տեղափոխվել, տաքսիները չեն բարձրանում:
- Լուսավորություն անցկացնելու ու դա պահպանելու համար անհրաժեշտ է համագործակցել էլ. ցանցի հետ: Համայնքն ինքնուրույն չի կա-

րող պահպանել լուսավորության համակարգը:

- Նույն հագուստով հաջորդ օրը չենք կարող դուրս գալ, ամբողջությամբ ցեխ ենք դառնում:
- Եթե ուզում ենք քիչ ծախսով լուսավորություն ունենալ, մեզ մի տրանսֆորմատոր է պետք, որից կսնուցվեն այլ կարևոր համայնքային կառույցները ևս: Այսօր էլ. ցանցի վրա հույս դնելու չի:
- Գիշերն աշխատողների համար լուսավորությունը կարևոր է, բայց դե առաջնային խնդիրը ճանապարհների վերանորոգումն է:
- Համայնքը մեծ է, տարբեր թաղերում լուսավորություն ունենալու համար անհրաժեշտ է տրասֆորմատոր տեղադրել:
- Լուսավորության համակարգում կորուստները շատ մեծ են: Լամպերը փոխելով հարցը չի լուծվի:
- Մեր ճանապարհների հարցն է ավելի լուրջ. իսկի տաքսի չի գալիս շատ փողոցներ: Լուսավորությունն անհատապես լուծելի է. ամեն մեկը մի լամպ կվառի իր բակում, բայց ճանապարհի հարցը չենք կարող մեր ուժերով լուծել:
- Գերխնդիրն ասֆալտապատումն է, միայն դրանից հետո պետք է անցնել լուսավորությանը:
- Լուսավորությունը կարևոր է, բայց միայն ճանապարհների վերանորոգումից հետո:
- Մեր կլիման էնպիսին է, որ լուսավորության համակարգի մասնակի վերանորոգումը, սյուներ փոխելը հարց չի լուծի: Լարերը հազիվ են կախված սյուներից: Մի թեթև քամի է բարձրանում, հոսանքի տատանում է տեղի ունենում, վախենում ենք լարերը կտրվեն:
- Սրանք այն փողոցներն են, որտեղ տրանսպորտն է աշխատում, այստեղ լուսավորության խնդիրն այնքան էլ առաջնային չէ: Լուսավորության խնդիրն ավելի շատ ծայրամասերին է վերաբերում
- Լուսավորությունը պետք է, բայց ոչ թե մի կամ երկու թաղամասում, այլ ամբողջ համայնքում: Եթե Երևանում մենակ Օպերան ու Կենտրոնը լուսավորես, մնացածները՝ ոչ, կլինի՞:
- Պետք չէ միայն թաղապետարանի շուրջը լուսավորել, հարկավոր է բոլոր փողոցներն էլ լուսավորել:
- Ամեն օր կոշիկ ենք փոխում, էդ ճանապարհներով քայլել հնարավոր չէ:
- Համակարգի մասնակի վերանորոգումը խնդիրը չի լուծի: Ռեսուրսների վատնում է: Թե հնարավորություն լիներ հիմնովին վերանորոգել ամ-

բողջ համակարգը, ապա կարելի է խնդիր լուծել: Իսկ, մասնակի՝ ոչ:

- Լուսավորությունն այնքան էլ առաջնային չէ: Հետո գյուղի կյանքը գիշերային լուսավորությամբ չէ, որ կակտիվանա:

Սցենար 2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

- Եթե գումար կա համայնքի բյուջեում, ապա նախ պետք է լուծել ճանապարհների հարցը:
- Մեզ անգամ կոշիկ չի դիմանում: Մենք մեր ուժերով մի կերպ փորձել ենք գյուղի ճանապարհը հարթել: Բայց դա լուծում չէ:
- Գյուղի բոլոր փողոցները շեբենով բարեկարգելը լուծում չի, անձրևները կտանեն, գոնե կենտրոնական փողոցները պետք է ասֆալտապատվեն:
- Փողոցների մասնակի վերանորոգումն օգուտ չէ. հիմնական վերանորոգում է պետք:
- Առաջին հերթին պետք է վերանորոգել գլխավոր փողոցը:
- Ճանապարհների հարցի լուծումը փոշին կվերացնի, շորի, կոշիկի ծախսը կկրճատի:
- Եթե փողը չի հերիքում, գոնե 1-ին ու 2-րդ փողոցները պետք է հիմնովին վերանորոգել: Ամեն տարի գոնե մի նոր փողոց ևս:
- Սեզոնում մի քանի զույգ կոշիկ ենք գնում. շատ կարևոր է մեզ համար:
- Գյուղի ամենակարևոր հարցը ճանապարհներն են, հետո գերեզմանոցի ցանկապատումը: Եթե ջրահեռացումը նորմալ ապահովվի, ասֆալտն էլ երկար կծառայի: Գյուղը պետք է վերահսկի գումարի բաշխումը, որ լավ շինանյութ ու աշխատուժ հավաքվի:
- Մեզ միայն ասֆալտապատումը կօգնի: Բազմիցս բարեկարգել են, մի հատ անձրև է գալիս, ամեն ինչ մաքրում տանում է:
- Գոնե կենտրոնական ճանապարհը, որ հիմնովին վերանորոգվի, մարդիկ իրենց տուն տանող մի տաս մետրը իրենք սեփական ուժերով կնորոգեն:
- Երեխաները դպրոց գնալուց երկրորդ կոշիկ են վերցնում հետները:
- Պետք է կենտրոնական փողոցները և դպրոցի ճանապարհը բարեկարգել:
- Աղջիկներս երկու կոշիկով են գնում, մեկը մինչև տրանսպորտ, մյուսը տրանսպորտից քաղաք:

- Ճանապարհների բարեկարգումը կխթանի նաև փոքր բիզնեսի ու տուրիզմի զարգացումը:
- Բնակիչներն իրենց ուժերով բերում են և փոսերը լցնում են, բայց ջրահեռացման խնդրի պատճառով սելավն ամեն ինչ սրբում տանում է:
- Կարելի է սկսել կենտրոնական փողոցից, հետո անցնել մյուսներին:
- Համայնքի ղեկավարը ճանապարհների բարեկարգման ծրագրի իրականացման ուղղությամբ մեծ աշխատանք է տանում (բարերարներ, մասնավոր ներդրողներ):
- Լուսավորությունը կարճաժամկետ հարց է, ասֆալտապատումը կապիտալ ներդրում է և երկարաժամկետ:
- Եթե խնդիրն ամբողջությամբ չի լուծվելու, ապա իմաստ չկա գումար ծախսել, ամեն դեպքում մարդիկ իրենց միջոցներով լցնում են ջրափոսերը:
- Եթե ճանապարհներն ասֆալտապատվեն, մեքենայի ծախսն են կկրճատվի, լվացքի փոշու, շորերի, կոշիկի ծախսն էլ, առողջություններս էլ չենք քայքայի փոշի շնչելով:

Սցենար 3. Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

- Ճանապարհների վերանորոգումից հետո էլ բան չի փոխվի: Մեր հողերը բերրի չեն, պարարտանյութ է հարկավոր: Իսկ այն շատ թանկ է:
- Ժողովուրդը որպեսզի անտեղի հարկեր չմուծի՝ խոտը ուրիշից է գնում:
- Բաժանման ճանապարհները պետք է փոսալցնել, որ հասնի կենտրոնական փողոց:
- Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգումը միանգամայն հնարավոր է առանց մեծ ծախսերի՝ ի տարբերություն կենտրոնական ճանապարհների վերանորոգմանը:
- Բնակիչների մեծ մասը անասունի համար խոտը գումարով գնում են:
- Քանի անգամ գյուղացիներն իրենց միջոցներով՝ հիմնականում մեքենա ունեցողները, գումար են հավաքել, որ ճանապարհը վերանորոգեն:
- Դաշտամիջյան ճանապարհների որոշակի հատված համայնքի ղեկավարի կողմից վերականգնված է:
- Առաջին հերթին պետք է 2-րդ փողոցը մինչև վերջ բարեկարգել
- Մարդիկ իրենց խոտը թողած ուրիշ տեղից են խոտ գնում, քանի որ այդ

ճանապարհով չեն կարողանում բարձրանալ

- Ճանապարհների վրա անվադողերը մաշվում են, թրթուրավոր տրակտորի մասերը փչանում են, դա՞ Հայաստանում որտեղից գտնենք:
- Եթե ճանապարհները ասֆալտապատվեն, հիմա ծախսվող գումարները փոսալցման, հարթեցման, արդեն կգնան օրինակ դաշտամիջյան ճանապարհների բարեկարգմանը:
- Անասնապահությունը եկամտաբեր չէ, թանկ գնով խոտը գնում ենք, ճանապարհ չկա, ապահով չէ, վախենում ենք:

Սցենար 4. Նոր խաղահրապարակի կառուցում և հին խաղահրապարակում խաղասարքերի տեղադրում

- Իմաստ չունի ծախսեր անել և նոր խաղահրապարակ կառուցել:
- Սա շռայլություն է: Բոլորս էլ երեխաներ ունենք, կուզենք, որ խաղան, բայց դե ավելի լուրջ հիմնախնդիր ունենք՝ ճանապարհներ:
- Հարցը մենակ խաղահրապարարակ սարքելը չէ, այլև այն պահպանելը: Դրա համար նպատակահարմար է այն կառուցել դպրոցի տարածքում:
- Երեխան պետք է մանկություն ունենա, մենք ստիպված քաղաք ենք տանում, որ խաղասարքերից օգտվեն:
- Մեծ մարզադաշտ կառուցելու համար դպրոցից բացի այլ տարածք չկա:
- Մեր երեխաները միշտ էլ ինչ-որ զբաղմունք գտնում են: Ինտերնետ էլ կա, մշակույթի խմբակներ կան: Գումարները պետք չէ ուղղել խաղահրապահակներին: Ինչ արվում է՝ ներկել, մաքրել, հերիք է:
- Խաղահրապարակի կառուցումն անհարժեշտ չէ:
- Գյուղի բնակիչները անապահով են և իրենց ուժերով խաղասարքեր ձեռք բերել չեն կարող:
- Խաղասարքեր ունենալը, խաղադաշտ կառուցելը մեծ գումարների հետ չի կապված, իհարկե կարելի է իրականացնել այս ծրագիրը:
- Շուտով ամառային արձակուրդներն են. մեր երեխաները անգամ խաղալու տեղ չունեն. ավելի լավ կլինի, եթե կենտրոնական հրապարակը վերանորոգելու փոխարեն, նոր հրապարակ սարքեն: Սա մեր գյուղի առաջնահերթ խնդիրը չի:
- Ես էլի առաջ եմ քաշում դպրոցի հիմնախնդիրների հարցը՝ սանհանգույց, տանիք, լուսամուտ, դահլիճ:

Սցենար 5. Գերեզմանատան ցանկապատում

- Գերեզմանատան ցանկապատումը կարևոր է, բայց կարող ենք սպասել:
- Ցանկացած ներդրում պետք է գնա ճանապարհների ասֆալտապատմանը: Էս պահին դա է մեր ամենաառաջին խնդիրը:
- Եկեղեցին կառուցելու համար ամբողջ գյուղով գումար ենք հավաքել, գյուղի համար ենք անում և տեսնում ենք մեր տված գումարի արդյունքը: Գերեզմանատան համար էլ կանենք:
- Մահանալը կյանքից էլ թանկ է, մեծ ծախսեր են պահանջում թաղման արարողությունները, բայց «անասունը հո չի հասկանում...»:
- Գերեզմանները գյուղը աստիճանաբար կարող է վերանորոգել իր միջոցներով, ավելի լավ է ճանապարհները վերանորոգվեն:
- Համայնքի առանձին անդամներ պատրաստ են իրենց ներդրումն ունենալ գերեզմանատան հարցի լուծման գործում:
- Խոսակցություններ են եղել, որ գյուղում գումար հավաքելու փորձը ձախողվել է:
- Գերեզմանները ցանկապատելը շատ մեծ գումարի խնդիր է: Ավելի լավ է եղածով գյուղում եղած օրհասական խնդիրները լուծել:
- Եթե ընդհանուր ցանկապատ լինի, մարդիկ լրացուցիչ ծախս չեն անի իրենց ընտանեկան գերեզմաններն առանձին-առանձին ցանկապատելու համար:
- Պատրաստ եմ մի փոքր չափով օգնել որպեսզի գերեզմանատունը բարեկարգվի:
- Էդ ո՞ր մի գերզմանատունն է ցանկապատված, որ դա ցանկապատվի՞: թող երկու պահակ պահեն, հարցը կլուծվի: Միլիոններ ծախսել պետք չի:
- Գերեզմանատան պրոբլեմները ավելի քիչ են: Ճիշտ է քարերը, ծաղիկները լինում է, որ անասունները վնասում են, բայց ճանապարհներն ավելի կարևոր են:
- Գերեզմանում սողանք կա, ինչ իմաստ ունի ցանկապատելը: Կարող է մի օր էլ ցանկապատը քշի տանի. ի՞նչ պիտի անենք
- Գերեզմանների ցանկապատումը մարդիկ իրենք էլ կարող են անել:
- Գերեզմանատունը ցանկապատեն, բայց երեխաները կոշիկ չունենան դպրոց գնալու՞: Ճանապարհների հարցն է պետք լուծել, ոչ թե գերեզմանների:

- Անցած տարի նախակրթարանի երկու սենյակ վերանորոգվել է, իսկ միջանցքը խիստ անմխիթար վիճակում է: Կիսատ-պռատ մոտեցումով հարց չեն լուծում:
- Կարևորագույն խնդիրը ներդրումների հարցն է: Գյուղապետարանն այսօր միջոց ունի ցանկապատելու գերեզմանները, բայց մյուսների համար մեծ ներդրումներ են պետք:
- Կարևոր հարցերից մեկը դպրոցի վերանորոգումն է:
- Լավ կլինի, որ մի ավտոբուս լինի, որ ապրանքները տեղափոխենք, որ մարդիկ աշխատանքի գնալուց կաթ ու մածունի հետ չգնան:
- Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ, ինչի պատճառով մեր շնորհալի երեխաները չեն կարողանում իրենց միջոցառումները անցկացնել դպրոցում:

Անվտանգություն

Սցենար 1. Կենտրոնական փողոցների լուսավորություն

- Մեր գյուղում կան մեկը մեկից հրատապ հարցեր. լույսը նույնպես շատ կարևոր է: Մութն ընկնելուն պես գյուղը մտնում է խավարի մեջ:
- Լուսավորությունը երկրորդային խնդիր է: Ասֆալտապատում է պետք. երեխաները մթության մեջ տուն դժվարանում են գնալ, տրանսպորտը մինչև ժամը 6-ն է աշխատում:
- Գնումներից հետո իրերով պետք է բարձրանաս՝ ճանապարհ չկա:
- Երեկոյան փողոցներն այնքան մութ են, որ երթևեկությունը կանգնում է, փակվում են խանութները:
- Ասում եք, կենտրոնական փողոցների լուսավորությունը: Ախր անվտանգությունը պետք է ապահովել առաջին հերթին երկրորդական փողոցներում, անտառամերձ մասերում:
- Համայնքի ոչ կենտրոնական փողոցներում լուսավորություն իսկի չկա: Ծայրամասային փողոցներում երեկոյան ոչ մի բան չի երևում:
- Ձմռանը ժամը 7.30-ից հետո խավար է, երթուղայինները չեն աշխատում: Լուսավորության դեպքում երեկոյան կարող ես ապահով լինել:
- Եթե մարդիկ իմանան, որ տրանսպորտը ժամը 6-ից հետո էլ կաշխատի, ավելի հանգիստ կլինեն, տրանսպորտը շատ կարճ է աշխատում:
- Առաջնահերթ են ոչ թե կենտրոնական, այլ ծայրամասային փողոցները:

Ասենք, 7-րդ փողոցում ապրող երեխան անվտանգության ավելի լուրջ խնդիր ունի:

- Գյուղի կենտրոնական փողոցներում շարժը շատ է, ուստի լուսավորության հարցը այդքան էլ ակտուալ չէ, բայց ավելի կարևոր է գյուղի ծայրամասերի լուսավորությունը:
- Լուսավորություն անցկացնելուց հետո մարդիկ կկարողանան գոնե տեղաշարժվել. եթե մի փոքր ուշանում են, արդեն ընկնում են վտանգավոր իրավիճակի մեջ: Անգամ տղամարդիկ վախենում են դուրս գալ: Թափառող շներ, ուրիշ վտանգներ:
- Երեկոյան-գիշերն աշխատող կանայք չեն կարողանում մթանը հանգիստ տուն վերադառնալ, տաքսիներն էլ ճանապարհների անբարեկարգ վիճակի պատճառով հրաժարվում են գալ:
- Երեկոյան ժամերին հատկապես վտանգավոր է կանանց և երեխաների համար: Մութն ընկնելուց հետո նրանք ընդհանրապես դուրս չեն գալիս:
- Ժամը ութից հետո գյուղում կյանքը դադարում է:
- Անգամ առաջին կանգառը լուսավորված չէ, էլ ինչի մասին է խոսքը: Մյուս փողոցներն ընդհանրապես անտեսված են:
- Երեկոյան ութից հետո, հնարավոր չէ ոչ մի բան անել:
- Գյուղի ձախ թևն ասես ընդհանրապես գոյություն չունի, ոչ ճանապարհ կա, ոչ լուսավորություն:
- Լուսավորությունն իհարկե կարևոր է: Գյուղում գայլ էր հայտնվել: Լուսավոր փողոցում գելն ի՞նչ գործ ուներ:

Սցենար 2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

- Մեր ճանապարհներն այնքան վատն են, որ նույնիսկ շտապ օգնությունը չի գալիս:
- Ամենակարևորը կենտրոնական և դպրոցի ճանապարհներն են: Մնացածները գյուղն իր ուժերով կբարեկարգի:
- Ուշ ժամին ուզում ես Սովխոզ գնալ, հնարավոր չի: Ոչ մի տաքսի չի համաձայնվում գալ գյուղ:
- Ավելի նպատակահարմար է մի քանի ծայրամասային փողոց լուսավորել, որ բնակիչը գոնե հասնի կենտրոնական փողոց: Երեխային խանութ ես ուղարկում՝ վախենում է, չի կարողանում գնալ:
- Փոսաջրեր են գոյանում, երթևեկության համար անհարմար է:

- Վատ ճանապարհների պատճառով հեռու տներից բնակիչները արտագաղթում են:
- Վերևի թաղերում ժամը յոթից հետո շարժումը դադարում է:
- Ճանապարհն այնքան վատն է, որ մեր տան մոտ մի քանի անգամ խոտի մեքենաները շուռ են եկել:
- Ամառանոցային փողոցը համեմատաբար բարեկարգ է, մենք ստիպված այդ ճանապարհով ենք տուն գնում՝ երկարացնելով մեր ճանապարհը:
- Երթուղայինը հասնում է գյուղի կենտրոն: Ճանապարհի պատճառով չեն բարձրանում մինչև վերի թաղը:
- Շատերը խոտհարքից հրաժարվել են, քանի որ ճանապարհ չկա, վտանգավոր է:

Սցենար 3. Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

- Եղել են դեպքեր, երբ խոտը տեղափոխելիս մեքենա է շուռ եկել վատ ճանապարհի պատճառով:
- Մեծ մեքենան շրջվել է դաշտամիջյան ճանապարհի պատճառով, մարդիկ վնասվել էին:
- Մենք մեր երեխաներին մնաս բարով ենք ասում, նոր գնում սար. էդքան վտանգավոր են ճանապարհները:
- 2-րդ փողոցի ճանապարհը, որ դեպի խոտհարքեր է գնում, մեծ փոս է, խոտը բարձած մեքենաները չեն կարողանում անցնել:
- Թոշակառու ընտանիքներ կան, որ միայն մի կով են պահում ու ճանապարհ չկա, որ գնան իրենց դաշտին հասնեն, որ մշակեն:
- Վարելահողից հրաժարվելու պատճառը վատ ճանապարհն է:
- Անձրևաջրերը մեծ խորխորատներ են առաջացրել դաշտամիջյան ճանապարհների եզրերին և մեքենաները չեն կարողանում անցնել:

Սցենար 4. Նոր խաղահրապարակի կառուցում և հին խաղահրապարակում խաղասարքերի տեղադրում

- Եղած կարուսելներն անվտանգ չեն: Նոր խաղահրապարակն ու սարքավորումները նաև անվտանգության հարց կլուծեն:
- Նոր սարքավորումների դեպքում դրանք խնամքով պահպանելու հարցն է առաջ գալու:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Սցենար 1. Կենտրոնական փողոցների լուսավորություն

- Եթե նորմալ ճանապարհ լինի, թեկուզ մթության մեջ կկարողանանք քայլել: Մինչև տուն ենք հասնում, մինչև ականջներս ցեխ ենք դառնում:
- Լուսավորությունը «հաճելի մանրուք է»:
- Գյուղը փռված է և հյուր գնալու, շփվելու, մի տեղից մյուսը գնալու համար ցանկալի կլիներ, որ փողոցները լուսավորված լինեին:
- Ձմռանն ամբողջությամբ ճանապարհները պատվում են մերկասառույցով. նախ և առաջ պետք է այդ հարցը լուծել:
- Փողոցների բարեկարգումը բացի երթևեկության կարգավորումից նաև փոշու, ցեխի հարցը կլուծի: Ամռան շոգին անգամ պատուհան չենք կարողանում բացել փոշու պատճառով:
- Եթե նորմալ ճանապարհ լինի, թեկուզ մթության մեջ կկարողանանք քայլել: Մինչև տուն ենք հասնում, մինչև ականջներս ցեխ ենք դառնում:

Սցենար 2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

- Ամաչում ենք գյուղում հյուր ընդունել: Արտասահմանցին գալիս է համայնք, մի նորմալ փողոց չկա՝ դուրս գանք զբոսնելու:
- Եթե ճանապարհի խնդիր է ինչ կապ ունի՝ առաջնային թե երկրորդային փողոց է: Ինչ տարբերություն: Ամեն տեղ էլ մարդիկ են ապրում:
- Ով մինչև 4-րդ փողոցն է ապրում, իրենց համար լավ է, բա նրանք, որ մյուս փողոցներում են ապրում, նրանք ինչ անեն:
- Գյուղում տեղաշարժվելու համար արտաճանապարհային մեքենա է հարկավոր:
- Շտապ օգնությունն անգամ չի կարողանում կանչին հասնել:
- Եթե կենտրոնական փողոցները բարեկարգվեն, մյուս փողոցներում շեբեն կլցնենք, էդպես կբարեկարգենք:
- Ձմռանը՝ ցեխ ու սառույց, ամռանը՝ փոշի...
- Երբ գյուղում ջրագիծ քաշվեց, փողոցներն էլ ավելի վատը դարձան:
- Բարեկարգ ճանապարհներ ունենալը երազանքն է:
- Շտապ օգնության մեքենան գալիս, ճանապարհի կեսին կանգնում է: Էլ

ինչ «շտապ օգնություն»:

- Ես ամենակենտրոնական փողոցում եմ ապրում, բայց ճանապարհ չկա, ամբողջ գյուղում մի նորմալ ճանապարհ չկա:
- Առաջին հերթին պետք է հարթեցնել փողոցները: 1-ին և 2-րդ փողոցներն ամենակարևորն են. սարսափելի փոսեր կան:
- Տաքսի ենք կանչում, որ իմանում է սովխոզ պիտի գա, ասում է. ես իմ մեքենան փչացնողը չեմ, շտապ օգնությունն էլ չի հասնում:
- Մասնակին մի տարի ա տևում, անձրևն էկավ, նույն պատմությունը:
- Հատկապես վատացավ վիճակը, երբ գյուղում ջրամատակարարում անցկացվեց. ճանապարհ, կարելի է ասել, գոյություն չունի:
- Ջրագծերը վերանորոգելուց հետո ճանապարհներն ավելի անբարեկարգ դարձան. քանդեցին ու չվերանորոգեցին:
- Ուսուցիչներն ու աշակերտները երկու կոշիկ են պահում, որ գան դպրոց՝ փոխեն, մաքուրը հագնեն, չհաշված առողջական խնդիրները, ոտք է ոլորվում, կոտրվածքներ են ստանում:
- Որտեղ թեք է վիճակն ավելի վատ է:
- Մի կին ունեինք, հաշմանդամ, վերին թաղերում էր ապրում: Շտապ օգնությունը չէր կարողանում հասնել: Ստիպված տեղափոխվեցին քաղաք:
- Համայնքում փողոցներ կան, որ ոտքով անգամ դժվար է հասնել: Ինֆակտով մարդուն մի կերպ պատգարակով հասցրեցին մինչև հիմնական ճանապարհ:
- Ձմռանը, առաջին ձյան գալուն պես կապը գրեթե կտրվում է, շտապօգնության մեքենան էլ չի բարձրանում վերևի փողոցներ:

Սցենար 3. Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

- Մայմեխ տանող ճանապարհը բարեկարգելը կնպաստի տուրիզմի խթանմանը:
- Նույնիսկ հիմա են հանգստյան օրերին բարձրանում Մայմեխի փեշերը: Այդ ճանապարհի լավը լինելու դեպքում մարդկանց հոսքը կմեծանա:

Սցենար 4. Նոր խաղահրապարակի կառուցում և հին խաղահրապարակում խաղասարքերի տեղադրում

- Մենք ժամանակին ընտիր սպորտհրապարակ ենք ունեցել, բայց այսօր շարքից դուրս է եկել:

- Գոնե դպրոցի մոտ ֆուտբոլի դաշտ սարքվեր: Շատ կօգներ երեխաների ֆիզիկական զարգացմանը:
- Սա ցրված գյուղ է, փոխանակ երեխիս ոտքով բերեմ խաղահրապարակ, դրա փոխարեն քաղաք կտանեմ:
- Տուժում է ոչ միայն երեխաների առողջ ապրելակերպը, այլև դաստիարակությունը: Ով գիտի, գուցե մեր գյուղից մի լավ շախմատիստ կամ լավ բասկետբոլիստ դուրս գար, բայց հնարավորություն չկա:

Սցենար 5. Գերեզմանատան ցանկապատում

- Մենք քրիստոնյա ենք, իսկ մեր հարազատների գերեզմանները պղծվում են: Վերջերս անասունները մտել էին, գերեզմանաքարեր էին շուռ տվել:
- Ասում են, «Եթե քո անցյալը չես հիշում, քո ապագան մշուշոտ է»: Պետք է հարգենք մեր նախնիներին...
- Հիմա փողոցներն են լցնում հա լցնում, անձրևը տանում է, դա լուծում չէ:
- Յուրաքանչյուրի համար գերեզմանոցը սրբավայր է, բայց գնում ու տեսնում ես կենդանի է վրան կանգնած:
- Անասունները մտնում են գերեզմանները ավերում, բայց եթե մի քիչ ուշադիր լինեն, էդ հարցն էլ կլուծվի: Երկուսի անասունը մորթեն, երրորդն էլ չի մտնի:
- Նախիրն արածացնելու այլ ճանապարհ չկա, գերեզմանոցի մոտով են գնում, կենդանիներին էլ գերզմանոցի միջով են անցնում
- Գերեզմանոցը սողանքի վայրում է, ջուրը գալի լցվում է, փչացնում:

Երեխաներ և երիտասարդներ

Սցենար 1. Կենտրոնական փողոցների լուսավորություն

- Երիտասարդների համար երեկոյան ժամանցը կարևոր չէ, առավոտ գնում են անտառ՝ քոլ անելու, երեկոյան փունջ են անում և շատ հոգնած են լինում:
- Գյուղում պետք է լուսավորություն անցկացվի՝ մարդկանց կյանքը կփոխվի: Ամենից շատ կշահեն երեխաները:
- Լավ կլիներ եթե լուսավորությանը զուգընթաց լինեին նաև ժամանցի վայրեր, համերգներ, տարբեր որակյալ խմբակներ:
- Դպրոցի ճանապարհը շատ վատն է ու վտանգավոր. երեխաներին

մենք ենք տանում-բերում: Երեխաների անվտանգության, առողջության հարց է: Երկու կոշիկ են բերում, որ ցեխերով անցնեն, գան դպրոց՝ փոխեն:

- Եթե դրսում հետաքրքրություն լինի, երեխաները կկտրվեն էդ չարաբաստիկ ինտերնետից:
- Երիտասարդների համար կարևոր է լուսավորությունը, երեկոյան զբոսնում են:
- Նախ պետք է սպորտային դպրոցներ, ժամանցի վայրեր լինեն, որպեսզի լուսավորությունն էլ դրանց զարգացմանը նպաստի:
- Եթե ժամանցի վայր չկա, ինչ տարբերություն փողոցում մութ է, թե լույս:
- Երեխաները երեկոյան խաղում են իրենց բակում, ու երեկոյան խաղերին լուսավորությունը նույնիսկ կարող է խանգարել:

Սցենար 2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

- Երեխաները հեծանիվ չեն կարողանում քշել, ջարդուխուրդ են անում փոսերի պատճառով:
- Ձմռանն այդ փողոցում այնպիսի սառույց է լինում, որ քանի-քանի երեխա կոտրել են ձեռքը:
- Հատկապես անձրևային օրերին և՛ երեխաները, և՛ ուսուցիչները ամբողջությամբ ցեխի մեջ են լինում:
- Անձրևային եղանակներին երեխաները դպրոց ուղղակի չեն հաճախում:
- Եթե նորմալ ճանապարհ լինի, մարդիկ գյուղից չեն թողնի հեռանան: Ես տունս փոխել եմ, որ երեխաներս գոնե մշակութային կյանքին մասնակցեն:
- Երեխաները դպրոց չեն կարողանում հասնել այդ ճանապարհով, դրանք վտանգավոր են: Տեղաշարժվելն շատ դժվար է:
- Երեխաներս այս դպրոցն են գնում: Ամեն օր ստիպված եմ շոր փոխել, որովհետև այնպիսի ցեխ է, որ երկրորդ դասարանցի երեխաս մինչև մեջքը ցեխ է լինում:
- 7-րդ փողոցից մինչև դպրոց հասնելու համար մոտ 25 րոպե է պետք: Անձրևի ժամանակ՝ ավելի շատ:
- Երեխաներին երկու զույգ կոշիկ է պետք դպրոց գնալու համար: Ցեխոտ փողոցներով մինչև դպրոց են հասնում, հոգիները դուրս է գալիս:

- Անգամ ուսուցիչները զույգ կոշիկով են գալիս, ցեխոտ ոտքերով դասարան հո չեն մտնելու:

Սցենար 4. Նոր խաղահրապարակի կառուցում և հին խաղահրապարակում խաղասարքերի տեղադրում

- Խաղահրապարակ կարելի է կառուցել և դպրոցի տարածքում:
- Մեր դպրոցի շախմատի կաբինետն արդեն 3-րդ տարին է չի ջեռուցվում, ավելի լավ է խաղահրապարակի փոխարեն այս հարցը լուծենք:
- Խաղահրապարակի կառուցումն ինտերնետային զոմբիացման դեմ պայքարելու համար կարևոր է:
- Խաղահրապարակին մոտ չապրող երեխաները չեն օգտվելու:
- Գյուղում կանաչ դաշտ կա, երեխաները ֆուտբոլի դաշտ են սարքել:
- Եթե դպրոցի տարածքում ֆուտբոլի դաշտ լինի, բոլոր երեխաները դրանից կօգտվեն:
- Խաղահրապարակ պետք է. երեխաները սպորտով կամ չեն զբաղվում, կամ գյուղից շատ հեռու՝ «Հալայել» վայրում ֆուտբոլ են խաղում:
- Մեր երեխաները հասակակիցների հետ չեն կարողանում շփվել, տարածք չկա, երեխաները մենակ մեծահասակների հետ են շփվում:
- Մշակույթի պալատ ունենք, որի վիճակը լավ է, պարի խմբակներ կան, համակարգչային սենյակներ, գրադարան, երեխաների զբաղմունք կա: Խաղահրապարակն առաջնային չէ:
- Երեխաների մեջ ջերմությունը, որ առաջանում է շփումից, չի ձևավորվում: Խաղահրապարակն կնպաստեր նման շփմանը, բայց դե դա առաջնահերթ խնդիր չի:
- Հեռու թաղամասերում ապրող երեխաները հաստատ չեն գա գյուղի կենտրոնում կառուցված հրապարակ:
- Ավելի լավ կլինի, վերանորոգելու փոխարեն գյուղի մեկ այլ հատվածում նոր խաղահրապարակ կառուցել, քանի որ մյուս թաղամասերի երեխաները չեն կարողանում օգտվել կենտրոնական հատվածում գտնվող խաղահրպարակներից:
- Ավելի լավ կլինի խաղահրապարակը դպրոցի հարակից հատվածում կառուցեն, քան թե նշված վայրում:
- Շատ լավ կլիներ, որ յուրաքանչյուր թաղամաս ունենար իր թեկուզ փոքրիկ խաղահրապարակը:

- Մենք ճամբարներ ենք կազմակերպում: Երեխաների համար զբաղմունք ենք ստեղծում: Դրա համար խաղահրապարակը առաջնային չի:
- Կառուցվելիք խաղահրապարակը սիրողական է լինելու, իսկ մեր երեխաները ձգտում են մարզական հաջողությունների:
- Երեխաների խաղը ավելի ապահով կլինի և ծնողներն ավելորդ չեն անհանգստանա:
- Քաղաքում շենքերի բակերում անվճար խաղասարքեր են դրված, որտեղ երեխաները խաղում են, իսկ մենք տարածք չունենք, վախենում ենք դուրս թողնել:
- Միայն ֆուտբոլի համար խաղադաշտ կառուցելը նպատակահարմար չէ:
- Երեխաների համար միջոցառումներ կազմակերպվում են: Ճոճանակներ ունենք: Բայց երեխան հաճույք չի ստանում, որովհետև նոր սարքավորումներ չկան:
- Երեխային նախ պետք է համակարգչից կտրել: Հիմա գրեթե բոլոր ընտանիքներում երեխաների դաստիարակության թիվ 1 խնդիրը սա է:
- Երեխաների համար ֆուտբոլի դաշտ կառուցելը շատ կարևոր է:
- Երկու խաղահրապարակը քիչ է, մենք կենտրոնից հեռու ենք ապրում, երեխաների համար անհանգստանում ենք, պետք է ամեն փողոցի մոտ թեկուզ ոչ շատ մեծ, գոնե մի փոքրիկ խաղահրապարակ լինի
- Երիտասարդները հանդիպելու համար գնում են Վանաձոր, եթե խաղահրապարակ լինի՝ ավելի շատ կշահեն երեխաները:
- Որ թաղամասում էլ կառուցվի խաղահրապարակը, միայն այդ թաղամասի երեխաներն են օգտվելու:
- Երեխան մեծանում է անասունների մեջ, անասուն պահելով:
- Այսօր կենտրոնում գտնվող խաղահրապարակը միայն կենտրոնի երեխաների համար է: Իմաստ չունի այն վերանորոգել:
- Ամռանը ծնողները չգիտեն ինչպես իրենց երեխաներին զբաղեցնեն: Գոնե կանաչապատ տարածք լինի, կարելի է դպրոցի բակում էլ տարածք հատկացնել, ամեն թաղամասում գոնե մեկ վայր լինի:
- Ստիպված համակարգչի առաջ են նստում, այլ հետաքրքրություն չկա, եթե խաղադաշտ լինի՝ կշեղվեն:
- Խաղարապարակները պետք չեն, որովհետև ուսանողները գնում են քաղաք, մի մասն էլ ամուսնանում, գնում են:

- Երեխաները միախմբված կլինեն, թիմ կլինեն, ընկերներ կլինեն, ոչ թե յուրաքանչյուրն՝ առանձին:
- Այո, երեխաները վազվզում են, իրենք իրենց համար ինչ-որ զբաղմունք են ստեղծում իրենց համար, բայց մասնագետ չկա, որ զբաղվի երեխաների դաստիարակությամբ ու զարգացմամբ:
- Գնում, համակարգչային խաղերն են քննարկում, ագրեսիվանում, պետք է բակ դուրս գան, հասակակիցների հետ շփվեն, մարդկանց հետ շփվել սովորեն:

Սցենար 5. Գերեզմանատան ցանկապատում

- Գյուղն այլ խնդիրներ էլ ունի՝ դպրոցի վերանորոգում, մանկապարտեզի կառուցում: Մենք դաշտ չենք մշակում, մեզ համար գյուղամիջյան ճանապարհները առաջնային չեն, ոչ էլ ոռոգումը:
- Դպրոցի սանհանգույցը, լուսամուտների վերանորոգումը շատ կարևոր է, դասաժամին փեղկը պոկվեց և վնասեց երեխային:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Սցենար 1. Կենտրոնական փողոցների լուսավորություն

- Կին եմ, բայց չեմ նեղվում լուսավորության բացակայությունից:
- Մտածելակերպի խնդիր կա, եթե իմ աղջիկը երեկոյան դուրս գա, կողքից այլ բան կմտածեն: Մեկ է թույլ չենք տա, որ մեր աղջիկները դուրս գան զբոսնեն:

Սցենար 2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

- Տղամարդիկ էլ լավ գիտեն ճանապարհի խնդրի մասին,՝ իրենք են կատարում գնումները:

Սցենար 3. Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

- Դաշտամիջյան ճանապարհները կարևոր են. կանայք էլ են գնում խոտհարքում աշխատելու:
- Խոտհարքի ժամանակ կանայք հավաքում են քաղված խոտը, քանի որ գյուղի 2 տրակտորը չեն հասցնում հավաքել ամբողջը:

Տնտեսական և սոցիալական աշխուժություն

Այսօր հողերն անտեր են, քանի որ դրանք օգուտ չեն բերում:

Մեր դաշտերում այժմ անգամ կարտոֆիլ չի ցանվում, դրանք բոլորը խոտհարքի են վերածվել:

Ճանապարհ չլինելու դեպքում, մենք քանի տարի է մեր խոտը չենք հնձում՝ բերելը թանկ է նստում: Եթե վերանորոգեն, տնտեսական վիճակն էլ կլավանա:

Խոտհարքերի մեծ մասն օգտագործվում է որպես արոտավայր, սակայն կան շատ լավ խոտհարքեր, որոնք երբեք չեն հնձում:

Գյուղից դուրս մենք դեպի սար 4կմ ասֆալտապատ ճանապարհ ենք ունեցել, մեքենայով սար էինք գնում խոտհարքի:

Մարդիկ ստիպված վաճառում են անասունը, որովհետև խոտհարք հասնելու համար պիտի սար բարձրանան, իսկ ճանապարհ չկա:

Եթե դաշտային ճանապարհները բարեկարգեն շատ լավ կլինի:

Ամենամեծ խնդիրն այն է, որ խոտ իջեցնելու համար ճանապարհները վատն են, դե խոտհարքերն էլ մատնվում են անուշադրության:

Եթե ճանապարհներ լինեն, ավելի շատ խոտհարք կհնձվի:

Երկու-երեք կով ունեցողն այսօր չի գնում խոտ հնձելու, իսկ խորհրդային տարիներին, երբ ճանապարհները մի քիչ ավելի լավ էին, համայնքի շուրջ չհնձված տարածք չկար:

Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումից կօգտվեն միայն դաշտ ու խոտհարք ունեցողները: Ասֆալտապատումից՝ ողջ գյուղը:

Գյուղը տեխնիկա չունի, որ դաշտերը մշակեն:

Դաշտամիջյան ճանապարհը կա կամ չկա. գյուղում ոչ մի բան չի փոխվի:

Խոտը տարին մեկ ես բերում, ոնց էլ լինի կբերենք: Խոտ բերելու համար չորս ավտո կա, որից երեքը ամենագնաց են, մյուսն էլ էլի յոլա տանում է: Էս հարցը մենք կլուծենք: Մեզ ասֆալտապատում է պետք:

Գետի հարցին էլ պետք է անդրադառնալ: Նախկինում գետից ձուկ էինք բռնում, հիմա ձուկ էլ չկա, գետի ջուրն էլ պակասել է:

Գյուղատնտեսությունը շահույթ չի տալիս: Կաթը քաղաք տանել-վաճառելը հազիվ ճանապարհի ծախսն է հանում:

Ոչինչ չի փոխվի դաշտամիջյան ճանապարհները սարքելուց հետո: Դրա համար էլ այս պահին դրա վրա գումար ծախսելն անիմաստ է:

Ժամանակին ես էլ եմ մշակել հող, բայց դա բոլորովին չի արդարացրել իրեն, քանի որ երբեք շահույթ չեմ ստացել: Ավելի լավ է գումար ծախսեմ և առնեմ, քան մշակեմ: Այնպես որ դաշտամիջյան ճանապարհները վերանորոգելը լրիվ անիմաստ է մեզ համար:

Եթե դաշտամիջյան ճանապարհներից օգտվում է համայնքի միայն մի մասը, ապա կենտրոնական ճանապարհներից օգտվում են բոլորը:

Ով անասուն չունի նրանց ճանապարհը չի հետաքրքրում, բայց ունեցողների համար շատ կարևոր է:

Համայնքից դուրս, դեպի Թեժ լեռ, մեծ վարելահողեր կան: Ուղիղ տեղ ա, բայց հլա փորձի ջիպով գնալ: Թե կարողացար դուրս գալ, մալադեց.... Էդ ամբողջ հողը անտեր ա, ոչ ոք չի վարում:

Որ ճանապարհները բարեկարգվեն, տեխնիկայի հարցը կլուծվի, մարդիկ էլ կկարողանան խոտ հնձել:

Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգումը միանգամայն հնարավոր է առանց մեծ ծախսերի՝ ի տարբերություն կենտրոնական ճանապարհների վերանորոգմանը:

Բնակիչների մեծ մասը անասունի համար խոտը գումարով գնում են:

Քանի անգամ գյուղացիներն իրենց միջոցներով՝ հիմնականում մեքենա ունեցողները, գումար են հավաքել, որ ճանապարհը վերանորոգեն:

Մարդիկ իրենց խոտը թողած ուրիշ տեղից են խոտ գնում, քանի որ այդ ճանապարհով չեն կարողանում բարձրանալ:

Ճանապարհների վրա անվադողերը մաշվում են, թրթուրավոր տրակտորի մասերը փչանում են, դմ Հայաստանում որտեղից գտնենք:

Եղել են դեպքեր, երբ խոտը տեղափոխելիս մեքենա է շուռ եկել վատ ճանապարհի պատճառով:

Մեծ մեքենան շրջվել է դաշտամիջյան ճանապարհի պատճառով, մարդիկ վնասվել էին:

Մենք մեր երեխաներին մնաս բարով ենք ասում, նոր գնում սար. էդքան վտանգավոր են ճանապարհները:

2-րդ փողոցի ճանապարհը, որ դեպի խոտհարքեր է գնում, մեծ փոս է, խոտը բարձած մեքենաները չեն կարողանում անցնել:

Մարդիկ անգամ իրենց հողերը հետ են հանձնում, քանի որ մշակելու իմաստ չկա:

Համայնքը շատ բազմազան է: Համայնքի բնակիչներից բոլորը չեն, որ գյուղատնտեսությամբ են զբաղվում:

Այդ հողերի հարցն ուրիշ կերպ պետք է լուծել: Դրանից հետո նոր կարելի է մտածել ճանապարհի ամսին:

Պահածոների գործարանի վերագործարկումը «շղթայի» առաջին օղակն է: Դրանից հետո հենց գործարանն ինքը շահագրգռված կլինի դաշտամիջյան ճանապարհները բարեկարգելու հարցով:

Եթե ճանապարհն էլ լինի և խոտհարքներն օգտագործվեն, միևնույն է գյուղն ունի նաև տեխնիկայի խնդիր:

Գյուղամիջյան ճանապարհն էլ է պետք, որպեսզի մեքենան կարողանա գյուղի միջով հասնել դաշտամիջյան ճանապարհին:

Խոտը բերում են տարվա ընթացքում 10 օր, իսկ համայնքի ճանապարհներն ամեն օր են օգտագործվում:

Էս գյուղի զարգացած ճյուղը կոֆե խմելն է: Ինչ գիշերային կյանքի ակտիվացում, մեկա հարևանի տանն ենք հավաքվում կոֆե խմելու: Ինչ լուսավորություն, մենք ճանապարհներ չունենք:

Ճանապարհների պատճառով շատերը վաճառում են իրենց դաչաները:

Գյուղատնտեսությունը մեր համայնքում մարում է: Գյուղացուն ասում եմ, ինչո՞ւ չես հնձում, ասում է, սպասում եմ, տղաս փող ուղարկի... Այս բոլոր խնդիրներն այնքան փոխկապակցված են, որ դժվար է որոշել, թե որն է առաջնային: Համալիր լուծում է պետք:

Ճանապարհների վերանորոգումից հետո էլ բան չի փոխվի: Մեր հողերը բերրի չեն, պարարտանյութ է հարկավոր: Իսկ այն շատ թանկ է:

Թոշակառու ընտանիքներ կան, որ միայն մի կով են պահում ու ճանապարհ չկա, որ գնան իրենց դաշտին հասնեն, որ մշակեն:

Վարելահողից հրաժարվելու պատճառը վատ ճանապարհն է:

Շատերը խոտհարքից հրաժարվել են, քանի որ ճանապարհ չկա, վտանգավոր է:

Անձրևաջրերը մեծ խորխորատներ են առաջացրել դաշտամիջյան ճանապարհների եզրերին և մեքենաները չեն կարողանում անցնել:

Մայմեխ տանող ճանապարհը բարեկարգելը կնպաստի տուրիզմի խթանմանը:

Գյուղի վերևի հատվածում ամառանոցներ կան, որտեղ ամռանը մեծ թվով հովեկներ են գնում: Նաև անտառապատ համայնք է, զբոսաշրջիկներ շատ են լինում: Եթե ճանապարհները նորմալ լինեն, գյուղի վերին հատվածում էլ կյանքը կաշխուժանա: Խանութը նորմալ կգործի: Նոր աշխատատեղեր կբացվեն:

Նույնիսկ հիմա են հանգստյան օրերին բարձրանում Մայմեխի փեշերը: Այդ ճանապարհի լավը լինելու դեպքում մարդկանց հոսքը կմեծանա:

Ճանապարհը լավը լինելու դեպքում մարդիկ իրենց դաշտը չեն թողնի հեռանան արտագնա աշխատանքի:

Եթե դաշտամիջյան ճանապարհը վերանորոգվի, սոցիալական խնդիր կլուծվի: Մարդիկ ավելի քիչ կարտագաղթեն:

Գյուղում պետք է հողագործությամբ զբաղվես, բայց ճանապարհներ չկան. մարդիկ հիասթափվում ու արտագաղթում են:

Գյուղը 480 հա այգիներ է ունեցել: հիմա ոչինչ չկա: Անգամ տան մոտի ծառի չաշկան չեն փորում: Բոլորը խոպանի ճամփա են բռնել:

Ժողովուրդը որպեսզի անտեղի հարկեր չմուծի՝ խոտը ուրիշից է գնում:

Դաշտամիջյան ճանապարհների որոշակի հատված համայնքի ղեկավարի կողմից վերականգնված է:

Եթե ճանապարհները ասֆալտապատվեն, հիմա ծախսվող գումարները փոսալցման, հարթեցման, արդեն կգնան օրինակ դաշտամիջյան ճանապարհների բարեկարգմանը:

Անասնապահությունը եկամտաբեր չէ, թանկ գնով խոտը գնում ենք, ճանապարհ չկա, ապահով չէ, վախենում ենք:

Գյուղը չի դատարկվում, բայց ապրելու պայմաններ են պետք, հիմա ով անասուն կպահի, իր գործն է: Դաշտամիջյան ճանապարհները բարեկարգելը չի զարգացնի գյուղատնտեսությունը:

Լավ կլինի, որ մի ավտոբուս լինի, որ ապրանքները տեղափոխենք, որ մարդիկ աշխատանքի գնալուց կաթ ու մածունի հետ չգնան:

Գյուղը հիմնվել է պահածոների գործարանի շնորհիվ: Եթե այն վերագործարկվի՝ գյուղը կշնչի:

Ճանապարհների անբարեկարգության պատճառով մարդիկ վաճառում են իրենց տները և գնում:

Բյուջե, ծախսեր, հոգսեր

Շատերը Ռուսաստանում են ապրում, իսկ իրենց հարազատների գերեզմանն այստեղ է: Եթե գյուղը գումար հավաքի, իրենք էլ այնտեղից կմասնակցեն գերեզմանատան բարեկարգմանը:

Գուգարք գյուղում ցանկապատել են գերեզմանատունը 20 տարի առաջ ու մինչև հիմա լիարժեք պահպանված է:

Մահանալը կյանքից էլ թանկ է, մեծ ծախսեր են պահանջում թաղման արարողությունները, բայց «անասունը հո չի հասկանում...»:

Խոսակցություններ են եղել, որ գյուղում գումար հավաքելու փորձը ձախողվել է:

Եթե ընդհանուր ցանկապատ լինի, մարդիկ լրացուցիչ ծախս չեն անի իրենց ընտանեկան գերեզմաններն առանձին-առանձին ցանկապատելու համար:

Պատրաստ եմ մի փոքր չափով օգնել որպեսզի գերեզմանատունը բարեկարգվի:

Կարևորագույն խնդիրը ներդրումների հարցն է: Գյուղապետարանն այսօր միջոց ունի ցանկապատելու գերեզմանները, բայց մյուսների համար մեծ ներդրումներ են պետք:

Մենք քրիստոնյա ենք, իսկ մեր հարազատների գերեզմանները պղծվում են: Վերջերս անասունները մտել էին, գերեզմանաքարեր էին շուռ տվել:

Ասում են, «Եթե քո անցյալը չես հիշում, քո ապագան մշուշոտ է»: Պետք է հարգենք մեր նախնիներին...

Յուրաքանչյուրի համար գերեզմանոցը սրբավայր է, բայց գնում ու տեսնում ես կենդանի է վրան կանգնած:

Գերեզմանատան հարցը կարելի է պահակներով էլ լուծել, եթե մի քանիսին կանգնացնեն, մարդիկ գործ էլ կունենան: Բայց ճանապարհները առաջնային են, էլ սենց ձգելու տեղ չկա:

Եթե ավտոն գերեզման չի հասնում, ցանկապատը ինչներիս է պետք:

Եկեք նախ մտածենք ապրողների մասին, նոր մեռածների:

Ինչ որ արվել է այս ընթացքում, բավական է գերեզմանների համար: Նախ պետք է գյուղի կարևոր հարցերը լուծել:

Ինչ վիճակ է սա, քաղաքին կպած գյուղ է, մարշուտկաներ կան, ճանապարհ չունենք, որ գան:

Գերեզմանատան ցանկապատումը կարևոր է, բայց կարող ենք սպասել:

Եկեղեցին կառուցելու համար ամբողջ գյուղով գումար ենք հավաքել, գյուղի համար ենք անում և տեսնում ենք մեր տված գումարի արդյունքը: Գերեզմանատան համար էլ կանենք:

Գերեզմանները գյուղը աստիճանաբար կարող է վերանորոգել իր միջոցներով, ավելի լավ է ճանապարհները վերանորոգվեն:

Համայնքի առանձին անդամներ պատրաստ են իրենց ներդրումն ունենալ գերեզմանատան հարցի լուծման գործում:

Գերեզմանները ցանկապատելը շատ մեծ գումարի խնդիր է: Ավելի լավ է եղածով գյուղում եղած օրհասական խնդիրները լուծել:

Նախիրն արածացնելու այլ ճանապարհ չկա, գերեզմանոցի մոտով են գնում, կենդանիներին էլ գերզմանոցի միջով են անցնում:

Էդ ո՞ր մի գերզմանատունն է ցանկապատված, որ դա ցանկապատվի՞: թող երկու պահակ պահեն, հարցը կլուծվի: Միլիոններ ծախսել պետք չի:

Գերեզմանատան պրոբլեմները ավելի քիչ են: Ճիշտ է քարերը, ծաղիկները լինում է, որ անասունները վնասում են, բայց ճանապարհներն ավելի կարևոր են:

Գերեզմանում սողանք կա, ինչ իմաստ ունի ցանկապատելը: Կարող է մի օր էլ ցանկապատը քշի տանի. ի՞նչ պիտի անենք

Գերեզմանների ցանկապատումը մարդիկ իրենք էլ կարող են անել:

Գերեզմանատունը ցանկապատեն, բայց երեխաները կոշիկ չունենան դպրոց գնալու՞: Ճանապարհների հարցն է պետք լուծել, ոչ թե գերեզմանների:

Կարևոր հարցերից մեկը դպրոցի վերանորոգումն է:

Անասունները մտնում են գերեզմանները ավերում, բայց եթե մի քիչ ուշադիր լինեն, էդ հարցն էլ կլուծվի: Երկուսի անասունը մորթեն, երրորդն էլ չի մտնի:

Գերեզմանոցը սողանքի վայրում է, ջուրը գալի լցվում է, փչացնում:

Անվտանգություն

Փողոցները մութ են, լարերը լավ վիճակում չեն, ձմռանը հաճախ են վնասվում:

Տոնական օրերին գյուղը լավ լուսավորվում է, մնացած օրերին՝ ոչ: Միթե հնարավոր չէ ամեն օր լուսավորել:

Գյուղը մեծ է և մարդիկ հիմնականում քաղաքային կյանքով են ապրում, դրա համար շատ կարևոր է լուսավորված գյուղ ունենալը:

Գյուղում պահածոների գործարան կա, որը գործարկվելու է մայիս ամսից, իսկ

Լուսավորությունն իհարկե շատ հարկավոր է, բայց մեզ առաջին հերթին հարկավոր է ասֆալտապատում:

Մի երկու լույսը ոչ մի օգուտ չի տա. հարկավոր է նորմալ լուսավորել:

Փողոցների լուսավորության խնդիր կա, բայց ավելի կարևորը կա. ճանապարհների վերանորոգման խնդիրը:

Լուսավորության խնդիր կա, բայց առաջնային չէ, որովհետև գյուղում տրանսպորտը գործում է մինչև ժամը 8-ը, օգտվում ենք տաքսիներից:

գիշերային հերթափոխում աշխատողների համար շատ կարևոր է գիշերային լուսավորության առկայությունը:

Մեր գյուղում կան մեկը մեկից հրատապ հարցեր. լույսը նույնպես շատ կարևոր է: Մութն ընկնելուն պես գյուղը մտնում է խավարի մեջ:

Երեկոյան փողոցներն այնքան մութ են, որ երթևեկությունը կանգնում է, փակվում են խանութները:

Ձմռանը ժամը 7.30-ից հետո խավար է, երթուղայինները չեն աշխատում: Լուսավորության դեպքում երեկոյան կարող ես ապահով լինել:

Լուսավորություն անցկացնելուց հետո մարդիկ կկարողանան գոնե տեղաշարժվել. եթե մի փոքր ուշանում են, արդեն ընկնում են վտանգավոր իրավիճակի մեջ: Անգամ տղամարդիկ վախենում են դուրս գալ: Թափառող շներ, ուրիշ վտանգներ:

Երեկոյան-գիշերն աշխատող կանայք չեն կարողանում մթանը հանգիստ տուն վերադառնալ, տաքսիներն էլ ճանապարհների անբարեկարգ վիճակի պատճառով հրաժարվում են գալ:

Երեկոյան ժամերին հատկապես վտանգավոր է կանանց և երեխաների համար: Մութն ընկնելուց հետո նրանք ընդհանրապես դուրս չեն գալիս:

Ժամը ութից հետո գյուղում կյանքը դադարում է:

Անգամ առաջին կանգառը լուսավորված չէ, էլ ինչի մասին է խոսքը: Մյուս փողոցներն ընդհանրապես անտեսված են:

Երեկոյան ութից հետո, հնարավոր չէ ոչ մի բան անել:

Լուսավորությունն իհարկե կարևոր է: Գյուղում գայլ էր հայտնվել: Լուսավոր փողոցում գելն ինչ գործ ուներ:

Գյուղը փռված է և հյուր գնալու, շփվելու, մի տեղից մյուսը գնալու համար

Սեփական տներում ենք ապրում, ամեն մեկս մեր բակն ունենք, էնտեղ ենք հավաքվում: Հիմա որ պետք լինի այլ թաղերից մարդկանց հետ հանդիպել, մեր բակերում կհավաքվենք:

Գյուղում սովորույթն այնպիսին է, որ մարդիկ հոգնած մութն ընկնելուն պես երեկոյան ժամերին գերադասում են հանգստանալ, բայց լուսավորությունն էլ չէր խանգարի:

Լուսավորությունը կարևոր է, բայց կան առավել կարևոր հարցեր, գյուղի հոգսեր, լուսավորությունից կարևոր:

Լուսավորության խնդիր չկա համայնքում: Տների բակերի լույսերն էլ փողոցները մասնակի լուսավորում են:

Մեր ինչին է պետք լուսավորությունը, եթե մի կարգին փողոց չունենք:

Գյուղում առկա է սոցիալական՝ «հացի» խնդիր և մարդկանց փողոցների լուսավորությունը գրեթե չի հուզում:

Կարելի է, իհարկե, վերանորոգել լուսավորության համակարգը, բայց թե սա համայնքի ամենաառաջնային խնդիրը չի:

Եթե լուսավոր էլ լինի, մարդկանց մեծամասնությունն ի վիճակի չի դուրս գալ զբոսնել կամ ինչ-որ տեղ գնալ:

Գյուղի ժողովուրդը ժամը վեցից հետո էնքան հոգնած է, որ լուսավորությունն անհրաժեշտ չէ:

Լուրջ խնդիրները թողած, երկրորդականն ենք քննարկում: Խոսենք ճանապարհի, աշխատատեղի, գյուղի պահածոների գործարանը վերագործարկելու մասին:

Եթե ճանապարհ չկա, լուսավորությունը առաջնահերթություն չէ:

Քիչ թե շատ լուսավորության կա, շատ քիչ է, բայց կա: Ավելի առաջնահերթ խնդիրներ ունենք:

Ես կարծում եմ, որ լուսավորությունը երկրորդային խնդիր է. եթե ճանապարհը բարեկարգ լինի՝ միանգամայն

ցանկալի կլիներ, որ փողոցները լուսավորված լինեին:

Գյուղում պետք է լուսավորություն անցկացվի՝ մարդկանց կյանքը կփոխվի: Ամենից շատ կշահեն երեխաները:

Երիտասարդների համար կարևոր է լուսավորությունը, երեկոյան զբոսնում են:

բավարար է նորմալ տեղաշարժվելու համար:

Լուսավորությունը կարճաժամկետ հարց է, ասֆալտապատումը կապիտալ ներդրում է և երկարաժամկետ:

Լուսավորելու հետ կապված մեծ գումարներ են նշված. դրանցով կարելի է ավելի շատ հարցեր լուծել:

Լուսավորություն անցկացնելու ու դա պահպանելու համար անհրաժեշտ է համագործակցել էլ. ցանցի հետ: Համայնքն ինքնուրույն չի կարող պահպանել լուսավորության համակարգը:

Գիշերն աշխատողների համար լուսավորությունը կարևոր է, բայց դե առաջնային խնդիրը ճանապարհների վերանորոգումն է:

Լուսավորության համակարգում կորուստները շատ մեծ են: Լամպերը փոխելով հարցը չի լուծվի:

Եթե ուզում ենք քիչ ծախսով լուսավորություն ունենալ, մեզ մի տրանսֆորմատոր է պետք, որից կսնուցվեն այլ կարևոր համայնքային կառույցները ևս: Այսօր էլ. ցանցի վրա հույս դնելու չի:

Համայնքը մեծ է, տարբեր թաղերում լուսավորություն ունենալու համար անհրաժեշտ է տրասֆորմատոր տեղադրել:

Մեր ճանապարհների հարցն է ավելի լուրջ. իսկի տաքսի չի գալիս շատ փողոցներ: Լուսավորությունն անհատապես լուծելի է. ամեն մեկը մի լամպ կվառի իր բակում, բայց ճանապարհի հարցը չենք կարող մեր ուժերով լուծել:

Գերխնդիրն ասֆալտապատումն է, միայն դրանից հետո պետք է անցնել լուսավորությանը:

Լուսավորությունը կարևոր է, բայց միայն ճանապարհների վերանորոգումից հետո:

Մեր կլիման էնպիսին է, որ լուսավորության համակարգի մասնակի վերա-

նորոգումը, սյուներ փոխելը հարց չի լուծի: Լարերը հազիվ են կախված սյուներից: Մի թեթև քամի է բարձրանում, հոսանքի տատանում է տեղի ունենում, վախենում ենք լարերը կտրվեն:

Սրանք այն փողոցներն են, որտեղ տրանսպորտն է աշխատում, այստեղ լուսավորության խնդիրն այնքան էլ առաջնային չէ: Լուսավորության խնդիրն ավելի շատ ծայրամասերին է վերաբերում:

Լուսավորությունը պետք է, բայց ոչ թե մի կամ երկու թաղամասում, այլ ամբողջ համայնքում: Եթե Երևանում մենակ Օպերան ու Կենտրոնը լուսավորես, մնացածները՝ ոչ, կլինի՞:

Ասֆալտ լինի, մենք լապտերով ման կգանք:

Պետք չէ միայն թաղապետարանի շուրջը լուսավորել, հարկավոր է բոլոր փողոցներն էլ լուսավորել:

Համակարգի մասնակի վերանորոգումը խնդիրը չի լուծի: Ռեսուրսների վատնում է: Թե հնարավորություն լիներ հիմնովին վերանորոգել ամբողջ համակարգը, ապա կարելի է խնդիր լուծել: Իսկ, մասնակի՝ ոչ:

Լուսավորությունն այնքան էլ առաջնային չէ: Հետո գյուղի կյանքը գիշերային լուսավորությամբ չէ, որ կակտիվանա:

Լուսավորությունը երկրորդային խնդիր է: Ասֆալտապատում է պետք. երեխաները մթության մեջ տուն դժվարանում են գնալ, տրանսպորտը մինչև ժամը 6-ն է աշխատում:

Ասում եք, կենտրոնական փողոցների լուսավորությունը: Ախր անվտանգությունը պետք է ապահովել առաջին հերթին երկրորդական փողոցներում, անտառամերձ մասերում:

Համայնքի ոչ կենտրոնական փողոցներում լուսավորություն իսկի չկա: Ծայրամասային փողոցներում երեկոյան ոչ մի բան չի երևում:

Առաջնահերթ են ոչ թե կենտրոնական, այլ ծայրամասային փողոցները: Ասենք, 7-րդ փողոցում ապրող երեխան անվտանգության ավելի լուրջ խնդիր ունի:

Գյուղի կենտրոնական փողոցներում շարժը շատ է, ուստի լուսավորության հարցը այդքան էլ ակտուալ չէ, բայց ավելի կարևոր է գյուղի ծայրամասերի լուսավորությունը:

Գյուղի ձախ թևն ասես ընդհանրապես գոյություն չունի, ոչ ճանապարհ կա, ոչ լուսավորություն:

Լուսավորությունը «հաճելի մանրուք է»:

Ձմռանն ամբողջությամբ ճանապարհները պատվում են մերկասառույցով. նախ և առաջ պետք է այդ հարցը լուծել:

Եթե նորմալ ճանապարհ լինի, թեկուզ մթության մեջ կկարողանանք քայլել: Մինչև տուն ենք հասնում, մինչև ականջներս ցեխ ենք դառնում:

Երիտասարդների համար երեկոյան ժամանցը կարևոր չէ, առավոտ գնում են անտառ՝ քոլ անելու, երեկոյան փունջ են անում և շատ հոգնած են լինում:

Լավ կլիներ եթե լուսավորությանը զուգընթաց լինեին նաև ժամանցի վայրեր, համերգներ, տարբեր որակյալ խմբակներ:

Նախ պետք է սպորտային դպրոցներ, ժամանցի վայրեր լինեն, որպեսզի լուսավորությունն էլ դրանց զարգացմանը նպաստի:

Եթե ժամանցի վայր չկա, ինչ տարբերություն փողոցում մութ է, թե լույս:

Երեխաները երեկոյան խաղում են իրենց բակում, ու երեկոյան խաղերին լուսավորությունը նույնիսկ կարող է խանգարել:

Ավելի նպատակահարմար է մի քանի ծայրամասային փողոց լուսավորել, որ

բնակիչը գոնե հասնի կենտրոնական փողոց: Երեխային խանութ ես ուղարկում՝ վախենում է, չի կարողանում գնալ:

Վերևի թաղերում ժամը յոթից հետո շարժումը դադարում է:

Շրջակա միջավայր և հանրային առողջություն

Առաջնահերթն ասֆալտապատումն է. մեքենաները վերև չեն բարձրանում, չեն կարողանում տեղափոխվել, տաքսիները չեն բարձրանում:

Դպրոցի ճանապարհը շատ վատն է ու վտանգավոր. երեխաներին մենք ենք տանում-բերում: Երեխաների անվտանգության, առողջության հարց է: Երկու կոշիկ են բերում, որ ցեխերով անցնեն, գան դպրոց՝ փոխեն:

Գնումներից հետո իրերով պետք է բարձրանաս՝ ճանապարհ չկա:

Փողոցների բարեկարգումը բացի երթևեկության կարգավորումից նաև փոշու, ցեխի հարցը կլուծի: Ամռան շոգին անգամ պատուհան չենք կարողանում բացել փոշու պատճառով:

Նույն հագուստով հաջորդ օրը չենք կարող դուրս գալ, ամբողջությամբ ցեխ ենք դառնում:

Ամեն օր կոշիկ ենք փոխում, էդ ճանապարհներով քայլել հնարավոր չէ:

Ճանապարհների բարեկարգումը ամենաառաջնային խնդիրն է համայնքի համար:

Բաժանման ճանապարհները պետք է փոսալցնել, որ հասնի կենտրոնական փողոց:

Տաքսիները չեն համաձայնվում գյուղ մտնել:

Գերեզմանատան ճանապարհը էնքան վատն է, որ ձմռանը սահնակով ենք թաղումն անում:

Եթե խնդիրն ամբողջությամբ չի լուծվելու, ապա իմաստ չկա գումար ծախսել, ամեն դեպքում մարդիկ իրենց միջոցներով լցնում են ջրափոսերը:

Կարևորը կենտրոնական փողոցն է, որ տանում է դեպի բուժարան, դեպի դպրոց...

Զարգացման համար լավ ճանապարհը շատ կարևոր է:

Գյուղի մի մասը, հատկապես ծայրամասերը, ոչնչից չեն օգտվում:

Ժամանակին քարհանքն էր իր ճանապարհն ասֆալտապատում: Հիմա բարձիթողի վիճակ է:

Ոչ տրանսպորտը, ոչ տաքսին չեն աշխատում որոշ փողոցներում: Փողոցներ կան, որ մեքենա ընդհանրապես չի գալիս:

Ճանապարհները բարեկարգելիս պետք է օգտագործել գյուղի աշխատուժը:

Եթե գյուղում հարազատ ունես, ձմռանը իրենց հյուր գնալու համար ՈՒԱՋ է պետք...

Մեզ համար ասֆալտապատումը գերխնդիր է:

Քանդված ճանապարհների պատճառով երթուղային տաքսին չի բարձրանում:

Գյուղի մի մասի փողոցներն անուշադրության են մատնվում:

Ձմռան ամիսներին մարդիկ սահնակով են իջնում:

Ուսուցիչները ձմռանը տաքսիով են գալիս, քանի որ տրանսպորտ չկա:

Հայաստանում էնպիսի համայնք, որտեղ ընդհանրապես ճանապարհ չկա, գոյություն չունի: Միայն մերն է:

Կարևոր է 13-րդ փողոցի վերանորոգումը, քանի որ այդ փողոցում շատերն են բնակվում:

Պատկերացրեք, եթե կենտրոնական ճանապարհ տաքսի չի գալիս, մյուս ճանապարհներին ինչ վիճակ է: Եթե ճանապարհները կարգավորվեն՝ մեզ գյուղ տեխնիկա էլ կտրամադրեն:

Գերեզմաններ տանող ճանապարհն անցյալ տարի վերանորոգեցին: Ճանապարհ ընդհանրապես չկար: Հուղարկավորության թափորը գալիս էր շենքերի մոտ, հետո ութ հարյուր մետր ոտքով քայլում մինչև գերեզման:

Եթե գումար կա համայնքի բյուջեում, ապա նախ պետք է լուծել ճանապարհների հարցը:

Մեզ անգամ կոշիկ չի դիմանում: Մենք մեր ուժերով մի կերպ փորձել ենք գյուղի ճանապարհը հարթել: Բայց դա լուծում չէ:

Գյուղի բոլոր փողոցները շեբենով բարեկարգելը լուծում չի, անձրևները կտանեն, գոնե կենտրոնական փողոցները պետք է ասֆալտապատվեն:

Փողոցների մասնակի վերանորոգումն օգուտ չէ. հիմնական վերանորոգում է պետք:

Առաջին հերթին պետք է վերանորոգել գլխավոր փողոցը:

Ճանապարհների հարցի լուծումը փոշին կվերացնի, շորի, կոշիկի ծախսը կկրճատի:

Եթե փողը չի հերիքում, գոնե 1-ին ու 2-րդ փողոցները պետք է հիմնովին վերանորոգել: Ամեն տարի գոնե մի նոր փողոց ևս:

Սեզոնում մի քանի զույգ կոշիկ ենք գնում. շատ կարևոր է մեզ համար:

Գյուղի ամենակարևոր հարցը ճանապարհներն են, հետո գերեզմանոցի ցանկապատումը: Եթե ջրահեռացումը նորմալ ապահովվի, ասֆալտն էլ երկար կծառայի: Գյուղը պետք է վերահսկի գումարի բաշխումը, որ լավ շինանյութ ու աշխատուժ հավաքվի:

Մեզ միայն ասֆալտապատումը կօգնի: Բազմիցս բարեկարգել են, մի հատ անձրև է գալիս, ամեն ինչ մաքրում տանում է:

Գոնե կենտրոնական ճանապարհը, որ հիմնովին վերանորոգվի, մարդիկ

իրենց տուն տանող մի տաս մետրը իրենք սեփական ուժերով կնորոգեն:

Երեխաները դպրոց գնալուց երկրորդ կոշիկ են վերցնում հետները:

Պետք է կենտրոնական փողոցները և դպրոցի ճանապարհը բարեկարգել:

Աղջիկներս երկու կոշիկով են գնում, մեկը մինչև տրանսպորտ, մյուսը տրանսպորտից քաղաք:

Ճանապարհների բարեկարգումը կխթանի նաև փոքր բիզնեսի ու տուրիզմի զարգացումը:

Բնակիչներն իրենց ուժերով բերում են և փոսերը լցնում են, բայց ջրահեռացման խնդրի պատճառով սելավն ամեն ինչ սրբում տանում է:

Կարելի է սկսել կենտրոնական փողոցից, հետո անցնել մյուսներին:

Եթե ճանապարհներն ասֆալտապատվեն, մեքենայի ծախսն են կկրճատվի, լվացքի փոշու, շորերի, կոշիկի ծախսն էլ, առողջություններս էլ չենք քայքայի փոշի շնչելով:

Մեր ճանապարհներն այնքան վատն են, որ նույնիսկ շտապ օգնությունը չի գալիս:

Ամենակարևորը կենտրոնական և դպրոցի ճանապարհներն են: Մնացածները գյուղն իր ուժերով կբարեկարգի:

Ուշ ժամին ուզում ես Սովխոզ գնալ, հնարավոր չի: Ոչ մի տաքսի չի համաձայնվում գալ գյուղ:

Փոսաջրեր են գոյանում, երթևեկության համար անհարմար է:

Վատ ճանապարհների պատճառով հեռու տներից բնակիչները արտագաղթում են:

Ճանապարհն այնքան վատն է, որ մեր տան մոտ մի քանի անգամ խոտի մեքենաները շուռ են եկել:

Ամառանոցային փողոցը համեմատաբար բարեկարգ է, մենք ստիպված այդ

ճանապարհով ենք տուն գնում՝ երկարացնելով մեր ճանապարհը:

Երթուղայինը հասնում է գյուղի կենտրոն: Ճանապարհի պատճառով չեն բարձրանում մինչև վերի թաղը:

Ամաչում ենք գյուղում հյուր ընդունել: Արտասահմանցին գալիս է համայնք, մի նորմալ փողոց չկա՝ դուրս գանք զբոսնելու:

Եթե ճանապարհի խնդիր է ինչ կապ ունի՝ առաջնային թե երկրորդային փողոց է: Ինչ տարբերություն: Ամեն տեղ էլ մարդիկ են ապրում:

Ով մինչև 4-րդ փողոցն է ապրում, իրենց համար լավ է, բա նրանք, որ մյուս փողոցներում են ապրում, նրանք ինչ անեն:

Առաջին հերթին պետք է 2-րդ փողոցը մինչև վերջ բարեկարգել:

Գյուղում տեղաշարժվելու համար արտաճանապարհային մեքենա է հարկավոր:

Շտապ օգնությունն անգամ չի կարողանում կանչին հասնել:

Եթե կենտրոնական փողոցները բարեկարգվեն, մյուս փողոցներում շեբեն կլցնենք, էդպես կբարեկարգենք:

Ձմռանը՝ ցեխ ու սառույց, ամռանը՝ փոշի...

Երբ գյուղում ջրագիծ քաշվեց, փողոցներն էլ ավելի վատը դարձան:

Բարեկարգ ճանապարհներ ունենալը երազանքն է:

Շտապ օգնության մեքենան գալիս, ճանապարհի կեսին կանգնում է: Էլ ինչ «շտապ օգնություն»:

Ես ամենակենտրոնական փողոցում եմ ապրում, բայց ճանապարհ չկա, ամբողջ գյուղում մի նորմալ ճանապարհ չկա:

Առաջին հերթին պետք է հարթեցնել փողոցները: 1-ին և 2-րդ փողոցներն

ամենակարևորն են. սարսափելի փոսեր կան:

Տաքսի ենք կանչում, որ իմանում է սովխոզ պիտի գա, ասում է. ես իմ մեքենան փչացնողը չեմ, շտապ օգնությունն էլ չի հասնում:

Մասնակին մի տարի ա տևում, անձրևն էկավ, նույն պատմությունը:

Ցանկացած ներդրում պետք է գնա ճանապարհների ասֆալտապատմանը: էս պահին դա է մեր ամենաառաջին խնդիրը:

Հատկապես վատացավ վիճակը, երբ գյուղում ջրամատակարարում անցկացվեց. ճանապարհ, կարելի է ասել, գոյություն չունի:

Ջրագծերը վերանորոգելուց հետո ճանապարհներն ավելի անբարեկարգ դարձան. քանդեցին ու չվերանորոգեցին:

Ուսուցիչներն ու աշակերտները երկու կոշիկ են պահում, որ գան դպրոց՝ փոխեն, մաքուրը հագնեն, չհաշված առողջական խնդիրները, ոտք է ոլորվում, կոտրվածքներ են ստանում:

Որտեղ թեք է վիճակն ավելի վատ է:

Մի կին ունեինք, հաշմանդամ, վերին թաղերում էր ապրում: Շտապ օգնությունը չէր կարողանում հասնել: Ստիպված տեղափոխվեցին քաղաք:

Համայնքում փողոցներ կան, որ ոտքով անգամ դժվար է հասնել: Ինֆակտով մարդուն մի կերպ պատգարակով հասցրեցին մինչև հիմնական ճանապարհ:

Ձմռանը, առաջին ձյան գալուն պես կապը գրեթե կտրվում է, շտապօգնության մեքենան էլ չի բարձրանում վերևի փողոցներ:

Երեխաները հեծանիվ չեն կարողանում քշել, ջարդուխուրդ են անում փոսերի պատճառով:

Ձմռանն այդ փողոցում այնպիսի սառույց է լինում, որ քանի-քանի երեխա կոտրել են ձեռքը:

Հատկապես անձրևային օրերին և՛ երեխաները, և՛ ուսուցիչները ամբողջությամբ ցեխի մեջ են լինում:

Անձրևային եղանակներին երեխանները դպրոց ուղղակի չեն հաճախում:

Եթե նորմալ ճանապարհ լինի, մարդիկ գյուղից չեն թողնի հեռանան: Ես տունս փոխել եմ, որ երեխաներս գոնե մշակութային կյանքին մասնակցեն:

Երեխաները դպրոց չեն կարողանում հասնել այդ ճանապարհով, դրանք վտանգավոր են: Տեղաշարժվելն շատ դժվար է:

Երեխաներս այս դպրոցն են գնում: Ամեն օր ստիպված եմ շոր փոխել, որովհետև այնպիսի ցեխ է, որ երկրորդ դասարանցի երեխաս մինչև մեջքը ցեխ է լինում:

7-րդ փողոցից մինչև դպրոց հասնելու համար մոտ 25 րոպե է պետք: Անձրևի ժամանակ՝ ավելի շատ:

Երեխաներին երկու զույգ կոշիկ է պետք դպրոց գնալու համար: Ցեխոտ փողոցներով մինչև դպրոց են հասնում, հոգիները դուրս է գալիս:

Անգամ ուսուցիչները զույգ կոշիկով են գալիս, ցեխոտ ոտքերով դասարան հո չեն մտնելու:

Եթե մարդիկ իմանան, որ տրանսպորտը ժամը 6-ից հետո էլ կաշխատի, ավելի հանգիստ կլինեն, տրանսպորտը շատ կարճ է աշխատում:

Շատ կարևոր է, որ թիվ 13 երթուղին հասնի մինչև 2-րդ փողոցի վերջը:

Խնդիրը ճանապարհի վիճակն է և տրանսպորտի աշխատանքի տևողությունը: Գոնե մի երկու կանգառ ավել աշխատեր:

Եթե երթուղայինը հասնի իր վերջին կանգառ, մեծ բան կլինի գյուղի համար: Էնտեղ էնքան բնակչություն

կա, որ թողնում են իրենց տները:- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում է պետք: Դաչաներն էլ են դատարկվել, քաղաքի մարդիկ էին այնտեղ ապրում, հիմա էլ ճանապարհների պատճառով թողել-գնացել են, գյուղացիներն էլ նրանց այգիներում անասուն են տանում կապում:

Երեխաներ և երիտասարդներ

Երեխան պետք է մանկություն ունենա, մենք ստիպված քաղաք ենք տանում, որ խաղասարքերից օգտվեն:

Խաղասարքեր ունենալը, խաղադաշտ կառուցելը մեծ գումարների հետ չի կապված, իհարկե կարելի է իրականացնել այս ծրագիրը:

Եղած կարուսելներն անվտանգ չեն: Նոր խաղահրապարակն ու սարքավորումները նաև անվտանգության հարց կլուծեն:

Տուժում է ոչ միայն երեխաների առողջ ապրելակերպը, այլև դաստիարակությունը: Ով գիտի, գուցե մեր գյուղից մի լավ շախմատիստ կամ լավ բասկետբոլիստ դուրս գար, բայց հնարավորություն չկա:

Խաղահրապարակի կառուցումն ինտերնետային զոմբիացման դեմ պայքարելու համար կարևոր է:

Խաղահրապարակ պետք է. երեխաները սպորտով կամ չեն զբաղվում, կամ գյուղից շատ հեռու՝ «Հալայել» վայրում ֆուտբոլ են խաղում:

Մեր երեխաները հասակակիցների հետ չեն կարողանում շփվել, տարածք չկա, երեխաները մենակ մեծահասակների հետ են շփվում:

Երեխաների խաղը ավելի ապահով կլինի և ծնողներն ավելորդ չեն անհանգստանա:

Քաղաքում շենքերի բակերում անվճար խաղասարքեր են դրված, որտեղ

Խաղահրապարակի կառուցումն անհարժեշտ չէ:

Գյուղի բնակիչները անապահով են և իրենց ուժերով խաղասարքեր ձեռք բերել չեն կարող:

Շուտով ամառային արձակուրդներն են. մեր երեխաները անգամ խաղալու տեղ չունեն. ավելի լավ կլինի, եթե կենտրոնական հրապարակը վերանորոգելու փոխարեն, նոր հրապարակ սարքեն: Սա մեր գյուղի առաջնահերթ խնդիրը չի:

Նոր սարքավորումների դեպքում դրանք խնամքով պահպանելու հարցն է առաջ գալու:

Մենք ժամանակին ընտիր սպորտհրապարակ ենք ունեցել, բայց այսօր շարքից դուրս է եկել:

Սա ցրված գյուղ է, փոխանակ երեխիս ոտքով բերեմ խաղահրապարակ, դրա փոխարեն քաղաք կտանեմ:

Խաղահրապարակին մոտ չապրող երեխաները չեն օգտվելու:

Գյուղում կանաչ դաշտ կա, երեխանները ֆուտբոլի դաշտ են սարքել:

Մշակույթի պալատ ունենք, որի վիճակը լավ է, պարի խմբակներ կան, համակարգչային սենյակներ, գրադարան, երեխաների զբաղմունք կա: Խաղահրապարակն առաջնային չէ:

Երեխաների մեջ ջերմությունը, որ առաջանում է շփումից, չի ձևավորվում: Խաղահրապարակն կնպաստեր

երեխաները խաղում են, իսկ մենք տարածք չունենք, վախենում ենք դուրս թողնել:

Եթե դրսում հետաքրքրություն լինի, երեխաները կկտրվեն էդ չարաբաստիկ ինտերնետից:

Երեխաների համար միջոցառումներ կազմակերպվում են: Ճոճանակներ ունենք: Բայց երեխան հաճույք չի ստանում, որովհետև նոր սարքավորումներ չկան:

Երեխային նախ պետք է համակարգչից կտրել: Հիմա գրեթե բոլոր ընտանիքներում երեխաների դաստիարակության թիվ 1 խնդիրը սա է:

Երեխաների համար ֆուտբոլի դաշտ կառուցելը շատ կարևոր է:

Երիտասարդները հանդիպելու համար գնում են Վանաձոր, եթե խաղահրապարակ լինի՝ ավելի շատ կշահեն երեխաները:

Երեխան մեծանում է անասունների մեջ, անասուն պահելով:

Ստիպված համակարգչի առաջ են նստում, այլ հետաքրքրություն չկա, եթե խաղադաշտ լինի՝ կշեղվեն:

Երեխաները միախմբված կլինեն, թիմ կլինեն, ընկերներ կլինեն, ոչ թե յուրաքանչյուրն՝ առանձին:

Գնում, համակարգչային խաղերն են քննարկում, ագրեսիվանում, պետք է բակ դուրս գան, հասակակիցների հետ շփվեն, մարդկանց հետ շփվել սովորեն:

Շատ լավ կլիներ, որ յուրաքանչյուր թաղամաս ունենար իր թեկուզ փոքրիկ խաղահրապարակը:

Երկու խաղահրապարակը քիչ է, մենք կենտրոնից հեռու ենք ապրում, երեխաների համար անհանգստանում ենք, պետք է ամեն փողոցի մոտ թեկուզ ոչ շատ մեծ, գոնե մի փոքրիկ խաղահրապարակ լինի:

նման շփմանը, բայց դե դա առաջնահերթ խնդիր չի:

Հեռու թաղամասերում ապրող երեխաները հաստատ չեն գա գյուղի կենտրոնում կառուցված հրապարակ:

Ավելի լավ կլինի, վերանորոգելու փոխարեն գյուղի մեկ այլ հատվածում նոր խաղահրապարակ կառուցել, քանի որ մյուս թաղամասերի երեխաները չեն կարողանում օգտվել կենտրոնական հատվածում գտնվող խաղահրապարակներից:

Մենք ճամբարներ ենք կազմակերպում: Երեխաների համար զբաղմունք ենք ստեղծում: Դրա համար խաղահրապարակը առաջնային չի:

Կառուցվելիք խաղահրապարակը սիրողական է լինելու, իսկ մեր երեխաները ձգտում են մարզական հաջողությունների:

Միայն ֆուտբոլի համար խաղադաշտ կառուցելը նպատակահարմար չէ:

Որ թաղամասում էլ կառուցվի խաղահրապարակը, միայն այդ թաղամասի երեխաներն են օգտվելու:

Այսօր կենտրոնում գտնվող խաղահրապարակը միայն կենտրոնի երեխաների համար է: Իմաստ չունի այն վերանորոգել:

Այո, երեխաները վազվզում են, իրենք իրենց համար ինչ-որ զբաղմունք են ստեղծում իրենց համար, բայց մասնագետ չկա, որ զբաղվի երեխաների դաստիարակությամբ ու զարգացմամբ:

Գոնե դպրոցի մոտ ֆուտբոլի դաշտ սարքվեր: Շատ կօգներ երեխաների ֆիզիկական զարգացմանը:

Հարցը մենակ խաղահրապարակ սարքելը չէ, այլև այն պահպանելը: Դրա համար նպատակահարմար է այն կառուցել դպրոցի տարածքում:

Մեծ մարզադաշտ կառուցելու համար դպրոցից բացի այլ տարածք չկա:

Ամռանը ծնողները չգիտեն ինչպես իրենց երեխաներին զբաղեցնեն: Գոնե կանաչապատ տարածք լինի, կարելի է դպրոցի բակում էլ տարածք հատկացնել, ամեն թաղամասում գոնե մեկ վայր լինի:

Ես էլի առաջ եմ քաշում դպրոցի հիմնախնդիրների հարցը՝ սանհանգույց, տանիք, լուսամուտ, դահլիճ:

Խաղահրապարակ կարելի է կառուցել և դպրոցի տարածքում:

Մեր դպրոցի շախմատի կաբինետն արդեն 3-րդ տարին է չի ջեռուցվում, ավելի լավ է խաղահրապարակի փոխարեն այս հարցը լուծենք:

Եթե դպրոցի տարածքում ֆուտբոլի դաշտ լինի, բոլոր երեխաները դրանից կօգտվեն:

Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ, ինչի պատճառով մեր շնորհալի երեխաները չեն կարողանում իրենց միջոցառումները անցկացնել դպրոցում:

Կարևոր հարցերից մեկը դպրոցի վերանորոգումն է:

Ավելի լավ կլինի խաղահրապարակը դպրոցի հարակից հատվածում կառուցեն, քան թե նշված վայրում:

Գյուղն այլ խնդիրներ էլ ունի՝ դպրոցի վերանորոգում, մանկապարտեզի կառուցում: Մենք դաշտ չենք մշակում, մեզ համար գյուղամիջյան ճանապարհները առաջնային չեն, ոչ էլ ոռոգումը:

Դպրոցի սանհանգույցը, լուսամուտների վերանորոգումը շատ կարևոր է, դասաժամին փեղկը պոկվեց և վնասեց երեխային:

Կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներ

Դաշտամիջյան ճանապարհները կարևոր են. կանայք էլ են գնում խոտհարքում աշխատելու:

Խոտհարքի ժամանակ կանայք հավաքում են քաղված խոտը, քանի որ գյուղի 2 տրակտորը չեն հասցնում հավաքել ամբողջը:

Մտածելակերպի խնդիր կա, եթե իմ աղջիկը երեկոյան դուրս գա, կողքից այլ բան կմտածեն: Մեկ է թույլ չենք տա, որ մեր աղջիկները դուրս գան զբոսնեն:

Տղամարդիկ էլ լավ գիտեն ճանապարհի խնդրի մասին,՝ իրենք են կատարում գնումները:

Քվեարկության արդյունքներ

Կենտրոնական փողոցների լուսավորություն	7
Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	89
Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում	2
Նոր խաղահրապարակի կառուցում և հին խաղահրապարակում խաղասարքերի տեղադրում	2
Գերեզմանատան ցանկապատում	6

Հավելված

Համայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը



Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն (ՄԶՄԿ) ստեղծվել է 2000 թվականին և այսօր համարվում է Արևելյան Եվրոպայի հայտնի վերլուծական կենտրոններից մեկը: Համաձայն Փենսիլվանիայի համալսարանի կողմից ամեն տարի իրականացվող Վերլուծական կենտրոնների համաշխարհային ինդեքսի՝ 2013 թվականին «Թափանցիկություն և արդյունավետ կառավարում» կատեգորիայում ՄԶՄԿ-ն աշխարհի 30 լավագույն վերլուծական կենտրոնների շարքում զբաղեցրել է 27-րդ տեղը, իսկ «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի լավագույն 60 վերլուծական կենտրոնները» կատեգորիայում՝ 47-րդը:

ՄԶՄԿ-ի առաքելությունն է աջակցել քաղաքական և տնտեսական որոշումներ կայացնելու գործընթացին՝ հետազոտությունների, վերլուծությունների, վերապատրաստման և քաղաքականության խորհրդատվության միջոցով: ՄԶՄԿ ծրագրերը հիմնականում իրականացվում են տնտեսական, տարածքային ինտեգրման, խաղաղաշինության, ժողովրդավարական մեխանիզմների տարածման, հասարակություն-պետություն երկխոսության կատարելագործման, հանրային առողջության, կրթության, միգրացիայի, ոլորտային քաղաքականության մեջ գենդերային հիմնահարցերի արտացոլման և մի շարք այլ ասպարեզներում:

ՄԶՄԿ-ն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հանրային մասնակցության հիմնախնդրին և ջանում է ձևավորել եզակի մի տեսլական, որը կնպաստեր տնտեսական զարգացման և սոցիալական ապահովության հիմնական խնդիրների լուծմանը՝ քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու և ոլորտային քա-ղաքականության մշակման բոլոր փուլերում այն ներառելու միջոցով:

2005 թվականից մինչ օրս ՄԶՄԿ կողմից կազմակերպել է ավելի քան 100 համայնքային քննարկում՝ Հայաստանի գրեթե 50 համայնքներում բնակվող 10000 քաղաքացիների մասնակցությամբ ՄԶՄԿ կողմից Հայաստանում ներդրած յուրօրինակ ձևաչափով: Քննարկումների թեմաները ներառել են համաշխարհային քաղաքականության խնդիրներից մինչև ազգային ոլորտային քաղաքականության և համայնքային բյուջեում առաջանահերթությունների սահմանումը:

Կենտրոնի մասին ավելի ընդարձակ տեղեկություններ կարելի է ստանալ www.ichd.org կայքից:

ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ Է
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Երևան - 2014